ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՀԷՔԻԱԹՆԵՐ

Типографія Эчміадзинскаго монастыря.
Вагаршапатъ

Տպարան Մ. Աթոռոյ Ս. Էջմիածնի.
Վաղարշապատ

1902

I

ՀՈՎԻԻ ԱԽՊԵՐ

Ճաւրինարի Ջաճարապաս գիւղի բարբառով *

Ըլնի՜-չըլնի, ժամանակով մէ մարդ կըլնի՝ մէ կնիկ։
Աստուած կը քաղցրանայ, էդ մարդին մէ տղայ կտայ։
Տղէն ծնուելուն՝ մէրը կը մեռնի, տղէն կմնայ որբ։
Էդ մարդ շատ օխչար կունենայ, էլ բան չունենար։
Էդ մարդ իրա տղէն, օխչար կը վերցնէ, կերթայ սար։
Մէ ժամանակ կը մնայ, էդ մարդ մէ օր կը հիւանդանայ։
Տենըմ ա պտի մեռնի, կը կանչայ չոպաններին, կասայ.
—Իմ տղէն ձեզ էմ տայըմ. ձեզ էլ ձեր Աստուծուն։
Է՛, էդ մարդի ժամանակ քըմեր էր, մեռաւ։
Տղէն մնաց որբ—չոպաններին մուխթենին։
Զոպաններ էս տղէն պախին, շախին, մեծացրին։
Էս տղէն իրա աչքը բացեց, բոլորը չոպան տեհաւ։
Մէկի հետ ո՛ր խօսըմ էր, «չոպան ախպէր» էր ասըմ։
Մէ օր տեհաւ մէ մարդի. իշկաց իրան, իշկաց էդ մարդին։

Գնաց էդ մարդի մօտ, ասաւ.—Բարո՜վ, չոպան ախպէր. քու օխչարներ ո՞ր տեղ էն. դու ընչի էս էդենց մէ թավուր. մեզի նման չես, կուլաբ չունե՛ս, դակեանակ չունե՛ս. գլխիդ քօլոզ չունես, պա՛ ո՛ւր ա չարխըներդ։

Էս մարդը պատասխանը իմացաւ էս չոպան չտես ա։

Դառցաւ չոպանին ասաւ.—Տնաշէ՛ն, աշխար կա՛յ. թագաւոր կա՛յ, թագաւորին աղջիկ կա՛յ, մա՛րդ որ ուզի՝ Աստու կուս կողմանով թագաւորի աղջիկը կառնէ։

---

* Պատմած է Արիստակէս վարդապետ Զուլոյեան. տես մանրամասնութիւնը էջ 26։ ′

Պզտիկ չոպան ասաւ.—Ձմյան, որ ես ուզեմ Ասսու կուս կողմանով Թագաւորի աղջիկը, կառնեմ:

Ասաւ.—Պա՛, ինչ կանես:

Չոպան դարձաւ իրա ընկերներին, ասաւ.—Որ էդենց ա, էս օխչարներն էլ ձեզի, ես կեթամ:

Վերցրեց եապանը, կուլապը, դակեանակը գնաց։

Չօ՛լ չոլսան (անապատ երկիր) պահրի եապան (անծանօթ ծովեր) կուշ ուչմաղ (Թռչուն անկարող թռչելու), քերվան քօչմազ (կարաւան իջևան չանէր), գնաց ու գնաց։

Շատ ու քիչ Աստուած գիտայ, բռասծ էկաւ մէ քաղաքի, մտաւ քաղաքի մէջ, տեհաւ, ինչ.—աչքդ հաղ՚որ բարին տենայ. ըսենց անօրինակ բաներ որ իրա աչքով ըսկի չի տեհե, էս եանէր իչկըմ, էն եանէր իչկըմ զարմացած, խլուշտ-խլուշտ էր ըլնըմ։

Մէ մարդ տեհաւ էդ չոպանին, ալպահալ իմացաւ որ եապանի մարդ ա. մօտ էկաւ, ասաւ.—Չոպա՛ն ախպէր, ո՞ր տեղից էս էկե, ու՞ր էս էթըմ։

Ասաւ.—Իմ օխչարների մօտից էմ էկե, որ Ասսու կուս կողմանով Թագաւորի աղջիկն առնեմ։

Էդ մարդն ասաւ,—«Որ ուզըմ էս Թագաւորի աղջիկն առնես, իչկայ, տես էն մեծ դարկեանը, Թագաւորի տուն ա. աչ ու ցախ կողմից քարեր կայ դրած. աչ եանի քարի վրէն նստողը աղջիկը կառնի. ցախ եանի քարի վրէն նստողը օղորմութուն կառնի։» Ըրմեն սովըրցրեց չոպնին, ղրկեց Թագաւորի դուռը:

Չոպան ախպէր դուզ-դուզ գնաց, աչ եանի քարի վրէն նստաւ։ Որ նստաւ, խապարը գնաց Թագաւորին։

Վաքիլ, վազիր ասին.—Թագաւոր ապրած կենայ, մէ չոպան ա էկէ, խնամաքարի վրէն նստեր ա։

Թագաւոր ասաւ.—Է՛, վնաս չունի, խամ մարդ ա. առէք էդ մէ մանէթը, տարէք, տուէք օղորմութեն, թօ էթայ։

Վազիրը մանէթը առաւ, բերեց, տուեց չոպանին. չոպանը չառաւ. ասաւ։—Ես օղորմութուն չեմ ուզըմ, էկերիմ Ասսու կուս կողմանով Թագաւորի աղջիկը պտի առնիմ։

Վազիրը վազէ վազ գնաց Թագաւորի մօտ, ասաւ.—Թագաւորն ապրաս կենայ, փողը չառաւ. ասաւ «էկերիմ Ասսու կուս կողմանով Թագաւորի աղջիկը պտի առնիմ։»

Թագաւորն ասաւ.—Գնացէք, կանչէք, գայ վերև։

Թագաւորը խելօք մարդ էր, ալպհալը իմացաւ որ էս խօսքերի մէջը մէ բան կայ:

Չոպան ախպէր տարան վերև, ո՛չ գլօխ տալ, ոչ բան անել, համա դռնէն մտնելու բաշտան, Թագաւորին ասաւ.—Բար յաջողում ձեզի. չոպա՛ն ախպըրտանք։

Վազիր, նազիր, վաքիլ զարմացան, իշկըմին։

Թագաւորը բարեն առաւ, ասաւ.—Աստու բարին, բարով,—չո՛պան ախպէր, ինչ կայ։

Ասաւ։—Չո՛պան ախպէր, էկերիմ Աստու կուս կողմանով Թագաւորի ախչիկը առնեմ։

—Լա օ, ասաւ Թագաւորը, որ էդքնց ա, մա էս խաս կտորը, տար, ընդըրանից մէ մինթանացու բեր, որ Թագաւորի ախչիկը կարի, հագնի՝ պսակուի քու վրէն։

Թագաւորը չոպանին ճանփայ դրեց.

Թո չոպանը իրան ճանփովը էթայ, մենք գանք Թագաւորի մօտ։

Թագաւոր իրա վաքիլ ու վազիրին ասաւ.

—Էս չոպանը ինչ օր խօսըմ էր, «Աստու կուս կողմանովն» էր խօսըմ, անպատճառ էս իմ ախչիկը կտանի։

Չոպանը քաղաքից դուս էլաւ, ու գնաց։

Շատ ու քիչ Աստուած գիտայ, մէ քաղաքի ըռաստ էկաւ, մտաւ քաղաքի մէջ. էդ կտորը որ տուքեանքն չանց տուեց, ասին։—Էդ կտորից չկայ ըս տեղըրանք։

Համայ, լաւ մարդի բան Աստուած յաջողի, ամեն տեղ էլ լաւ մարդ կայ։ Մէ տուքեան էլ մտաւ, մէ բարի մարդի ըռաստ էկաւ. կտորը չանց տուեց, ասաւ.—Չոպան ախպէ՛ր, էս կտորից չունենս.

—Չոպան ախպէ՛ր, չունեմ, ասաւ։

Էդ բարի մարդը հարցրեց չոպանին, ասաւ.—Չոպան ախպէ՛ր, ինչ պտի անես էդ կտորը։

—Չոպան ախպէր, ասաւ.—Աստու կուս կողմանով Թագաւորի աղջիկ առերեմ. Թագաւորն ընձի ղրկեր ա որ էս կտորից մէ մինթանացու առնեմ. տանեմ, որ կարէ, հագնի հետը պսակուեմ։

—Է՛, չոպա՛ն ախպէր, ասաւ, Թագաւորը քեզի գլխից ըռա՛տ արե, էդ կտորից ոչ մէ տէրութենի մէջ չկայ. մենակ պարսիկ Թագաւորի հողին մէջ մէ քաղաք կայ, անունը Հալապ. քաղաքի մէջ մէ մե՛ծ մեյտան կայ. մեյտանի ցախ կողմին մէ բարակ քիւչայ կայ, քիւչէն կը ռնես, կեթաս, տասը տիւքեան կընցնես, կը հարցնես Խօճա Յուսէֆի տուքեանը. դուզ կը մտնես տիւքեանը, էդ կտորը չանց կտաս՝ ընտեղ կայ։

Չոպան ախպէր էս մարդու տիւքեանից դուս էկաւ, գլօխը թեքեց Հալապ քաղաքը, դուզ գյա էկաւ։ Էկաւ գտաւ։

Մտաւ ներս, ասաւ տիւքեաննուն.

—Չոպան ախպէր, բար յաջողում քե։

—Աստու բարին քե, չոպան ախպէր, ասաւ տիւքեաններին։

Ամեն տեղ էլ խելօք մարդ կայ, ալպեալը իմացաւ էս մարդը չտես մարդ ա, հարցրեց, ասաւ.

—Ի՞նչ կայ, չոպան ախպէր, խէր ա էս տեղ գալդ։

Չոպան ախպէ՛ր, խէր ա, ինչ պտի էղի, Աստու կուս կողմանով Թագաւորի ախչիկ առերեմ, էկերեմ որ էս կտորից մինքանացու տանեմ. հագնի, իմ հետ պսակուի։ Իմացերեմ որ քու մօտը կայ, էկերեմ տանեմ։

Հանեց կտորը չանց տուեց.—Ինչքան ա հարկաւոր, ասաւ։

Ասաւ։—Ութը կեազ, չոպան ախպէ՛ր, ըսոր կեազը աժի հարիր ոսկի։

Ասաւ.—Շա՛տ լաւ, կտուայ։

Կտուեց, ծալեց, տուեց չոպնին։

Չոպան ախպէրն էլ ծալեց, դրեց ճապանը, յետ դարձաւ։

Էդ մարդն ասաւ.—Չոպան ախպէ՛ր, պա՛ փողերը։

Չոպան ախպէր ասաւ.—Եփոր կերթամ, Աստու կուս կողմանով պսակուեմ, վատա առաջի Աստուն, առաջ փողերդ բերեմ, ետոյ Թագաւորի աղջկան առնեմ։

Էս մարդը տուեց, էս չոպան ախպէր առաւ, ընկաւ ճանապար, էկաւ դպա Թագաւորի քաղաքը, բերեց կտորը հասցրեց։ Թո Թագաւորի ախչիկը իրան համար դէյրա կարի, Թագաւորն էլ հարսանիքի թաստարիք տենայ, մենք գանք էն կտոր ծախողին։

Էն վախտից որ Չոպան ախպէր հեռացաւ իրանից՝ մտածեց թէ էս ի՞նչ արեցի, էսքան փողը տուի մէ չոպանի, առաւ գնաց, որ չկայ, ի՞նչ պտի անեմ։

Էն մարդ խելքը թռցրեց, ալրմաղն առաւ ձեռը, գնաց ծովի կուաղը նստաւ, մաղը թաթխըմէր ջրի մէջ, ջրով լըցուըմէր ու ասըմ. «Որ Աստուած մարդու տայ, էսպէսդ կտայ»։ Դուս էր հանըմ ջրից, մաղը դարդըկուըմ էր, ասըմ, «Որ առնի էլ, էսենց կառնի»։

Էս մարդը ամեն օր ծովի կուաղը էդ բանն էր անըմ։

Ըդըրա կնիկն, ախչիկը ամնօր գալըմին ծովի կուաղը՝ լալըմին, մղկըտըմ, թողըմ դառնըմ։

Թո ըսդոնք լան, մղկտան, մենք գանք Չոպան ախպօր։

Չոպան ախպէր Աստու կուս կողմանով պսակուաւ Թագաւորի ախչկայ վրայ. էն գշերը որ Չոպան ախպէր, Թագաւորի ախչիկ պառկէին իրար մօտ, Չոպան ախպէր կայնաւ ոտի վրայ։ Ախչիկն ասաւ.—Հա, Չոպան, իմ ընչի՞ն չես հաւնըմ։

Ասաւ.—Թագաւորի ախչիկ, քե հաւնըմեմ, ըմա մէ ուխտ ունեմ, էն էլ Աստու կուս կողմանով կատարեմ. նո՛ր գամ, մարդ ու կնիկ ըլենք։

Ասաւ.—Ասա՛, տենամ ինչ ա քու ուխտը։

Չոպանն ասաւ.—Ես մէ չոպան, կոպէկ չկար իմ ձեռը. պա՛

էդ ճօթը որ տեղից բերեցի, ըդու փողը պտի տաս, տանեմ, տամ՝ նոր գամ։

Ասաւ.—Զո՛պան, էս գշեր մնայ, առաւօտուն գնա,

Ասաւ,—Չէ, ուխտերեմ, փողը պտի տանեմ, նոր գամ։

Ախչիկը՝ «Էկօր օլսուն եօխսուլլուխ», չկայ թագաւորին փող, էն սանաք գահը համպրեց հուժ հարիր ոսկի, երկու հարիր էլ աւել տուեց։

Զոպան ախպէր իրան թագաւորական չորեր հագիցը հանեց, էլի իրա չոպանի չորերը հագաւ, կուլապը քցեց թեերի վրէն, դակեանակն էլ առաւ ձեռը, ընկաւ ճանապար, «Հալապ քաղաք, որ տեղ ես, էկայ»։ Ընկաւ չոլ-չոլստան .. հասաւ, Հալապ քաղաքին մէջ. մտաւ, գնաց իրա ծանօթ խօճա Ցուսէփի տիւքեան։ Տեհաւ Ցուսէփ էնտեղ չէ, տիւքեան փակ, հարցրեց էս տեղ-էն տեղ։

Մօտի տիւքեանճիք ասին։—Քու տուն Աստուած շինի, էն օրից որ դու գնացերես. հենա՛, խօճա Ցուսէփ ծովի կռադն ա։

Էս Զոպան ախպէր դարձաւ, գնաց ծովի կռադ։ Տեհաւ, ինչ տենի, կեօզն եաման կեօրմեսըն, խօճա Ցուսէփ նստեր ա. ալրմաղը ձեռն առեր ա, թաթխըմ ա ջրի մէջն, ասըմ ա, «Աստուած տայ, էսենց կտայ, մաղը դուս հանելուց՝ ասըմ ա, «որ առնի, էսենց կառնի»,

Զոպան ախպէր էկաւ մօտ, ասաւ.—Բար յաջողում քե, չոպան ախպէր։

Խօճա Ցուսէփ իսկի ձէն-խապար չտուեց, իրան գործըն ա անըմ։

Էս Զոպան ախպէր, իրա կուլապը գետին դրեց, դակեանակն էլ թալեց, քօլոզը հանեց, չարխըները դէն քցեց, ամռուան չոքն էր, արեն էնենց էր էրեցընըմ որ, մարդի ճնճռտոցը Ալի-Օսման էր էթըմ։ Կայնաւ տաք քարի վրէն, երեսը թեքեց աղօթըրան, քարէ կարկուտի նման արտասունք թափեց։ Ընդա՛ր Աստուն աղաչեց, ընդա՛ր պաղատեց։ Աստուած էդ Զոպան ախպօր ձէն լսեց, խօճա Ցուսէփ իրա առաջուայ խելքին էկաւ, դարձաւ, տեհաւ որ չոպանը կայներ ծունըր ա դնըմ։

Ասաւ.—Բարով էս իկե, Զոպան ախպէր, իմ գլխին, իմ էրեսին. ընչի՞ ընդար յետըցար։

—Է՛, ասաւ, տնաշէն, քառասուն օրվայ ճանփայ ա, անճախ գնացի, թագաւորի ախչիկայ վրայ պսակուայ։

Էրկսով իրար հետ էկան խօճա Ցուսէփի տունը.

—Ինչ տեհան.-ինչ որ ընդա՛նք տեհան, իմ դին դուսմանը չտենայ. խօճա Ցուսէփի կնիկն ու ախչիկը քիթ ու բերնի վրայ ընկած՝ դառը սրտով լալըմին. երփոր կնիկը տեհաւ որ մարդը էկաւ, քիչ էր

մնըմ սիրտը վարդ պատռէր։ Ելաւ կայնաւ. արտունքը սրբեց, հաց թխեց, ծուածեղ արեց. պատուեց Զօպան ախպօր։

Կերան, կշտացան, Զօպան ախպէր ասաւ խօճա Յուսէփին.

—Զօպա՛ն ախպէր, առ քու փողը, ես էթամ։

Ութ հարիր ոսկի տուեց էդ մարդին կտորի գինը. հարիր օսկի էլ, որ էդ մարդ էդքան խափան էր իլե, տուեց իրան, հարիր ոսկի էլ տուեց, որ կնիկն ու ախչիկն շատ լաց էն իլե, ընդոնց։

Ելաւ ընկաւ ճանփայ, հմյառէ Թագաւորի քաղաք ո՞ր տեղն էս, էկայ։

Էկաւ մէ քաղաքի մէջով ընցնըմէր, տեհաւ որ մէ մարդ ընկե առաջ, մէ քանի էրեխայ հետը, մէ նշշուն բան ա քաշէ վրէն, չորս հոգի էլ մէ բան վերցընըմ տանըմին։ Էդ Զօպան ախպէր մնաց շուարած, բատե՝ ընտե հարցրեց, ասաւ.—Էս ի՞նչ բան ա, ճանըմ։

Է՛, խելօք մարդ ըմեն տեղ էլ կըլլի, իմացաւ որ էս մարդը աշխար չտեհե, ասաւ.

—Զօպան ախպէր, աշխար մեռնել կայ, ապրել կա՛յ։

Զօպան ախպէր ասաւ.—Ե՛ս էլ կը մեռնե՞մ։

Էն մարդն ասաւ.—Պա՛.

—Թագաւորի ախչի՛կն էլ կը մեռնի,—Պա՛.

—Որ մեռան, ո՞ւր կեթան.

Ասաւ.—Ո՛վ արդար ա, արքայութուն կեթայ. ո՛վ մեղաւոր ա, դժոխք։

—Է՛, ասաւ Զօպան ախպէր էն մարդուն, չօպան ախպէ՛ր, պա մո՞նց անենք որ արքայութուն էթանք։ Ընձի Աստուծոյ տունն շանց տո՛ւ։

Էդ մարդը էս Զօպան ախպէրը առաւ, տարաւ ժամ դուռը. կայնեցրեց, ասաւ.—Էս տե կը կայնես, աղօթք կանես, չուր ժամհար գայ, դուռ բանայ, կը մտնես ներս, աղօթք կանես։

Ժամկոչ դուռը բացեց, գնաց զանգը զանեց, վարդապետներ ժողուան, ժամ ասին, գնացին։

Զօպան ախպէր դուս չգնաց, ժամկոչ ասաւ.

—Զօպան ախպէ՛ր, դո՛ւս արի, դուռը փակեմ.

Զօ՛պան ախպէր, ասաւ.—Ես դուս չեմ գայ։

Խեղճ ժամկոչ գնաց առաջնորդին իմաց տուեց։

Առաջնորդ ասաւ.—Դուռը փակի. ղարավուլ քաշա՛, թէ լաւ մարդ ա, թո աղօթք անի։

Զօպան ախպէր ընտե մնաց, աղօթք արաւ. ժամկոչ տեհաւ չգար, հաց տարաւ, ասաւ.

—Զօպան ախպէ՛ր, հաց կե, նո՛ր աղօթք արա։

Ասաւ.—Դու դի՛ ընտե, գնա՛, ես կուտեմ։

Ժամկոչ ելաւ, դուռը կէս բաց արեց, թամաշա արեց։

Զօպան ախպէր աղօթքից դարձաւ՝ դէս-դէն իչկաց, տեհաւ որ մարդ չկայ, տեհա՛ւ որ պատեն մէ մարդ ա կպէ, ասաւ.—Զօպան ախպէր, արի՛ հաց ուտենք։

Տեհա՛ւ որ ձէն չտուեց։

Շա՛տ աղաչեց, վերջն ըսեց.

—Դո՛ւ ըլես, Քրիստոսի միսն ու արիւնը, արի՛, հաց ուտենք։

Էն սահաթ գահը Աստուածածինը իջաւ հրեշտակների հետը, ձընձղակ զարկելով նստաւ չօպանի հետ, հաց կերաւ։

Հաց կերաւ, պրծաւ.—Դէ՛, ասաւ, չօպան ախպէր (Աստուածածնի պատկերին), դո՛ւ ըտե աղօթայ, ես էլ ընտե կաղօթեմ։

Ժամկոչ վազաւ, գնաց առաջնորդին իմաց տուեց.—Հա՛յր սուրբ, էդ մարդն էրկնքիցն ա իջած, Աստուածածին բերեց, հետը հաց կերաւ։

—Ժամկո՛չ, ասաւ առաջնորդ, մէ Ֆէնց արա, մենք էլ տենանք, հետը հաց ուտենք։

Առաւօտը բարի լուսը բացուի բոլորիդ վրէն. ժամ ա՛սին, դուս էլան, որ ժամը խաղվեքցաւ. ժամկոչը չօպանին նախեն բռնեց։

—Զօպան ախպէր, ասաւ, մէկ էլ Զօպան ախպօրը (Աստուածածնին) կը բերես հաց ուտելու, իրան ասա՛ որ էրկու հա՛տ էլ չօպան ախպէր կան, ընդրանք էլ քու հետ գան, հաց ուտեն։

Իրկուն ժամկոչ էլի հաց բերեց, թալեց, գնաց։

Զօպան ախպէր էլի աղօթքից դարձաւ հաց ուտէր, Աստուածածնայ աղաչեց, բերեց հացի նստըցրեց։

Աստուածածնայ ասաւ.—Զօպան ախպէր, ընձի էրկու չօպան ախպէր ունեմ, խնդրում եմ ընդրանք էլ գան, հաց ուտեն.

Է՛, ասաւ. որ ասըմ ես, թո գան։

Զօպան ախպէր ասաւ.—Զօպան ախպէր (ժամկոչ). մեծ չօպան ախպօր (առաջնորդ) ասա՛, թո գայ էս չօպան ախ՛պօր (Աստուածածին) հետ նստի, հաց ուտե՛նք։

Ժամկոչ ու առաջնորդ դուռը բացեցին, չոքեչոք էկան, ընկան Աստուածածնայ ոտը, Աստուածածին ասաւ.—Ի՛մ որդու փոխանակ. արի՛, նստի, հաց ուտենք։

Հաց կերան, պրծան, Աստուածածին ասաւ.

—Էլ դուք չէք կարա ապրի ընդրանից էտեւ։

Աստուածածին ելաւ իրան տեղ, ըսզոնք էլ կայնան իրանց համար աղօթք անելու։

Առաւօտը զանգը զանեց, ըմեն հաւաքուան էկան. տեհան առաջնորդը աղօթք ա անըմ, գլօխ բաց, ոտը բոբիկ։ Առաւօտուն ժամն ասին. պաշտօն կատարին, պատարագն ակսին։

Առաջնորդը պատարագը սկսեց, ժամկոչը ու Զօպաճ ախպէր սրբութուն առան։

Պատարագից դուս էկան։

Առաջնորդը զգեստաւորուած՝ խաչով խաչվարով էկաւ գերեզման։

Առաջնորդ իրեք հատ տեղ քանդել տուեց. իրա ձեռքով կարգը կատարել տուեց, ամեն մէկը մտան իրանց գերեզմանների մէջը։ Ըմեն ժողովուրդն էլ տեհան որ իրեք հրեշտակ իջան, ըդըրանց հոգին առան, տարան։

Ըդըրանց հոգին ընդմ՛ր սիպտակ էր, կասես բամբկի քիւլա ըլէր։

Հըմա Զօպաճ ախպօր հոգին աւելի սիպտակ էր։

Բոլոր ժողովուրդ տեհան. գուռում, գոչում դրին։

Գերեզմաններ ծածկին, թողին էկան.

—Ընդոնք հասան իրանց հոգևոր մխիթարանքին, դուք էլ ձեր հոգևոր մխիթարանքին հասնիք։

2

ԱԽՊԷՐ ԳԱՌՆԵՐ

Տաւրիզարի Զաճարապաթ գիւղի բարբառով *

Կըլնի-չըլնի, մէ մարդ կըլնի, մէ կնիկ. էդ կնիկը տարին մէ տղայ կը բերի. մինչև օխտը տղայ կըլնի։

Էդ տղէքը կը մնան, կը տեհնան օր քուր չունին։ Համա իրանց մէր ոտը ծանր ա։

Չեն համբերի մինչև մէրը էրեխայ բերի, կասեն.

—Ա՛յ մէր, մենք էթըմենք Կարմիր թեփի վրէն տուն շինենք. եփօր դուն էրախայ կը բերիս, թէ տղայ կըլնի, չուքը դի կտուրը,

* Պատմած է Արիստակէս վարդապետ Զուլոյեան:

որ մենք խլիմ-խլիմ կորէինք (աստ-անդ երկրէ երկիր կորսուինք), ո՛ր ախչիկ կը բերես. Ջայրէն դիր կտուրը, որ մենք գանք։

Կնկայ վախտը լրանըմ ա, պառկըմ, մէ ախչիկ ա բերըմ։ Ըդ-կնիկն ա, տատմօր ասըմ ա։

—Նանէ, նանէ, Ջայրէն դի կտուրը, թո տղէքս յետ գան։

Համա էդ չար պառաւը Ջայրի տեղը չուբն ա դնըմ։

Տղէք եփօր հեռւուց տեհան, խլիմ-խլիմ կորան։

Գնացին-գնացին, չատ ու քիչ Աստուած գիտայ, մէ զաղի (այր) բռաստ էկան. իրանց համար ը տեղ տեղ ու տուն դրին. ամեն օր էթըմին ավղուց, իւրիկունը գալըմին. էփըմին, թըխըմին, ուտըմին, պառկըմին, քնըմին։

Ամեն օր էդի ըդոնց արեատն էր։

Թո ըդոնք ըս տեղ մնան, մենք էթանք ըդըրայ մօր ու քւոր ճալը հարցնենք։

Մէրը տեհաւ որ տղէքը չէկան, ալպաճալը իմացաւ որ տատմէր ճասուպազը Ֆեղ ու Ֆեճս ա էկե գլխին։

Մէ տարի, էրկու տարի, տաս տարի էդենց ապրան։

Հըմա, էդ կնկայ ախչիկը մէ օր իրա քայտաճների հետ խաղըմ էր, քայտաճները նեղացան էդ ախչկանը վրայ, ասեցին.—Որ դու լաւ ախչիկ ըլնիս, Աստուած քեզի մէ ախպէր կտայ։

Էդ խեղճ ախչիկ արցունք աչքերին, թթուած, Ճիյաքները կախ տուն էկաւ, մռուզները կախեց ու նստաւ։

Մէրը հարցրեց.—Ախչի՛, ինչ ա իլէ քեզի որ ըդենց սուքն առերես, սեր մտեւ։

Ախչիկը լաց ըլլելով մէկ-մէկ ասեց իրան մօրը։

Մէրը մէ ծանտր հոգոց քաշեց։

Ախչիկն ասեց.—Աաե՛ ջան, ընչի՞ ես հոգոց քաշըմ։

Մէրն ասեց.—Այ որդի՛, պա՛, ես հոգոց չքաշեմ, ո՛վ քաշի, խալխը թէ մէ՛ ախպէր ունին, դու օխտը ախպէր ունես. հըմա Աստուած ընձնից առաւ. իմ օխտը տղէն ձեռւից առաւ, չար ճասուպազ պառաւի Ֆեղ ու Ֆեճսից թողերէն ու գնացեր, որդի՛, Աստուած գիտայ ո՛ր տեղ էն։

Էդ ախչիկը եփօր մօրից լըըմ ա էդ խօսքերը, կրակը ցուաւ ըդըրա սիրտը, օր չըլէր որ լա՛ց ու չուան չդնէր ախըրտան համար։

Գլօխդ ինչ ցաւցընեմ. ընդա՛ր լացաւ, մօրը աղաչեց, պաղատեց ու խնդրեց որ իրա թողնի, էթայ իրա ախպըրտանց մօտ։

Ախչիկը իրա մօր խըրատով էրկու ճեպը աղանձ լցրեց, ու յընկաւ ճանփայ. չոլ-չոլստան, պաճրի ետպան, գուշ ուշմազ, ճերվան ճեօչմազ. գնաց ու գնաց։

Շատ ու քիչ Աստուած գիտայ, մօր ըսածի պէս իլաւ:

Նեղ ճանփէն բռնելով գնաց՝ աղանձն ուտելով. աղանձը բռ.աց իլաւ, ախչիկը մէ զաղի (քալայր) դուռ. կայնաւ:

Տեհաւ մէ մեծ քար էն դէմ տուն դռան. ներս մտնելու ճար չկայ։

Է՛ս խաճ ընկաւ, էն խաճ ընկաւ, տեհաւ լախում տռւած տեխ կայ, սողալէն մտաւ ներս. տեհաւ,-ի՜նչ—աչքդ հազար բարին տեսնայ, ինչ ճազ ու ճամէր ասես, կայ: Էփեց, թխեց, իրան բաժինը կերաւ. մտաւ փեթակի մէջ, տափ կեցաւ:

Ախպըրտանք իրկունը տուն էկան, պատրաստ տեհան-ի՜նչ-է փած թխած՝ ճըմա մարդ-մածաք չկայ:

Ախպըրտանք շուարան. պէլ էն իլէ, իրար երես էն իրիշկըմ:

Մեծ ախպէրն ասաւ.—Ախպըրտանք, ըս տե մէ մարդ կայ, որ ըսենց պատրաստեր ա. ճրագ վառէք, քունճ ու պուճախ մանդանք:

Ճրագ վառին, ընկան տան քունճ ու պուճախ, մուրիկ-մուրիկ (մանրակրկիտ) ման էկան, էփօր էկան հասան փեթակի մօտ, ծոր-ծը բացին. տեհան խաճարի ոտ ա երեըմ, Ասին.

—Ի՛ճս էս, ճ՛ըճս էս, դո՛ւս արի:

Ախչիկը փեթկից դուս էկաւ. տեհան-ի՜նչ ախչիկ.—մէ ճուրի մելէֆ, մէ էրկնքի հրշտակ՝ չուտես, չխմես, էդ ախչկայ քիթ ու բերնին թամաշայ էնես:

Էդ ախպըրտանքը ասին ախչկան.—Օձն իր պօռտով, դուշն իր թեւով չէր կարայ ըս տեղըրանք ման գայ, դու մո՜նց էկար:

Էդ ախչիկ պատմեց քըմեն, ինչ որ ես ձեզի ասի:

Էփօր ախպըրտանքը իմացան որ իրանց քուրն ա, ճաժ լացան, ճամ ուրխըցան, ճամ էլ ճէֆ արին:

Էդպէս ախպըրտանք ըմեն օր էթըմին աժէ, քուրն էլ մնըմ էր տանը, էփըմ էր, թխըմ էր, ըմեն բան պատրաստըմ էր. իրկունը ախպըրտանցը հետ ուտումին, խըմըմին, քնըմին:

Մէ օր ախչիկը անթեղ չէր թողե, էփօր ախպըրտանք գնացին, քուրն ուզեց որ թուճդիր վառե, տեհաւ որ կրակ չկայ. էս խաճը զարկուաւ, էն խաճը զարկուաւ, կրակ չկայ.

Վա՜յ, ասաւ, աչկերս քօռնայ, իրկունը ախպըրտանքս տուն գան, պա՛ղ թուճդրայ վրէն նստին:

Դուս էկաւ դուռը, է՛ս խաճը նայեց, է՛ն խաճը նայեց. տեհաւ իրանից զատը մէ կրակ ա երեւըմ: Կրակի իզը բռնեց ու գնաց. մէ ոտ ունէր, էրկու էլ ծախ առաւ. գնա՜ց, մինչև հասաւ էդ կրակին: Տեհաւ որ մէ պառաւմ նստե, մէ չարեք պողպատ քցե բերան, ծամըմ ա, մէ մեծ ղազանի մէջ էլ լցրած ա զամեն տեսակ գազաններ: Պառաւը ճըւկիրն առե ձեռ, խառնըմ ա:

Ախչիկն ասաւ.—Բար յաջողում քե, նանէ՛ ջան։

—Բարձիլ, ասաւ, հազար բարով, որդի՛ ջան, օձն իր պօռտով, ղուշն իր թեւով ըս տեղ չէր իկե, դու մո՞նց էկար, հիմի իմ տղէն կըգայ, ինքը օխտը գլխանի դեւ ա. քու մեծ թիքէն ականջդ կը թողի։

Ախչիկը ասաւ.—Նանէ ջան, կըրակի էմ իկե. իմ ախպըրտանքը գնացեր ին ավղուշ, իրիկունը տուն կըգան, կըրակ չկայ։

Պառաւ ասաւ.—Դէ՛, շուտ արա՛, քանի տղէս չիկե։

Ախչիկը կըրակը վերցրեց, ուզեց ետ դառնայ, պառաւը ասաւ.

—Ա՛յ որդի՛, առ մի կտոր միս, ուտելով գնա՛։

Ախչիկն ասաւ.—Նանէ ջան, ես միս չեմ ուտըմ։

Պառաւ ասաւ.—Որ չես ուտըմ, որդի՛, մանտր, մանտր կտոր արա, քցելով գնա՛, մինչեւ հասնիս քու տեղը։

Ախչիկը պառուի խօսքը կատարեց. էկաւ հասաւ տուն։

Մինչեւ վառեց, թխեց, էփեց, պատրաստեց, ճըլա ծուխը չէր քաշուե, ախպըրտանքը էկան, ասին.

—Վա՜յ քուրիկ ջան. էդա ինչ ա պատահե քե որ ըս օր էդքա ուշ ես վառե։

Քուրը պատմեց իրա գլխի էկածը։

Ախպըրտանքը ասին.—Վա՜յ, քուրի՛կ, էդ ինչ օյին ես հանէ մեր գլօխը. դեւի տուն ես գնացե, էն դեւն էլ մեզնից ձեռ չքաշի. ճըմա մուղայք կաց, որ ներս մտնելու տեղը չասես ընդըրան, որ ներս մտաւ, քե կտանի, մենք կը մնանք առանց քուր։

Էլի առաւօտն էլան, գնացին ավղուշ.

Ըսդըրանք թո ըս տե մնան, մենք գանք պառուին։

Դեւ տուն էկաւ, տեհաւ իսանաթի ֆոտ ա գալըմ.

Է՛յ, պա՛ռաւ, ասաւ. ըս ի՞նչ բան ա, ֆո՞տ էմ առնըմ։

Պառաւն ասաւ.—Քա՛, տնաւէր, դուն ես գնացե սար ու ձոր ման իկե, հազար բան տեհե, ըս տե ո՞վ ա իկե, որ ընձնից ես հարցընըմ։

Ասաւ.—Ըհը՛, չա՛ր պառաւ, հիմի քե փառչա փառչա կանեմ, ասա՛ թէ ո՞վ է իկե ըս տե։

Է՛, ջան ազիզ էր, պառաւը վախեցաւ, ասաւ.

—Էն մսի կտորներին ճամփէն բռնէ, գնա՛, եփօր մսի կտորները բռաց իլան, ըս տե եկողին կը գտնես։

Դեւը մսի կտորների ճամփէն բռնեց. էկաւ հասաւ մինչեւ զաղին, տեհաւ որ զաղի բերնին մի էնենց մեծ քար ա դրած որ օխտը լուծ գոմէշ լծես, չկարաս տեղիցը յերա՛ր տայ։ Շատ չարչըրաւ դեւը, չկարցաւ դուռը բանայ. իլանը կորուաւ, ասաւ ախչկան.

—Սիրուն ախչի՛կ, ներս մտնելու տեղն ասա. գամ ը տե։

Ախչիկն ասաւ.—Տեղ չեմ գիտայ, որ ցուց տամ քե։

—Որ դուռը չես բանըմ, տու, ձեռդ պալըղի· մէրդ մատնիք տուած ա, դնեմ քո մատ։

Խեղճ ախչիկը հաւատաց, ձեռը ծակիցը դուս հանեց, թէ չէ, դևը ախչկան ճկութը առաւ բերանը ու ծծեց. ը՛նդմըր ծըծեց, ընչանք ախչիկը ուշաթափ ըլաւ, ընկաւ։

Իրկուն ախպըրտանք էկան տուն, ինչ տեհան. աչկդ հաղար բարին տեսնի, քուրը մեռլի պէս ընկած ա։ Ջուր ցըրին վրէն. դալ-մաղալ արին, քուր ուշքը վրայ բերին.

—Էդ ինչ ա պատահե քե, քուրիկ, ասին։

Քուրն ասաւ.—Հալն ու ճաղըլ էսենց բան. դևը խափլութենով մատս առաւ բերան, ընդմըր ծըծեց օր ուշքս գնաց էլ խապար չիմ ըլէ մինչև դուք էկաք։

Ախպըրտանքը էփօր լսին դևի անունը, ո՛չ կերան, ո՛չ խմին, մինչև լուս օխտը ախպըրով չըմի տակ քառսուն կեազանոց հոր քանդին։ Էփօր արևը դո՛ւս ըլաւ, իմացան որ դևը պտի գայ, քուրն ասին.—Խալիչէն փռայ, դու դուռը բաց, քե համար ճեարկեաճ արա։

Դևը՝ մէկէլ տեհացինք մըռթմըռթալէն էկաւ։

Էփօր տեհաւ դուռը բաց ա, ախչիկն էլ ճեարկեաճ անըմ ա, քիչ էր մնըմ խելքն էթար. է՛լ աչքերի առաջը չիչկեց, հըմմ ոտը չըմ քցելն ու փոսի մէջ գըըմփալըն մէկ ըլաւ։

Ախչիկն ասաւ.—Ա՛խպըրտանք, էկէք, ճեյննեմէ վասիլ ըլաւ (սանդարամէտ հասաւ)։

Ախպըրտանք էկան, խողով ծածկեցին, քուրն ասեցին.

—Քո՛ւր, ջուր չթափես ըտե։

Մէ օր, էրկու օր, մէ ամիս, հինգ ամիս, մէ տարի, տաս տարի, շատ ու քիչ Աստուած գիտայ. մէկ օր ախպըրտանքը ավղուչից յետ դարձան. տեհան-մէ պառաւ ճանփի վրէն նստած ա, ասին.

—Ա՛յ պառաւ, իճս էս, ճիճս էս, էս վախտը ըստե ինչ բան ունես։

Պառաւն ասաւ.—Ո՛րդէք, Հայ Քրիստոնեա եմ. ձեր արևի սաճաղէն ըլի, ընձի տարէք, պահէք, մեր ճօչը ընցաւ. չկարցայ հետները գնայի։

Տղէքը խեղճըցան էդ պառաւի վրէն, հետները տուն տարան, ուրախ-ուրախ իրանց քուրջպատմին։

—Քուրի՛կ, ասին, աչկդ լուս. էլ ըսդից դէն ոչ կը վառես, ո՛չ կը թխես, ո՛չ էլ ճաֆա կը քաշես. հոգին ըլի. ինչ կըլի, կըլի, պառաւ կնիկ ա. թո աշխատի, դո՛ւն էլ քու ճեարկեաճն արա։

Քուրն ասաւ.—Ախպըրտանք. արէք էս պառաւին խըրկէք, դըրանից զիաճ կգայ մեզի։

Ախպըրտանքն ասին.—Ա՛յ քուր, պառաւ կնիկ ա. էն ինչ պտի անի։

Է՛, էլի ախպրտանքը գնըմին ավ-ղուշ, գալըմին. ճըմա՛ պառան ընդմը հաւատըրիմ էր ծառայըմ որ քուրն էլ, ախպրտանքն էլ զարմացեր ին։

Հա՛, ճամա չմոռնանք որ պառան ամնօր ջուր էր թափըմ էդ հորի վրէն։

Ախչիկն ասըմէր.—Նանէ՛, ախպրտանքս ասըմին «ջուր մի՛ թափի» դու յընչի՞ ես թափըմ։

Պառան ասըմ էր.—Բան չկայ, բալա ջա՛ն։

Մէ ամիս, էրկու ամիս պառան ջուր էր թափըմ էդ հորի վրէն, ամէն տեսակ կանանչի բուսաւ։

Մէ օր պառաւ ախչկանից թագուն կանանչիցը քաղեց, կերակուրի մէջը քցեց։

Իրկունը ախպրտանք տուն էկան. նստեցին որ հաց ուտեն, չէ՛ որ ամենքը մէկ մէկ գդալ առան. օխտն էլ ալոչհալը դառ դարձան։

Պառաւ իլաւ ու գնաց, ախչկան ասաւ.

—Իմ տղի արունքը հանեցի։

Ախչիկը շատ լաց իլաւ։

Ինչ անէր խեղճ ախչիկը, տեհաւ իլաճ չկայ, գլխի լայլուխը շինեց ձեռի փէտ. չուլին դրեց բերնին.

—Ձէ՛ որ էն վախտ չուլին գնըմէր բերնին ու ածըմ, իրան հետ քար ու թուփ մըղմըղվում էր։

Իրա դառ ախպրտանքը քցեց առաջ, բարֆի վաքաճ իլաւ, ընկաւ ճանփայ ու գնաց։

Գնաց-գնաց, շատ ու քիչ Աստուած գիտայ. բռաօց էկաւ մէ չայիր-չիմաճ, տեղ. էդ չայիրի մէջ տեղը մէ հատ չալ ճաւուզ կար, ճաւուզի գլխին էլ մէ՛ մեծ չիճարի ծառ կար։ Ամնօր ախչիկը դառներին արածացընըմէր. իրկուն էլ բերըմ, ջրըմ էր. ծառի տակը նստըցընըմ, ինքն էլ ըլըմ էր ծառի գլխին նստըմ. առաւօտն էլ շուտ քշըմ էր դառներ, ընդից հեռանըմ։

Մէ օր, քշերը ախչիկը շա՛տ մտածեր էր. քունը մինչև կէս քշեր չէր քնել. էդ օր առաւօտը չկարաց շուտ զարթնէր։

Թագաւորի տղէն իրա ձինը բերեց ջրելու. տեհաւ ը տեղ օխտը դառ կայ անտէր, անտիրական։

Շա՛տ բարկացաւ թագաւորի տղէն.

—Ո՛վ պտի ըլի որ էս պէվախտին իմ ղուրուխի մէջ օչխար ա արե։

Բարկացած՝ ձինը քշեց ջրի վրայ, տեհաւ ձիանը ջուր չի խմըմ. էնդար զանկուլամիշ արեց. ջրի վրայ չգնաց։

Դու մի՛ ասա, ախչիկայ պատկերը ընկի ջրի մէջ, ձինը ճուրճ-միջ ա ըլըմ. Թագաւորի տղէն զարմացաւ.

—Ճանըմ, ասաւ. էս ձինը ընչի՛ ջրի վրայ չէթըմ։

Ինքն էլ ջրի մէջը իշկեց. տեհաւ որ ջրի մէջը մէ պատկեր կայ. հօ պատկեր չի, կասես ճուրի մէկէ ըլի, որ չուտես, չխմես, ըդու մաճ ճամալին քամաշա էնես։

Թագաւորի տղէն է՛ս ճաճ իշկաց, է՛ն ճաճ իշկաց, տեհաւ մարդ չկայ, բայց որ չնայե՛ց ծառի վրէն, աչքըն ախչկան առաւ. քիչ մնաց գլխի խելքը էթար.

—Ախչի, ասաւ. ի՛ճս էս, ճի՛ճս էս, էս վախս էս տեղ ինչ բան ունես, ծառիցը ցած իջի որ քեզ տանեմ, թագուհի անեմ։

Ախչիկն ասաւ.—Ձեռ իջնիր, Թագաւորի տղա.

—Ախչի՛, ասաւ. իմ ընչին ես անուն դընըմ. իմ չէնք ու չնոր-քի՛ն էս անուն դնըմ, իմ բոյ ու բուսաթին ես անուն դնըմ, թէ՛ իմ թագաւորութենին։

Ախչիկն ասաւ.—Ո՛չ, մէկն էլ չեմ դնըմ, ասաւ. միան թէ մէ պահման կանեմ քու հետ. թէ որ կընդունես, ես քունն եմ, դուն իմն ես. թէ որ չէ՛, ծառից քցեմ ճավուզի մէջ, կը խեղդուեմ։

Տղէն որ ախչկայ է՛ս խօսքը լսեց, քիչ էր մնըմ գլխի խելքը թռցընէր։

—Ախչի՛, ասաւ. հոգի՛ս էլ ուզես, կտամ, միան թէ իջի, ընձի առ։

Ախչիկն ասաւ.—Իմ պահմանը էն ա որ էս գառներին չմա՛տ լաւ մուղաթ պտի կենաս. ի՛նչ դար որ ընձի սիրես, էրկու ընդար էլ էս գառներին պտի սիրես։

Ասաւ.—Ախչի՛, թագաւորին չունի մա՛լ, չունի դոլվաթ, հընա՛, կըլնես թագուհի, յըմեն իրաւունքն էլ քու ձեռը կըլնի, կուզես լաւ պահի, կուզես վատ պահի։

Ախչիկն պատմեց որ գառներ իրա ախպըրտանքընին։

Վերջապէս ախչիկը ծառից ցած իջաւ, տղէն խապար ղրկեց քաղաք, քաղաքը յըմեն էկան թագաւորի տղի առաջ. ձիաւորներով, ճէչեվաճներով, առան, քաղաք տարան։

Թագաւորը հարսնիք բռնեց. օխտը օր, օխտը քշեր հարսնիք արաւ. պսակուան։

Ըդըրա գառներին ընենց էր պահըմ որ, կիւլը սօլմից չէր ըլըմ, կասես թէ մէ պուտ ծաղիկ ըլէր։

Թո ըստոնք իրանց վայելչութենին ըլնին, մենք գանք էն պառաւի մօտ։

Եփօր պառաւը իմացաւ ախչկայ բաղդը կտրեր ա. վերցրեց իրան ախչիկն ու էկաւ։ Էկաւ Թագաւորի տղի ճանփի վրէն, ախչկա ձեռը բռնեց, կծկուաւ, նստաւ։

Թագաւորի տղէն էկաւ, դէն ընցնելու. անհաւ մէ խեղճ պառաւ՝ իրա ախչկայ հետ նստած ա. էկաւ, ձինը քշեց որ ընցնէր, պառաւը իրան քցեց Թագաւորի ձիու տակ մրէն.—Թագաւորի տղա՛ տասա. անտէր պառաւ էմ, ընձի տար քու տունը պահ՛. ես Թագուհուն լաւ մուղար կը կենամ։

Թագաւորի տղէն ասաւ.—Խեղճ պառաւ կնիկ ա. թո գայ, ուտի, խմի, ընձի համար աղօթք անի։

Թագաւորի տղէն վերցրեց պառաւին, իրա ախչկան, տարաւ տուն, ասաւ.

—Թագուհի՛, աչքդ լուս, քե համար մէ ծառայ եմ բերե, էս պառաւ կնիկը խեղճ ա, թո ըստե մնայ. քու գլօխն էլ լուայ. ախչիկն էլ մէ ծառայութեն կանի։

Թագուհին ասաւ.—Թագաւոր, դու գնա, էդ պառաւին բրկես, էդ պառաւիցը վնաս կգայ.

—Ա՛յ կնիկ, ասաւ. ինչ կայ, պառաւը ի՞նչ կանի. «փչեմ, կը թռնի. ... կը չորնայ»։

Թագուհին ձէն չարեց. մնաց ըտե։

Էդ պառաւն ընենց ծառայութեն էր անըմ որ բոլորին էլ աչքը մտաւ. Թագաւորը, Թագուհին էս աչքներէն էն աչքը չեն փոխըմ։

Մէ օր էս պառաւը Թագուհուն խափեց, տարաւ ծովի կռաղը, Թագուհին էլ երկու հոգով էր։

Պառաւը ասաւ.—Վա՛յ, ամա՛ն, Թագուհի, աչքերս քոռնայ, արե՛, արե՛, շորերդ հանեա՛յ, համ թափ տամ, համ լողացի, հովցի. նոր էթանք։

Ախչիկը շորերը հանեց պրծաւ. պառաւը կուչտեց, քցեց ծովի մէջ։ Ախչկան ծովի մէջ ընկնելը, մեծ ձկան կուլ տալը մէկ էլաւ։

Թո էդ ախչիկը մնայ ձկան փորը. տեսնանք թէ ճասուպազ պառաւը ինչ արեց։ Թագուհու շորերը հագցրեց իրա ախչկան. առաւ, գնաց տուն, ախչկան սորվցրեց՝ սուտ հիւանդութեն տայ։

Թագաւորը հարցրեց.—Թագուհի, ինչ ա պատահե քեզի։

Ասաւ.—Գնացի ծովի ափը, մրսեր եմ, հիւանդ եմ։

Մէ օր, էրկու օր, հինգ օր սպասըմ էր Թագուհին սաղնայ. քանի գնըմ, աքոցը չատացընըմ էր։

Թագաւորն ասաւ.—Ի՞նչ ա սիրտդ ուզըմ, բերեմ։

Ասաւ.—Ի՞նչ անեմ, բերդնես չունըմ որ ասեմ.

—Ա՛յ կնիկ, ասաւ. չե՞ս ղըմըըմ. իմ կէ՛ս Թագաւորութիւնն էլ կը դնեմ քու ուղուրին։

Ասաւ.—Գառներից մէկը մորթես, ուտեմ, առողջանամ։

Նփօր Թագաւորը լսեց գառների անունը զարմացաւ. մաղերը

ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

պըզ-պըզ ըլու գլխին։—Ա՛յ կնի՛կ, ասու. մինչև հիմի էդ գառներին քու աչքի լուից շատ էր սիրըմ, ինչ ըլու քեզի։

Ասու.—Ի՛նչ անեմ, ջան ազիզ ա ախպօրից։

—Լա՛ւ, այ կնիկ, որ ասըմ էք, մէկը մորթեմ։

Թագաւորը դուս ըլաւ, սկսեց մտածելը։

Թո թագաւորը մտածի. գանք մենք գառների ճալը հարցնենք։

Էն օրից որ իրանց քուրը ընկեր էր ծովը, ամեն օր էթըմ էին, ծովի կուաղը պտտըմ էին. գալըմին, ճըմա էս անգամը Ասու հրամանքով լիգու ըլան, սկսեցին խօսալ.

—Մարիամ, քուրի՛կ.

Թագաւորը դանակն ա սրի,

Ջուրը դրի.

Մեծ գառնիկ ազբօր պտի մորթէ.

Սուտ հիւանդն ա ուզի։

—Ես ինչ անեմ, Մանուկ ախպէր ջան.

Ջուրն ա ծածկի.

Զուկն ա ղուլ տուի.

Թագաւորի էրեխէն խալխու քնի։

Ըսդրանք թո էրթան ծովի վրէն ու գան.

Ծաեու պառաւը ամեն օր սովրցնըմ ա իրա ախչկան որ շատ դայիմ աքայ, որ շուտ մորթեն գառին։

Գանք, էդ քաղաքի ժամհարին գտնենք։

Ժամհարը մէ օր էթըմ էր ծովի կռաղով, տեհաւ ծովի միջէն ձէն ա գալըմ, անկանջ արեց, տեհաւ ո՛ր՝ ասըմ ա.

—Ժամհար, քու ժամը ձէնես.

Քու անահուն Աստուածը սիրես.

Էթաս, թագաւորի տղին ասես.

Դանակը չորրի.

Ջուրը չդնի.

Իմ գառնիկ ախպօր վըլին չդնի։

Մէկ օր, էրկու օր, իրեք օր, ժամհարը տեհաւ որ էդ ձէնը ամեն օր գալըմ ա. չարեն կտռաւ, գնաց թագաւորին ասաւ.

—Թագաւոր ապրած կենայ, ծովի միջիցը ձէն ա գալըմ, թէ որ չես հաւատըմ, արի՛, էթանք, տե՛ս։

Թագաւորը գնաց ժամհարի հետ ծովի կռաղը, կայնաւ. տեհաւ որ ծովի միջից ձէն էկաւ։

«—Ժամհար, քու ժամ կը ձէնես . . . . . »

Թագաւորի տղէն որ ականջով լսեց, ջառ քցեց քաղաքը, որ ինչքան բոռչիք կան, գան թագաւորի կուշտը։

Ալպէալը Թագաւորի հրամանը կատարուաւ. քաղաքի մէջ ինչքան բոռչիք կային՝ ժողվըվան, Թագաւորի չորս բոլորը կոռւին, կայնան:

—Հա՛ն, Թագաւորն ապրած կենայ, ինչ էս հրամայում։

Թագաւորն ասաւ, բոռերը քցէք ծովը. ինքն էլ կայնաւ ծովի կուաղը, աղօթք արաւ:

Որ բոռը քաշեցին, մէ մեծ ձուկ ծովից դուրս էկաւ. ձկան փորը ճղեցին. ախչիկը, փոքրիկ երեխէն խոխը, պտուղ-պտուղ քրտինքը վրէն տուած։

Հագցրին, առին, նաղարով, զուռնով, բէֆ անելով Թագաւորի պալատը տարան։

Ախպըրանքը որ տեհան քուրը ծովից դուրս էկաւ, ով որ ըն տև կայնել, սիրտը կտոր-կտոր կըլնէր. բեաֆրի ճիկեարի գլօխն էր մկըրատմ. բոլորեցին իրանց քուր ախպըրանքը։

Ըդենց չորս բոլորը փաթթած՝ բօշ ու սարէն մտան։

Պառաւը ու իրա ախչիկը լաան. դողը ջանները առաւ:

Թագաւորը առուօտը նստաւ դիւան, Թագուհին էլ մօտը կայնաւ։

Կանչին պառաւին ու իրան ախչկան։

Թագաւորն ասաւ.—Հիմի ըսդըրանց դիւանը քև եմ տուել, Թագուհի, մնաց կուզես, էնենց արա։

Թագուհին ասաւ.—Ճասուպա՛զ, ախպըրանցս սիրը դառ, պօլ չի, ուզըմէս ախպըրանցս մօրթես էլ. ինչ բաւուր պատժեմ քեզի որ հոգիս դինճանայ։

—Աման, Թագուհի՛, ասաւ, ես արի, դու մի՛ արա, էլի քու ախպըրանքը դարձնեմ իաան։

Չէ՛ որ Թագուհին էս խօսքերը լսեց, քիչ էր մնըմ ուրախութենէն ուշքը էթար։

—Դէ՛, ասաւ, շո՛ւտ արա։

Պառաւը Ֆէլ արեց, աղէքը էլի՛ դարձան իաան։

Թագուհին պառաւին, իրան ախչկան աղատեց. քաղաքիցն էլ դուս արեց։

Համ լացան, նամ ուրախըցան։

Նօթ ախպըրանքը գնացին իրանց հօրն ու մօրը չառ ծերացած դառն մեռնելու մօտ. վերցրին բերին իրանց փեսայ Թագաւորի քաղաքը. ընտև ապրան.

Ընդոնք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնէք ձեր։

Յ

ՕՁ-ՄԱՆՈՒԿ ԵՒ ԱՐԻՆ-ԱՐՄԱՆԵԼԻՆ

Ծաւրիսարի Ջաճարապաց գիւղի բարբառով *

Կըլնի-չըլնի, հին ժամանակով մէ թագաւոր կըլնի. էդ թագաւորին ալվաս, բալվաս չըլնի։ Մէ օր ընդըրա կնիկը կը պառկի, մէ օձ կը բերի։

Թագաւորի վեքիլ, վեզիր, նազիր կը ժողուին թագաւորի մօտ, աչքալուսէք կտան։ Է՛, թագաւորն ա, շատ կամաչէ. ինչ արած՝ Աստուծոյ տուած պտուղն ա։ Անուն կը դնեն Մանուկ։

Օձ օր մօրից կըլնի, կը չուլուլուի առխըը։

Էդ օձն ա, կընցնի մէ քանի օր—ժամանակ, իրա մօր կասի.

—Ամէ՛, թագաւորին ասա, ընձի կնիկ ուզի։

Մէրը կասի.—Ա՛յ որդի, դու օձ ես, քե ո՞վ աղջիկ կտայ։

Օձը կասի.—Մարէ՛. կը կարգէ՞ք, կարգէ՛ք, որ չէք կարգի. ձեր տուն ու տեղը տակնուվըրայ կանեմ։

Մէրը կը վախենայ. կերթայ թագաւորին մօտը, կասի.—Թագաւոր ապրած կենայ. քու տղէն ասըմ ա «ընձի կարգայ»։

Թագաւորը շուարըմ, մնըմ ա. չգիտըմ ինչ անի, վախից վազիրի աղջիկ ուզըմ ա տղին։

Նրփոր էն գշեր իրար մօտ պառկէթան, օձը անսաս՝ թուխքից իջնըմ ա, ու աղջկան դեղըմ։

Առաւօտը բարի լուսը բացուի վրնէրդ, թագաւորի տան վըէն սև ա բացուըմ. էթըմ ա տղի օթաղը, տենըմ ա թէ ինչ ա իլէ.—ինչ տենայ.—աղջիկը դեղած, ուռած ու մեռած ա։

Մարդիկ ա կանչըմ, աղջկան վերցնել ա տալըմ։

Տղէն էլի կպնըմ ա մօրը եախէն՝ «ընձի կարգէք»։

Մնացեր էն մարդ ու կնիկ շուարած։

Խեղճերը էս անգամ էլ նազիրի աղջիկ ուզին։

Էլի առաջուայ պէս արեց օձ։

---

* Պատմած է Արիստակէս Վ. Զուլոյեան:

Օձ-Մանուկ փաքիլի ախչիկն էլ ուզեց. ճնալչող արեց։

Դյուխդ ինչ ցուցընեմ. Թագաւորն էլ մնացեր վիզը ծուռ. չէր գիտըմ ի՛նչ անի։ Էս դաճը որ մեծաւորի ախչիկն էր ուզըմ. չին տալըմ. ճարը կտռուած բեասխփ-բիւսիւպի ախչիկներն էր ուզըմ փողով։ Մէկ օր-էրկու օր լուրը ձայնուեց բոլոր քաղաքը։

Խօսքը գնաց հասաւ ճախրճու կնկան, որ խորթ էր, ամեն օր խեղճ ճախրճու գլուխ տանըմ էր թէ՝ «քու ախչկան կորցրայ»։

Էս խապարը որ լսեց, մըրթընները կախեց, հա՛ մարդի վրէն մըրթմըրթաց։—«Մենք բեասխփ էնք. ճազր ախչիկդ տա՛ր, տո՛ւր Թագաւորի տղին, փող առ, բեր, ուտենք. չանք յե՞փ բեասխփ ապրենք։»

Ընդմ՛ր մարդի վրէն խօսաց օր. խեղճ մարդի ճարը կտրուաւ։

—Է՛հ, ասաւ, կնիկ. դո՛ւ՝ քու Աստուածը, որ ասըմ էս, ախչկայ գըլօխը լուայ, ձեռը՝ ոտը տես, տանենք տանք Թագաւորին. զաքի ման ա գալըմ ախչկան համար։

Կնիկ եփ մարդից խօսքն առաւ, ուրախութենից սիրտը վարդ պատռուեց. տեղէցը Թռաւ-կայնաւ, սկսեց ջուր տաքացնել։

Թող էդի ջուր տաքացնի, մենք գանք ախչկան։

Ախչիկը եւս հօրը, մօրը խօսքերը ջըմեն լսեր էր, սիրտը կոտրած՝ ելաւ գնաց, մօր գերեզմանի վրէն ընկաւ, լաց ելաւ։

Ընդմ՛ր լացա՛ւ, քունը էկաւ, քնաւ։

Մէրը գերեզմանի միջից ձէն տուեց, ու ասեց.—Ջա՛ն-ջա՛ն, չան յե՞փ չթողաս եւ հանգիստ ըլնեմ։ Քեզի ուզում են տան Թագաւորի տղին. դու Թագաւորից օսկը գոմչի կաշի կուզես, լա՛ւ կը փաթթուես մէջը. էն գշերը յեփոր Օձ-Մանուկ կգայ քե զարկելու, էրկու-իրեք անգամ կը զարկի, բեար չանի, յետոյ կասի. «Ախչի՛, չապկիցդ դո՛ւս արի»։ Դու էլ ընդըրան կասես.—Դու քու չապկիցդ դո՛ւս արի, ես էլ իմ չապկիցը դուս գամ։ Էն վախտը չապկիցը դուս կգայ. կլնէք մարդ ու կնիկ։

Ախչիկը քնի տեղից կը զարթնի, կը տեսնայ օր էրազ ա. կգայ խեղճ-խեղճ տունը. խորթ մէրը ուրախ-ուրախ կը կանչի ախչկան։

—Ախչի՛ ջաճ, արի՛, գլօխդ լուանամ։

Ըսկի մէ օր էսենց, քաղցր չէր վարուել։

Ախչկան գլօխը կը լուայ, կտայ մարդին, կը տանեն, կտան Թագաւորին, Թագաւորը ախչկան խասս զարդարեց, չորեր հագցրեց.—Տարէք, ասաւ իմ տղի օթախը։

Ախչիկը մօր խրատը եսկի չի մոռացել, Թագաւորին կասի.

—Թագաւորն ապրած կենայ, քեզնից կը խնդրեմ օսկը գոմչի կաշի։

Թագաւորն ալպէալը բանը իմացաւ, ասաւ.—Կայ-չկայ էս ախչիկը մէ բան գիտայ, ձեռաց ալպէալը հրամայեց վազիր-ճազիրին,

օխտը դոմշի կաշի ձեռաց բերին, տուին։ Ախչիկը առաւ, գնաց տղի օրախը. փաթութուաւ էդ կաշիքի մէջը։ Օձ-Մանուկը առբից իջաւ, զարկեց. էլի էլաւ, շուլուլուաւ առիքը, մէ խէլի քամացա արեց, տեհաւ ախչիկը խըլուըլըմ ա. էլի իջաւ, զարկեց (խայթեց), էլի տեհաւ բան չիլաւ։

Օձ-Մանուկի ճարը կտրուաւ, բարկացաւ, ասաց.—«Ախչի՛, կաշուցդ դո՛ւս արի,»

—«Դո՛ւ քու կաշուցդ դո՛ւս արի, ես էլ իմ կաշուց դուս գամ» ասաւ։

Օձ-Մանուկ ասաւ.—Վա՜յ քու սովրցնողի վիզ կոտրի, սէյրս (կախարդական-հմայութիւն) պաքալ արիր (եղծեցիր)։

Կաշուց դուս էկաւ Օձ-Մանուկը, ախչիկ տեհաւ։

Տեհաւ, ինչ տեհաւ—հô տղայ չի. չուտես, չիմես ընդըս մաճ-ճամալին քամացա անես։

Ախչիկը չէ՛ որ տեհաւ էդ տղին. քիչ էր մնըմ գլխի խելքը էթար. կաշու միջից թռաւ ու տղին խառնեց։

Կերան, խման, հանաք արին, խօսացին։

Օձ-Մանուկի ձեռ դըպաւ ախչկայ բերնին, առաջի մէ ատամն ընկաւ. Օձ-Մանուկ էն ատամի տեղ անդին քար դրեց։ Էն վախտը ախչիկը ծիծաղըմ էր, ատամը տալըմ էր մարդի էրես։

Բարի լուսը բացուի ձեր վրէն, բացուաւ թագաւորի վրէն։

Էլի թագաւոր մարդիկ ժողուեց որ ախչիկը վերցնեն։

Թագաւորը առաջ-առաջ էկաւ, մտաւ տղի օրախը. ինչ տեհնայ, տղէն ու ախչէկ փաթըլթուեր էն իրարի. անուշ-անուշ քներ էն. հô տղայ չի. կասես էրկինքի հրեշտակ ըլնի, քիչ էր մնըմ թագաւորը ուրախութենից խելքը թռցնէր։

Նո՛ր աչքալուսանք. նո՛ր բէյֆ, նո՛ր հարսանիք, նո՛ր ուրախութուն։

Թագաւորը տղէն պսակեց, օխտը գիշեր, օխտը ցերեկ հարսնիք արեց, տեհաւ տղէն ինչքամ խօրոտ ա, տա՛սը էնքամ էլ խելքով ա, իրան տեղը թագաւոր դրեց։

Մէ օր էս Օձ-Մանուկի կնիկը իրան ճարիյեէի հետ էթըմ ա ծովի կռափը. մէկ հատ կնիկ ա բռասե գալըմ ըդըրանց. թագուն ա զըցըմ, խափլութենով շորերը վրիցը հանըմ, ինքն ա հագնըմ. իրա շորերն էլ նրան հագցնըմ, թեից բռնըմ-շըպըռտըմ, տըըմ ա.—Կորէ՛, անպիտան, դու Օձ-Մանուկի խա'րճն էս։

Խեղճ ախչիկը չկարըմ ձէն ու ձըպտուն հանի, շուարած մնըմ ա էդ տեղ-ծովի կռափին։

Թո էդի ծովի կռափը կայնի, գանք էդ Օսմանլու (համարձակ) կնկան—ճառիքին բօփ անըմ. իրկունը տուն ա գալըմ։

Մէ՛կ օր, էրկու օր. էդ Օձ-Մանուկ տեսնըմ ա որ էս իրա կնիկը չի, հենց էնպէսդ էլ սուս ա կենըմ։

Ըսդոնք էս տեղ մնան. մենք գանք էդ ախչկայ ճառարին։

Էդ ախչիկ կենցան կեն (շատ ուշ) խելքը գլօխն ա քօփ անըմ, տեսնըմ ա ձեռւթցը գնաց, էլ իլան չկայ։ Էլաւ, եավաշ-եավաշ (յուաշիկ-յուաշիկ) էկաւ իրա մօր գերեզմանը, լաց իլաւ։ Ընդմըր լաց իլաւ, մինչև որ քունը տարաւ։

Մէրն էլի ձէն տուեց, ասաւ.— Ջա՛ն-ջա՛ն. ինչ ա, չես թօղըմ հանգիստ ըլլեմ, քեզի մի կարը հաց կամեցայ, չպաշարայ ուտէր։ Դէ՛, որ էդենց ա, կըլես, էդ բարակ ճանփեն կը բռնես, ու հմ կերթաս։

Ախչիկը զարթնաւ, տեհաւ որ էրազ ա։ Էն բարակ ճանփէն բռնեց, ու հմ գնաց։

Գնաց-գնաց, շատ ու քիչն Աստուած գիտայ, մէ ղայա (ժայռ) քարի ըռաւս էկաւ, ճըմա ղայեն ճղուաւ. ախչկան ներս առաւ։ Ախչիկը տեհաւ որ ըն տեղ մէ հատ ճանեղ-թըրնաոս տղայ ա պառկած, ո՛չ քնած ա, ոչ մեռած. էն ա որ ճաճասը վրէն դըըփըմ ա։

Խեղճ ախչիկ, մէ քըէա լաց ա ըլըմ. մէ քըէա քունը տանըմ, քնըմ ա, զարթնըմ ա, մինչև իրիկուն արևը մտնըմ ա։

Էդ տղէն չնչաւորւըմ ա, ըլըմ տեսնըմ ա իրան մօտը մէ՛ ախչիկ կայ, հարցընըմ ա։

Ախչի՛, ինս էս. ճինս էս. ըս տեղ ինչ բան ունես. օձն ուր պառտավ, ղուշն ուր թեւով ըս տեղ չէր կարայ գայ, դու ո՛նց էկար։

Խեղճ ախչիկն էլ իրա գլխին գալածը ըմէ՛ն պատմըմ ա։

—Է՛, լաւ, ախչի, կապրենք իրարի հետ, ասըմ ա։

Մէ ամիս, էրկու ամիս, մէ տարի. իրեք տարի իրարի հետ մնըմ էն էդ քարի մէջը։

Տղէն ցերեկը մեռնըմ էր, գշերն էլ էթըմ բան ու ման բերըմ էր, ուտըմ, ապրըմ ին իրար հետ։

Էդ ախչիկը պառկաւ, մէ տղայ բերեց։

Տղէն տեհաւ որ էլ չեն կարայ իրանց գլօխը պահի, ասաւ.— Ախչի, էլի, գնա մեր գեղը, իմ հօր տունը հարցրայ. խնդրի, ընտե քեզի տեղ տան, իմ հէրն ու մէրը շատ անողորմ ին, ու ընդրանց մեղքի հըմար Աստուած էս ղազիյեն իմ գլօխ բերեց։ Ինչքան խնդրես, քե տեղ չտայ. հըմա որ ասես «ձեր Արին-Արմանելու գլօխը սիրէք», էն վախտը քե տեղ կտան։

Գշերով ախչկան քարի միջից դուս հանեց, բերեց գեղի մօտը, ինքը դարձաւ-գնաց դէպի իրա քարը. ախչիկն էլ մնաց ըտե։

Խե՛ղճ ախչիկ մէ քըէա լացաւ, մէ քըէա հանգստացաւ. ընչանք բարի լուսը բացուաւ ձեր ամենիդ վրայ ու ընդրա։

Էրեւէն խոլոսեց, գլոխ մտաւ. Արին-Արմանիկու հօր տուն հարցրեց, գնաց. գտաւ. դարկեաճի դուռը կայնաւ։

Մէկ էլ տեհանք ինչ—Արին-Արմանիկու մէրը ֆօճֆ ու սարից դուս էկաւ։

Էդ խեղճ ախչիկը աղաչեց ու ասաւ.—Դու՛ւ բըլես, քու Աստուածը, դու՛ւ բըլես, քու հոգին. քու դօլվերի սիրու սաշաղէն՝ ընձի մէ տեղ տուր, քու չենճլիկի մէջը սըրուեմ։ Բանի էդ ախչիկը ասաւ. էնի Օսմանլուի պէս ոտները ափեց գետինը։—Դուս կորի ասաւ, անսիրտան լաչառ։

Ախչկայ ճարը կտրուաւ, ասաւ.—«Դու՛ւ բըլես, Արին-Արմանիկու գլօխը.» ընձի մէ տեղ տու՛ւր, սթըրուեմ։

Չէ որ Արին-Արմանիկու անուն լսեց մէրը, ճկերի գլօխը դըժդըժաց, ասաւ.—Վա՛յ քու լեզո՛ւն լալընայ, էդ ո՛վ է քեզի սովրցուճայեն՝, ասաւ. տարէք ձիանոցին մէ տեղ տուէք, գշերը մնա՛յ, առաւօտը ըլի կորի՛, էթայ։

Ջաքի կէս գշերը անցեր էր, հոտաղ-մշկներ նոր էին քնե, մէկ էլ տեհաւ դռներն չըխկ չըխկալէն բացուաւ. մէ ձիաւոր մտաւ ներս, էն ախչկայ հետ խօսաց, հարցրեց, ասաւ.—Ախչի՛, ճալիկդ ա լաւ թէ դամիկդ։

—Ո՛չ ճալիկս ա լաւ, ոչ դամիկս, ես փեյճի մէջն եմ նստած, քու տղէն էլ չոր մըրքի վրէն։

Իրեք անգամ էդ գշեր, էդ ձիաւոր էկաւ-գնաց, հարցրեց. իրեք անգամ էլ ախչիկ ասաւ «ոչ ճալիկս ա լաւ, ո՛չ դամիկս, ես փեյճի մէջն եմ նստած, քու տղէն էլ չոր մըրքի վրէն»։

Հոտաղները քըմեն լսեցին։

Առաւօտ էլան, իրանց աղին ու կնկանը պատմեցին։

Էդ մարդ ու կնիկ մնացին շուարած։

Էս'լ էդ ախչկան դուս չարին էդ օր։

Միւս գշերն էկաւ, էդ մարդ ու կնիկ էկան թաքուն տափ կայնան ձիանոց մէջ։

Մէկ էլ տեհան գշերուայ մէ վախտին դռները չըխկռտալէն բացուաւ, էլի էն ձիաւոր ներս մտաւ. էլի հարցրեց, ասաւ.—Ախչի՛, ճալիկդ ա լաւ թէ դամիկդ։

Ախչիկն ասաւ.—«Ո՛չ ճալիկս ա լաւ, ո՛չ դամիկս, ես փեյճի մէջ եմ նստած, քու տղէն էլ չոր մըսուրքի վրէն»։

Էդ գշեր երկու անգամ էկաւ ու գնաց։

Էդ տանտէր ու իրա կնիկ ճանաչեցին որ էդ ձիաւոր իրանց Արին-Արմանիկն ա։

Առաւօտը բարի լուսը բացուաւ, էդ մարդ ու կնիկ էկան էդ ախչկայ մօտ, փաթըթուան էդ ախչկայ վզով, լաց, շուան ու ասե-

ցին.—Հիմի քե պատ տեղ կը տանենք միան թէ եփոր կգոյ, հարցնես թէ պա՛ ո՛նց անենք որ դու գաս։

Էդ գշեր ախչկան տարան Արին-Արմանելու քնելու օթախը ու մարդ ու կնիկ էլի քշերը չքնան։

Բշերուայ մէ վախտին դուներն չխըռտալէն բացուան. Արին-Արմանելին էկաւ, ախչկան մօտը կայնաւ, հարցրեց.—Ախչի՛, ասաւ. ճալիկդ ա լաւ թէ դամիկդ։

Ասաւ.—Համ ճալիկս ա լաւ, համ դամիկս, ես խուրջուրի հորղան գօշկի մէջ եմ պառկած, քու տեղն էլ չիրմայի օրօրոցի մէջ ա դրած. պա՛, ասաւ ախչիկ, մ՛նց անենք, դու գաս։

Արին-Արմանելին ասաւ.—Թող օխտը անծին էրինջ մորթեն. մի անծին էրինջ էլ արունի տաշ դնեն. էն արունը քշեց, տարաւ էն էրնջին, ես էլ ճաշին կգամ։

Արին-Արմանելու հէրն ու մէր էդ բաները քըմեն լսեցին. ուրախութենէ քիչ էր մնըմ որ ըռանեքը պատռէր։

Առաւօտը բարի լուսու հետ օխտը անծին էրինջ մորթեցին, մէկն էլ արունի տակը կայնեցրին, արունը քշեց, էդ անծին էրինջը տաւ-դնաց։

Ճաշի հացին էր, մէկն էլ տեհանք Արին-Արմանելին էկաւ։ Որ էկաւ. ՔԷՖ, ուրախութին, ճաղարայ. զուռնայ, ուտել, խմել, էլ չափ չկար։

Մէ քանի վախտից յետոյ Արին-Արմանելին ասաւ.—Այ կնի՛կ, վեր, նիլենք ձիանքը, էթանք մեր սահմանի գլօխը, ըն տե մէ աղբուր կայ, վրէն իջնենք. մէ ախպէր տղայ ունեմ, էն էլ պտի գայ ընտե, մէ լաւ ՔԷՖ անենք։

Նիլեան ձիանքը, ընկան ճանփայ, գնացին։

Գնացին, չատ ու քիչ Աստուած գիտայ, մէ չայիր-չիմանի տեղ իջան, ձիանքը չիդարին, իրանք էլ նստան։

Հալա չեն հանգստացէ, էս եանէն էլ Օձ-Մանուկ իրա կնիկը էկաւ, իջան. սկսեցին ուրախութեն անել։

Հմա՛ ինչ անես, էս մարդիկը իրանց կնանիքին ճանաչմ էն, իլաքի թէ Օձ-Մանուկի կնիկը ծիծաղայց. տամի ճաւաղքը տուեց էրեսները, էլ Օձ-Մանուկ չկարաց դիմանալ, ասաւ.—Ախպէ՛ր, էդ իմ կնիկն ա։

Արին-Արմանելին ասաւ.—Ախպէ՛ր, էս որ քու կնիկն ա, ճ՛դ էլ իմ կնիկն ա.—Բռնը քեղի, իմը՝ ընձի։

Կերան, խման, էլաւ ամեն մարդ իրա երկիրը դնաց։

Աստուածանից իրեք խնձոր իջաւ, մէկ տաողին, մէկ լսողին, մէկ էլ չատ խօսողին։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Սոյն երեք հէքիաթները—Հովիւ Ախպէր՝ Ախպէր գառներ և Օձ-Մանուկ պատմած է Արխատակէս վարդապետ Զուլոյեան, որ է Սեւանայ միաբան և բնիկ Շահրիեարի Ջաֆարապատ գիւղացի, որ այժմ յէջմիածին կը գտնուի, առ ժամանակեայ կը յաճախէ Գ. Ճեմարանը լսելու լսարաններու մէջ։

Արխատակէս Վ. սոյն հէքիաթներն սովրած է իւր մօրէն, որպէս իւր եղբայրն, որք 15 տարի առաջ իրենց գիւղի մէջ հռչակ ստացած հէքիաթ ասողներ եղած էին և կը հրաւիրուէին գիւղի օդաներն հէքիաթ ասելու և զւարճացնելու հաւաքուած հասարակութիւնը։ Այս վարդապետի ասելով իւր եղբայրն անհաշիւ հէքիաթներ գիտէ, իսկ ինքը մոռացած է, միայն սոյն երեք կտորն որ իր մօրից սովրած է. լաւ միտքը պահած է իւր մայրն շատ սիրելուն իբրև Թանկագին յիշատակ։ Սոքա Բօրուն գիւղացի (հին Պայազիտի մօտ) եղած են. իրենց հայրը Գրիգոր, սորա հայրը Գէորգ, որոյ հայրը Պօղոս, Պօղոսի հայրը Մանուկ, Մանուկի հօր անուն Պետօ, որոյ հօր անուն Սեօ։ Սոքա Զուլոյեան կը կոչուին Պօղոսի Զուլօ կնոջ անունով, այս Զուլօն մեծլիս և գիւղի կառավարիչ եղած է. Սա Ջաֆարապատ գաղթած է Բօրունէն Պարսից ժամանակ։

Հասան խանի իշխանութեան միջոցին հայեր՝ որպէս քրդեր և Թուրքեր ծանր ղալանի (գլխադին) կառնէին փեսաներէն, որով շատ աղջիկներ տունը մնացին, առ այս շատ մը ծնողք (տղայոց) դիմեցին Հասան խանի և գանգատեցան։ Հասան խանն ես վճիռ արձակեց.— «Ո՛վ որ հասած աղջիկ ունի, չէ ամուսնացուցած, այլ ես թող չամուսնացնէ. նա պէտի հաւաքէ, բերէ, որ իւր ծառաներու վերայ պսակէ»։ Այս վճռին վերայ մի գիշերուան մէջ որչափ հասած աղջիկ կար պսակեցին առանց ղալանի։ Այս աղջիկներու թուոյն մէջ էր Արխատակէս վարդապետի մամ Ալմաստ Շաքոյեանը։

Դ

ԲԱԼԱՔ ԱՉԱՌ

Մոկաց բարբառով *

Սոլտանոյ Թագաւոր աղքատանոցմ ի բաց. էսաց յիւր տղըն.

—Ես կը մեռնըմ, խըյրաք էլմ կը բանցըցիս.

Խէր մեռաւ, տղէն էլմ բանցըցուց։

Օրին մէկ դաւրիշմ էկաւ ան դե, ուսկըմ տուըն ձեռ. ուսկըն ի թալ, գինաց տան վըրըն fունն։

Ասըն.—Դաւրի՛շ, ինչու ուսկըն կը թըլի։

Էսաց.—Մէկ ուսկըն էլ խեյրա՛ք կըլնը.

Խաբար տուըն Թագաւուրըն, առըցըն.

—Դաւրիշմ՝ էկեայ ան տե, ուսկըմ տուընք ձեռ, ուսկըն ի թալ.

Թագաւուր էսաց.—Կանչըցէք ան դաւրըշ, թը գեայ աս տե, խեմ, ինչ մարդ ի։

Կանչըցըն, դաւրըշ գինաց մա Թագաւուր, Թագաւուր էսաց.

—Դաւրըշ բաբա, գիւ իմ խըյրաք չըս ընդունիր, իմ ուսկըն թըլիր ի։

Դաւրըշ էսաց.— Թագաւուր ապրած կեաս. գիւն Թագաւուր, ամօթ չի մէկ ուսկով կըսըս խըյրաք կէնըմ.. մէ աղջըկմ կեօ Բասրայու դաշտ՝ բերըմ չնիր ի ան տե, քառասուն փէննէրէ թաղիր ի, ամեն փէննէրից չարեմ կգեայ տակ, ամեն չարը ճօթ քառասուն fիայ, գիւն Թագաւուր մէկ ուսկով խըյրաք կէնըս։

Թագաւուր էսաց.—Էս դաւրըշ բռնէք, մինչեւ էս կըեամ, կը գեամ, թա աղուըրթ իլաւ, դաւրըշ չրաղ կէնըմ. թա սուտ իլաւ, դաւրիշը վըզ կը զարկիմ։

---

* Պատմած է Մոկաց Գինեկանց գիւղացի Ջասիկ Խէպօեան. որ գիտէ բազմաթիւ ժողովրդական վէպեր ու հէքիաթներ, նա մանաւանդ Թրդ., վէպեր. Ջասիկ այժմ Գ. Ճեմարանի ննջարանի մէջ գիշերապահ է։

Դաւրըշ բռնըցըն. թագւորը իւր չուրէր խազնաւ՝ յիւր նակիր կապըց, ձըն խիծաւ, ղայպըմ՛ ուսկը ի թալ ձիու քեամակ, գինաց. ա ընցկուն կան ի րի, Բասրայու դաշտ չդնտաւ. էդ ղըյպէ ուսկըն կիրաւ, չգնտաւ, յիւր նակիր ծախըց, կերաւ, չգնտաւ. յիւր ձըն էլ ծախըց, կերաւ, էլմ չգնտաւ։

Թագւաւուր էսաց.—Հէյ վախ, ես ինչ իր՝ էրի իմ խլխ, դաւրիշիմ խուսքով իմ թագաւուրութինիցն էլ էլայ։

Բանձր քեարըմ աղա տեղն էր, էսաց—ա՛էլըմ աղա քեարի գլխօխ, ըզի թիլիմ տակ, մեռնիմ, դարվշը խուսքով ընկիր իմ աշխար, կան կգեամ։

Թագեաւուր գինաց քեարի գլխօխ, յետ կը դառնայ, խուզըն քաղցը ի։

Մէկ խովըւըմ անիւ դիմաց նստած կըլնը, խովըւ կանչից.

—Աղէ՜կ կտրըճ ճեճեղ. ինչ կէնըս աղ տե, էրի՜, տխնանք քիւ դարտ ինչ ի. դքի քեարըմը թըլի տակ։

Թագեաւուր գինաց խովըւու մօտ, էսաց.

—Ես յիտիւ Բասրայու դաշտըն կան կգեամ, չգնտայ. ղայպէմ ուսկը կիրայ, չգնտայ. նակիր ծախըցը կիրայ, չգնտայ, իմ ձըն ծախըցը, կիրայ, չուրէր ծախըցը կիրայ, չգնտայ. իսն էլ իմ դարդանաց ըզի տը թիլիմ տակ, մեռնիմ։

Էսաց.—Բէ՜ւ տըօն ակօլ չըլնը, կելնըս աս կըրի վերէն, (սարի գլուխ որ քիչ բարձր է—կերճ), Բասրայու դաշտ կը տեսնըս։

Թագեաւուր գինայ կերըրի գլեօխ, տեսաւ Բասրայ, Բասրայու դաշտ, տեսաւ բերդմ չինի, բըռնէր իլի Ֆալաճ (շատ բարձր—երկինք, Աստուծոյ մօտ)։

Թագեաւուրն ի, իջաւ գինաց. գինաց յեռջիւ, տըսաւ-աղուըթ, քեառսուն փեճեճեր թղիր ի յեռջըւ, վ՛ուր փեճեճերըն գինաց. չավրիմ վիրուց իկաւ տակ. ի բաց, ամին չալը ճուըթ քեառսուն ֆիսայ։

Թագեաւուր գինաց, ներս մտաւ. ութ օր մնաց աղ տե. էրկու դան, իրեք դան կուտըր, կը նստըր ան տե.

Օրէն մէկ՝ անիւ (աղջկան) խասցամուչ էսաց.

—Ես կուզըմ քիւ խանըումը տխնամ։

Էդ խասցամն էլ մէկ ծամառ իզար տըը իրեւ, էսաց.

—Ի՞նչ գուրծ ունիս իմ խանըումի խիտ. դիւ ծառաւ չը՛ս, անօթը չը՛ս, բիբիկ, տկլուզ չըս. էլ ինչ գուրծ ունըս իմ խանըումուչ խիտ։

Գինաց խանըումուչ էսաց.—Մէկ մարդ ութ օր կայ, իկի աս տե, կուտը, կը խմը, աս օր էսաց. «Ես կուզըմ քիւ. խանըում տխնամ. ինէլ մէ՛կ ծամառ զարկիր իմ։

Խանըում էսաց.—Դիէ՛լ փուշդ, դիւ ընչի՛ զարկիցըր. ան մարդըն էլ կըլնը մէ բան կառը. կանչէ՛, թը գեայ աս տե։

խասամ գինաց, կանչից. էրի խանումուչ մօտ։
խանումուչն էլ ականջկալայ էրի, ասէցըն.
—Բիւ պազրկեան իրի։
Պազրկեանն էլ իրի, խանումուչ մօտ նստաւ։
—Պազրկեան, կասը խանում, իրի, խէնք, ինչ արիր։
Պազրկեան էսաց.—Բեսուսուն ըղտաքեռ մալ կիրայ, բամ' չխասկացայ. ամէն ուրբաթ օր սահաք խնդըն Բալաք աչառ մը խիծնը, տղեայ, մանչ էրկինք, մանչ գետընք ինի, կգեայ. ուր խօր խաս պաղչէն կը նստը. կը կըպըթայ. օր կըպըթայ, էրկու ջուպուխնի կղեան ադ տի, մէկն ան թիւ կը կայնը, մէկ անթիւ. կալօն ան մէկ կը լցընի' կը խմը, մէկն էլ ան մէկ կը լցընը. դէմ դի կը կանդնը. թուրմ' կը զանի մէկ անիւ վըղ, մէկ անիւ. երկուսն էլ կոդանը. Բալաք աչառ կը խիծնը, մանչ էրկինք, մանչ գետինք ինի, կնրթայ, խաս մարդիւ չը խուսը—չտայ, չառնը։
Ադ աղջիկն էլ ասա մարդիւն էսաց.
—Ազախմը, իմ պազրկեան ինչ էսայ, ան մարդ ինչ կասի՝ Զինայ Թադեւուրու աղէն ի. իս, ան մասնըքնիր խաս մա մէկու փուխիր ինք. ան ըղի տ'առնիր. մկայ ալ չըմ դըտի, ինչու խամար ըղի էլ չառնը. էսայ, թը դիւ գնացըր. Զինայ Թադեւուրու լաճու յէյութուն ըղի խամար բերըր, բերըր. թը չբերըր. «քիւ խուքըն դնին անծակ գլուխիմ, իմ ձեռնէն չը'ս ազատուը»,։
Էդ մարդ էսաց.—Կուզիմ քինէ. խուրճմ' ուսկը, էրթամ խալիւ։
Իլաւ գինաց Զինայ Թադեւուրը քեաղաք, ուրբաթ օր սահաք խնդին գնաց Թադեւուրը խաս պաղչէն։
Տիսաւ Բալաք աչառ խիծի, [մանչ էրկընք, մանչ գետընք ինի կգեայ։ Իրի խաս պաղչէն նստաւ. վուր կըպըթաց, չուպուխնիմ մէկ ան թիւ դադըրաւ, մէկ ան թիւ' կալօնմ ան ըլից խմաւ, մէկն էլ ան մէկ լըլից խմաւ. մէկն էլ դէմդի կանդնաւ. էրկուսն էլ ստանից. մանչ էրկընք, մանչ գետընք ինի գինաց. խաս մարդիւ մը'նչ էտու, մը'նչ առըց։
Էսաց.—Բամ' չխասկացայ անիւ մօտէն։
Մնաց մէկէլ ուրբաթ օր, էլի սահաք խնդին էլաւ, յիւր չուըիր ելան. դաւրիշիմ շիւր խագեաւ. դիւՖմ' բռնից յիւր ձեռ, գինաց, խասաւ պաղչէն. նստաւ։
Տիսաւ էլմ Բալաք Աչառ խիծը, մանչ էրկընք, մանչ գետին ինի իրի, իրի ա տեղ նստաւ. որ նստաւ կըպըթաց, չըխչիմ՝ մէկ ան թիւ դադրաւ, մէկ ան թիւ, կալօմ՝ մէկ ան ըլից խմաւ, թափ տուաւ. մէկ ան ըլից խմաւ, թափ տուաւ։

Դէմքի կանգնաւ, էրկուսն էլ ապանից, Բալաք աչառ խինծաւ, գինաց։

Էսա դաւրիշ յընկաւ խախուէն, կանչից.

—Սա՛ ճանի, Խա՛-ճու, Խա՛ ճանի, Խա՛ ճու.

Դարձաւ իրիշից յիտի, տըսաւ դարվիշմ անիւ խախուէն կերթայ. ուր չավրէն ի թալ։

Դաւրիշը չաւրէն առըց, էմ յիտիւ գինաց, կանչից—Սա՛-ճանի, Խա՛-ճո՛ւ, Խա՛-ճանի, Խա՛-ճո՛ւ։

Իրիշից տըսաւ, դաւրիշ էմ խունէն կերթայ։ Իրիշից յիւր վե-րայ, բանմ չըտըսաւ. յիւր չեփկեճ ի խան, ի թալ. դչեփկեճ առըց, խոււ անթը տակ, էմ ընկնաւ խունէն,—Սա՛-ճանի, Խա՛-ճո՛ւ, Խա՛-ճանի . . .

Իրիշից յիւր վերայ բանմ չախաւ. ալմաս բիւռ խանչալ որ մէջքն էր, քեշից, իթալ։

Ալմաս բիւռ խանչալն էլ առըց. խոււ անթը տակ, խախուէն էմ «Խա՛-ճանի՛, Խա . . » ձէն տուեց։

Դադրաւ, էսաց.—Կդեայ գլօխս օր թուրմ սրբիմ անիւ վրդ. խս իմ չավրէն թլցի, քեառսուն fիսա անիւ գինն ի. չափկեճ թլցի, խարիր fիսա անիւ գին. ալմաս բիւռ խանչալ թլցի Զինա թագեաւուրը քեաղքի գին ի, թը ոն տանըր, խուցուտուր՛ր, ինչ խլանէր, էմ թը գէր.

Էդ դաւրիշն էլ էսաց.—Իս քիւ fեաստրը բաղդ ինչ մանչ քիւ սրտըն գիւ կը սիրիս. ըզը տանըս քիւ կօճախ։

Էսաց.—Դիւ չտուըր իմ fեաստրը (սրտի մէջի) բաղդ, գքի տ՛ըսպաննէր, լէ դիւ տուըր fեաստրը բաղդ. գքի չըմ սպանըր։

Էսաց.—Իս կերթամ. իմ խունէն էրի։

Գինաց, տըսաւ բերդմ չինի. Սարեմ մանչ վար քեարը գլխին, տըսաւ աղա Բալաք աչառ ինչ խինծիր էր. կապըց սանձի, խուրձմ կեարմասօ փէտ առըց բերը, կը դարկը։ Ադ ալ ասըց.—Մեղը ի, մը՛ զարկի՝ Աստուծոյ սիրուն ընը, մը՛ զարկը։

—Կը զարկիմ, չզարկիմ, դիւ ինչ գուրծ ունիս խիտ։

Ա ընցկուն իգար, կաշին վուրնից վե իբէ վը.

Թուղ խոռւ, գեացըն տուն։

Վլացուան. խաց դըրին ան տե, կերան.

Դաւրիշ էսաց.—Դի՛ւ, քիւ fեաստրը բաղդ, դիւ քիւ կասաճ ձը խամար ինիս։

Էսաց.—Վալա, դիւ չտուըր «fեաստրը բաղդ». իս թուրմ զանի քիւ գլեօխ, քիւ գլեօխ էնա փաճճարեն ինի էրթէր դիւս, տուըր «fեաստրը բաղդ», ազատար։

Էսաց.—Իս էլ թագեաւուրը աղայ էր, մարդ ունէր. յըրկվընից

կը նստէր, ուրէն մէկ յըրըկուն քունս տարաւ. խնէլ իմ մօրդիլուն տըրցը. տսօր քինս կը տանը. ելիցէք, դինացէ՛ք իմ խօր մօտ նըստեցէք: Մարդիր էլան, դինացըն, քինս չտարըց. մէկնէլ տըսայ դիւռ բոյրուս. փարիմ՛ երկու չանկի, երկու չալղըճի. երկու ուսկը սանճցալ աթոռ:

Ուսկը աթոռ մէկ իս նստայ, մէկ փարին:

Մեռք ձեռ թլցընք իրար թեւ. իմ հեռչ դիայը, իս ընկլըիմ աղ տեւ. մէկն էլ տըսայ, մարդ չկայ. վուվ ձը բռասց դէր, կը զարնէր, կոպանէր. դուսր դէր ուչխար դէր, մարդ դէր, կը զանէր: Ուրէն մէկ տըրցըն. «Թագճաւոր ապրած կինաս, էս փլան սարը մէջ մարդ կայ», ան տե ծուռ կը սաղացըցէ, քիւ տղէն կը տանըս ան տե, սաղանայ:

Իմ խէր ըղէ իլաւ տռըց, տարըց ան տե ի թուղ. դարձաւ իրիվուր դարձաւ իրի, իս մէկ ամսում՛ չափ՝ մնացը աղ տե, քիչ մ՛ աղէկացայ: Ուրէն մէկ տըսայ աղա խալաւիւր դինաց ծուվու բիրան. մէկ պառաւմ տռըց իրի, ձի էսաց. «քի մէրմ իմ բիրի», իս տըրցը. «բիրիրիս, բարովիս բիրի, խաց կիրակուլ կեփը, մի չուրիր կը լուայ, կը կարը:

Մնաց մինչիւ յիրըկուան, խալաւիւր ձը էսաց.

Մինչիւ սս օր իս, դիւ մնակ էր, մէկ յեօղէմ կը քնէր, սս օր դիւ դինամ, ջուկ յեօղէմ: Գնացի, նստայ. կալօմ՛ լցի, խմայ, մէ՛կ էլ լցի խմայ, քինս չտարըց. իս տըրցը. «տ՛էրթամ, իրըչիմ. խալաւիւր, պառաւ ինչ կէնին: Գինացը դռան ծակտիր ինի իրիչիցը նիրս, տիսայ խալաւիւր կապմ իցդի պառաւիւ վրդ. քեչից տարըց դէս, իրի դէն, ղըպառաւ խեղդից, իթալ ան տե: Պարկմ կայ, էդա պատէն կախ էր. պարկ իրի վե, երկու բարակ օձ միջէն ի խան. ի թուղ աղա պառաւի ջանդակը վրէն. աղ պառաւ էրուն ծծըցըն, ամեն մէկ խաստացան, յէլան քեանց սուն: Իրի, օձերու պուչ կապըց յառքէն, յէռջիւ ամեն օձու իրիք չանճախ իդի վար մէկ մէկը. աղ էրուն անունց բերնէն թափաւ. չանճախքիր երկու ծակից, իրիքըն կայնաւ. բերըց աղա էրուն իլից մէկ կթոցմ, իդի ըռաֆը վերէն. աղ օձեր քամիզմ վլաց, էմ իդի պարկ վե, բիրան կապըց, կախըց պատէն, լըվացուաւ. խաց կիրաւ, պարկաւ ան տե, քինաւ: Իսն էլ դարձայ, էկը իմ տեղ, ալ քինս կը տանը՛, չքնայ մինչիւ առաւօտ: Առաւօտ էլայ, էկը մա խալաւիւր, խալաւիւր էսաց.

—Բիւ մէր մեռը: Իս տըրցը, մեռը, Աստուած խտու, Աստուած տարաւ: Խալաւիւր էսաց.—Իս պառաւ կառնըմ, կը թըլիմ ծուվ, դիւ փլաւ կէնըս, եղն էլ կեօ ըռաֆը վրէն, կը բերըս, ցէս վերէն, կուտիս. մինչիւ իս կգեամ: Իսն էլ բիրը, փլաւ իփիցը, դրը ճեասեն, անժուր կիրայ, քիչմ էլ դրը ճեասեն, էդ զեխիր (թոյն) բիրի

ցի վերէն, դուել մէջ անկիցը, մինչեւ խալաւիր իրի. իրի, էսաց՝ «Փլաւ խփիրը». Ասըցր. «փփիրըմ,» իդնէլ ցեիրիմ, կիրիրիմ, հալա կէս մացիրէ աս տեղ». Խալաւիւրն էլ կասը.—խամ չկա, մէջ, անիւ խամար չմնաւ. Գինաց, նստաւ ճեասը վերէն դդէլմ՝ ինչ կիլաւ. չուրցաւ յիւր տեղ: Իսն էլ էլայ, աղա պղտի գիւռ բայց էրի, տըսայ բան չկէր ան տեղ, մէկ քեանըմ խառ գիրք կէր, մէկ պզտիկ գիրքըմ էլ աղա գրքերի. վըէն դրած. աղա պզտիկ գիրք առը, կարդացը, վուր կարդացը, մէկն էլ տիսայ փարըն, էրկու չանկըն, էրկու չալղըներն, ուսկը աթոռ խիտնիր, էկան ան տեղ. ուսկը աթոռ իս նստայ վերէն, մէկ փարըն, ձեռքիր թըլցընք վուր մէ մէկու թիւին, էրկու չալղըներն զարկըն, էրկու չանկըն խաղցըն մինչեւ առաւօտ Ինչ ժամանակ գիրք կարդէր, էմ կգէր.

Ցորէն մէկ տըսայ իմ խօր կեամին իկաւ, ան տեղ, կայաւ, իմ խէր կեամուց դիւս էլաւ, իրի իմ մօտ. էսաց.—Ա՛յ որդի, սաղացիր իս Իսն էլ ասըցը.—Իս սաղացիր իմ, խալաւիր մեռիր ի. Իմ խէրըն էլ էսաց.—Ձեռնեմ, դիւ սաղացիրիս, թօ խալաւիւր մեռնը. Մինքըն էլ իլանք, էկանք, նստանք կեամին. Կեամին թուղ իտու, էկընք, ծովլից դիւս էլանք. Իս իմ խուր ասըցը.—Դիւ գինացէ՛ք, իս քիչմ լողանամ, գեամ, ձի կը խառնիմ. Անոնք գինացըն. իս իմ խալաւքիր խանը, դըը ան տեղ, իմ գիրք բռնըցը իմ ձեռ, մտայ մանչ ծովիւն, կը լողկանէր. մէկն էլ տըսայ մէկ մարդմ՝ էկաւ ան տեղ, էսաց. Ա՛յ մարդ, դիւ քիւ խալաւքիրու մօտէն չըս վախինայ, քիւ գըքու մօտէն կը վախինաս. քիւ գիրք դի վըր խալաւքիրին, մտի ծով, լողացը՝ յիտ դիւս, քիւ խալաւքիր խաքը. քիւ գիրք դի՛ քիւ ծոց, գնա. Իսն էլ ասըցը. Ընիւ խուսքն ի, դըը իմ գիրք խալաւքիրու—վըէն. մտայ ծով, կը լողանէր. մէկնէլ տըսայ գդիրք առըց, հայ վար ծովուն գինաց: Ջըրց դիւս էլայ, իմ խալաւքիր խագեայ, ալ իմ խօր քեաղաք չգեացը, իկայ ըս տեղ, ընըդմ աս տեղ չինիր իմ, նստիր իմ ինի. Ինչ իս իկեր էր աս տեղ, մինչեւ աս օր իս մարդիւ խիտ չէր խուսը: Էսաց.—Աստ Բալաք աչաս կը տեսնաս, ան փառրու խուրուխըրինի. էրկու խուսք ան գրքից միտս մնացիր ի, մէկ ան կը կարդամ անիւ, ան էրկու չուսուխճին ինչ կգեան, անիւ աղէրքերնին, իսն էլ իմ դարտանաց կը զարկիմ, կալանիմ. ինչ կը կարդամ. էմ կգեան. Ամէն ուրբաթ օր իմ խուր խաս պաղչէն մըտա կըյնը, խնէլ կերթամ ան տեղ, էրկու սաճարուան չանք կը մնամ ան տեղ, կըլլիմ գեամ. Էսայ դաւըրըշըն.—Իս դալիմ, Բասրայու դաշտը տղջկն ի գքի ղըկը աս տեղ. ա ընցկուն մարդ ղըկից աս տեղ, մարդմ՝ իմ յույուէթին չառըց, դիւ էկըր, առըր. գինա, էսա, քեան ըղի մէր, քեան ըղի քիւր կինայ ձի. իս քի չը՛մ առնը. վուվ կառնը, առ, խիրըք ի ան մալ խարճիս ձը ապով, քի չըմ առնը.

Էդ դարվըշն էլ էսաց.

—Ձիմ՝ տու ձը, ղըյպեմ էլ ուսկը տու, էս տ'էրթամ գըքը յիտև գիրք բիրիմ։

Ադ ալ էսաց.—Հա՛յ դարվիշ բաբա. գուրծ չունիս, դիւ չըս կէրի բիրի, գինա խատ քիւ բանին։

Դարվիշ էսաց.—Չէ, տըղաս, էս էրթամ իտևէն։

Էսաց.—Տամ, տար քի խամա կի։

Դարվիշն էլ ելաւ, ձըն խիծաւ. ղըյպեմ ուսկըն իթալ յիւր քեամակ. ձըն քշից, գինաց մէկ քեառասուն աւիւր ճամբախ, մէկ էրկըր դիւս ընկեաւ. ա տեղ չէնըրկ չկէր, քեանց ջաղաց աւիլ բանմ չկէր. մէկ, էրկու, իրեք ջաղացք ընցաւ. մէկն էլ տըսաւ ջաղցպան կանչից. էսաց.—Սըլահանայ Թագեաւուրու տղա, դի՞ւր կէրթաս։

Ան տեղ ձըն կայնացըրցոց, մոտծից, էսաց.

—Ասիկ էս քեառասուն աւիւր ճամբախ իկէրիմ, աստ ջաղցըպան ինչ գիտը էս Սըլահանայ Թագեաւուրը տղէն իմ։

Ջաղցպան էսաց.—Ի՞նչ կը մոտծիս, դարձը էստ տեղ, ադա գուրծ, ինչ դիւ իտևէն կերթաս. էս չըլիմ, դիւ չըս կէրի, բիրի։

Էսաց.—Ըդա էս քի չըմ ճանչընայ. դիւ ըղի կը ճանչընաս։

Դարձաւ, էկաւ մոտ ջաղցպան. ջաղցըպան էսաց։

—Մինք խըրխշտակնիր ինք, իրեք օր քիւ խուր խըյրաթ է մնացիրիմ, քիւ խուր խուգըն էլ էս իմ առը. քիւ խէր շատ աղէկ խեր կէնըր, էս անիւ խաբրը խամար ըը չանց տամ, էրթաս, ան գիրք բիրիս, էս գըտիմ, դիւ ան գըքըն իտևէն կան կգեաս, էս չըլըմ, դիւ չըս կէրի։ Կէրթաս Սոամըէւլ՝ դիւս կըլնըս, կերթաս Էյիպ, դիւա կը բանան, էրկու դարվիշ կայ ան տեղ, դիւ էլ գքի կտաս վար աջ թիւին դռան իտևին, մինչիւ սահար խնդին. կըսըս.—Դարվիշ բաբանքտիր, դիւ ընչի չըք խո՞սըը. անիւնք էլ կասըն.—Սարէն դիւ կգեաս, ձիւըէն դիւ կգեաս, աշխարէն դի՛ւ կգեաս, խուսք քիւն ի, մինք ինչ ըը խոսընք։

Դիւն էլ էսա.—Ըղի քու (երբէք) խուսք չկայ, իմ խուսք էն ի. ձի Թագեաւուր իմ ձէն լսէր, ին օր, ինը ամըս, ին սահաթ, ին ցաղըգա լմանէր, Աստուած անիւ տըտէր տղէմ։ Թագեաւուրն էլ ան ժամանակ կիւգեայ դռան վերէն, էկանջ կէնը, կը դառնայ, կերթայ։ Տղէմ ադա Թագեաւուրն ըլնը, ըն սահաթըն մէջ էլ աղջըկմ՝ Չինչանց Թագեաւուրըն տ'ըլնը, ադ աղջըկ, ադ տղէն ըը սըրվին իրարիւ վերէն։ Ադ տղէն ինչ կը միծանայ, դիւ էլ Թագեաւուրըն էսա,—Թագեաւուր, քիւ տղըն կասըս, ան աղջըկ ինչ կգեայ քիւ տըը մօտ, ըսը, թը չգեայ քիւ մօտ, աղջըկ առը. վրէ չըս թուղնը գեամ քիւ մօտ. տղէն էլ թը ըսը՝ դիւ գեող իք։ Աղջիկ տըսը.—Մինք ինչ ինք գեողցը. տղէն թըղ ըսը,—դիւ մի գիրք իք գեողցը։ Ան

աղջըկ ան գիրք տը բիրի՝ մա՛րդ չկէրի բիրի։ Էսաց.—Առ նա կանանչ վարուց, բռնը քիւ ձեռ, քեանի մի էրկըրնի՛ս, մա՛րդ քի բախըմիշ չըլնը, ինչ մի էրկըրէն գիւս կըալըս, կանանչ վարուց քիւ ձեռ կը չուրնայ՝ թալ։

Ադ ալ էլաւ, կանանչ վարուց բռնըց յիւր ձեռ, գինաց, անիւնց էրկըրէն ինչ գիւս էլաւ, կանանչ վարուց ձեռ չուրցաւ, վարուց էթալ, գինաց Սասմբիւլ գիւս իլաւ, գինաց Էյիւպ. գիւռ էրաց, մտաւ նիրս, տըսաւ աղօ՛ւրթ էրկու դարվըշ կան ան տե, վար աջ թիւին, գինք իտու դռան իտևէն մինչիւ սաճաքը խնդին։ Էսաց.—Դարվիշ բաբանքտի՛ր, ընչո՞ւ չըք խուսը։

Դարվիշները ասըն.—Աշխըրքէն գիւ կգեաս, սարէն, ձուրէն գի՛ւ կգեաս. խուռք քիւն ի։

Թագեաւուրն էլ իմացի մէկ կարիպ դարվիշմ իկի, էսաց.

—Վաղի՛ր, իլի էրթանք մատ ան դարվիշ, խենք, ինչ կըսը։

Անիւնք էկն խասան դռան վիրէն. դավրիշն էլ էսաց ան դարվշնիրուն։—Ջը թո՛ւ խուսք չկայ. ըձի մէկ խուսք կայ, Աստուած տէր, ձը թագեաւուր իմ ձէն լսէր, ինչ ինն օր ին ամըս, ին սահաթ, ին դագըղայ լմանէր, Աստուած անիւ տաէր տղէմ՚։

Թագեաւուր լսաւ, էսաց.—Վաղի՛ր, դառնանք, էրթանք։

Դարձան գինացին, չմտան նիրս։

Էրկու մարդիւ էսաց.—Լուսուն կերթըք Էյուպ, կը մտիք նիրս, մէկ կարըպ դարվիշմ կայ ան տե, կը բռնըք, ձի խամար կը բիրըք։

Առաւուտուն էրկու մարդ էկըն, մտան նիրս. դարվիշ բռնըցըն, ասըցըն.—Արի, գինանք։

Էսաց.—Թագեաւուրի ձը ինչ տ՚էնէ, ինչ գուրծ ունիմ թագեաւուրը խիտ։

—Ջէ՛, գքի ուզիրը. տը գեաս, էրթանք։

Առըն տարըն թագեաւուրը մօտ, թագեաւուր էսաց.

—Դա՛րվիշ բաբա, գիւ յիրկուն ինչ իս ասը։

Էսաց.—Թագեաւուր ապրած կենայ, իս բանմ չըմ ասը յիրկուն։
Էսաց.—Ջէ՛, ասըցըր։

Էսաց.—Իս բանմ չըմ ըսը, մէկ խուսքմ տուը. իս մտայ Էյուբ, էրկու դարվիշ կին ան տե, մինչիւ սաճաք խնդին չխուսամ, ասը. «դարվիշ բաբանքտիր. ընչու չըք խուսը»։ Անիւնք էլ ասըցըն «աշխըրքէն . . . խուսք քիւնն ի. իսն էլ ասըցը. . .«ձի թագեաւուր իմ ձէն լսը, ինչ ին օր ին . . . Աստուած անիւ տաէր տղէմ»։ Իս նա մէկ խուսքն իմ տուը։ Թագեաւուրը էլ ա ընցկուն ծիր իր քի դեղին ի դարձի, էսաց.—Դարվիշ, նիւր ըղը տղայ ըլնը։

Դարվիշն էլ էսաց.—Աստուած տըտայ.

Թագաւուրն էլ էսաց.—Դէ կաց աս տեղ, թէ տղայ էլաւ, թագաւուրութուն ուզիս, ինչ ուզիս, էս տամ քի։

Դարվիշն էլ մնաց ադ տեղ, մինչիւ ժամանակ էրէ։

Աստուած իտու մէկ զաւակմ։

·Թագաւուր էսաց.—Դարվիշ բաբա, դիւ քիւ քեսերք էրա, էս իմ կէս թագաւորութուն տամ քի։

Դարվիշ էսաց.—Թագաւուր ապրած, դիւ չը՛ս կէրի իմ խնդիրք կատարը։

Էսաց.—Էս չկատարիմ, էլ վո՞ւվ քիւ խնդիրք տը կատարը։

Էսաց.—Իմ խնդիրք քիւ տղէն տը կատարը, դիւ չը՛ս կէրի։

—Թը կենայ, իմ տղէն մեծանայ, կատարը։

Էդ սաճաքին ինչ տղէն էլաւ. Ձինաց թագաւուրըն էլ մէկ աղջըկ էլաւ. տղէն, աղջըկ սիրուան իրարիւ վերէն։

Մէկ ժամանակմ վերէն ընցաւ, դարվիշ էսաց.

—Թագաւուր ապրած կենաս, մէկ աղջըկ չգեայ քիւ տղը մօտ։

Էսաց.—Կգեայ։

Էսաց.—Կերթաս քիւ տղըն կըսիս. յիրկուն ինչ ան աղջըկ ինչ կգեայ, տղէն չը թըղնէ գեայ յիւր մօտ, ան կըսը—վըրէ՛ չըս թըղնը գեամ քիւ մօտ. տղէն թը ըսը՝ գեօղ իք։ Ան տը՛սը, ինչ իք գեօղցը. տղէն թը ըսը—մի՛ր գիրք գեօղացըրիք։

Թագաւուր էլաւ, գինաց տղը մօտ, էսաց.

Աղջիկ յըրկուն իրի մա տղէն, գիրկ իրի բիւլիւր տղըն, տը կախուէր վզէն. տղէն դմչկուլմ իտու, աղջիկ դպաւ գետըն։

Աղջիկ էսաց.—Դիւ ընչո՞ւ չըս թղնը գեամ մա քի։

Տղէն էսաց.—Դիւ գեօղ իք։

Էսաց.—Մինք ի՞նչ իք գեօղցը։

Էսաց.—Մի գիրք գեօղցիր իք։

Աղջըկ դարձաւ, լալելէն տուն գինաց։

Թագաւուր էսաց.—Աղջը՛կ, վըր՛ կլաս, քիւ սիրո՞ղն ի մեռը։

Էսաց.—Չէ՛, չը մեռը, չէթուղ իս էրթանք անիւ մօտ, իս սաը ընչո՞ւ չըս թուղնը գեամ քիւ մօտ, ձի էսաց «դիւ գեօղիք«. իս սաը՝ «մինք ինչ ինք գեօղցը՛,» էսաց «մի գիրք գեօղցիր իք».

Ձինչանց թագաւուրն էլ ջառ իտու կանչիլ, ինչքան մարդ կէր անիւ, ամեն ժողվից, իրի, էսաց։—Վո՞ւվ նա գրքը սալղ կտէք, էրթայ գբիրը, էս իմ կէս թագաւուրութուն տամ անիւ։

Մարդ սալղ չիտու։

Թագաւուր էսաց.—Էլ մարդ մնացը, չէկը աս տեղ։

Ասըցըն.—Պառւու տղէն մնացը, չէկը։

Թագաւուրն էլ էսաց.—Կանչըցըք ան տղէն գեայ։

Տղէն բիրըն, թագաւուր էսաց.

Տղմ, գիտիմ, գեօղացած բիրածըս, դիւ սալղ չը՛ս խոայ։

Էսաց.—Սալղ կոտամ ամա, չմտ հեռու տեղ ի, կեծ եօթ ծովիւ կզզըն։—Դիւ կարուղ իս էրթաս բիրիս. դիւ բիրիս, իմ կէս թագաւորութիւն տըտամ քի։

Էսաց.—Էրկու ձկան ականջ ձի խամար բիրէք, մէկ էլ ձիում պուչ։

Էրկու ձկան ականջ բիրըն, աղա ձկան ականջքիր կապըց. ի թալ վար ծուվիւն, աղա ձիու պուչն էլ իբի. մազիր խոու դիւս. տակ-տակ մազիր կապըց յիրար, ան մէկ գլեօխն էլ կպըից. Նստաւ ձկան ականջքիրու մէջ, գնաց եօթ ծուվիւ կզղին դիւս էլաւ. աղա դիրքն էյ վար մարմար քեարին ի. իրեք մարդ, ամին մէկ կացըն մը ուըինց ձեռ բռնած՝ գրքը վրէն կայնած։ Սեյրիյ ի, վռւվ ձեռ տայ դիրք. տը գարկըն գլխավրէն կոպանըն։

Աղ մարդն էլ աղա ձիու մազ կախ իտու. գինաց գրքը վերէն, աղա կուպը կըլաւ գդիրք. գմազ քեչից, դիրք խիտ իբի. կացընքն էլ թըփ-թըփ վար մարմար քեարըն զարկըն։

Սեճրի՝ (կախարդական) էր, պատըլաւ. աղ մարդն էլ գդիրք առըց, իբի, խոու Չինանց թագաւորըն. Չինանց թագաւորն էլ յիւր կէս թագաւորութիւն խոու աղա մարդուն, գդիրք խոու գաղ-ջըկ. աղջըկն էլ գդիրք առըց, իբի, խոու զողըն. տղէն էլ գդիրք իբի, խոու գլխէր. խէրն էլ գդիրք տարաւ խոու դարվիշին. էսաց։—Դար-վըշ, քիւ խնդիրք նմ էր։

Դարվիշն էլ էսաց.—Խմ.

Թագաւորն էլ էսաց.—Ադիկ վուչ բանմ չէ, խնդըրք էրայ, կատարիմ։

Դարվիշ էսաց.—Ըզի թու խնդիրք չկեայ. իմ խնդիրք նա գիրքն էր. ձիմ կտաս ըզի, ղըյպէմ ուսկը, իս կերթամ։

Թագաւուր ձիմ՝ ղըյպէմ՝ ուսկը խոու։

Դաւըրիշ ձին խեծաւ. դաս էրաւ Չինայ թագաւուըը քեա-ղաք իրի Չինայ թագաւուըը քեաղաք դիւս էլաւ։

Ուրբաթ օր սաճաք խնդին էլմ գինաց թագաւուրու խաս պաղչէն, Նստաւ։

Տեսաւ Բալաք Աչառ խիծի. էլմ էկաւ, էջաւ կըլթայլթաց. չպըղճիմ՝ մէկ ան թիւ, մէկ անթիւ դադրան, ամեն մէկ կալօճ լցըն, խմաւ, դէմվի կանգնաւ, էրկուսն էլ սպանըց. Բալաք աչառ խիծաւ, դարձաւ գինաց։

Դարվիշն էլ իտիւէն գինաց։

Տիսաւ վուր դարվիշ, էսաց.—Իմ դաւըրիշ անօթացը, էլմ էկաւ։

Դարվիշն իտիւէն գինաց, խասաւ բիրդ։

Տիսաւ էլմ Բալաք Աչառ կապըց սունվի․ ա ընցկուն իղար, կաշըն վուտնըվի խինի վև։

Վլացուաւ, գնացըն տուն, հաց դըըն, կերան։

Դարվիշն էլ ինչ գիրք դըը անթը տակ․ անթը տակէն չհանը դիւա։ Գիրք ծուցէն էխան, իտու ինի․ էն էլ դարվիշի վուտ կզուաւ, պաղնից, էսաց․

—Դարվիշ, դիւ մոիկ էրայ․ ես կարդամ, դիւ կը տեսնաս։

Կարդաց գդիրք․ փարըն, էրկու չաճկըն, էրկու չալղըճին․ էրկու ուսկը աթոռ խիտքիր դիւռ րայըն․ էկն ան տեւ․ ուսկը աթոռ փարին նստաւ․ մէկ յինք նստաւ վերէն․ ձեռնիր թըլցըն իրարու թիւի վերէն, էրկու չալղըճին զարկըն, էրկու չաճկըն խաղըըն։

Դավրէշը հեռաշ գինաց․ ընկեաւ ան տեւ, էլաւ ջիւր իթալ յէրես․ ըըտ մաժըց. հեռաշ էկաւ վերէն, էլաւ, նստաւ։

Էսաց.—Դարվիշ, առ էսա մատնիք․ ան աղջկայ մատնիքն ի. խատ մէմէկը մէջ մատնիքնիր փուխիր ինք, ըս մատնիք կուտաս. անիւ կասըս. թա չը՛ս հաւատայ, աս ալ անիւ մատնիքն ի։ Կասըս, իս ան չըմ առնը, վո՛ւվ կառնը թը առնը, Աստուած անիւ խաց տայ։

Կասի.—Դարվի՛շ, քիւ խնդիրքն էրա, իս կատարիմ․ իս ծուռն էր, ըղի ազատըցըր․ իմ խուր քեաղաք անտէր էր, տէր էրըր։

—Իմ խնդիրք չկեայ, իմ խնդիրք էնա մատնիքն ի։

Դարվիշ մատնիք առըց, ձին խիծաւ․ իրի Բասըայու դաշտ, աղջկան մօտ․ մատնիք իտու ղաղջիկ, էսաց.

—Ան կասը․ «վո՛ւվ կառնը, թըղ առնը․ քեանց իմ մէր, քեանց իմ քիւր կենայ ըձի։»

Աղջիկն էլ էսաց.—Վո՛ւվ տ'առնըմ, դքի տ'առնըմ։

Ան էլ էսաց.—Խա՛։

Էսաց.—Աս տեւ կինանք թա էրթանք քիւ խուր քեաղաք։

Էսաց.—Իս Սպահանայ թագեաւուրն իմ, խըյրաքի տէր իմ, իս տ'էրթամ։

Էսաց.—Իլի, մալ, ապրանք բառնանք, էրթանք։

Էլան մալ, ապրանք բարձան․ գեացըն։

Հալա ան Դավրիշ բռնած ի.

Զդարվիշ թուղ իտու, էրաւ յիւր վազիր։

5

ՊԱՏԼԽԱՆԻ ՄԻՐԱՆԸ ԵՒ ՃԱՒՐԱՆԱՑ ԹԱԳԱՒՈՐ

Մոկաց բարբառով *

Պատլխանի Միրանի խէր էսաց.—Իս կը մեռնըմ, Սիվ սար Ճէշըր չէրթաս: Խէր մեռաւ, օրէն մէկ դառուց իրի տուն, չիմուց տակ ձէմ՝ ըլաւ.—Ա՜խ, Պատլխանի Միրան, դիւ կեր-թաս, պա ի՞ս:

Ըրըշից տըսաւ մարդմ ճխան դրած ականջ՝ կեծ ան մարդ-դռան ճխանը տակ:

Էսաց.—Պատլխանը Միրան, իս թղնըս, քեանի ջիւր կայ իմ աչքիր. իս ըլնըմ քի խզմէքճեար:

Պատլխանի Միրան էլաւ տը թղնէր, մարդիկ ժողուան. էկըն ասըն.—Քիւ խէր զիւրովէն ի էսա մարդ բռնիր, դըըր ճխանը տակ, մը թուղը:

Էսաց.—Տը թուղնըմ, ըլնը իմ քեաղաքն էլ աւըրը:

Ջմարդ իթուղ, էլաւ անիւ խզմէքճեար, գինաց ջիւր իկից վար ձիռնիրուն, լուացուաւ: Էդ խզմէքճեար ճխմ՝ էրաւ:

Էսաց.—Ինչու խամար «ախ» էրըր, բիբէ՛կ իս, տկլո՛ւզ իս, անօ-թը իս, թէ մէ քի խապարմ՝ տուր:

Էսաց.—Մ՛արդ ըզը խապար չտուր. «ախ» տէնըմ, պա չէնըմ, չէ՞ իսն էլ տեղացմ թագեաւուր էր, իսն էլ մարդ ունէր:

Էսաց.—Դիւ ո՛ր տեղաց թագեաւուրն էր:

Էսաց.—Իս Ջիչանց թագեաւուրն էր, եօթ տարը իս քիւ խօր կուըւ էրը, քիւ խէր ըզի բռնից, իզի աս տե:

Էսաց.—Քի իրաւունք տուիր իմ, գինա, քիւ թագեաւորութենին խասը:

Պատլխանը Միրան թուղ իտու. գինաց վար յիւր թագեաւու-րութենին:

Գշէր ցերեկ «ա՛խ Պատլխանի Միրան, ա՛խ Պատլխանի Մի-

---

* Պատմած է Ջասիկ Խեպոյեան:

րան, օրմն էլ չմեռնէր. իմ աչքիր լնե քիւ իրես. գքի տեսնէր, Նիւր մեռնէրա։

Պատլխանի Միրան էլաւ, Սեվ սար Ճէջըր գինաց, տըսաւ խազալմ՛ յէռջիւ ձիուն Թռաւ-փախաւ, գձըն իԹուղ իտիւ։

Խազալ կը փախը, շատ չհեռընայ, անցկուն կը հեռընայ, ձըն չխասնը. մինչիւ կէս յօր կուտռաւ ինք յիւր մարդիր յիտիւ գեացըն։ Պատլխանի Միրան մարդիրուն էսաց.—Դիւ յետ դարձէք, գեացէ՛ք, իս Նա խազալը յիտիւ տ՛երԹամ, մինչիւ Նա խազալ չըռնըմ, չիմ դառնայ։

Մինչիւ յիրիկուն յիտիւ խազալըն գինաց. գինաց կամըլղի բէրան, վէրէն մԹնաւ. խազալ մտաւ մաչ կամըլն, կուրսաւ. ինք մնաց ան տեւ, Ճէ կէրի յետ դառնայ, Ճէ կէրի էրԹայ. իւըը մզրախ իդար ճակտըն, ինքն վար ձիու քեամկին յէռջիւ ակախ գինաց։ Աղ խազալն էլ գինաց. խայար տարաւ Զիչանց. Թագեաւուրըն էսաց.—Իլի, խասը. Պատլխանը Միրան կեռ կամըլխի գլեօխ, բէ՛, չխասնս մզրախ զգլեօխ տը ծակը. մէկալ կՃարէն դիւս տայ։ Խընդ վեց մարդ խըկից։—Գեացէ՛ք, զՊատլխանը Միրան անցկուն քնուկ առէք, բիրէք ըդայ։

Գեացըն առըն բիրըն, դրըն յէռջիւ Թագեաւուրըն. Թագեաւուր կանչից.—«Պատլխանը Միրան. Պատլխանը Միրան։

Աչքիր էրաց, շաշմիշ էլաւ, էսաց.—Իս կամըլղի գլեօխն էր. մկայ ինչխ էկեր իմ աս տեւ։

Թագեաւուր էսաց.—Ի՞նչ կմտածիս, դիւ իմ մարդի՛ր չը ճաչնաս ըդի էլ չճաչնաս. չէ՛, քիւ խզմաքճեարն իմ։

Պատլխանը Միրան Նստաւ Թագեաւուրը կշտըն։

Թագեաւուր խըկից, լաց, կերակուլ իբի, կերան, խման, էսաց. —Պատլխանը Միրան, դիւ ասա տեղըմնք։

Էսաց.—Իսն էլ չըմ գտի. առաւուտիւ էկը Սեվ սար Ճէջըր, առաւուտնախառ խազալմ յէռջիւ իմ ձիուն Թռաւ, ընկեանք յիտիւ մինչիւ կէս օր կուտռաւ, իմ մարդիր խա ձըկ էկըն կէս օր ինչ կուտռաւ, իմ մարդիրուն ըսը՛, «յետ դարձէք, իս քեանը Նա խազալ կերԹայ, ան խազալը յիտիւ տէրԹամ։ Խազալ չիւր կամըլղի գլեօխ բիրը. վար ձի՛ մԹնաւ, ի՛ս մնացը ան տեւ, վար իմ ձըռւ քեամկըն. իմ ակախ գնացիր էր, ակախայ քիւ դիւանը մէջ։

Էսաց.—Պատլխանը Միրան, ան խազալ չէր, ան ի՛ս ճամբ-խըցը յիտիւ քի։ Էսաց.—Դիւ պէտքը ան խազալ տաս ըդը։

Էսաց.—Իս չըմ կէրի տայ քի. իս իմ խազալ տամ քի. անըկ իմ չի։—Իս զան կուզըմ, ինչ իրի յետիւ ձը։

Էսաց.—Անըկ Շաւրանայ Թագեաւուրը աղջըկն ի, ուր խօր

մոտէն ըռըկի տալըմ' կայ, ինկի աս տե. իմ ճռճմ անիւ վրէն չընցի, կըլնը առաւօտն էլ էրթայ։

Ըսաց.—Դա էնը չտաս. իս քիւն չըմ առնը։

Ըսաց.—Նէ' դիւ, ճէ խազալ. իս չըմ կէրի. կուզը' գքի թուղ առնը։

Խատ մէկը խուսան, իրարու խաւնան, գխազալ առըց։

Ձինչանց թագեաւուրըն էսաց.—Իս տէրթամ իմ քեաղաք, ամիսըմ', էրկու իլաւ, իմ քեաղաք առանց թագեաւուրը։

Ձիւր խազալ առըց, գինաց գիւր քեաղաք. ամէն օր կերթէր ճեջըր ուր խամար։ Վուզըրը աչ ընկեաւ գխազալ, սիրու առըց, խըւընդցաւ, էսաց.—Իս նա կնկեան չմօտանամ, տը մեռնըմ. պա ինչխ էնինք, ինչխն չէնինք. մէկ մարդմ բիրինք, սուտ խարսնիմ դնինք. ըսինք՝ վուզըրը լաճ տը պսակինք. կանչինք Պատլխանի Միրանի խազալ, բիրը՞ք խարսնըս։

Խարսնս գըըն, գՊատլխանը Միրանը խազալ կանչըցըն, Պատլխանի Միրան էսաց.—Իս չըմ իգեայ, դիւ գինա, իս չըմ էրթայ էրթամ փօսմաճ տըլնըս։

Ձվուզըը լաճ բիրըն, աչկան խամալ խագիւցըն, խանըցըն խաղը, գխազալն էլ խանըցըն խաղը, կնկտիը մէկ մէկ գվուզըը լաճուն ձեռ թուղըն. վուզըրը լաճ էրի, ընկեաւ խազալը ձեռ, խազալը ձեռ քեամըց, խազալն էլ էլաւ, ագիւցմ իղալ վար սրտըն, սպանըց. թուղ իտու, իրի տուն. տունն էլ չկայնաւ, Շաւրանայ քեաղաք, դի՜ւ դի՜ւր իս, չի իս էկը քի։

Ախչիկն էլ գինաց տուն, խօր իրեա, մօր իրեա չգինաց, մնակ մտաւ յէօդէմ ինի։

Քեանմ օր վերէն ընցաւ. Պատլխանը Միրան կսկծուն խըւընդցաւ. մալդ չըր թուղնը իւր իրես էրթէր. տը կանչէր ուր խուցամուջ, ամեն առաւուտուն անիւ խաց, կերակուլ, ջիւր տանէր, դնէր խատ անիւ կշտըն, կէր դիւս, գդիւռ փակէր վերէն մինչիւ մէկէլ օր առաւուտին մարդիւ իւեա չըր տսնայ։

Պատլխանի Միրան յէրէկուն էրի տուն, մէր անցքում լացը աչքիր կուրցը, էսաց.—Մարէ, վրէ լացիլըս անցկում։

Էսաց.—Ցմ՜ւրի խազալ։

Էսաց.—Խազալըն յէ՞նչ իլի։

Էսաց.—Խազալ գեացը, չէ՛ խազալ քի էսաց' «իս չըմ էրթայ խարսնըս, դիւ փուսմաճ տ'էղնըս». դիւ ըսըցըր, «չէ՛, տէրթաս»։

Խազալ գինաց ան տե, վուզըը լաճ բիրած՝ ախչկայ խամլ խագիւցած' իլի խաղցը, վուզըը լաճ էկի' բռնը խազալը ձեռ. խազալը ձեռ քեամի, խազալ իլի ագիւցմ զարկի, վուզըը լաճ սպանը. իրի տուն, կասեն էրաւ, ըռըգեաւ. թուղ իտու գինաց։

Պատլխանի Միրան առաւուտուն էլաւ, գձըն խիծաւ. գինաց

ձիւր կամըլղը գլխօխ, գձըն կայնացըցուց, մզրախ խոու գլխուն, քինաւ։ Ջինչանց Թագւուրը խազալ էրի, Պատլխանը Միրանը տսաւ. դարձաւ, գինաց, խապար տարաւ խօր, ըսաց.—Պատլխանը Միրան էկի, կամըլղը գլխօխ կայնի։

Ան էլ վից մարդիւ ըսաց.—Խառըցէք, զՊատլխանը Միրան քինաթաթախ վիրուցէք, բիրէք աս տեղ։

Վից մարդ գնացըն, զՊատլխանը Միրան քնուկ վիրուցըն, տարըն Թագւուրը դըւանն գըրըն։

Թագւուրը կանչից.—Պատլխանը Միրան. Պատլխանը Միրան։

Աչքիր էրաց, տիսաւ ինք էլմ Թագւուրը դիւանն ի։

Թագւուրը ըսաց.—Աստուած իննե, դուն չըր իդե աս տեղըանք. Ինչխ իլաւ էկըր։

Ըսաց.—Խազալ ըռըկի, էկի։

Ըսաց.—Աս տեղ չէկը, գնացը ուր խօր քեաղաք, չէ՝ իս քի ըար՝ «դուն գործ չունըս ան խազալըն», իս քի ըռըցը, «իմ խազալ առ տար, զան մը տունը», ան աս օր սդա ի, վաղ կերթայ ուր խօր քեաղաք. Էրի, իմ խազալ տուր քի, գինա։

Ըսաց.—Չէ, չըլնը, իս տ'էրթամ իտեէն։

Ըսաց.—Աղբէր, տարուան մը ճանբախ ի։

—Տարուան մը ըլնը, տաս տարուան ըլնը, իս տ'էրթամ։

Ջինչանց Թագւուրը խազալ ըսաց.—Անպատճառ տ'էրթաս.

Ըսաց.—Տ'էրթամ։

Ըսաց.—Դուն էրթաս, լան էլ տը գեամ խա քի. դուն ճանբախ չըս գըտի։ Խազալ իլաւ, էրկու չմըք (հողաթափ) էրի, մէկ էլ գտակ էրի, ըսաց.—Նա գտակ կը դնըս քու գլխօխ. ցերեկ դնիր էրթաս։ մարդ զքի չըլսէ, առ նա չմըք, մէկ դուն խագը մէկ իս, նա չմըք վուլն օր խաքնը՝ քեառասուն աւուր ճանբախ մէկ օր կերթայ։

Ձիւրինց հեօղ քեար էրըն, գնացըն. քեառասուն աւուր ճանբախ մէկ օր կէրթըն, թա օրմ թա քսան օր ճանբալխ գնացըն, խասան ծուվու բիրան. խազալ ըսաց.—Կերթաս նահան քեար կը վիրըցիս, ձիում կեամ կեօ ադ քեարըը տակ, ան ձիու կեամ կտաս ջիւր, խրեղէն ձիմ ծուվուց կըլնը, գեայ. դուն էլ զկեամ կը դնիս բիրան, կը խիծնըս. զքի կը տանը, ծուվ կը խլըցըցը։ Կեամ բերնէն կը խանըս. ձըն կը թուղնս, նա գդակն էլ կը դնըս քու գլխօխ, դուն խալղի կը խիս. խալղ զքի չըն ըեռի։

Պատլխանը Միրան գինաց զքեար չիւռ խոու, կեամ զքեարը տակէն էխան, խոու ջիւր, Սիվ ձիմ ծուվուց էրի, գդակ առըց. զկեամ իդի ձիու բիրան. խաբր ուղըց խազալը մօտէն, ըսաց.—Դուն դարձի, գինա։

Խազալ ըսաց.—Չէ իս տը կենամ աս տեղ, ձիւր դուն գեաս

Պատլխանը Միրան դձըն խիծաւ, քշից վար ծուվըն, տարաւ ծուվ ընցուց. կեամ իլան. գաւտ քեաղաք էրաւ, գինաց, մտաւ քեաղքը մէջ. էսաց.—Իմ գդակ մը ճռպիմ՝ դնիմ իմ գլեօխ. մարդ ըզի մը խէ՞։

Գդակ էդիր գլեօխ, մանչ քեաղքըն գինաց. անօթը էր, էսաց՝ տ՚էրթամ նա քեապապճու մօտ. մնա ըզի մը խէ՞ թէ չէ՛։

Գինաց. մտաւ քեապապճու՞ցքեան, քեապապ խաց առըց, իդէ ան տե, կերաւ, մարդ չխուսաւ. էլաւ ցքճէն դիւս, մարդ չէսաց՝ փարէն տուր, նուր գինա՛։

Իլաւ գինաց Թագեաւուրը ծարէն. դիւ չըտըս—խազալ ինչ իկի՝ խօր, մօր իրիս չգեացը. գեացը մօտ յեօղեմ ինի՝ Պատլխան Միրանը կսկծուն խըւընդցի, ամին առաւուտու ըխիւսամ խաց կըտանը էդու. դիւռ կը փակը վերէն, գեայ դիւս, մարդիւ իրիսը՝ չտեսնայ, մարդ անիւ մօտը մը չէրթայ. լաճմ էլ իլիր ի։

Պատլխանը Միրան մնաց անտե մինչիւ առաւուտիւն, խիւսամ դիւռ էբաց, խաց տարաւ, ան էլ խիւսամուչ իտիւէն նիրս մտաւ. նստաւ ան տե, ան զխազալ խէ. խազալ զան չխէ, խիւսամ խաց իդէ ան տե, էլաւ դիւռ փակըց, գինաց. խազալն էլ էլաւ, էրկու գդէլ կերակուլ կերաւ. պուտմ էլ ջիւր խմաւ, էլմ պարկաւ ուր տեղ, քնաւ։ Պատլխանը Միրան նստաւ վար կերակուլըն կերաւ, էթուղ էրկու գդէլ. ջիւրն էլ խմաւ, մէկ պուտ ջիւր էթուղ։

Խազալ սկախաւ, էլաւ նստաւ. կուժ առըց, ջիւր մը խմէր, տըսաւ մէկ պուտ ջիւր կայ՝ փչում խմաւ, կուժ իդի ան տե. կերակուըը իշից, կեծ էրկու գդէլ կերակուլ կայ ամնը մէջ, էսաց-—Ջանըմ, մարդ չէկը աս տե, դռնիր փակ, կատու չէկը, անա կերակուլ ինչ իլի. դարձաւ էլ ինք էսաց.—չեղնը իս կերայ, չակախայ։ Էլմ պարկաւ ուր տեղ, առաւուտուն էլմ խիւսամ դիւռ էբաց. իդի յէռջիւ. դառցաւ զդիւռ փակըց, գինաց։ Խազալն էլ էլմ էլաւ քիչմ կերակուլ կերաւ. քիչմ ջիւր խմաւ, պարկաւ։

Պատլխանը Միրան էլաւ, կուշտ կերակուլ կերաւ, ջիւր խմաւ. նստաւ ան տե։ Խազալ սկախաւ, էլաւ նստաւ, ձեռ իտու կուժ, ջիւր առըց, մը խմէր. էլմ ջիւր խմածըն, ըրըշից կերակուլ, տըսաւ կերակուլ նէլ կերած, էսաց.—Այ ջանըմ, էսիկ սատանայ կայ ըստե, ինչ կայ. սաս ո՛ր տեղով կուգեայ։ Էսաց—ընանէք, ճընանէք, ըզի նշանց կտէք, տուէ՛ք. թէ չէ՛, իմ խօր խաղչար կտամ դձի յաւըտան-յաւիտեանըց կորցըրայ։

Պատլխանը Միրան չգըտը անիւ խօր տան դիւրը (չճաշուէ) զինք շանք չէտու. էսաց խազալ։—Պատլխանը Միրանը քեասարը ինչ մանչ իմ սրտըն, դիւ վռուվն իք, ըզի շանք չտէք, իս ըզի անա փանճարէն Թլիմ տակ, մը մեռնըմ։

Պատլխանը Միրան էսաց.—Ես ան ապով իմ էկի, ան ղընք Թըլի տակ մնռնը՛. ալ ես էկեր իմ ինչ, գդդակ իդի գետըն, խազալ տըսաւ. Թռաւ, էլաւ Պատլխանը Միրանը գլեօխ պադնից. էլաւ ըղլուռ ծիծից. խիւտամ իրի դիւռ իրաց. էսաց.—Ինչ կանչիս։

Էսաց.—Կերթաս խաց, ջիւր կառնըս կը բերիս։

Էսաց.—Դիւ աս օր չա՛տ զաs իս կերի։

Էսաց.—Շա՛տ աճեպ տըսար, ես էրկու օր սաղացեր իմ, իմ լաճն էլ կուտը։

Էսաց.—Ես կուզըմ չա՛տ ուտըս։

Գինաց խաց, կերակուլ, ջիւր առըց իրի, դարձաւ իլաւ դիւս։

Մէկ, էրկու, իրեք օրմ վըէն ընցաւ, խազալ զՊատլխանը Միրան տսաւ, սաղացաւ։

Ղանդահարայ Թագեաւուր էլաւ մարդ՝ ղըկից, էսաց.—«Գեացէք մըտ Շաւրանայ Թագեաւուր. անիւ խազալ կտայ ընձի, Թը տայ. չտայ, տը գեամ, անիւ քեաղաք տ՛աւըըմ»։

Մարդիր էկըն, Թագեաւուրը դիւան նստան, ասըցըն.—Մի Թագեաւուր կըսը «անիւ աղջըկ կտայ ըձի Թը տայ, չտայ, ես տը գեամ, անիւ քեաղաք տ՛աւըըմ։»

Էսաց.—Զանըմ, ես աղջըկ ինչխ տըտամ. ան դըուն անըկ ուզըց, աղջըկ փախաւ գինաց։ Վից-եօթ տարը մնաց դիւս, դուռց ինչ իկի իմ աչք զանիւ իրիս չընկի. Եա՛ մարդ մատ ան կերթայ, Եա՛ էն մատ մարդ կերթայ. համին առաւօտուն խիւտամ խաց կը տանը, դիւռ փակը, ընքն էլ խըւանդը, լաճմէլ իլի, տիրովը, անտէր չի, ես տամ։

Ան մարդիկն էլ դարձան գեացըն. խապար տարըն. ինչն օր էսաց, ամին ասըցըն Ղանդահարայ Թագեաւուրըն։

Էսաց.—Ըլեցէ՛ք, ասկեար կապեցէք, էրթանք. զանիւ քեաղաք աւրինք, զաղջըկ առնընք բիրինք։

Էլան ասկեար կապըցըն, էկըն Շաւրանայ քեաղքը բիւլուր, բռնըցըն, նստան. Շաւրանայ Թագեաւուր առաւուտ էլաւ, տըսաւ. քեաղքը չուրս բիւլուր բռնած նստած։

Մարդ ղըկից մատ Շաւրանայ Թագեաւուր.—Աղջըկ կտա՛ս, տո՛ւ, չտաս զքեաղաք կաւրըմ։

Թագեաւուրն էլ էլաւ, գինաց մատ ուր աղջըկ, էսաց.—Հա՛յ աղջըկ, գինա՛, Ղանդահարայ Թագեաւուր մը՛ռ, քեաղաք մի՛ տու աւրիլ։

Էսաց.—Պատլխանը Միրանը ճեաստր ինչ մանչ իմ սըտըն, քիւ քեաղաք աւըը, ես զան չըմ առնը։ Մկայ դարձը գինա, իրիկուան գեաս, ես քի խապարմ կտամ։ Խէր դարձաւ գինաց։

Էսաց.—Պատլխանը Միրան, Թէ բանմ քինէ կգեայ, ես իմ,

պան չըմ առնը, ու թէ բանմ քինէ չգեայ, իմ, մու ըղի, գեաղտիկ փախինք, էրթանք։

Էսաց.—Որկէ քիւ խօր, Դանդահարայ Թագեաւուրըն էսայ. —Ինչ անիւ մօտէն կգեայ թը էնը։

Ոէր էրի անտէ. աղջըկ էսաց. «Իս պան չըմ առնը, ինչ անիւ մօտէն կգեայ, թը էնը։»

Էսաց.—Աղջը, ինչ դիւ Պատլխանը ֆեաաար կերդուընաս, իմ խեւքը իմ գլխուց կերթայ։ Ոէրն էր, ըռըգեաւ, գինաց։

Խազալն էլ էսաց.—Դէ՛, բանմ քինէ կգեայ, էրայ։

Պատլխանը Միրան էլաւ գէդ գդակ էդըր զուր գլեօխ, գինաց ծուլու բիրան. գկեամ ուպըց էխան, էզարկ ջիւր, Սիվ ձըն ծովուց իրի դիւս, ձեռքմ սիվ չուր վըէն. ձեռքմ էլ նագ։

Էլաւ չուրեր խագեաւ. գնագեր կապըց, կեամ իդի ձիու բիրան. էլաւ խիծաւ. քշից գինաց մանչ ասկեարըն։

Ասկեար բաժինմ կառից, մնաց էրկու։ Դարձաւ էրի, տարաւ գձըն ծովու բիրան. գկեամ . . գինաց Թագեաւուրը սարէն։

Խազալ կանչից խուսամուչ.—խաց, կիրակուլ չտա բի։

Խսամ խաց կիրակուլ էրի ան տե, ինչ խսամ խաց կը բիրէր, Պատլխանը Միրան գդակ կը դնէր, ինչ կերթէր, գդակ կը դնէր գիտըն։

Խաց կիրաւ պըծաւ, կանչից խուսամուչ, էսաց.—Կերթաս, իմ խօր խապար կտաս, գեայ։

Խսամ գինաց, Թագեաւուրըն էսաց.—Խազալ գքի կուզը։

Թագեաւուր էրի մատ աղջըկ, էսաց.—Աս օր ինչ կէր, ինչ չկէր։

Էսաց.—Մը՛ խօսայ, աս օր սիվ ձիաւուրմ էրի, չըմ գըտի Աստուծուց էրի, ռւստը էրի, ընկեաւ ադա մանչ ասկըրին, մինչիւ իրեկուն կուըւ իտու. բաժիմ սպանից, էրկու մնաց։

Էսաց.—Զէ՛, իս քի ասըցը. «Պատլխանը Միրանը ֆեաաար ինչ մանչ իմ սըրտըն, իս պան չըմ առնը։»

Էսաց.—Աղջը, իս քի չատ կուզըմ, ադա Պատլխանը Միրան ինչ դիւ կերղուընաս, ինչ դիւ քեարմ զարնիս վար իմ գլխին։

Ոէրն էլմ ըռըգեաւ, իթուղ գինաց։

Առաւուտուն Պատլխանը Միրան զուր գդեակ էդիր գլեօխ, գինաց ծուվու բիրան, գկեամ . . . անիւ չորեր, անիւ ձըն ամին սիվտակ՝ խեծաւ, գինաց ընկեաւ մանչ ասկըրն, զասկեար սպանից բիւլուր, գինաց զԹագեաւուրը տեղն էլ առըց, ադա Թագեաւուրըց խարճ առըց Շուրանայ Թագեաւուրը խամար, դարձաւ էրի . . . ։

Գինաց սարէն գդեակ էդի, Թագեաւուր էրի մատ աղջըկ. աղջըկ էսաց.—Աս օր ինչ կայ, ինչ չկայ, քի մարդ իմցաց էրի։

Ըսաց.—Աս օր բեօզ ձիաւորմ էրի, զասկեար ըմեն սպանից, ան Թագեաւուրը տեղն էլ առըց, ձը խամար էլ խարճ կապըց։

Ըսաց.—Չէ՛, իս քի ասըցը «Պատլխանը, Միրանը ճեաաար ինչ մանչ իմ սրտըն՝ իս զան չը՛մ առնը»։

Ըսաց.—Աղջը, ինչ դիւ զՊատլխանը Միրանը գլեօխ կերդուըննաս. եաճ նախըուրդ իլի, եաճ խուվիւ, վերէն ծուիր իս, չըմ գըտի. աս աւուր ձըաւուըն էր թէ յերեկըն։

Ըսաց.—Պատլխանը Միրա՛ն. չիւր յե՛փ գքի տը պախիս, իմ՛ դիւս։

Պատլխանը Միրան զդդեակ էդը գետըն. Թագեաւուըն էլ տըսաւ ճճեղմ, չուտին, չխմին, քամաշա էնըն։ Գինաց զՊատլխանը Միրանը գլեօխ պագնից. էսաց.—Չխօ դի՛ւ իս առը. իմ՛, նատը քախշ։

Ըսաց.—Քիւ Թագեաւորութեն պիրօզ կինայ քի. իս տ՚էրթամ։

Ըսաց.—Զքի չըմ թուղնը էրթաս։

Քեաղքը դռնիր բիւլուր էտու փակել, էսաց.—Պատլխանը Միրան չէրթայ։

Պատլխանը Միրան զուր գդեակ էդի զուր գլեօխ, էլաւ զկնըկ, զլաճ առըց, գինաց, քեաղքէն ընկեաւ դիւս. մարդ չը տըսաւ. գդեակ գլխուց առըց վեր։

Թագեաւուր գինաց յեօղեն, ճա՛ աղջըկ, ճա՛ տղէն, էլաւ տըսաւ օր թէ պաշտը մէջ կերթան. ընկեաւ յիտիւ, մինչիւ Թագեաւուր գինաց. տը խասնէր, Պատլխանը Միրան զկեամ մտուց ծուվ, կարմիր ձըն ծուվուց էլաւ, էլաւ ինք, կնըկ զձըն խիծան. հա՛յ վար ծուվուն գեացըն։ Դարձաւ էրի ուր քեաղաք։

Ձըն զՊատլխանը Միրան ծուվուց էխան դիւս. գինաց մատ ան խազալ, ինչ կայնիր էր ուր տեղէն յիրուր չառը, չնատը, չիւր ծնկնիր գեացը մանչ խուղուն։

Ըլան զուրինց չմկտիր խաքեան, տաս աւուր վերէն էկըն Չիչանց Թագեաւուրը քեաղաք, Չիչանց Թագեաւուր էսաց.—Ըրի, քիւ քեաղաք մ՚էրթայ, իմ Թագեաւորութեն էլ տամ քի, նատինք, ուտինք, խմինք. չիւր մեռնընք։

Ըսաց.—Չէ, տ՚էրթամ, իս չըմ կայնը։

Պատլխանը Միրան էլաւ, զուր հեօղ էրաց, զը մէկէլ խազալն էլ առըց, գեացըն ուրենց քեաղաք։

6

ԼՈՒՍԱՒՈՐ ՄՈՐԹ

Մոկաց բարբառով *

Մըրրայ քաղաք պառաւմ կէր, ուր տղէն։

Տղէն մէկ օր մօր էսաց.—Մարէ՛ իմ խօր գուրծ փեշէն ինչ էր։

Մէր էսաց.—Քիւ խօր գուրծ ավճուլթին էր։

Տղէն էլաւ, բւանկ առըց, գինաց մեշէն. մինչիւ յիրիկուն. կան իրի, բանմ չգնտաւ սպանըր, դարտակ իրի տուն։ Առաւուտուն էլմ առըց գբւանկ, գինաց. էլմ մինչիւ յիրիկուն կան իրի. բանմ ձեռ չընկեաւ. էլմ՝ դարձաւ, իրի տուն։

Առաւուտուն էլաւ, գբւանկ առըց, էսաց.—Իս աս օր բանմ չգանիմ, իս քո՛ւ տուն չըմ իգեայ.—էրդըւցաւ, գինաց։

Մինչիւ յիրիկուն կան իրի. բանմ չգնտաւ սպանըր, մթնաւ։

Ցերդըւցի, տուն չէրթայ, մնաց ծուվու բիրան. գընք իտու յեռջիւ քեարըն, մնաց ան տեւ։

Տըսաւ լուսմ ծովէն իլաւ, գիւս իրի. իրի մօտացաւ տղըն. տղէն էլ իգար ան ճանճավար, սպանից. գինաց մուրթից, զմուրթ առըց, իթալ վար թիւին, գինաց տուն, էսաց.—տանիմ, թըլիմ ան տեւ, իմ մէր կը նստը վրէն, լուս կտայ, ճախարակ կմանի, չատ աղէկ բան ի։

Իթալ վար թիւին, գինաց քեաղքը մէջ:

Վազիր դիւռ կանգնէր էր, էսաց.—Տղա՛, աղա մուրթ տո՛ւ ըզձը։

Տղէն էսաց.—Զըմ խտայ, մեք ֆեասիպ մարդ իք. ճրադ լուս չունինք. կը թըլիմ ան տեւ, լուս կտայ, իմ մէր ճախըրակ կը մանի։

Ինչ էրաւ վազիր, տղէն զմուրթ չէտու, առըց գինաց։

Գինաց դիւռ.—Մա՛րէ էսաց, դիւռ բաց, իս էկայ:

---

* Պատմած է Զատիկ Խեպոյեան:

Ըսաց.—Կանգնը, ճրագ կվուցեմ. դիւռ բանամ։

Ըսաց.—Մա՛րէ, ճրագ մը էնը, իմ խէտ ճրագ կայ։

Դիւռ ի բաց, մէր ինչ զմուրթ տեսաւ, ուրախացաւ.—Աղ ինչ բան է, ըսաց։

Աւըն զեացըն տուն, տուն քեան զցերեկ չմա լուսացաւ. մէրն ըսաց.—Վուրդի՛, ան ինչ մուրթն դիւ բէրըր, քեաղքը մէջ զքի մարդ չտեսա՛ւ։

—Մարէ՛, վաղիր զձը տեսաւ.—Բանմ չըսա՞ց քի։

—Ըսաց «մուրթ տու ըզձը». ես չտուր։

Մէր ըսաց.—Վուրդը՛, ան զքի չարմ՛ տ՛էցքը։

Առաւուտուն վուղիր էլաւ, գինաց Թագեաւուրը մօտ, ըսաց.
—Թագեաւուր ապրած կինաս, մէկ փուսքմ պառւու տղէն բէրէ, ան քի կը վայելէ, բէրես, Թըէս դիւանխանեն, գըշէր ցերեկ լուս տայ։

Թագեաւուրն էլ խըկէց յէտէւ պառւու տղըն, աղ մարդ պառ-ւու տղըն ըսաց.—Թագեաւուր զքի կուզը։

Ըսաց.—Թագեաւուր ի՞նչ գուրծ ունը իմ խէտ։

Ըսաց.—Իս չըմ գտէ, կըսը պառւու տղըն թը գեայ։

Պառւու տղէն էլաւ, գինաց Թագեաւուրը մօտ։

Ըսաց.—Թագեաւուր ապրած կինաս. ընչի՞ ըզձը կանչէր իս։

Ըսաց.—Ցէրկուն դիւ ինչ իս բէրէ քեաղքը մէջ։

Ըսաց.—Իս բանմ չըմ բէրէ. մէկ մուրթմ իմ բէրէ, Թըէր ըմ տուն, իմ մէր նստը վրէն, լուս տայ, ճախըրակ մանէ. մենք Ֆուղարայ մարդ ինք, ճրագլուս չկայ։

Թագեաւուր ըսաց.—Կերթաս ան մուրթ կը բէրես՝ բէ, չբէ-րես, զքիւ վըզ կը զարկեմ։

Տղէն լալէլէն էլաւ, գինաց տուն։

Մէր ըսաց.—Վուրդը՛, ինչո՞ւ կուլաս։

—Թագեաւուր կըսէ՝ «մուրթ չբէրես զքիւ վըզ կը զարկեմ»։

Մէրն ըսաց.—Վուրդը՛, չէ՛ իս քի ըսըցը. «վուզը զքի չարմ տ՛ըցդը. վուրդը՛, էլի, մռ տմր, Աստուած անիւ պալայ տայ»։

Տղէն էլաւ, զմուրթ առըց գինաց, էտու Թագեաւուրըն, Թա-գեաւուրըն էլ վուզըրըն ըսաց.—Աղէկ պախշիշ կտաս պառւու տղըն։

Վուզիրն էլաւ քսան փարայ էտու պառւու տղը ձեռ։

Պառւու տղէն գինաց տուն, ըսաց պառաւ.—Վուրդը՛, պախ-շիշ չտուր՞ն քի։

Ըսաց.—Մարէ, Թագեաւուր ըսաց՝ «աղէկ պախշիշ կտաս», վուզիր քսան փարայ էտու։

Ըսաց.—Վուրդը, Աստուած անիւ պատիճմ տայ, թլէ՝ յականատ, թը կինայ ան տեւ։

Ձքսան փարան իթալ յականատ։

Վուզիր թագեաւուրըն ըսաց.—Թագեաւուր ապրած կինաս, ասա մուրթըն պէտքը Ֆրլի ուսկուր բիրին. մէկ սարեմ չընին, մուրթ դնին մէջ. լուս տայ։

Թագեաւուր ըսաց.—Վուզիր, Ֆրլի ուսկուրը փուլ տէրթայ. անցկուն Ֆրլի ուսկուր բիրի. իս սարայ տամ չընիլ։

Վուզիր ըսաց.—Ո՛ր ան մուրթ բիրի, ան կէրի բիրի։

Ըսաց.—Մարդ ճամբխի պառւու տղէն թուղ դեայ։

Մարդ ճամբխըցըն պառւու տղըն իտիւ։

Պառւու տղէն էլաց։

Մէր ասաց.—Վուրդը՛, ինչո՞ւ կլաս, Աստուած վուզըրըն պատիճմ տայ, գինայ. մը՛ վախընայ։

Պառւու տղէն գինաց մա թագեաւուր։

Թագեաւուր ըսաց.—Տ՛էրթաս, Ֆրլի ուսկուր բիրիս, թը բիրիր՝ բիրիր, թը չըբիրիր՝ գըլւ վըզ կը զարկիմ։

Պառւու տղէն էլաւ ձեռքիր խաչից ծուց, լալիլէն իրի տուն։

Մէր ըսաց.—Վուրդը՛, ընչո՞ւ կլաս։

—Մարէ՛, ըսաց, իս տ՛ըլամ, պա չըլա՞մ. թագեաւուր կըսը, «անցկուն Ֆրլի ուսկուր տը բիրիս, իս ձը խամար սարեմ տամ չնիլ.» իս ինչխ տ՛էրթամ, Ֆրլի ուսկուր բիրիմ։

Ըսաց.—Վուրդը՛, մը վախենայ, Աստուած օղուրմած ը, ո՛ր դիւ կերթաս, թագեաւուրըն կըսըս՝ «խարըր խազար ուղտ կուզըմ, խընդ խազար բեռ աղ կուզըմ, խընդ խազար բեռ գընի կուզըմ, խընդ խարըր պալքաճի. խընդ խարըր էլ ուղտ բառնուղ, ամինն էլ վուզըրը քիսայից տըլնը, յիւըրշ մարդիւ ընը, չըմ էրթայ»։

Տղէն էլաւ, գինաց մա թագեաւուր անցկուն ըսաց։

Թագեաւուր ըսաց.—Վուզի՛ր, լսա՞ր, ինչ ըսաց, կը պատրաստիս՝ պատրաստէ. չը՞ս պատրաստի, գըլւ վըզ կը զարկիմ։

Վուզիր ըսաց.—Թագեաւուր ապրած՝ մէկ օր տաս ընձի մօհլէթ, մինչէւ իս պատրաստիմ։

Պատրաստութին տիսաւ, պառւու տղէն էլաւ, գինաց տուն։ Մէր ըսաց.—Ինչ էրըր, վուրդը՛։

Ըսաց.—Մարէ՛, ըսըցը, վուզիր պատրաստութին տըսաւ։

Խապար օրեօխկիցըն պառւու տղը իտիւ «թուղ դեայ, էրթայ»։

Մէր ըսաց.—Վուրդը՛, քեառսուն աւուր ճամբախ ը, կերթաս, ատըր մէջ կեօլ կայ, ադա կեօլիւ ջրիր կը խանէք դիւս, դընին տեղ կը դարդըկէք. ադա աղն էլ կը տանէք, պարզէք քեարիրու վըրէն, կերթէք, հեռուն տեղ կը նստըք, թամաշա կէնըք. Ֆլիր կգեան,

գաղ կուտըն. գդընին կը խմին կը սարխօշնան, ադա խընդ խաղըր պալքաճիք թ'ընկնին մէջքէր, բուլուր ջարդին, զուսկուրքէր բառնաք, բէրըք։

Պառւու տղէն էլաւ գինաց, վուզըրին էսաց.—Քեառասուն օր տ'էրթամ, քեառասուն օր տը գեամ. կուզըմ անցկուն ուտիլ խմիլ ըլնը, մինչև գեանք, անուժը չմնանք. որ անուժը մնանք. մէկ խատ էլ ուսկուր չըմ բէրէ։

Պառւու տղէն զբեռնէր էբարձ. ուր մարդէր առըց, գինաց։

Քեառասուն օր ինչ քմաւ, գինաց սարը մէջը։

Էսաց ուր մարդէրուն.—Կուզըմ էսա կեօլը ջրէր ամին խուրթըք, թափէք դիւս։

Էլան ադա ջրէր ամին խուրթըցըն, թափըցըն, աղն էլ տարան քեարէրու վերէն պարզըցըն. գինացըն, զատը նստան, թամաշա էրըն։

Տիան Ցլէր էկան, ըղ աղ կէրան, ծարաւցան. էկան վար ջրին, գդընին խման, բուլուր սարխօշցան, զէրար ջարդ ու բուրդ էրըն։

Պալդաճիքն էլ ընկեան մէջքէր, սաղ մնացածն էլ բուլուր ջարդէցըն, ուսկուրքէր խանըն, զբեռնէր բռնըցըն. բարցըն, ճանբախ ընկեան, ինչ քեառասուն օր քմաւ, էկըն Մսըրայ քեաղաք դիւս էլան։

Տարաւ զբեռնէր թափէց։

Թագեաւուր տըսաւ, էսաց.—Վուզի՛ր, պառւու տղըն մէկ աղէկ պախշիշ տո՛ւ։

Վուզիրն էլ էլաւ մէկ կուռուշ էդէ պառւու տղը ձեռ։

Պառւու տղէն էլաւ, գինաց տուն։

Պառաւ էսաց.—Վուրդը՛, էկըր, Ցլի ուսկուրքէր բէրըր. Թագեաւուր քի պախշիշ չէտո՞ւ։

—Մարէ, Թագեաւուր էսաց՝ «աղէկ պախշիշ տուր», վուզիր մէկ կուռուշ վէրուց, էդէ իմ ձեռ։

Էսաց.—Վուրդը՛, ան կուռուշն էլ թալ մատ ան քսան փարըն, Աստուած անիւ պատիճմ տայ, չաղատուը։

Տղէն կուռուշն էլ էթալ մատ ան քսան փարըն։

Վուզիր էսաց.—Թագեաւուր ապրած՝ ասա Ցլի ուսկուրքէր ինչ բէրէ, պէտքը ուստայ Մուրատ գեայ, սարէն չընի. վարպետ Մուրատ չըլնը, մարդ չկէրի չընի։

Վարպետ Մուրատն էլ քեառասուն տարը կայ մեռը։

—Վո՛ւվ տ'էրթայ վարպէտ Մուրատ բէրը։

—Ո՛ր Ցլի ուսկուրքէր բէրէր ի, ան տը բէրէ ուստայ Մուրատ։

Մարդ խըրկէցըն, պառւու տղէն էկաւ Թագեաւուրը մօտ։

Էսաց.—Պառւու տղա՛, քինէ կուզմ ուստայ Մուրատ զսարէմ՝ ըզի խամար չընը։

—Թագեաւուր ապրած. ուստայ Մուրատ քեառսուն տարը կայ մեռը։

—Բիրըր՝ բիրըր, չբիրըր՝ գզիւ վըզ կը զարկիմ։

Տղէն մաղեհն էրաւ. էկաւ տուն։

—Վուրդը էսաց մէր, ինչ մաղեհն էրիր իս, ինչ կայ։

—Պա ինչխ մաղեհն չէնիմ, Թագեաւուր էսաց՝ «տէրթաս ուստայ Մուրատ բիրըս, ուստայ Մուրատ քեառսուն տարը կայ մեռը, իս մեռուկ մարդ ինչխ գիրեզմանէն տը խանիմ, բիրըմ։

Մէր էսաց.—Վուրդը՛, մը՛ վախենայ, քիւ Աստուած կանչի, գինա՛։ Կերթաս Թագեաւուրըն կըսըս, «քեառսուն անծըն ծուծակ (ոչխար որ նոր ծնելու է) վուզըը մօտէն կուզըս»։

Տղէն էկաւ մատ Թագեաւուր, ուզըց։

Թագեաւուրն էլ էսաց.—Վուզի՛ր, տըտաս ինչ կուզը։

Քեառսուն ծուծակ առըց, գինաց գիրեզմանատնիր, ան տե քեառսուն էլ մորթից, ան տե իփից, աղքատնիրուն կիրցըցուց, գինաց յիւր չուքիր իզար ուստայ Մուրատը գիրիզմնը յառաջ. ուր խնդիրք Աստուծուց էրաւ, կանչից.—Ուստա՛ Մուրատ, ուստա՛ Մուրատ, վի իլի։

Աստուծոյ խրամանով ուստայ Մուրատ իլաւ, նստաւ։

Էսաց.—Ազըէր, ինչ կուզըս զինէ. քեառսուն տարը կայ մեռիր իմ, չը՞ք Թուղնը իս խանգըստ մնամ։

Էսաց.—Ուստա՛ Մուրատ, կը խնդրիմ, Թագեաւուր ըզի իրկիր քիւ իտիւ, տը գեաս, սարէմ Թագեաւուրը խամար չնիս, Թը չգեաս, Թագեաւուր իմ վըզ տը զարկի։

Ջեռքմ չիւր էլ ուստայ Մուրատը խամար տարը խիտ։

Ուստայ Մուրատ չիւրիր խագեաւ, պառւու տղէն խնդրաց. էկըն Թագեաւուրը մօտ. ուստայ Մուրատ էսաց—Թագեաւուր ապրած մնայ, քեառսուն տարը կայ իս մեռիր իմ, ինչ կուզըս զինէ։

Թագեաւուր էսաց.—Իս կուզըմ սաս Ձլի ուսկուրքիրուց սարէմ զի խամար չնիմ։

Էսաց.—Շա՛տ աղէկ, կը չնիմ, իմ կռան, կաւ գդէլ աս տեղ չէ. իս մեռիր իմ, մինչիւ աս օր իմ կռան, կաւ գդէլ կեծ մարդագէլ պառւու դռան փակ տան ի։

—Է՛, վա՛ւլ տ՚էրթայ, բիրը։

Վուզիր էսաց.—Վա՛ւլ, ուստայ Մուրատ բիրի. ան տ՚երթայ բիրը, ինչ զմուրթ բիրըց։

Թագեաւուր էսաց.—Պառւու տղա՛, կերթաս բիրիս՝ բի, չբիրիս, քիւ վըզ կը զարկիմ։

Պառւոս տղէն մաղտէն էլաւ, գինաց տուն։

Մէր էսաց.—Ուստայ Մուրատ բէրը՛ր։

—Ուստայ Մուրատ բէրը, մկայ ուստայ Մուրատը կուան, կաւ գդէլ, կեծ մարդագէլ պառւոս դռան փակ տուն ի, կուզը. իս ինչիս տ՞երթամ, բէրիմ։

Էսաց.—Վուրդը, Աստուած ան վուզըրն պատիճմ տայ, ան յիտիւ քի կան կդեայ, գքի կուրխայ. վուրդը՛, մը՛ վախինայ. քիւ Աստուած կանչը, գինայ,՝ կերթաս սարմ կըլնը քիւ յառէջ, ադ սարը քեարիր արծըլը տըսակ ըն. կերթաս, ինչ խասնս անտե, կըսըս. «իս աշխարք կան էր իկի, գդնա անուշ սար չըր տըսի». ան կընցնիս, կերթաս, սարմ էլ կդեայ քիւ յառէջ. ադա սար ամին փուշ ի, կըսըս, «իս աս քան կան էր էկի, աս տըսակ կակուղ փուշ չէր տըսի»։ Անիւնք ճանբախ կտան, կընցնիս, կերթաս. կերթաս գետմ կըյնը քիւ յառէջ, ան ջըրու տըսակ աշխըրքի վերէն պղտոր ջիւր չկայ, փչուսմ ան ջրէն կը խմիս, կըսըս. «իս աշխարք կան էր էկի, իս աս ջըրու տըսակ անուշ, զուլալ, քաղցր ջիւր չըր տըսի»։ Ջիւրն էլ ճամբախ կտայ, կընցնիս։ Կերթաս, պառւը տունն էլ մանչ դաշտըն ի, դիւ քիւ բաղդ, թէ պառաւ քինած ի, կը բէրիս. թը չէ, գջի կուտը անպատճառ. վուրդը՛, գքիւ Աստուած կանչը, գինա, մը՛ վախինար։

Տղէն էլ իլաւ, գինաց թ՚աւուրմ՝ ճամբախ թը տաս աւուր գինաց, սարըն մօտացաւ. սարըն էսաց.—Իս անքան ախշարք կան էր էկի, գդնա անուշ սար չըր տըսի։

Սար ճամբախ իբաց, էսաց.—Էրի՛, գնա՛, գդնէմ տարը իս աս տեղն իմ, մարդ ձը զադա խապար չըր տուը։

Սար ընցաւ, գինաց, փշըն մօտացաւ, էսաց.—Իս ընցդնեմ ախշարք կան էր էկի, իս գդնա կանանչ, կակուղ փուշ վար ախշըքըն չըր տըսի։

Փուշ իրարուց բացուաւ, տղէն ընցաւ, գինաց։

Գինաց, գետուն մօտ խասաւ, կզուաւ վար գետուն, փչուսմ՝ ջիւր խմաւ, էսաց.—Իս ընցդնեմ աշխարք կան էր էկի՝ գդնա անուշ, քաղցր, զուլալ ջիւր չըր տըսի։

Գետն էլ ճամբախ էտու, տղէն ընցաւ գինաց։

Գինաց, պառւոս տուն մատացաւ, տեսաւ պառաւ քնած ի, ձեռ իտու, գկուան, կաւ գդէլ առըց, յիտ դարձաւ։

Քիչմ հեռըցաւ, պառաւ ակախաւ. տեսաւ կուան, կաւ-գդէլ առըց, կերթայ։ Էլաւ ընկեաւ յիտեւէն, էսաց.—Դիւր տը պըծնըս իմ ձեռնէն, մինչիւ գետուն բէրան կերթաս, գիտ ինչիս տ՚ընցնիս։ (Գետն էլ, փուշն էլ, սարն էլ սիճըրի էր)։

Տղէն ինչ էկաւ գետու բէրան. պառաւ կանչից.

—Գետ, թուղ մը տայ, էրթայ. մինչիւ իս խասնիմ։

Գիտը կանչից.—Չէ, ընցընեմ տարը կայ, իս աս տեղն իմ, մարդ մը չըր ըսի «անուշ, զուլալ ջիւր», աս տղէն ինչ իրի, էսաց։

Գետ ճամբախ իբաց, տղէն ընցաւ։

Իրի, փշըն մատացաւ, պառաւ կանչից։

—Փո՛ւշ, բռնի, մինչիւ իս խասնըմ։

Փուշ էսաց.—Չըմ բռնը, ընցընեմ՝ տարը կայ իս էս տեղն էր. մարդ մը չըր ըսէր «կակուղ, կանանչ փուշ». աս տղէն ինչ էրի էսաց։

Փուշ ճամբախ իբաց, տղէն ընցաւ։

Պառաւ կանչից.—Գիտ լ ընցար, փուշն էլ ընցար, վարծլեա-տաննուն ինչխ տ'ընցնիս։

Իրէ սարըն մատացաւ. պառաւ կանչից.—Սա՛ր, մը՛ թուղնը մինչի՛ւ իս գեամ, խասնըմ։

Սար կանչից.—Ինչո՞ւ խամար չթուղնըմ, ընցընեմ՝ տարը կայ, իս աս տեղն էր, մարդ ըզի չէր ըսի «զգնա անուշ սար չկայ», աս տղէն ինչ իրի աս տեւ, էսաց։

Սար ճամբախ իբաց էսաց.—Էրի՛, ընցի։

Տղէն ինչ զսար ընցաւ, պառաւ կսկծու բղդեաւ (պայթեցաւ)։

Տղէն գկռան, կաւ գդէլ իբի, իտու ուստայ Մուրատ։

Ուստայ Մուրատն էլ բաշլից, սարէն չնից, պըծաւ։

Ուստայ Մուրատ պառւու տղըն էսաց.—Խնդրիմ քինէ, ինչխ ըզի բիրիր, անցկուն էլ ըզի տանըս իմ տեղ։

Պառւու տղէն իլաւ, ուստայ Մուրատ առըց, գինաց գերեզ-մանանոցն, չուքիր իզար ջէռջիւ գերեզմնին, խնդըրք Աստուծուց էրաւ, էսաց.—Աստուած, քինէ կուզըմ ուստայ Մուրատ էլմ ուր գերեզմանն մտնի։

Գերեզման բացուաւ, ուստայ Մուրատ մտաւ ուր տեղ։

Պառւու տղէն էլաւ, էրի յիւր տուն։

Վուզիր էսաց.—Թագեաւուր ապրած կեաս, սարէն չնիցըր, մուրթ թլցիր ի սարէն, լուս կտայ, դիւ մնակ կը նստըս ինի. նշա-նակութին չունը. պէտքը խըրկիս, Պապը Ֆրէնկի աղջըկ բիրիս. էր-կուս իրարու առնըք, խատ իրարու նստէք։

Թագեաւուր էսաց.—Շատ աղէկ կըսըս, վո՛ւզ տ'երթայ. Պապը Ֆրէնկի աղջըկ մը բիրի, կուռով չը բիրուը, խաբրուվ չէրթայ։

Վուզիր էսաց.—Էս սարէն վո՛ւզ իտու չնիլ, էսքան զատ վո՛ւզ իրի, էլմ էն մարդ կը բիրը։

Էսաց.—Խրկի պառւու տղըն բի աս տեւ։

Մարդ գինաց, էսաց.—Թագեաւուր քի կը կանչի։

Մէր էսաց.—Վո՛ւրդը՝, իլի՛, գինա՛, Աստուած ան վուզըրն պա-լէն տայ. ան քի իտիւէն կան կդեայ, վուրդը՛, մը՛ վախինայ։

Պառւու տղէն կիւգեայ Թագաւուրըն մօտ։

Էսաց.—Թագեաւուր ապրած՝ ինչ կայ։

Էսաց.—Քինէ կուզըմ, էրթաս Պապը Ֆրենկը աղջըկ բերես. բերես՝ բէ. չբերես՝ վըզդ կը զարկեմ։

Տղէն մաղեհեն էրաւ, գինաց տուն։

Մէրն էսաց.—Վուրդը՛, էլմ ինչ մաղեհեն էրեր ես։

Տղէն էսաց.—Ըղի կը ճամբեր, կասը, «Պապը Ֆրէնկի աղջըկ ձը խամար բէ, չբերես վըզըդ կը զարկեմ»։

Էսաց.—Վուրդը՛, Աստուած ան վուզըրըն պատիճ տայ, կըլնըս կերթաս Թագեաւուրը մօտ, կըսըս. «Թագեաւուր ապրած, կուզըմ քինէ խընդ խարըր աղջըկ. ամեն մէկ տըսակ-մէկ Թայ. անխւնց խամլ (հագուստ) մէկ տըսակ, քինէ կուզըմ մէկ կեամիմ, ան կեամին էլ ամին ակնունք տըլնը, ախչըքի մէջ ալ ան տեսակ կեամի տը չըլնը. քեառասուն ձեռք սազ տըլնը, քեառասուն ձեռք էլ դաճուլ, զուռնայ տըլնը. յիսուն խատ էլ չաճկի տըլնը. մէկ ամսուան ալ խընդ խարըր մարդու ուտելիս, ինչ ուտելիս կայ մանչ ախչըքին ամեն վուզըրի քիսայից տըլնը։

Թագեաւուր էսաց.—Վուզի՛ր, լսա՞ր։

—Թագեաւուր ապրած՝ էսաց. խնդրեմ, քսան օր ժամանակ տաս. մինչեւ կեամիմ՝ տամ չնել. աղջնիրն էլ տեսնամ, բերեմ։

Կեամիմ, խտու չնել, աղջընիրն էլ ժողուեց, բեր։

Վուզիր անցկուն իլաւ, անցկուն չարչարանք քեշեց. գիւր չարըկն էլ ծախըց, հալա աղջըկ մնաց պակաս. ուր աղջըկն էլ իբէ տեղ։ Անցկուն չուարաւ վուզիր, օր աւուր խացըն կարօտ մնաց։

Պառւու տղէն էլ իլաւ, գիւր աղջկդեր առըց, գինաց, մտաւ կեամին. կեամին էլ անցկուն կեամիմ՝ էր, ախչըքի վըրէն ան տըսակ կեամի չկէր։

Պառւու տղէն էր․ կեամին իթուղ, գինաց . . . . . քեաղքը դիմաց դադըրաւ։

Էդ . . . . քեաղքը մախլուխ Թափան քամաշա, աըցըն մէմէկը.—«Սա տըսակ կեամի մինք չը՛ք տըսի»։

. . . . . Թագեաւուր-Պապը Ֆրէնկին էսաց վուզըրին.—Իլի՛, նստընք կայիղ, էրթանք կեամու քամաշեն. տըսնանք ինչ մարդ ի, ինչ մարդու կեամի ի։

Թագեաւուր, վուզիր նստան կայիղ, էկան կեամին դիւս իլան։

Վուզիր, Թագեաւուր ինչ մտան նիրս, շաշմիշ իլան. եօթ օր, եօթ գըշեր մնացին ան տե. իրենց մտով մէկ սահաթ իլաւ էկածն։

Թագեաւուր վուզըրին էսաց.—Աս սահաթմ՝ կայ մինք էկեր ինք, էրթանք։

Կեամուց ելան, նստան կայեղ, դուս ելան։

Թագաւուր գինաց սարէն, կընըկ էսաց.—Աստուած քու տուն աւըրը, աս խօթ օր կայ դու քաղաք թուղէր էք անթագաւուր, անվուղէր։

Թագաւուր էսաց.—Մի մաքէն սահարմ' ըլաւ, գինացէր ընք։

Կնըկ էսաց.—Սօթ օր կայ դու գնացըր ըք։

Թագաւուր էսաց,—Կնը՛կ, մէք գնացընք խօթ օր էկինք. վախինամ դու էրթաս, ամիս մնաս, որ չգաս։

Կնըկ էսաց.—Աս օր իս տ'էրթամ։

Կնըկն էլ էլաւ գուր խալաւքէր խաքեաւ. գուր խուեամ առըց, գինաց նստաւ կայեղ, քէշէց գինաց, կեամու յէռջու կայնաւ։

Թագաւուրը կնըկ կայեղէց դուս ըլաւ, մտաւ կեամին, էսաց. —Խուեամ, ինչ մօրէն ըլէր էք. ադ ընցկնա սէյր չընք տըսէ։

Թագաւուրը կնըկ մնաց տասնըխընդ օր կեամու մէջ։

Էսաց.—Խուեամ, աս օր էրթանք, վաղ էլմ կուգեանք։

Կեամուց ըլան, նստան կայեղ, կայեղչէն քէշէց, դուս իրի էխան։

Թագաւուրը կնըկ գինաց սարէն։

Թագաւուր էսաց.—Մէք խօթ օր մնացընք, կըսըս չա՞տ էք մնացէր. պա դու տասնըխընդ օր մնացէ՛ր։

Էսաց.—Ասա տեսակ սէյր ախշըրքի վըրէն էլ չըլնը։

Թագաւուրը աղջըկ էսաց.—Դու էրկուս կէրթէ՛ք. վալա իսն էլ տ'էրթամ։

Թագաւուրը աղջըկ գուր խալաւքէր խաքեաւ, իրի նստաւ կայեղ. քէշէց գինաց. կայեղէց դուս ըլաւ. մտաւ կեամին։

Պառւու տղէն էլ կեամուչուն էսաց.—Քինէ կուզըմ ցամուր առնիս (խարխուխ վէր քաշես)։

Ջեամուր առըց, զկեամու պար իտու, կեամին էլաւ իրի Մսըր։

Ադ Թագաւուրը աղջըկն էլ տխաւ խօր քեադքէն հեռըցաւ, «սամաճ-զամաճ կեամին գինաց. իս ինչ ինիմ,» պոռաց։

Պառւու տղէն Պապը Ֆրէնկի աղջըկ առըց իրի, Մսըրայ քաղաք դուս էխան. առըց տարաւ Թագաւուրը սարէն։

Աղջըկ զսարէն տըսաւ, ճաճմիճ էլաւ, էսաց.—Էսա Ֆլի ուսկուրքէր վո՞ւվ բէրէր ի. ասօր ռւսեն վո՞ւվ բէրէր ի. էսա մուրթ վո՞ւվ բէրէր ի։

Էսաց.—Անա մարդն ի բէրէր, ինչ գքի բէրէը ի։

—Անճէպ ինչ էք տուը անէս, որ բէրէր ի։

—Վուզէրն ը տուը, իս չըմ տուը, իս չըմ գիտը։

Աղջըկ տըղըն էսաց.—Ի՞նչ ի տուած քէ։

Ըսաց.—Մուրթ բերեր իմ, վուզիր ըզի տուր քսան փարայ. Ցլի ուսկուրքիր բերեր իմ, տուր մէկ կուռուշ. ուստայ Մուրատ բերեր իմ, տուր վաթսուն փարայ։

Պառւու տղէն թուղ խոռւ գինաց։

Վազիր ըսաց.—Թագաւուր ապրած՝ Ցլի ուսկուր բերեր, սարէն տուըր չընիլ. զՊապէ Ֆրէնկլի աղջըկ բերեր. պէտքը խըրկիս, անմախութենի ջիւր կայ, բերիս, լողանաս, ընըս տասնըչուըս տարեկան. առնըս Պապը Ֆրէնկլի աղջըկ։

—Վուզի՛ր, ըսաց. անմախութենի ջիւր վո՞ւր կերթայ, բերը։

Ըսաց.—Վուր էս կանչար բանիր իրի, էլըմ ան կը բերի։

Թագաւուր պառւու տղէն կանչից, իրի։

Տղէն ըսաց.—Թագաւուր ապրած՝ ի՞նչ կուզըս ընէ։

Ըսաց.—Քինէ կուզըմ, կերթաս, անմախական ջիւր կը բերիս, իս լուղանամ՝ ըլնըմ տասնըխընդ տարեկան ճճել, Պապը Ֆրէնկու աղջկայ խիտ պսակուըմ։

Պառւու տղէն դարձաւ, գինաց տուն։

Մէր ըսաց.—Թագաւուր էլ ի՞նչ ըսաց։

—Թագաւուր ըսաց. կերթաս անմախութենի ջիւր բերիս . . .

Ըսաց.—Վուրդը, կերթաս, եօթ ճամբախ խառնուրդ կայ. մէկ իխտիյար մարդմ ան տեղ նստը, վո՞ւր էրթայ, ճամբախ նշանց կըտայ, կերթաս ան մարդ։

Ան ինչ տ'էրթար, տղըն կանչից թագաւուրը աղջըկ։

Պառւու տղէն էլաւ գինաց Պապը Ֆրէնկու աղջկան մօտ, ըսաց.—Իս տ'էրթամ, ի՞նչ կըսըս, ըսա։

Պապը Ֆրէնկը աղջըկ ըսաց.—Կերթաս, չըմ հաւատայ դիւ անմախական ջիւր բերըս, թէ բերըր, իմ ձեռ տաս, ժիւրըշը ձեռ չտաս։

Պառւու տղէն էլ էլաւ, գաոց էլաւ, գի՛նաց. խասաւ եօթ ճամբախ խառնուրդ, իխտիյար տիսաւ, ըսաց.—Էխտիյա՛ր, ճամբախ ըզի նշանց տու, իս տ'էլթամ, անմախական ջիւր տը բերիմ։

Ըսաց.—Հա՛յ վուրդը, իս չըմ խաւատամ դիւ անմախական ջիւր բերիս։ Կերթաս ասա ճամբխով տաս աւուր ճամբախ. առաւուտուն ինչ ցուրտ ժամանակ կը տխնաս քիւ ճամբխը մէջ թէ ճաճավար ըլնը, թէ խաւք ըլնը, կառնըս, կը դնըս քիւ ծուց, կը տաքնայ. մինչիւ արիւ կառնը. կը թուղնըս։ Թ'անմախական ջիւր բերըր, ան տը բերը, ժիւրըշ մարդ չկէրի բերը։

Տղէն էլաւ, ճամբախ ընկեաւ. խընդ-տաս աւուր ճամբախ գինաց. տըսաւ խաւքմ՝ պառկիրի ան տեղ, քիչ մ'նացի օ ցրտու սառը։

Տղէն գխաւք բռնից իդի ծուց, քեչից գինաց, մինչիւ արիւ առըց, խաւք ծուց տաքցաւ։

Ձխաւք ըթուղ, թռաւ գինաց։

Տղէն էլ գինաց. գինաց, սարը գլեօխ կայնաւ։

Տըսաւ խուրմ կայ ան տև, խազար արշուն խուրունգի անմահական ջիւրը ան խուրն ը, մարդ չկէրի իջնէ մէջ, բան վիրուց չխասնը տակ։

Նստաւ ան տև, մտածից.—«Աստուած, ես ի՞նչխ անա խուրէն ջիւր խանըմ, տանըմ»։

Մէկն էլ տեսաւ բան վիրուց գինաց խուրը տակ, մէկն էլ տեսաւ խաւքմ խուրուց դիւս ելաւ փարխաճ ջիւր վըզըն. տեսաւ ան խաւք, ինչ դրեր ի ծուց։

Տղէն գջիւր առըց, խաւք թռաւ, գինաց։

Տղէն ճամբախ ընկըց գինաց, Մսըրայ քեաղաք դիւս ելաւ, ջիւր ետու Պապը Ֆրէնկը աղջըկ՝ դարձաւ։

Պապը Ֆրէնկը աղջըկ պղընձմ ջիւր եացըցեր, դրեր ան տև, գինաց Թագեաւուրը էսաց.—Պառւու տղէն անմախական ջիւր բերը, էլի լուղկանանք, կարգուինք. էլի, մոր աս պղընձ։

Թագեաւուր էկաւ, չիւրիր էխան, ընկեաւ պղընձ, խաշաւ։

Թագեաւուր տարըն պախըցըն։

Անմախական ջիւր բերըն ան տև, պառւու տղէն, Պապը Ֆրէնկու աղջըկ լուղացան. էրկուսն էլ ելան տասնըխընդ տարեկան, պսակուան։

Քեաղքը մէջ խուաք ելաւ, Թագեաւուր, Պապը Ֆրէնկու աղջըկ անմախական ջիւր խմած ելած տասնըխընդ տարեկան։

Պառւու տղէն որ ելաւ Թագեաւուր, խրկէց գիւր մէրն էլ էբի, եօթ օր, եօթ գշէր գիւր խարսնըս էդէ, պսակուան, էլաւ Մսըրայ Թագեաւուր։

Անիւնք ան տև խասան ուրինց մրազ, դիւ էլ աս տև խասնիք ձի մրազըն։

7

ԼԱՒԸ ԳԻՒԼՍՏԱՆ

Մոկաց բարբառով *

Թաղաւուրմ կէր, իրեք տղայ ունէր, իրեք աղջըկ, էսաց.
—Իս կը մեռնիմ. խաւք գեայ, գէլ գեայ, առջ գեայ, աղջկտիր կըտէք՝ էսայ. իս ի՛չ կը մեռնիմ, իմ իտիւէն չըգէք՝ էսաց. ինչ կը պսակուէք, մա ձի հընկտիք չը քընէք՝ էսաց. ծառ մը կայ մի, իրեք խնձուր կը բռնը. Ցուլխի տասնըխնդին, կը գեան, կը տանն. չըն թուղնը տըսնանք ինչ խնձուր ի (անմահական խնձուր ի). ան ցածրի խնձուր մինծ տղըն՝ ան միջի խնձուր միջնիկ տղըն. ան վէրի խնձուրն էլ պզտը տղըն։ Էսաց. եօթ օր իմ գիրիզման կը պախէք. գըշէր ճրագն էլ չըք թուղնը ընցնը։

Խէր մեռաւ՝ տը տանին վիրուցին. էրկու մեծ տղէք ասըցըն.
—Խիտ էրթանք։ Փուքր էսաց.—Չընք էրթայ։
—Ի՞նչըլը, մի խէր մեռնը, ասըցըն, մինք չէրթանք խիտ։
Պզտիկ աղբէրն էլ առըն. զիւրովէն, գնացըն խիտ։
Մինչիւ գլխէր պախըցըն, էկան. իւրօխըբէր Նստաւ թախտ, թագեաւուրութեն առըց։
Փուքր աղբէր էսաց.—Չէ՛, իս ձի ասըցը. «չընք էրթայ իտիւ»։
Առջ իրի, Նստաւ խնամաթոռ.—Ձի մինծ քիւր տը տէք ձը, էսաց։
Էրկու մինծ աղբէր ասըցըն.—Մինք մի քիւր ինչըխ տը տանք առջին, չընք իտայ. տանը տուտէ։
Պզտըկ աղբէրն էսաց.—Իմ խօր խուսք չէրի, կուշտ կիրայ. մս էլ չէնըմ, տը տամ. տանը։
Մինծ քիւր առջ առըց տարաւ։

---

* Պատմած է Զատիկ Խեպոյեան:

Անու յիտուէն գէլ էկաւ. Նստաւ խնամաթու, էսաց—Ձի միջնեկ քիւր տը տէք ձը։

Երկու մէնծ աղբէր ասըցըն.—Ձընք իտայ։ Փուքր աղբէր էսաց. —Չէ, իս իմ խօր խուսք գիտին չըմ իտայ. իմ քիւր սըտամ։

Քիւր իտու գէլին, առըց գընաց։

Անիւ յիտուէն Սըմուլխաւք Թռաւ. էկաւ, Նստաւ խնամաթու. —Ձի պզտիկ քիւր տըտէք ձը։

Երկու աղբէր էլմ էլ էկան ասն.—Մինք մի քիւր ինչխ տանք խաւքիւն. խաւք առնը տանը, մի քիւր ընկնը տակ. մեռնը։

Փուքր աղբէր էսաց.—Ան էրկու ձի քիւրերին ին, դիւ չը կարողացաք չտէք. աս իմ քիւրն ի. իս տը տամ։

Պզտիկ քիւրն էլ էտու Սըմուլ խաւքիւն, խաւք առըց տարըց։

Իրիկուն իլաւ.—Աղբէրքիր, էլեցէք, էրթանք. մի խօր գիրեզման պախինք։ Էլան. զճրագ առըն, գընացըն վար խօր գիրեզմընին. ճրագ վառըցըն, նստան։

Մէնծ աղբէր էսաց.—Դիւ քընեցէք. իս կը մնամ զարթուն. ինչ ժամանակ իմ քիւն կը գայ, իս զձը խանիմ վի։

Երկու պզտի աղբէր քինան, մէնծ աղբէր մնաց զարթուն։

Տըսաւ սիւ դէվ իրի, աղա կողմէն գինաց առաջ, էզար, զդիվ սպանից. էթալ ձիւր իվն, փըրթից իլից ան տխ, էսաց.—Իմ աղբէրքիր չըլնըն. տսնան վախանան։

Իրի, կանչից, միջնեկ աղբէր էխան վի, էսաց.—Իլի, դադըր, իմ խօր գիրեզման պախի. իս քիչմ քընիմ։

Մէնծ աղբէր քնաւ. միջնէկ աղբէր կայնաւ։

Միջնէկ աղբէր տըսաւ վիշապմ զատնու խիտ էրի, էն էլ գինաց առէջ, չէթուղ մատանայ. էզար, զվիշապ սպանից, փըրթից. էլաւ էրի։ Իրի, իշից լուսու դէմ ի.—Աղբէ՛ր, կանչից, դիմաց լուսու ի. իլի վի։

Պզտըկ աղբէր էլաւ վի, միջնէկ աղբէր քինաւ։

Պզտըկ աղբէր տըսաւ աղուխմ էկաւ ան տխ։ Էսաց.—Աղուխս ինչ տ'ինէ, կան գայ, ուսկուր կրծը, թը էրթայ։

Աղուխն էլ իրի, ճրագըն մատացաւ. պուչ էզար, ճրագ ընցուց. փախաւ, գինաց։

Ադ էլ ադ տխ չուարաւ. կրակ չկայ ճրագ վառը։

Իրըչից դաշտը մէջ կրակ տըսաւ, էլաւ քնում ուլնիք էթալ էն աղբօր ականջ, մէկ էնու ականջ, էսաց.—Իս էրթամ, իմ աղբէր չըլնին վի։ Գինաց դախ կրակ։ Տըսաւ մանչ ճամխըն կէօ ըխտիյար մարդմ. սըւտակ կծըկմ կէօ կուշտ, սիւ կծիկմ էլ յէռջիւ, կը կծկը. աղա կծըկը քիչ ի մնացի լըլնայ, էսաց.—Հա՛յ ըխտիյար, ադ ինչ կէնիս ադ տխ։

Էսաց.—Իս մուԹ, լուս կը բաժանիմ. Նա Թուխ գիշիրնը կը կըծկիմ. քիչմ էլ մնայ, կը լուսնայ։ Ի՞նչ լուսնայ, սըւտակ կըծըկ կը կծկիմ։

Էսաց.—ՄուԹ, լուս չըբաժանիս, մինչիւ կրակ առնիմ. գեամ։

Էսաց.—Աստուած քիւ տուն աւըրը, մինչիւ դիւ գեաս, էրկու գըշիր, էրկու ցիրեկ կըլնը. սաղ մարդ կը խըւընդնայ, խըւանդն էլ կը մեռնը։ Էլաւ գլխալաւիւր կապըց. իդի ան տե, Թոխ կծըկ իդի յէռջիւ. սըւտակ կծըկ հեռացըցուց մօտէն։

Գինաց դախ կրակ. տըսաւ մուղարէմ դաշտըն մէջ. կրակ ադա մուղարի մէջ կերևայ. գինաց. տըսաւ քեառասուն դև պառկած, քինած ա. քեառասուն կանԹէն պղընձ վար կրակըն. քեառասուն խեյվըճի ջաճդակ էլ մանչ պղնձըն, վար կրակըն կիռայ. դիւ չըսըս անիւնց մինծ աղըէր զարԹուն ը։ Աղ էլ էլաւ, կրակմ առըց. էլաւ վար դռան, էսաց.—Նա կրակ չէլաւ. էրԹամ մէկէլ բի՞րիմ։

Զան կրակ էԹալ, գինաց մէկ էլ իբի։

Էլ էսաց.—Նա էլ չէլաւ. զան էլ էԹալ, մտաւ մաղարէն վե. գինաց պղընձը վըէն կայնաւ, էսաց.—Իս ձիռ տըտամ նա պղընձ, վիրուցըմ, Թը վիրուցը, դըր գիտըն, էմ դըր վար կրակըն. դիմ կրակ առնըմ, էրԹամ. Թը չի վիրուցը, փախիմ, էրԹամ. ալ կրակ չըմ տանը. դեիր ակախին, իմ խուդըն ալ իս անիւնց ձեռնէն չըմ ազատը։

Աստըծու անուն իտու, ձիռ իտու դքեառաասուն կանԹէ պղընձ վիրուց իդի գիտըն, էմ իդի վար կրակըն. զուր կրակ առըց, էլաւ վար դռան։

Մինծ դև կանչից.—Այ մարդ, կրակմ քի խաբր, մէկն էլ քի խաբր, էն մէկ էլ ինչ էր տարըր. տը գեաս, Թի դիւ էնա քեառասուն կանԹէ պղընձ վիրուցըր, դըրը գիտըն, էմ դըրը վար կրակըն. մի քեառասուն աղբօր մինծ դիւ ըլնըս։

Աղ էլ դարձաւ. իրի, ձիռ իտու դքեառասուն կանԹէ պղընձ. վիրուց իդի գիտըն, իդի վար կրակըն։

Դիվն էլ էսաց.—Մի քեառասուն աղբօր մեծ դիւ։

Դեվ ուր աղբրքիր էխան վի, էսաց.—ԷրԹանք, նա Թագեաւուրըն իրէք աղջըկ կայ, եօԹ տարը կայ մինք կուզընք, չը տայ. դարկեախնիրը փակը, խուղը՝ էնըք էրկըԹէ բիվեռ չընինք, տանընք զարկինք պասաճ, էնըք պասաճը գլեօխ։

Էլան բիվեռ առըն, գեացըն պասաճը յառաջ։

Մինծ դիւուն էսաց.—Իս բիվեռ կը բռնըմ, դիւ զարկ։

Մէկ հեօԹակմ էլ ձիռ, ինչ կը զարկէր. ձէն կընկնէր քաղքը մէջ, աղ էլ դիւուն էսաց.—Աղ չիլաւ. մկայ կակախին, քեառասունը մէկս էլ կապանին։

Տղէն բիլեռ կոտէր պատըն, ձեռնով կը ղարկէր։

Մէկ մէկ էղարկ, էլաւ պետեճի գլեօխ։

Քեառսուն քար խանեց ուր խիտ, էսաց.—Ինչ քեարմ կը թլիմ, դիվըմ՝ էկեցէք, էլեցէք պատաճի գլեօխ. էն էրթայ մըջ քեաղքըն, դոր մէկ էլ ինըր։ Անի էլ կայնաւ վար պատաճին, քեարմ կը թլէր. դվմ՝ կըլնէր պատաճի գլեօխ. ադա տղէն էլ թուրմ կը զարկէր. դվուն վըղ, ճաճտակ, գլեօխ խընտրանց կեըրթէր քեաղքը մէջ։

Քեառսուն էլ ադա տըսակով սպանից։

Տղէն էլ էջաւ քեաղքու մէջ, կան իրի. գինաց թագեաւուրու սարեն տըսաւ, մտաւ նիրս. գինաց թագեաւուրու յօդլի դեօռ էբաց. տըսաւ թագեաւուր. իրան կնըկ քընած, տղէն դըրած ծանծըմակ, օձ սան վի իջի, քիչ մացի բիրան խասը. զօղի իրեա կըծը։ Խաճճար քեշից, զար վար օձու գլխուն. խաճճար մտաւ մանչ սան, մնաց։

Տղէն խաճճար իթուղ ուր տեղ, թագեաւուրը խաճճար առըց. զարկից ուր մէջք, գինաց. գեօռմ էլ իբաց. տըսաւ թագեաւուրը մեծ աղջըկ ադա տեղ քընի. մըւմ զարկած գլխին, մի ուտքիրուն, էսաց.—Տ'էրթամ, պադնըմ։ Գինաց. կզուաւ վրէն, էսաց.—Մանչ անիւ քընուն զան չը պադնիմ։

Գինաց, դեօռմ էլ իբաց—միջնեկ աղջկան յօդէն ի, ան՝ էլ մեծ աղջկան տըսակ պառկը, քընը. նա քեանց մեծ աղջըկ խօրոտ էր. գինաց, կզուաւ վիրէն, էսաց.—Տը պադնիմ։ Չը պադնից, յիտ դառցաւ, էսաց.—Մանչ անիւ քընուն չըմ պադնը։

Գինաց, դեօռմ էլ իբաց—պզտիկ աղջկան յօդէն։

Պզտիկ աղջըկ քեանց էրկուսն էլ խօրոտ էր։

Էսաց.—Քնած ըլնը, չըլնը. զան տը պադնիմ։

Գինաց. կզուաւ վրէն, անիւ սըրտ պադնից։

Քեանց փարէմ՝ անիւ սըրտ սիւցաւ։

Փօշման էղաւ, էսաց.—Աստըծուց էղնէր, չպադնէր անիւ սըրտ։ Ան էլ թուղ իտու, իրի դարկեախ իբաց, իրի դիւս, գինաց. զուր կրակ առըց, գինաց մատ իխտիյար։

Իխթիյար էսաց.—Աստուած քիւ տուն աւըրը. էլաւ էրկու գըշէր, էրկու ցիլիկ դիւ գեացիր իս. խըւանդ մըկայ միռեւ, սաղ խիւընդցի։

Էլաւ ըզ իխթիյար արցկից, էսաց.—Իս կիըթամ. մուլթ, լուս չըաժանիս, չուր իս իմ ճրագ կպուցիմ. որ իմ ճրագ կենայ առանց կպնել. դիւ զմուլթ, լուս բաժանիս, իս քի տըսպանիմ։

Ադ էլ գինաց զուր ճրագ կպուց. քնոյ ուլնիք աղբօր՝ ականջնիրուց էխան։

Լիւսցաւ. աղբէր էկաւ, էսաց.—Ըլեցեք վի. լիւս ի։

Աղբէրքիր էլան, նստան. գեացըն, լուացուան։

Պզտը աղբէր էսաց.—Էրթանք։

Միջնէկ էսաց.—Էրթանք դէ՛ւր։

Մեծ էսաց.—Էսա կուղմ (էն կուղմ ինչ դեւ սպանիր ի)։

Պզտիկն էլ էսաց.—Չէ՛. էրթանք սարիր ի՛նչ անի՛նք. անջեւր, անբան էրթանք. նստի՛նք վար աղբրըն, խաց կուտընք, կը լուացուընք, ջեւր կը խմինք։

Գնացըն վար աղբրին։

Դառնանք վար Թագւորըրըն։

Թագւուր քնուց էլաւ վի. տըսաւ օձ սան վի էջի, քէչ մնացը պոզէն կըծը. խանճար զարկած մանչ օձու գլխուն, մտի մանչ սան. խանճար թուղած ուր տեղ։

Խապար բիրըն Թագւուրըրըն.—Թագւուր ապրած կինաս. քեառսուն դեվն էլ սպանած ին։

Թագւուրն էլ դալալ իցքից մանչ քեաղքըն, խոու կանչիլ.
—Ո՛վ գնա դեվե՛ր սպանիր ի, թը գեայ. Թագւուր անիւ խնդիրք կատարը։

Վ՛ր կուվմ կէր, վէ՛ էչմ կէր, ծախըցըն. տուըն, թուր առըն, կապըցըն վար ուրինց. մէկ մէկ կըյան մա Թագւուր, Թագւուր կըսը.—Դիվեր դե՛ւ իս սպանի. կըսը.—Խա։

Կըսը.—Էնա խանճար քեշե, խնէ՛ք։

Որ ձիռ կը տանի խանճար, խանճար կը գեա՛յ դիւս։

—Չի գեայ դիւս։

Քեանի մարդ կէր մանչ քեաղքըն, մարդ չկըցաւ խանճար քէշիր դիւս։

Թագւուր էսաց.—Էլ մարդ մնա՛ց մանչ քեաղքըն։

Ասըցըն.—Մանչ քեաղքըն մարդ չկայ, յաղբրը վրէն սեւութիմ կայ, չընք գըտի մա՛րդ՝ի, ճէյվան ի, ինչ ի։

Թագւուր էսաց.—Գեացէ՛ք. որ մարդ ի, առէ՛ք բիրէք։

Գեացըն, տըսան իրէք մարդ նստած վար յաղբրըն։

Ըսըցըն.—Էլեցէ՛ք, էրթանք. Թագւուր ըզձի կուզը։
—Թագւուր ի՛նչ գուրծ ունի մի խիտ. մինք ճամբխուրդ մարդ ինք, մինք Թագւուրըրն չընք տըսի. Թագւուր զմի չը տըսի։
—Չէ՛, տը գէք, ասըց։

Առըն, տարըն։

Ցառաջ մեծ աղբէր տարան Թագւուրը իրիս։

Թագւուր էսաց.—Նա դիվեր դէ՛ւ իս սպանի։

Էսաց.—Իս իմ սպանի։

—Էն որ սպանիր իս, էնա խանճար քէշի, տըսնա՛մ։

Ձեռ խոու խանճար, խանճար կգեա՛յ դիւս. սուն կգեայ, խանճար չգեայ։

Միջնեկ աղբէր գինաց. էլմ աղա տըսակ։

Ցիտքէն պզտի աղբէր գինաց, էսաց.—Դիւ նա դիվիր սպանիլուց խապար ունի՞ս։

Էսաց.—Իս իմ սպանիր նա դիվիր։

Էսաց.—Որ դիւ իս սպանիր, նա խանճար քաշի դի՛ւս։

Թագաւուրըն էսաց.—Առ քիւ խանճար. իս իմ խանճար քաշիմ դիւս։

Ձիռ իտու, առըց զուր խանճար, էզար մէջք։

Թագաւուր էսաց.—Աղջկտիր դիւ քի էըմար իս աղատը. ինչ կուզըս, ուզը՛, տամ։

Տղէն էլ էսաց.—Բան էլ չըմ ուզը, աղջկտիր խէրիք ի։

Ադա իրիք աղբէր, իրիք աղջկտիր առըն, էկըն ուրինց տուն։

Մինծ քիւր մինծ աղբօր. միջնեկ քիւր, միջնեկ աղբօր. պզտիկ քիւր պզտիկ աղբօր։ Առան, պսակուան։

Պզտիկ աղբէրն էսաց.—Աղըրքիր, մի էսէր վոսիյաթ էրաւ.—«Ձի կընկտիրուն մօտ չքնէք»։

Աղըրքիր սարցըն.—Մինք պսակուիր ինք. մի կընկտիրուն մօտ տը պառկինք։

Պզտը աղբօր կնիկն էլ ուր տեղ չնից, պառկան։

Ադ էլ ուր կնկեան կուշտ չգինաց. իրի, պառկաւ իտիւ դռան։

Մէկէլ օր կնըկ էսաց.—Իտիւ դռան տեղ անի՞ւչ ի։

Տարաւ, տեղ իցքից իտիւ դռան։

Էլմ մարդ գինաց, վըրին քիւճճ պառկաւ։

Մէկէլ օր կնըկ տարաւ, տեղ վըրին քիւճճ պարզեց։

Մարդ էլմ չգինաց վար տեղաց, գինաց իտիւ դռան պառկաւ։

Կնիկն էլ մարդիւն էսաց.—Քիւ ճազ քեանց Լաւի Գիւլստան չմա ը։

Ադ էլ էսաց. քեան զիմ մէր կինաս ըզձը. քան զիմ քիւր, մինչիւ իս Լաւը Գիւլստանը չը տըսնամ ինչխ մարդ ի։

Էլաւ, ընկեաւ ճամբախ, գինաց։

Շաբաթմ, էրկու ճամբախ գինաց։

Գինաց, ընկեաւ առջու սըճու։

Գինաց առջու պաղչէն, վար ճավուզըն նստաւ։

Քիւըն էլ դադըը վար պատըն, ըլիկ մանը։

Իրըչից մանչ պաղչըն, տըսաւ մարդմ նստը վար ճավուզըն, էսաց.—Խաւք ուր թիւով, օձ ուր պուըտով չըր իկե միր պաղչէն, աս վո՞ւվ իկե միր պաղչէն։

Ինքն էլ իլաւ էրկու իրիք խաց առըց. գինաց, տըսաւ աղբէր։

Թռաւ, զաղբօր գլեօխ պագնից. զաղբէր առըց, էկըն տուն.

խաց իղի ան տև, աղբէր կերաւ. խուսան, վար մէմէկու ուրախացան։ Ցիլիկուան ելաւ, զաղբէր պախից։

Կէս սահաթ մնաց, առջ իրի. դիւռ էրաց, մտաւ նիրս. էսաց. —Կնը՛կ, մարդախուտ կգեայ մի տնէն։

Էսաց.—Տնաւէր, դիւ սարէն կգեաս, դիւ ձորէն կգեաս. մարդ-մարդախուտ քինէ կգեայ։

Էսաց.—Չ՝ըմ գըտի, մարդախուտ կգեայ մի տնէն։

Էսաց.—Աճապ ի, մկայ իմ աղբըրքիրուց մէկ ըյնէր սդայ. դիւ ինչ տէնէր։

Էսաց.—Մինծ աղբէր ինէր սդայ, մինծ փրդուճ ականջ տէնէր, միջնեկ ինէր, ան տըսակ. պըզտըկ աղբէր ինէր, անիւ տիղ տը չնիր վար իմ գլխուն։

Ասաց.—Իմ պըզտը աղբէր կեօ սդայ։

Առջ էսաց.—Քիւ վրզ կուտը, իս իմ. ան մէկ անիր, ան էլ վար ձը կը պախիս. տ՚իլլ, բի սդայ։

Ելաւ, զաղբէր առըց իրի։

Խաց իրի ան տև, խաց կերան։

Առջն էսաց.—Քիւ խըզմաթ ինչ կայ էսա երկըր։

Էսաց.—Իս ըկիր իմ, տ՚էրթամ Լաւի Գուլստանը տըսնամ։

Առջն էսաց.—Ադըկ իմ գործ չի, թը գըտի, Սմուլ խաւք գըտի, ան ախչար չատ կան կգեայ, որ ան չը գըտի, էլ մարդ չը գըտի։ Ալ յիւրըշ ճամբախ չկայ, կերթաս մօտ քիւ քիւր։

Առջն էլ էլաւ, զճամբախ չանց իտու. ադ էլ էլաւ, զճամբախ բռնից, գինաց։ Գինաց գիլու պաղչէն։

Ինչխ առջու տըսակ միջնեկ քիւրն էլ ընցկուն էրաւ։

Գէլ խարցնից.—Դի՞ւր տ՚էրթաս։

—Տ՚էրթամ Լաւը Գիւլստանը էրկիր, զԼաւը Գուլստան տըսնամ։

Էսաց.—Իսն էլ չըմ գըտի, Սմուլ խաւք գըտի։

Ադ էլ էլաւ, զճամբախ չանց իտու. մարդ ընկեաւ խա ճամբխըն, գինաց, գինաց, Սմուլ խաւքու պաղչէն դիւս ելաւ, վար աղբրին նստաւ. ջիւր խմաւ. պառկաւ։ Ան տև Սմուլ խաւք վիրուց իրըչից, տըսաւ կեօ մարդմ վար յաղբրին. էկաւ տակ, տը զարկէր։

Ինչ մատացաւ, տըսաւ անիր։

Սմուր խաւք էլ թիւքիւր իտու էրեգեական, խուվ էրաւ վար անիրուջ. անիր ակախաւ. էլաւ, նստաւ։

Սմուր խաւքն էլ էջաւ խատ անիրուջ կշտըն։

Վար իրարու խնդացան, ուրախացան։

Էլան գեացըն տուն. քիւր էկաւ, կախուաւ աղբօր վըզ. աղբօր գլեօխ պագնից։

Սմուր խաւք էսաց.—Կնը՛կ, խաց բէ, ուտընք։

Բիւր էլաւ, խաց լըդէ անու. կերան, խմանւ

Սմուր խաւք էսաց.—Աստուած խեր էնը. դիւ ինչ գուրծը ըկէ, դիւր ա՛էրթաս։

Էսաց.—Իս ըկէր իմ, ա՛էրթամ Լաւը Գիւլստան տընամ։

Սմուր խաւք էսաց,—Իս չըմ գըտի, անիւ երկըր ոչ տեղն ի. իս կանչիմ խաւքիր, գեան, տանանք մի սալդ կտայ։

Սմուր խաւք կանչից, քեանի խաւքմ կէր, ժողուան, էկըն։

Խարցնից, մէկ սալըդ չիտու։

Էսաց.—Ալ խաւք մնաց դիւս։

Ասըցըն.—Մէկ քեալալեօտմ կեօ եօթ ծովու կղզըն, մնացի ան տե, փետուըմ 'էլ վըէն չկայ։

Սմուր խաւք էսաց.—Իրէք, չուըս խաւք գեացէք. դըէք վար ձի Թիւքիրուն. առէք, բիրէք։

Չուրս խաւքմ թռան. գեացըն եօթ ծովու կղզըն, զադա խաւք վիրուցըն. զուրինց Թիւքիր տուըն յիրար, զխաւք դըըն վար ուրինց Թիւքիրուն, առըն, բիրին, տուըն Սմուր խաւքըն. Սմուր խաւք խարցնից.—Դիւ գըտիս Լաւը Գիւլստանի երկիր դի՞ւըն ի։

Ադա խաւք էսաց.—Իս մէկ դիըմ գեացը, ան ալ խատ իմ մօր։

—Մըկայ կարո՞ղ իս էրթաս։

—Ի՞նչի ա՛էրթամ, փիտուր չունիմ. անուԹուԹենէ մեռեր իմ։

Մէկ չաբաԹմ օխչըի դմակ կիրցուց. ադ խըն փիտուր Թափաւ. նուրէն փիտուր էկաւ։

Ութ օր էլ կիրցուց. լաւ փիտուր էկաւ վըէն։

Խաւք էսաց.—Փորձիմ, կարօղ էմ Թռնիմ։

Բիչմ Թռաւ. բանձըցաւ, էլմ էլ էկաւ տակ։

Էսաց.—Չըմ կարողանայ Թռնըլ։

Ութ օր էլ միս կիրցուց. խաւքն էլ էսաց.—Իլի, նստը վար իմ Թիւքիրուն, էրԹանք։

Ադա մարդ էլաւ, նստաւ վար խաւքիւ Թիւքիրուն. տարաւ, զծուվ խըլսցիւց. իդէ ցամաք՝ դառցաւ, իրէ։

Անի ինչ մԹնաւ, գինաց մանչ քեաղքըն. կան իրի. յանկարծ գինաց Լաւը Գուլստանը դիւռ էրաց. գինաց նիրս, յօդէք կան իրի. դեօռն էլ էրաց. տըսաւ Լաւը Գիւլստանը պառկը, քնը. բարձմ գըլխիւն. մէկ վուտքիրուն. մէկ ան կուղք, մէկ ան կուղք. վար անիւ սըտըն գիւլ ու բռահանը, ադ էլ ձեռ իԹալ, պօկեց զգիւլ բռահան. էխան (մազիրուն տեղ գիւլ ու բռահան էր)։

Լաւը Գիւլստան միռաւ։

Ադ էլ դառցաւ, իրի ծովու բիրան. փուսմ փուրից, նստաւ

իներ. քիչ մէկ ցախ ու մախ իդի վար ուր գլխին, տըսաւ իրէք եղուընիկ էկան, թռան ան տեր, զուրինց խաւքինըն խանըն։

Ադ էլ տըսաւ մէկ իրան կնըկ, մէկ էլ էրկուս աղբօր կընկ-տիք ին։

Դիւ չըսըս, կնըկ խաւքինըն յանկարծ կը տանը. դնը անիւ գլխիւ վերէն. ադ էլ գլխաւքինըն առըց, պախից։

Ադիւքն էլ էլան. գեացըն մատ Լաւը Գիւլստան, տըսան Լաւը Գիւլստան մեռե, չկայնան. յետ դառցան, էկըն։

Երկու քիւր զուրինց խաւքինըն առըն, թռան գեացըն։

Քիւր կը կանչը.—Այ քիւրիր, մ'էրթէք. մինչիւ ես իմ խաւ-քինըն գնդընիմ, գեամ։

Մարդն էլ էլաւ, գլխաւքենըն խաքեաւ։

Կնըկ մնաց ան տեր, ինք թռաւ գինաց։

Ադա տղէն իրի մատ ուր քիւրիր. քիւրիրու մօտէն թուղ էտու, գինաց ուր տուն։ Էլաւ աղբէրնիրու ճաղլ էրաւ զուր տըսած. աղ-բէրնիր էլան, զուրենց կնկտիք թուղըն։

***

Ցուլիս ամիս մօտացաւ. Ցուլսի տասնըչուըս օր իլաւ, միծ աղբէր էսաց.—Աղբէրնիր, մի խնձուրը ժամանակն էկաւ, տը գեան, խնձուր տանըն, ըլեցէք, էրթանք, պախինք։

Պզտը աղբէր էսաց.—Ըձը խնձուր չըպը, գեացէք, պախեցէք ձի։

Մինծ աղբէր էլաւ, գինաց յէռջիւ խնձուրըն. սաճարմ, էրկու մնաց ան տեր, փախաւ իրի։

Մինծ աղբէր քընաւ. պզտը աղբէր իլաւ գինաց։

Գինաց, նստաւ խնձուրը ծառը տակ։

Սաճարմ' էրկու մնաց. տըսաւ փալմ սիւ ամպ ուռաւ, իրի-իրի, ծառըն մօտացաւ. տըսաւ սիվ դեմ, ձեռ իթալ, խնձուր կըտ-ռից, դառցաւ. ան էլ աներղմ' իղար, դդե իցքից. դդե քեշից, հե-ռացըցուց. փըթից, իլից ան տեր. դառցաւ, իրի տուն, քնաւ։

Առաւուտուն աղբէրնիր էլան վէ, գեացըն խնձուրը բամաշէն. տըսան խնձուրմ տարած, էկըն. քնու մէջ զաղբէր բռնըցըն, տփի-ցըն, ասըցըն.—Ցիրիկին դիւ չէկըր խնձուր պախէնք, էկըն տարըն։

Մինծ աղբօր էսաց.—Ձէ՛, դիւ գեացըր, թը պախէր։

Ցիրիկին միջնեկ աղբէր էսաց.—Նկէք, էրթանք, մի խնձուր պախինք. մէկը տարած ըն, էրկուսն էլ չը տանըն։

Պզտը աղբօր ասըցըն.—Իլի՛, էրթանք։

Էսաց.—Գեացէք, պախեցէ՛ք ձի խըմա. ես չըմ ուզը։

Էրկու աղբէր էլան, գեացըն. սաճարմ էրկու մնացըն, վախա-ցան. փախան էկըն, գեացըն ուրինց տեղ, քընան։

Պզտը աղբէր էսաց.—Իս գըտիմ. մկայ իմ աղբէրքէր փախած՝ էկած։ Էկաւ, գինաց խնձուրը ծառը տակ, տըսաւ մարդ չկայ. ադ էլ նստաւ ա տև սաճարմ, էրկու. տըսաւ, սըւտակ դև էկաւ. ձեռ իթալ զխնձուր կտուից, դառցաւ. խատ դառնըլուն նիտ անեղմ էզար. զդև պառկացըցուց գիտըն։ Ձեռ իթալ գոտ, բռնից, քեշից. տարաւ, հեռացըցուց. փըթից, իլից ան տև. դառցաւ, ուր տեղ քնաւ։

Լիսցաւ. աղբըրտանք էլմ գեացըն խնձուրը քամաճէն. տըսան ան մէկէլն էլ տարած, մնացի մէ, էկան էլմ եուֆր տուին աղբօր։

Պզտը աղբէր կար.—Այ ճանըմ, իս չըմ ուզը, չըմ ուզը. խնձուր պձը պէտք չէ։

Ցիրիկուն սըրցըն.—Դէ՛, յէլէ, գինա, գքիւ խնձուր պախէ։

Էսաց.—Դիւ գեացէ՛ք, գձիր պախեցէք. մնաց իմ, իս չըմ էրթայ։

Մինծ աղբէր էսաց.—Իս կերթամ, պախիմ գձը խամար։

Պզտըկ աղբէր էսաց.—Կերթաս, չըս էրթայ. ձը պէտք չի։

Մինծ աղբէր էլաւ գինաց, նստաւ խնձուրը ծառը տակ, մինչիւ մթնաւ, փախաւ էկաւ. գինաց ուր տեղ պառկաւ։

Պզտը աղբէրն էլ էսաց.—Իս գըտիմ, մկայ փախի. էրթամ խնձուրը ծառը տակ։

Էլաւ գինաց. նստաւ խնձուրը ծառը տակ, սաճարմ, էրկու մնաց. տըսաւ կարմիր դև իրի, քեանց սար մը, իրի. իրի խնձուրը ծառըն մատացաւ, ձեռ էթալ, զխնձուր կտուից, դառցաւ։ Ադ էլ նիտ անեղմ իզար. դև էլաւ ճարալիւ, փախաւ, տղէն էլ ընկեաւ իտևէն, գեացըն, խասան մանչ դաշտըն, դև մտաւ մաղարէն վի, ադ էլ դառցաւ, իրի տուն. ընկեաւ ուր տեղ, քընաւ մինչիւ լըլուսուն. իր լիւսուն ակախաւ, իլաւ վի, էսաց.—Այ աղբէրնիր. իս էրազը մէջ գեացը, մի խնձուրը ծառը տըսայ, դէն էլ իրի զմի խնձուրը կտուից. իս նիտ անեղմ զարկը, չընկեաւ, էլաւ ճարալիւ, փախաւ. իս ընկեայ յիտևէն, գեացընք չուր մանչ դաշտըն. դև մտաւ մաղարէն վէ, իս դառցայ, իկայ. թա չըք խաւատայ, աըրն էլ խա ճամբխըն թափը մինչիւ մաղարի բերան։

Էլաւ, զաղբէրնիր առըց, գեացըն խնձուրը ծառը տակ. ըրը-չիցըն գիտըն, զարուն տըսան, խատ արնըն գինացըն մինչիւ մաղարը բիրան։

Մինծ աղբէր էսաց.—Ըզձը կախեցէք, իս էրթամ մաղարէն։

Շրիս կապիցըն. զմիծ աղբէր կախըցըն մաղարէն վէր։

Էսաց.—Աստըծու սիրուն, ըզձը քաշեցէք, ցըտու մեռայ։ Քեշիցըն դիւս։

Միջնեկ աղբէր էսաց.—Դիւ չը կեղչըցար, իս տէրթամ։

Միջնեկ աղբէր կախիցըն, քիչ մէլ էն գինաց, էսաց.—Աղբէր-նիր՝ Աստըծու սէր, ըզձը քեչեցէք դիւս. իս չուքիւ մեռայ։

Աղ էլ քեչիցըն, խանըցըն դիւս։

Պզտըկ աղբէր էսաց.—Դիւ գեացէ՛ք ձի տնիր, մարդ ըզձը չը ճանչնայ. իս կերթամ մաղարեն վի. էկայ, էկայ. չէկայ՝ չէկայ։ Քեառասուն օր նա Ցrիs չը քեչէք դիւս. դիւքն էլ ձի խաց, ջիւր կը բիրէք, ուտիք. մինչիւ քեառասուն օր իս էկայ, էկայ. չէկա՛յ, թուղ կտէք, կերթէք։

Պզտը աղբէր կախըցըն մաղարեն վե. գնաց, էջաւ տակ։

Ցrիs ուր մէջքէն արցըկից, գինաց կան էրի. գինաց պաղչեմ տըսաւ, սarէմ տըսաւ. տն պաղչէն սիվ, սarէն սիվ, էսաց.—Իս գըտիմ, սըկ սիվ դիւուն ը. գինաց, Նստաւ։ Դիւու կնըկ էլաւ, տըսաւ մարդմ Նստի պաղչէն, կանչից էսաց.—Այ խողածըն, ծառաւ իս, ջիւր խըմը. անութը իս, իլի՛, քի խաց առ գինա՛. սիվ դիվ գեացը Ցkչir. իրեք օր չէկը, դեայ, քիւ խուքըն էլ չըս աղատը անիւ ձեռնէն։

Էսաց.—Սիվ դիվ իրէք օր կայ՝ իրիր իմ քի մատաղ։

Կնըկն էլ էսաց.—Իս Աստըծուց էն կուզէր. էրի՛ սղայ, ղիրար առնընք. ուտինք, խմինք մինչիւ մեռնիլիւ օր. ինչ Աստուած ստեղծի, տայ ի։

Էն էլ գինաց ան տե չուր իրիկիւն։

Իրիկիւն կնըկ էլաւ, տեղ չընից, պառկան։ Տղէն էլ թուր իդի մանչ յինք, մանչ կնըկ, նուր քընաւ։ Լիւսցաւ, էսաց.—Ճամբախ կայ յիւջիւ ձը, դառնամ, զքի առնըմ։

Կնըկ էսաց.—Էրթայ, աչ ինի սըւտակ դիւու կնըկ, ալ ըզձը չառնը։

Էլաւ գինաց, սիվ դիւու սըGon ընցաւ, գինաց սըւտակ դիւու սըGon։

Տըսաւ սըւտակ դիւու պաղչէն սըւտակ, սarէն սըւտակ։

Էսաց.—Էս գըտիմ, աս էլ սըւտակ դեւուն ը, մինչիւ էրթամ կարմիր դիւու սըGon, Աստուած օղորմած ը։

Գինաց, Նստաւ սըւտակ դիւու պաղչը մէջ։

Սըւտակ դիւու կնըկ էլաւ, ըըըչից. կեօ մարդմ Նստը պաղչը մէջ, կանչից, էսաց.—Այ մարդ, Աստըծու սիրուն ընը, անութը իս, էրի՛, քի խաց առ. ծառաւ իս, ջիւր խմը, յէ՞ստ իկիր իս, դառցը, գինա՛ ան տե, սըւտակ դե չորս օր կայ գեացը Ցkճըr, չէկը. գեայ, խիտ տըսնիլիւն զքի տըսպանը. քիւ մեղք ինի իմ վըզ։

Էսաց.—Սըւտակ դե կուrպաG էմ արե քե։

Էսաց.—Սըւտակ դե սպանիր ես, դ'էրի ադայ. ըղձը առ, մինչեւ ուտինք, խմինք, միռնինք:

Գինաց ան տե, կնըկ խաց իթալ, կերաւ. յիրիկուն կնըկ տեղ պարզից. պառկիլու ժամանակ Թուր իդի մանչ յինք, մանչ կընըկ, քընաւ։ Կնըկ էսաց.—Դի՞ւր տ'էրթաս։

Էսաց.—Ցերդիւմ իմ էրի, տ'էրթամ կարմիր դիւաւ մօտ։

Էսաց.—Գուրծ չունիս, մ'էրթայ, քե կսպանի. էրի՛, ըղձը առ։

Ադ էլ էսաց.—Սպանի, սպանի. տ'էրթամ։

Մարդն էլ ճերմակ դիւու կնկեան մօտէն ելաւ, գինաց կարմիր դիւու պաղչէն նստաւ։

Կարմիր դիւուն պաղչէն էլ կարմիր, սարեն էլ կարմիր։

Կնըկ դիւս էլաւ, տըսաւ մարդմ նստի պաղչը մէջ։

Էսաց.—Այ խուղածըն, անուշը ես, էրի խաց առ քի, ծառաւ ես, ջիւր խըմը, ադ տիղէն ելի՛, գինմ. կարմիր դե գինացիր էր Ճէջիր, Ճէջըրըց իրի, Եարալիւ էր. աս օր ալ գինացը Ճէջըր, դեալիւ խիտ դքի կսպանը։

Էսաց.—Ընդըրա խամար իկիր իմ, ըղձը սպանը։

Ինչ էրաւ. խիտ չէլաւ։

Կարմիր դե յըրկիւն էկաւ. տըսաւ մարդմ պաղչը մէջ նստիր ի, կնկեան էսաց.—Դիւ չը կըրօղացմը, ասա մարդ ինչ կուզէր, տէր, ան էրթէր. իս չդէր, զան տըսնէր։

Կնըկ էսաց.—Իս ինչ էրը, չը գինաց։

Ադ էլ կանչից զմարդ, տարաւ ան տե.—Դիւ ի՞նչ մարդ ես։

—Իս ճամբխորդ իմ։

—Խաւք ուր Թիւուվ, օձ ուր պուռտով չգեայ աս տե. դիւ ի՞նչխ իկիր իս աս տե։

Էսաց.—Խաւք չգեայ, օձ չգեայ, իս իկիր իմ։

Էսաց.—Որ էն տեսալն ի, ա տեղ քընի. առաւօտուն իս, դիւ տ'էրթանք կռըւ։

Քընաւ մինչեւ առաւօտուն։

Առաւօտուն մարդ, կարմիր դե գեացըն, պաղչը մէջ առըն յիրար. կռուան մինչեւ յիրիկուան։

Կարմիր դե էսաց.—Գինմ, դիւ իմ կնկեան ծուց պառկը, առաւօտուն էրի. էլմ իս, դիւ կռուընք։

Ան էլ գինաց կնկեան մօտ։

Անմախական ջիւր կէր ան տե, դե մտաւ էդա ջըրն մէջ. լուղացաւ, դիւս ելաւ, Եարէք սաղացաւ։

Էդ մարդն էլ գինաց, յիրիկիւն Թուր իդի մանչ յինք, մանչ կնըկ, քնաւ։ Առաւօտուն ելաւ, գինաց կռիւ։

Ինչ կը քեկի, արըն, արընք ջիւր բըինքնէրաց Թափը տակ.

Գնացըն, կռուան մինչև ճաշուն. մարդ չկարողացաւ մէկ դարպ զարկի, աճճախ զինք պախից, դև չսպանէր, մինչև բրիճճոնը տաքցաւ. որ տաքցաւ, կռիւ էրըն մինչև յիրիկուան։

Էլմ դև էսաց.—Գինամ, իմ կ'նկեան կուշտ պառկը։

Մարդ գինաց տուն. դևն էլ լուղացաւ, նստաւ։

Մարդն էլ գինաց տուն, յիրիկվան տեղ չընիցըն. Էլմ թուր էղի մանչ յինք, մանչ կնըկ, քնաւ։

Դիւու կնըկ մարդին էսաց.—Առաւուտուն կերթաս կռիւ, թէ դև զքի չըսպանից, էլ դիւ չգեաս տուն. կերթաս ճճարը ծառը տակ խուըմ կայ. ան ծառը տակ անմախական ջիւր կայ. դև կը խըկլիս, գեայ տուն, գիւն էլ կը մտնիս ան ջըր մէջ լուղկանաս. քիւ ևարէք կը սաղանայ. դև տնէն գեայ, կը պըկլիս, կսպանիս։

Մարդն էլ առաւուտուն էլաւ, գինաց կռըւ. ինչ կը քէլի, արըն արընքջիւր բրիճքններաց կը թափը տակ։

Կռըւ էրըն մինչև յիրիկուն. մէկ դարպ չէզարկ դիւուն, աճ-ճաքը զինք պախից. դև չսպանից զդայ։

Յիրիկուն դև էլմ էսաց.—Գինամ տուն։

Մարդ էսաց.—Իս չըմ էրթայ, աս օր դիւ կերթաս տուն։ Դև էսաց.– Ի՞նչու չըս էրթայ։

Էսաց.—Էրկու օր իլաւ իս կէրթամ. աս օր դիւ տ'էրթաս։

Դևն էլ թուղ խոռ, գինաց տուն։

Մարդն էլ գինաց. ճճարը ծառը տակը խուր տըսաւ. ջիւր էխան, մտաւ ջրու մէջ. լուղկացաւ, դիւս էլաւ։

ԵՒարէք սաղացան՝ քեանց առաջն էլաւ։

Դևն էլ գինաց տուն. կնկեան էսաց.—Դիւն էր մարդին ըսըցըր «չգեաս տուն»։ Էսաց.—Չէ, իս խապար չունիմ մոտէն։

Էսաց.—Դիւ խապար չունիս, աղ էլ չգըտի խուր ինչ տեղն ի, ցրտուն ևարէք տը պաղը. առաւուտուն կերթամ, կը զարկիմ, կըսպանիմ։

Առաւուտուն դև իլաւ վի. ինչ կը քէլի, արընք, արընքջիւր բրըճքններուց կը թափը տակ։

Գինաց պաղչը մէջը, էրկուս առըն յիրար, կռուան. էլ դև չկարուղանայ դարպ զարկը մարդին. մարդն էլ էզար, զդև սպանից. իրի տուն։

Կնըկ էսաց.—Նստինք աղայ. ուտինք, խմինք, չուր մեռնինք։

—Չեղնի, էսաց. իս աս տե չը մնամ։

Կընըկ էսաց.—Իս կըսըմ՝ մնանք աս տե. չէղնը՝էրթանք։

Էլաւ կարմիր դիւու կնըկ առըց, ինչ կէր առըց. էկան սըւտակ դիւու մոտ։ Սըւտակ դիւու կնըկն էլ առըց. ինչ կէր առըց, էկաւ սիվ դիւու մոտ։

Սիվ դիւու կնկեան խաղն էր ուսկը կատու, ուսկը մուկ մանչ ուսկը սըճուն կը պտուտէն։

Սըւտակ դիւու կնկեան խաղն էր, ուսկը աղուէս, ուսկը լըլըգ-տըրակ մանչ ուսկը սըճուն կը պտուտէն։

Կարմիր դիւուն էլ ուսկը կաքեաւ, ուսկը բաղէն մանչ ուսկը սըճուն. անիւ խաղն էլ էն էր։

Կարմիր դիւու կնըկ էսաց.—Աս բանիր կը դնիս մէկ տոպըկի մէջ կը կապըս քիւ քեամակ, քի պէտք կըլնը։

Ադիւնքն էլ՛ էլան, մալ, ապրանք, ինչ կէր առըց, էկաւ յէռջիւ մաղարը դռան. σrիs չէ կախ էր, σrիs յիրար իտու. աղըրքիր մաղարը բիրնէն կանչըցըն.—Այ աղբէր, դի՛ւ էկըր։

(Քեանիմ խնձուր տարըր ըն դևիր, բիւլոր իրի։)

Ադ էլ մալ-ապրանք կապըց, ամին քեչեցըն վի, մնաց կնկտիր. սիվ դիւուն կնըկ քեշից վի. սըւտակ դիւուն էլ, մնաց կարմիր դիւուն։

Կարմիր դիւու կնըկ էսաց.—Դիւ իմ, իս նուր կըլնիմ դիւա։

Մարդ էսաց.—Չէ, իս չըմ թուղնըմ գքի ադայ։

—Մա՛րդ, էսաց. դիւ իլի, կը փուճըրճիս։—Չէ, դիւ տըլնիս։

Կնըկն էլ էսաց.—Իս գըտիմ. գքի տը թըւղնին էդա խուըը մէջ. դիւճեայ ի, թա մնացըր ադայ, կերթաս սև դիւու փաճճարէն. դըրքմ կայ ան տև, կը կարդաս. որ կը կարդաս, սև խուն, սըւտակ խուն, կդեան վար ջրուն. կը կռուըն. գքի կը թըխս սիվ խույու քեամակ, սիվ խուն կը թըի սըւտակ խույու քեամակ. սըւտակ խուն գքի կը բիրէ լիւս աշխարք խանէ դիւա։

Զկարմիր դիւու կնըկն էլ կապից, քեշիցըն վի։

Աղբէրքիրու աչ ինչ ընկեան զկարմիր դիւու կընըկ, առըցըն.
—Մի աղբէր գեայ, մի բանըմ չի տայ. ինչ կայ, տառնը ուր, սալ դնինք մաղարը բերնի վրէն, թը մնայ մաղարէն։

Սալ քեշըըցըն վըր մաղարը բիրնըն. զկնկտիր, զմալ. ապրանք, առըն, գեացըն։

Ինչ գեացըն, խըօխպէրն էլ մեռի. մինծ աղբէր նստաւ թախտ. մէկ էլ աղբէրն էլ էլաւ անիւ վուղիր։

Կընկտիրն էլ ըսըցըն.—Մինք քեառսուն օր իրաւունք չընք իտայ պսակուըը։

Դառնանք պզտըկ աղբօր. աղբէր անընցկուն կանչից աղբէր-քիրուն. աղբէրքիր ձէն չտուիցըն։

Ադ էլ դառցաւ, գինաց սիվ դիւու սարէն. տըսաւ փաճճարէն գիրքմ կայ. առըց, կարդաց, էլաւ ծուվ. տըսաւ սըւտակ խուն, սիվ խուն վար ծուվուն կռուան. ադ էլ գինաց, մոռացաւ, զինք իթալ

սըւտակ խույու քեամակ. սըւտակ խուն զան իթալ սիվ խույու քեամակն. սիվ խուն տարաւ մութ ախշարք, իցքից դիւս։

Գինաց մանչ քեաղքըն կան իրի, գինաց, էլաւ պառւու ղօճախ, ըսաց.—Պառաւ, ղօճախ կը տիրէ՞ս։

Ըսաց.—Մեռնիմ քի. մընչ կայ ուտինք, մընչ կայ խմինք, կը տիրիմ. ընչի՞ չըմ տիրի։

Էն էլ իլաւ, ձեռ իտու ճեպ. էրկու-իրեք ուսկը իտու պառւաւ, ըսաց.—Տար քեաղաք, ուտիլիւ բան, ջիւր առ, իրի։

Պառաւ առըց իըի. կիրան։

—Պառաւ, ըսաց. ջիւըմ բի, խմիմ։

Ըսաց.—Վըշապըմ մտի աղբըի ակ, ջիւր չթուղնը գեայ. օրէն աղջըկըմ տը տանին, տան վիշապուն. նուրէն թուղնը ջիւր, գեայ. էն արընջիւր խմին. աս օր իրեք օր կայ, ջիւր չկայ մի քեաղաք. թագեաւուըը աղջըկ տը տանըն, չէրթայ։

Ըսաց.—Պառաւ, ինչ ժամանակ թագեաւուըը աղջըկ տանըն, ձը իմաց կտաս։ Ըսայ.—Շատ աղէկ։

Թագեաւուըն էլ ըսաց.—Քաղաքըմ չըմ ւըըմ աղջըկմ ապրվ։

Էլաւ, աղջըկ զուռովէն իտու, տարան, կապըցըն ճճարը ծառ. տարուղնիր փախան, էկըն։

Պառաւն էլ իմաց իտու տղըն.—Թագեաւուըը աղջըկ տարան։

Մարդն էլ իլաւ, զուր թուր առըց, գինաց. տըսաւ ճճարը ծառ, կեօ յէռջիւ աղըըըն. աղջըկ կապած ճճարը ծառ, գեացած. ան էլ աղջըկ արցըկից ճճարը ծառէն. առըց, նստաւ ան տեւ։

Աղջըկ ըսաց.—Աստըծու սըրուն ըլնը, իլի՜, գինա՛. վըշապ ըգձը տ՚ուտը. զքի չուտը։

Ըսաց.—Զքի տ՚ուտը. ըգձը էլ թ՚ուտը. իմ քլուն կը տանը. գլեօխ դնիմ քիւ գիւք. քիչմ քընիմ՝ վըշապ ինչ գ՚այ, ըգձը իմաց կտաս։

Գլեօխ իդի աղջկու գիւք, քընաւ. վըշապ գլեօխ աղըըի ակէն էխան դիւս. աղջըկ ինչ տըսաւ, լիզուն մանչ բերնըն չուրցաւ. էլ չկարուղացաւ խապար տէր յախու. արտըսունք կաթաւ տղի յիրեսը վրէն։ Տղէն ակախաւ, տըսաւ վըշապ ակէն իկլի դիւս. տղէն էլ իլաւ. աղջկան ճիւ բռնից, յիտուց քեշուաւ. քենի վըշապ դիւս էկաւ, ան զաղջըկ յիտ քեշից. մինչիւ վըշապ ակէն դիւս էլաւ։

Տղէն թուր իտու ուր սրտըն, զինք իթալ վըշապու բիրան. վըշապ ադ մարդ կըլնը, թուր վըշապու բիրան կտռից. ինչ տար ուժ կէր ինի, վըշապ կլնից զմարդ, ուժէ ընկեաւ. թուղ իտու։ Մարդն իլաւ զվըշապ փըթից, ջիւր պըծաւ. գինաց։

Աղջըկն էլ ձեռ իտու արընըն, էզար ադա մարդիւ քեամակ.

Թուղ խառ, գինաց տուն։ Քեաղաք քեաղքուվ ադա էրնջիւր կը տանըն։

Աղջըկ էսաց.—Մը տանէք, կը զուլալվը. *չաւատացըն։*

Թագեաւուր էսաց.—Աղջը, դիւ քեաղաք տաւիրըս։

Էսաց.—Այ խէրըկ, վըշապ սպանիցըն.—Աղջըկ, վո՞ւվ սպանից։

Էսաց.—Մէկ մարդմ էր, չըմ ճանչնայ։

Ադա տղէն ականջ էրաւ. տըսաւ Սմուլ խաւքիրու ձագտիրու ձէն կգեայ. ըրըշից ԵԾarը *ծառ, տըսաւ Սմուլ խաւքիւ բիւն. տըսաւ վըշապմ փաթըթուի բիւլուր ծառըն. քիչ մնացի ձագտիր ուտը։*

Ան Սըմուր խաւք ձագտիր կը խանը, ամէն տարը վըշապ կուտը. Սմուր խաւք չը գըտի. ո՞ւվ կուտը։

Սմուր խաւք ուր թիւքիր տուը էրկգեական, արիւ ան քեաղքըն չառնը. լիւս ան քեաղքըն չառնը։

Տղէն էլ թուր քաշից, ադա վըշապ սպանից, փըթից. Բճաղալակմ *ըլից. տարաւ Սմուր խաւքիւ ձագտիրուն։*

Սմուր խաւք վիրուց տըսաւ. խուլ էլաւ, իրի, տը զարկէր, ծառէն բիրէր տակ, սպանէր։

Ձագտիր գեացըն յէռջիւ մօր.—Աստըծու սիրուն, դիւ բան չէնըս. ադըկ մի դիւշմաՑ *սպանը, մի խամար մըռ բիրը։*

—Այ մարդ, էսաց Սմուր խաւք, քիւ խնդըրք էրա՛, կատարըմ։

Էսաց.—Իմ խնդըրք էնը, ըզձը տանըս իմ խէրինական խուղ։

Էսաց.—Կիրթաս, կը բիրիս եօթ դմակ, եօթ տըկ ջիւր։

Սմուր խաւք վըրուց էկաւ տակ. արիւ առըց վար քեաղքըն, մւոցաւ. ջիւր չկէր, ջիւր էրի, լիւս չկէր, լիւս էրի։

Թագեաւուր իտու կանչէլ.—Վուվ գըշապ սպանը, վուվ ա ընցկուն էրաւ, լիւս առըց, գեայ, թագեաւուրութին կուզը, մալ *կուզը, ինչ կուզը, տըտամ։*

Աղջըկ էսաց.—Այ խէրըկ. իս կը նստիմ փեՑՑեrէն, *քեաղքը մարդ թը գեան,* փեՑՑեrի *տկով ընցնըն. իմ նշան կայ. իս կը ճանչնամ վշապ սպանող։*

Ադ մարդն էլ էկը, գեացը պառւու տուն էլմ։

Քեանի մարդ կէր մանչ քեաղքըն, էկըն. փաՑՑarի *տկով ընցան։*

Մարդ մանչ քեաղքըն չմնաց, թագեաւուր աղջկան էսաց.—Ան մարդ չճանչցմ՞ր։ Էսաց.—Ան մարդ չէկը։

—Այ աղջըկ, էսաց. ալ մարդ քեաղքըն մէջ չկայ։

Էսաց.—Դալալ իցկե մանչ քեաղքըն, տնիր կան գեայ։

Ընկեան մանչ քեաղքըն, կան էկըն. մարդ չտըսան առանց գեալ. գեացըն պառւու տուն. տըսան ղօՑախմ *կայ ան տե. էկըն, պատմիցըն.—Թագեաւուր ալըած՝ մնացը պառւու* կօՑախ։

Ըսաց.—Գնացէք, ան մարդ բիրէք։ Գնացըն, բիրին։

Աղջըկ ըռըշից, ըսաց.—Նա ի, իմ նշան կեօ վրէն։

Թագաւուր կանչից զան մարդ, տարաւ.—Վշապ դի՞ւ իս սպանի, ըսաց Թագաւուր։ Ըսաց.—Խա։

Ըսաց.—Սմուր խաւք ինչխը իլաւ, էկաւ տակ, իմ քաղաք լիւսցաւ։

Սմուր խաւքին ճաղըն էլ Թագաւուրը խամար էրաւ։

Թագաւուր ըսաց.—Այ վուրդը. աղջըկ դիւ իս ազատը քի խմայ. իմ քաղաք դիւ իս լիւսցըցի, մըկայ Թագաւուրութին կուզըս, տամ քի, վզիրութին կուզըս, տամ քի. ինչ կուզըս, տամ քի։

Ադ էլ ըսաց.—Քիւ աղջըկն էլ, Թագաւուրութին էլ, վզիրութին էլ պիլող կինայ քի. քինէ կուզըմ եօթ անծին ծիծկու դմակ, եօթ տըկ ջիւր. ալ յիւրիշ բանմ քինէ չըմ ուզը։

Թագաւուրըն էլ եօթ անծըն ծիծկու դմակ իըի, եօթ տըկ էլ ըի. մարդ էլաւ, առըց, գինաց մա Սմուր խաւք, ջիւր ու դմկնիր էդիր վար Սմուր խաւքին. ինքն էլ խիծաւ։

Սմուր խաւք թռաւ, բանցրացաւ։

Տղէն ըսաց.—Աստըծու սիրուն, էս ցրտու մեռայ։

Ըսաց.—Դիւճէն քինիմ կերևայ յէռջիւ քիւ աչիչ։

Ըսաց.—Քեանց ալտըմ չափ։

Քիչմ էլ բանցրացաւ, էրեդեական մօտացաւ։

Ըսաց.—Աստըծու սիրուն, իմ քեամակ իրիցաւ։

Ըսաց.—Դիւճէն քինիմ կերևայ յէռջիւ քիւ աչիչ։

Ըսաց.—Քեանց իզան գլխիւ բաշ։

Քիչմ էլ բանցրացաւ, ըսաց.—Աստըծու սիրուն, իս էրիցայ։

Ըսաց.—Ալ դիւճէն կերևայ յէռջիւ քիւ աչիչ։

Ըսաց.—Ալ բանըմ չըմ տըսնայ, մթնաւ յէռջիւ աչքիրուս։

Խաւք ղառցաւ, բիրանքս իվեր էկաւ։

Ըսաց.—Ինչ իս կուամ, դմակմ թալ իմ բիրան, տըկմ ջիւր լըց վրէն։

Քեանը անը կռաց, դմակմ իթալ, տըկմ ջիւր իլից։

Մնաց յիտքի դմակ. ձեռնէն պռծաւ, գինաց ծուվու մէջ։

Խաւք կռաց. ան էլ դանակ իթալ, ադա վուտաց մաանին կտռից, իթալ խաւքիւ բիրան։

Խաւք տարաւ, ծուվ ընցուց. իդի ցամաք, մարդիւ ըսաց.—Իլի՛, գինա։ Մարդ ըսաց.—Չէ, դիւ գինա. իս կերթամ։

Խաւք գըտի մաանըն կտռը։

Դիրմ էլ ըսաց.—Իլի, կայնը, գինա։

Մարդ կայնաւ. տ'էրթէր, չկարուղացաւ։

Խաւք ըսաց.—Ան յըտըն փըթիւծ ինչ դիւ տուըր ձը, ինչ էր։

Ըսաց.—Քինէ պախիմ Աստըծնուց ինչ պախիմ. յըմլա յըմլա։

Ըսաց.—Առ նա փառ, քըռը վար քիւ վուտաց, իլի, գինա։

Էն սաճար սաղացաւ. խաչք Թուաւ գինաց. մարդ իրի խուր քեաղաք գինաց, իլաւ վուսկիրչու տղայ։

Դառնանք վար կընկտիրուն, քեառսուն օր լըմացաւ։

Թագեաւուր էսաց.—Նկէ՛ք, պսակուընք։

Սիվ դիւու կնըկ էսաց. մինչիւ իմ վուսկը մուկ, վուսկը կատուն, մանչ վուսկը սըճուն պտուղըն, ձը խամար չըկըրք, իս չըմ պսակուըր։

Թագեաւուր կանչից. զուսկըրըչ տարաւ, էսաց.—Աս օրուընէ քինէ կուզըմ վուսկը կատուն, վուսկը մուկ, մանչ վուսկը սըճուն պըտուղըն ձը խմար. չըկըրիր, գքի կսպանիմ։

Վուսկըրըչ մաղտեն էրաւ. ձիուքիր էցքից ծուց, գինաց տուն։

Կնըկ էսաց.—Քի ինչ իլաւ։

—Թագեաւուր առաւուտուն իմ վըրդ տը զարկը, կըսը.—Ասօրվընէ կուզը վուսկը կատու, վուսկը մուկ, մանչ վուսկը սըճուն խաղան. իս ինմալ տը չընիմ։

Ադա տղէն էլ էսաց.—Վարպիտ, գինա բեռմ սպճդիւկ բի. մարդ մա ձի չդէք, իս առաւուտուն կը չընիմ, բիրիմ։

Տղէն առըց սպճտիւկ, չափիւճ մէլ առըց, մտաւ յօդեն. դդիւռ փակըց, նստաւ զսպճտիւկ կուտուըց. կիրաւ։

Կէս գշիր էր, կնըկ մարդիւն էսաց.—Իլի՛, գինա. նա կը չընի, չը չընի, առաւուտուն Թագեաւուր քիւ վըրդ տը կտրը։

Մարդ իլաւ, գինաց վար տուիւ դռան. ականջ իտու, չափիւճի ձէն կդեայ. ձեռ իտու դիւռ, փակ ը, դառցաւ գինաց։

Իրի, էսաց.—Կնըկ, չափիւճի ձէն անիւշ կդեայ։

Լիւսցաւ. իլաւ, իդի վար ուր գլխիւն, իրի իտու վուսկիրչուն. վուսկիրըչ առաւ, գինաց Թագեաւուըրըն, Թագեաւուր իտու սիվ դիւու կնկեան։

Սըւտակ դիւու կնըկ էսաց.—Սիվ դիւու կնկեան ըլնը, ձը չըլնը։

Ըսաց.—Մինչև վուսկը աղուէս, վուսկը լպստրակ, մանչ վուսկը սըճուն չխաղան, իս չըմ պսակուըր։

Ադ էլ տղէն սիվ դիւու տըսակ չընից, տարաւ Թագեաւուըրըն, Թագեաւուր իտու սըւտակ դիւու կնկեան։

Կարմիր դիւու կնըկ կըսը.—Անիւնց կըլնը՛ ձը չըլնը, վուսկը կաքաւ, վուսկը բազէն, մանչ վուսկը սըճուն չխաղան, չըմ պսակուըր։

Ադ էլ անիւնց տըսակ. առաւուտուն տղէն իդի վար գլխիւն, իբի. Վուսկիրըչ էսաց.—Տու., տանիմ։

Տղէն էսաց.—Ջէ. ան էրկուս որ դիւ տարըր, նա մէկն իս տը տանիմ. ճաշմ ուտիմ, գիամ։

Տղէն առըց, տարաւ կարմիր դիւու յօղէն, կնկիան աչ ինչ ընկիաւ տղէն, դէմ մի էլաւ, տղըն գլխօխ պադնից, ուրախացան վար մէմէկը։

Խապար *տարան Թագիաւուրըն,* վզըն, *աս տըսակ, աս տըսակ։*

*Թագիաւուր էսաց.—*Կ*անչըցէք գիայ ըս տիւ ան մարդ։*

Կ*անչից. Թագիաւուրըն աչ ինչ ընկիաւ գաղբէր, վուտքիր ախոււ ղուղաց։* Մ*ըկէլ աղբէր էլ էրի ան տիւ։*

Պզտըկ աղբէր էսաց.—Այ աղբէրքիր, դիւ խա ձը էրըք, իս խա ձի չըմ էնը, սիվ դիւու կնըկ մինծ աղբօր, սըւտակ դիւու կնըկ միջնիկ աղբօրս. ձի կընկտիք առէք, քիանըմ իմ ձէն կգիայ, գիացէք, դիւ գըտէք, ձի Աստուած։

Ադ էլ իլաւ, իօթ գըշիր զուր խարսնիս իդի. զկարմր դիւու կնըկ առըց, Թագիաւուրութին առըց, Նստաւ քախս։

Ան *անտի խասաւ* մրազ, *դիւ էլ աս տիւ խասնըք ձի* մրազ։

8

Ֆ Ա Յ Ի Զ

Մոկաց Գինենկանց գիւղի բարբառով*

Մէկ մարդ կերթէր արտը, բռնճպրութեն կէնըր, կընըկ խաց կը տանէր, կընըկ ինչ կը խասնէր արտ, դկնըկ կը պառկացըցէր քեամկը վերէն, մատնիք տը դնէր ճակտը վերէն, նեռանեղ զարնէր, մատնըքը օղէնի ընցըցէր, կըսէր.—Կնը՛կ, էլ մարդ աշխարհի վերէն կտըրճ կա՞յ, թէ իս։

Տարիմ՝ թէ էրկու վերէն ընցաւ, աղջկան մէր իրի աղջկան մօտ, էսաց.—Աղջի՛, դիւ վրե ընցկնեմ՝ մոնացիր իս։

Ախչիկ մօր էսաց.—Ի՞նչիս տը չմոնանամ, խաց կը տանիմ արտ իս տը պառկըմ, իմ իրիկ մատնըքը ակ դնէ վար իմ ճակտըն, նեռ անեղ դը զարկէ, մատնըքը օղեն ընցըցէ չուր ադա նեռ ընցընէ իմ խուգըն կըլնը քեանց կուրկմ, խառ։ Կըսը.—«Աշխըրքի վրէն կըտըրճ մարդ կա՞յ թէ իս մնակ»։

Մէր էսաց.—Վաղ խաց կը տանըս, ինչ ան կըսը· «աշխըրքը...» դիւ ասա.—Սուլթան Մուրատ քեանց քի կտըրճ ի վար աշխըրքըն։

Առաւուտուն կնըկ խաց առըց, տարաւ իրիկ էմ զկնըկ պառկացըցուց վար քեամկին, մատնըքը ակ իդի վար ճակտըն. նեռ անեղ իզար . . . գինաց, էսաց.—Կնըկ, մարդ աշխըրքի վրէն կտըրճ կա՞յ թէ իս մնակ։ Կնըկ էսաց.—Սուլթան Մուրատ վար աշխըրքին քեանց քի կտըրճ ի։

Մարդ էսաց.—Խաց ըզը խարամ կէնայ, չուրը Սուլթան Մուրատը յույութուն չառնըմ, տըսնամ ի՞նչ մարդ ի։

Կնըկ դարձաւ իրի տուն, Ֆայիզն էլ էլաւ, ընկեաւ ճամբախ. գինաց։ Գինաց, թա օրմ, թա էրկու օր, թա քսան օր գինաց։

---

* Պատմած է Ջասիկ Խեպոյեան։

Օրին մէկ կերթայ Սուլթան Մուրատը կօճախ ըլնը։
Ցիրըկուն խաց կը դնըն ան տեր, ղայֆէ կը դնըն։
Ֆայիզ խաց կուտը՝ ղայֆէն ձեռ կը բռնը օր խմը։
Սուլթան Մուրատ կըսը.—Դիւ դմ՛ւր տ՛էրթաս։

Ադ էլ զՍուլթան Մուրատ չճանչնայ. ՖՃՃաճ ձեռ, կըսը.—Իս Սուլթան Մուրատը անուն լսիր իմ, տ՛էրթամ, կան գեամ, տսնամ, ինչ մարդ ի։

Սուլթան Մուրատ էսաց.—Գուրծ չունըս խիտ։

Ադ էլ էսաց.—Չէ՛, պէտք ի իս էրթամ, տըսնամ։

Սուլթան Մուրատ էսաց.—Իս Սուլթան Մուրատնըմ տըսի, իս անիւ կասեն լսիրըմ, քիւ ղայֆէն խմը, իս անիւ կասեն քի խամար էնիմ։

Էսաց.—Մինչիւ դիւ անիւ կասեն ըզի խամար չէնիս. իս քիւ ղայֆէն չըմ խմը։

Էսաց.—Հա՛ եղբար, ղայֆէն խմը։ Էսաց.—Անիւ կասեն չէնիս, խարամ ըլնը՛ թէ քիւ ղայֆէն խըմիմ։

Էսաց.—Ֆայի՛զ, քիւ ՖՃՃաճ չթափիս։

Էսաց.—Իս չաքաթմ սայիսմ կը բռնէր, ան կպանէր. մէկն էլ կը բռնէր։ Ինչ սայիս կը բռնէր, բիրէր, կըսէր. «Դիւ իմ ձիան աղէկ չպախիս, զքի կպանիմ։» Քեանի սայիս բռնիցը, մէկ չկըցան ձիանք աղէկ պախին։ Օրէն մէկ գինացը պազար, մէկ մարդմ տիսայ, բըըցը. «չըս ըլնը սայիս», էդա մարդն էլ էսաց. «իս սայիսութենի խոև կան կդեամ»։ Իսն էլ ան մարդ առը, տարը տուն, ասըցը. «նա իմ գեարըն, նա էլ իմ խուտ, նա էլ իմ յարդ, իմ ձիանք լաւ պախըցըր, պախըցըր. օր չպախըցըր, ինչ կը թմը ութ օր, զքի կպանըմ։ Ադա մարդն էլ յեմ էտուր ձիանքտիրուն, Ջրից գձիանք, մտածից. «բանմ կայ ադա տեղ, էսաց. անիւ խամար ձիանք կը մոնանան. թէ չէ գեարը տան, խո՛ւտ տան, յարդ տան, ընչո՛ւ խամար մոնանան։ Իս ասիւր մինչիւ լուս տը կէնամ հաճեար, ճօպա պախիմ»։ Սայիս մնաց աճեար մինչև կէս գշիր։

«Ֆայի՛զ, ՖՃՃաճ չթափիս»։

—Կէս գշիրըն տըսաւ մէկ փակըխի դիւռ էբաց, զսիվ ձըն արձըկից, զթամք էզար քեամկը վերէն, գձըն քեշըց դիւս, խիծաւ։

Սայիսն էլ տսաւ իմ կնըկս ի, էն էլ զբէօզ ձըն խիծաւ, իտու իտիւ կնկեան։

«Ֆայի՛զ, քիւ ՑՃՃաճ չթափըս»։

Գեացըն մանչ դաշտըն, սայիսն ի կնկեան չխասնը, զատը կը մնայ։ Մաղարեմ կէր մանչ դաշտըն, գձըն կապըց մաղարը բիրան. fեաճուճայ ամսուն (յուվար). մտաւ նիրս. սայիսճ էլ տըսաւ էրկու գլխէն դև ադա մաղարեն վեր։ Կնըկ ինչ խասաւ ան տեր, դև էլաւ,

կանգնաւ. էսաց.—«Բեռուսուն նա փէտով կը զանըմ քեօ օռուն, դիւ շուտ չէկըր»։ Իմ կնըկ էսաց. «Իս ինչխ տը գէր, Սուլթան Մուրատ շուտ չքնաւ. իս քնոյ ուլնիք Թալէր անիւ ականջ, գէր»։ Կնըկ էսաց, «դիւ յերդուըցիր իս, քեռուսուն փէտ տը զանիս ըզի. իմ, էրկու դարպ տոււ, նա ցըխաւիլուվ զար ձը, կըլնը քեռուսուն դարպ»։ Դեն էլ ելաւ, զկնկեան վուռ խոռւ վի, էրկու դաճ կույաթըթախ ցխաւիլուվ իզար վար վուռուն, էսաց. «դիւ անդամ մէլ անադեան չդեռս»: Ադա կնկեան մօտէն լաճմ, աղջիկմ դիւուց ելաւ։ Սայխճ էլ դարձաւ, իրէ տուն։ Իրի իմ ակնջէն քնոյ ուլնիք էլան. զիս քնուց էլան վի, էսաց.—«Իլի, էրթանք փակեախ»։

Ֆայլիզ, քիւ Ֆճճաճ չթափիս։

Սայխս ըզը տարաւ փակեախ, էսաց.—Սուլթան Մուրատ, յինր ի քիւ սիվ ձըն։

Իսն էլ ասըցը.—Դինւ իս աս տեւ պարկը. իս զանիմ յիւր ի։

Էսաց.—Քիւ սիվ ձըն քիւ կնըկ քեշից դիւս, խիծաւ, գինաց։

Դինւր գինաց։ Էսաց.—Գինաց մատ էրկու զլխէն դե։

Էսաց.—Անիկ ինչ սիվ ձըն խիծաւ, իսն էլ բեօզ ձըն խիծայ. յիտիւ գեացը. էսաց ինչ օր տըսած էր . . . ։

—Դիւ ճամբախ գոխս, էրթաս ան տեւ։

Էսաց.—Քիւ ձիանք սովրուկին. կերթան, մաղարի դիւռ կը կանգնըն։

Ֆայխս, մինքն էլ տեսանք, դե, կնըկ գըրկ ու ծուց իլած՝ պառկած ա տե, լաճ աղջիկ մէլ իլի դիւուց, ըսըցը.—Դարձի, էրթանք։

Դարձան, էկն տուն, սայխս էսաց.—Տըսար, ինչ կանտալ մեղք իս էրի, սպանի զմալդիկ։

Իսն էլ ըսըցը.—Բան չկայ։

Գինացի տուն, քնոյ ուլնիք իդի ականջս, պարկայ։

Լիւսն էր, կնըկ իրի, ձըն կապըց փակեախ ու գինաց տուն. քնոյ ուլնիք իմ ակնջէն էլան, էսաց.—Սուլթան Մուրատ, յիլի վի, աս օր քինանք, չակախանք։

—Թը լիւսնայ, իմ ճաճրատեղ մօտխաս ա. մեօլեօվ (յուշիկ-յուշիկ) կերթամ։

Իսն էլ էլայ վի, զղայՖէՆ խմը, խաց կիրայ ու զիմ խուրճ թլի վար ձիուն. զիմ Թուր կապըցը գձըն խիծայ տղրու գինացի մաղարի դռան վերէն կայնայ, ձըն կապըցը մաղարը դիւռ. զԹուր քեշլիցի, բռնիցի ձեռ, մտայ մաղարէն։

Ֆայլզ զքիւ Ֆճճաճ չթափիս (Հալա կայՖէՆ բռնըր էր ձեռ).

Զդիվ սպանիցը-զդիւռ զլեօխ կտռիցը զլաճու զլեօխ, զաղջկան էլ կտռիցը, ըբիր զլաճու զլեօխ, աղջկանն էլ իԹալ ճամ,

դիւուն իթալ, ճամ, դձըն խլծայ, իրի դիւռ կայնայ.—Կնը՛կ, էրի՛, Ճէճիր մռ, տար տուն։

—Աս օր ի՞նչ չուտ Ճէճիրից էկըր.

—Աս օր իմ Ճէճիրատեղ մօտխաս էր։

Կնըկ գլխուրճ առըց, տարաւ տուն. գլխուրճը բիրան բացից, ճսաց.—Նէճիր խանիմ, տսնամ։

Տըսաւ ճամ լաճու, ճամ աղջկան, ճամ դիւու գլոխ. խասաւ, գմրազը վարուց առըց. դարպմ իզար վար իմ քեամկըն, ճսաց.—Մրազը վարուց, քընէ կուզըմ Սուլթան Մուրատ եօթ տարի ընը ջուրը։ Ֆայիզ, քիւ Ֆնճան չթափիս։

Եօթ տարը էլայ ջուրը, փէտ կըիցը։

Եօթ տարը ինչ թմըմաւ. մրազը վարուց էզար վար քեամկըս ճսաց.—Մրազը վարուց. քինէ կուզըմ եօթ տարը էլ Սուլթան Մուրատ ընը չուն։

Եօթ տարը էլայ չուն, ընկեայ փուղանքտիր, կան էկը, օրէ մէկ գինայի քինուջս տուն, դռան յէւջիւ կայնայ. քինըս, ուր իրիկ խաց կուտէն. իրիկ իրիշից գլխ, ճսաց.—Ըսիկ, էս չան աչքիր կը նմանը Սուլթան Մուրատը յաչքիր։

Ըսաց.—Դու Սուլթան Մուրատ չի՞ս։ Իսն էլ գլխով էրը։

Կնըկ ճսաց.—Աոըկ իմ քիւրոջ բանիրն ի։

Իրիկ ճսաց.—Ինչխ տըլնը, էլմ էնինք խան։

Կնըկ ճսաց.—Պըըճձմ ջիւր կը տաքցնիք. իս կէրթամ, խաւքինըն կը խադնիմ, գմրազի վարուց կը բռնիմ իմ կտուց, կը փախնիմ, կգեամ. իմ քիւրն էլ իմ յիտիւէն կգեայ, ինչ կգեայ ինի վար ձի. իս գմրազը վարուց կը թլիմ տակ, դիւ գմրազը վարուց կը բռնըս քիւ ձեռ, կը զանիս Սուլթան Մրատը քեամկըն, կըսըս. «եմ մրազը վարուց, Սուլթան Մուրատ էլմ էնիս յառաջի Սուլթան Մուրատ»։ Միք վիրուց կըւըընք կլւգեանք տակ, ձի կը մօտանանք. դիւ կը զանիքզանըկ կէցգիք. զանըկ կէցգիք մանչ պղնձը ջրուն, կը խաշըք, կազատուըք մօտէն։

Կնըկ էլաւ, խաւքինըն խագեաւ, թռաւ, գինաց քիւրոջ տուն, խատ քիւրուջ խուսաւ. գինաց դէն, էրի դէն. քիւր մէկն էլ տըսաւ էզար, մրազը վարուց առըց, գինաց։ Քիւրն էլ զիւր խաւքինին խագեաւ, թռաւ. մինչիւ քիւր խասաւ, էնի վարուց թլից տակ. քիւրուջ իրիկ գմրազը վարուց առըց, ճսաց.—Եա մրազը վարուց. Սուլթան Մուրատ էլմ էնիս յառաջի Սուլթան Մուրատ. դարպմ իզար։

Իսն էլ էլայ յառաջի Սուլթան Մուրատ։

Էրկու քիւր վիրուց կռուան, էկըն տակ։

Իսն էլ ըսըցը.—Զանինք ըցգինք մանչ պղնձի ջրըն։

Քինուջ իրիկ էսաց.—Էրկուսն էլ ղանինք, էցգինք մանչ պղըն- ձին. չէ՛, անի էլ անիւ քիւրն ի. քիւ կնըկ ինչխ էրաց խա քի. անի էլ սկուն տինէ խա ձը։

Ինչ մատացան, ղարկըն, էրկուսն էլ էցքին մանչ պղնձը ջըուն, խաշան։

—Սուլթան Մուրատ, էսաց. դիւ կը կարգուխ քիւ ֆէյֆն ի, չկարգուխ քիւ ֆէյֆն ի։

—Ան աղջըկ ինչ խաճը կաթ ծծիրի, խս անիւ աղջըկ չառնըմ։

Իսն ամին օր կերթէր Ճէճիր, օրէն մէկ ճէճիրից իկի, մանչ ճամըխիւն տըսայ բալիւլմ դըած, ձիուց իջայ տակ. ղըալուլ բացի. տըսայ աղջըկ նուր իլի. փաթուցած՝ դըած վար ճամըխուն։

—Ֆայիզ. զքիւ Ֆճճաճ չթափը։

Էդ տեղ զաղջըկ փաթըթիցը, ըսըցը.—Տանըմ, իմ խէրու խա- մար պախիմ։

Գինացի Ճէճիր, խազալմ բռնիցը. կթիցը, խոռւ աղջկե, կիրաւ. մինչիւ մեծացաւ։ Աղջըկ ինչ մեծացաւ, պսակիցը վար ձը։ Լաճ, աղ- ջըկ մէլ իլաւ։ Մէկ ժամանակմ վերէն ընցաւ, լաճ աղջըկն էլ մեծա- ցան. լսն էլ կառնէր զիմ կնըկ, զլաճ, աղջիկ կերթէր Ճէճիր, անց- կուն զմէմէկ կուզընք, աւուրմ ճամբախ խապար տալէն կերթէնք, չընք ակըխը վար մէմէկը։

Օրէ մէկ էլանք, ընկեանք ճամբախ գինացընք, անցկուն գինացընք, էրկու աւուր ճամբախ հեռացանք, գըշիրը էլ չկարցան գէնք. մնացընք դիւս, գեացընք, մտանք յէրմ ինի՛ տըսանք ինչ Աստուած ստեղծի կե- րակուլ էդա յէրի մէջ կայ։

Ըսըցը.—Իս զըտիմ, էսս յէր անտէր չի. էրթանք, պաղկուինք էնա ֆիւճճ, ասոնց տէր գեան, վար մի չակըխըն, ակըխին զմի կսպանըն. առաւուտուն չուտ էրթանք։

Գեացընք, մտանք ան ֆիւճճ մինչիւ յըրկուն, յըրիկուն տըսանք քեառսուն խատ դիվ ին յէդա յէրը տակ. Նստան, զուրինց խաց, կիրակուլ դընըն, պատրաստըն, կիրան, խման։

Գնըն ինչ կը լցըն, կտան յըրարու, կըսըն.—Սուլթան Մուրատը կնկեան կինացը, քու խաճը կաթ չկէրի, մեծացը։

Դիըմ, էրկու, անցկուն ասըցըն. Սուլթան Մուրատը կնըկ ակը- խաւ, էսաց.—Մարդէ՛կ, ըձի խազմ կիւգեայ։

Իսն էլ—Աստուծոյ սիրուն ընը, հաչ կաց դիւ խազաս, անիւնք տը ակըխըն. ալ մի ազատում չկայ։

Քիչ էլ մնաց, անիւնք ամին տըըն.—«Սուլթան Մուրատը կըն- կեայ կինացը»։

Կնըկ էսաց.—Մարդէկ. էլ ըղի չըմ կէրի զաւքը, իմ խազ կգեայ։

—Գլխօխ մոռու իմ ծուց ինի. գեաղտիւկ խաղմ, չակախըն։

Կնըկն էլ քեանը կէլցաւ ճղաց, դեփըն էլ ակախան, դեացըն առըն բիրըն, առըն.—Մինք ցիշիկուվ քիւ կիտիւ կան գիդէնք, գիւ դշիրուվ ընկեար մի ձեռ։

Ըղը զճճլով կապըցըն սուն վի, ճրագ դըըն վար գլխիւս, կնըկ առըն մէջքիր, կէ՟ գըշիրըն միծ դև առըց զկնըկ, պառկաւ ան տեղ։

Քիչմ մնաց, աղջըկ ակախաւ. էլաւ ջիւր առըց, խմաւ. իրի տը պառկէր,—Աստե իմ ձեռքիր քիչմ թուլցըցմու, իս մեռայ, ըսըցը։

Աղջըկ էսայ,—Դէ, կը մնջիս, չէ՛ իմ ջուչ խօր կըսիմ, ընը քիւ ջուչ փըդիւճ քիւ ականջ էնը։

—Աղջի, սիւթ կըսըմ. գնմ, պառկը։

Քիչմ մնաց, տըսայ աղէն գինաց դիւս, իրի, ըսըցը.—Այ որդի, քիչմ իմ ձեռքիր թուլցըցու։ Էսաց.—Ինչխ թուլցըցիմ։

—Գինմ, թուր կայ տուն գլխու տակ, մռ, բի։

Թուր առըց, իրի. աղէն պզտիկ ի, թուր միծ ի, չկէրի կըտռը։ Քսից-քսից, կտռըց կապիր։ Ըսը.—Որդի, գինմ պառկէ։

Իսն էլ զճճըլ իմ մօտէն քեակիցը, թուր առը գինացը, տաս դիւու գլխօխ կտռիցը, իրի, կայնայ սան առաջ. ճրագ դըը վար իմ գլխուն։

Դև էսաց.—Սուլթան Մուրատ, ինչ էրազըս տըսի։—Էրազ դիւ իս տըսի, Սուլթան Մուրատը կնկեան ծուց դիւ իս քինի, քու խըրճի կալթ չկէրի, իս էրազմ տըսայ. քեառասուն ճնճուղ տեղմ էն բաշօղ (բազէն) իգար վըրէն, տաս սպանից, մնաց եռսուն։

Դև էսաց.—Ան աչքով դիւ լուս չըս տըսնայ, ան գուըծ ինչ դիւ կան կգեաս, չատ հեռու ի։

Դև քինաւ, զթուր առը, տասը վըըն էլ, կտռիցը, քսան սպանիցը, մնաց քիսան. էլմի իմ տեղ կանգնայ, ճրագ դըը վար իմ գլխուն։

Դև էլմ' ակախաւ. էլաւ, նստաւ, էսաց.—Սուլթան . . . աս օր գըշիր ինչ էրազխս տըսի։

—Իս էրազ չըմ տըսի, էրազ դիւ . . . իս էրազմ տըսի, քեառասուն ճնճուղ տեղմ ին, բաշող իգար վըրէն, քիսան սպանից, մնացըն քիսան։ Էսաց.—Ան ինչ դիւ կըսըս, քիւ զաչքուվ չըս տըսնաս։

Գլխօխ էդի գետըն, էլմ քինաւ. իսն էլ թուրն առըցը, գինացը տասնի վըղն էլ կտռըցը, մնաց տաս։

Դև էլաւ. էլմ նստաւ, էսայ.— . . .։ Իսն էլ ըսըցը.—Իս էրազմ տըսայ, քեառասուն...

Դև էսաց.—Ըռահճաք կմ՛ց, դիւ էդա բան չըս տըսնայ։

Դև էլմ, պառկաւ, քինաւ։

. . . թուր առըցը, գինացը, ինն դև սպանիցը. մնաց միծ դև։

Դև էլաւ, Նստաւ, էսաց.— . . .

Իսն էլ ըսըցը.—Զմենն էլ սպանիր իմ, մնացիր իս դիւ մնակ. ինչ կէնիս, էրէ։

Դև կանգնաւ ուր տեղէն, Դևն ու Իսն էլ առընք յէրուր, կըռըւ. դև ինչ կը կռւի, կնըկ, կըսը,—Դև, դէ՜ դև, սպանէ, իս ժխո քիւն իմ, ինչ իս զդև կը կռւէր, կընըկ կըսը.—Դէ՛, Սուլթան Մուրատ, դէ, սպանէ. ժխո իս քիւն իմ։

Ֆայիզ, զքիւ Ֆենան չթափիս։

Զարկը զդև սպանիցը, իլայ տղէն առըցը, յէրէն իլայ դիւս, ջաղչի քհար տուր յէռջիւ դռան. Կնըկ, աղջըկ մնացըն յէրու մէջ. զտղէն առըցը, գինացը։

Մէկ ժամանակմ վերէն ընցաւ.—Ա՛յ որդի՛, էլի՛, էրթանք, տըսնանք, աղա կնըկ, աղա աղջըկ ինչ կէնին։ Գևացընք յէրը յէռջիւ, քհարը ծակէն իրիչիցը, տըսայ կնըկ լեօխր կէրի, զաղջըկն էլ կէրի։

Աչ ընկեաւ յիս, էսաց.—Սուլթան Մուրատ, Աստուծու սիրուն, քիւ էրես բի. անա քհարը ծակուն բամաշա ինիմ՝ նիւր թուղ մեռնիմ։

Իսն էլ էրիս տարայ յէռջիւ քհարը ծակուն. ան էլ ձեռ իթալ, զերեսի կղանց կտըրց, իթալ բերան։

Իսն էլ կնըկ թուղի, զլաճ առըցը, իկի քհաղաք. քօպա էրը, ալ չպտակուայ։ Ֆայի՜զ, նա Սուլթան Մուրատը կասեն քի խամար, որ կասին էլ չըս խաւատար, Սուլթան Մուրատ իս իմ։

Ինչ կասեն բմըմից, Ֆայիզն էլ Ֆենան ձեռ մեռաւ։

9

ՈՐՆ Է ՊՈՌՆԿՈՐԴԻՆ

Մոկաց բարբառով *

Մէկ մարդիւն մէկ կնըկ կէր, մէկ էլ խըտամ էր յիւր կընկան յառէջ. ադ մարդ խառուաւ զխըտամ, էրկու լաճ իրան կընկնից յէլան. լաճ մէլ խըտամուչ յէլաւ։ Էն ժամանակ ինչ՝ խէր տը մեռնէր, էսաց.—Տղէք, մէկդ ձինէ պեճպաճր էք։

Խէր մեռաւ, տղէքն էլ զխօր մալ տը կիսին վար ուրինց։

* Պատմած է Ջատիկ Խեպոյեան:

Էդ մէծ աղբէր էսաց.—Մի խէր ինչ մեռաւ, վասիաթ իտու, էսաց, «մէկ ձինէ պէճպահը էք»։ Միջնեկ աղբէր էսաց.—Ի՞նչխ էնինք։

Էսաց.—Էրթանք կազու մօտ, մի ճարիաք էնը։

Էլան, գեացըն ճամբխը մէջ՝ տիսան կեօ, կնկեան դաւամ գեացի, էն մէկ էսաց.—Կեօ, կնկեան դաւս ի, աղ կնըկ գեացը ըռիկ։ Մէկէլ էսաց.—Ան կ՞նըկ գեացէր ըռըկ, ամա ան կնըկ տըղեօվ ի։ Մէծ աղբէր էսաց.—Կեօ, դաւուս՛ դաւս էլ գեացը։ Մէկէլ էսաց.—Դավէճ կուր իլի։ Մէկէլ էսաց.—Դավէն բիռնով իլի։

Տիսան կնկայ տէրն էլ, դավու տէրն էլ էկան։

Կնկայ տէր էսաց.—Դու կնըկմ չը՞ք տըսի։

Էսաց.—Քու կնըկ չի՞ գեացէր ըռըկ։

Էսաց.—Իմ կնըկ գեացէր ըռըկ։

Միջնեկ էսաց.—Քու կնըկ տղեօվ չէր։ Էսաց.—Խա, տղեօվ էր։

Դավաճին էսաց.—Դեվամ չըք տըսի։ Էսաց.—Քու դեվաճ կուր չի՞։

Էսաց.—Խա՛, իմ դեվան կուր էր։

Մէծ աղբէր էսաց.—Քու դեվան բարձուկ չէ՞ր։—Խա՛, բարձուկ էր։

—Քու բեռ ճամը (թայ) մեղր չէ՞, մէկ քացախ։ Էսաց.—Խա։

Էսաց.—Պա իմ դեվան դ՞ւր գինաց։

—Մինք չինք գըտի դուր գնացը. գինա՛, կան էրի, գնտի։

Դավու տէր.—Չէ՛, էսաց, դու իմ դավեճ տը տէ՛ք։

Կնկեան տէրն էլ կըսը.—Իմ կնըկ տեսեր էք, տը տէ՛ք։

Էլաւ անունց բաքրօուն։ Կնկեան տէր, դավու տէր բըըցըն.

—Էրթանք գեազու մօտ. ճարիաք էնինք։ Գեացըն գեազու մօտ։

Կնկեան տէր էսաց.—Էսա իրեք մարդ իմ կնըկ տեսած՝ պախած՝ չըն իտայ, մի էրկըվի ճարիաք, նա իրեք մարդուն էրմ։

Գեազին ադա իրեք մարդուն խարցընից, էսաց.—Դու աս մարդու կընըկ տըսիր էք։—Մինք զկնըկ չընք տըսի, ըսըցըն։

Միջնեկ աղբէր էսաց.—Անիւ կնըկ գեացը ըռըկ։

Գեազին էդա մարդուն էսաց.—Աղուրթ, քու կնըկ գեացը ըռըկ։

Էսաց.—Խա՛, իմ կնըկ գեացը ըռըկ։

Գեազին էդա մարդուն խարցընից.—Դու ի՞նչ գտիս գեացը ըռըկ, օր դու չըս տըսի։ Էսաց.—Ան կնըկ կեավմ գեացէր իր, մէկ դարձիր իր, իրիշիր իր յիտուց։

Ջիւջ աղբէր էսաց.—Անիւ կնըկ տղեօվ իլի՝

—Դու չըս տեսի, ի՞նչ գիտցար անիւ կնըկ տղեօվ իլի.

Էսաց.—Անիւ կնըկ կեավմ գեացէր իր, մէկ դարձիր իր, իս անիւ խամար գիտցայ տղեօվ ի։

Դավանուն էսաց.—Դու ինչ կուզիս.—Պա՛, էսաց, իմ դավէն պախած չը՛ն։ Պզտի աղբէր էսաց.—Մինք խա ճամբխըն գիդէնք. դաւում դաւս տըսանք։ Միջնիկ էսաց.—Անիւ դավեն մէկ աչքէն էլի։

—Դու չըս տեսի. ինչ գըտիս մէկ աչքէն էլի. էսաց.—Մէկ կնա-րն.ն էրծացիր էր, էսաց։

Գեազին դավու տիրուջ խալցուց.—Աղուրթ քու դավէն կո՞ւր ի։

Էսաց.—Խա՛, իմ դավէն մէկ աչքէն էր։

Զիւչ աղբօր էսաց.—Դու ինչխ իս տեսիր։

Էսաց.—Սիվ դավէն բարձուկ ի, բեռն էլ քայմ ջացախ էլի, մէկ մեղր։

Էսաց.—Դու չըս տըսի, ինչխ գըտիս մէկ քացախ էլի, մէկ մեղր։

Էսաց.—Ան նամ ինչ մեղր էր, ճամբխը վըէն ճանճ էն թա-ւած, մէկէլ նամ քացախ էր, ճանճ նու չըր թառը։

Գեազին էսաց.—Աղո՛ւրթ, քու բեռ մէկ նամ քացա՛խ, մէկ մե՞ղր էր։

Էսաց.—Խա՛, նամմ քեացախ էր, մէկ մեղր։

Գեազին էսաց.—Ասունք իմաստուն մարդ ին, խապար չունին ձի բանեըուց, դու գինա՛, քու կնկեան կան էրի, ան էլ էրթայ յիւր դավուն։

Գեազին աղա իրեք աղբօր էսաց.—Դու ինչ կաչէք։

Ասըցըն.—Մինքն էլ ցարբեաք կուզընք։

Գեազըն էսաց.—Անօթի ինք, խաց բիըիմ, տուտընք, նուր ձի ցարխյաք կինիմ։ Բիըին տու խաց ու կաթ։

Պզտի աղբէր էսաց.—Էսա խացից մեռլի խուտ կուգեայ։

Միջնիկ էսաց.—Էսա կաթից էլ շան խուտ կուգեայ։

Զիւչ էսաց.—Գեազու կաթից շան խուտ կուգեայ, գեազու խացից մեռլի խուտ կուգեայ, գեազին էլ խայի մօտէն ի։

Գեազին որ լըից, կանչից դլխովիւ, իբի, զուր մէըն էլ իբի, էսաց.—Աղուրթ կըսիք, ըսէք. չըսիք, ձի իրէքն էլ կսպանիմ։

Մաճկալն էսաց.—Նա խաց որ մի արտը խացն ը, մանծալխ-քիըու կշտան արտը խացն ը. քիչմ մանծալխ փուըիր ինք, տուիր ինք խատ արտըն։

Գեազըն էսաց.—Ան մարդ իմաստուն ի, սուտ չըսը։

Էսաց.—Խովլիւ, նա կաթ ինչ մաքիւ կաթ ի։

—Ան մաքիւ գեառ ինչ իլաւ, ունիւ մէր խատաւ, իս թալը շան տուկ ծծից միծացաւ։ Էսաց.—Ան էլ աղուրթ ի։

Էսաց յիւր մօր.—Մարէ, տողրուն կըսըս. չըսըս՝ քի կսպանիմ։

Էսաց.—Քինէ պախիմ, Աստուծուց ինչխ պախիմ. օրէն մէկ

խէմ էրի մա ձի. ան խայի մօտէն էլար դիւ։ Ըսաց.—Ըս իրեք մարդն լէ իմաստուն ին։

Մին աղբէր էսաց.—Գեազի, մի իրեք աղբօր ծառիաքը էրայ. մի խէր ինչ մնաւ, վասիաթ էրաւ,—Ձի իրեք աղբօր մէկ պեճպահր ի։ Գեազին էսաց.—Իս ձի ծառիաք չիմ կէրի էնը։ Գեազու աղջըկ էսաց.—Ճամբխը մա ձի։ Ճամբխից։ Աղջիկ էսաց,—Ժամանակով մարդմ աչք դրիր էր վրր աղջկամ, ըսըց. «գեաս վար իմ ձեռաց.» աղջըկ չգնաց։ Աղջըկ մէկ օր խոյ կը տանը սար, ադ մարդ տեսաւ աղջըկ, բռնից, էսաց.—Ասուր ճար չկեայ, խատ իմ ձեռաց տը գեաս։ Ըսաց.—Աստըծու սիրուն ըլնը, դիւ ըզը ջաւըր իս, ան օր ինչ ըզի տը տանըն պսակ, իս դչիր գեամ քիւ կուշտ։ Ադ մարդն էլ ադ աղջըկ թուղ իտու։ Ադ աղջըկ տարան իրկան. աղջըկ չուրիր խանից, ախ էրաւ։ Ըսաց մարդ.—Ըզը չը խաւնըս։ Ըսաց.—Իս գեացը սար մի մարդիրուն խաց տանը. մէկ մարդ ըզը բռնից, խուաք իմ տուիր . . . իս ան յապով ախ կէնիմ։ Մարդ յէլաւ, յիւր չիւրիր խագեաւ, գիւր կնըկ առըց, տարաւ ան մարդիւ տուն. թաս-լիմ էրաւ, դարձաւ, իրի։ Ադա մարդ տեսաւ խալըսմ, քողք վար գլխուն, էսաց,—Դու վուվն իս։

Ըսաց.—Իս ան աղջիկն իմ. դիւ Ֆլան սարը մէջ ըզը բռաստ էկար, իս ան օր ուխտ էրը առաջի դըշիր քիւ կուշտ պառկըմ, իս իմ իրկան Ճաղլ էրի, իմ իրիկ առըց, ըզի բիրից վար դռան, ինք դարձաւ։ Էդ մարդն էլ էսաց.—Դիւ իմ մէրն իս, իմ քիւր։ Ադ մարդ, ադ աղջըկ առաւ, բիրից ուր իրկայ դռան, գինաց։

Ադ գեազու աղջըկ, ադա իրեք աղբօր էսաց.—Դիւ ըլէք, ինչ տ'էնէք ադա աղջկան։ Ադա պզտիկ աղբէր էսաց.—Իս ըլլեր, խատ աղջկա տը պղ . . : Միջնեկ աղբէրն էսաց.—Ան իրկան աղէկու-թին էր, առըց, իրի։

Ձիւջ աղբէր էսաց.—Աղէկութին ան մարդիւն ի, օր սարը մէջ բռաստ էկաւ, ջաւըրըց. ինչ էկաւ մատ, յիտ, դարձուց, էսաց. «իմ մէրն իս, իմ քիւր»։

Աղջիկ էսաց պզտիկ աղբօր.—Պեպահր դիւ իս։

Պզտի աղբէր պեպահր էրին, մալ էրկու աղբօր վերէն կի-տըցըն։

IO

ՄԱՐԴ ԵՒ ՕՁ

Մոկաց բարբառով *

Թագեաւուր էրազմ' տըսաւ, կանչից ուր վուզիր իրի, էսաց.

—Ես էրազմ եմ տըսի, իմ էրզի պատասխան տո՛ւր։

—Քո էրազ ի՞նչ ի, որ իս պատասխան տամ։

Ձըմ գըտի ըսաց. դու պատասխան չտաս, մարդմ տը բիրիս, պատասխան տայ։

Վուզիր չատ կան իրի, չատ մարդ էլ իբի, չի կհարցէն պատասխան տէն. վուզիր մնաց չուար։

Մէկ օր գեղին մէկ կնիկ, էսաց ուր մարդուն։

—Մարդի՛, Թագեաւուր էրազմ տըսիր. գնա՛, պատասխան տո՛ւր, փարա բէ՛, մի ապրուստ էնինք։

—Կնըկ, չըմ գըտի, ինչ պատասխան տամ։

—Գեղական կերթան, դու էլ խիտքիր գինա։

Մարդ էլաւ, չուար չուար գինաց։

Մէկ քար բռաց էկաւ, մարդ նեղաքիր էր, նստաւ, անտե քիչ մը բռաճաքաւ։ Ձէն էլաւ քարից։ Իրիչկից, օձ մը տըսաւ։

—Մարդ, դու դի՞ւր (ուր) գեաս (կգնաս)։

—Վալա, Թագեաւուր էրազ մը տըսի, էրթամ անուր պատասխան տամ։

—Դու գըտի՞ս անու էրազ ինչ ի օր պատասխան տաս։

—Չէ, վալա, չըմ գըտի։

—Օր թէ չիս գըտի, ինչո՞ւ կերթաս։

—Իմ կնըկ վըր ձի զիւրիր ի, իս անու ախուն կերթամ։

—Որ ընցկուն ի, անու էրազ քի նշանց տամ. Թագեաւուր օր ինչ տայ, դու բիրի՞ս իմ ըզի կիսիս։

—Խա՛, վաղտա ըլնը, էսաց. չատ յէրդում յէրդվըցաւ էլ։

—Դէ՛, էլի գինա, Թագեաւուրըն էսա՛. դու մէջ էրզին տըսըրիս էրկնուց դէլ կը թափէր. Պատճառն էլ ինչ ի, աշխարք էղած դէլ,

---

* Պատմած է Ջասիկ Օհան·

գքի պախի, յիշար կաց, քի չսպանին, քու թագաւորութին-թախտ ձեռնէն առնըն. էան էլ ինչ կուտայ, բի խա ըզի կըսի։

Մարդ էլաւ գինաց, գինաց դիմաց թագաւորըն դադրաւ։

Թագաւուր էսաց.—Դիւ ինչ իս իկի։

—Իկիր իմ, քիւ էրզին պատասխան տամ։

—Դիւ գըտի՞ս, իմ էրազ ինչ ի.—Բալքի գըտիմ, էսաց։

Դիւ տըսար մէջ էրզըն էրկնուց գէլ կը թափէր, աշխարք էղիր գէլ. յիշար կաց, գքի մէջ չուտըն։

Թագաւուրը չատ փարայ էտուր անու, մարդն էլ էսաց։—Թագաւուր, խա զի մարդ դի՛ր, ճամբխէն ըզի չթալնին։

Թագաւուրը չատ մարդ իդիր խիտ, էկան։

Աղու միտք ինչ կի, գէդ մարդիր իրի խատ ուր, զան օձ սպանին։

Էկաւ, խասաւ էան քարու մօտ, մարդիր պախից, քար մի իդի էս ծիւց, փարէն էլ մէկէլ ծիւց, էսաց.—Ինչ իս քարն կը զարկիմ, դիւ էլ յիլէք ըզի յիւզնէք, զօձ սպանինք։

Էլաւ, գինաց. դիմաց օձուն դադրաւ, կանչից.—Օ՛ձ, դիւս արի, փարէն բիրիր իմ, իս, դիւ կըսինք։

—Ցիւր ի փարէն։ Փարէն չանք էտու, էսաց.—Աղ մէկէլ ծիւց ինչ ի։—Չա՞ւ չի, էսաց.—Քեար դրիր իս ծիւց, ըզի սպանիս. գինա, չըմ իդեայ դիւս։

Մարդ էլաւ, դարձաւ, գինաց մարդիրուն էսաց.—Էլեցէք, գացէք, էլ իս չըմ վախինայ։

—Էկաւ ուր տուն, կնըկ էսաց.—Մա՛րդ, չէ դիւ չէր իրթիր։

—Կնիկ, մէկ օձ ըզի նշանք էտու։

—Դիւ օձուն բան չտուի՞ր։—Չէ, էսաց.—Վաղ միզնէ դաւա չէնը էան օձ։—Չըմ գըտի. իս մարդ բիրի խա զի, սպանի ան օձ, դիւս չէկաւ։

Միւս տարին թագեաւուր էլմ էրազ տըսաւ, էլմ կանչից վուզիր։

—Թագեաւուր, վուվ ինչ պատասխան տուիր ի. էլմ' էան բիր։

Էլան, օղորկըցըն յիտիւ ան մարդուն։ Մարդ մնաց չուար, բան չըգըտի, խատ օձուն պէպախտութին իրի, մկայ չըգըտի ինչ պատասխան տայ։ Կնիկ ըսաց.—Մարդի՛, գէնա մատ էան օձու։

Էլաւ չուար չուար գինաց, գ՛նք էտու էան քեարը տակ։

Օձ էլմ՝ կանչից։—Դի՞ւր տ'էրթաս։

—Թագեաւուրը օրողկիր ի մա զի, ուզիր ի, էրազ ի տըսի, էրթամ։

—Էրթա՛ս, գըտի՞ս ինչ ի անուր էրազ։—Չէ, հաւատայ։

—Օր թէ չըս գըտի, ինչ տ'էրթաս։

—Էկիր իմ մա քի, աէրն Աստըծուն, ըզի կսպանի։

—Ան գէրն էր, դու իկի մա գի, քի չանք տուը, դու փարէն բերիր, ըզը չի տուըր։

—Աս գիր վաղեա ըլնը, ինչ տայ, բերիմ, տամ քի։

Օձ էսաց.—Մարդ գինա, Թագաւուրին էսա, իս գըտիմ քու էրազ ինչ դու տըսալ. գըշիր մանչ էրզըն էրկնուց աղուէս կը Թափէր, պատասխան ինչ ի, քիզնէ յիշար կաց. աշխարք էղեր ի լեղ (կախարդուած). մէկ գքի չիւտի. քու բախտ քու ձեռնէն առնը։

Էլաւ, գինաց մա Թագաւուր դադըրաւ, Թագաւուր էսաց. —Էկա՞ր։—Իս ա, էկայ։

—Իմ էրազ ինչ ի։—Դու տըսիր իս էրկնուց աղուէս կը Թափէր։

—Իս տըսիր իմ աղուէս ի Թափի, անու պատճառը ինչ ի։

—Անու պատճառը էնը ի, աշխարք էղեր ի լեղ, քիզնէ յիշար կաց, մէկ էլ քի չի խափի, քու բախտ քիզնէ առնը։

Թագաւուր անու շատ փարայ տուու, ուր փարէն առից, էկաւ, միտք էրաւ։—Ինչո՞ւ ան ճամբխով էրԹամ. հիւրիչ ճամով կէրԹամ։

Ճամբախ փոխից, էկաւ ուր տուն, կնիկ էսաց.—Մարդի, էմ՛ օձ նշանք էտուր։

—Խա՛, էմ օձ նշանք էտու։

—Օձուն զատ տուիր։—Չէ, հիւրիչ ճամբխով էկայ։

Մնաց մէկէլ տարըն, Թագաւուրը էմ էրազ տըսաւ, էմ վուզիր կանչից։

—Վուզի՛ր, էսաց. մէկ կուզիմ իմ էրզին պատասխան տայ։

—Էլան էլ՚ օղորկեցին յիտիւ ան մարդուն։

Մարդ մնաց շուար, էրԹայ չըլնը, չէրԹայ չըլնը։

Ցեխան զիւրով տարան. հասան ան քեարըն. մարդիրուն էսաց. —Դու գացէք, իս էրԹամ մատ քեարին, իգեամ։

Մարդ ուրին ուրին էսաց.—ԷրԹամ, օձ ըզի կծի, չէրԹամ, մատ Թագեաւուրին սուտ դուս իգեամ, ըզի սպանի, աղէկ ի օձ ըզի կծի, մատ Թագեաւուրի սուտ դուս չը գեամ։

Էլաւ, գինաց մա քեարին կծկուաւ շուար-շուար. օձ կանչից վիրայ։

—Դու է՞լմ իկի։—Էլմ իկիր իմ՛ խա՛ վալլա, էմ իկի. ինչ ինիմ։

—Ան գեախ նեղը կըյնիս, կըգեաս, էան գեախ ինչ փարէն ծուծդի, փախչիս, չըս իգեայ մա գի։

—Վալլա, ան առաջուան փարէն ինչ տուը, բերիր իմ խիտ. մկայ էալ ինչ տայ, բիրիմ էսա տեղ, առ քի, ըզէկ պըծուցիս անու ձեռնէն։

—Գինա՛, էսա Թագաւուրին, դու տըսըր իս մանչ էրզին գեառ կը Թափէր էրկնուց. պատճառը ինչ ի. աշխարք էղաւ գեառ, դէօր լուս կէ՛ր, խմը՛, քէյֆ էրա։

Ելաւ գինաց, դիմաց թագաւուրին դաշլաւ, թագաւուր խարցընից։

—Դիւ էլմ էկար, իս ինչ էրազ իմ տըսի։ — Դիւ մանչ էրզին տըսիր իս էրկնուց դեառ կը թափէր. աշխար էղաւ դեառ, կիր, խմի։

Ադ մարդ առըց զուր փարէն, դիւզ էկաւ մատ օձ, կանչից.
—Օ՛ձ, դէօր իս, արէ, զփարէն կըսինք։

Մարդ իրի, իրեք դըրուան էլ կըսից. օձ էսաց։—Մարդ, մառ տմը, իս ինչ կէնիմ փարէն։

—Աս քիւ սատաղէն ի, ընկեաւ իմ ձեռ. էրկու դիր պեպախտութեն էրր։

—Չէ, քի լօմա չկեայ, աշխարք էղեր էր սկուն, մկայ աշխարք էղեր ի դեառ, իս քիւ շուարութենի արով նշանք տուր, մէկ էլ աշխարք ճարպըցի։

Մարդ փարէն առից, գինաց ուր տուն։ Ան խասաւ ուր մուրազին . . . ։

II

ԳՏԱԾՈՒՐԻԿ ՓԱՐԷՆ

Բուլանըխայ բարբառով *

Մէկ խուֆարէ մի ճամբու հետ կէրտար ուրին քաղաք մի դատելու. կէրթայ մեծ դուրան մի բռասթ գեկայ, կեչկայ օրտայ բեռ մի չճօռ օսկի էդ տեղ դրուկ ա. կոլրուէ յետ ու յառէջ. կուշտ ու բոլոր կնշկայ, կը տեսնի օր մարդ չկայ.—Եա՛ ռապի, կըսայ. ես իմալ էնիմ. Թէ իտա փարէք վէրուոմ տանիմ քաղքի մէջ, պտի ըսին—«Ֆուխարա, դու յուր, իտա խըտըր փարէն յուր. Եա դողցեր իս, եա գտեր իս». պտի տփին գլխուս առնին։

Հըդ էդ ըսելուն՝ ձիաւոր մի էն դիուց կերեայ. գեկայ կը մօտենայ օր՝ մէկ ճասաաֆուսօվ աղէ մի. ձին կը քշայ, գեկայ վըր խուֆարա մարդու գլխուն, կը հարցու.—Ֆուխարա, դու յօրէ՞ իս կայնէ վըր ըտա ճամբուն։

— Աղա, կըսայ Ֆուխարէն, քղնէ պայիմ, Աստու՞ց ինչ պայիմ. իտա չըճօռ օսկին գտեր իմ, չըմ յիշխնայ՝ հետս ի տանիմ քաղաք, կը

բռնին առնին՝ ընծնէ. էն աղէկ օր քզի պէս աղէ մի ըռասբ էկաւ. արի, յերալը նետ կխինք։

—Վէրու էրտանք, կըսայ աղէն. ըսկի մը վախնայ, աշխարհ լէ գինան օր ես աղա իմ ու փարի տէր, մարդ քու մաղին չը մօտենայ։

Գէլնին Ֆուխարէն ու աղէն դէմ կէրտան քաղաք, գիջնին մէկ խայֆախանէ մի՝ Աֆանեըմ, աղէն ա, ջըհօռ օսկին կառնի Ֆու-խարի ձեռնէն, կը տանայ դնայ վերին դեն. ուր ձին կը կապայ, յէտև գիկայ, նստի, ճարկիլէն կը դնայ յառէջ, խայվէն կառնի ձեռն ու, յինք ուրին կը փչրախ ու կը խմայ։ Խղճուկ խուֆարէն լէ կը մնայ խայվախանի ճար կանուկ։

Դօր մի կը մնայ, աղէն կը հանայ սիվտակ մաճիթէ մի կիտայ խուֆարին, կըսայ.—Ա՛ռ քու բրէ ն, Թող գնա։

Խուֆարի սիրտ գէլնի, կը կանի ու գիլայ։

Աղէն կը ճեռստի վըէն. կը սորվըցու խայվաչուն. խայֆաչին գիկայ, ծեծայ խուֆարին կէնայ դիւս:

Խուֆարէն ա, դէմ կէրտայ. կը նստի ժամու դուռ, փարա տուող լէ կիտայ գիլայ. ու չը տուող լէ։ Էն դիուց խելացի կնիկ մի կը տեսնի խուֆարին կըսայ.—Ջանըմ, ես մաթ կը մնամ վըր իտա խուֆարին. էտօր տան գիլայ, չիտան գիլայ. ճալբաթ մէկ դարտ մ՚ ունի, կանի, մօտենամ, տեսնիմ էդ ինչ մարդ ա։

Կնիկ գիկայ, մօտենայ կը հարցու:

—Խուֆարա, դու յօրի գիլաս, քու դարտն ինչ ա։

—Եամա՛ն խանըմ, կըսայ խուֆարէն ընծնէ վազ կէցի, իմ դարտ շատ ա։

—Հալբաթ ինչ ա քու դարտ, ըսա. բալքի դեղ մ՚ էլ ես գինամ։

Խուֆարէն ա, ուր գլխու գալիք խըսայ կէնայ խանըմին, խա-նըմ կըսայ.—Խուֆարա, ըսկի դարտ մ՚ էնի, Աստըծով ես քու փա-րէն կը հանիմ. դ՚էլի, էրտանք մեր տուն։

Խանըմ կառնի խուֆարէն, կը տանայ ուրանց տուն, կը թօրկայ. յինք շուտ մէ շուտ ուր հալաւ կը հանայ, կը հագնի մարդանակ շոր. սըճաց կէցկայ վիզնու վի. Եասամա խայլըն չըպուխ կառնի ձեռ-քեաշէլին դէմ կէրտայ էն խայվախանի դուռ կը կանի. կը կանչայ խայվաչուն կը հանայ դուս, կըսայ.—Էն ինչ ծանտր թուճար ա, յըսօր յիջէ քու խայվախանէն, գնա ըստոր պապու անուն հարցըու, արի ընծի ըսայ։

Խայվաչին կէրտայ ու կըընկին կը դառնայ գիկայ, կըսայ խա-նըմին.—Հարցուցի, ուր պապու անուն Ուլի Բազըկան ա, յինքն լէ շատ զանգին ու Աստու կրակի տէրն ա։

Խանըմ դէմ կէնայ կը մտնի ներս, կէրտայ էտ աղի մօտ կը նստի, փչում կը մնայ, կը հարցու.—Աղա, դու յօրի իս էկէ յիջէ իտա խայ-

վախաճէն, դու խոըմլա ջոջ աղէ մի, ափսոս չէ՛ քղի. չեղնէ՛ մըջ քաղքին ըսկի ճանչուոր չունիս։

—Չէ, ոլլա, ես մարդ չը ճանչնամ։

Խաճըմ էլման կը հարցու.—Դու ի՞նչ տեղէն իս։

Կըսայ—Գեապօլայ։

—Գեապօլայ մէկ մի ըսիմ կը ճանչնա՞ս։

—Ո՞րն ա, ըսա տեսնինք։

—Ուլի Բաղրկան ա, կը ճանչնա՞ս։

—Դու իմա՞լ կը ճանչնաս Ուլի Բաղրկնին։

—Ես կը ճանչնամ, հանտայ ընդոր իրեք աղջիկ լէ մըջ մեր քաղքին ա։

Տօ օղորթմա՞ կըսիս, Աստուած քու տուն ակօլա, ելէ Ուլի Բազրկնի տղէն իմ։

—Դու օր ընդոր տղէն իս. ըպա ի՞մալ չըս էկերի յիջէ քու քուրվըտոց մօտ։

—Ես ի՞նչ խապար ունէնք, թէ ընծի իտա տեղ քուր կար. իմ յառջի մամ մեռեր ա, իտա խորթ մամ լէ ըսկի օր մի չըսերայ թէ «քղի քուր կայ». Աստուած քու բան յաջողայ օր խապար տուիր։

—Դը դու կեցի, ըսեց. ես էրտամ, քու քուրուըտոց ըսիմ դայ։

Խանըմն էր գնաց, ուր մարդանակ հալաւ վըռազով հանեց, էլման հագաւ ուր կնկնակ շորեր, էրկու ուրիշ լէ դըրկեցի կնիկ գըտաւ, թամպի էրեց, ըսեց.—Տեա, կնկնալք, գէլնինք կէրտանք Ցլաճ խայվախաճէն, մէկ զաճգիճ մարդ մը կայ. էտի մէկ խուՑարի մի գտածուրիկ փարէն իճfar էրէ, չիտայ. կերտանք էտ զաճգճի մօտ. ես վախցով գործ չիներ իմ, կըսինք քու քուրվըտիքն ինք. չալօղուտենով, դուպarուտենով բալfի խեյք գլխուց գողնանք, փարէն առնինք մօտէն. հըմա գինա՞ք, ձեր անուններ պտի փոխեք, յիբօր կը հարցու. մէկդ ըսէք—իմ անուն Բաճ ա (ես). էն մկկել լէ Բաճեաճ բէքար, (ինձանից վատ). իմ անուն լէ կը դնիմ, Ճէrեա օյճամ, (ո՞ր տեղ խաղամ)։

Խաճըմն ա՝ խօնչով, բօխչով, cարապ fեապապով կառնի էդ էրկու կնիկն ու կէրտայ դէմ էլման էդ խայվէն։ Խայվաչին ջուապ կը տանայ բազրկճի տղին թէ.—Ի՞նչ կէնիս, քու քուրուըտիքն էկան։

Բազրկնի տղէն ա գէլնի հարի դուռ յառէջ ուրանց. քուրուըտիք գիկան կը փաթուին վըզով. որ ճակատ կը լիզայ, ո՛ր յաչքեր, ո՛ր յէրես, խոլասայ կը նստին, կը բացային կեր ու խում։

—Ա՛խ fօռնէր իդա մեր յաչքեր, կըսին քուրուըտիք. դու ի՞մալ թողեցիր մըզի, էկար յիջար իտա խայվախաճէն։

—Ես ի՞նչ գինէնք թէ ընձի քուր կար. կըսայ Բազրկճի տղէն. հան որ սալըղ առայ, մէկ մարդ մի՝ Աստուած ուր բան յաջողայ, էն

ըսեց.—Է՛ օրշնեալ Աստուած, չէ՞ քղի պէս աղբէր գտանք. մենք չը մացինք անտէր բուլի, էլ բան պէտ չէ մըղի։

Դօր մի կը մնայ, բազրկճի տղէն կը հարցու։

—Է՛ քուրուըտիք, ձեր անուներ ըպա ինչ ա. չըսեցիք։

Մէկն ըսեց—իմ անուն Բաճ ա. էն մէկել լէ ըսեց—Բաճsաճ բէքար ա. մէկել քուր լէ ըսեց—իմ անուն Նէrsա օյճամ ա։

Կուտին կը խմին, մէկ խէլի վախք կը մնայ, բազրկճի տղէն բանից գէլնի. անտէր էրաղն ա «Իծու փոր յըլնան, էծ կը կատղի» երեց օր բազրկճի տղի գլօխ էլ վրէն չըկայնէր, հըտ գահուն ջուր բերնէն կը Թալայ. յոտ մէկ քարաֆ կէրտայ, գլօխ լէ մէկ. ու շըըըփ ի գետին։

Քուրուըտիք խօլոտ մի գ՚էլնին, բուխերկից տաշտ մի մուր կը քօմին. կը բերին ջուր կը յըլնան վրէն ու կը շաղին. յէտև կը բերին էդ բազրկճի տղին կը տկլօղցուն կէնին տիԹ բռուք. ու ինչ օր մուր կայ կը լաղօղին էդոր քիԹ ու մռուԹն ու ջաճsակ, կը դառնան բէզեր կը բըլըցուն, մազեր կը գժգժցուն, բrճամ կը տուժկըցուն, ու ուրանք գէլնին, կառնին ջըճօռ փաrէն, էտոր ձին ու շորեր, դէ գվօի փախի։

ԼուսումԹի շուտ խայվաչին գիկայ դուռ կը բանայ, բազըրկճի տղէն ցլուք գէլնի յառէջ, կը կանի, կըսայ.—Խայվաչի՛. կըսէ.—բուէ-rու ,(հրամայէ՛)։

—Հա՛ճի բաճ. (ո՞ւր է Նօը)։

—Ըօքա սաճ. (ահա դուն).

—Բաճsաճ բէքա՞r (ինձնից վո՞տը).

—Գէճա՛ սաճ. (դարձեալ դու)։

—Նէrsա օյմաճ (ո՞ր տեղ է խաղամը)։

—Նէrsա օյճասաճ օյճա, խաճ բէօյիւf դըr. (ուր կը խաղաս խաղացի, պանդոկը մեծ է)։

Խայվաչին տեսաւ օր հէռսօղաց էտի մէկ սատանէ մ՚ ա. բօռ-բըռ ուն մի ղրեց, Թափան էկան, աղա՜, Թըքուցին էտոր յէրես, ո՛ր փէտով, ո՛ր Թըքօվ, ո՛ր կօշտով, քարով. քար հալած էրին, լաբին հանին քաղքից դուս. գնաց կորաւ։

Օղորմած խաճըմն էր, առաւ փաrէն բերեց տուեց խուՖաrին, բազրկճի տղի քաժայ շորեր հագուց ըստրան, ձին հեծցուց.

—Դը՛, գնա՛ ըսեց, Աստուած քու հետ։

ԽուՖաrէն էր, օրշնեց խաճըմին, հեծաւ ձին, խուrճիճ Թալեց քարկ. շընկըցուց զանգուճըրն ու եալլա։

12

ՕՖ—ՕՖ

Խնուսայ Բերդի բարբառով *

Կեղնի-չկեղնի իրիկմ ու կնիկ մի, ըդըրանց չէ կեղնի տղէ մի․ էդ տղէն չէ իսկի բան չգինայ. նա կարդալ, նա սանաք․
Էդ տղէն կը ծուի Թագաւորի աղջկայ վրէն, կըսէ ուր մամուն․
—Նանէ․ գնա ընծի Թագաւորի աղջիկ յուզէ․
Տօ, տղա՛, լա՛ օ, քու պապ աղքատ, աւուր հացի կարօտ, մենք յիմալ էրթանք Թագաւորի աղջիկ յուզինք, չէ՛ դմզի կը մորթին, դու չէ սանաք մի չգինաս, որ ըսիմ, հան տղէս սանաք մի գինայ․
—Չէ՛, նա՛նէ, իլաի օր պտի էրթաս յուզիս․
Ցրկուն օր տղի պապ (հայր) տուն էկաւ․ տղի մամ (մայր) ըսեց․—Հմլայ բան կայ, քու տղէն կըսէ, գացէք Թագաւորի աղջիկ յուզէք․
Պապ կըսէ․—Տղա՛. լա՛ օ, խեղքտի թուուցմը իս․
—Չէ՛, կեաքէ, կըսէ, պտի էրթաս, յուզիս․
Չեղնիր տղի վրէն, կերթայ տղի պապ Թագաւորի մօտ, Թագաւոր կըսէ.—Ընչի համար իս էկլի․
—Թագաւոր ապրած, քու աղջիկ պտի տաս իմ տղին․
—Իմ աղջիկ իմալ տամ քու տղին, քու տղէն սանաք գինա՞յ․
—Չէ՛, ոլա, չգինայ․
—Գնա՛, գքու տղէն բի, տսնամ․
Մարդ կերթայ զուր տղէն կառնի, կը դառնայ Թագաւորի կուշտ․

---

* Պատմած է Վաղարշակ Աղէկեան:

Թագաւոր կը հարցու.—Տղա՛, դու սաճաք գինա՞ս։

—Չէ, չըմ գինայ։

—Որ հէմալ է, գնա՛, սաճաք սովրէ, արի, իմ աղջիկ կիտամ քզի։

Տղի պապն է, կառնէ զուր տղէն, կերթայ, որ տանէ տեղ մի աշակերտ իտայ։ Շատ կերթայ, քիչ կերթայ Աստուած գինայ, գիկայ գօլի մի բռասց. էդ գօլի մօտ քար մի կեղնի, պապն կիջու չալկէն զտղէն, կը դնէ գետին, ինք լէ դաղրուկ կեղնի կենէ օֆ—օֆ։

Որ կէնէ «օֆօֆ». մէկ լէ կը տեսնէ օ գօլի միջէն բըբռէջ մարդմ դուս էկաւ.—Ի՞նչ կըսիս, մարդ. յորի զիս կանչեցիր։

—Տօ, աղբէր, ես դաղրուկ էնք, էրի «օֆ-օֆ»։

—Իմ անուն օֆ-օֆ է. էդ տղէն յո՞ւր կտանիս։

—Կտանիմ որ տեղ մի աշկերտ իտամ, սաճաք սովրի։

—Ըպա տուր իմ մօտ. աղէկ վարպետ իմ ես, կսովրցում. տարիմ էլ յըսօր արի-տար։

—Շատ աղէկ, ըսեց պապն ու թողեց զտղէն ու դառցաւ տուն։

Բըբռէջ առաւ զտղէն, գնաց ներս. տղէն թողեց հոնի, ինք յէ-լաւ դուս։

Բըբռէջի կնիկ ապսոսաց զտղէն. առաւ տալաւ ուրանց . . . . որ ջաճդակ ու գլխով բաղաճ էր, էդ կնիկ ըսեց։

—Տղա՛, կը տեսնա՞ս իդա բաղաճ, ըդ յըմեն քզի պէս տղայ ին էղի, յըմեն բերեր էր սաճաք սովրցուցեր, որ սովրեր ին, գլուխ ու-րանց կտրեր է. յմկայ քզի ապսոսացի, քզի ի՞նչ որ կըսիմ յանկանջ էրէ, քզի ինչ որ կը սովրցու, ըսէ չիմ սովրեր ի՝ որ պրծընաս-

Տղէն կըսէ.—Թըղ էղնի։

Գիկայ Բըբռէջ, ըդրան ինչ որ կը սովրցու. տղէն կը սովրի, կըսէ. չիմ սովրերի։

Բըբռէջ կըսէ.—Իդա ի՞նչ էչ տղայ էր էկաւ ընձի բռասց ըդրա պապ չէկաւ, իդէք զէդ էչ, տանէր. պրծնէնք ձեռնէն։

Էդ յըմալով կը քամըմի տարին. տղի պապ գիկայ, հըը չսած «օֆ-օֆ» հըմը կառնէ զտղէն կը բերէ դուս կըսէ։

—Առ զքու էչ տղէն, իդա տարիմ կը սովրցում, չը սովրիր։

Տղի պապ առաւ զուր տղէն, գնաց. Բըբռէջ լէ դառցաւ ուր տուն։ Պապ ու տղէն լէ շատ գացին-քիչ գացին Աստուած գինայ։ Պապ ըսեց տղին.—Տղա, լա օ, մկայ էղնէր մէկ հատ ձմերուկ, ուտենք։

Տղէն ըսեց.—Կեակէ, ես կեղնիմ բօստան, դու ինչ ղորը գու-զիս կի, հմը մէկ հատ մեծ կարմիր պօչով ձմերուկ վերցու, դիր վըր ճամբուն, էն ես լիմ, մկյտոնք լէ ծախէ, ինչ կենիս էրէ։ Պապ ըսեց. —Աղէկ։

Տղէն էղաւ բօստան, պապ լէ ուզածի խտըը կերաւ. էն կար-

մէր պոչով ձմերուկ վրուց ու զբօստանն ծախեց. փչում գնաց, տեսաւ օր տղէն յետեւէն գիգայ։

Փչում գնացին, պապն շատ ծարաւցաւ, ըսեց.—Տղա, լա օ, շատ իմ ծարաւցի, ճմալ էնիմ. ջուր լէ չիկայ։

Տղէն ըսեց.—Կեակէ, ես կեղնիմ յաղբուր, դու խմէ։

Տղէն էղաւ յաղբուր. պապ ջուր խմեց, գնաց։

Տղէն էտեւէն էկաւ, ըսեց.—Կեծկէ, ես կեղնիմ ձի, դու գիս հեծի։ Տղէն էղաւ ձի. պապ լէ հեծաւ, գնաց տուն։

Տղէն գեՏա դարձաւ տղայ։

Ըղըանք աղքտցան, տղէն ըսեց պապուն.—Կեծկէ, ես կեղնիմ ձի, դու գիս տար, ծախէ. հմը գիմ գեամ չծախիս։ օր գիմ գեամ ծախիս, ես լէ կերթամ։

Տղէն էղաւ ձի, պապ առաւ՝ գձին, տարաւ ՏՈւՔՆեր, էկան մՈւՇՏրիք ըսեցին.—Ի՞նչ տանք ձիուդ։

—Հզար օսկի։

Ձձին ծախեց, գեամ դառցուց, բերեց. տեսաւ օր տղէն տուն նստուկ է։

Մէկէլ օր տղէն ըսեց ուր պապուն.—Ես կեղնիմ դեվա, դու տար, գիս ծախէ, հմը ի՞նչ խտըր լէ փարա ի տան, իմ ուլար չտաս։

Բըրուէջ լէ լսեց էդ տղէն յըմեն բան սովրեր է. էլաւ գնաց. տեսաւ տղէն էղեր էր դեվէ մի, գնաց դեվի տիրոջ մօտ, ըսեց.—Ի՞նչ խտամ դեվիդ։

—Երկու հզար օսկի, հմը ուլար չըմ խտայ։

Ըսեց.—Չէ, իրեք հզար օսկի կիտամ. ուլար լէ հետ կառնեմ։

Ըսեց.—Չը՛մ խտայ ուլար։

Նա խսա, վեց հզար օսկու, ուլար լէ հետ առաւ։

Հեծաւ դդեվէն, գնաց. ճանբէն ըսեց.—Հեյ գիծի չանօրդի, դու կըսիս չըմ սովրեր ի սաՏար. հըմկայ գքզի տանիմ տուն, դու կը տեսնաս զքում։

Տարաւ տուն, ուլար տուեց կնկայ ձեռ, ըսեց.—Բռնէ գիդայ, ես էրթամ գդանակ բերիմ, մորթինք։

Ըսեց.—Աղէկ։

Մարդն օր գնաց դանկի. կնիկ թողեց գդեվէն, ու ճչաց։

Դեվէն էլաւ ձուկ մի, փախաւ։

Մարդն էկաւ կնկայ վրէն, տեսաւ կնիկ պառեր է գետին, թողեց գկնիկ, էղաւ օձ, ընկաւ ձկան էտեւ։ Հմը ձուկը դօլից թռաւ դուս. էղաւ օձ, փախաւ. էն լէ էղաւ օղնի, ընկաւ էտեւ. քիչ մ՚նաց օր հասնէր, տղէն էղաւ ճնճուղ մը թռաւ, էն լէ էղաւ ցուրուր, ընկաւ էտեւ. հմը փչում մնաց հասնէր էն էղաւ յընծեղ մի ու փախաւ. էն լէ էղաւ բաշուպ (բազէ) ընկաւ էտեւ, քիչ մնաց օր հասնէր, բըռ-

նէր. յընծեղն էղաւ գէլ մի ու փախաւ, էն լէ էղաւ առջ մի բըրդից (պնդից) էտև, քիչ մնաց որ հասնէր, էն կենե էղաւ թեաւոր ու թռաւ. էն լէ ընկաւ էտև։

Թագաւոր լէ ուր փանճարից կէչգէր, որ էրկու ճնճուղ կը կռուըտին. մէկ լէ տեսաւ որ մէկ ճնճուղ Ֆր՛ռ ուր փանճարից ներս մտաւ, էղաւ նուռ մի դըրուաւ քաղչեն (դարակ)։ Թագաւոր շատ վախեցաւ, զուր բռանէկ թալեց. մէկ լէ տեսաւ որ դարվեշ մի ներս մտաւ, ըսեց.—Նա-ճո՛ւ։

Թագաւոր բարև առաւ. հանեց, էրկու-իրեք ղուրուշ տուեց։ Դարվեշ չառաւ, ըսեց.—Էն նուռ տուր ընձի։

Թագաւոր ըսեց.—Գնա, դու քու ձեռով առ։

Դարվեշ գնաց, ձեռ թալեց որ պտի առնէր, նուռ յընկաւ գետին, փլխաւ, հատեր ցրուըռուաւ, էրկու հատ լէ յընկան թագաւորի դօշկի տակ։

Դարվեշ էղաւ ճեռ մի կերաւ զհատեր, հմը զէն էրկու հատ չտեսաւ։

Օր կերաւ, կանչեց.—Կո՛ւկռո՛ւռո՛՜ւ. խաղի հասկցուց թէ դու իմ փորու մէջն իս։ Ին երկու հատ լէ էղաւ դուղ մի զճեռ խեղդեց ու կենա դառցաւ էղաւ մէկ խօրոտ օջիղ տղէ մի ու ըսեց թագաւորին։

—Թագաւոր ապրած, զիս կը ճանչնա՞ս։

Թագաւոր ըսեց.—Չէ՛։

—Ես էն տղէն իմ, որ իմ պապ էկաւ քու աղջիկ ուզեց ընձի համար, չտուեցիր, ըսիր.—Թըղ ծանաք սովրի. մկայ կը հաւնի՞ս ընձի, քու աղջիկ կիտա՞ս։

Թագաւոր ըսեց.—Հա՛։

Բերին զաղջիկն ու զտղէն պսակեցին. ծօթն օր, ծօթն գիշեր խարընիք էրին, ընտրանք հասան ուրանց մուրազին. դուք լէ հասնիք ձեր մուրազին։

—Էրկնուց իրեք խնձոր իջաւ, մէկ ըսողին, մէկ լսողին, մէկ լէ սապիպ էղնողին։

13

ՄԱՆՈՒԿ

Նորդուզայ Տիմ գիւղի բարբառով *

Մէկ լաւ տղէմ կէր, զինքն էր, ուր մէր. էլաւ, գնաց մէկ գեղ, ասաց.—Տեհամ մօ ռէս, ըլնեմ որթկարած:

Գնաց, խնդրուաւ, ասաց.—Չի աննս որթկարած, չախուեմ:

Ասաց.—Այ աղա, դիւ կանաս որթիկներ չախես: Ասաց.—Կանամ:

Ասաց.—Դէ, գնա յէտջև որթկներաց. կէրակներ կէրակէ քէւ խաց-մաց ժողուէ, յըմեն որթկէ մէկ գլուր ցորեն տամ քէւ հախ:

Էլաւ, գնաց յէտջև որթկներաց: Էն որթիկ իշ կը դուշըկէր, պառաւ կեհնր, էն կըհէր. տղէն կըհէր կը տփէր, բէրէր մըշ որթըկներաց. իշ կը մնէր գումահէք (խոնէն), կը տփէր, չում կը խասցնէր որթկներաց:

Էդա լավնով մէկ չաբթուան մէջ խինք, վեց որթիկ սպանեց:

Գեղական էլան, գնացին, ռէսին ասին.

—Մենք էն որթկարած կապուղ չըրնք անի. մե որթկնեը յըմեն սպանեց:

---

* Պատմած է Պետրոս Վ. Երտօեան Խոսրովեանից, սա լսած է 1897 ին ի Խառակոնիս գիւղ Մուխսի Սահակէն:

Սոյն Պետրոս իւր ասեյով երկու տարի է որ Երեւանայ երկիրը եկած է, գիւղէ գիւղ ման կգայ, ժողովարարութիւն կանէ իբրեւ մուրացիկ. կլինի 60 տարեկան, գիտէր լաւ հէքիաթներ, որ վարժ կասէր. վասն զի օթեւանած տեղը մի հէքիաթ պիտի ասէ որ զինք պատսպարեն. որով պատրաստուած է միշտ ասել: Գիտէ նաեւ քրդ. վէպեր ու երգեր:

Ցէլան, մլուցին գիւս, գեղից խանին։

Էլաւ ղինք առեց մէր, էկաւ մեծ քաղքիմ մէջ, ասեմ, Էջմիածնայ ցեղ (տեսակ)․ բնակարան իսկին․ մէկ տան տնուոր իլան։

Էն լաճու անուն Մանուկ էր․ Մանուկ իլաւ, գնաց մըշ քաղքին ուր խըմայ ցախ-բան բիրէր, կոէր խացի․ ղինք ուր մէր կուտէն։

Էրկու օր, իրեք օր, չորս աւուր մէջ ուր լավնով ուր բան ֆուրայ արաց․ ինք ուր մէր չախուան։

Մէկ օր իլաւ գնաց փողնի մէջ, գնաց բանցը օրխի յէռջև, տեհաւ աղջիկ մը փաճճարից կիչկայ թըլս ճամբախ. Մանուկ էդա աղջիկ տեսաւ, հըլին ոսկի կէր ճակտին. եռսուն օսմանլուի ոսկի կարուկ էր Ֆասի վրէն։

Մանուկ ուր սրտին մէջ ասաց.

—Աստուած, կըլնի՞ որ էն Ֆաս ինի եմ ձեռ, ես տանեմ, ըմենով չախուեմ։

Գնաց, կայնաւ դէմ փեճճերին. Մանուկ ուր դդակ առեց վէր, աղջիկն էլ ուր դդակ առեց ձեռ, Մանուկ ուր ֆօլոզ թալեց վեր ու բռնեց. աղջիկն էլ ուր Ֆաս թալեց վեր ու բռնեց. Մանուկ ուր ֆօլոզ ծընայ (այսպէս) գըւըռցուց, բռնեց. աղջիկն էլ գըւըռցուց, թալեց, բռնեց։

Մէկ դիր էլ սկուն, մէկէլ դիր Մանուկ բանցը թալեց ու բըռնեց. աղջիկն էլ մէկ դիր բանցը էթալ ուր Ֆաս, բռնեց։ Մէկէլ դիր․ աղջիկ ինչ բանցը էթալ որ բռնէր, ընկեաւ ցած։

Մանուկ առեց Ֆաս ու գնաց տուն։

Գնաց մօր ասաց.—Մէրիկ, բանմ գտեր իմ. դիւ էն մեղաց օրիֆ կըլնես

—Չէ՞, ասաց, բե. տսնամ ․ինչ բան ի։

Ֆաս մօր չանք տուեց, եռսուն ոսկի վըր Ֆասին կարուկ էր։

Ասաց.—Դիւ էս մեղաց օրիֆ կըլնես։

Ասաց.—Չէ, չըմ ըլնի, ձի կայ վըր ․քե խաց, ջիւր, չոր, չուեմ էն օր իչ ես մեռնեմ. ես էդա մեղաց տէր չեմ ըլնի։

Մանուկ էդա Ֆաս բիրեց, դըրեց յէռջև ուր. էդա ոսկիք դանկով յըմեն կտռեց. Ֆաս տարաւ, պախեց. գնաց, չում տաս տարի էդա ոսկիքներով առուտուր արաց, վրէն ընկեաւ, յաւելցուց. էն ինչ յաւելցուց, ուր խըմայ վիրուց. եռսուն ոսկի էլ տարաւ գնաց մօ ոսկերիչ, տուեց կանթել, էմել դաշուան (նախկին) ցեղկանթեց, բիրեց, ճարեց վըր ինոր Ֆաս. Ֆաս վիրուց, ասաց.—Ես տանեմ տամ տէր։

Գնաց էդա աղջկայ խօր դիւռ ափեց. աղջկայ խէր ուր մըշկուն ասաց.—Գնա՛, կեօ մէկմ դիւռ հը ափի, ճշ պտի, տուր, թո տանի։

Գնաց, ասաց.—Այ մարդ, քե իշ պտի։

Ասաց.—Ձի գեործ կայ իը քեօ աղին, ասեմ, զըւըրեմ յետ։

Գիւռ զոցեց մշակ, գնաց մօ աղէն, ասաց.—Մարդմ եկե, կասէ ձի գեործ կայ. խապար կայ քիւ աղին։

Ղանչեց էլաւ.—Հայ տղա՛, քիւ գեործ ի՞շ ի, ասա՛։

Ասաց.—Աղա՛, ծընեմ տարը՛ քե զաց չի կուըխաէ։

Ասաց.—Ձէ։

Ասաց.—Խա կուըխաէ, դիւ չըս իմնայ։

Կնիկ կանչին, բերին, ասաց.—Ձէ, զատ չէ կուըխաէ։

Մանուկ ասաց.—Խա՛, կուըխաէ, ես գիտեմ, ձի տնէն ի։

—Բեր, որ մերն ի, ես տ՚առնեմ, որ մեր չի, տա՛ր, գնա քե։

Ֆաս չանք տուեց, ասաց—Էսա ի։

—Եմ աղջկայ Ֆասն ի, ասաց մէր։

Աղէն ասաց.—Այ տղա, էսա քեանիմ տարի ընկե մօ քե։

Ասաց.—Էսա տաս տարի մօ ձի ի։

Ասաց.—Տաս տարուան ի՞շ աւելցուցիր. բե, կէս քե. կէս ընձիկ։

Ասաց.—Ձէ՛, զատ վրէն չեմ եկե, քիւ մալ բերի, տուր քե։

Ասաց.—Ձէ, չընի. էն Ֆաս, դիւ ի՞շ տարեր իս, եմ աղջիկ գիւախարեր ի, տը տանես, եմ աղջիկ պախես, չիւր ժըրի։

(Աղի աչք ընկե վըր Մանուկ. մըջ ուր սըտին կասի, ես ըսկուն անեմ. աղջիկ պսակեմ վըրէն։)

Աղէն մշկուն ասաց.—Այ տղա՛, խալիչէն բե, աղջիկ դնենք ինէ. գիւախար ի, թը տանէ, չուեմ ժըրի։

Իլան բերին, դըրին մըջ խալիչին. փաթուեթին, տուին Մանուկին քեամակ. Մանուկ առեց, գնաց տուն, մօր ասաց.—Մէրիկ, աղջիկ գիւախար ի, տուին եմ քեամակ, ծընայ ասին. ես բերի, էկայ։

Մէր ասաց.—Բա՛ց, իչկանք, աղուրթ գիւախա՛ր ի։

Էդա աղջիկ բացին, խալիչէց խանին դիւս. չատ սիրական աղջիկ մէր, ոսկի արծաթից փէլք կտէր ինոր չորեր։

Մանուկ, ուր մէր ասին.—Գիւախար չի, մենք չընք կռնայ չախի. տանենք քալիմ տէր աննեք. «Մեր տուն մկներ որ կը կռուեն. ինոնց պոչեր յառքից դիւս կըյնեն»։

Էլաւ Մանուկ փաթըթեց, էմէլ առեց, գնաց. տարաւ դիւռ տփեց, էմէլ աղէն մշկուն ասաց.—Գնա՛, դիւռ բա՛ց. զաց մը տուր ձեռ, թո էրթայ։

Մշակ գնաց, դիւռ բացեց. Մանուկ առեց աղջիկ, էկաւ, ասաց.—Աղա՛, ես չեմ կռնայ քիւ աղջիկ չախի, «եմ տուն որ ես ակռասատ կուտեմ, յընթրիս չմնայ. որ յընթրիս կուտեմ, ակռասատ չմնայ»։

Ասաց.—Տղա՛, էն օր իշ էն Ֆաս որ Աստուած քե խսմաք ի

առև, էն աղջիկ քև խսմաք ի իլև, առև եմ ձեռ. եմ աղջիկ տամ քեզ.

Մանուկ իլաւ, գնաց ձեռ։

Խարցնեց.—Քեօ անուն ի՞չ ի.—Եմ անուն Մանուկ ի։

Գնացին, էրեց բիրին. աղջիկ պսակին վըր Մանուկին։

Աներ ասաց.—Մանուկ, դիւ քեօ տուն տը բիրես վըր եմ տան թի ես եմ տուն բիրեմ վըր քեօ տան։

Ասաց.—Ձի տուն չկայ, եմ տուն պտի բիրեմ վըր քեօ տան։

—Դէ՛, ասաց. գնա՛, առ արի վըր եմ տան։

Գնաց, ուր տուն առեց. էկաւ վըր աներոջ տան։

—Մանուկ, ասաց աներ, ես աղայ-մղայ չունեմ, ձի կայ մէկ աղջիկ, որ պսակի վըր քև, ունեմ եօթ տուֆան. եօթ օտար մարդ դըրեր էմ վըր եմ տուֆաններայ. ես ութնէ ութ կեհամ, ինոնց փարէն կը հաշուեմ, կդևամ յետ. ամանար քև կտամ էն տուֆաններ՝ էն տուն։

Մանուկ իլաւ, գնաց տուֆանքեր, մէկ տուֆան գինք նստաւ, մէկելքերայ մէջ մարդ դրեց, ուրին աղպապ ճարեց։

Աղպապքիր ասին.—Մանո՛ւկ, մարդ չգիտի թէ մենք բունար ենք. մենք տ'էրվ(ժ)անք Ստամբօլ, որ խալխ գիտի թի մենք զախմ բունար ենք. ըլնենք էրիվանք։

Ասաց.—Խա, աէհանք՝ ինչխ ճաց անէք։

Էկաւ ուր աներոջ ասաց.—Պտի մեր աղպապքեր էհանք բունարութեն, որ ըլնենք, էրեանք, մենք մէ խել բռնենք։

Աներ ասաց.—Եա չըմ թողև, Աստուած քև տաւև, կե՛, խմե՛, չուհուրն յաւիտենից քև խերիք ի։

—Չէ՛, ասաց. եմ աղպապքեր կեհան. ես էլ խետքեր կեհամ։

Ելան, մէմէկի քան ֆիսու մալ բռնին, դրին մըջ կեամուն, իլաւ յինք ուր աղպապքերով կեամին թողին, գնացին։

Կեամին տարաւ Ֆուրթունէն, զանեց մէ սար. կեամին պլաւեց-կոըծանեց. Մա՛նուկ մընէն պըծաւ. Աստուած պըծուց, Մանուկ նստաւ մէ տախտըկի վըէն։ Կեամին տախտակ քշեց, տարաւ. գնաց Ջինստանայ Թաքաւորի մօտ դիւս ընկեաւ. դիւս ընկեաւ ծովուեզր, ուր շորեր խանեց, քեամեց, թալեց ծովու կրաղ, ասաց.—Թը չորնայ։

Ըռուբ դայ նստաւ, մէ վիսկի արող ծովու բիրան վիսկի կանի. էս մարդ կըլնի էն մարդիւ դիմաց. էն մարդ բռուբ կեօ դայ նըրտեր ի, կասի.—Քշեմ. էհամ. ձի աղով չըլի վեր։ Էմէլ էկաւ, ընկեաւ մարդու դիմաց. վիսկին կայնեցուց. էկաւ գնաց մօ էն մարդ։ Մարդն էլաւ ուր չորեր խագեաւ, խարցուց.—Դիւ ի՞չ մարդ էս։ Ասաց.—Եա չըմ գիտի ի՛չ մարդ էմ։

Ձեռ բռնից, առաւ գնաց մօ վիսկին։

Վ.իսկի արողին ասաց.— Սոված եմ, խաց բէ։

Խաց դրեց, կերաւ. դըմէլ խարցուց.—Դու քեօ աճուալ ձի աամ, դու Ջինաստանայ մարդ չես։

Մանուկ ասաց.—Ես ընձի տըհերէմ ըսեց, չըմ գիտի ի՞չ մարդ էմ։

Մարդ էլաւ, վըսկին թողեց. Մանուկին ձեռնէն բռնեց, առաւ, տարաւ տուն, կնկեան ասաց.—Ես մէ մարդ էմ տըհե, տանեմ Թաքաւորին ծախեմ, մէ քենիմ ոսկի առնեմ, չախուեմ։

Տարաւ, գնաց, Թաքաւորին, ասաց.—Էսա մարդ կը ծախեմ։

Թաքաւոր խարէր ոսկի տուեց, գնեց։

—Այ տղա՛, ասաց. քեօ անուն ի՞չ ի։—Իմ անուն Մանուկ ի։

Ասաց.—Ես քե գնեցի, դու կաց քեօ խըզմըթին, եմ բանին։

Էրկու տարի ըսկուն մնաց, մէկ օր ասին.—Արեմտոց Թաքաւոր խեծել արե, տը գեայ Ջինաց Թաղաւորին կռիւ։

Թաքաւոր էլաւ, ուր խեծել ժողուեց, գնաց կռիւ։

Ցըմենով էդա Թաքաւոր ճանճըխեց. բերեց, լցեց մըշ Ջինայ քաղքին։

Մէկ օր էն Թաքաւոր թուղթ օրողկեց մօ Ջինայ Թաքաւոր, ասաց.—Ջինք բխօ գեայ, չէ՞, ես տըգեամ կռիւ. ինօր քաղաք տ՛աւըրիմ։

Իլաւ, զինքն, ուր դայիրէն առեց, գնաց կռիւ։

Ուր աղջիկ արաց Թաքաւոր, դըրեց ուր տեղ։

Մանուկ դըրեց յէռջև աղջկան, մէկէլ պիթուճ առեց, գնաց։

Իրեք օր գնացին կռիւ, էն յէռջև գիշեր աղջիկ ասաց.—Մանո՛ւկ, արէ՛, եմ ոտքեր լուայ։

Տաշտ բերեց էկաւ, աղջկայ ոտքեր լուաց։

Ցիստակ լուաց, փեշկիր թալեց, սըբեց։

—Մանո՛ւկ, ասաց. եմ ոտքեր մաժի, չուեմ եմ քուն տանի։

Իլաւ ոտքեր մաժեց. աղջկայ քիւն տարաւ։

Գաասու ուր քիւն տարաւ աղջիկ, տըսնէ Մանուկ ի՞չ կանի։

Մանուկ էլաւ, լխեւ քեաշեց վըր աղջկան, գնաց յօղէն։

Ասեմ Թաքաւորի աղջկայ դիւռ ըս տե ի. Մանուկի կեօ ըս տե ի։

Մանուկ էլաւ դիւս, գնաց դէմ ազօթրնին, ասաց.—Աստուա՛ծ, դու ընձի ազատես. ես դիմ էլ պըրծընեմ էսա տեղէն։

Աղջիկ գնաց խաւ, գեաղտիկ ականջ կանի։

Էկաւ, ընկեաւ ուր տեղ, քնաւ։

Մնաց մէկէլ օր յիրկուն, ասաց էմէլ.—Մանուկ, արե եմ ոտքեր լուայ։

Մանուկ ջիւր առեց, սախէն բերեց, աղջկան փաչէն լուաց. փէշկիր թալեց, սրբեց.

—Մանո՛ւկ, իմ ոտքեր մաժի, չում իմ քիւն տանի։

Աղջիկ ուր քիւն տարաւ, ըսկուն խռուց ուր մընէ խանեց։

Էլաւ ծածկեց. լխեւ դօշակ քեշեց վըր աղջկան, գնաց։

Գնաց դէմ աղօթրնին, էմէլ իլաց.—Դիւ Տէ՛ր Աստուած, դիւ զմեն աւշէ խոշէ ձէն ղառնաս, յըմենի սաշաղէն իմ. ձի փըրցուցես էսա տեղէն։

Աղջիկ էմել գնաց, ականջ կանի։

Գացին քնան։ Մնաց մէկ օր։

—Մանո՛ւկ, ասաց աղջիկ. արի՛, իմ ճուռ լուայ։

Մանուկ սախ բերեց, էկաւ ինոր ճուռ լուաց։

—Մանո՛ւկ, ասաց. քեօ ձեռ բե վեր, մաժէ, բե՛, բե՛, բե՛։

—Չէ՛, ասաց. կարողութեն չունեմ, գեամ ղարի վեր։

Ասաց.—Ընչի՞ կարողութեն չունես։

Ասաց.—Էն օր իչ քեօ խէր ձի դներ ի, մենք իլեր ենք քեօր, աղրէր։

—Մանո՛ւկ, ասաց, քեօ ֆէֆն ի, դիւ գիտես։

Մնաց էն առաւտուն, սըւն՝ Զինայ թագաւոր դըրեր ի վըր արեմտոց թագաւորին, կոտռտեց, եօթ փաշալըղ տեղ մընէն առեց. գըւըրաւ, էկաւ տուն։

Թագաւոր էմէլ բերին, դըրին թախտի վըրէն։

Ցէվարին խարցնեց աղջիկ ուր խօր.—Դիւ մէկ օր Մանուկին չըս խարցնի. ախր խօր մօր բերած ի, ախր քեարի բերած չի։

Թագաւոր խարցնեց.—Մանո՛ւկ, քե մարդմ՝ կնիկ, խէր, մէր կայ, չկա՛յ.—Որ ես ասեմ, ասաց. դիւ ընձի ազա անե՛ս։

Ասաց.—Խա՛, ազա կանեմ։

Ասաց.—Ասեմ, մենք Վանայ կողից ենք. ես իլայ, իմ աղպաքեր ռունի, մէկ մէկի քսան ֆիսա մալ ռունինք՝ տեհանք Ստամբօլ, կեամին ղանեց, մե կեամին տարաւ, տարաւ ղանեց մէ սար. մե կեամին կործանեց, ես մենակ պըծայ. Ասպած ընձի չտարաւ, ես մացի մէ տախտըկի, քեամին բերեց, խանեց դիւս, վիսկի արող ձի գնտաւ. բերեց, էկաւ ծախեց քե։ Ձի էլ կնիկ ունեմ, մէր ունեմ. զոքանչ ունեմ, էս իլաւ ծնէմ ժամանակ էկեր իմ մօ քե, չգիտեմ, ով ի մեռե, ով ի մնացեր։

Թագաւոր էլաւ էռսուն ֆիսու մալ դըրեց խը Մանուկին, դըրեց ջըջ կեամուն, կեամուչուն ասաց.—Մանուկ տանես, էհաս. մէկ նամակ բերես, «որ ես Մանուկ սաղ խանի դիւս». որ գեաս, ես քեօ Ճաւլըճ տամ։

Մանուկ ելաւ բերեց նրկէր, մալ լցիր ի դեւու, որ ուր մալ տանի տուն։ Գնաց, կայնաւ, տան դեւու տփեց։

Ինոր կնկեան մէկ մշակ կէր, ասաց մշկուն.—Գնա, ո՛ր դեւու կը տփի։

Մշակ գնաց, ասաց.—Քե ի՞չ պինայ։

Ասաց.—Էսա իմ տունն ի, ես տանտէրն իմ։

Մշակ զըւրաւ, խաթունին ասաց.—Մէկմ' կասի ես տան տէրն իմ։

—Չէ, էս քան տարի տան տէր չկայ. պարմիշ ելի գնացի, էն սուտ ի, իմ էրիկ չի։

Գնաց, ասաց.—Էյ մարդ, խաթուն կասի «իմ էրիկ գնացի կուրիսի»։

—Գնա՛, ասա, դեայ, նստի դէմ փանճարին. զրուցք անենք։

Գնաց, քուրսին դրեց դէմ յերդըսին յոդի մէջ, էն դուուց էկաւ խետ զրուց։

Կնիկ ասաց.—Դէ, զրուցի, ի՞չ մարդ էս։

Ասաց.—Ես Մանուկն իմ, պառուու լաճն իմ. իշ ես քեօ Ֆաս արի, գնացի, քեօ խէր պսակեց վըր ընձիկ։

—Չէ՛, ասաց. դու էն մարդ չես. էն մարդ պարմիշ էլաւ։

Ասաց.—Քեօ խապարն ի, կեամին պարմիշ իլաւ, ես նստայ վըր մէ տախտըկի, Աստուած ձի տարաւ, գնաց Չինաստանայ մօտ ձի խանեց դեւս. ես էս օր էկեր իմ որ դեւու բանաս, ես գեամ։

—Այ տղա՛, ասաց. քեօ աներ մեռեր ի, քեօ մէր մեռեր ի, քեօ զօքանչ մեռեր ի, ես մնակ մնացեր իմ. ինոնց խեր, խերապ, ժամ, պատարագ արեր իմ. արի, թոպա արա, դեւ էն ճամբխով չէհաս, դեւու բանամ վըր քե։

Մանուկ ասաց.—Թոպա ընի վըր ձիկ, որ էլ էն ճամբխով չէրթամ։

Դեւու բացեց վըր Մանուկին, էն դեախ իշ կնիկ զՄանուկին տեհաւ, ինոր մալ ապրանք իշ բերեր խետ, իրեք տեղով կնկեան խունճան կտռաւ ուրախութենէ։

Էդ մալ բերեց, քեշեց ուր տուխանքեր. վըր կնկեան ուրախցաւ, խունճան կարեց, երեսքեր պագեց։

Մանուկ նստաւ տուխանքեր, մէկ ժամանակ վըրէն ընցաւ. մարդմ էկաւ, ասաց.—Մանուկ, գերի իկլի, ըլենք, հանք, մե խըմայ մէ մէկ գերի բերենք, գեանք։

Մանուկ մըջ ուր սրտին ասաց.—Աստուած, կըլնի որ իմ Թաքաւորի աղջիկ ընի. տըսնամ, առնեմ, գեամ։

Գնացին մըշ գերեքերաց. Մանուկ տեհաւ մըշ գերեքերաց Չինայ Թաքաւորի աղջիկ։

Գերէքերաց տիրոջ ասաց.—Էսա պատիկին գին ի՞չ ի:

Ասաց.—Ինոր տաս ոսկի ի, միջնեկին քսան ոսկի ի:

—Էն մէկին քեանի ոսկի ի, ասաց: Ասաց.—Խարիր ոսկի:

Խարիր ոսկին տուեց, աղջիկ առեց. էկաւ, տարաւ օդի դիւռ բացեց, մտուց յօդէն, գնաց կնկեան ասաց.—Մէկ գերիմ եմ բերէ. ձեռքմ՝ չոր տար, ձեռք մէլ նուին տար, որ մէջ քնի, օրական էրկու տան կերակուր. որ քե կը խարցնի, եմ անուն չասես:

Մանուկ էկաւ տուֆան, առուտուր կանի:

Երկու ամիս, իրեք ամիս վրէն կընցնի, պէ հիլլի էլաւ. էն մէկ օր նստիր էր, տըհաւ, զատանց իշկաց ինե, ճանցցաւ. Ջինայ Թաքաւոր զինք արե ուր աղջկայ խտե. որ դինի, տանի էհայ:

Դարվիշ Մանուկի տուֆան ընցաւ, տեհեր մըշ քաղքին. Մանուկ կանչեց.—Դարվիշ բաբա՛, արի ըդայ, նիստ չու յեվարին, ձի գեործ կայ խը քե:

Դարվիշ բիրեց, նստըցուց խըտա ուր կշտին:

Մնաց չու յեվարին, էլաւ դիւռ չինեց. դարվիշ առըց, գնաց, ասաց.—Էս օր եմ խուրն էս:

Դա՛րվիշ ընկեաւ խտե, գնաց. գնաց իշ էն յօդէն զաղջիկ մըտուցե ինե, դիւռ բացեց, դավրիշ մտուց ինե:

Աղջիկ գլխոր ճանցցաւ, ասաց.—Այ խէրիկ, քե ո՞վ բիրեց ըդայ:

Խէր ասաց.—Աղջիկ, քե ով բիրե, ձի էլ էն ի բիրե:

Մանուկ կնկեան ասաց.—Էս օր մէ մարդ էլ էմ բիրե. ինանց չատ լաւ կերակուր տաս—հաֆմանակ, քե որ կը խարցնեն «էն իշ մարդ ի մե բիրե», եմ անուն չտաս:

Մէ ամիս էն լաւնով չախեց:

Մէկ օր խարցնեց կնկեան. էն մարդ իշ մե բիրեց, ընչի չդեայ ըդայ, ըշկանք ի՞չ մարդ ի, գեայ մօ մե:

Գնաց Մանուկ տըհաւ, ասաց.—Ծնայ կասեն:

Ասաց.—Գնա՛, ասա՛, ես գեամ, տըհնամ:

Մանուկ գնաց էրկու ձեռք չոր տուեց կտռել, կարել, յեվարին տարաւ, տուեց կնկեան. կնիկ տարաւ, տուեց դավրիշին ու աղջկան: Խաքան չորեր:

Թաքաւոր ասաց.—Ես Թաքաւոր եմ, ձի չկայ ծնայ չորեր, էսա ի՞չ մարդ ի:

Կնիկ գըւրաւ, գնաց մօ Մանուկ:

Մանուկ մոմ բռնեց ձեռ, գնաց, դիւռ բացեց:

Թաքաւորն ու աղջիկ էլան, Մանուկի դէմ կայնան:

Մանուկ դիւռ տփեց վրէն, ասաց.—Ջէ չում չընստէք, չըմ գեամ.

—Արի՛, ասին, մենք կը նստենք:

Մանուկ գնաց Թաքաւորի ձեռ. զըւրաւ, ճկաւ, էլ չնստաւ. վըր ոտաց կայնաւ, բարև ըռնեց։

Թաքաւոր տեղ տուեց. նստըցուց, ասաց.—Դիւ ի՞չ մարդ էս, էսա լաւութեն մե կանես, ես քե չըմ ճանչընայ։

Ասաց.—Թաքաւոր ապրած, ես Մանուկն եմ, իչ դիւ ընձի վիսկի ալողի մօտէն գնիր։

Էնտեղ ուրախացան, մէ մէկու աճկեարայ իլան։

Ասաց Թաքաւոր.—Մանո՛ւկ, դիւ երբ մե դաստուր տաս որ մենք հանք։

—Մէ չարաթմ՚ ձի մօճլաթ տուէք. ես տանեմ ձե, գնեմ ճամբ-խու։

Մանուկ իլաւ վեր, Թաքաւոր իչ եռասուն ֆիսու մալ էր դըրեր Մանուկն էլ քառասուն քիսու ապրանք դրեց խըտ Թաքաւորի։

Տարաւ դըրեց մըչ կեամուն, ասաց կեամուչուն.—Էսա մարդ տանես, Չինաստան դիւս իսկես, կեամու ճավլօճ չառնես, գեաս ադայ. ես կեամու ճավլօճ տամ։

Ընկեաւ յէռչև Թաքաւորին. տարաւ մըչ կեամուն։ Մանուկ էկաւ յետ, բան մէր մոռցե տուն, տանի Թաքաւորին։

Թաքաւոր ասաց կեամուչուն.—Որ Մանուկ մտաւ կեամին, դիւ կեամին թող. էն մարդ տանինք խըտ մեր։

Մանուկ էն գեախ էկաւ, դաստուր ուզեց. կեամիչին կեամին թողեց։

Մանուկ ասաց.—Թաքաւոր ապրա՛ծ, չըմ իգեայ։

—Չէ, տը տանեմ խը ձիկ։

Նստան մըջ կեամուն, գնացին։

Էրկու ամիս մնաց մօ Թաքաւոր։

Թաքաւոր էլաւ ճամբխեց երկիր, էլաւ խարիր ֆիսու մալ, արծաթ, ոսկի դըրեց խետ, թալիմ արաց։

Կեամուչուն ասաց.—Էսա մարդ տանես ինոր երկիր, խանես դիւս, կեամու ճավլօճ մընէ չառնես, մէկ նամագիրմ մօտէն բերես, Ճավլօճ ես կտամ քե։

Մանուկ բերեց էկաւ մալ, ապրանք քեշեց, գնաց տուն։ Գնաց դիւռ տփեց.—Կնի՛կ, արե, դիւռ բաց, ասաց։

Կնիկ ասաց.—Դիւ եմ իրիկ չես, եմ իրիկ գնաց կուրխաւ։

—Ես Մանուկն եմ, ձի չես ճանչնաս։

—Որ դիւ Մանուկն ես, խըտ էն մարդիւն ընչի՞ գնացիր. դիւ էրդիւմ էր արեր, չիեր։

—Ես գնացի, Թաքաւոր կեամին թողեց, գնաց։

Կնիկ դիւռ բացեց. էդա մալ, ապրանք իչ տըրաւ, չօրս տեղով խուննան կտռաւ։

էկան վըր մէմէկու ուրախացան:

Մալ ու ապրանք քեշեց ներս, դուրս գնաց, նստաւ ուր սու-ֆան՝ առուտուր արաւ:

Մէկ օր տեհաւ Թաքաւորի փօշանին էկաւ. գնաց սուֆնէ դռնէն Թափ ընցաւ. գնաց.

Մանուկ կանչից.—Դիւ ի՞նչ մարդ էս.

Ասաց.—Ես ի՞նչ մարդ կըլնեմ, քե ի՞նչ կայ իր ձիկ:

—Ես քե խարցուցեմ, դո՛ւ կեհաս, ի՞նչ մարդ էս:

Ասաց.—Թագաւորի փօշանին էմ. կեհամ բուայաքի մէջ. էրկու բեռ փարայ մէկ սիֆից առնեմ, էհամ.

Ասաց.—Ես իրեք բեռ մէ սիֆից կտամ:

Գնաց փօշանին մօ Թաքաւոր, ասաց.—Թաքաւոր ապրած. մէկ մարդ, ասեմ, էջմիածնայ, ասաց. «իրեք բեռ փարայ մէկ սի-ֆից օրողկեմ»:

—Օրողկի էն մարդ բե. էն մարդ Թաքաւորի խազինայ ի կոռի, եա խազինա ի գնալի:

Օրողկեց. Մանուկ տարաւ մօ զինք, ասաց.—Դիւ ի՞նչ մարդ էս, որ էրկու բեռ փարայ կօրողկես մէկ սիֆից, դիւ Թաքաւորի խիզինէն էս կոռի.

Ասաց.—Աստուածն ի տուե ընձիկ:

Ի՛շ որ ես ձե խսա արեր եմ. ըսկուն խսա արաշ. «ծնայ գնա-ցի, Չինայ Թաքաւոր գնեց. ծնայ արաց».

Թաքաւոր ասաց.—Այ տղա՛, գնա՛, քե դասուր էմ տուե. ես եմ ժողովուրդին փորձի, օր մը ձի ձեռք բռնող կա՞յ, չէ չկայ. մը-կայ իմցայ ու կայ:

Մանուկ էկաւ տուն, վըր ֆուլֆըքին, ուրախցաւ. Աստուած քե երկար կեանք տայ, դիւ էլ վըր քօ լաճուն ուրախանաս:

14

ԼԱՒ ԿԻՆ ԸՆՏՐԵԼ

Նորդուզի Ցիմ գիւղի բարբառով *

Խարուստ մարդմ կըլնի, կերթայ, Թաքաւորի աղջիկ կուզի. Թաքաւոր կասի.—Աղօրթ դու խարուստ մարդ էս, ես Թաքաւոր եմ, ամա դու չը գիս զախմ էս. եմ աղջիկ կուզես, ես ճաղդ կուզեմ, խարիր ոսկի ճաղդ տաս, խարիր էլ արպըշըմէ խալաթ։

Տուեց ու ասաց.—Եմ խարս ճազրի, ես դեամ, տանեմ։

Ասաց.—Կուզեմ, վաղն էլ արի, տար։

Էկաւ, գնաց, ուր խարս բիրեց։

Էն քեաղքի բուճար ժխո էն էր. էն կը տանէր, էն կը բիրէր։

Էլաւ ուր լաճ պսակեց. իրեք-չորս օր արաւ խարսանիս։

Խարսանիս պըլաւ, էն գշեր իչ փեսէն տեհայ մօ խարս, խէր ասաց.—Առա եմ մատնէք, տար, Թալ քիւ նշանածի ծուց, իչ խապար կտայ քե, գեաս, ըղի ասես։ Տարաւ, նշանած քնուկ էր, Թալեց ծուց։

Որ Թալեց ծուց, խարս ղանչեց.—Այ բուճարի լաճ, իչ ճամբախ իչ դու կեհաս, իհայլա փուշ կանանչի քիւ ճամբախ. իչ ջառտուր անես, Աստուածութեն քիւ ձեռնով չըբիրի, հա քիւ առ ու տուրին մէջ կոտռիս. չայիրին չիմանին մէջ իչ քէլես, իչ կակուղ ի, քիւ ոտաց տակ փուշ կանանչի։

Լաճն ղըւրաւ, էկաւ, ասաց խօր.—Այ խէրիկ, ծընայ ասաց։

—Այ տղա, ասաց. վազի, քեօ մօր ասա, գեա։

Վազեց, մէր բիրեց. մէր էկաւ դայ։

Ասաց.—Գնա, էդա Թաքաւորի աղջիկ տար բաղիմ Թաքաւոր արա։

---

* Պատմած է Պետրոս Վ.Երսոեանը:

Մատնիք մընէն առեց, տարաւ. թալիմ թաքաւուր արաց։

Ինոր դըկըցքիր ասին.—Մենք քեօ լաճ պսակինք. պտի էհանք Սամբօլ, մե մալ սաղացուցէք, գեանք։

Ասաց.—Իս եմ լաճ դեռ չեմ պսակե. նոր տը պսակիմ։

Էլաւ, գնաց վոզիրի աղջիկ ուզեց. վաթսուն ոսկի ճաղդ ուզեց. վաթսուն ոսկի տուեց, վաթսուն ոսկու էլ խալաթ տուեց։

—Եմ խարսի թասարուֆ տըսիք՝ եա տը գեամ, եմ խարս տանեմ։

Վոզիր ասաց.—Իրեք օր ձը մոհլաթ տուր, վըր չորսին արէ, տար։

Իրեք օր մնաց. չորսին բիրեց ուր խարս։

Իուջին դշեր ի՛շ լաճ տ'էրթէր մօ խարս, խէր ասաց.—Ա՛ռ եմ մատնիք, տա՛ր թա՛լ նշանածի ծուց, ի՛շ խապար կասի, գեաս, ձի ասես։

Մատնիք տարաւ, թալեց նշանածը ծուց։

Նշանած քնիր, ակլաւ. էն էլ մէկէլացի ասաց.—Այ թուճրրի լաճ, իշ ճամբախ կերթաս, օղուրսուզ ըլնես, քիւ մրազին չխասնիս...։

Տղէն գնաց, խօր ասաց։

(Զըմէի էդոնք սիրական ունէն.)

Ասաց.—Այ տղա՛, գնա՛, քիւ մէր կանչը. Էմէլ գնաց, կանչեց։

Ասաց կնկեան.—Գնա՛, մատնիք մընէն առ. աղջիկ տար, թալիմ վոզիր արա՛։

Իլաւ, տարաւ թալիմ վոզիր արաց։

Էդա թուճար առաւտուն գնաց, ռէսի աղջիկ ուզեց։

Ռուէս քառասուն ոսկի փարայ ուզեց, քառասուն ոսկու էլ խալաթ ուզեց։

Տուեց, ասաց.—Եմ խարսի թասարուֆ տըսէք, տը տանեմ։

Ասաց.—Տաս օր ձը մօլաթ տուր, նոր առ տար։

Տաս օր վըրէն ընցաւ, նոր գնաց, խարս բիրեց։

Բիրեց, էկաւ, արաւ խաղ, խարսնիս։

Էն յառջին դշեր խէր ասաց.—Տղա՛, առ մատնիք, տար, թալ քիւ նշանածի ծուց. ի՛շ խապար կըտայ, գեաս, ձը ասես։

Մատնիք առեց, տարաւ թալեց ծուց։

Իշկաց, ինչխ բիրած, դրած թախտի մէջ, սկուն մնացիր կայնուկ։

Էկաւ, խօր ասաց.—Խէրի՛կ, մնացիր ի կայնուկ։

—Գնա՛, ասաց. դիրմէլ իշկայ։

Էմէլ գնաց, կայնուկ ի։

Էկաւ, խօր ասաց.—Իշկացի, կայնուկ ի։

—Տղա՛, գնա՛, ձեռ տու ինե. պալէի քնե հաւէճ իմե կայնըմանց։

Լաճ գնաց. իշկաց, կեօ քընէ կայնըմանց, մատնիք թալից կեօ

ծուց։ Խարս ակլխաւ, ասաց.—Այ թուճըրի լաճ, իշ բանի՝ ձեռ թալես, Աստուած քեօ ձեռնով բերի. լիշ բան էնես, Աստուած մէկն խազար դարձուցի, իշ ճանապար կեհաս, քիւ ոտըջկքիր փուշ ընի, կանանչ դառնայ. քեօ խօր, մօր անէծքի տակ չմտնիս։

Լաճ ըլըրաւ, էկաւ, ասաց.—Խէրի՛կ, ձը ծնայ ասաց։

Ասաց.—Էսա կնօ եմ խարսն ի, գնա՛, քընի։

Խարս, փեսէն գնացին, քընան։

Առաւոտուն էդ գըկլիցքիր ասին.—Մենք տ'էրթանք թուճռութեն, դիւ մի խեա չըլնըս, չենք էհայ Ստամբօլ։

—Խա՛, ասաց.—Գնամ։

Էլաւ, ուր թասարուֆ տեհաւ. էրթէր, տղէն ասաց.—Խէրի՛կ. դիւ նիստ, ես տեհամ։

—Որդի՛, ասաց. դիւ ջհելիս, գնա մօ քիւ խարս։

—Զու մըկայ դօլազի, ես էղայ կնկեան տէր, ես տեհամ։

Ասաց.—Ես քե տանեմ, ապայըեմ եմ մարդիր։

Գնաց, ասաց. Ամանաթ ձե եմ լաճ։

Ինոնք ասին.—Պտի տանենք, ինչխ դիւ մե կը տանէր, բերէր։

Էլաւ վեր, էդա մէկ աւուր խարս թողեց, գնաց Ստամբօլ։

Մէ չխուտ էլ, կեօ ինոր տուն մէջ էն քաղքին ի. ելաւ վեր. ուր չորեր թալեց ուր իւե, գնաց, տնիր մօն էկաւ, ասաց.—Ես էհամ, եմ չորիր ծախեմ։

Գնաց, մտաւ էն թուճըրի տուն։

Էն թուճըրի խարս էկաւ մօ չխուտ պազար, էդա չխտու աչք ընկեաւ խարսի աչք, ուչք ընցաւ։

Էդա զատ մատեր վերցին, թալին, ասին.—Ջխուտ խատաւ, մենք պազար չընք անի։

Պաղ ջիւր թալին չխտու յերսին, չխուտ խատած տեղէն, ակխաւ. ուր ճօթ մօթեր առեց, գնաց ուր տուն։

Սկուն մեռուկ մարդու ցեղ գնաց, էկաւ։

Գնաց մէ պառւու մօտ, մէ ոսկի տուեց.—Պառա՛ւ, ասաց, Ֆելանի խարս բերես եմ ձեռաց։

—Ի՞չ տաս ձը, որ բերեմ իը քեօ ձեռաց։

Ասաց.—Մէ ջուխտ սոլ կեօ մօ ձի ի. ինու կարուած պիթուն ոսկի ի, ինոր բերնքիր արծաթ, ոսկի բանցուցած ի։

Գնաց, բերեց, տուեց պառւուն, պառաւ առեց, գնաց մօ խարս,

Գնաց խարսի իրես պաղեց, ասաց.—Ես էկեր եմ քե տես։

Ասաց.—Պառաւ, դիւ եմ աչիչ գեաս, եմ գլխիւն գեաս։

Էլաւ, սոլեր չանց տուեց, ասաց.—Բերեր էմ քե հասիյա։

Խարս ասաց.—Էսա սոլեր մարդ մարդու հասիյա չը տանէր. բան կայ մըջ էնա սոլերաց. արի՛, սաղն տար։

Ասաց.—Չէ՛, ժլոռ քիւ ճաշիյան ի։

—Բարով խօ իկճ, ասաց, դէ՛, գնա՛։

Զխուշ հա կեհայ պառւու տուն կգեայ, իշկայ թի պառաւ կգեա՛յ։

Պառաւ էկաւ։

—Պառա՛ւ, ասաց. դիւ բիրէ՛ր վըր ճամըխին. ի՛շ ասաց։

Ասաց.—Ծօրով էմ ճամըխէն բացե. զաշ մէլ տաա։

Ասաց.—Մէկ չապիկ էլ ձի կայ, յըմեն արպըշում ի, ոսկի, արծաթ կեօ մէջ բանցըցուկ։

Էլաւ, փաթըթեց, տուեց, պառաւ տարաւ։

Տարաւ գնաց խարսի մօտ, բարև տուեց։

Ասաց.—Պառա՛ւ, դիւ ընչի էս իկե։

Ասաց.—Էսա չապիկն էլ քե խըմակ իմ բիլե։

Ասաց.—Պառա՛ւ, էսա բանիը մարդ ճաշիյա չտանի. տը գեաս, ընձիկ սաղ ասեա։

Ասաց.—Ի՞շ քենէ պախեմ, իշ Ասըծուց. մէկ ջխուշ քե տըսե, սիրտ ընկե թըլխ քե։

Ասաց.—Որ էն ջխշու սիրտ ընկե թըլխ ձի, եմն էլ ընկե թըլխ ջխուշ. ինու յօդի տըկէն թըլխ լաղըմի. թը գեայ չոււմ եմ յօդին. մէկ համամ մի չինի մէջ էն լաղմին։

Պառաւ գնաց, ասաց. ջխուշ լաղմ զարկեց, համամ չինեց մըջ էդ լաղմին։

Էկաւ, նստաւ խըտ խարսի կշտին։

Խարս ասաց.—Դիւ եմ ասածներ արէ՛ր։

Ասաց.—Խա՛։

—Ե՛լ, իշկանք, ասաց խարս։

Ջխուշ առեց խարս. գնաց, լաղըմի մէջ իշկաց։

Խարս ասաց.—Դիւ էրկու ճամաշան բիրեա, դնիս մէկը նա կող, մէկը նահան։ Էրկու ոսկի խնձոր բիրիս, դնեա մէկ ճամաշանի նա կող, մէկ նահան։

Խարս իշ ասաց նահան. նա բիրեց։

Էկաւ, գնաց մօ խարս, ասաց.—Դէ՛, ըլի վե, ճիյֆ անելիւ գեալս ի։

Ասաց.—Չէ, գեալս չի։

Ասաց.—Ընչի՛։

Ասաց.—Դիւ քիւ մուրուս, աչք իրեա գնդիս, գեաս մօ ձի։

Ջխուշ էլաւ վեր, կեհէր ուր մուրուս գնդէր. գնաց չոււ յօդից դիւս, խարս ղանչեց։

—Արի, նի՛ստ, եա կը գնդեմ, մե էրեմուս թո մօ մեր մնայ. ժամանակմ եմ խէր դալաէ էր. եա մընէն ուսեր էմ։

Գնաց, ուր մուրուս լուաց. խարս նստաւ, դանակ սրեց. էկաւ ջխուտ, նստաւ ինև. դանակ թալեց, դանակ չկտրեց, ասաց.—Գնա՛, աղէկ լուա՛. աղէկ սրտև։

Էն էլ նստաւ, դանակ սրեց, տուեց գլուխ, մազեր դէմէն կը փախնէր. դանակ տուեց, մազեր բերեց տակ. դանակ թալեց, ջխտու վիզ կտրեց։

Որ ջխտու վիզ կտրեց, էչ որ գլխու, մուրսի դրուածք յրմեն քերդեց, կաշին վիլուց. գլուխ ջանդակ դրեց մէկ ղութի։

Ջխտու գլխու կաշին քեչեց ուր իրեն. առաւտուն գնաց, ջխտու տուֆանգ բացեց, նստաւ, առ տուր արեց։

Դուրս հալխ յրմեն էկան պարաւան առուտուրը, ինոնք որ արշինը կուէն էրկու ղուռուշ, էն կտէր քսան փարայ։ Դուրս ինչ տուֆանգդար կար՝ գնացին արզըհալ տուին թագաւորին.—Էն ջխուտ ծրնայ կը ծախի, ծրնայ պազար կանի, չգեան մեր վրէն ալիշվէրիշ։

Թագաւոր էն ջխուտ կանչեց.—Դիւ ընչի ծնայ պազար կանես։

Ջխուտ ասաց.—Իմ մալն ի. ես սկուն կը ծախեմ։

—Օղորթ կասի, ուր մալն ի, կը թալի ջիւր։

Մէկ չարաթ կեհէր, սկուն առտուր կանէր. յաղըմի մէջէն կեհէր ուր յօդէն։

Օրմ' ջուապ տուին.—Թուճարի լաճ էկաւ։

Ցրմեն, էչ մընէն հազ կանէն. գնացին յառաջ, առին էկան, ասին.—Դիւ էչ թուճար էս, մէկ ջխուտ տուֆանգ կը բանցուցի, առտուր յրմեն ընկե վրր ինոր։

Ասաց.—Ես էլ տը գեամ, տըսնամ։

Էկաւ, գնաց, տըսաւ, բարև տուեց, բարև առեց։

Ինի, խարս իրկան կը ճանչնայ, իրիկ չճանչնայ։

Տեղ չանց տուեց, ասաց.—Նիստ։

Ջուր յէվարին նստաւ, ասաց.—Մ'էրթար, խը քե գործ կայ։

Իլաւ, տուֆանգի դիւռ չինեց, մոմ կպուց. էդա մաղազեն ի վեր տարաւ ուր յօդէն։

Թուճարի լաճ ասաց.—Էսայ ջխուտ տանէ իմ գլուխ փոթորանք խանի, տանի, իմ վիզ կտրէ՛։

Տարաւ դնաց համամի մէջ. ինոր ոսկի խնձորքիր տըսաւ, ասաց.—Մէկ խնձոր առ քե։

Տարաւ յօդէն։

Մարդն կիչկայ, կասի.—Էսա էչ պախս ի, ջխուտ մըջ իմ յօդին։

Կը նստին, պեճեմ կը մնայ, ջխտուն կասի.—Ցի՞ւր ի քեօ կնիկ։

—Ես կհամ, իմ կնկեան ասեմ, գեայ, ասաց. գնաց ուր ջխտու կաշին դրեց դայ. ուր չորիր խադեաւ, էկաւ։

Իրիկ կիչկայ, կասի.—Էսա իմ կնիկն ի, նա էչ պախս ի։

—Գնա՛, քիւ իրիկ կանչի, գեայ. կասի։

Էմէլ գնաց, ջխտու կաշին քեշեց իրեն, էկաւ. կայնաւ ուր յեռջեւ էգա քուճըրի լաճ ասաց.—Որ դիւ էկար, քեօ կնիկ ի՞շ էլաւ։

Ասաց.—Կեօ դայ ի։ Ասաց.—Գնա՛, առ բի. էրկուս խիարաց էկէք։

Էմէլ գնաց, ջխտու կաշին թալեց դայ, էկաւ։

Իրիկ խառնից.—Ջխուտ կդեայ պկեճ մը, պկեճ մը դիւ կդեաս. էաս եմ յօղէն ի, դիւ եմ կնիկն էս. էաս ի՞շ պախս ի։

Կասի.—Ես քեօ կնիկն եմ. ձի չե՞ս ճանչնաս։

Կասի.—Ես քի կը ճանչնամ, ջխուտ չեմ ճանչնար։

Էդ տեղ ի՞շ իլե, չիլե, իրկան կասի։

Կասի. Դիւ ձի չը՞ս խաւատար, իլի. Նահան սապաքի բիրան բաց։

Բացեց, տըսաւ կեօ ջխտու գլուխ, ջանտակ։

Ասաց.—Ծնայ արաւ ձի, ես էլ ծնայ արի։

Կնիկ ասաց.—Գինաս, ինչխ անինք՝ որ մենք էն ջխտու ջան-դակ պախինք, մարդ չը յիմնայ։ Ես կեհամ, էն տուֆան առտուր կանեմ, դիւ գնա՛, մէկ թուղթ գրի քիւ մօտէն, բի ձի, ասա՛. «Բիւ խէր խիւանդ ի. ասեր ի, եմ տղէն թը գեայ, խասնի ձի»։

Իլաւ թուղթ բիրեց, տուեց Նահան. կարդաց, էաց.—Էլի, հանք թաքաւորի մօտ։ Գնացին մօ թաքաւոր. էգա ջխուտ ասաց.

—Թաքաւոր ապրած, եմ խէր կեօ խիւանդ ի, ես կեհամ, թի որ իս էկայ յետ, ժխո եմ տուֆանճի. թի իս չէկայ, եմ մալ ապրանք քաա-լիմ էաս մարդ։

Թաքաւոր էլաւ, էգա թուղթ մօճրեց, տուեց քուճըրի լաճուն։

Էկան, Նատան առ տուր։

Ջխուտ տարին, խորին։

Թուճըրի լաճ խօր պախս արաւ, ասաց.

—Եմ կնիկ ծնայ ի արեւ։

Թուճար էկաւ, խարսի ճակատ պագեց։

Ասաց.—Քեօ ասըլ զասկ ըլնի։

Ես փողիրի աղջիկ դաստուր տուի գնաց։

Ասաց.—Ես թաքաւորի աղջիկ դաստուր տուի, գնաց։

Ես գիտցայ ի՞շ կէր մօ ինոնք։

Քիւ իրեն սիւտակ ըլնը։

Էն տեղ կերան, խման ուրախացան։

Աստուած էլ քի ուրախացնի։

I5

ՏԱՏ ՈՒ ՊԵՏԱՏ

Նորդուզայ Ցիմ գիւղի բարբառով*

Մէկ նախըրըթ մը կէր, գնաց մօ ուէս, ասաց.—Նախըրթու-թին տաս ձի, ես ըմեն օր չախսեմ։

—Այ տղա՛, ասաց. Նախըրթութին տուեր էմ քե, գնա՛. քեօ հախ առնես, քեօ խացն էլ ժողուես. տանը դըօխ մէկ ղիտը ցորեն քե հախ։

Նուսուն տարի էլաւ նախըրըթ։ Մէկ օր, սահմ Մայիս ամիս, դաւար պլախաւ-ցյուաւ. մողեր թալին ինե-թըխ դաւար. պէզրա., նստաւ լացեց, ասաց.—Տէ՛ր Աստուած, եան եմ խոզին մա, եան դմաք մը տուր ձիկ, խերէք ի ես էսա չարչարանք քեաշեմ։

Դուրխ դաւար հեռըցաւ մէ մէկուց. գնաց դաւրի խաւ։

Դուրխ Աստուած կեններանայ (գանձ) ըսացեց, տըսաւ էղա նախըրըթ ասաց.—Ես նախըրըթ եմ, չեմ կանայ մընակ ուտի, համ, ուէսին ասեմ, խորացով ուտենք։

Ուէսին ասաց. ուէսը չխաւատաց։

Նախըրըդ ասաց.—Վալա, պիլա, թիլա, ես քե չեմ խափի, արե մտի, էհանք, բէրենք։

Էլան ուէս, նախըրըդ, ուէսի մշակ-ղուլ գնացին մըր կեններանի բերնին, տըսան։

Նախըրըդ մտաւ ինե, մաղով տուեց ուէսին, ուէս տուեց ղուլին. ղուլ իրեք դեղյա եխ արաւ, բեռներ լցեց։

Ցետին մաղին ուէս ասաց ղուլ ին.—Գնա՛, նախըրըդի վէզ ղարմնք տաննենք, ուտենք։

Ղուլ ասաց.—Մեղք ի, Աստուած տուեց ինոր, էն էլ բերեց, տուեց քե։

* Պատմած է Պետրոս Վերտոյեան:

Ուէս կասի.—Ես քեօ աղէն էմ. կասեմ ղարկ, ղարկ. ի՛չ կասեմ, եմ խօսքով արա՛։

Գ.ոլ էկաւ, նախըրըդին ասաց.—Քեօ վիզ կտրեմ։

Ասաց.—Տա՛տ պէտատ, ես ի՛չ էմ արե, ես կեճճխանէն տուեր եմ քե, եմ վիզ մի՛ կտրի։

Ասաց.—Չէ՛, ես սկուն չեմ անի, քեօ վիզ տը կտրեմ։

Էդա նախըրըդ իրեք խատ անդին քար էդա կեճճխանից վերուցած էր, ասաց,—Գ.ուլ, դիւ ու քեօ Աստուած. եմ գլօխ պտի պահիս, տու էդա իրեք քարեր. տար, տո՛ւր եմ կնկան, եմ կնիկ էրկու խողեով ի, թե որ ընձիկ լաճ կըլնի, անուն դնի Տատ պէտատ, թե որ աղջիկ կըլնի, յինք գիտի։

Էդա նախըրըդի վիզ կտրին մըշ կեճճխանին։

Էդա կեճճխանէն ի՛չ կէր, չկէր, տուան էկան։

Խըլուսուն նախըրըդի կնիկ գնաց մօ ուէս, ասաց.—Դո՛ր ի եմ իրիկ, դո՛ր օղորկըրես, գնացես։

Ասաց.—Նախըրըդ ծուռ մարդմ՛ էր, ո՛վ գիտի՛ ուր ի գնացեր. գնացեր ի ուր խօր գեօռ։

—Մենք ըմենով տը մեռնինք սոված, յէվարին խաց չի բերի։

Էն մնաց ուր հալին, ինոնք բերին կեճճխանէն կերան։

Մնաց, հայեամ մը վրէն ընցաւ, Գ.ուլ ձեռ տուեց ճեպ, էն իրեք անդին քար մըջ ճեպին տըրաւ, էդա քարեր դեաղտըկութենով բերեց, տուեց նախըրըդի կնկան. էն խսէն ասաց։

Ժամանակ մը վրէն դնաց, Աստուած լաճ մը տուեց նախըրըդի կնկան, դըկեցնէր էլան, ասին.—Անտէր տղայ ի, խայ քըխատօնեայ ի, չըլնի մոռնի անկնունք։

Էլան տղէն տարին ժամտուն կնունք։

Տէրտէր տատմօր ասաց.—Ի՞չ անուն դնինք վրէն։

Տատմէր ասաց.—Մօր կանչէք գեայ, անուն դնի։

Մէր կանչին բերին, էկաւ։

Տէրտէր խարցնեց.—Իսօր անուն ի՛չ տը դնինք։

Ասաց.—Տէրտէ՛ր, որ թի ձի կը խարցնես, անուն դիր Տատպէտատ։

—Այ մամա՛, վիր անուն կայ Տատ պէտատ մըշ խայ քըխատօնին որ քեօ տղի անուն դնեմ Տատ պէտատ։

—Չէ՛, ասաց. ուր խօր վասիեարքն ի, խօր վասիեար ես չեմ կուրեսի։

Տղէն կնքեցին. անուն դրին Տատպէտատ, բերին տուն։

Տղէն օր աւուր ջօջացաւ. Ֆահմաւոր իլաւ։

Մէկ օր մօր ասաց.—Եմ խօր սանահար էշ ի, բանցուցեմ։

Մէր ասաց.—Քեօ խօր սանահար ճալղնեութեն ի։

—Ձի տու, առը գնա մօ ճալպանս։

Տղի ձեու բռնեց, տարաւ գնաց մօ ճալպանս։

—Ճալպանչի, իմ տղէն բերեր եմ ճալպանութիւն ուսուցես։

Ասաց.—Շատ լաւ կասես. թո կայնի տաղ, ընձի սմբրաc բերէ, ձիու ոտ բռնի, գլօխ բռնի, ես ուսուցեմ։

Լաճն մէկ օր մնաց դայ, իլաւ փախաւ, գնաց մօ մէր, ասաց՝
—Տատ պէտատ, դիւ ընչի՞ էկար։

Ասաց.—Վալա՛, ձին մէկ օր լաճկի զարկէ մըջ իմ բերնին. ես չեմ կանայ ճալպանութիւն անի։

Ասաց.—Քեօ խօր գեօ՛ռ, գնա՛, մըջ ճժերաց խաղա՛։

—Չէ՛, ասաց. ես իմ խօր սանճաք քինէ կուզեմ։

Ասաց.—Քեօ խօր սանճաք խայարութիւն էր։

—Իմ ձեռ բռնէ, տար մօ խայարճին։

Տարաւ մօ խայարճին, ասաց.—Իմ տղէն ուսուցես խայարութիւն, մենք յըմենով չախուենք։

Ասաց.—Թո մնայ մօ ձիկ, թել քէշե աստղ, ջուր տայ իմ ձեռ, ես ուսուցեմ։

Մէկ օր մնաց դայ, փախաւ էկաւ։

Մէր ասաց.—Տատ պէտատ, ընչի՞ էկար։

Ասաց.—Ես չեմ կանայ խայարութիւն անի, օր մը ասեղ մտնի իմ ձեռ, ճարալու անի, մտնի իմ աչք, քոռ անի։

Ասաց.—Դիւ սանճաք չարվար, գնա՛ մըջ ճժերաց կան արի պարապ-սարապ։

Ասաց.—Իմ խօր սանճաք ի՞նչ էր, ձի դիր իմ խօր սանճաքին։

Ասաց.—Քեօ խէր խիւս էր, խուսութիւն կանէր։

—Իմ ձեռ բռնի, տար մօ ուստին (գութանի սարք շինող), թը ընձի անի ուստայ, ես ուսնեմ։

Ձեռ բռնեց, տարաւ գնաց մօ ուստին, ասաց.—Իմ տղէն ուսուցես ուստութիւն, կըլնի ուստայ, մենք ըմենով կը չախուենք։

Ասաց.—Թը մնայ ըս տու, փէտ տայ, ուրագ տայ, ես ասեմ ուրագ ծընայ դիր, տաշէ. ուսի քո խըմակ։

Մնաց դայ էրկու օր, փախաւ, գնաց։

Գնաց մօ մէր, ասաց.—Տատ պէտատ, ընչի՞ փախար։

—Վալա, ասաց. ես չեմ կանայ էն ուստութիւն անի, ուրաղ մէկ օր դպնի, իմ ոտ կտռի. ես էն սանճաք չեմ անի։

—Որ դիւ չես անի, հա գնա՛, կան արի, ես իշ սանճաքի վրէն կը դնեմ, չես անի։

—Իմ խօր սանճաք քենէ իլանի կուզեմ։

Ասաց.—Քեօ խօր սանճա՞ք։ Ասաց.—Խա՛։

Ասաց.—Քեօ խէր տարին տասուերկու ամիս Ճախրճի էր։

—Ահա՛ն, մէրիկ, ես իմ խօր սաճաճաքին խոե կան դիգի. իմ խօր սաճաճաք դառայ, իմ ձեռ բռնի, տար մօ ուէս, ընձի անի Ճախրճի։ ես որ չեմ կանայ Ճախրճի էղնի, ընձի անի հորթարած։

Ձեռ բռնից, տարաւ մօ ուէս, ասաց.—Իմ տղէն անես որթկարած, իմ լաճու խէր դնաց կուրխաւ, իմ լաճ անես որթկարած որ մենք ըմենով չախուենք։

—Այ տղա՛, ասաց. դու չըմէի մանտր ես, կանմա որթկարածութին անես։

—Նախրճութին չէ, խըմայ որթկարածութին կանամ։

—Այ որդի՛, դնա յէռջև որթկնեկաց, ես քե կտամ յըմէկ որթկնեկաց մէ մէկ գիտր ցորեն. կիրակնեց կիրակի քեօ խաց ժողուէ, կե։

Ձում աչուն իլաւ որթկարած, աչուն առեց խարիր գիտր ցորեն, յիսուն գիտր ծախեց. տուեց, խարիր չարխի (հինգնոց կամ վեց դըշնոց գրամ), խարիր չարխին, սեեմ, տուեց ուր խըմայ չորիլաւ, մօր ասաց.—Սա մէկ տարի առեր եմ որթկարածութին, խարիր գիտր ցորէն էմ առեր, ես ծախեր եմ յիսուն գիտր, տուեր էմ, չարխի եմ առեր, ես իմ խօր եղսուն տարուայ Ճախս քինէ դաւի կանեմ, յէր ի, չէրեայ, ընձի չանց տու, ընչի չանց չես խտայ։

Ասաց.—Քեօ խէ՞ր ծուռ մարդ մէր, կը՛ փճըցուցէր. չըմ գիտի յէր ի։

Մօր վրէն զօրեց, ասաց.—Դու իմ խօր Ճախս տուի ըրիես, ընձի չանց տար, չէ՛, քե կսպանեմ։

Մէր էլաւ վեր, ուր ախուն մէկ անդին քար տուեց, ասաց.
—Որդէ՛, էսա ի քեօ խօր Ճախս։

Ասաց.—Է՞ն է, ես ղապուլ արի. տա՛ր դնա մօ զարկեար, խուրցի, ըեր, ընձիկ պէտք ի։

Տարաւ դնաց մօ զարկեար, զարկեար ասաց.—Այ մամա՛, ես խոռ ղեյմեթ չըմ գիտի։

—Դու խալալ մարդ ես, ի՛չ կտաս, տուր։

Էլաւ, մէ մեծօֆ ոսկի տուեց, կնիկ առեց, էկաւ տուն. լաճՏա՛ն պէտասս յեվարին էկաւ.—Այ մէր, ասաց. դու տարար, դնացիր. ի՛չ տուեց քե։

—Մէ մեծօֆ ոսկի, ասաց.

—Մէրէ՛կ, դնա մօ Թաքաւոր, մե մէ ծեճըրկի տեղ տայ, ըս տեղ օտարութին ի, տեղ չկայ. ընձի կը Թքուցեն, կը մըրեն, կը մեն դիւա։

Մէր գնաց մօ Թաքաւոր, տեղ ուզեց. Թաքաւոր գրեց, տուեց, որ արտի տէր դաւի չանի։

Ցէվարին տղէն էկաւ, խարցնից, մէր ասաց.—Գնացի մօ թաքաւոր, գրից, տուեց։

Տաս պէտատ ասաց.—Խըլուսուն դնմ, սաս թաքաւորին որ ուր ուստէն տը դնայ. ուր սարի պէս չինի։

Կնիկ գնաց, ասաց. ինոր վրէն ծծղաց թաքաւոր, սինօղքեր ծծղացին, վօզիր ծծղաց, ասին։—Այ մէր. թաքաւորի սարէն, թաքաւորին ի լայեղ. դնմ, քե խըմայ չինի։

Ասաց.—Ձե ինչ կայ, ուստէն ձի չանք տուէք։

Վօզիր ասաց.—Թաքաւոր ապրած, խեղճ ի, գիր մի տուր ձեռ, էհայ. մէ սիրուն մէլ ինոնք ծծղան վրէն, թի գեայ, մնայ մըշ ուր ճալին։

Տարան գնաց մօ ուստէն. հա էսա փողանն ի, հա նահան, նահան չէ. նահան, նահան գիւռ չէ, էն մէկէլ, գնաց, գնաաւ. թուղթ տուեց ինի։

Ծծղացին վրէն, ալին թըռանայ.—Դնմ, քե յիւրիշ ուստայ գնաի, ասին։

—Դիւ ձի փարէն իշկացէք. թաքաւոր ձե տուե մէկ ոսկի, գիւ տուէք էրկու ոսկի. ձի ինչ կայ։

Էնա մէկ ուստէն ասաց.—Աղօրթ կոռի, մեր փարէն տայ, էհանք։ Էլան ընկեան խառ ւնկեան, գնացին։

Գնացին, տեղ էրկէնք, լէնք չափին. թաքաւորի սարէն ինչ չէ-ըիս էր, չինին։

Տաս պէտատ յէվարին էկաւ.—Այ մէրիկ, ասաց, ինչ արիր։

—Բերի, չափած ի, որ առաւտուն չինին։

Լաճն բանի չխառուիր, որթկարածի. կեհայ ուր բանին. ինչ ընի, մէրն ի։

Շէնըրկներ չում կէս չինին, փարէն խըլըսաւ։

Ցէվարին լաճն էկաւ, մէրն ասաց.—Փարէն խըլըսաւ։

Ասաց.—Մէրիկ, էն եմ խօր մէկ տարուան ճալսն էր, ալա մէկէլ էւսուն տարուան ճալս։

—Ձկայ, քեօ խէր մէկ ծուռ մարդ էր, կուտէր բռաղի, բուրունճի, կը փըճըցուցէր։

Լաճ ալս տուեց.—Սաճ ալը բերիս, եաճ քե կօղաննեմ։

Գնաց մէկ անդին քար բերեց, տուեց լաճուն.—Էսա ի, էլ չկայ։

Ասաց.—Տար մօ զարկեար՝ ըսկուն խուրեի, չինի։

Մէր գնաց, խուրեց, մէկ մեcof ոսկի էլ բիրեց. տարաւ, գնաց էդա ոսկիքտեռով ուր սարէն չինեց։

Շինեց, ինոր դիւռ. սուաղ, էրդիքներ մնաց։

Տաս պէտատ ասաց.—Մէրիկ, էսա եմ խօր էրկու տարուան

հալս, դո՛ր ի էշուն տարուան հալս, հաց կը բերես, հաց քի կը-պահեմ։

Զարէն մօր կտուեց, գնաց էն մէկէլ քարն էլ բերեց։

Տարաւ խուրձեց, էմէլ մեծօք ոսկի բերեց. ճենլըկ չինեց, բմըմեց։ Գորխ գնաց մէկ ձեռ չոր ուրին, մէկ ձեռք էլ թագաւորական չոր Տատ պէտատին առեց։

Տատ պէտաս թագ մը դրեց ուր գլօխ, գնաց. նստաւ նոր չինած սարի մէջ, էլաւ թագաւոր։

Ցերեկնեց կգեայ, կը նստի թագաւոր, առաւօտն է կըլի, հորթիկներ կը տանի։

Ցերեկնեց որ կը նստի թագաւոր, կը դանչի դաշիմի թագաւորին մարդիկ, կասի.—Որ թագաւորի մօտէն կըլէք, քիչերնեց առն կեհոք քնելու, եկէք, նստէք եմ մօտ, խօսանք, ձե կը չախեմ։

Գորխ էն մարդքեր կդէն, կը խօսան կեհէն։

Մէկ օր էդա Տատ պէտաս նստաւ ուր բախտ. նոր չորեր խաքուկ, թագաւորական թագ գլօխ դրուկ։

Էսա թագաւոր, էդա թագաւորի սինօղքերաց ասաց.—Էս օր ձեր թագաւորի դիւանն ի՞նչ կէր, ի՞նչ կը խօսան։

—Վալա՛, ասաց էն մէկ. էս օր մե թագաւոր մէկ ճարաքմ արաց. ամա չկարաց աղէկ ճարաք էնէր։

Էն թօ մնայ դայ, թագաւոր յինք ու ուր վեզիր դաւրիշի դըլլըխ խագեան, էլան բաւշիր. ժողովուրդի մէջ կան էկան. էկան ըրսան գեղ յըմեն քներ լին, էդա Տատ պէտասի յօդէն ճրագ կը վառի, աեին.—Նահանք, ի՞նչ ի։ Թագաւոր իշկաց, ասաց.—Վեզի՛ր, քըն՞է թագաւոր կայ էս երկիր։

Վեզիր գըլըրաւ, ասաց.—Թագաւոր ապրած, մէկ թագաւոր ի. դու իս, էլ ո՞վ կայ։

Ասաց։—Իշկանք, էն ի՞նչ թագաւոր ի։

Էլան, գնացին էդա հորթարած թագաւորի յօդէն. բարե տուին, մէ մութ տեղ նստան։

Խարցնեց Տատ պէտաս թագաւորի սինօղքերաց։

(Թագաւոր ու վեզիր բաւշիր նստած, կը լսեն։)

Էս օր ձեր թագաւորի դիւանն ի՞նչ կէր, թալել. թողնել. զանել, բռնել, սպանել։

Էն մէկն ասաց.—Էս օր մեր թագաւոր մէկ ճարաք արեց, ամա չկարաց աղէկ ճարաք անէր։

Ասաց.—Ի՞նչ ճարաք էր։

—Ժամանակ մը պազրկեան մը զինք պէկ բերեց, հեօղ խակեց, գնաց Սամբոլ, ութ տարուան զախիրէ դրեց ուր օղուլ ուշախի կշտին, զինք գնաց։ Գնաց, տասներկու տարի նոր եկաւ։ Մէկ պա-

գրկեան էլ Ստամբօլայ գըւրաւ, էկաւ չուռ կէս ճամբէն. էն մէկել պազրկեան գնաց, գէմ առեց ինոր. խարցնեց էն յետին յառաջինին.
—Դու քընի՞ տարուայ զախիրայ դըրիր իր քեօ կնկան կշալին։

Ասաց.—Ութ տարուայ։

Ասաց.—Ես ութ տարուայ դրի, չուր տասներկու տարուայ նոր էկայ յետ։

Յետին ասաց.—Վայա, ես ութ դրեր իմ. պալի կը վախենամ քիչ բան ի, տըսա՞ր օր տասներկու տարի չէկայ. առ էստ իրեք անգին քար, տանես տաս իմ օղուլ ուշախի ձեռ, թօ մնայ։

Էն յետին գնաց Ստամբօլ, էն յառջին էկաւ իր տուն։

Բերեց էն քարեր կերաւ, չտու կնկան։

Մնաց, հայեամ մը վրէն ընցաւ, էն էլ դարձաւ։

Էկաւ, տեհաւ ի՞նչ, կնիկ ուր հող ծախեր էր, ասաց.—Կնի՛կ, չէ իրեք անգին քար տուեր իմ, էնա մարդ բերեր, տուեր քե. դու տուն տեղ ընչի՞ ես ծախեր։

Ասաց.—Չէ՛, չտուեր ձիկ։

Քեար բերող գիտցաւ տէր կգեայ, դաւի կանի. էլաւ մէկ իրեք շահատ՝ ճարեց, ուրանց խօսքեր արին մէկ. «էստ մարդ քեարեր բերած՝ տուած ի կնկան. կնիկ կերած՝ փըճըցուցած ի»:

Էկան կայնան Թաքաւորի դիմաց։

Մարդ ասաց մէկէլին.—Դու ընչի՞ չես տուեր քարեր իմ կնկան։

Ասաց.—Չէ՞, ես տուեր էմ, էնի փճըցուցած ի։

Շահատ բերին, շահատքեր ասին.—Մենք Աստըծու խըմայ շահատ ինք, էստ մարդ մօ մեր տուեց քեարեր կնկան, կնիկ տարած՝ փըճըցուցած ի։

Թաքաւոր ասաց.—Իրեք շահատ ընի, ի՞նչ ըմ կը պըտւի։

Տատ պէտատ կը լսայ յըմեն, ինչ որ Թաքաւորի սենօղքեր կասին. յինք կասի.—Հայտէ՛ Թաքաւոր չկարցաւ շարաք անե, ես պտի անեմ. գնացէք, էն մարդքեր, էն շահատքեր բերէք ադայ։

Գնացին գիշերով էն շահատքերն էլ, էն էրկու պազրկեանքդիրն էլ բերին էկան, ձեռ դրեցին սրտըընեը՝ կայնան։

Էլան խինքն էլ կայնան Տատ պէտատի իրեւ։

(Թաքաւորն ու վըզիր ծուտն նստած ականճ կանին։)

Ասաց Տատ պէտատ.—Դուք Աստըծու խըմակ շահատ իք որ էստ մարդ իրեք անգին քար բերեց, տուեց կնկան. էստ կնիկ տարի, փճըցուցի, մկայ իրիկ դաւի կանի։

Կասեն.—Խա՛, մենք Աստըծու յառէջ շահատ ինք։

Ասաց. Տատ պէտատ.—Էդա շահատքեր տարէք, մէկ մէկ օդայ մտուցէք. իրար իրես չտեսնան։

Հերէքէլի մէկ մէկ օդայ տարան։

Տատ պէտատ էլաւ, իրեք խմօրի գլունդ չինեց. մէկը մեծ, մէկը մանտր, մէկը չըդէն չատ մանտր։

Կանչեց էն մէկ սահաթ բերեց. խարցուց մօտէն։

—Այ տղա՛, ինոնք անմեղ, դիւ մեղաւոր, դիւ սահաթութիւն Աստըծու խըմայ պտի տէք։

Ասաց.—Խա՛, ես Աստըծու խըմայ սահաթ իմ. իրեք անգլին քեար էսա մարդ տուեց էսա կնիկան։

Ասաց.—Դիւ ահճը։ Ասաց.—Խա՛։

—Ո՛ր ամիսն էր.—Ես չըմ գիտի, ես կարդացո՞ղ իմ։

—Աշո՞ւն էր, գարուն էր, ի՞չ վախս էր։

Ասաց.—Գարուն էր, վխալու ժամանակ էր. մե իրեքին վխալին էլ մէկ տեղ էր, բերեց տուն, մե արաց սահաթ։

Տատ պէտատ մեծ խմօրի գլունդ չանք տուեց, էդա մարդիւ ասաց.—Այ տղա՛, էդա քեար ծընեմ կէ՞ր, չկէր։

Ասաց.—Պաւարկե էսա քեարն էր։

—Նազենի, ասաց Տատ պէտատ. գըի որ վխալու գեախ իլի սահաթ։

Գնացին, մէկ սահաթ էլ բերին, էկան։

—Այ տղա՛, ասաց. ինք արդար, դիւ մեղաւոր. Աստըծու խըմայ դիւ սահա՞թ իս։

Ասաց.—Խա՛, ես Աստըծու խըմայ սահաթ իմ որ էսա մարդ իրեք անգլին քեար տուեց էսա կնիկան . . .։

Ասաց.—Ի՞չ գեախ էր։—Ես կարդացուո՞ր էմ. չըմ գիտի։

Ասաց.—Ձմեռ էր, գարո՞ւն էր, աշո՞ւն էր.

Ասաց.—Կալի գեախ էր, մե կալեր մօ մէմէկ էր. մենք էկանք, էլանք սահաթ։

Միջնեկ խմօրի գլունդ չանք տուեց.—Ծնեմ կա՞ր, ասաց։

Ասաց.—Պաւարկե էսա էն քեարն ի։

—Նազենի, ասաց. գըի կալի գեախ էկած, ըլած սահաթ։

Ցրտին սահաթ բերին. խարցուց արաց։

—Այ տղա, դիւ Աստըծու խըմակ սահաթութեն կանես, մըկայ մարդկերը արդար, դիւ մեղաւոր. օղորթն ասա՛, դիւ սահաթ իս էսա մարդ իրեք անգլին քեար տուե էսա կնկեան, քեօ խօգին մեղք մի անի։

Ասաց.—Խա՛, ես Աստըծու խըմա սահաթ իմ։

—Ի՞չ գեախ էր։—Ձըմ գիտի. ես կարդացո՞ղ էմ։

Ասաց.—Գարո՞ւն էր. աշուն էր, ամառն էր թէ ձմեռ։

Ասաց.—Ցրտին Ցունվարին էր, մենք իրեքով մե տներ կը սուաղէնք, մեր ձըռներ չամրաթաթախ բերեց, արեց մե սահաթ։

—Նազենի, գըե յէտին Ցունվարին էր։

Բերին էդա իրեք սահաթն էլ կայնըցըցին մէկ մէկի իրեա։

Նազենին կարդաց, մէկ մըսկու դևալս իլե, մէկ կալի դևալս, մէկ յիւլին Ցունվարին։ Տատ պէտատ փէտ առաւ ձեռ, ասաց.—Մէկ մէկու խապար չէլաւ, խաճ սաղ տ'առէք. խաճ տը մորթեմ։

Ասին.—Թաքաւոր, մենք ճանաչ չընք, մե տուեց խինդ խինդ դը։

Տատ պէտատ ասաց.—Եկէք, գնացէք, Թաքաւոր ինչ ճարար արէ, թո կենայ էն ճարարով։ Պլաւան, գնացին։

Առաւօտուն հօրթկարած էլաւ, գնաց ուր հօրթկերաց դաշտ. Թաքաւոր էլաւ ասաց.—Գնացէք, հօրթկարած բերէք, չափէք։

Գնացին, ինչխ արին, չէկաւ.—Ի՞նչ գործ կայ ձը ձի Թաքաւորուին, ասաց։

Դիր մէլ օղորկեց, ասաց.—Մի՛ տփէք, պատիկ—տաս աւրեկան ի, շալկէք. բերէք։ Տարան, գնացին մօ Թաքաւորը։

—Այ ալմ, ասաց. յէվարին ճարար արեր էմ, եմ գլօխ կը ցաւէր, չըմ գիտցե, պտի գնաս, դիւ էն ճարար կտրես։

Ասաց.—Էրկու սաճար քըո Թաքաւորութին տու ձիկ, դիւ արե, եմ տեղ նստի. ըլեմ Թաքաւոր, ճարար անեմ։

Ուր Թաք դրեց հօրթկարածի գլօխ, գնաց հօրթկարածի տեղ նստաւ, հօրթկարած գնաց բախտ նստաւ. ճարար արաւ։

Ղանչին էն էրկու պազրկեաճ բերին, կնիկ բերին, ճանաչքեր բերին։ Ցէվարին ինչխ ճարար արաց, էմէլ արաց։

Ինոնց խապրքեր չէլաւ մէկ։

Նոր Թաքաւոր ասաց պազրկեաճին.—Քեարեր բե, չէ քըո գլօխ կը կարկեմ։ Իրեք անդին քեար բերեց, տուեց կնկեան։

Տատ պէտատ դարձաւ դըլս Թաքաւոր, ասաց։—Թաքաւոր ապրած. ես քըո ճարար արեցի, դիւ էլ եմ ճարար անես։

Թաքաւոր գնաց, նստաւ ուր տեղ.—Քեո ճարար ի՞նչ ի, ասաց։

—Ասեմ էսա Էրևանայ փառն ի. վէ՛ր անունն ի Տատ պէտատ որ եմ անունն դրած ի Տատ պէտատ։

Իշան տէրտէր բերին, խարցուցին.—Ընչի՞ էսա մարդիւ անուն դրեր էս Տատ պէտատ։

Ասաց.—Վըր մե պալտը ի ինչ որ խէր մէր ասի, գնենք։

Կանչին մէր բերին, ասաց.—Ինոր խօր վասխապ էնի, Դ.ուլ ձի ասաց։

Գնացին դուլ բերին, դուլ ասաց.—Օղորթ ի. ռէս ղանչէք գեայ։

Գնացին ռէս ղանչին, բերին, դիւռ չինին. ինոնց ճարար կտրին։

—Դ.ուլ, ասաց Թաքաւոր, որ դիւ օղորթ չասես, քե պտի մորթեմ. որ ասես, երկիր մը պտի տամ քե, գնա կեր։

Դ.ուլ ասաց.—Նախըրդ կեճեխանայ տեհաւ, էկաւ ռէսին ասաց. ես, ռէս, նախըրդ էլանք. գնացինք վըր կեճեխանի բերնին.

նախըրուդ մտուցինք ինի. նահան մտցով տունց մէ, մենք լցինք բեռներ, յլտին դոլին ուէս սաաց ձի.—Գնա, նախըրըդի վիզ կտրէ: Ասի Աստուած ինոր խամար աըի, մեղք ի։ Ասաց.—Ես կտրեմ կտրի։

Գնացի որ կտրի, սաաց.—Եմ վիզ մի կտրի, կենճխաճէն յըրմըն տուիր էմ ձեռ։ Ասի.—Չէ, պտի կտրեմ։ Էդա իրեք քեար նախըրըդ տունց ձիկ, սաաց.—Տոր, տուր եմ կնիկեան, թի որ ձիկ լաճ ելաւ, լաճու անուն դնի Տատ ոլէտատ։ Ես դանի նախըրըդի վիզ կտրի։

Ասաց Թագաւոր.—Որ սլուն ի Նախչիւան տունը իմ քի:

Տատ ոլէտատ սաաց.—Ես եմ խօր արընքի խաւ կան գդէր:

Թագաւոր խղճն իտուր. Տատ ոլէտատ զինք ելաւ, ընէսի դչօխ զանից, ուր խօր արունք ուր ձեռնով առից։

16

ԵՐԿՈՒ ՍՈՒՏ ԱՍԱՆ

Նորդուզայ Ծիմ գիւղի բարբառով *

Կառեն, բուճարը էրկու մարդ խոլիւ բռնից, գլեց ուր ախչըրի յէուջն՝ յէվոըին դեհ էկան ախչար արին ճաւճի մէջ. նատան, կաթ կթին, կերան։ Մէկ էլ կաթ կթին, ասին.—Թոմնայ դայ. պազլի, ուտենք։

Բնան, էն մէկ խոլիւ ակխաւ, տըաւ լըխըլըխկոց կլեայ կոտից, կաթ կուտի, սաաց.—Ըլեմ, իչկամ չանն ի, կուտի։

Տեհաւ աղուէս, կեօ կուտի կաթ։

Խոլիւ մէկ փէտով քեչից ինոր, աղուէս վը՛ղղաց, ու վըղղաց, քեառսուն կեազ ամրկեաճ ինու ..ռից տունց գլեա։

* Պատմած է Պետրոս Վ.Երտեանն:

Ամրկեանի վրէն դաւի արին, էն սաաց ձի՝ էն սաաց ձի. չպարըտան վրէն, սախն.—Մենք համք մօ ուէս, ինչկանք, վիր կը խոռուցէ։ Ուէս սաաց.— Ո՛ր ձինն չատ սուտ սաաց, եռ տամ ինոր։ Էն մէկ սաաց.—Խազար Դիր քեօ Գլխին վկայ, եռ սուԹ չեմ սաի. սուԹ ձի մօտ չկայ. եռ տեհայ մե լու՝ ոտմ Թալի Սիսայ գլօխ, ոտմ Ալակեազայ գլուխ. ուր լըմեժ կը բունէր. ․․ լոլքեր կախե մըջ Արագայ. կը լուացէր։

Էն մէկէլ խօսիւ սաաց.—Դիւ գիտես եռ սուԹ չեմ սաե. ժամանակ մը իլաւ սով, ընձի վաs-դաւար չկէր, մէ այհլոր կէր, եռ էլայ եմ չորեր, ջեր Թալի վըր այհլորի քեամկին, այհլոր տանեմ, էհամ խացի։ Ասին.—Խաց Թուրէզ կայ։

Եռ էլայ, եւ այհլոր տուի եմ առջև, գնացի Թուրէզ։

Մէկ խալուար կորեկ գընի, բերի Թալի վըր այհլորի քեամկին. առի, բերի տուն. չու Արազի բերան էկայ, եմ այհլոր չկրցաւ բեռ ընցուցեր, եռ էլայ մե պարսեա մը շինի, եմ կորեկ լցի պարսեաի մէջ. Թալի, Արազ ընցըցի։ Եռ էլայ, լեեծայ եմ այհլոր, տուի մըջ ջրուն. Արազ Թալեց եմ այհլորի ճաներ։ Ջուր ընցայ, էլայ եմ կորեկ ժողուի, լցի ճվալքեր, բերան կարի, Թալի այհլորի կեամկին. խակsար (հակերն մէկը միւսին հաւասար) մէկ մէկէլո մընէ, մէկ կորեկ առի, դըի էն մէկէլ խակին, էն մէկէլ խակ քիչեց, եռ էլ տեհայ մէկ կորեկ կեօ մրչեմ բունե, կերԹայ. քառասուն ուԹ խաճճար եռ էն մրչեման գլխու մէջ զարկի. էս մրչեմ Թողեց, եռ էն խատ բունի, Թալի մըջ էն բեռան. բեռ չտկաւ, եռ բեռ առի, էկայ տուն. չըզմէկ մանեԹի ցեղ (չափ-տեղ) այհլորի կեամկլին ճարա իլաւ. եռ ինչ դեղ սըի, չժըրաւ. ձի սալըղ տուին, «քեօ մէր ինչ մեռաւ, հնդայ կեօզ կերաւ, ինոր կԹոն մնացեր էր ատման տակ. էն կԹոն քեօ այհլորին դեղ ի»։

Ելայ փախ փէտատ գնի, գօռ փորի, գլօխ խանի, բերի, կեօզի կԹոն ատման տկէն խանի, դրեցի այհլորի քեամկին չու առաւօտուն, վըր էդա այհլորի քեամկլին էզ կԹոն իլաւ Հնդայ կեօզի ծառ. էդա այհլորի քեամկի վրէն էդա կեօզի ճղեր մէկ գնաց Երևան, մէկ Աշտարակ, մէկն էլ գնաց, զանից Իտըր։ Քառասուն մարդ էլած էդա կեօզ Թափ կտէն, մէկ մէկէլա ձէն չլսնայ։ Էդա այհլոր ծառ վեր քեամկլին կեհայ, խաւեր կը ԹիԹկի։ Էդա կեօզեր Թափ տուին, մէկ կեօզ մնաց ծառի ճեօզի գլուխ. Թի փէտ Թալին, չէկաւ, Թի քար Թալին, չէկաւ, եռ իլայ, խող ճխտի, Թալի Թըխ կեօզ. կեօզ էկաւ տակ, խող մնաց ճեօզի գլօխ։ Եռ առաւօտուն իլայ, ի՞նչ—էդա խող իլէ մէ դաշտ Ատանայ դաշտի ցեղ. քառասուն զուԹան կեօ մէջ կը բանի. մէկ մէկել ա «հօ, եղի» ձէն չլսնայ։ Մէկ դեօմէչ էդա դաշտի մէջ կուրեաւ. Թի վարին չտըհան, ցանեցըն չտեհան, ման-

կըռւին չտեհան, ջրին չտեհան, քեաղին չը տեհան, կալ տըին չտեհան, այցին չտեհան, խմոր տըին չտեհան, Թըխին էլ չտեհան։

Մէկ կուտ ընկեաւ Թանիր, էն կուտ խանըցըն Թուրմընէն. կինըցըն ըր եա ուտի. իշկացի գեօմէշ կեօ մէջ էն կոծի. իրեք մշակ կեօ յէռջև, գեօմէշն էլ հաւըըրայ Փըրփրոց գրե ինե, կեօ մըջ էն կոխին։

Ուէս ասաց.—Կատու խատաւ քեւ. Ո՛լ, առ քեօ կատու, դնմա։

17

ԱՍՏԸԾՈՒ ԻՐԵՍ ԴՈՐ Ի

Նորդուզի Տիմ գիւղի բարբառով *

Թագաւոր ուր սինօդքիր ժողուեց։

Ինոր իրեք սինօդ կէր. կանչեց բերեց, ասաց.—Սինօդքեր ձե իրեք բան կասեմ, եմ պատասխան չխանիք՝ ձե վիզ կը կըտռեմ։

Էն մէկն՝ Աստըծու իրես դեհ դո՛ր ի. էն մէկէլն էլ՝ Աստուած խըր ընչին կիրուհի, էն մէկէլն առէք, դիւ գինմա՛լ, էրկնուց աստղերն քեանի՛ ի։

Ասին.—Թագաւոր, մենք չըներ գիտի. մենք ռամիկ մարդ ենք, խնդրենք, ամիս մը մօհլաթ տու մե, էհանք. էրկիրներ պտըտինք, իշկանք. դառնանք յետ, քեօ պատասխան տանք։

Ճամբան ընկեան, մէկ ամիս դնացին, էկան. Թագաւորի խապրքեր իշ էն, մէկ չգիտցան։

Ասաց.—Ով սինօդքեր, աշխար տուեք ման, դնացիք։

Պըըտեցիք, էկաք. դամկ եմ պատասխան։

Ասին.—Թագաւոր ապրած, շատ շուռ էկանք, շատ պտըտեցինք. պատասխան մէկ տեղ չդտանք։

* Պատմած է Պետրոս Վերօեան:

Ասաց.—Ճալաթքնը, տարէք, խղանք կախէք. Տարաղանի վրէն. կրակ դրէք, վառէք, մոխիր քեամուն տուէք:

Բե ոչէս մարդմ էն դինհէն էկաւ. ասաց.—Էստ լաւ մարդնը ընչի կը կախեն:

Ասին.—Թագաւոր մե իրեք պատասխան տուե, մըյա մենք չընք կանայ ինոր պատասխան տալ:

—Ինոր պատասխան դիտէք, ինչ ի, մէկ մէկ ա ընձի տուէք,

Կասի՝ «Աստըծու իրես ՝դեմ դո՛ր ի». կասի«Էրկնուց աստղեր քիանի ի.» «Աստուած խըտ ընչի՞ն կիրուհի».—Աստըծու մըժուլին խըտ ընչի՞ իւ»

Ձի տարէք, Թագաւորի պատասխան տամ, ձե փրցուցեմ. դեամ:

Գնացին, Թագաւորին կեօ ասին.—Մարդ կայ, քեօ պատասխան պտի տայ, ասին:

Թագաւոր էդա մարդ կանչեց։—Իմ պատասխան դիւ տը տաս, ասաց:

—Հրամանքի, ինչ ի, տամ որ ասեմ. էդա մարդեր Տարաղանից փրցուցեմ:

—Մարդ, եա ծնայ եմ ասի, կասի.

Աստըծու իրես դեմ դո՛րն ի. Էրկնուց աստղեր քեանի՞ ի. Աստուած խըտ ընչի՞ն կիրուհի:

Ասաց.—Մարդ ուր իրեն դոր անի, Աստըծու իրես դեմ դեն ի:

Ասաց.—Էդ մէկ աղէկ կասես. Էրկնուց աստղեր քեանի՞ ի:

Էն մարդ էլաւ, մոճլաք առաւ գնաց:

Առատու աղօթրնախատ էկաւ, ասաց.—Քեօ գլխի մազեր, տաս ինչքանի։ Ես էլ աստղեր, ասեմ քե քեանի ի:

Ասաց.—Ես չըմ կանամ խամըրեմ, եմ գլխու մազեր քեանի ի, ինչ գիտեմ:

Ծուապ տալան, սինօղքերաց, ասին.—«Վալա, էրկու խապար խանի, մէկ մացի:

Սինօղքեր վըր էդ խօսաց ուրախացան.—Վալա՛, մե ո՛պատի Տարաղանից, ասին:

Ասաց Թագաւոր էդ մարդուն:

—Աստուած ընչին կիրուհի, գիտես դուն:

Ասաց.—Վեց սահաթ քեօ Թագաւորութեն տաս ձի. ես քե կասեմ, «Աստուած խըտ ընչին կիրուհի:

Թագաւոր էլաւ աղքատ մարդու չորեր խաքաւ, ուր Թագաւորական չորեր տուեց ինոր, ուր Թագ տարաւ դրեց ինոր գլխին:

Իլաւ, Նստաւ Թագաւորի թախտին:

Թաքաւոր էն աղքատ մարդու տեղ գնաց.—Դէ՛, տո՛ւր իմ պատասխանին, ասաց.

Ասաց.—Աստուած կը մժուլի էն բանի, կեօ, քեօ թագաւորութեն տակց, տակց ձի։

Աղքատ մարդ իչ իլաւ թագաւոր.—Կանչէք, դեան, ասաց, ճալատքեր, խեծելաւոր։

Ճալատքեր էկան, կայնան դայ, ասին.—Ի՛չ ի, խըրամանք արա։

Ասաց.—Էդա մարդ չոռ վիլուցէք, տարէք. վիղ կտրէք. գլու թալեցէք։

Թաքաւորի վիղ կտրին, թալին գլու, ընծօղքեր ըրծան, դարձան էկան յետ։

Աղքատ մարդ վիլուցին, տարին տարին, նստըցուցին վըր թախտին։

18.

ԱՆՀԱՒԱՏԱՐԻՄ ԿՆՈՋ ԱՄՕԹԱՆՔԸ

(Ալաշկերտու Խտասուր գիւղի բարբառով *)

Ճամանակով իլեք ջահել աղայ դէլնան, կէրտան, օտար էրկիր աշխատելու։ Շատ կէրտան, քիչ կէրտան, Աստուած գինայ. կերտան մի ծերուկի կը հանդիպին, օր ուրին մէկ հօլրք մի չինէր ա, նստեր ա մէջ. ինչ ճամբորդ որ հանդիպի, կը կանչայ, քենի մի օսկի կառնի ու խրատ մի կիտայ. ինքը էն խրատի փարով կապրի։ Էդ աղէք կըսին.—Պապէ, էս տեղ ինչ կէնիս։

Կըսէ.—Ընձի հինգ օսկի տուր, քըզի խրատ տամ։

Էն մէկ կըսայ.—Տղէկնե՛ր, արէ՛ք. հինկ օսկի յիտանք, էտի թըղ մըզի խրատ տայ։

---

* Պատմած է Պօղոս Ցարբեճեան.

Էն մէկէլ էրկուս կը ծիծղան բոլը վրէն, կըսին.—Քննիմ՝ ոսկի բերիր ինք, գնմու Ճավլօճ դատի, էն էլ տայ խօս հալիւորուն։ Մէկէլ էրկուս կէրտան, էն մէկ կը մնայ, հինկ ոսկի կիտայ, հալիւոր կըսէ.—Ինչ տեղ օր կերտաս, օրը հրամցայ կեղնի, էդ դեղ մընցընի, չեղնի թէ ուրիշ դեղ հեռու էղնի, վնաս քաշես։

Տղէն կըսէ.—Պաշէ, էլ ուրի՞շ։ Կըսէ.—Չէ, չկայ։

Տղէն թողէ կերտայ, հասնի ուր ընկերտաննուն, կըսայ.—Հինկ ոսկի տուի, մէկ խըստ առեց։

Ցընկերտանք կըսին.—Տղա, դու ծուռ ես. գնա, առ քու փարէն, ա՛յի։ Տղէն ա, չար Ճաչար կը դառնայ, կըսայ.—Պաշէ՛, տուր իմ փարէն։

Պաշէն կըսայ.—Հըցար խուռուշի խըստ տուի, կըռ դու դառի կէնիս. Պաշէն կըսայ.—Հինկ ոսկի լէ տուր, խըստ տամ։

—Ա՛ռ քըզի հինկ ոսկի լէ, կըսայ ու կիտայ։

Հալիւոր կըսայ.—Ի՛նչ տուն օր կերտաս, ինչ օր քու յառէջ բերին, մըսի «հերք ա.» Կըսայ.– Էլ ուրի՞շ։ Կըսայ.—Էլ չկայ։

Տղէն էլման կերտայ. կը հասնի յընկերտաննուն.—Տղա, կըսեն, փարէն բերի՞ր։ Տղէն կըսայ.—Չէ՛; ու՛լէ, հինկ ոսկի տուի, խըստմ լէ առըցուց ընձի։

Ցընկերտանք կըսին.—Վոյէ, էդի դուր խեչք կորցուցիր ա։

Ասին.—Տղա, ջաճըմ գեօզում, գնա, փարէք բէ։

Տղի չարէն կը կտրի, էլման կը դառնայ, կերտայ, կըսայ.—Պաշէ, իմ փարէք տուր։

—Հարիր ասլոս իմ խըստներ, տղա, կըսայ պաշէն. օր յէժան տուի քըզի, յէնտի էկեր ես, փարէն դուզխա։ Տղէն կըսայ.—Պաշէ, ոսկի չէ՛, ուրիշ խըստմ տո՛ւր։

Հալիւոր կառնի հինկ ոսկին, ուրիշ խըստմ լէ կիտայ։

Կըսայ.—Ինչ գետի օր կը մօտենաս, հարի ուրիշ չզարկայ, չընցնայ գետ, չեղնի-չեղնի դու զարկես գետ։

Տղէն չատ լաւա գընկնայ, կըսայ.—Պաշէ՛, փարայ չունիմ, քննիմ՝ խըստ լէ տուր ընձի։

—Տղա, կըսայ. օր փարայ չունիս, տուեցի քու խապր, քննիմ՝ խըստ լէ կիտամ քըզի. Ցեքօր կը կարդուխս, ախճկայ տիրոջ հետ հըմլա բարխշի, ըսէ.—«Ես քու աղճիկ դուզլիմ, հըմայ չի տամ, տանիք դարձ, Ճըկէր խապուլ կէնիք, դուզլիմ. չէղնի-չէղնի ճամբես հօր տուն դարձ». դը գնա, Աստուած հըտ քէ։

Տղէն կէրտայ, յընկերտաննուն կըսայ. - Հինկ ոսկի լէ տուի։

Ընտանք կըսին.—Մինք զէն ու զէն չի գինանք. մըր տաս ոսկին քըզնէ կառնինք. քու հինկ ոսկին զօռ թը տուեր ես։

Տղէն կըսայ.—Իմ սիրտքը էղնի, յառէջ աշխատիմ, ձեր փարէն տամ. յետև աշխատիմ ընծի։

Կնտան Ջետկանայ պէս գեղ մի հըրամըկայ կեղնի, էտ տղէն կըսայ.—Արեք, չէրտանք. մեր յառէջ սար ու ձոր ա, կեղնի օր գեղ հեռուն էղնի, գիշեր տայ մըր մըղի։

Ընկերտանք կըսին.—Հա՛, հա՛, դըռ կէս օր ա, հալիւըրու խըրատ պտի պայհա օր մըղի ակլու էնայ։

Տղէն կըսայ.—Ես չգամ, պէ դուք կէրտաք լէ գացէք։

Էտոնք կերտան, տղէն կը քնի էտ գեղ. լուսմութեւն կերտայ հըտ ճամբուն. ինչ օր Ջէթկանով էրտայ դէմի Քոըրա-Ալի. կը տեսնայ օր, օհօ, էրկու ջանսակ մըր ճամբուն. մօտկընայ, կաշկայ օր յընկերտանքն են, կըսայ.—Տեսա՛ր, հալիւըրու խօսք յէլաւ, ճըլապ էղնի էն հինկ օսկին։ Տղէն չատ ու քիչ գնաց, մէկ գետիմ բռանս էկաւ։

Տղէն ա հալիւըրու խըրատ միտք յընկաւ, Նստաւ գետի յափ, տեսաւ մէկ ձիաւորմ' խուրճին լիք օսկի ձիու քուրքին կապուկ էկաւ, հըմա թաւաֆալի գըկից գետ. գըկելու պէս սըկսաւ յինք ու իր ձին, մէկ լէ տեսաւ օր ձին յէլաւ, ինք չկայ. ձին դառցաւ, տըրռաւ փլին։ Տղէն գնաց, ձին հանեց. տարաւ տուըկից գետի յափ, թամք յէջուց վըէջէն, տեսաւ խուրճի մի օսկի։ Հեծաւ պձին, ջրի հետ գնաց ցած. տեսաւ օր հօտաղ մի մալ կարծըծուծէր, ըսեց.—Տղա՛, բըճօռ գինա՞։

Տղէն ըսեց.—Հա՛, յոբէն չէ։ Ըսեց.—Ա՛ռ քզի օսկիմ' բըճօռ ցըցու։

Հօտաղ հըմա չուտ գուր չորեր հանեց. օսկին առաւ, գըեց ուր չորերու մէջ, յընկաւ ձիու յառէջ, գնաց, յէլաւ էն դէն, ըսեց.—Դը, գնա՛, հըլալ էղնի քզի էտ օսկին։

Գնաց մէկ գօլվարեր իշխանիմ տուն խոնախ եղաւ, էտ տան տէր տաս-քսան գօշակ կը բերայ, կը փռայ յօղէն. տղէն ըսկի ձէն չը հանայ, չայ, ղայվա անճըսապ կը բերայ, տղէն էլման ձէն չը հանայ, հաց լէ անճըսապ կը բերայ, էլման ձէն չենայ։ Խուլասայ, տղէն կը պըրկի-քնի։ Տան տէր կը ճեռտի, կէրտայ տուն. լուս ու մութ չուտ գելնի, կէրտայ, էլման չայ, հաց յըմեն բան անճըսապ կը բերայ, տղէն էլման ձէն չենայ. չըսայ «հերք ա»։

Տանտէր կառնի տղէն, կէրտայ ուր պաղչէն, տղին կըսայ.—Կաչի՞ս խտայ բանցը կուտոց, ճըլա բա՛ց։

Տղէն հող թէ խուշկին գիտայ դէն. կաշկի, կը տեսնի օր յըմէն խաճի գլուխ ա, կըսայ տղին.—Դու խելացի էր, ինչ օր բերեցինք, չըսիր «հերք ա», քու գլուխ լէ կը կտրէինք, դէ՛, գնա՛, Աստուած քու հետն էր։

Էտ ադէն ա, խօընա, կերթայ քաղաք մի, ուրին ձեռք մի լօ-րտիկ չոր կէնայ, կը դառնայ, կերթայ տուն. ուրին foef ու սարեմ կը չինայ, կեղնի ծանոր բունար մի։

Տղէն օրմ դէլնի, ուր մամ կը ճամբայ մէկ մարդում՝ տուն յուղնկան, մամուն բաճպի կէնայ.—Ընտոր կըսիս, ուր ախճիկ էլ չթորկիմ էրթայ դարձ. խելք տի կարայ, տուր։

Տղի մամ գելնի, խաս չորեր կը հաղնի.—չկայ խաս չոր—կեր-թայ ախճկան հօր տուն խնամաթոռ. խնամաթոռ կը դնին, կը նստի։

Կը բերեն հաց-բան, կըսայ.—Ցէրօր իմ խօսք տեղ բերէք, կուտեմ։

Կըսին.—Քու խօսք ինչ ա, օր մեր գուլմանք էղնի, կը կատա-րինք։

—Աստըծոյ հրամանով, հայրապետաց կանոնով քու ախճիկ տուր իմ տղին։ Հըմա բանմ լէ կըսեմ. ես իմ հարս օր տարայ, էլ չի թոր կիմ օր յիդայ դարձ։

Էտ ախճիկայ պապն ու մամ չատ ցուցուրմիշ կէղնին, մէկ ճամբախ մը չկրնան դտնին. կըսին.—Էտ խօսքեր օր դու կըսիս, ըսկի կէղնի օր ախճիկ ուր հօր տուն դարձ չէրթայ։

Մամ կըսայ.—Հըկեր խապուլ կէնիք, տուէք։

Ախճկայ մամ ու պապ կըսին.—Հըկեր կը հարցուս, դէմով մի ըսկի լայեղ չէ քըզի խապար տանք. ճըմա դէմով մը դու էկեր իս, պէտք չէ քըզի դարտակ դարձունք։

Կնիկ յէլաւ, ախճկայ մամ ու պապու ձեռ պագեց. ինչ ձեր դլուխ ցուցում, խոլըսա յուղեց, տարաւ։

Երկու տարի մնաց, տղէմ էղաւ, տղի տարին լէ բմաւ, օրմ ախճկայ պապն ու մամ ըսին.—Մենք մեր ախճկայ մեղքն ու արունք մտանք. էրտանք, դարձ բերինք։ Մամն ու պապ դացին փեսի տունը, չատ լաւա ընկան, փեսէն չտուեց. հինկ անգամ դացին ու էկան։

Տղէն ըսեց.—Ես հալիւորու իտա մէկ բաճպին պտի չպահիմ, ջուպիմ, տեսնամ իմալ կեղնի։

Տղէն գէլնայ, ախճիկ կիտայ, կը տանին, բաճպի կէնայ թէ. Ձեղնի թողիս դուս յէլնայ, խարիպ մարդ լէ չթողիս քու տուն։

Ջօկանճ ըսեց.—Որ էրկնից գրեչտակ լէ գայ. հազար fիսայ փարայ լէ տայ, պըտի չըթորկիմ օր յոտ չեմ յընցու. սու, ես fօռ-ցեր իմ։ Տարան դարձ։ Խոլըսա, տղա, դու տղա իս, ուր չորեր փո-խեց. fիսէն լէք օսկի լըցեց, գնաց աներոջ տուն. ձին տարաւ բաւ-էն կապեց։ Ըդոր զօնկանճ էկաւ, ըսեց.—Բա, խամաճ, ախպէր, իմ աղջիկ յուտայ ա, բերեր իմ դարձ. իմ փեսէն կը լսայ, ախչար կմուխրայ։

Տղէն ըսեց.—Առ քղի իղա տաս օսկին, յըսօր գիշեր պարկիմ քու աղջկայ մօտ. լուսումըթին կէրտամ չուտ, օր գայ, չտեսնայ։

Զէ, զօնկըճի նմգեր կը թուլնայ, կէրտայ, աղճկան կըսայ։

Աղճիկ կըսայ.—Ըսկի էղնելոց բան ա, էտ բան չէղնի։

Կիգայ, կըսայ.—Աղճիկ խայիլ չէղնի։

Տղէն կըսայ.—Առ քըղի իղա քսան օսկին։

Էլման խայիլ չէղնի։ Խորըսա տղէն քսուսուն օսկի կիտայ, զօնկաճ կառնի, կը տանի աղճկան նշանց կիտայ, կըսայ.

—Բիչ փարայ չէ, հըրիր տարէ ուտիս, չը խըլըսի։

Աղճիկ կըսայ.—Բա՛, մէրիկ, վաղ պըտի չըսին, «էդ փարէն յո՛ւսաէն ա։»

—Բա՛, լաօ, ես կը բերիմ, քըղի կիտամ, քու իրկայ յառէջ. դըճա յէվելի պատիւ կէղնի քըղի։

Զէ, աղճիկ լեսքի էկաւ. զօնկաճ բերեց իր աղջիկ, աղջկայ յօրոց յօղէն, էրկըսին տեղ թալեց. յինք գնաց, պարկաւ։

Տղէն ըսեց.—Օրոց տար, թաւլի փողան դիր, արի. գիլայ, մըղի լազաթ չի տայ։ Աղճիկ կը տանի օրոց թաւլի ճար, տղէն լէ մէջ. կիղայ, չորեր կը հանի։ Տղէն կըսայ.—Դու պարկի, ես էրտամ, ձին ջրեմ ու գամ, խուրճին գարի կայ, էն լէ տամ, ուտի, օր սապախտան էն գլուխ չո՛ւտ էրտամ, մարթ չիմնայ։

Խորճա, տղէն գնլնայ, ձին կը սաղայ. տղէն օրոցով կը փաթըթայ, կառնի ուր դիրկ ու կը հեծնայ ձին, կերտայ, «տո՛ւն, գո՛լս, եկայ քըղի։»

Հարս լէ կը քընի, կիմնայ օր լուս ա, կաշկայ օր մարթ գար ցեր ա։ Կըսայ.—Վա՛յ, ես սև կայլիմ, էտ իմալ քուն ա, ես քներ իմ օր մարթ ուր ձին տեսի, էկի գլս խըլըրցուցի, էկի գլս պադի, գացի, ես չիմցեր իմ։ Գեսնայ բեզով ուր չորեր կը հագնի. նըմա փարի խընդըլուն ու ուր էրած բանին մտածելուն տղէն ու օրոց մոռցեր ա։ Զուր կառնի կերտայ թաւլի ճար, լուացուի, կաշկայ օր տղէն-օրոց չկայ, նըմա կը զարկայ ուր գլխուն ու չօքերուն. լալման գիգայ մամուն, անուալ կըսայ. մամ լէ չուտ մը կը բերայ քըռչ ու պըըընդ կը թափայ, կենայ խոնդախ, կտաւ պատնքի տեղ կը քաշայ վըէն ու կէրտայ, իրէցուն կը խանչայ, բերայ, կը տանին հօրին. էրկու օր սուկ կէնին։

Փեսէն ջունապ կը ճամբայ աներոջ թէ.—«չուտ, մա՛ռ քու աղճիկ, արի՛»։ Էն լէ խապար կը ճամբայ թէ։—«Ինք սաղ կէնայ, տղէն արև տուեց ուրին. տղի ութ բըմի, պատարագ էնիմ, հոկու հաց տամ, ու կառնիմ, գիգամ»։

Ութ կը բըմի, հոգու հաց կերան. մամն ու պապ կառնին աղ-

ճիկն ու կէրտան: Աղճիկը գլուխ սև կապեր ա․ Նիյաթ էնելին, լալման կերտայ, կը մանայ տուն։

Փեսէն կըսայ.—Էս ինչ էղեր ա, տղէն թէ մեռեր ա, մենք սաղ մնանք:

Աներ ու զօնկած գիդան, փեսի ձեռ կը բռնին, կըսին.—Դու սաղ մնաս, ըշտէ տղէն հինկ օր հիւանդցաւ, ըսկի չը գիցանք, ինչ էր ըտոր ցաւ։

Քիչմ խսա կենին, կը ժղլին, փեսէն ուր կնկան կըսայ.

—Գնա յօդէն, ձմերուկ մի կայ. բե՛ր, ուտինք։

Աղճիկ կերտայ յօդէն, կը տեսնի օր հանդ ա, ուր տղէն օրոցով յուտայ ա, էլ յօդից չգայ:

Փեսէն կըսէ զօնկըճին.—Գնա, տե՛ս, քու աղջիկ յօրի՞ն չի գայ:

Զօկանճ կերտայ օր աղջիկ կիլայ։

—Արի տե՛ս ըսեց մամուն, ինչ սև էկեր ա վըէս, տղէն օրոցով յուտայ ա։

Մամէն գիլայ, կը չուարի։

Շատ կանքընան, փեսէն աներոչ կըսայ.—Ցէլի՛, էրտանք. տեսնինք, յորե՞ չէկան, անքնցան։

Կերտան օր չիւարած գիլան։

Աներ լէ կը տեսնայ տղէն օրօցով հանտ ա, յուտայ ա, յինք լէ կը չիւարի։

Փեսէն լէ կըսայ.—Էս օր քու աղճիկ չթօրկէնք յիգար դարձ, դու յորի՞ն խայլի չէղնէք, էլ քու աղճիկ իմ մամն ու քուրն ա. առէք, դացէք. ընձի պէտք չէ։

Շորեր վըէջէն կառնի ու ճամբու կը դնայ, կերտան։

Էլ չկարգուի, տղէն կը՞մեծըցու ու կը կարդայ։

19

ՍԻՆԱՄԱՅԱԻՔ

(Ալաշկերտի խասսուր գիւղի բարբառով *)

Թաղաւոր մի կէղնի, էտ Թաղաւոր չատ կը հալւորնայ, ձեռաց կերտայ, էտոր օնիքիլար կը ժողուին, գիկան կըսին Թաքաւորին։ — Բու տըղէկներ համբայ, էրտան անմահութենի խնձոր բերին. կեր կը ջնկնաս, կէղնիս եօթ տարեկան տըղի պէս։

Էտ Թաղաւոր կէղնի դարադունըն իրեք տըղայ, կը խանչայ զուր տըղէկներ, կըսայ. — Գացէք, ընձի անմահութենի խնձոր բերէք, ուտիմ օր ջնկնամ։

Էտ Թագաւորի տղէկներ գէլնին, կառնին զուրանց գեւզ ու քաման, իրեք լէ յերար հետ բարքի դունեա կէղնին, կերտան. կերտան մէկ հալւոր բօստննու լուսատ գիկան, կըսին. — Բարի լուս, պապէ. — Աստըծու բարին, դուք բարով-հազար բարի էկաք, էտ յու՞ր կէրտաք իտայ նամլայ յերար հետ։ — Կերտանք ամահութենի խնձոր բերելու։

— Լաւօ, իտայ էղաւ հարիր-յիսուն տարի ես իտայ տեղն իմ, չատեր էկան, գացին չկրցան զէտ անմահութենի խնձոր բերէն, դուք պտի բերիք։

— Ցընչէ՞, ի՞նչ կայ օր չկընանք բերինք ըսին, Թագաւորի տըղէկներ պապէին։

— Լաւծ, էն տեղ եօթ գլխանի դեւ մի կայ, էտ անմահութենի խնձորի ծառին մուղաթ կը կենայ։

Էտ անմահութենի ծառ լէ, սապաղտան օր աղօթըան կը բացուի. էն ծառի ծաղիկներ լէ կը հասնի, եօթ գլխանի դեւ էն տեղ

---

* Գրի առած է Իսրայէլ Միրաքեան, իսկ ես կարգի դրած եմ եւ սխալներն ուղղած։

ճազր ա, կը քաղայ կառնի կերթայ. յըմնօր էտ ծառ կը ծաղկի, բար կիտայ, յըմնօր էտ դև դիկայ, կառնի կերթայ։

Հալխուրի ըսած խօսքեր, էտ տըղէկնիր յիմցան, ու մնաս բարով, ըսին, թողին, գացին։

Գացին-գացին, չատ ու քիչ Աստուած գինայ, հարի զէտ անմահութենի խնծորի ծառ գտան, նոր կայնան. գացին էտոր բաղչի պատի տակ մէկ չալտա տեղ գտան, նստան։

Մեծ տըղէն ըսեց ուր աղբրտոց.—Աղբրտիք, դուք յըսօր քընէք, ես հարի լուս յիմաց կը կենամ. օր դև էկաւ, ձըղի յիմաց կէնիմ, յէնինք անմահութենի խնձոր էտոր ձեռնէն առնինք։

Աղբրտիք քնան, յինք լէ հարի լուսու դէմ յիմաց մնաց, լուսու դէմ էտոր քուն տարաւ. էտ լէ քնաւ, անմահութենի ծառ ծաղկաւ, բար տուեց, դև էկաւ առաւ, գնաց։ Աղբրտիք յիմցան օր, օր էղի կէս օր, ուրանց մեծ աղբէր տեղոս-տեղ քներ ա, ճա՛, անմահութենի խնծոր կայ, ճա՛ բան։

—Չէն կիտան ուրանց աղբօր կը հանին օր, օր էղի կէս օր, կըսայ.—Վա՜յ աղբրտանք, քներ իմ, մացիր իմ քնուկ։ Էտ օր լէ կընցնի. մէկէլ օր դօր գիկայ միջնակ աղբօր։

Միջնակ աղբէր կըսայ.—Աղբրտանք, յըսօր դօր իմն ա, դուք քնէք, ես մուղաք կը կենամ հարի լուս. լուսուն ձըղի գիմցում։

Աղբրտանք կը քնին, էտ միջնակ աղբէր լէ հարի լուսու դէմ մուղաք կը կենայ, լուսու դէմ էտոր քուն լէ կը տանի, էտ լէ կը քնի, ծառ կը ծաղկի, զուր բար կիտայ. դև գիկայ, կառնի կերթայ, էտոք խապար չէղնին, մէկ լէ յաչքեր ուրանց կը բանան, կաչքին օր լուս ա, ճա՝; անմահութենի խնծոր կայ, ճա՛, բան. ձէն կիտան. աղբէր դէլնի, կաչքայ օր, օր էղի կէս օր, ճալա յինք քներ ա։ Էն մէկ էլ օր դօր գիկայ պզտիկ աղբօր։

Պզտիկ աղբէր էտոց կըսայ.—Աղբրտանք, դուք քնէք, ես յըսօր մուղաք կենամ. տեսնիմ, Աստուած ինչ դուռ մի կը բանայ, օր մենք մեր հօր յառէջ սև յէրես չէղնինք։ Աղբրտանք քնան, էտի, մուղաք կեցաւ հարի լուսու դէմ, լուսու դէմ էտոր քուն տարաւ-ճամա խամէն թալեց, զուր ձեռ կտրեց, աղ լցեց մէջ, տըօրեց. մռմուռ տուեց էտոր ջիկար, էլ քուն չտարաւ. աչօթրան դըռ չէր ճըղտըւի, տեսաւ օր անմահութենի ծառի ծաղկներ բացուան, քիչ քիչ ծաղկներ թափան. խնծորներ մեծըցան։

Մէկ էլ տեսաւ եօթ գլխանի դև մի, մէկ մռութ էրկինքն ա, մէկ մռութ գետին ա։ Էկաւ օր զէտ խնծորներ էլման տանի, էտ տղէն էլ ուր աղբրտանց չիմցուց, ճամա քաշեց զուր նետ ու աղեղ, էլաւ դևի յառէջ. դև նոր էտ տըղին տեսաւ, ըսեց.—Հայ-հայ հոյղածին, օձն ուր պօրտով, հաւք ուր թևով, իտա տեղ չըր յիկէ, էտ

իմալ էղաւ օր դու էկար. հազր կէցի, մկա քու աւազ կտոր քու ան-կանջ կը թողիմ։ Տղէն ըսեց.—Կիր նոր փառք տուր։ Դե իմալ օր զուրզ մի թալեց, տըղէն կըղաւ, զուրզ փը՛սա յընցաւ, տըղէն իմալ օր զուր նետ ու աներ թալեց, համա քիստու դեի սրտի մէջ. պա-ռէկէն դուս տուեց, դե համա խարալի դարձաւ փախաւ դէմի ուր տուն։ Տըղէն լէ էտոր յէտեէն գնաց, տեսաւ օր դե մտաւ ծակ մի։ Դարձաւ էկաւ անմահութենի ծառի մօտ, տեսաւ օր ծառի վըրէն խնձորներ հասած կախված են. քաղեց լըցեց, մէկ դաստմլի մէջ. կա-պեց, բերեց դըրեց ուր աղբրտանց գլխու վըրէն։

Աղբրտիք յիմցան օր, օր էղեր էր կէս օր, հալա ուրանք քնած էն. խնձոր լէ քաղած՝ մէկ մեծ դաստմլի մէջ կապած՝ ուրանց մօտ դըրած ա, աղբրտիք շատ ուրխըցան, հարցուցին պզտիկ աղբօր մօտից.—Դու դե չտեսա՞ր.—Տեսայ։

—Ապա իմալ էղաւ տռանց մըղի, կըցար դեի ձեռնէն խնձորներ առար։

Ըստապուն պզտի աղբէր յըմէն բան ըսեց ուր աղբրտոց. առաւ աղբրտիկ, ու անմահութենի խնձորներ. գնացին դեի ծակի վըրէն։

Մեծ աղբէր ըսեց.—Ես կը մտնիմ իտա ծկից։

Միջնակ աղբէր ըսեց.—Ես կը մտնիմ։

Պըզտիկ աղբէր ըսեց.—Աղբրտանք, դու մը մտէք. ես կը մտնիմ, համա մէկ բան լէ ձըզի թամբի կէնիմ, ինչ խտըր օր ես կը բոռամ, կըսիմ, «Վաւա՜, էրէցա», դուք ընձի կախէք։

Ջուան կը թալին պզտի աղբօր մէջքէն, խայիմ կը կապին. ու կիջուն ծկից։ Էտ տղէն քանի բոռաց «Ես վառա, իրիցա», աղբըր-տանք յանկանջ չէրին, յիջուցին։ Ցիջաւ, գնաց ներս. տեսաւ օր դե հոգու հետ ա. համա դե դէտ տղէն օր տեսաւ. ջիբ վախէցաւ, հո-գին տուեց։

Տղէն դեի յանկջներ կտրեց. թալեց ջէբ, ու դուռ բացեց, տե-սաւ, օր ինչ տեսնի.—Իրեք հատ հուրնիկ-հրեղէն աղջիկ նստած են, Էրկաճ կէնին։

Աղջկներ օր դէտ տըղէն տեսան, ըսին.—Վա՜յ հողածին, գլխուտ արևուդ մեռնինք, օձ ուր պոռտով, հաւք ուր թևով չըկրնէր էտայ տեղ յիկէր. էտ յի՞մալ էղաւ օր դու էկար, մըկա եօթ-գլխանի դե գիկայ, քու աւազ կտոր, քու յանկաջ կը թողայ։ Խօսք հալա աղջըկ-ներու բերան էր, տըղէն հանեց դեի յանկջներ, թալեց աղջկներու յառէջ։

Աղջկներ իրեք լէ մէկ-մէկ յէլան, էտ տըղի յէրսներ պաքեցին ու շատ օրհնէցին, օր ուրանց էտ դարչելի-դաղան դեի ձեռնէն պրծուց։

Էտ աղջիկներ տարան դէտ տըղէն նստըցուցին ուրանց յօրքա-լախ, չատ կեր ու խում էրին, պրծան։

Մեծ աղջիկ ըսեց.—Թագաւորի տըղա՛, մեր խօսայ իրեքիս մի-ջից որ մէկին կը հաւնիս, կառնիս։

Թագաւորի տըղէն ըսեց.—Դուք լէ իրեք էք. մենք լէ իրեք ենք, ձեր միջի մեծ, կխօսամ իմ մեծ աղբօր, միջնեկ՝ իմ միջնեկ աղբօր, պզտիկ լէ ընծի։

Համա պզտիկ չատ խօրօտ էր, էտ աղբէր առաւ իրեք քո՛ւր լէ, բերեց ծակի դէմ, խանչեց ուր աղբըրտոց.—Աղբըրտա՛նք, ճօպան կախէք։ Աղբըրտանք ճօպան կախէցին, բերեց յառջև մեծ աղջկայ միջքից կապեց, բոռաց.—Մեծ աղբէ՛ր, խօսայ քաշայ քըզի։ Էնի քա-շին, դուս հանին։ Ճօպան մէկ լէ կախէցին, ըսցայուն զմիջնակ աղ-ջիկ հանեցին միջնակ աղբօր. խօսայ հախսի դօր էկաւ պզտիկ աղբօր նշանածին, ճօպան կախէցին, էտ աղջիկ ըսեց.—Թագաւորի տղա՛, աղէ՛, դու յառէջ յէլի, ճօպան կախայ, յետև ես դէլնիմ։

—Չէ՛, դու պտի յառէջ յէլնիս. ըսեց աղջկան։

—Ես դէլնիմ, համա ընծի տեսնող էլ քըզի խօսայ հօրէն չհանայ.

—Իմ աղբըրտիք բէբաղդ չին, աղջի՛, դու յէլի յառջև։

Աղջիկ տեսաւ որ տըղէն չէլնի, ուրին պտի հանայ. հանեց քա-նիմ բալնիք տուեց էտ տըղին, ըսեց.—Տղա՛, կերտաս մէկ յօդի դուռ կը բանաս, կը տեսնիս որ, օսկի հաւ, օսկի կուտ յառէջ, օսկի սի-նու մէջ դրած, կը վերցուս հետդի կը տանիս, կերտաս մէկ յօդի դուռ լէ կը բանաս, կաչքիս որ մէկ հատ, օսկի կատու, օսկի մուկ, լէ յառէջ դրած մէկ օսկէ սինու մէջ, էն լէ հետդի կը տանիս, կերտաս մէկ յօդի դուռ կը բանաս, կաչքիս որ իրեք հատ ձի կայ կապած, մէկ սև ա, մէկ կարմիր ա, մէկ լէ ճերմակ. ամէկուն պո-չից մէկ մազ կը քաշիս, քու մօտ կը պահիս. ինչ տեղ որ նեղ չըն-կար, համա մազին զարկիր, մէկ ձի մի բռախրով—փուշարով քու յառէջ կը կայնի, ինչ մուրազ որ էրիր, ընտոք կը կատարին։

Կերտաս մէկ յօդի դուռ լէ կը բանաս, կաչքիս որ իրեք հատ խօչ խոտ կուտին, մէկ ճերմակ ա, մէկ սև ա, մէկ կարմիր ա. քըզի յառէջ կը թալիս վըր սև խօչուն, սև խօչ կը թալայ վըր կարմիր խօչուն, կարմիր խօչ կը թալայ վըր սիւտակ խօչուն, սիւտակ խօչ քըզի կը թալայ լուս-աշխար։ Ես լէ հարի քառսուն օր քու ճամբէն կաչքիմ, էկար—էկար. չէկար, վիրն որ տուեցին, էնտոր կառնիմ։

Աղջիկ էդ խըրատներ տուեց տըղին, ու ճօպան կապեց ուր միջքէն, դուս էկաւ. աղբըրտանք աղջկան որ տեսան, խելքեր ու-րանց գնաց. էտ տեղ ուրանց միտք փոխին էրկուս լէ, որ ցուպա-րեմի խաղան ուրանց պզտի աղբօր գլօխ, որ էդ աղջիկ մնայ ու-րանց։

Ճօպան կախեցին, պզտիկ աղբէր կապեց ուր մէջք, հարի կէս քաշեցին, կիսէն հետ վերէն խամճն թալեցին, ճօպան կտրին, ողէն լըմը յընկաւ գետին, խեղք գնաց. էտ ազըրտիք առան աղջկնիր ու անմահութենի խնծորնիր, գացին:

Գացին հասան ուրանց հօր քաղաք. ձէն գնաց թագաւորին թէ «քու տղէկնէր էկան, անմահութենի խնծոր, ու իրեք աղջիկ լէ ուրանց հետ բերին»

Թագաւոր շատ ուրախացաւ, յէլաւ ուրին ինչ խըտըր ճազիր, ոզիր կեր, յըմէն ճամբեց ուր տղէկնիրու յառջև. բերեց, յիջուց. տղէկնիր էկան ուրանց հօր ձեռ պաքին. խնծոր մի տուեցին, կերաւ թը չէ, էղաւ եօթ տարէկան տըղի պէս: Ու դառցաւ ուր տղէկներուց հարցուց:—Տղա՛, լաօ, առանց զիանի գացիք, էկա՞ք:

—Փառք Աստու, մենք առանց ի զիանի էկանք, ճամա դե մեր պզտիկ աղբօր սպանեց:

Թագաւոր փշում վախտ լաց, ետև ճազիր, ոզիր էկան, սիրտ տուեցին էլ չլաց:

Թագաւոր բերեց քառսուն օր, քառսուն գիշեր դհօլ-զուռնայ զարկեց, ուր տղէկնիր ուրանց բերած աղջկներու վըրէն պսակեց:

Խանչեց էն պզտիկ աղջիկ օր պսակէր ուր վըրէն, աղջիկ չպսակուեաւ, ըսեց.—Քառսուն օր ընծի մօհուլ տուր. քառսուն օր օր ըմաւ, նոր կը պսակուիմ: Թագաւոր ըսեց.—Թըղ քու խօսք էղնի:

Մկայ դառնանք վըր թագաւորի պզտիկ տղին օր յընկաւ մնաց հօրու մէջ, մութ աշխար:

Ճոպան կտրելու վախտ էտ տըղի խեղք սհաթ մի՝ էրկուս գըլխեց էրթած կէղնի, էրկու սհաթից յէտև, խեղք գեկայ գըլուխ, դէնի օր յինք էտ հօրու մէջ յընկեր ա, ճա մարդ կայ, ճա մասաս: Փօռ-փօտմաճ կերտայ էտ աղջկայ ըսած դուռ կը բանայ. կը տեսնի օր աղջկայ ըսածի պէս, օսկի հաւ, օսկի կուտ յառէջ. օսկի սինու մէջ դրած ա. կը վերցու, կը գնայ ուր ծոց: Էլման կելնի էտ տեղից կէրտայ, մէկել յօդի դուռ կը բանայ, քաշքայ օր, օսկի կատուն, օսկէ մուկ, օսկէ սինու մէջ դըրած ա. էտ լէ կը վերցու, կը գնայ ծոց: Էդ տեղէն լէ կէրթայ մէկ յօդի դուռ կը բանայ, կաչքայ, օր իրեք ձի կայ, մէկ սև ա, մէկ ճերմակ ա, մէկ կարմիր ա, համալ խօրօտ են, օր մարդ կուզայ չուտայ, չխմայ, մենակ էտ ձիաններուն թամաշա էնայ: Էտ ձիաններու ամէկու պօչից լէ մէկ-մէկ մազ քաշեց, դըրեց ծոց, դուս էկաւ: Գնաց խօչերու յօդի դուռ բացեց, տեսաւ օր իրեք հատ խօչ կայ, մէկ սև ա, մէկ կարմիր, մէկ ճերմակ: Էտ տըղէն աղջկայ ըսած օսիաթ մօռցեր էր, ուրին յառէջ պըտի թալէր, վըր սև խօչուն, օր սև թալէր, վըր կարմրին, կարմիր թալէր վըր սիտկին. սիտակ տղին կը թալէր լուս աշխար: Տըղէն ճաճմաւ. ուրին

թալից յառջև վրր ճերմկին, ճերմակ թալից վրր կարմրին, կարմիր թալից վրր սևին, սև թալից էտ տղին, գնաց մուլթ աշխարհ։ Գնաց մէկ մեծ քաղքի մի դէմ առաւ, քնաց էտ քաղքի մէջ մէկ պառաւու էղաւ խոճախ, շատ ծարաւ էր, էտ տղէն, էտ պառաւուց մէկ ջուր մի յուզից, ջուր չ'կէր որ պառաւ տղին տէր, էտ պառաւուն մէկ պղտիկ թօռ մի կեր. գնաց ընտոր շուցուց, ուր թօռի չեռ բերից, թասի մէջ լցից, տուից էտ տղէն խմից։ Խմից պրծաւ, տեսաւ որ շատ մուռտար հոտ գիկէր մօտէն, դառցաւ պառաւուց հարցուց. —Նանէ։ Պառաւ ըսից.—Ջանէ։—Բզնէ մէկ բան հարցում, ձեր խայ ջրից ընչի՞ խայ համլա մուռտալ հոտ գիկայ։

—Թմւ, գլխուդ արևուդ մեռնիմ, քաջ վիշապ էկի, ջրի դէմ առի, ջուր կտրեր ա, չ'թօղկայ յիկայ. կըսայ, «հարրի որ թագաւորի աղջիկ չբերիք, տաք ընծի, ես ուտեմ, ձըզի ջուր չի տա՞» յըսօր էղաւ տաս օր, որ քաղքի ջուր կտրեր ա, ջուր չկայ մարդիկ յիրար կերան քաղաք յիրար անցում էղաւ, յըմէն ժողուան, գացին թագաւորի մօտ, ըսեցին. աղջիկտի մեռնի աղէկ ա, թէ քու ժողովուրդ. աճճառ, կուցան թագաւորին խելք հասկցուցին. մըկայ պտի տանին աղջիկ տան վիշապին, որ նոր վիշապ ջուր թողայ գայ։ Պառաւ որ ուր խօսք կտրեց, տըղէն ըսեց.—Նանէ՛, մուղաթ կեցի, յեբօր թագաւորի աղջիկ պտի տանին, վիշապին տան, դու ընծի յիմաց տուր։ Պառաւ ըսեց.—Աղէկ կէղնի։

Տըղէն գլուխ դրեց, փշում քնաւ. պառաւ էկաւ, տըղին ձէն տուեց—յըլի, ըսեց, տըղա՛, թագաւորի աղջիկ առան, գացին, որ տան վիշապին։

Էտ տըղէն յէլաւ, զուր թուր կապեց վրէն, գուրզ ու քամաճ թալեց թև, ընկաւ թագաւորի աղջիկ տանողներու յետև, գնաց։

Էն մարդիք որ թագաւորի աղջիկ տարան, զթագաւորի աղջկայ ոտ ու ձեռ կապին, դրեցին վիշապից հեռուն, ու, ուրանք թողին յետ դարձան քաղաք։ Էտ տըղէն ջոկուաւ, մէկ տալտալ տեղ մի տապաւ, տեսաւ որ վիշապ էն դհէն էկաւ, դռուն—օրօտուն յընկի էրկինք գետինք։ Վիշապ էկաւ, թագաւորի աղջկայ մօտեցաւ, էրեց որ բերան բանէր, կլուցէր, էտ տըղէն տափուկ տեղից յէլաւ վիշապի դէմ, բռռաց.—Է՛, վիշապ, անաստուած վիշապ, էտ ի՞նչ խեղճ ա. քու խեղճ, որ դու անմեղք մարդիք կուտիս, քու բասպիր տե՛ս. եա, էն ա Աստուած ընծի կիտայ, եա էն ա քըզի՛։

Տղէն էտ հըմալ ըսեց ու քըշեց վիշապի վըրէն, վիշապ լէ քշեց տըղի վրրէն. բերան բացեց որ կլուցէր, տըղէն քաշեց, գրզով զարկեց վիշապի բերնի միջից, գնաց, մտաւ թօքերու մէջ, պատռեց փոր, մտաւ գետին. ճամա քաշեց թուր, վիշապին կտոր կտոր էրեց, դիզեց յիրարու վրրէն. գնաց թագաւորի աղջկայ ոտ ու ձեռ յարձկեց,

ըսեց.—Ցէլլ՛, ղնա քու հօր տուն, իմալ տեսար, համալ խըսա էրայ։

Աղջիկ վազաւ, գնաց քաղաք, հաւար Թալեց, Թէ մարդու մէկ վիշապ սպաննեց, ջրի յառէջ բացեց, ընձի ազատեց։

Էտ խապար կը տանին կիտան Թագաւորին, կըսին.—Թագաւոր ապրած, մարդու մէկ վիշապին սպաներ ա, ջրի յառէջ բացեր ա. քու աղջիկ ազատեր ա, հանտ ա, առանք էկանք։

Էտ բան որ Թագաւոր յիմցաւ, շատ ուրախացաւ, ու հրաման տուեց, վիշապին սպանող տըղին գտնին, բերին։

Ինչ խըտր որ քաղքի մէջ մարդ կէր, Թէ խարիպական, Թէ եռլու, յըմէն բերին Թագաւորի աղջկայ յաչքի յառջեւէն յնցուցին, ըսեց.—Վիշապ սպանող մարդ էտոց մէջ չկայ. յետեւ սալըխ տուեցին Թէ՝ Ֆըլան պառաւու տուն մէկ խարիպական կայ, էն մինակ չէկեր ա. Թէ՛ չէ քաղաք յըմէն յուտայ ինւ Գացին, պառաւու տընից ղէն տըղէն բերին. աղջիկ տեսնելու պէս, ըսեց.—Իտա տըղէն ա, Թէ որ չըք ւստնայ, ես իմ ձեռ Թաթխեր իմ վիշապի արնի մէջ, դօղտու զարկեր իմ էտ տըղի մէջքին. չորեւու վըրէն բացէք, աչքէք։

Բացին տեսան օր, օղորդ մէկ ձեռի տեղ արուն կպած կէր էտ տըղի միջքի վըրէն։ Առան էտ տըղին, տարան Թագաւորի մօտ, Թագաւոր հարցուց։

—Դու յուստ իս, մէր տըղա։

—Ես լուս աշխըրքէն իմ։

—Ապա յորի՞նիս էկի յուտա։

—Էտ տըղէն ուր գլխու էկած յըմէն ըսեց Թագաւորին . . . ու խնդրեց, ուրին հանայ լուս աշխար։

Թագաւոր տղին ըսեց.—Ես քըղի չըմ կընայ հանի լուս աշխար. խոզի, իմ Թագաւորութեն յուզէր, ես կիտէնք քըղի, բաքիլան էտ ջատին բան ընձի չըսէր որ ես քու էրած բարութենից ամչցայ. դու զիմ քաղաք, զիմ ժողովուրդ ազատիր էտ զարշելի վիշապի ձեռքից, օր տարին տասւէրկու ամիս կը քաշինք էտ վիշապի ձեռ, շատ բան մ դու ընձնէ չուզիր, համա, ի՞նչ էնիմ որ իմ ձեռնէն, չիկայ, էտ ճար մնաց մէկ Սինամահաւքին. քըղի կը ճամբիմ էնոր մօտ. համա ընձի մէկ խնտրուած մի կայ, օր դու չկռնաս գլուխ բերիս, ուրիշներ չքերին։

—Ինչ ա քու խնտրուած Թագաւոր ապրած կենայ . . .

—Իմ խնտրուած էնայ օր, էս էղաւ վաԹսուն տարի, Թագաւորի լայեղ մէկ քօշք ուսարհ մի կը շինիմ, կը պըծիմ, ընծի-ընծի կըսիմ, էլ իտայ հըմըա քօշք ու սարայ աշխըրի յերես մարդու չկայ. մէկ դաւրհ գիկայ, կըսայ.—«աղէկ ա-աղէկ ա, համայ մէկ բան ա պակաս», ու կը Թողայ կերԹայ։ Կը քանդիմ էլման կը շինիմ, օր էտ դաւրհ գայ անուն չդնայ. դաւրհ դիկայ, անուն կը դնայ, կերտայ,

խոսայ էղաւ վաթսուն տարի խմ ճալն ու էտ դաւրճէին էտ ա էղի։

Տըղէն ղառցաւ Թագաւորից հարցուց։

—Ա՛, ինչ կըսայ էտ դաւրճէ, օր անուն կը դնայ։

Կըսայ.—«Թագաւոր, քու ֆօըֆ ու սարէն աղէկ ա, ճամա ափսոս օր Հազարաբիլբուլի պատքիր չըս քաշիր էս վըր քու ֆօըֆ ու սարին. ու կայ մէկ մի ճամպայ Թըլի էրթայ, Հազարաբիլբուլ բերայ, դիր քու ֆօըֆ ու սարի մէջ էնի, ճըլ-ըլա, դու յանկաջ էրայ, մկայ Հազարաբիլբուլ չկայ, օր տեսնինք, էնոր պատկիր քաշինք պատի վըրէն, ու մէկ լէ չկայ օր էտ Հազարաբիլբուլ բերայ. դու օր բերիս, նոր քու իգիճ կխօսամ, օր էրթաս. քըզի կը տանեմ Սինամահաւքի մօտ, էնի քըզի կը հանայ լուս աշխար»։

Տղէն տեսաւ օր էլ ուրիշ ճար չկայ, Թագաւորից հարցուց։

– Թագաւոր ապրած մնայ, դու էտ Հազարաբիլբուլի տեղ գինա՞ս։

—Չէ՛, լաւօ, օր ես գինէինք, մկայ հազար հաղ բերել տուեր էնք։

Էտ տըղէն դուճուրմիշ էղաւ, ըսեց.—Կերթամ բերեմ։

Էն մէկել օր էտ տըղէն յէլաւ ուր նեռ ու անեղ Թալից ուր թեի, խանչեց զուր Աստուած, ընկաւ ճամբախ։

Շատ գնաց, թէ քիչ, հասաւ մէկ պաղ յաղբրի մօտ, նստաւ, փըշուըմ ջուր խմեց, հաց կերաւ, դառցաւ քիչ մի վերի աչքից, տեսաւ օր, էտ տեղից իրեք ճամբայ կը ճըտըւի յիրարուց, քարի մի վըրէն գրած, «էտ ճամբու բաժին գրած ա, օր նոր կարդայ, հասկնայ, աջ կողմի ճամբով էրթըցող գիկայ, մէջ տեղի ճամբով էրթըցող հա գայ, հա չիգայ. ձախ կողմի ճամբով էրթցող ըսկի չիգայ»։

Էտ տըղէն էր, գիր կարդաց, չիւարաւ մնաց, էտ տեղ քուն տարաւ, գլուխ դրից քարի տակ ու քնաւ, քնած տեղ էրազ մի տեսաւ. դավրեշի խըրղով մարդ մի էկաւ, ուրին ըսեց, «Էյ, հողածին, շատ դէմ մառնի, Աստուած օղորմած ա, յէլի, բռնա խառ մէջ տեղի ճամբէմ, գնա, քիչ մի գացիր թէ չէ, քըզի մէկ դևի ֆօըֆ սարէ մի ըռասք գիկայ, կիըթաս, կը մտնիս էն ֆօըֆ ու սարէն, կաչքիս օր քառասուն գլխանի դևի մէր, նստի հաց կը թխայ, ուր ծծեր Թալի յետեւանց, ծըծերից մէկ կառնիս քու բերան, կը ծըծիս. էնի օր հաց թխեց, պըծաւ, քըզնէ կը հարցու, «հողածին, հուղմ, տամ». դու ըսա.—Խնդրեմ, քու տըղէն դնիս ընձի հետ, էրթանք, Հազարաբիլբուլ բերինք։ Էնի քառասուն գլխանի դև կը դնայ քու հետ, քըզի շատ տեղերից կազատայ, կերթակ, կառնէք Հազարանբիլբուլ գիկաք։

Տղէն թռաւ քնած տեղից յէլաւ, տեսաւ օր էրազ էր, ճամա դավրեշի ըսած բամբէք ուր միտ պայեց, յէլաւ բռնեց էն յօրքըլխի ճամբախ ու գնաց հասաւ մէկ բանձր ֆօըֆ ու սարէ մի, ներս մտաւ,

տեսաւ որ․ օղորդմա դևի մէր Նըստի՝ հաց կը թըխայ․ ծըծեր յետևանց թալուկ ա. վազաւ, ծծերուց մէկ առաւ բերան ծըծեց:

Դևի մէր, հաց թըխեց․ սըծաւ․ դառցաւ հարցուց:

—Ցուզմ, տամ, հողածին․

—Իմ յուզած էն ա, որ դու քու քառասուն գլխանի աղէն դնես իմ հետ, երթանք Հազարաբիլըբուլ բերինք․

Դևի մէր ըսեց.—Գնա, Նստի քեղի փչում հաց բերիմ, կեր. հարի յիրկուն, յիրկուն իմ տղէն Ճեճիրի տեղից գիկայ, ընտոր կըսիմ, քու հետ գայ, էրտաք Հազարաբիլըբուլ բերելու․

Ցիրկուն որ էղաւ, տըղէն մէկ յիրկէն գերան գլխէ գլօխ, արջու, խօզու, գիլու, ջանցակ չարեր էր, էկաւ տուն. ճամա դռնից ներս մտաւ, ուր մօր ըսեց.— Մարդու հոտ գիկայ․ Մէր ըսեց․—Մարդ մի կկեր ա. իմ հաց թխելու վախտ ծիծսի առեր ա բերան. էնէլ քըզի պէս տըղայ ա էղի, քանի որ իմ կաթ կերաւ, երկուստի էղաք աղբէր յիրարու․ Ես քընէ մունճաք կենիմ, էտ հողածին մարդու հետ էրթաս, Հազարաբըլըբուլ բերելու, քանի որ էնի էկեր ա, ուրին թալեր ա մըր օջաղ․ Էտ քառասուն գլխանի դև ուր մամու խօսքին լսեց, սապաղցաճ յէլաւ, առաւ զուր գուրզ ու քամաճ. էտ տըղէն լէ հետ առաւ, գացին Հազարաբիլըլուլ բերելու․

Շատ գացին թէ քիչ, հասան քառասուն աղբրանց, դևէներու քօշք ու սարի մօտ. էտ քառասուն աղբրտանց մօտէն մէկ խարաւուլ կը քաշէր, տեսաւ որ քառասուն գլխանի դև մէկ մարդու հետ գիկէր դէմի ուրանց քօշք ու սարէն, համալ մէկ գլխանց բոռաց, որ երկինք-գետինք դնդաց

Էտ դևի աղբրտիք ուն որ տունն էր, տնից դուս էկան. ուն որ դնացեր էր Ճեճիր, Ճեճիրի տեղից էկան. ժողուան յիրարու վըրէն, առան ուրանց գուրզ ու քամաճ, յէլան էտ քառասուն գլխանի դևի դէմ, գուրզ ու քամաճով թալին յիրար․

Էտ քառասուն աղբրտիք, զարկին, քառասուն գլխանի դևին խարալու էրին, ճամա էտ տըղէն տեսաւ որ դևին խարալու էրին, քաշեց ուր թուր, յընկաւ քառասուն աղբրանց դևէններու մէջ. ճամա գլօխ էր, որ կը չըրտէր. արուն յէլաւ, ջանցակ գլօխեց. մէկ դնէն քառասուն գլխանի դև ջարդեց, մէկ դնէն էտ տըղէն․ Էտ քառասուն աղբօր մօտից, մնաց խօթ աղբէր. էտ խօթ լէ խարալու էրին, ճեխիր բռնին:

Գացին մտան էտ դևէններու տուն, ինչ խար որ ան գին քար կէր էտ դևէններուն, առան գացին․ Գացին-գացին, հասին հասան Հազարաբիլըբիլի դուռ, տեսան որ ճամա մարդ ա, որ տեղօս անց քար ա դառցի, էտ դև նա տըղին բամպայ էրեց, ըսեց.—Որ Հազարաբիլըբուլի մաշուղ դուս էկաւ, մըզի հետ ինչ որ զըուցեց, դու

չէղնի ջուճապ տաս, օր ջուճապ տաս, մենք լէ խոա մարդիքներու պէս քար կը դառնանք. օր ձէն չհանիս, էնի տեղոս տեղ կը պատռի. խոա քարեղէն մարդիք լէ կը սաղնան. մենք լէ կառնինք հազարաբլբուլ, կերտանք:

Գացին, նէրս մտան Հազարաբլբուլի սրահ, հազարաբլբուլի մաcուղ դուս էկաւ, ինչ օր վըուցեց, էտոք ջուճապ չտուեցին, հազար pաւnւr լեզու թափեց, էտոք ընկի ջուճապ չտուեցին, ճամա տեղօս տեղ պատռաւ, ինչ խսըr օր մարդ էր քարցի, ըլմէն սաղցան. էս սճարին փառք տուեցին Աստծուն:

Էս գեն ու տղէն մտան Հազարաբլբուլի մօտ, տեսան օր մէկ խօրօտ հաւքմ էր, խասֆասի մէջ դրած՝ վերցուցին բերին, էն քարցած մարդիկ օր տեսան էտոք Հազարաբլբուլ տռան, դուս ըէլան, վազեցին դեհ վըրէն օր Հազարաբլբուլ ձեռնէն խլեն. դե ամէկ մէկին մէկ-մէկ ճլօտ զարկեց, թօղին փախան, հեռէցան:

Դեն ու տըղէն առան Հազարաբլբուլ ու ուր մնացած մէկ մաcուղ էկան: Մէկ օր լէ էս տըղին դե չթօղեց, ուր տուն սլայեց. էն մէկել օր ճամբու դըրեց, գնաց:

Էս տըղէն տարաւ Հազարաբլբուլ ու ուր մաcուղ հասցուց Թագաւորի քաղաք. տարաւ տուեց Թագաւորին, Թագաւոր չատ ուրախացաւ, ըէլաւ էս տըղի յերսներ պաքեց, տարաւ ուր կշտի հետ դրեց:

Առան գացին. Հազարաբլբուլ դրեցին Թագաւորի չինած նոր foсf ու սաrի մէջ. Հազարաբլբուլի մաcուղ էկաւ կայնաւ, Հազարաբլբուլի դէմ, ըսեց. «Խօսա, Հազարաբլբուլ, խօսա»:

Էս Հազարաբլբուլ ուր բերան բացեց, հազար թուլլու լեզու թափեց, օր սար ու քար լացին էտոր ձէնէն:

Օր մի մնաց էն մէկել օր, տըղէն էկաւ Թագաւորի մօտ, ըսեց.
—Թագաւոր ապրած մնայ, իմ վախsէն էկաւ, կը բըմի, իմ սէրական, իմ ձեռնէն կերտայ, կռնաս ընծի չուտով հանայ լուս աշխար:

Թագաւոր ըսեց.—Ես քըզի ըսեցի, «Սինամահաւք մինակ քըզի կռնայ հանայ լուս աշխարհ.» ճամա էնտոր լէ պտի ուր նեղուտենէն ազատիս, օր քըզի օգնայ:

—Էս Սինամահաւքի նեղուտեն ինչ ա, հարցուց տըղէն:

Թագաւոր ըսեց.—Էս Սինամահաւք տաս տարին մէկ հաւ ձագ կը հանայ, մէկ վիշապ մի կայ, գիկայ, էտոր ձագեր կուտայ, ինչ կէնա-չէնա, չկռնայ էս վիշապին սպանայ, օր՝ ուր ձագեր ազատայ էս վիշապի ձեռնէն:

—Ցըստարի ձագ հանե՞ր ա. հարցուց տըղէն:

—Հա, յըս տարի ընտոր տարին ա. աղէկ վախs մի բուաս էկեր իս, ըսեց Թագաւոր. կերտաս, ծառի տակ կը պառկիս. էս Սինամահաւքի խասեաթ էս ա, օր չորս օր մէկ հաւ գիկայ, ուր ձագերու

կը տեսնի, հերակուլ կիտայ, կերտայ. պէտք ա դու պառկիս ծառի տակ, մուղաք կենաս. տեսնիս յիփ վիշապ գիկայ. յէլնիս, յիրար հետ կռուիք. եա դու էնոր կը յաղթիս, եա էնի քըզի կուտայ։

Էտ տըղէն յէլաւ, առաւ ուր էղած-չէղած, գնաց Սինամահաւքի մօտ։ Շատ գնաց թէ քիչ, հասաւ էն ծառի տակ, որ Սինամահաւք բուն էր դրի. գնաց ուր չէ ու շալաք դրեց ծառի տակ. քիչ մի քնաւ, մէկէլ տեսաւ որ խըժըըրտոց յընկաւ Սինամահաւքի ձագերու մէջ։

Համա էտ տըղէն քաշեց կուր թուրն ու յէլաւ, տեսաւ որ վիշապ էն դըհէն բերան բացի, գիկայ, որ յէնի ծառնուլի, դէտ ձագեր ուտայ։

Տըղէն քշեց, վիշապի յառէջ կըտրեց, թուր մի թալեց վիշապին, գլխու կէս տարաւ, վիշապ ուր պոչ թալեց, էտ տըղի մէջք փաթեց, ճըխտեց դկօղեր յիրարու վըրէն, որ տըղի մէջք ջարդէր, տըղէն թըրով խաք-խաք կտրտեց, վիշապին դիզեց յիրար վըրէն. էղաւ մէկ մեծ կօլօմի, ու կը պառկի ծառի տակ, կը քնի։

Սինամհաւք ուր ձագերու խըժըըրտոց հեռուն աշխարքից լսեց, գիցաւ որ վիշապն ա էկաւ ուտելու, համա սուրութման էկաւ. էրեց որ զարկեր էտ մարդու կտոր-կտոր էնէր, գինէր թէ էտ մարդն էր ըմէն հաղ ուր ձագեր տանող. համա ձագեր վըժվըժացին նամա՛ն, քու Աստծու սիրուն էղնի, էդ մարդուն մը զարկի. էտ էր մըզի ազատօղ վիշապի ձեռնէն, հալա տէքա վիշապի ջանեակ որ բըդի դիզեր ա յիրար վըրէն։

Ձագեր որ էտ համալ ըսեցին ուրանց մօր, մէրը թեւեր բռնեց արեւու դէմ, հով էրեց էտ տըղի վըրէն. տըղէն կուշտ քնաւ, յէլաւ, տեսաւ որ Սինամահաւք էկեր ա, ուր վըրէն հով ա էրի, յէլաւ կայնաւ։

Սինամահաւք ըսեց.—Տըղա՛ յուզա, տամ»։

Տըղէն ըսեց.—Ընծի հանա լուս աշխարք»:

—Վա՛յ քու սորվըցնողի վիզ կոտրի, էտա պառաւ վախտս ա, ես լինչ կունամ քըզի շալկիմ, հանիմ լուս աշխար։

—Ապա իմալ էնիմ, ըսեց տըղէն, իմ յուս վերեւ Աստուծն ա, ներքեւ դու իս, դու գինաս։

—Որ հըմալ ա, ըսեց Սինամահաւք, գնա, քառասուն լիտր գինի բեր, քառասուն լիտր լէ դմակ. ես որ հա՛ կէնիմ, դմակ թալա բերանս ի, որ ղու կէնիմ, գինի թալա բերանս ի, հարի քըզի հանիմ լուս աշխար։

Էտ տեղից տըղէն դառցաւ, էկաւ թագաւորի մօտ, առաւ քառասուն լիտր գինի, քառասուն լիտր դմակ, գնաց։

Բերեց ուր ճէ ու չալաղ. էդ դմակն ու գինին առաւ, յէլաւ նստաւ Սինամահաւքի պառեկի վրէն, Սինամահաւք էտոր առաւ, ճաւալամիշ էղաւ, ճա էրեց, դմակ թալեց բերան, ղու էրեց, գինի լըցեց բերան, յէլան. քիչ մնաց որ յէնէն լուս աշխար, դըմակ խլըսաւ, էդ հաւք մէկլէ որ հա էրեց, դմակ չկէր, ճամա ղանակ թալեց ղուր թուխկի մէս կտրեց, թալեց էտ Սինամաւքի բերան. Սինամահաւք գիցաւ որ էդի մարդու միս էր, չկերաւ, լիզուի տակ պահեց։

Ցէլան լուս աշխար, Սինամահաւք էտ տըղին յիջուց գետին, ըսեց.—Գնա՛ ։Տեսաւ որ տըղէն չըր կռնէր քելէր, կը թօփլտէր, խանչեց ուր մօտ տըղին, ըսեց.—Ցընչի կը թօփլաս։ Տըղէն ըսեց.—Ոտսի կռմնը ա նստելով, էդոր համար կը թօփլամ։ Սինամահաւք ըսեց. —Դու սուտ կըսես, քու մսից կտրիր, թալիր իմ բերան, ես հասկցայ, որ իսճի միս էր, չկերայ, իմ լիզուի տակ պահեցի։ Հանեց լիզուի տըկից, միս, դըրեց տեղօս-տեղ, ուր յաչքի արտսունքից փըչում քսեց վըրէն, սաղցաւ տըղի ճարէն. շնորակալութեն առաւ Սինամահաւք, դառցաւ ուր ճամբով։

Էտ տըղէն լէ բարակ ճամբէ մի բռնեց ու գնաց։ Գնաց մէկ հովըւիմ մի ըռաստ էկաւ, ըսեց.—Հովիւ աղբէր, ես իմ շօրեր կիտամ քըզի, դու քու շօրեր տո՛ւր ընծի։

Հովիւ ուրախ-ուրախ, ուր շորեր հանեց, տուեց էտ տըղին, տըղի շորեր լէ առաւ ուրին։

Տղէն հանեց, քանիմ ղուրուշ փարայ տուեց, հովւու մօտից մէկ գառ առաւ, մորթեց, միսն ու փօրը տուեց հովըւին, փոր չորցուց յէցքեց ուր գլօխ, էղաւ մէկ քաչլիկ մի, չալկեց ղուր ճէ ու չալակ, գնաց։

Գնաց հասաւ ուր քաղքի մօտիկ, գնաց մէկ բօստանչու մօտ, ըսեց.—Ընծի չըս բռնի քու յառէջ խզմաթչի։

Բօստնչին ըսեց.—Ցընչի չէ, քու ճախ ընծի ըսա։ Էտ տըղէն ըսեց.—Իմ ճախ ինչ որ տուեցիր, դու քու իքամ։

Էդ տեղ բօստնչու հետ ուր ճախ կտրեց, էղաւ բօստնչուն խզմաթչի։

Էրկօր մնաց, իրեք դիանըյայ, տեսաւ որ գմփըտուն դըքղաք վերցուց։ Էտ տղէն էկաւ ուր աղից հարցուց։

—Աղա, խտա լինչ գմռտուն ա քաղքի մէջ։

Աղէն ըսեց.—Մեր թագաւորի տըղէկներ գացին անմահութենի խնծոր բերին, տուեցին թագաւոր կերաւ, ջհելցաւ, իրեք հատ լէ խօրօտ աղջիկ էն բերած, էրկուս պսակեցին աղբրտանք ուրանց վըրէն. Պըզտի աղջիկ լէ պըտի պսակեն վըր թագաւորին. քառսուն օր վատա եա կտրի, օր պսակւի. յէռսուն ու եօթ օր գնաց, մնաց

իրեք օր. յըսօր էտ Թագաւորին առնող աղջիկ ըսեր ա օր ջրիճs խաղան հալի իրեք օր։ Իրեք օրէն յետե ըսեր ա «մէկ քանիմ բաներ լէ կայ, կըսիմ. օր կատարեք, նոր կը պսակուիմ Թագաւորի վըրէն»։

Փըշում մնացին էտ խօսքի վըրէն, տըղէն մէկ լէ տեսաւ, օր կէցնի հազար ձիաւոր, հեծած էտ աղջկայ նըստած ֆօշֆ ու սարի փաճ-ճարի դէմ ջրիճs կը խաղան։

Ցէլաւ, ուրին քաշեց բաճճայ, խմալ օր սեւատկ ձիու պօչի մազ ճըրըներցուց, դախին սեւատկ ձին, ճազր ուր մօտ կայնաւ. մէկ ձեռք լէ հագնելու խասս չոր վըրէն։

Էտ տըղէն ճամա չուտ ուր չորեր փոխեց, յէլաւ հեծաւ ձիուն. գնաց խառնւաւ էտ ջրիճs խաղցող ձիաւորներուն. ճամայ աղէկ ջրիճs խաղցաւ, օր էտ քաղքի օճճըկ յըմչն աճէպ կըրան. քըշեց էկաւ աղջկայ նստած փաճճարի յառջևէն յընցաւ, աղջիկ օր տեսաւ ձիուն ու տըղին, լն սճաբ ճանչըցաւ, ուր մըտքի մէջ ըսեց. Աստուած ընծի իմ մուրազին հասցուց. վայա՛ տըղէն էկեր ա։ Տղէն գնաց, ձիուց յիջաւ, ձին Թօրկեց, գնաց ուր տեղ, ու յինք լէ գնաց քօսաճ։

Էն մէկել օր էլման ձիաւորներ հէծան, ջրիճs կը խաղէն, էտ տըղէն ուրին քաշեց բաճճայ սև ձիու պօչի մազ ճըրըներցուց. մէկէլ տեսաւ, սև ձին. բռախsօմ-փուսաբօմ ուր յառէջ կայնաւ, չուտ ուր չորեր փոխեց, յէլաւ հէծաւ ձիուն, գնաց մտաւ ձիաւորներու մէջ, համալ ջրիճs խաղցաւ օր յըմէն աճէպ կըրան էտ տըղի ջրիճs խաղալու վըրէն։ Էլման քըշեց աղջկայ նստած փաճճարի յառջևից գնաց մէկ, բայճայ տեղ յիջաւ, ձին Թօրկեց, գնաց ուր տեղ, յինք լէ գնաց քօսաճ։

Իրեք օրուայ վըրէն էլման ժողուան ձիաւորներ ջրիճs խաղցան, էտ տըղէն ուրին քաշեց բաճճայ. կարմիր ձիու պօչի մազին ճըրըներ-ցուց. կարմիր ձին էտոր յառէջ կայնաւ, էտ տըղէն ուր չորեր փոխեց, յէլաւ, հեծաւ, գնաց. ձիաւորներու մէջ համալ աղէկ ջրիճs խաղցաւ, օր էտ քաղքի օճճըկ յըմէն աճէպ կըրան քշեց աղջկայ փաճճարի յառջևէն գնաց, յիջաւ, ձին Թօրկեց, գնաց, յինք լէ էկաւ քօսաճ ուր բանին էղաւ։

Աղջըկայ քառսուն օր բմաւ, Թագաւոր մարդ ճամբեց մօտ, ըսեց.—Ա՛րի, պսակուինք։

—Չըմ պսակուի, ըսեց աղջիկ։

«Ցօրի չպսակուի, ըսեց Թագաւոր, ճաչա գնա՛, հարցու։

Գացին աղճկան ըսեցին, Թագաւոր կըսայ «յօրի չպըսակուի։

Աղջիկ ըսեց.—Ընծի իրեք հատ բամպի կայ, յեւօր Թագաւոր կատարեց. նոր կը պսակուիմ։

Էկան, Թագաւորին ըսեցին.—Աղջիկ կըսայ «ընծի իրեք բամ-պա կայ, Թագաւոր յեպօր կատարեց, նոր կը պսակուիմ»։

Թագաւոր ըսեց.—Գացէք հարցուցէք, տեսէք ինչ կսայ, արէք, ընծի ըսէք։

Էկան աղջկան ըսին.—Թագաւոր կըսայ, «ուր բամպին ինչ ա, թըլը ըսայ»։

Աղջիկ ըսեց.—Թագաւորից գուզիմ մէկ օսկի հաւ, օսկի կուտ յառէջ. մէկ օսկի սինու մէջ դըրած, գուզիմ մէկ օսկի կատու, օսկի մուկ, օսկի սինու մէջ դըրած. էդոք որ բերեց, պըծաւ, պէտք ա բերայ հըմալ հէքեաթ ըսօղ մի, որ խամտան մէկ հէքեաթ ըսայ, ուր քաղքի մեծ ու պըզտիկ ժողուայ, որ յանկանջ էնին, յեպօր էդ իմ բամպէք կատարեց, նոր կը պսակուիմ։

Աղջկայ ըսած խօզքեր ու բամպիք էկան, Թագաւորին ըսեցին, Թագաւոր էն սըհաթ ուր քաղքի մէջ ինչ խսրպ որ օսկերիչ կէր, զըմէն խանչեց ուր մօտ, ըսեց.—Կերթաք, կը շինիք մէկ օսկի սինի, օսկի սինու մէջ կը շինիք, մէկ օսկի կատու օսկի մուկ յառէջ, էլման կը շինիք մէկ օսկի սինի, օսկի սինու մէջ կը շինիք մէկ օսկի հաւ, օսկի կուտ յառէջ։

Թագաւորի էդ ըսածներ ըսկի մէկ օսկերիչ չըկըցաւ շինեց, Թագաւորի իլաճ կտրաւ, դալալ տըւեց խանչել. «Որն որ Թագաւորի ըսած օսկի ամարաքներ, Թագաւորի նոր խանըմի ըսածի պէս շինեց, Թագաւոր էնդոր ուր ծանտրութենով օսկի կիտայ»։

Ըսկի մէկ մարդ մի էդ կայեն քաղքի միջից յառէջ չէկաւ, էդ բօստանճի տըղէն էկաւ դալալի յառէջ, ըսեց.—Թագաւորի ըսածներ ես կը շինիմ, մինակ ընծի մէկ բեռ գուզ տայ ամեն մէկ գիշեր քանի որ էդ շինելուց չպըծեր իմ։

Դալալչին էկաւ, Թագաւորին ըսեց.—Ֆըլան բօստնճու մօտի մարդ ըսեց «ես կը շինիմ, ճամա ամեն մէկ գիշեր մէկ բեռ գուզ ընծի տայ. քանի որ չպըծեր իմ շինելուց»։

Թագաւոր ըսեց.—Շատ աղէկ, տարէք, մէկ բեռ գուզ տուէք. իրեք-չորս գունտ լէ օսկի էն բօստնճուն՝ թըլը շինայ։

Առան գացին գունտ-գունտ օսկիք, ու մէկ բեռ գուզ տուեցին էդ տըղին՝ սապաղտան յէլաւ ուր մօտի օսկի կատուն, օսկի մուկ, օսկի հաւ, օսկի կուտ, ու օսկի սինիք ճամբեց Թագաւորին. Թագաւոր լէ ճամբեց աղջկան, աղջիկ որ տեսաւ, էն սըհաթ ճանչըցաւ որ ուրանց ապրանքն ա որ յինք բամպի էրեց .... տըղին, տըղէն լէ բերեր ա։

Էն մէկէլ որ էդ աղջիկ ըսեց.—Կերթաք ընձի մէկ հէքեաթ ըսօղ մի կը բերիք, ու քաղքի մեծ պզտիկ կը ժողուիք որ յանկանջ դնին էն հէքեաթ ըսօղին. յեպօր հէքեաթ պըծաւ, ես նոր կառնիմ Թագաւորին։

Էդ աղջկայ ըսած խօսքեր յըմէն էկան, Թագաւորին ըսին՝ Թագաւոր յէլաւ դալալ խանչել տուեց, ըսեց. «Որ նոր գայ, խամեաճ մէկ հէքեաթ ըսայ, Թագաւորի նոր բերած խանըմըն հաւնեցաւ. Թագաւոր էնդոր ուր կշըռանօցով օսկի կիտայ»։

Էդ բօսեճի տըղէն էկաւ, դալալին ըսեց,

—Ես շատ աղէկ հէքեաթ ըսել գիտամ։

Դալալ էդոր ձեռնէն բռնեց, տարաւ Թագաւորի մօտ։ Թագաւոր դալալ տուեց խանչել, ըսեց.—«Ինչ խըտր, օր քաղաք մարդ կայ, պէտք ա գայ Թագաւորի սարային օր հէքեաթ ըսօղին յանկանջ դընին»։ Էդ քաղքի մեծ ու պզտիկ յըմէն էկան Թագաւորի սարային, Թագաւոր խանչեց էդ տըղին, ըսեց օր, ուր հէքեաթ ըսայ։

Էդ տըղէն ըսեց.—Թագաւոր ապրած մնայ, վախտի մէկին, ըռըճճըրի մէկ, ըսկի ժառանկ չունենայ։ Մէկ օր էտ ըռըճճբար կերտայ ուր յարտ վարելու, կը ճէրսօտի ուր լծած էզան, կըսայ «մուռտալ»։ Աստըծու հրամանքով էդ եզ լիզու գէլնի, ըռըճճըրին կըսայ՝ «մուռտալ մենք չինք, մուռտալ խաճ ա, օր ճա՛ ժուկ գինայ, ճա՛ ժամանակ, յըմէն հաղ մեղք կենայ. օր կը մեռնի, կը տանին հօղի տակ կը հօրին, ճամա մենք օր կը հիւնդնանք, մըզի կը մօրթին, ուտին, զմըր կաշին լէ կը հագնին. դու օր քու վախտ յիմնաս, էրտաս քու դօճակ, քու կնիկ Աստըծու խասու խուտրաթով կը պառկի, մէկ տըղէ մի կը բերայ, ճամա քու էդ տըղէն լէ շատ գիտնակ տըղայ կէղնի»։ Ըռըճճըար աճեպ կը մնայ օր եզ մարդու պէս կը զրուցայ. էլ մէկ տարի թամամ ուր դօճակ չէրտայ, տարին օր թըմաւ էդ եզան ըսած օր, էդ մարդ կերտայ ուր դօճակ, էդ մարդու կնիկ կը փօրօմնայ, Աստըծու հրամանքով կը պառկի, ուր վախտին, մէկ շատ յիմաստուն տըղէ մի կը բերայ։

Էդ տըղէն կէղնի վեց-եօթ տարեկան. մէկ օր մի գէլնի, յարտ ու ր հօր հաց կը տանի, պապ կը նըստի օր հաց ուտայ, տըղէն հօր թեւէն կը բռնայ, կըսայ.—Մուտի՛։ Պապ կըսայ.—Ցընչի չուտիմ։ Կըսայ. Մըզի ղօնախ գիկայ. մէկլէ կաչքայ՛ կը տեսնի օր իրեք ձիաւոր էն դըհէն յէլան, էկան դէմի ուրանց, էկան բարեւ տուեցին. էդ պզտիկ տըղէն զէտոց բարեւ առաւ, էդ ձիաւորներ հարցուցին.—Ի՞նչ կայ, ինչ չկայ աշխարհ։ Էդ տըղէն ըսեց.—Ինչ օր կայ ձըր մօտն ա. մարդ չը գինայ։

Էդ ձիաւորներ լէ Ստամաթ Թագաւորի աղջիկն էր ճամպի էրկըներ ժուռ գալու. ու էնդօցլէ թամպա էլեր էր, ըսեր էր, «ալամ—աշխար ժուռ գիկաք, ըռաստ գալօղ մարդուց կը հարցուք, թէ «աշխար ինչ կայ. ինչ չկայ.» օրն օր ձըր ջուճապ տուեց թէ, «ինչ օր կայ ձըր մօտն ա»։ Էն մարդու ձեռնէն բռնիք, բերիք, ես էնտօր սիրտ ու թոք ուտեմ օր չմեռնիմ։

Էդ ձիաւորներ տեսան օր Թագաւորի աղջկայ էրած քամպի ջուապ էդ պզտիկ տղէն տուեց. էդ տղի Թևէն բռնին, տարան Թագաւորին.

Էդ տղի պապ լաց յընկաւ յետևներէն, տղէն դառցաւ ուր հօր սիրտ տուեց, ըսեց,—Ափծօ. մի՛լայ-մի՛լայ, ես վաղ-մէկէլ օր կը դառնամ, ընծի բան չէղնի՛, դու ըսկի մը՛ վախենայ։

Պապ Թողեց, դառցաւ, էդ ձիաւորնեը առան զէդ տղէն ու գացին, տարան տուեցին Աստամաթ Թագաւորին։ Աստամաժ Թագաւոր էդ տղին զրուցք տուեց, չատ հաւնաւ, էլ չ՝խիմիցաց մէկից տէր ուր աղջկայ ձեռ օր մօրթէր. տուեց ուր սատրիազամին, ըսեց. —Տա՛ր զխտայ տղէն պահայ, ճալա տեսնիմ իմ աղջիկ ինչ կըսայ։

Սատրիազամ առաւ տղին, գնաց ուր տուն, էդ տղէն Սատրիազամին ըսեց։—Իմ տէ՛ր, յըսօր ձըր քաղքի մէջ մէկ պզտիկ տղէմ ի մեռաւ, տարան հօրեցին. արի՛, Թը կեղնի, իմ արև ընձի բաշխայ, մէկ օր մի ես լէ քըզի պէտք գիկամ. մարդ ճամբայ, Թըխ էրտան էն նոր մեռած տղէն գերէզմընէն հանին, էնդոր սիրտ ու Թոք հանին, բերին, տան Թագաւորի աղջիկ ուտայ, օր ուր ձեռ իմ խախից Թողայ։

Սատրիազամ էդ տղի խօսքին յանկաջ էրեց. յէլաւ, մարդ ճամբեց, գացին էն մեռած տղի սիրտ ու Թոք բերին. տարան, տուեցին Թագաւորի աղջիկ կերաւ. էն մէկէլ օր Սատրիազամ Թողեց էդ պզտիկ տղէն, գնաց ուրանց տուն։

Ժուկ մի յընցաւ էդ արալըղ, մէկ օր Թագաւորի բոռճին իրեք հատ չատ խօրօտիկ ձուկ բերեց Թագաւորին փեշքեշ։ Թագաւոր լէ յէլաւ, ճամբեց ուր աղջըկան, աղջիկ ձկներուն յետ ճամբեց, էկաւ Թագաւորին ըսեց.—Էդ ձկներու մէջ որձ ձուկ կայ, ես կուս աղջիկ, ու հարի մեռնելու օր պըտի կուս մնամ. ես որձեղէնի միս պըտի չուտիմ, որձ խնճի հոտ բիլայ իմ քիԹ չքինի պըտի։

Թագաւոր չատ դուշուրմիշ էղաւ ուր աղջկայ ըսած խօսքերու վըրէն, Աստծու խաս ու խուտրատով ձըկներուց մէկ յէլաւ լիզու, Թագաւորին ըսեց.

—Որձը ուր մօտն ա, էգը ուր մօտն ա, ու Թըռաւ Թագաւորի յառջևից, փաճճարի միջով յընկաւ ծով։

Թա՛գաւոր էն սհաթ կը խանչայ զուր սատրիազամին, կըսայ.—Նա ձկան ըսած ջուճապ ընձի կիտաս, եա լէ չէ՛ քու գլօխ կը զարկիմ։

Սատրիազամ կը մնայ չիւար, հինկ օր վաղտայ կը կըտրայ, յետօր զէդ ջուճապ չտուեց, նոր Թագաւոր զուր գլօխ զարկայ։

Սատրիազամ գիկայ ուր տուն, չուտ կը ճամբայ էդ տղի յետևէն, կառնի տղէն, գիկայ։ Էն մէկէլ օր Սատրիազամ տղին կը

տանի կը հանայ Թագաւորի յերես. էդ տըղէն իրեք հատ առակով կը հասկցու Թագաւորին ձկան ըսած խօսքեր։

Տըղէն կըսայ.—Թագաւոր ապրած մնայ. վախտի մէկին մարդ մի կէղնի, էդ մարդու կնիկ ինչ խըտըպ՝ կը պառկի, էրեխայ կը բերայ. վիշապ մի ուր տան յառկէն գօղտու գիջնէր, էդ մարդու էրեխէն օրօցի մէջ կը խեղտէր, ու էլման կը քաշուէր յառիկ, կը պահուէր։ Մէկ օր մի յեպօր մարդ ու կնիկ տուն չէղնին, էդ վիշապ յառկէն կախ գընկնի օր յիջնի քնած տեղ օրօրոցի մէջ էդ էրեխին խեղտայ. էդ տան տիրոջ մէկ պզտիկ բօճի չուն կէղնի, էդ սճաքուն էդ բօճին օրօրոցի տակ պառկուկ կեղնի. վիշապի յիջնելու խշըրուտոց կը լայ, գէլնի, կաչքայ օր վիշապ յառկից յիջաւ, էկաւ ուր պօչ փաթեր օրօրոցի մէջ էրեխի վըզով, օր խեղտէր. ճամայ էդ բօճին յէլաւ, ուր յակռէններով վիշապի պօչ կտրեց. վիշապն ու բօճին կռւտան, բօճին վիշապին խեղտեց, էրեխին ազատեց. քիչ մի մնաց, տան տէր էկաւ, դուռ բացեց, բօճին արնլուայ յէլաւ ուր տիրոջ յառէջ, տէր ըսեց.—Վ՛այ. յըմէն հա՛ղ իտայ բօճին ա օր զմըր էրեխէք կը խեղտայ, մենք Յարազ խապար չունինք. կը զարկայ, բօճուն կըսպանայ, գիկայ կը մտնի տուն, կաչքայ օր օրօրոցի մօտ մէկ մեծ վիշապի ջանեակ կայ, էն սճաք հասկցաւ օր վիշապ յիջէր ուր էրեխին խեղտայ, բօճին վիշապին[կտրտեր ա, էրեխին ազատեր ա։ Թագաւոր ապրած մնայ, ինչ խեղր ցաւ էղաւ էն բօճու տիրուն, օր ուր խելացի չուն սպանեց։

—Շատ ցաւ էղաւ, ըսեց Թագաւոր։,

Էն էրկու առակ Թըլի մնայ, յիրկուն կըսեմ. տըղէն ըսեց Թագաւորին, ու ձըգի գիշեր բարի ըսեց. առաւ Սատրիազամին, գնաց։

Էն մէկէլ յիրկուն Թագաւոր էլման ղանչեց, էդ տըղին բերեց, էդ տըղէն իդա հաղուս մէկէլ առակ ըսեց,—«Վախտի մէկին մէկ իշխան մարդ մի կէղնի, գէլնի կառնի զուր բազէն, կերթայ սար օր նճիր էնայ, շատ կը ծառւընայ, կերթայ մէկ մեծ քարի տակ, ձիով կը կայնի, կաչքայ օր էդ քարայի յերէսէն կաթիլ-կաթիլ ջուր կը կաթայ, էդ իշխան ջեպից կը հանայ օսկի ջըխմիչ, կիտայ էդ կաթիլ ջըրի դէմ, կը բերայ օր խմայ, ուր ձեռաց բազէն կըտցով կը զարկայ, կը թափայ, չթողայ օր էդ իշխան խըմայ էդ ջուր։ Իշխան մէկլէ ջըխմիչ կիտայ էդ կաթիլ ջըրի դէմ, կէնայ, օր էդ ջուր խմայ, բազէն կը զարկայ, կը թափայ. ճըմա իշխան ինատ կէնայ, կը վերցու բազին կիտայ քարին, բազէն տեղօս տեղ կը սատկի, իշխան ուրին, ուրին ցուցուրմիշ կէղնի, կըսայ, «Ջանըմ, ես յօրի ամեղ տեղ զարկի գիմ բազէն սպանեցի, բալկի՛ մէկ բան կէր էդ ջըրի մէջ, օր բազէն չըթօրկէր ես խմէնք, ճալա ես պըտի յէլնիմ քարի գլօխ, աչքիմ, տեսնիմ էդ ջուր յուստի՞ գիկայ։

Գունի քարի գլօխ, կաչքայ օր մէկ մեծ վիշապ մի փիցեր ա, սըւ զարկի վըրէն, էդոր ճենճն ա օր կը հալի գիկայ, էդ քարից կը թափի կաթ-կաթ. Նոր կը զարկայ չօքերուն, ախ կըսայ. իմ յաչքեր քոռնայ, իմ բաղէն գինէր օր օձու արուն էր, ես պտի խըմէնք, մեռնէնք, զարկեց իմ ձեռնէն թափեց, ես յընչի զարկեցի քարին, սպանեցի բաղին։

—Ի՞նչ խըբըրպ ցաւ տուեց էդ բաղէն ուր տէրուն, Թագաւոր ապրած մնայ։

—Շաա ցաւ տուեց, ըսեց Թագաւոր։

Էդ գիշերը էդ տըղէն Թագաւորից իզին առաւ օր վաղ լիրկուն լէ գայ, զմէկէլ առակ ըսայ. «Ձըզի գիշեր բարի» ըսեց. առաւ Սատրիազամ, գնաց։

Էն մէկէլ լիրկուն էդ տըղէն ու Սատրիազամ էլան յէլան, գացին Թագաւորի մօտ, էտ տըղէն մէկէլ առակ ըսեց.

– «Վախտի մէկին մէկ Թագաւոր մի կէղնի, Հնտստանու էդ Թագաւորին մէկ Սինամահաւք փեշքեշ կը բերին. էդ Թագաւոր եօթ տարի զէտ հաւք կը պահայ ուր խաս-բաղճէն. էդ հաւք ըսկի չը զըռուցայ։ Օր մի Թագաւոր գէլնի ուր բաղճէն կը զըւըռնայ, փառւեզ կիտայ-կերթայ գիկայ, մէկէլ կը տեսնի էդ հաւք ուրին-ուրին կը ծիծղայ. Թագաւոր ուրնից կը խռոտի, կը դառնայ էդ հաւքի վրէն, կը ճեռսօտի, կըսայ.—Մուռտալ, եօթ տարի դու յուտս իս, չըը ծիծղէ, յըսօր իմ վըրէն ծիծղացիր։ Աստծու հրամանքով էդ Սինամահաւք լիզու յէլաւ, Թագաւորին ըսեց.—Թագաւոր ապրած մնայ, ես քու վըրէն խօմ չծիծղացի։ Թագաւոր ըսեց.—Ապա վիր վըրէն ծիծղացիր։ Էդ հաւք ըսեց.—Յըսօր իմ աղբօր տըղի հարսնիքն էր, էնտօք էն տեղ իմ կենաց գինի խմեցին, ես յուտայ յիմցայ, էդոր համար ծիծղացի։

Թագաւոր ըսեց.—Օր ես քըզի թողիմ, էրթաս քու աղբօր հարսնիքը, ընձի ի՞նչ փեշքեշ պըտի բերիս։ Հաւք ըսեց.—Քըզի մէկ անմահութենի խնծորի հունտ կը բերեմ, քու բաղճէն տնկիս, մէկ տարի յետև պտուղ կիտայ. էն պտուղ տուած խնծոր օր ուտիս, կը ջհելնաս։ Թագաւոր ըսեց.—Օր համալ ա, դը գնա։

Էդ հաւք գնաց, ուր աղբօր հարսնիք էրեց, պըծաւ. մէկ անմահութենի խնծորի հունտ դըրեց ուր լիզուի տակ, բերեց Թագաւորին փեշքեշ։ Թագաւոր էդ հունտ տնկեց ուր բաղճի մէջ, մէկ տարի յետև պտուղ տուեց, խնծորներ հասան, իմալ կէղնի էդ խնծորներուց մէկ օձ կը դեղայ, էն դեղած խնծոր էդ Թագաւորի բաղուանճին կըքաղայ, կուտայ. ճամա տեղօս տեղ կը մեռնի, Թագաւոր գիկայ, կաչքայ օր բաղուանճին էդ խնծոր ուտելուց ա մեռի, կը դառնայ Սինամահաւքին կըսայ.—Դու խօյ, իմ դուշմանն չիս օր խա-

պիր ընձի, իտայ ծառ տնկիր իմ բաղճի մէջ, որն օր էդոր խըն-ծորներ ուտայ, մեռնի. Իրմայ կը քաշայ Թուր կը զարկայ էդ հաւ-քու վիզ կը կտրայ. հաւք տեղօս տեղ կը սատկի։

Թագաւոր հրաման գէնայ, էդ ծառ կը կտրեն, բաղճի միջէն կը հանեն, կը տանեն չօլ մէկ դուզ տեղ մի կը Թալին։

Էդ քաղքին մէկ հալիւոր Նախրճի կէղնի, յինքն ուր կնիկ մալ կը տանին արծըլու, կերտան էդ չօլ տեղ էդ ծառին ու խնծորներուն բռասց գիկան, ամէկ մէկ հատ կուտին, էրկուս լէ կը ջհէլնան, կէղ-նին տասն ու հինգ տարեկան թուրվանճազ ջհէլ։ Էտ Նախրճին ու ուր կնիկ յիրարու կըսին.—Քաղինք իտայ խնծորներուց, տանինք մեր Թագաւոր ուտայ, մըզի քըշում փարայ կիտայ։ Կը քաղին էդ խըն-ծորներուց, կը բերին, կիտան Թագաւորին, Թագաւոր ուտելու պէս կը ջհէլնայ, կէղնի տասն ու հինգ տարեկան։ Էն սհաթ Թագաւոր կը կը խանչայ էդ Նախրճին, ուր կնիկ, կըսայ.—Էդ խնծոր յուստի բե-րիք»։ Նախրճին ու, ուր կնիկ կսեն.—Ըշտայ, Ֆլան տեղ մէկ ծառ Թալած կէր, էնտոր վըրէճէն ժողվինք բերինք։

Թագաւոր նոր կը հասկնայ, օր ուր բաղճի միջի անմահութէնի խնծորի ծառն ա, ճամա, Ճա Ֆայտայ օր կտրեց մէկ հաղ ուր բաղճից դուրս Թալեց, ու ամեղ տեղ Սինամահաւքին սպանեց։—Ինչ խտըպ ցաւ տուեց էն Սինամահաւք ու անմահութենի խնծորի ծառ էն Թագաւորին։ Էդ Թագաւոր ըսեց.—Շատ ցաւ տուեց։—Էլ էդ Թա-գաւոր ապրած կենայ, Թէ օր ձըկան ըսած խօսքի ջուճապ տամ, դու էլ մարդ կըսպանիս։

Թագաւոր ըսեց.—Սպանիմ, չըսպանիմ, դու պէտք ա ձկան ըսած խօսք ընձի մէկնիս։

Էդ տըղէն յէլաւ, առաւ Թագաւոր, գնաց աղջկայ խաս բաղճէն, Թագաւորին ըսեց.—Դը խանչայ քու աղջկան, Թըլս առնի զուր քառ-սուն ջառէն, գայ. Թագաւոր խանչեց ուր աղջկան. աղջիկ առաւ զուր յեռսուն ու ին ջառեն էկաւ, տըղէն ըսեց Թագաւորի աղջկան. —Ցընչի մէկ հատ պակաս բերիր, քու ջառեք քառսուն հատ են. դու մըկայ յեռսուն ու ին հատ բերիր։

Տըղէն դառցաւ Թագաւորին, ըսեց.

—Թագաւոր ապրած մնայ, դու գինաս, էդ քու աղջիկ յընչ գուզէր մարդու սիրտ ու Թոք ուտէր։

—Ցընչի գուզէր, ըսեց Թագաւոր։

Տըղէն ըսեց, գօղտու բան չպահուի, ու քու աղջիկ լէ սուտ կուսուտեն առեր էր վըրէն, գըզի կը խափէր, գինէր օր, օր մի ուր էրած չնգործութեն այեաճ գէլնէր. Էնդոր համար էր օր ձիաւոր-ներ կը զըւըռնէն ու բռասց գալողից կը հարցուցեն. «Ի՞նչ կայ, ի՞նչ չկայ աշխար». որ նոր էդ ջուճապ տէր, բռնէն, բերէն օր քու աղջիկ

Ինչոր սիրտ ու թոք ուտէր, որ էկան, ընծնէ հարցուցին, «ինչ կայ աշխար» ես ըսի «ինչ որ կայ ձըր մօտ նա»։ Ընծի բռնին, բերին որ քու աղջիկ իմ սիրտ ու թոք ուտէր, համա Աստուած ընձի ազատեց, ես քըղի ճամուսըզ չէնելու համար ուրիշներուն չսեցի, քու աղջկայ էրած խապէպահութեն. Աստուած չընդունեց. ձուկ յէլաւ լիգու, քըղի ըսեց. «էդ լէ ուր մօտն ա, որձ լէ»։

Տըղէն ըսեց.—Դէ գլտա քառսուն աղջիկ տըկլօզցուցէք։ Քառսուն աղջիկ լէ տկլօզցուցին. մէկ տղամարդ դուս էկաւ էդոց մէջ, թաղաւոր զարմանք մնաց։

Տղէն դառցաւ թագաւորին. ըսեց.—Թագաւոր, քու աղջիկ քըղի կը խափէր, որձ ձկան միս չըր ուտէր, որ դու հաւատէր թէ քու աղջիկ մաքուր կուս ա, ու քըղնէ գօղտու աղջկայ խլըղի իդայ տըղէն ուր մօտ կը պահէր։

Թագաւոր շատ հաւնաւ էդ տըղին, ուր աղջկան թալեց ծով. ու էդ տըղէն դառցաւ ուր հօր ըսեց.—Էն աղջկայ չնգործութեն որ այեաճ էղաւ ուր հօր, ես յօրի պըտի այեաճ չէղնիմ իմ հօր։ Ձեռ թալեց ղուր գլխու քաչլիկ գառու փոր վերցուց. թագաւոր տեսաւ որ էդի ուր տըղէն ա. յէլաւ վազաւ, ուր տըղի վըզով յընկաւ լացաւ, դառցաւ հարցուց թագաւոր ուր տըղից.—Ապա քու աղբրտիք ընձի ըսին թէ դև սպանեց մեր աղբօր, մենք լէ սպանեցինք դևին, առանք գլտայ անմահութենի խնծոր ու գլտայ իրեք աղջիք բերինք, ճամալ ա ընձի խափեցին։ Էդ տեղ տըղէն ղուր գլխու գալաճաղ յըմէն ըսեց . . . . ուր հօր. հէր բերեց դևի մօտից բերած աղջկան, աղջիկ լէ վազաւ տըղի վըզով յընկաւ, սճաթ մի կեր օր, ուրախութենից խելք գնացեր էր, ջուր ցանեցին յերէսին, աղջիկ յէլաւ, նըստաւ, բերեցին տըղէն ու աղջիկ վըր յիրարու պսակին. քառսուն օր քառսուն գիշեր եօթ ձեռք դհօլ զուռնով հարսնիք էրեցին, պըծան. էն մէկէլ աղբրտանք կամչընէն, էդ աղբօր մօտից, յերես չիկէն. գնաց էնդոց լէ ըսեց.—աղբրտանք յընչի չիկաք. ախըր էդ իրեք առակ ես ձըր համար ըսեցի որ իմ հէր չնեղենէր ձըր վըրէն, դուք առանձ վնասի պըծնէք, ու փառք Աստու պըծանք լէ . . . . ։

20

ՎԻՇԱՊ ԵՒ ՎԱԹԱՆ ՈՒ ԲԱԹԱՆ

(Ալաշկերտի բարբառով *)

Կէղնի մէկ թագաւոր. էդոր մէկ տղայ կէղնի, ծեր կէղնի, Արև կ՚իտայ ուր տղէկներուն, տղէն կը նստի տեղ, վազիր գ՚իգայ, տղին կը խափայ, կըսայ.—Դու ջհել ես, չըս կընայ, Թագաւորութեն տ՚ուր ընձի, հարի դու ջօջընաս, նոր կիտամ քըզի։

Խաբեց զտղէն, Թագաւորութեն առաւ մօտէն, խանչեց գջալլըդներ, օր պտի գլօխ տէր զարկել, վազիրներ լաւայ ընկան.—Մը սպանի, քու քաղքից հան, թըլխ էրտայ։

Տղին ու մամուն էրեց դուս, գացին քաղքի քօշէն, մէկ տեղ մի գտան, ուրանց սարուան։ Էդոնց էրկու հատ մօտիկ դրկեց կէր. մէկի անուն Վաթան, էն մէկէլին Բաթան, օրական կերտէն մեծին՝ փէտ կը բերէն, ծախէն։ Թագաւորի տղէն էդոց հետ՝ գնաց, փէտ կը ջարդէն։ Տեսան ջաղջի քար մի, քար շըջեցին, տեսան օր մեղր կէր. էդ մեղր հանին, տղէն մտուցին մըջ հորուն, տղէն մեղր . . . էդոնք հանեցին, պըծան։ Միտք էրին թէ-տղէն թողինք մըջ հորուն, մեղր տանենք։ Տըղէն քաշեցին հարի հորու կէս, շրիտ կտրեցին, տղէն յընկաւ մէջ։

Էդոնք մեղրը առան, էկան. տղէն մնաց չուար մըջ հորուն։

Քանդեց հորու մէկ դեն, տեսաւ պզտիկ լուս կերևէր, քանդեց հող, էլաւ տեսաւ օր յընկաւ մէկ ուրիշ աշխարհ. մէկ պաղչէմ՝ կէր,

---

* Այս հէքիաթն ընդհանրապէս ծուռան տան)տիեզերական) անունով կասուի ժողովրդեան մէջ, նա եւ Ղալայի կեանվար, իսկ Վաթան ու Բաթան եւս Տօրո ու Բօրո:

յընկաւ պաղչի մէջ, ժուռ էկաւ։ Մեղր էր կերե, սիրտ կերիցեր, տեսաւ մէկ ահագին վիշապ մի գիգայ. տղէն փախաւ դըռ հօրու ծակ. վիշապն էլաւ մէկ հալիւոր, էկաւ էդ ծկի դէմ, կարեց էդոր յառէջ.—Հա՛, ըսեց. տղա՛, յընչի՛ կը փախնիս, ի՛նչ ա էղե։

—Պապէ՛, վալա, մէկ վիշապ տեսայ, փախայ։

—Մը՛ վախենայ, վիշապ չգայ, գնաց։

—Պապէ՛, Աստւ սիրուն էղնի, չա՛տ ծարաւ իմ։

—Հա՛ն, մե՞ղր իս կերեր։—Մը հարցու, էդ օր ընձի էկաւ, իմ դուշմնին չգայ։

—Ի՞նչ ա քու ցաւ. դու մեղրիս կերե, դու իմ ցաւ հարցու։

Տղէն կը տանայ, ջուր կը խմցու։

Պապէն կը նստի, տղին կըսայ.—Արի՛, նստի իմ չօքի վրէն, ես իմ դարտ խըսա էնիմ։ «Ես մէկ Թագաւորի տղայ էնք, իմ հէր օսի-աք էրեց Թէ, յո՛ւր կերտաս ավուղուշ էնելելու, գնա՛, հիմա Սև սար մ'էրտայ. ես լէ յէլայ, քսան, եռսուն հոգի առայ, մէկ օր գացի Սև սար, տեսայ օր վէրու օչխար. մարալ, ջէյրան, ինչ օր Թէ ճա-խիր էն. ես ու իմ յընկէրտանք զարկեցինք, ջարդեցինք, մեր ձիա-նու բեռ ռնեցինք։ Մէկ էլ տեսայ սև ամպ մը յէլաւ, էրկինք, ռնեց, անձրև էկաւ ու կարկուտ . . . . ես փախայ, մտայ քարի էրկու ջաղլէն։ Անձրև կտրեց-անուշեց, յէլայ, տեսայ օր իմ ընկեր-տանք խեղդած, ջանդկներ սէլաֆ քշէ՛, տարե՛, իմ հօր անուն էլ չգացի տուն։ Տեսայ օր մէկ ջէյրան էկաւ, կանաւ յառէջս ի, ընկայ ջէյրանի յետև, նա յուղայ ռնիմ, նա յունայ ռնիմ. գացինք-գա-ցինք, ջէյրան վրէս կորաւ։ Գացի մէկ քաղքիմ՝ բռաստ էկայ, տե-սայ օր քաղքից ձէն գիգայ, գացի ձէնի թարալ, լսեցի օր կըսէն.—Ո՛րն օր Թագաւորի խօսք կատարայ, Թագաւոր ուր աղջիկ կիտայ ընդոր։ Ես գացի. ըսի, «ես կը կատարիմ»։ Վերցին, ընձի տարան Թագաւորի մօտ։

—Տղա՛, ըսեց. դո՛ւ իս իմ խօսք կատարողը։—Հա՛, ըսի։

Թագաւոր ըսեց.—«Վերցէք, ըդոր տարէք, քառսուն խոչ քառսուն լիտր լէ գինի, օր ուտայ, խըլանայ»։

Տարան, ընձի դրեցին նեղ տեղ մի, օրական մէկ խոչ մորթի, կերայ, օրական մէկ լիտր գինին խմեցի. քառսուն օր թմաւ. Թա-գաւոր ընձի խանչեց. էլայ, էկայ օր մէկ զապուն ձի մի կանգըցու-ցած դուռ, մէկ . . . Թամքի վրէն. կեմեց, ընձի խանչեց. յէլայ հեծայ, տեսայ էդ քաղաք մեծ ու պզտիկ էղեր ա մէկ թարալ, կեր-տան. ես լէ յէկայ, ընդոնց էտևէն գացի, հասայ ձորու մէջ, մէկ չի-նարի յառէջ կանանք. վալիք, վաքիլներ ընձի պատիւ խանչեցին. գովացին. բերին իմ ձին կանգըցըցին իմ յառէջ Թէ «Թագաւորի հրամանն ա, ձիան գլօխ զարկ։ Զարկեցի։ Ըպա.—Քերթմ։ Ես լէ

քերթել չընք դինի, ճղրդեցի, մէկ գօլ էն տեղ թալի, մէկ էն տեղ։

—Դէ, ձլու փոր պատռա։

Պատռեցի։

—Դէ, մտի մէջ։

Մտայ մէջը։ Թել ու ասեղ մօտ ուրանց ճազր էր, խաՑաս կարեցին, տնկեցին յէրկէն սրխնորու վրէն. վերցուցին «էդ քարի գլօխ, դու մ'ըսի էդ քարի գլօխ արծըւու էրկիր ա, արծըւնիր գըրկեցին, դրին էդ քարի գլօխ։ Ջանցակ օր ճղճղեցին, կուտէն, ես միջէն յէլայ. տեսայ օր ինչ տեսնիմ, էդ մարդիկ օր չինարի տակն ին յաչից ինչ օր մըչիմ էրևան, ձէն տուեցին.—Է՛, թագաւորի տղա՛, էդ տեղ ջավահիր քար կայ, թափայ ցածր. մկայ թագաւոր ճարsի-ւաճ կը չինայ, կիջունք քզի ցածր։ Տեսայ օր անգին քար իմալ օր փայեճ, ձեռքուայ թափել։ Էնքան թափեցի օր էդ մախլուխ բարձան։ Կէս մնաց. ես բոռացի.—«Ընձի լէ իջուցէք՝ ախըր ընձի թողէք»։ Ըսին.—Էնքան մնաս էդ տեղն օր կուպը սիվ-ըկի»։ Ես մացի էդ տեղ անճար, քունս ի քաշեց, քնայ էդ զնարի վրէն. մէկլէ տեսայ օր կպռջկած ա, իմ յոտներ կը քաշին. տեսայ օր աղուէս էր, աղուէս փախաւ. ես աղուըստ յետեանց յընկայ. էն քարի տկով, էն զնարի տկով ընցայ, ընկայ sաշ տեղ մի, տեսայ օր բարակ ճամբէմ կայ էդ տեղ։ Աղուէս կորաւ, բռնի քու էդ մոուկ ճամբէն ու գացի, տեսայ օր մէկ դուռ մի կերևայ, բացի, մտայ ներս, տեսայ մէկ հալիւոր նստուկ ա. բարևսի առաւ, նստայ. հալիւոր խըյյօճ կը քաշէր, մէկ խըյյօճ մը լէ էդ տեղ կէր, էն լէ տուեց ընձի, ես լէ քաշեցի. ճըմա էդ հալիւորու աsարն ա օր իրեք օր թմի՝ նոր կը հարցու թէ ինչ մարդ իս, ինչ մարդ չիս։ Իրեք օր թըմաւ, հարցուց, ըսեցի.—Ճամբորդ իմ։ Մացի էդ հալիւորու մօտ. տարին էկաւ, բոլըրաւ, էկաւ համբարձում, ընձի ըսեց.—Հաւուզ մի ունիմ, կերտաս էն ճաւուզ գխտըկիս։ Գացի էն ճաւուզ յխտըկի ու տափայ, տեսայ օր իրեք հատ եղվընեկ յէկան, յիջան, թեպընեը հանեցին վերևէն ուրանց ու եղան իրեք հատ աղջիկ, մտան էդ ճավուզն ու լողկըցան. յետև յելան, հագան թեպընեը ու թռան, գացին։ Աղջիկներու սեճր թափաւ վրէս ի, ուշաթափ էղայ, յընկայ. մէկ լէ յելայ, գացի հալիւորու մօտ, հարցուց.—«Տղա՛, յուր՛ յըմլայ տխուր իս յըս օր։—Ըսկի։

—Չէ, գինամ, ըսեց. աղջիկներ տեսեր ես, սեճր թափե վրէդ ի, օր գուզիս ընդցնէ առնիս, տարիմ լէ յըս օր Համբարձման հինկշաբթին ընդոնք էլի գիգան. գնա՛, ո՛ր մէկին կը հասնիս, բռնա՛.» Ես լէ օրեըս համրի, յըս օր, վաղ տարին բոլըրաւ. էկաւ Համբարձման օր գացի ճաւուզը, ուզի հորթի, թաժայ ջուր թողի, լցուաւ. էկայ ճաւուզի մէջ հոր մի փորի, մտայ մ՚ջ. քենիմ փէտ դրի վըր հորու

բերնին ու տափայ։ Մէկ լէ տեսայ, իրեք եղվընիկ լէ էկան, յիջան ձոր։—«Մըր հէր յըս տարի ինչ խօրտա ա յիտըկէ մըր ճաւուզ»։ Էն մէկն ըսեց.—«Խօրտա ա յիտըկէ. ճըմայ ըսկի չոր տեղ չկայ մըր թեպրներ դնենք»։ Էն մէկն ըսեց.—Հան ա, փէտ ա դըրե օր մըր թեպրներ դնենք վըէն։ Հանեցին թեպրներ, դըին վըր ցախին, մտան մըջ ճաւուզին, լողկըցան։ Ես լէ տեսայ օր էդ իրեքից պզտիկ աղջիկն ա խօըտ, պզտիկի թեպրներ առի, կոխեցի ծոցս ի։ Ընդոնք էլան օր հագնէն. էն էրկուս վերցին, հագան. տեսան օր քուրոջ չկայ, ընդոք օր հագան, գացին. ես յելայ։—Հա՛, ըսեց աղջիկն դու յորէ՞ ես իմ թեպրներ վերցե, էրթանք իմ պապու մօտ։

Դաւի էնելով գացինք հալիւորու մօտ։

Հալիւոր ըսեց.-Լաւծ, ես իմ ճախ տուե, դու պտի առնիս էդ տղին։

Աղջիկն առայ։—Է լած, չօքսի թմպրաւ յընցի մէկէլ չոքէ վըէն։

Տղէն գլուխ դրեց մէկէլ չոքին։

Հալիւորն էլման . . . . էրեց. մացի էդ տեղ մէկ տարի, իմ հէրն ու մէր յընկան իմ միտք. էլայ, հալիւորուց խնդրուայ թէ էրթամ, էն լէ ըսեց. «ինչ կէնիս էրայ, աղջկան չզարկիս, չբռուիս, կը փօշմնիս»։ Առայ իմ կնիկն ու գացի։ Ես լէ ըսի.— Ցորէ՞ պտի ծեծիմ։ Հասանք իմ հօր քաղաք, գացի իմ հօր մօտ, իմ հէր ընձի տեսաւ, ուրախացաւ։ Հալիւորեր էր, ընձի դրեց ուր տեղ թախտ, ինքն էլ մեռաւ։ Մնաց՝ մէկ օր յէլայ, իմ բաղճի մէջ ժուռ գիգէնք։ Մտայ իմ սարի մէջ, տեսայ կնիկ նստուկ ա, գլօխ լուացեր ա, ծամեր գուստըկայ, չը կանաւ իմ յառէջ. ես լէ ճեռսօշայ, դաստով վարդկէր ձեռս ի, զարկի քիթ ու բերնի մէջ. թորկի, յելայ դուս. էն հալիւորու խըրատն յընկաւ միտքսի, էկայ մըջ բաղճին, մէկ լէ իչկեցի վերն օր մէկ եղվընեկ մի յիջուկ ա, ճանչցայ որ իմ կնիկն ա, էղե եղվընիկ, վազայ, մտայ սարի մէջ, տեսայ օր կնիկ չկայ, յելայ դուս օր գողտուկ եղվընիկ բռնիմ. եղվընիկ թռաւ. յէլաւ ծառի խիտ գլօխ, նստաւ, ըսեց.—Էն ծառն օր քու ձեռ չհասնի, մը ձգի, օր գուզիս ընձի գտնիս, արի Գեավառու Նիկեարայ քաղաք, ընձի գտի։ Էղի էրկնքով գնաց, ես գետնով. թագաւորական չորեր հանի, թափի ու գացի։ Արև պտտաւ, եղվընիկ կորաւ վըէս ի. Ես բռնի ճամբխէն ու գացի։ Մնաց մէկ քաղքի բռաօց էկայ. տեսայ էդ քաղքի մէջ կը գոռան. «որն օր թագաւորի խօսք էնայ. թագաւոր աղջիկ կետայ ըդըրան։—Օհօ, ըսեցի, էլման կը խափայ, ճըմայ կերտամ։

Գացի. ըսի.—Ես կը կատարիմ։ Ընձի տարան թագաւորի յառէջ։

Թագաւոր ըսեց. «Տարէք՝ քառսուն խոչ, քառսուն լիտր գինի տուէք»։ Տարին ընձի էլման էն օթախ օր յառջի հաղ նստեր էնք, քառսուն օր գլխոչ կերայ, գինին խմեցի. քառսուն օր, օր թմաւ, ձին բերեցին, հեծայ, ու ձիաւոր յընկանք, էդ ձորու հետ գացինք։ Հասանք էն տեղ, յելայ սարի գլօխ, առայ էն ծակ ջամբէն, գացի, յելայ հալիւոլու մօտ։ Իրեք օր թմաւ, հարցուց.—Ցորի էլման էկար։ Ես իմ դարտ խըսայ էրի, ըսի.—Գեավճարու Նիկեար քաղաք պտի գտնիք։

—«Լաւօ, ըսեց. ես էղեր եմ հարիր տարեկան, չըմ լսերի էդ քաղքի անուն»։ Ճամբեց, բերեց արծիւ մի, ընձի դրեց վըր արծւուն, ըսեց.—«Կը տանիս իմ աղբօր մօտ, էնի էրկու հարիր տալեկան ա»։ Ուր մատնիք լէ տուեց ընձի, էցդի իմ մատ, ըսեց.—«Ինչ վախտ որ կը մօտենաս իմ աղբօր հողին, ընդոր արծիւներ դիգան, մատնիք նշանց տուր, ընդոնք կը տեսնին, քզի կը վերցուն, կը տանին ուր մօտ»։ Արծըւներ վերցին, տարան։ Հասայ էդոր աղբօր հողի մէջ. մատնիք նշանց տուեցի՝ տարան մեծ աղբօր մօտ։ Իրեք օրն թմաւ, հարցուց. ես լէ ըսի։

—Ըղա՛, լաւօ, իմ էրկու հարիր տարին թմեր ա, ես էդ անուն չըլսեր իմ, ընձի մէկ աղբէր ունիմ, իրեք հարի՛ր տարեկան ա. քզի պտի ճամբիմ ընդոր մօտ։ Ճամբեց ընդոր մօտ, էն լէ ըսեց.—Իրեք հարիր տարեկան իմ, չըհասկըցեր իմ էդ անուն, կանչիմ իմ հաւքեր, տեսնիմ, սաղ անիմ։ Կանչեց ուր հաւքեր, բիրադինից հարցուց. մէկ սաղ չը տուեց։—Տեսէք, ըսեց, էլ մարդ չը մացեր ա։ Ըսին.—Մէկ բեաչալ գարդաղ հաւքն ա մացեր։

Ճամբեց, գացին հաւք բերեցին, հարցուց. էն լէ ըսեց.—Տեսեր իմ, ծերացեր իմ, չըմ կռնայ էրթայ։

Քառսուն օր քառսուն դմակ կերցուց. քառասուն ղիտր գինի խմցուց, հաւք ղլաւցաւ, թեպուրներ էղան մէկ մէկ ձիթխըցի գերան. հաւք առաւ, հասուց Գեաճվարի Նիկեար քաղաք, մէկ յաղըրի վրայ յիջուց, մէկ լէ տեսայ քառսուն հատ աղջիկներ կժներ ուսերուն, տեսայ քօփալ աղջիկ մը էկաւ, ըսեցի.—«Աղջի, յընչի ջուր կը տանիք»։ Ըսեց.—«Յանինք, լցունք մեր խաճըմի վըէն, գիշեր, ցերեկ կիլայ, «ես իրիցայ ու իրիցայ», կըսայ»։ Ես լէ հանեցի իմ մատնէն մատնիք, թալեցի էդոր կժին մէջ։ Ջուր տարեր լցեր էր վըր աղջկան, մատնիք պատեր էր աղջկան գոք. տեսեր, ճանչցեր էր որ իմ մատնիքն ա, ըսեր էր.—Օ՛խա՛չ։ Մէկէլ աղջիկներուն դուս էրեր էր, քօփլուն ըսեր էր.—«Դու որ ջուր բերէր, ո՞ր կէր էն տեղ»։ Էն էլ ըսեր էր. «Մէկ հողածին մարդ»։ «Դէ՜, սսեր էր, առ էս ձեռք աղջկայ չոր, տա՛ր, հագու, առ արի իմ մօտ»։ Աղջիկն ըձի հագուց, առաւ, գնաց գլխ։ Աղջիկ որ ընձի տեսաւ, ըսեց.—Դու էկեր ես որ

գլխ տանխ, իմ պապէն յուդայ ա, պտի էրթաս, խնամաքար կայ, նստիս վըր խնամաքարին, բաժա ընձի յուզիս, նոր առնիս էրթաս: Էլայ լուսուն դացի, նստայ էդ քարի վրէն: Թագաւոր խանչեց, տարաւ ընձի, ըսեց.—Դու իմ աղջիկ կուզիս, արծիւ ունիս օր իմ արծուու հետ կըռւըցուս. ըսեցի.—Ունիմ: Արծուու թեպուրներ տուի կրակ. արծիւն էկաւ, հասաւ: Իմ արծիւ ճըմայ զարկեց, թագաւորի արծուուն, տոռվ, գլխով վերուց, տարաւ: Թագաւորն ըսեց.—«Մէկն յընցաւ, մնաց էրկուսը Լուսուն փեյլեվնի հետ գուլած կպիս. ճըմայ փեյլեվնի քթէն պտի բռնիս որ պատի»: Լուսուն էլանք, ես ու փայլեվան, հասանք յիրար, ձեռ թալի, քիթ բռնեցի, զըրկի գետին: Ցէլայ, էլման դացի աղջկայ մօտ. աղջիկն ըսեց.—Մնաց մէկ մարճ, իմ հօր մեյտրնի մէջ մէկ ծառ կայ, լուսուն բաս մի ջուր կը դնին վըր քու գլխուն. էն ծառի գլօխ յէլնիս, յիջնիս օր ջուր չթափի, օր թափիս, գլօխդ ի կը զարկայ: Աղջիկ հանեց մատնիք մը, տուեց ընձի, ըսեց. —Մատնիք կը զարկիս մըջ ջրին, ջուր կէղնի պաղ (սառ): Էլայ ծառի գլօխ, իմ հօր քաղաք էրեւաց, սիրտսի փլաւ, լացի: Ծառի տակ թուղթ էն փռած, իմ արտըսուք կաթ մի կաթեց վըր թղթին. Թագաւորի մարդիկ բոռացին.—«Ցիջի՛, գլօխդի գնաց»: Ծառից յիջայ, մատնիք հանեցի, էլման չեհեցի ջուր:

—«Ջուր թափեր ես», ըսին. ընդոնք ըսին «ջուր», ես ըսի, արտըսուք ա». էրեցինք դաւի, ճէֆիմ տեսաւ, ըսեց.—«Արտըսուք ա»:

Աղջիկն առայ, արծուի թէպուր զարկի ի կրակ, նստանք մէկ մէկ թեւին, էկայ իմ աներոջ մեծ աղբօր մօտ. էն տեղէն մէկէլին, էն տեղէն էկայ, հասայ իմ հալիւորու մօտ. էն տեղէն էկայ իմ հօր քաղաք, նոր իմ հարսնիքը էրեցին. ես լէ նստայ թագաւոր: Էդ մեղըն օր հանեցի՛ր, տարար, էդ լէ իմ թագաւորուտենի ամբարն էր. ես լէ էն վիշապն իմ. դէ՛, տղա՛, տեսա՛ր, քո՛ւ դարցն ա չատ թէ իմը. «դէ՛, արի՛ էրթանք, քզի հօրուց հանիմ: Էն վազիրն օր քզի թագաւորուտենից զըրկեց, էնի գօքեցեր ա. Վաթան ու Բաթան լէ էն մեղըն օր ծախած՝ էղած ա մեծ վաճառական. Թագաւոր ինչքան ճէֆիմ կայ, բերէ վըր ուրին, ընդոնք ըսած ա թէ սաճմարի մսի փրփուր ա պէտք օր սաղցու. մկայ քաղքի չորս բարած կարաուլ դըրած, ինչ մարդ օր էրտայ, մտնի քաղաք՝ կը բռնին, կիչկեն, սաճմար տեսնողի մէկ կող սեւ կէղնի. բա՛ց, տե՛ս, քու կող սեւ ա: Տղէն բացեց, կող տեսաւ. հանեց դուս, ըսեց.—Տղա՛, քզի կը բռնին, կը տանին ճէֆիմներու նշանց կխտան. գինան օր դու սաճմար իս տեսե, կը հարցուն քզնէ տեղ. դու կառնիս, գիդաս, կայնիս իդայ հօրու վրէն, կը խանչիս, ես դէլնիմ. ճըմայ իմ գլօխ չը զըրկիս, մ՞րն օր իմ գլօխ զըրկայ. էնի կը ցխի, ընդոնք կըսին. [մէկ անգէտի մէկ գիդայ, զարկայ իմ գլօխ. գլօխ օր զարկին, քառսուն լուծ եզ լծին,

ընձի կը քաշին, տանին Թագաւորի սարի դուռ, կը բրդին, կը լնան խազնեներու մէջ, կէփէն ինչ որ էրղի, փրփուռ կխտայ. իրեք սահան փրփուռ կը վերուն, կը դնին Թագաւորի գլխու տակ. դու դիր վիրև, էն օրքալըխի սահան, կըսին. դիր աջ կուշտ. դու դիր ձախ կուշտ, էն յետի սահան լէ ձախ՝ դու դիր աջ կուշտ. առջի սահան որ խմեց, կը ցրուեմ. հըմայ էն յետին որ խմեց, ինչ որ աշխար լեզու կայ, կը սորվի։

Տղէն կերտայ քաղաք, կը բռնին, տանին հէքիմի մօտ, կիշլին կող սև. տղէն կը բերեն վրը հորուն ծամմարի գլխու վերևու փըռ-փուռ հէքիմ կեփայ, կը խմայ, կէս կխտայ Թագաւորին, յէնի կը մեկլի։

Տղէն էն տեղ հագաւ Թագաւորական շորեր, ձէն տուեց Թէ Թագաւոր սաղցաւ. համբեց, մէր լէ բերեց, Վաթան, Բաթան լէ ըդոնց գլօխ զարկեց։ Նոր կը կարդուի։

21

ՊԱՌՈՒԿՈՒ ԽՈՐԱԳԷՏ ՏՂԷՆ

(Ալաշկերտի բարբառով *)

Կեղի-չեղի, մէկ պառաւ կեղի. էդ պառաւուն խակի տղայ չեղի. որ մի օրերուց բօշէ գիկայ. պառուին կասայ։

—Գինամ, տղայ չունիս. աման մի յէրուսաղէմայ ցորեն լից վառման Թունդիր։

Պառաւն ա, վառելու գախ աման մի յէրուսաղեմայ ցոր են կըլնայ Թունդիր։

Ցորեն յըմեն կեղնին ճիժ, գէլնին պառւու չորս բոլոր կը վըժվըժան, մէկ բուճ կուզայ· մէկ չապիկ· մէկ թուճպաճ· մէկէլ արախճիճ, մէկ լէ ծօլոզ էն մէկէլ լէ հաց ու մաց, յըմեն մէկ բան կուզայ, պառուլի գլօխ կը տանին խժըժալէն։

Պառաւ լէ էդոնց վըրէն կը հերսոտի, կասայ։

—Չօռ, չօռ, յուշիկ ձէն հանէք։

Մէկ լէ էդ խօսքի վըրէն պառաւ կը դառնայ, կաչքայ, ոնչ ճիժ կայ, ոնչ բան։

Պառաւ զուր «չօռ» ըսել կը փօշմճի, հմա՝ նա Ֆայդա (ինչ օգուտ), էլ ձեռնէն գնաց. նստաւ գիլէր։

Դու մըսի, էդ տղէկներուց մէկ փախէ, մդէ Թունդըրայ, յակ, պառաւ օ կիլեր. տղէն յակից ձէն տուեց։

—Նանէ, միլա, ես յուտայ իմ։

Պառաւ ուրխցաւ, վազեց, տղէն Թունդըրից հանեց, յերսներ պագեց։

Էդ տղէն մեծըցաւ։

Մէկ օր էդոց դըրկեցներու աղջկներ կերտան Սիպնայ սար բանջրի, էդ տղէն լէ գիկայ ուր ջօջօ մօտից· քեանիմ խաց կառի· գունդ մէլ կարագ կը փաԹայ մէջ, կերտայ խասի էդ աղջկներուն, կերտան բանջըրի։

Կերտան Սիպնայ.պաղ աղըրներուն մէկի վըրէն կընստին, հաց կուտին, էդ տղէն կը հանայ զուր հաց ու կարագ կը դնայ աղջկներու յառէջ, յիրար հետ կուտին. գէլնին բանջար կը քաղին։

Ցիրկուան օր կը դառնան դէմի տուն, էդ տղէն կասայ.

—Աղջկներ, եա գլխ դօրէ գդօր կը ծալկէք· եա ձեր փորեր կը պատռիմ, զիմ կարագ կը հանիմ։

Աղջկներ վախէցան էդ տղի մօտից· դօրէ-գդօր ծալկին, եկան։

Կէս գիշեր էղաւ, չկըցան հասէլին գեղ, գացին էդ տեղ մօտիկ ծակ մի կէր, մտան էդ տեղ։

Լուսու դէմ տեսան օր դև մի ևն դեխէն էլաւ, դէմ ուրինց։ Էկաւ, քօմեց (հաւաքեց), առաւ յըմեն յիրար հետ, տարաւ ուր տուն։

Տարաւ, եօԹ, ուԹ, օր պախեց. օր աղէկ ղլաւնան. ուտայ։

Մէկ օր էտ պառւու տղէն ասաց։

—Ա՛խ-ա՛խ օր իմ ջօջօն դաս եղեր, մկայ կառէր ալըմաղ, կերԹէր Սիպնայ գլխից ջուր կը բերէր, կը մաղէր վըր մեղի օ չուտ խլաւնէնք (գիրանայինք)։

Դև աւդըցաւ, էլաւ, առաւ զալըմաղ, գնաց Սիպնայ գլօխ օր

Ջուր բերայ. էդ տղէն առաւ աղջկներ, փախաւ բերեց ուրանց գեղ. ինք էլ̃ դարձաւ, գնաց դևի մօտ։

Գնաց յէլաւ դևի յերդիս. իշկաց դև նստէ, հաց կը թխայ. յերդիսէն հող կը թափայ դևի գլխու վրէն։

Դև գիտցաւ մուկն ա յերդսից հող կը թափայ։ ասաց.—Էհ՛, մկան լակոտ, էդ վե՞ր վըրէն ա հող կը թափիս։

Ասաց ու յէլաւ վազեց յերդիս։

Տեսաւ էն տղէն ա. լարեց, լարեց, բռնեց. բերեց մտուց ճղ-ճուն ջվլի մէջ, բերան կարեց. գնաց դաէն մեծ մերքուտ (սանդի ծեծ) բերայ, էդ տղէն ջվլի մէջ ծեծայ։

Հարի էդ դև գնաց, տղէն կանեց ուր ջէբից դանակ, ջվալ ճղեց. դուս էլաւ, գնաց դևի բալաք հորթիկ բերեց, դուր տեղ մտուց ջվալ։

Դև էկաւ, քանիմ հատ մերքուտ զարկեց ջվլին, խորթ բոռաց, դև կասայ.—Մանրի, օր ուտեմ քզի։

Դև կը բանայ ջվլի բերան օ ուր բալաճ հորթն ա, կ՚կծու կը պատռի։

Էդ տղէն դէլի դևի խազինէն ու դաւլինէն զմեն կառի, գիկայ պառւու տուն։

22

ՀՕՐՈՐԴԻՆ Ո՞ՐՆ Է

(Ալաշկերտի բարբառով *)

Կըղնի-չըղնի, մէկ թուճար կըղնի, էդ զընկին թուճարին մէկ տղէմ կըղնի, թուճար կը մեռնի, քենիմ տարի յետև կնիկ էլ կը մեռնի. թուճարի տղէն կը նստի ուր պապու դուքան՝ ուր առուտուր կէնայ։

Օրմ՝ լէ էդ զանգին թուճարի յընկերտանք իրարու մէջ բաս կէնին.—Ամօտ չէ մըղի օր մըր յը՞նկեր մեռաւ, ուր տղէն չը կարգեց, խըլխ մըղի կը մեխտըրին. արէք, էրտանք, տղին ըսինք, վեր աղջիկ կուզայ, էն աղջիկ յուզինք։ Իդմըլայ ըսելով էկան տղի մօտ, ըսին.—Տղա՛, կը կարգուի՞ս, վի՞ր աղջիկը կուզէս, էրտանք՝ քըղի ապով յուզինք։

Տղէն ըսեց.—Չը կարգուիմ։ Թուճրներ զօր էրին տղի վըրէն։

Տղէն ա, ըսեց.—Ընձի յէմալ աղջիկ մը պտի յուզիք օր տարին մէկ հաղ էրտամ ընդըրայ մօտ։

Ըսին.—Յէմալ աղջիկ յուստ գտնինք։

Ըսեց.—Ես չը կարգուիմ, որ կարգուայ, յէմալ աղջիկ կուզիմ։

Տեսան տղէն կարգուելու միտք չունի.—Քէլէք, էրտանք, ըսին։

Էմլէ ըսին, ըդըրա պապ մըր յընկերն ա, էլտանք, ժուր գանք։ կըղնի օր գտնինք։ Ընկան ճամբայ, գացին. հասան մէկ գեղ։

Գեղացիք հարցուցին, ինչի իք էկեր։

Ըսին.—Էկեր ինք աղջիկ յուզինք մըր տղին։ Ըսին.—Բարի իք էկեր։

Ըսին.—Մըղի մէկ խօսք կայ, խայիլ կըղնիք, կը տանինք. մեր տղէն տարին մէկ հաղ պտի էրտայ աղջկայ մօտ։

Գացին աղջկան ըսին, աղջիկ ըսեց.—Ես հըմալ իրիկ ինչ էնիմ օր։

Թուճարներ յէլան, գացին ուրիշ տեղեր, գեղ մի մտան, մեծ տուն մի տեսան, տեսան օր ինչ տեսնին. ամէկ մարդ գիրք մի առի ուր ձեռ ու կը կարդայ, աղջիկ մէլ առեր ա ահագին Աստուածա-

---

* Պատմած է Փիզանդ Թորոսեան. այժմ ուսանող Գ. ճեմարանում:

չունչ մի՛ ձեռ, նաւի փաճճարէն. շուշուտ կը կորդայ։ Թուձարնիր ըսին.—Հըկըր յուզինք իդայ աղջկան էդա, ճըկըր չուզինք էլ չկայ՛

Գացին, աղջկան ըսին. աղջիկ ըսեց.—Ըլէ էդ յըմալ բան կուզէնք, Աստուծուց օր իմ էրիկ տարին հաղ մի մօտս իդայ։

Թուճարնիր նշան դրեցին, զէդ աղջիկ բերեցին, տղէն կարդեցին. տղէն խալայեխ մի ռունեց, դրեց էդ աղջկայ կուշտ, ինչ էղած, չէղածը տուեց ուրան, ուր կնկան ճակեար բան մը կը պակսէր, ճառին կօղորկէր, բերել կիտար։ Տղէն առուտուր կէնէր։

Էրկու տարի ընցաւ, էղօր էրկու տղայ էղաւ, մէկ օր մէկ Խաճուտի ըդոց բանը իմցաւ, ու օրմ' իրիկուան դէմ գնաց տղի տուֆաճ, ըսեց.—Քու չորեր տուր, յըս օր յիրկուն կէրտամ հարսնիք, փողը սապաղտաճ կը բերիմ, կիտամ։

—Կայնի, ըսեց Խաճուտուն, էրտամ ուրիշ չոր բերիմ, հաղի, գնա՛։

Խաճուտին լաւեց.—Քու չորերդ տուր, ես էրտամ։

Որ շատ լաւեց. հանեց, տուեց։ Էդի հագաւ, չի՛տակ գնաց էդ քուճարի տղի դուռ զարկեց. ջառէն էկաւ, հարցուց.—Էդի ո՛վն ա։

Ըսեց.—Ես իմ, դուռ բաց։

Ջառէն գնաց, խաթունին ըսեց.—Աղէն ա, դուռ կը զարկայ։

—Է՛, ըսեց. յուր ա, դեռ աղի վաղտէն չըմեր ա, ճըլա ամիս մը լէ կայ, է՛, գնա՛, բա՛ց, կեղնի օր գործի ապով էկի։

—Ջառէն գնաց, դուռ բացեց, աղէն էկաւ, փչումի զրուցեց, ըսեց.—Ընձի ըս օր ֆեց չկայ. իմ տեղ թալէք, ես կը պառկիմ։

Տեղը թալեցին, պառկաւ. առաւօտուն էլաւ, լուսմթի գնաց։

Ջառին ըսեց.—Խաճըմ, յընչի աղէն հըմալ մութ կախ էր։

Ըսեց.—Չը գինամ։

Խաճուտին սապաղտաճ շուտ գնաց տուֆաճ, չորեր հանեց, չնորհակալ էղաւ։

Էդ տղի ուր տուն գնալու վաղտը էկաւ, գնաց, դուռ զարկեց. ջառին էկաւ, հարցուց. գնաց ուր խաթունին ըսեց.—Աղէն էկաւ։

Խաթուն ճեռստտաւ, թէ էդ մարդ էն յառջի օր էկաւ, խօ յըմն օր չգա՛յ. գնա՛, բաց. յընչի օր, ուրիշ բանի ապով էկած կեղնի։

Ջառին գնաց, դուռ բացեց. աղէն էկաւ տուն, եմիշ բերեր էր, տուեց, խաթուն ըսեց.—Դու յորինէրկու հաղ դիգաս, յըմնօր պտի դաս։

—Ի՛նչ յըմնօբ, ըսեց քուճարը։—Ըպա էս շաբաթ մը չկայ օր էկար։

—Կնի՛կ, ըսեց. չըմ գինայ, դու ծռեր իս, ահա՛, տարին քմաւ, նո՛ր ես էկայ։

—Ըպա, էն ո՛վն էր էկաւ քու չորերով. քու պէսն էր։

—Վա՛խ, էդ ինչ բան էր էղաւ, ըսեց տղէն. Կնի՛կ, ըսեց, ես կը մեռնիմ, որ ընձի իրեք տղայ էղաւ. մէկ պտի դեղեմաճրում հանես տնէն։

Տղէն կսկըծու մնաւ. կնիկ չը գինէր թէ յորն յըմլայ ըսեց.
Վախտ մը յընցաւ. կնիկ պարկաւ, տղէմ լէ բերեց:

Էդի էդ տղէկներ ջոջըցուց. էլաւ գնաց մէկէլ քուճարի մօտ, ըսեց.

—Էն վախտն օր քու աղբէր մեռաւ, ընձի թըրիֆ էնեց. «ընձի իրեք տղայ էղաւ, մէկը պէտք ա տնէն դեդեմաճրում յելնի:

Թուճարը իրեք տղէկներ լէ բերեց ուր մօտ ու ըսեց,—Ես օր մէկ մաճրում հանիմ. յըմեն լէ ուր հօր ու մօր կը մնին. ես չըմ կընայ, վաղ իրեք լէ կը ճանըբիմ Թագաւորի մօտ. Թագաւոր մէկ դեդեմաճրում հանայ, էն մէկէլ էրկուս գան ուրանց տուն:

Էդ քուճար ճամբու դըրեց.—Դուք գացէք, ըսեց. ես գիգամ:

Իրեք աղբէրներ ջիլարու հետ խաղալով ճամբէն կերտային. մէկ լէ տեսնես, պզտիկ աղբէր ըսեց,—Աղբըրտիք, կը տեսնէք, իդայ ճամբով մէկ դեվամ էկեր ա, քոփալ էղե. մէկ աչքն էլ ֆոռ էղե, յակուէն լէ կոտռուկ ա էղե, դեվի բեռ լէ էրկու քայ, մէկ եղ ա էլե, մէկ քայը մեղր:

Աղբըրտիք էդ աղբօր խօսքերուն վրէն ծիծղալով կերտային, մէկ լէ կը տեսնին օր աճամ մի վազնելով գիգայ. էդ տղէկներուց կը հարցու:

—Տղէկնե՛ր, էդ ճամբով դեվայ յընցա՞ւ, տեսա՞նք, իմալ էր:

Պզտիկ տղէն ա, ըսեց.—Ցօրէ՛ն, ես չըմ գինայ, քոփալ էր, մէկ աչք ֆոռ էր. մէկ ակուէն լէ կոտրուկ էր, վրէն էրկու քայ կար մէկ քայը մեղր էր. մէկ քայը եղ:

—Է՛, ապրիս դու, տղա՛, յուր ա, յուր գնաց:—Ես ի՞նչ գինամ,

—Իմալ թէ «ես ինչ գինամ». դու էղած չէղածը կը պատմի՛ս: կըսիս «չըմ գինայ»: Մէկ գոմբ տղի պառեկին կը զարկայ:

Իրեք աղբէրներ ճեռստելով կընկնին աճմու վրէն, կուչտ մի կը ծեծեն, աճամ կըսայ.—Թելէք, էրտանք գանգատ. թէ չէ՛, ձղնէ կառնիմ իմ դեվէն ու ապրանքներ: Ցէլան գացին Թագաւորի մօտ, Աճամ Թագաւորին ըսեց.—Թագաւոր ապրած, իդայ տղէն իմ դեվի տեղ գինայ, ինչ էղած չէղածը գինայ, ընձի ըսեց. ելէ հարցուցի «յո՞ւր ա,» ըսեց «ես չըմ գինայ.» ելէ ճեռստայ, գոմբ մը զարկի, իրեք աղբէր լէ մէկ էղան, թափան իմ վրէն, ընծի ծեծեցին. կը խնդրիմ քըղնէ, իմ դեվէն առնիս իդընէ:

Թագաւորը խանչեց պզտիկ տղին.—Դու խեղճի դեվէն յընչէ՞ պահեր իս, չիտաս:—Թագաւոր ապրած, ըսեց. ես խաբար չունիմ:

—Իմալ խաբար չունիս օ էղած՝ չէղած կը պատմիս:

—Թագաւոր ապրած, մենք ճամբով գիգէնք, ճամբու վրէն տեսայ մէկ դեվայի դաւս, դեվայի օլոր-մոլոր քէլելուց հանեցի օր քոփալ ա, աչք ֆոռ ա ընդով հանեցի օր յոտներ ճըպ ու ռաստ էր թալե,

ակռի կոտրուկ էղնել հանեցի կանչըններուց, ո՛ր տեղն որ բերան զարկեր էր, մէկ ակռի տեղ կանանչ յերկէն մնացեր էր։

—Ըպա ինչ գինէր դու ըդըրայ բեռը մէկ քայլը եղ էր, մէկը մեղր։

—Թագաւոր ապրած, ճամբու մէկ քարաւը մժիկ էն լցուած, հանեցի որ էն քարաւի քայ եղ էր, մէկէլ քարաւը ճանճէն քօմած, ընդընէ լէ հանեցի էն քարաւի քայը մեղր էր։

—Անճամ, դու կըռեէիր տղէն ա գողցեր. տեսնը, ինչ կըսայ։

Անճամ հեռեցաւ, գնաց. մէկէլ օր Թագաւորի տօնի օրն ա, ինչ որ աղքատ, զընկին մարդ կէր, լցուան Թագաւորի դիւանն, որ ճեյթ էնին. էդ իրեք աղբըրտիք լէ գնացին, էն տեղ նստան. երբոր գինի խմեցին, պզտիկ տղէն ըսեց.—Աղբըրտիք, իդայ գինուց արնի հոտ գիգայ։ Երբոր եմակ լէ բերին, ըսեց.—Իդայ մսից շան հոտ գիգայ։ Երբոր կերան լմնցաւ, ըսեց էլման.—Աղբըրտիք, գինաք, իդայ Թագաւոր բիճ ա։

Դու մի՛ ըսի, Թագաւոր ըդոնց էտև նստեր ա, ըդոնց ըսած յականջ կենայ։ Երբոր ամէկ մարդ ուր բանին գնաց, Թագաւոր էդ իրեք աղբըրներ կանչեց, ըսեց պզտիկ տղին.—Դու ինչ գինաս Թագաւորի գինու մէջ արուն կայ։—Օղորթ ա, արուն կայ, ըսեց. գնա՛, քու գինի չքողի վըրէն դիր, զօռա, տե՛ս ինչ կըսայ։

Թագաւորը գինի չիքողին բերեց, ըսեց.—Արի՛, օղորթն ըսա. իդայ գինու մէջ արուն լցեր ես։

Գինի չքողն ըսեց.—Թագաւոր սաղ կենայ. երբոր խաղող քաղեցի, ոտքերս հանեցի. յընկայ մէջ օր կոխըճէնք, դու մըսի, իմ դանակ իմ զօտուցէն պատի տաշտի մէջ. զիմ ոտք կտրեր ա. չըրի յիմցայ, կէր մէկ քաս արուն խառնուաւ խաղողի հետ։

—Է՛, պզտիկ տղա՛, դու ինչ գինաս Թագաւորի կերած մըսի մէջ շան միս էղնի։

Տղէն ըսեց.—Գնա՛, քու խասապուց հարցու, որ իմ ըսածը չէ-լաւ, իմ գլուխը զարկ։

Թագաւորը ուր խասապուն կանչեց, ըսեց.—Օղորթն ըսա։

Խասապն օղորթը չըսայ, կանչին որ յերդուի, կըսայ.—Ես մէկ կով ունէնք. էն կով ծնաւ, հորթիկ մի բերեց, շաբաթ մի քշեց, չքըշեց, կով փիցաւ. մըր տուն մէկ դէղ մի կար օր նոր էր ցուտե, ամեն օր հորթիկ կը տանէնք, դիլուն հաց ու լակ կուտայի, որ թողէր, որ հորթիկ ծծէր. էդ յըմալ հորթիկ մեծցուցի, էնեցի էրինջ, էդ միսն էր։

—Է՛, տղա՛, դու ինչ գինաս Թագաւոր բիճ ա։

—Թագաւոր ապրած, գնա զօռ դիր քու մամու վըրէն։

Թագաւոր կը կանչայ ուր մէր, կըսայ.—Օղորթն ըսա. ես բիճ իմ թէ չէ, օր չըսես, գքու գլուխ կը զարկիմ։

Կըսայ.—Լաւծ, ինչ պահիմ, Ցլաճ տարին քու պապ գնաց կուխ. էրկու տարի չէկաւ. ես Ցլաճ վազրի հետ տուի, առի։

Թագաւորը տեսաւ պզտի տղի ըսածները օղորթ ին, ըսեց.—Դու ինչ գործով իք էկեր իք իդայ տեղ։

Ըսեց.—Էկեր ինք իդայ տեղ մզնէ մէկը դեդեմահրում հանես,

Թագաւոր ըսեց.—Ես ո՛ր մէկդ հանեմ, իրեքդ լէ մէկ տեսակ իք. ըսոր հանիմ չէղնի. ընոր հանեմ չէղնի. դուշուրմիշ եղաւ.

Թագաւորի աղջիկ տեսաւ պապու Ճիար կախ՛, հարցուց.—Ցընչի քու Ճիար կախեր իս։ Ըսեց.—Ես չկախեմ, ո՛ր կախայ. ես մէկ Թագաւոր, չը կունամ իդայ տղէկներուց մէկ դեդեմահրում հանեմ։

—Է՛, էդ լէ բան՝ա, տես, իմալ հանեմ, ըսեց աղջիկ։

Աղջիկ տղէկներուն կը տանայ մէկ յօդայ, կըսայ.—Դէ, նստէք, տղէկներ, մէկ հէքիաթ ըսիմ,—«Ժամանակով մէկ տղայ կը ծուի վազիրի աղջկայ վրէն, ինչ կէնայ, չէնայ. ուրին չի տան, ուրիշ մարդու մի կիտան, օր մէ աղջիկ կեղնի. կերթայ ուրանց պաղչէն պտըտելու. տղէն կը տեսնի օր հանդա՛, աղջիկ գնաց պաղչէն, կերթայ պաշճից ուրին կը թալայ ներս, կերթայ աղջկայ մօտ, աղջիկը որ կը տեսնի տղին, կըսայ.—Մկայ գնա՛, երօր ընձի տարան մարդու, էն յառջի գիշեր գամ քու մօտ։—Շատ աղէկ կըսայ ու կը հեռենայ։

Աղջկայ կարգուելու վախտը գիգայ, կը տանին ուր Ճշաճլուվի տուն. աղջիկ իր Ճշաճլուին կըսայ.—Ես ըսօր գիշեր կերթամ Ցլաճ մարդու մօտ, ընդըրան խօսք տուեր իմ։

—Դէ՛, գնա՛, փող սապախշաճ չուտ արի՛, մարդ չի տեսնայ։

Աղջիկը կերթայ. էդ տղի դուռ կը զարկայ, տղէն կեղնայ, դուռ կը բանայ. կը տեսնայ օր վազիրի աղջիկն ա, կըսայ.—Դու օր էկար քու խօսքի հետ, քու իրիկ լէ օր թօրկեց, գնա՛, չուր ի դատաստան իմ քուրն իս։

—Է՛, կըսայ թագաւորի աղջիկ իրեք աղբօր, հասկըցա՞ք։

—Հա՛. կըսին։

Մեծ աղբօր կըսայ.—Դու էն տղի տեղ էղնէր, ինչ պտի էներ։

—Քէնիմ Ճըլղաթ տէնք, պտի տանէնք ուր նշանլուի մօտ, պտի ըսենք՝ «իմ մէրս ա, իմ քուրս ա»։

Օրթաճճի աղբօր ըսեց.—Դու էն տղի տեղ էղներ, ինչ պտի էներ։

—Պտի տաննենք ուր իրկայ մօտ. ճալալուտեն ուզէնք։

—Է՛, պզտիկ աղբէր, դուն տղի տեղ էղնէր, ինչ պտի էներ, կը թօրկէր յառջի գիշեր քու կնիկ էրթէր յուրիշի մօտ։

—Ընդըրա հօր գանք կանիծէնք, կը թօրկէնք, էրտէր ուրիշի մօտ։

—Է՛, տղա՛, դու դեդեմահրում պտի յէլնիս, ընդոնք կերտան ուրանց հօր տուն. դու հօրորդի չես։

23

ՏՈՒՆ ՇԻՆՈՂ, ՏՈՒՆ ԱՒԵՐՈՂ ԿՆԻԿՆ Ա

«Իՙրիկ դՙրսի պատ ա, կնիկ ներսի պատ»

(Ալաշկերտի բարբառով)

Վախտի մէկին Մշեցիմ' կերտայ Թագաւորիմ քաղաք. էդ Թագաւորին կեղնի իրեք տարով մշակ. իրեք տարին որ կը թմի, Թագաւոր կը բերայ էդ մշկուն շատ օսկի ու ապրանք կի-տայ կը ճամբայ էրկիր,

Ժուկ ու ժամանակ մի կը մնայ էդ Մշեցին, ուրին տարած օս-կիք կը փճցու, էմլէ կերտայ դուրբաթ էն Թագաւորի քաղաք։

Մէկ օր Թագաւոր ուր աղջըկէ հետ էլած էր էդ քաղքի մէջ կը զվռնէր։ Աղջիկ տեսաւ ուր մշկուն, ճանչցաւ, ասաց ուր պա-պուն։—Էդ մեր մշակն ա, էլմէ էկեր ա։

Թագաւոր կը խանչայ, կը հարցու։—Տղա՛, յորէ՛ն իս էկլի, ես քղի օսկի շատ տուվի, որ դու մէկ լէ դարիպուտէն չկէր։

—Թագաւոր ապրած' կասայ. քու տուած օսկիք յմեն փճըցուցի։

Թագաւորի աղջիկ կըսայ.—Մեղաւոր էդի չէ, էդոր կնիկն ա։

Թագաւոր էդ խօսքի վրէն կը հետաքրքրվըր ուր աղջիկէն.—Ի՞նչ գինաս մեղաւոր էդոր կնիկն ա, կասայ։

—Էդոր կնիկ աղէկ կնիկ էղնէր, ինքը թէ փճըցուցող էղնէր, կնիկ ժողուող պտի էղնէր։

Էդ խօսքի վրէն Թագաւոր նեղեցաւ, խանչեց զուր մշկներ, ուր աղջիկ տուեց էնդոնց ձեռ, ասաց։—Տարէք, եօթ էրկիր զվըռ-ցուցէք, հարցուցէք,—հարցուցէք, մէկ քօթի մարդուն' տուէք, ճալա տեսնիմ, իմ աղջիկ ուր մարդուն իմալ կը կառավորայ։

Մշկնէր կառնին, կերտան, եօթ էրկիր ժուռ գիկան, մէկ գօթի տղէ մի կը գտնին, կիտան էդ տղին։

Աղջիկ կաչքայ, էդ տղէն յէմալ գօթի ա օր ուր ակնջով փօչէ չաժի։ Մէկ օր Թագաւորի աղջիկ մէկ էշ կառնի, էդ տղէն կը ճամբայ մօրին փէտ բերելու։ Կերտայ, բառնայ ու գիկայ, կէս ճամբուն կաչքայ մէկ խազած-կապած մարդ, գէլի էդոր յառէջ։

Տղա՛, կասայ. առանց փարի դէդ փէտ տուր ընձի։

—Հան, աղա, Թըլս էղնի քզի, առնի քո ղասեն։

Կիտայ ու գիկայ տուն, Թագաւորի աղջիկէ կըսայ.—Գացի, փէտ բերի, կէս ճամբուն մէկ էլաւ յառէջսի, առանց փարի տուեցի, գնաց։

—Շատ աղէկ էրիր, սաաց աղջիկ. նըմա դու ժիր էղիր, դատի, Թըլս խըլլս քու ղատում ուտին։

Շուտ էլ մէ Թագաւորի աղջիկ էշ սազեց, ճամբեց փէտի. էդ գօթի մարդ էլ մի ըռաս էկաւ, սաաց.—Փէտ տո՛ւր ընձի, քզի էր կու խըպատ կիտամ։

—Ըմա՛ խըպատդ, սաաց տղէն. տուեցի՛ փէտեր, գնաց։

—Մարդու մէկի յառէջ կերտաս, մէկ ճերմակ մանիթիյէյի մշակ կեղնիս, քո յօժար կամքով, մէկ գիկայ, խակառակին քզի տասնապատիկ կիտայ, չէղնի էրԹաս, էն քո առաջուայ ճախին մնաս։ Մէկ էլ ֆերվաննի կեղնիս. գիշեր դաշտ կը մնաս, չեղնի ձորու մէջ պառկիսխան քո ֆարվան Թափիս. էլի դարի դլօխ. եա դուրան տեղ մի, նոր քու ֆարվան Թափայ։

Տղէն էլմէ դարտակ էկաւ տուն. աղջիկէն ըսեց.—Ցէսօր լէ էն մարդ էկաւ յառէջ, էրկու խըրատ տուեց. փէտեր տուեցի էնդոր։

Աղջիկ ըսեց.—էնի մարդ չէ, հրշտակ ա, էնդոր խըրատ աղէկ քու մըքի մէջ պայյա։

Վախս չատ չընցաւ, էն տղէն գնաց էղաւ մէկ բազրկեան բաշու մշակ։ Օր մի օրերուց յէրօր էդ բազրկան զուր դանկեր կապեց քաղքից մէկէլ քաղաք տանելու. օր մի չումի յէրկուն գացին-գացին, չկըցան ձորու միջից դուս գին, դուրան տեղ մի էդ ձորու մէջ բազրկանի մշկներ զուրանց բեռներ Թափեցին. էդ տղէն զուր փայ ջօրիկ բառցած էլաւ դարի դլօխ, նոր Թափեց։

Կէս գիշեր չէր ընձի, իմալ մէկ անձրև էկաւ, օր էդ ձորը բերնէ բերան կը լմըմէր, կերտէր։

Ջորու մէջ ուրանց բեռներ Թափող մշկներ աննախ փախան, պըծան, մնացած դանկեր ու ջորիք սելաւ տարաւ, խեղդեց։

Բազրկան բաշին էկաւ, տեսաւ օր մշկներու բեռներ յմին սելաւ տարեր էր, զարկեց չոքերուն ու լաց. դարձաւ ըսեց մըշկներուն։—Ապա թամբալ դո՛ր ա։

—Թամբալ ուր խաբար Ջորիք առաւ, էլաւ դարի գլօխ։

Էլան գացին դարի գլօխ, տեսան օր յինք լէ սլամաթ ա, ուր Ջորիք ու բեռնիր լէ։

Բազրկան բաշին չատ ուրախացաւ, գովաց ուր մշկնիրու յառէջ Թամբլի խելացուտեն։

Էդ տեղ մէկ ջրխոր կէր. Ջորիք լէ ծարաւ ին, էդ ջրխորին լէ մէկ սովորուտեն կէր, որն օր մտէր մէջ, դուս չէր իկէր։

Արէ՛ք, ըսեց բազրկան բաշին, մէկմ ձեր մօտէն մտէք ջրխոր, ջուր քաշէք, Ջորինիր ջրինք։

Մշկնիր յըմեն վախցան, Թամբալ էկաւ յառէջ, մտաւ ինե. ջուր տուեց, պրծաւ. իշկեց դուռ մի բացուաւ, դուռին քաշին տարին յօտիմ մէջ, յօտի մէջ նստեր էր ճերմակ մուրուս խալիւորմ, օսկի սինիմ յառէջ դրեր էր, օսկի մուկ մի, օսկի կատու մի մէջ կը խաղէն. մէկ տղայ, մէկ աղջիկ հեռուն կայնած կայքին։

Էդ տղէն օ նէրս մտաւ, օսկի մուկը խաղաց ու խաղցուց։

—Այ տղա՛, աշխարհ ինչ ա քաղցր։

—Ինչ օ մարդու սրտին դուր գիկայ, էն ա քաղցր։

—Դու չկրցար գտեր էր. գտի, ասաց մուկը։

—Սէրը քընց զմեն քաղցր ա, ասաց տղէն։

Էդ խօսքի վրէն մուկ դարձաւ մէկ հուրնիկ հրեղէն աղջիկ կայնաւ էդ տղի յառէջ, ըսեց.—Ցուզէ, տամ, խաղածին. չատեր իդա ղետնի տակ մենք հողին հաւասար էրինք. մարդ չկարցաւ զիմ պատասխան տէր, դու տուեցիր։

Աղջիկ հանեց իրեք հատ մէկ մէկ օխանոց նուռ, տուեց տղին, մէկի մէջ ալմաստ էր, մէկի մէջ յաղութ, մէկի մէջ զմրութ։

Էդ աղջիկ էլմէ ասաց.—Տղա՛, յուզէ, տամ։

Էն տղէն ու աղջիկ օր կաչկէին, յառէջ էկան, տղի ձեռք սլագին ու ըսին.—Խնդրէ՛, զմզի յուզայ։

—Ի՛նչ կիտաք, ըսեց տղէն, օր զձզի յուզիմ։

—Առ մեր մատնիք որ Թանկագին ա, մզի իդա ահղից ազատայ։

Տղէն մատնիք առաւ, դարձաւ աղջիկէ.—Իմ խնդիր քընէ իդա խըրար ա օ, իդա տղէն ու աղջիկ ըձի բաշխի։

Խրեղէն աղջիկ բաշխեց զէդ տղէն ու աղջիկ, տղէն առաւ զուր նռեր ու էդ տղէն ու աղջիկ, ջրհորից դուս յէլան։

Բազրկան անեկ մնաց օր Թամբալ տղէն սաղ-սալամաթ դուս պրծաւ, մէկ աղջիկ ու տղէմ էլ դուս բերեց։

Տուեց էն իրեք նուռն բազրկան բաշուն, ճամբեց տուն. ինք առաւ բազրկան բաշու ապրանք. գնաց յուրիշ Թագաւորի երկիր։

Ցերօր մտան քաղաք, տեսան Թալալ կը բոռայ։—Որն օր Թա-

գալուրի տղէն ու աղջիկ գտնի, Թագաւոր ուր Թագաւորութենի իրեք փայ էգոր կիտայ։

Էն տղէն ու աղջիկ շաշմած կաչքէին, ինչ ա, քամբալ շուտ մի հասկըցաւ. գնաց, ըսեց թալալին։ Թալալ բռնեց էդ տղի ձեռ ու Թագաւորի յառէջ տարաւ, ըսեց.—Քո տղէն ու աղջիկ գտող էս մարդն ա։

Թագաւոր շատ ուրախացաւ, Թագաւորութենի չորս փայ լէ տուեց, էդ տղէն էլ գնաց Թագաւորի աղջիկն ու տղէն բերեց, տուեց Թագաւորին։

Տղէն ուր աղի դաճկեր Թանգ-Թանգ գնով ծախեց, զուր բեռ էլմեն բռնեց, գնաց ռէմի ուր էրկիր, տարաւ դաճկեր թասլիմ էրեց ուր աղին, շնորհակալութեն առաւ, գնաց ուր տուն։

Թագաւորի աղջիկ օր տղին տեսաւ, վազեց, գնաց յառէջ. փաթթուան յիրար վզով, էկան տուն։

Տղէն դարձաւ, ուր կնկայ մօտէն հարցուց։

—Էն նուեր օր բազրկան բաշու հետ ճամբի, առար, կերար։

—Ի՞նչ ուտեմ, մարդ, ըսեց. էնդոնք յըմեն Թանկագին քար էն։

—Է, օր էրմալ ա, կնիկ, մենք քո հօրէն շատ հարուստ էղանք. Թագաւորի մալ չորս փայ էրի, բերի։

Օսկու անտկներ քաշեց ներս։

Մնաց ժուկ ժամանակ մի, աղջիկայ խաս լսեց. էլաւ էկաւ ուր աղջիկայ տեսուտեն։

Էկաւ տեսաւ.—Ինչ տեսնի.—Ուր աղջիկայ քօշ ու սարէն քընց ուր խօրոտ ա չինած, գնաց խոճախ էղաւ։

Քառսուն օր կերան, խմին, ուրախութեն էրին. քառսուն օր օր թմաւ, աղջիկ էկաւ պապու յառէջ, ըսեց.—Իմա՞լ ա, իմ պապ, իմ խօ՞սքն ա Թէ քուծ։

—Քու խօսքն ա, լաւօ, ասաց պապ, օղորդ օր տուն շինող կնիկն ա. «իրիկ դըսի պատ ա, կնիկ ներսի պատ»։

Թագաւոր էլաւ գնաց ուր տուն. փեսին լէ բերեց, էրեց սաւրիազամ, քանիմ տարի ետք յինք մեռաւ, տղա չունէր, ինքն էր էն մէկ աղջիկ, փեսէն էղաւ Թագաւոր։

Էն հասաւ ուր մուրազին, դուք լէ հասիք ձեր մուրազին։

24

ԸՌԷՍ ՉԿՌՆԱՑ ԾՌՌԻ ՄԱԼ ՈՒՏԱՑ

(Ալաշկերտի բարբառով *)

Կեղնի-չեղնի մէկ ծուռ, մէկ խելացի ադբէր ու էդոնց լէ մէկ պառաւ մամ կեղնի. մէկ օր պառաւ գէլնի կով կիտայ էն ծուռ տղին, օր տանի արծըցու. էդ ծուռ տղէն ա, կը տանի զկով մէկ խորունկ ձորու մի մէջ, կաչքայ օր կեղի հազար հատ սև գել հաւքեր յիջած ին էդա տեղ. կը բերայ, զկովու յոտներ լաւ կը կապայ, կը մորթայ ու էդ հաւքերուն կասայ.—Սև-սև տէրտըրներ. արէք, կերէք, գացէք իմ ջօջոյի հօգուն մէկ պատարագ էրէք։

Տղէն կաչքայ օր ուր վերև, մէկ քարիմ վրէն մէկ հատ մողոզիկ ա կայներ, էդ մողոզիկին կասայ.—Հօրքուր, դու լէ ճնաց կեցի, ես կով մորթեցի, տուեցի տէրտըրներուն, ճամ պատարագ էնեն, ճամ զիմ կովու գին տանե. Ըամլա կըսայ, կը թողայ, կիգայ գեղ։

Պառաւ կը հարցու.—Տղա՛, յո՞ւր ա կով։

—Զկով մորթեցի, տուեցի տէրտըրներուն, օր քու հօգուն պատարագ էնեն։

Պառաւն ա, կը կատղի, կառնի փէտ, կընկի յետեից, կասայ.—Գրող զանայ քո կշտին, սատանի փայ ու բաժին էղնիս. դէ՛ գնա՛, զկով բէր։

Էդ ծուռ կերտայ, կաչքայ օր հաւքեր կովու ջանդակ կերած պրծած ին. ղուրին օր տեսան, թռան։

Ծուռը բոռաց.—Է՛յ լոէրտըրներ, յո՞ւր կերտաք. կովու գին տուէք, ջօջոն զընձի ծեծեց, պատարագ ղայրուլ չերէց։

Է՛, հաւքեր իսկի տղին ականջ կէնեն։ Թռան, գացին։

Ծուռը նստաւ կովի ջանդկի մօտ, լաց։ Մէկ էլ տեսաւ հօրքուր մողոզիկ էլաւ քարի վրէն. ճըմա օր տեսաւ զմողոզիկ, ասաց.—Հօրքուր, զիմ կովու գին տուր։

Մողողիկ փախաւ մէկ դալsայ տեղ, մտաւ քարի տակ։

Էդ ծուռը էլաւ, լանկեմ զարկեց էդ քարին. քար շրջաւ. տեսաւ մէկ ջուալ օսկի կէր էդ քարի տակ հորած, բուռ մի, էրկու լցեց ուր ճեպ, առաւ, էկաւ։

Մեծ աղբէր աչքեց զկում չբերի, վազեց վրէն օր ծեծէր. ճըմայ էդ ծուռ հանեց մէկ ճանկ օսկի, ցանեց դէմ աղբօր յաչքեր։

Ախբէր կզաւ, զէն գետնի օսկիք վերցուց, ողաբուն ճեպի մնացած օսկիք հանեց, ըսեց.—Տղա՛, էդ օսկիք յո՞ւստայ ա։

—Հօրքուր մողուշիկ տուեց, ըսեց.—Տղա՛, էլ կայ.—Շա՛տ, կեղնի, մէկ ջուալ։

Առաւ ծուռ ախբէր, գնաց, զօսկիք առան-էկան։

Քանիմ՝ օր յընցաւ, էդ գեղի ըռէս յիմցաւ, օր պառուու տղէքներ խազճայ ա գտած, էկաւ զէդոց դուռ կօրեց (բռնացաւ), գաշեց-գաշեց (շատ ուռնեց), զօսկու ջուալ գտաւ. խելացի աղբօր օղորկեց կոտ բերելու օր կիսին։

Հըմա էն ծուռ ախբէր ջալագնտեց ըռէս. տարաւ, թալեց ջըհոր։ Խելացի ախբէր էկաւ, տեսաւ ըռէս չկա՛յ, հարցուց ծուռ ախբօր մօտէն. ծուռ ախբէր ըսեց.—Ըռէս տարայ թալի ջըհոր։

—Վա՛յ սև ցաւի բռաւs գայիր դու, ամեն տեղ արուն էրեցիր, ըսեց. գնաց հանեց, դիշերով պատնգեց տեղ մի հորեց, էկաւ սաղսաղ էծ մի, տարաւ, թալեց հոր։

Մէկէլ օր գեղի գզիր յէլաւ բոռաց։

—Մեր գեղի ըռէս կորեր ա, վե՛ր տուեն ա։

Ծուռ ախբէր ասաց.—Մեր ջըհորն ա։

Գեղովի էկան-թափան, ծուռ տղէն մտուցին ջըհոր օր ըռէսին հանէն։ Մտաւ հոր, ձեռ տուեց իծու պոչ. դարձաւ, ասաց.—Ձեր ըռէս պոչով ա։

—Հա-հա, ըսին էնդոնք, հան։

Բռաց էլմէ.—Ձեր ըռէսին մուրուք կէր։

—Հա՛-հա՛, հան տեսնինք, էդի մեր ըռէսն ա։

Ջաճդակ հանեցին օ մէկ փիցած էծ, նոր ծծղացին էդ ծուռ տղի վրէն ու թօրկին, գացին։

Քանի տարի էտև էդ պառուի խելացի տղէն դըլվաբւորցաւ, էղաւ էդ գեղի ըռէս։

25

ԾՈՒՌ ՊԱՌԱՒ

(Ալաշկերտի բարբառով)

Մէկ մարդ մէկ պառաւ կնիկ կառնի, էդ պառաւ ծուռ կեղնի. մարդու ճար կը կտրի էդ ծուռ պառւու ձեռ, ինչ բան որ կէտայ. չկրնայ էնայ, մէկ օր օխէմ բուրդ կէտայ կնկայ ձեռ, կսայ.—Մանայ զիդայ բուրդ, որ ընձի շլուար մի էնինք:

Էդ ծուռ պառաւ կառնի զէդ բուրդ, կը մանայ-մանայ չուրի տարին կը լինայ, նոր կը պրծնի։

Էդ պառաւի մարդ կէտայ զէդ թելեր պառաւին, կսայ.—Տար զթելեր ջուլհակի մօտ, շլուար գործել տուր։

Պառաւ կառնի, կը տանի ջուլհակի մօտ, ջուլհակի դուռ կը տփայ, դուռ չուն մի կեղնի, էդ պառւու վրէն կը հաչայ։

—Թաւմ, կսայ պառաւ, ջուլհակ լէ մարդու վրէն հաչայ. իդայ ինչ հմֆ-հմֆ ա, իմալ կերևայ դու չատ խօսք մէկնիս, լուսուն լէ ճախ տալու, առնելու վրէն էդմլայ խօսք էնիս, դու պտի էնիս հաֆ-հաֆ, ես պտի էնիմ ցաւ-ցաւ. քզի չիմ իտայ գործել, կը տանիմ իմ կռկռան սանահօր մօտ:

Առաւ զթելեր, գնաց, թափեց քռի չոր չռպ՚ֆներու վրէն, դէս քաշեց, դէն քաշեց, թելներ կտրտեց։

—Թահմ, սանահէր, սաց. դուջչըս գինայ, կը տանիմ կռկռան սանահօր մօտ։

Առաւ զթելեր, գնաց, գնաց մէկ առուի մօտ, տեսաւ լէք գորտ էր, թալեց մանած առուն, թողեց, էկաւ, ուր մարդուն սաց.
—Մարդ, մանած տարայ, տուեցի մեր կռկռան սանամօր:

Մարդ խմցաւ, քաշեց փէտ, ընկաւ կնկայ վրէն, տուր որ կխտաա։

—Գնա՛, ըսեց. գմանած յուր որ տալեր ես, բէ՛ր։

Էդ պառաւն էր, էլաւ, տընկ-հա տընկ էնելով գնաց դէմի կուկուան սանամօր մօտ։ Գնաց-գնաց, համբէն գունտ մի օսկի գտաւ, դարձաւ, օսկին բերեց, տուեց ուր մարդուն։

Պառաւ մէկ օր տեսաւ չարչիմ հլու-մլու բերի, կը ծախայ. ըիմա կերտայ ուր մարդուց գողտուկ կը բերայ էդ օսկին, կխտամ էդ չարչուն. ուրին բան ու ման կառնի։

Ցիրկուն մարդ օր կիգայ տուն, զուր առած բան ուր մարդուն նշանց կխտայ, կասայ.—Տե՛ս, մարդ, էն գունտ օսկին տուեցի, գիդա պլպլան բաներ առայ։

Մարդ օր զէդ կը տեսի, հմա կելլի, պառւուն կխտայ լաճկի յառէջ, տնից դուս կէնայ։

Պառաւ լէ տնից կուըքի, կառնի զուր ճախրակ ու զանկուլակմ, կերտայ, ձորում մէջ, ճամբու վրէն կը նստի, չընկըռ-չընկըռ զուր ճախրակ կը մանայ։

Մէկ օր Թագաւորիմ դաւէք, օր օսկի բառցած կը տանէն, դեւի մէկ օր լսեց էդ չնկռտոց, ջոկուաւ, գնաց դէմի էդ չնկռտոց։

Պառաւ էլաւ չոքըցուց, զուր ճախրակ դըրեց վրէն, հեծաւ, էկաւ տուն։

Մարդ էլաւ, բեռան աչքեց օր լէք օսկի էր, օսկիք տարաւ ներս, դաւին էլ մորթեց. ըիմա պառւուն խափեց, մտուց Թունդիր, ասաց.—Մկայ քարէ կարկուտ դիկայ։ Բերեց Թունդրայ վրէն ջուլ փռեց, պառւու գլխու վրէն կուտ ցանեց. հաւեր Թօրկեց վրէն, հաւեր Թըլխկ-Թըլխկ պառւու գլօխ կտցեցին, չուր մարդ օսկիք ու միս տեղաւորեց. Նոր էկաւ զխաւեր դէն-քշմ, էրաւ. պառաւ հանեց։

Քանիմ օր ընցաւ, Նոր Թագաւորի մարդեր էկան, հիւընդի աբով դաւի մսի չուռ էկան։

Էդ պառաւ ասաց.—Քարէ կարկտի տարին մեր տուն դաւի միս կէր։

Թագաւոր կը խանչայ զպառաւ ու զէդ մարդ կը տանի ու կը հարցու, կասայ.—Քարէ կարկուտի տարին ձեր տուն դաւի միս կէր։

Մարդ կասայ.—Ձեր տուն ակոլի ու ձեր քարէ կարկտին. քարէ կարկուտ յե՞փ ա էկի, իմ կնիկ ծուռ ա, գձգի խափեր ա։

Մարդ չատ դոլվաթւորցաւ. պառաւ մեռաւ, գնաց խօրտ կնիկ մը բերեց. Քօք ու սարեմ շինեց, մտան մէջ։

26

ՄԵՌՈՒԿ ՄԱՆՈՒԿ

(Արծկէի բարբառով) *

Մէկ մարդ՝ մէկ կնիկ՝ էդոնց մէկ խատ աղջիկ կեղի. կու-տան իրենց դրկեցի տուն աչկերտ. ամիսմ' երկու-իրեք էդ տուն աչկերտութեն կենայ: Էդոր ուսէն կը վերու.—Աղջի՛, փարչ առ, տար ջուր բեր:

Ամիսմ-էրկու-իրեք էդ աղջիկ ուսին ամեն օր ջուր կը բերայ:

Մէկ օր էլ մէկ սիւտակ մուրուս խալիւոր ·էդ աղբրէն դուս կելլէ, էդ աղջըկէն կասայ.

—Աղջի՛, մեռնիս՝ խող էնես. ապրիս՝ մեռուկ մանուկ էնես:

Աղջիկ կուգեայ տուն:

Մէկ՝ տաս՝ քսան օր աղջիկ կերթայ ջրու, էդ խալիւոր էդլա «աղջիկ, մեռիս՝ խող էնես. ապրես՝ մեռուկ մանուկ էնես,» կասայ:

Էդ աղջիկ յօրպըրզօր կը խալի, էդոր միս կը բարկնայ. մէկ օր էդ աղջիկ կելլի կերթայ ուր խօր տուն, խէր, մէր կը վերցին.—Աղջի՛, դու խիւընդցե՞րես, քե դեղ ին տուած, ինչ ա տուած, դու էդլան էս էղերես:

—Չի նա դեղ ա տուած, նա խիւընդցեր եմ. իմ ուսեն ընձի ճամբխեց աղբուր ջրի, մէկ խալիւոր մարդ աղբրէ դուս էկաւ, ընձի ասաց.—«Աղջի՛, մեռիս՝ խող էնես, ապրես՝ մեռուկ մանուկ էնես, օրմ' էլ Մանուկին պտի ըռաստ գաս»:

Մէր կը վերցու:—Մա՛րդ, աղջիկ վախեցեր ա, ա՛ռ, գնա՛ մէկ ղարիբ էրկիր:

Խէրն էր, վերուց զաղջիկ. օրմ' էրկու օր, մէկ ամիս, էրկու ամիս գնաց, խասաւ մէկ քաղքի: Խէրն էր, վերուց.—Աղջի՛, դու դադ կայնէ, չուր ես էրթամ օտաց ճանբախ, գեամ:

Էդ աղջիկ դառի կայնաւ, խէր գնաց պետենի տակ օտաց ճամբախ:

---

* Պատմած է Առընչկոյս գիւղացի Դաւիթ Մուխսի Ցառուբիւնեան:

Էդ մարդ դարձաւ օ պետեն բացուեր. աղջիկ գնացե ինն։ կը տեսի օ աղջիկ չկայ. կելի, վլին օ կը խարցուցայ, դէօ-դէն, սալխ չեն իղայ. էդ մարդ ուրին-ուրին կասայ. կայ, չկայ, Մեռուկ մանուկ իմ աղջիկ տարաւ: Կելի ֆոր-փոսման կուգեայ ուր տուն։

Էդ աղջիկն ա, կերթայ եօթ դուռ կը բանայ. կը տեսի կօ մարդմ մեռուկ՝ էդա տեղ դրուկ ա, կայ, չկայ, Մեռուկ Մանուկ էս ա, կօ էկայ, էսոր խասայ։

Աղջիկն ա, էդ մեռուկի գլօխ կը դնայ վրր չոքին. տարիմ, էրկուս-իրեք-չորս կը պախայ: Էդ աղջիկն ա, փանճարից կէչկայ մըրթըպու ֆոչ կուգեայ. կը տեսի օ մէկ Թըրըմ (որբ) մըրթըպու կեչկե (աղջիկ) էդ մըրթըպու ֆոչին կասայ.—Ընձի էլ տարէք, անտէր էմ, անտիրական էմ։ Էդոնք թողին գնացին։

Որ կեչեն չատ լացեց, վերևուց աղջիկ ասաց.

—Կեչե, էս միզրի պաղ բռնայ, արի. ես քե կը պախեմ։

Կեչեն ա, բռնեց միզրի պաղ, աղջիկ քաշեց, խանեց ուր մօտ։ Էդ կեչեն իրեք տարի էդ աղջըկէ մօտ խզմեթ էնեց։

Աղջիկ տեսաւ օր եօթ տարին թմաւ, մեռուկ Մանուկ յարութեն պտի առի, կեչկին ասաց.—Մանուկի գլօխ դիր վրր քու չոքին. ես էրթամ գլօխ լուամ, սերսըփիմ յիդամ. որ Մանուկ մէ խետ ժաժ կուգեայ. ընձի իմաց մի տու, որ մէկ էլ ժաժ կուգայ, ընձի իմաց տուր որ ես գեամ. Մանուկ յարութեն առնի, մենք խասինք մեր մուրազէն։

Աղջիկն ա, գնաց ուր գլօխ լուայ, էդ կեչեն էր, Մանուկի գլօխ դնեց վրր չոքին, նստաւ։

Մեռուկ Մանուկ էրկու խետ ժաժ կուգեայ, կեչեն աղջկէն չիմացուցայ. Մեռուկ Մանուկ կէլի յարութեն խըտ կեչին կառի։

Մանուկն ա, գինայ թէ կեչկեն խայ ա։

Էն աղջիկն օր պախեց, չախեց, էղաւ ճարիյա։

Մեռուկ Մանուկ ամեն օր կեչկին կասայ.—Էդ ճարին խաց տու. ջուր տուր, մեղք ա։

Մանուկն ա, կելի մէկ օր, էրկու օր, մէ չաբաթ կը պտտայ, էլման տուն կուգեայ, կեչեն ա կը վերու.—Գնա, ընձի զաղ-զաղ մաճուսայ առ արի, էնիմ չոր։

Մանուկ կը վերու։—Էդի քրդու չոր ա, խայի չոր ուզայ, բերեմ։

—Էն չոր օր կուզեմ, էն չոր բեր։

—Քո ֆէյֆն ա, կասայ. էն չորից կը բերեմ. գնա, իչկայ, քու ճարիյան ինչ կուզայ։ Կեչեն գնաց, խարցուց։

—Աղջի՛, Մանուկ կերթայ տուֆներ, քզի ինչ չոր կուզես։

—Ընձի բա՛ն չբերայ. մէկ սապրի խրձիկ, մէկ էլ բըղբըղիկ. Ֆինճան մէջ ադու։

Մանուկն էր, գնաց պազար, կեչկի չորեր առաւ, էկաւ չանք ճամբխու կէս, միտք ընկաւ, մէկէլ դարձաւ, գնաց մէկ սապրի խրձիկ, մէկ բըղբըղիկ, մէկ Ֆնճան մէջ ադու առաւ, էկաւ։

Մանուկ ասաց.—Էդ բաներ ուզող չատ դարտի տէր ա. մուղաթ կաց, էնի կը պատռի։

Էկաւ տուն, աղջկէն ու կեչկի չորեր տուեց։

Աղջիկը բըղբըղիկն ու սապրի խրձիկ կը դնայ ուր յաւէջ, կասայ ուր գլխու գալած, դառնայ, խարցու։

—Բըղբըղիկ, սապրի խրձիկ, ես պատռիմ, չէ դո՛ւ։ Էս եօթ տարի Մանուկին չախի պախի, կեչէն էկաւ, իմ ձեռնեն առաւ։

Բըղբըղիկ, սապրի խրձիկ կասեն.—Մենք կը պատռենք, դու մը պատռի։

Մէկէլ էդ աղջիկ ուր գլխու գալածներ էդ բըղբըղիկին, սապրի խրձիկին կասայ. դառնայ, կասայ։

—Բըղբըղիկ, սապրի խրձիկ, ես պատռիմ չէ դո՛ւ, էս եօթ տարի ես Մանուկին չախի, պախի. կեչէն էկաւ, իմ ձեռնէն առաւ։

Էլման բըղբըղիկ, սապրի խրձիկ կասայ.

—Ես կը պատռիմ, դու մը պատռի։

Աղջիկ կը վերու։—Բըղբըղի՛կ, սապրի խրձիկ, ես պատռիմ, դու մը պատռի. էս եօթ տարի Մանուկին չախի, պախի. կեչին էկաւ, իմ ձեռնէն առաւ։

Մանուկ էդ տեղէն կը լսայ, կասայ.

—Դու մը՛ պատռի, դու մը՛ պատռի թը բըղբըղիկ, սապրի խրձիկ պատռին, դու մը՛ պատռի։

Մանուկ ասելու պաշտան, բըղբըղիկ, սապրի խրձիկ պատռան ջիրարուց։

Մանուկ էդ տեղ կիմնայ որ էդ աղջիկ ուրին պախեր էր չանք եօթ տարի, որ ես խըտ էդոր յարութեն պտի առնէնք։

27

ՋԱՆ ՓՈԼԱՏ

(Արծկէի Առնջկոյս գիւղի բարբառով *)

Վախտով մէ թագաւոր կեղի, էդոր քառսուն խատ տղայ կեղի։

Էդ քառասուն տղէն կը դնայ վարժարան։

Էռասուն տարի էդ տղէք ցէ օր, ցէ արև կը տեսին։

Էդ տղէքներու պստիկի անուն Միր կեղնի։

Աւուր մէկին էդ պստիկ տղէն կը փըցի, կելնի դուս, կը տեսի օր թագաւոր ուր ասկրով, թմբով, զուռնով, ձիով, ձիաւորով կը խաղան։

Էդ տղէն ա, կը դառնայ մտի վարժատուն ջոջ աղբօր կասայ.

— Աղբէր, աշխարհ օր կայ, արև կայ, խաղ կայ. մենք մտերինք մութ տուն. ինչ էնք խասկըցի։

Ջոջ աղբէր մէկէլ աղբօր վերուց (ասաց).

—Տղա՛, տղա՛, յէլի դոմբմ զարկ էդոր. էկեր ա, սուտ ասելով աշխար պտի աւիրայ. յէլի դուս, մէ իշկայ։

—Ցէլի դուս, իշկայ, թա սուտ ա, իմ լեզուն կտռայ, թա օղորթ ա, էլ յօրին կը զարկիս, ասաց։

Տղէն կելի. կը տեսի, իմալ օ տղէն տեսեր ա, կօ յէմալ ա։

Կը դառնայ, ջօջ աղբօր կասայ.—Աղբէր, օղո՞րթ ա։

Ջոջ աղբէր կասայ։—Օր յէմալ ա, գնա՛, թագաւորին ասա՛, թո մեղի քառասուն խատ ձի՝ մէկ բռանցկ, քառասուն ձեռք չոր՝ մէկ բռանցկ էղի. քառասուն ձեռք սիլա՝ մէկ բռանցկ։

Գնաց մըտ թագաւոր։

Թագաւորն ա, փանջարից գլօխ թալեց դուս։

Տղէն գնաց գլօխ իջուց թագաւորին։

Ասաց.—Որդի՛, խէր ա քու գալ էս տեղ։

Ասաց.—Փառք Աստուծոյ, խէր ա. քո տղէն ընձի ճամբէ մըտ քե, քառասուն խատ ձի տաս մէկ բռանցկ. քառասուն ձեռք չոր տաս մէկ բռանցկ. քառասուն ձեռք սիլա տաս մէկ բռանցկ։

Ասաց.—Որդի՛, քչում կանի դադ. ճամբխեմ, ձիանք առնին զան, մռ, գնա։

---

* Պատմած է Դաւիթ Մուխսի Յարութիւնեան։

Թադաւոր ձիանք, չոր, սիլա առաւ էկաւ։

Տղէն առաւ, գնաց։

Տարաւ վարժարանի դուռ, կայնաւ։

Ասաց.—Աղբէ՛ր, ձիանք բռնէք։

Մտաւ վարժատուն, աղբէր վերցուց.—Տղա՛, բերի՛։

—Հա՛, ձիանք հազr, կօ դուռ կայնուկ ին։

—Դէ՛, տղէկներ, յէլէ՛ք, յէլէ՛ք որ էրթանք, ըսից. ես յիռսուն տարի վարժատան խզմաթ էնեցի, յիռսուն տարի էլ պտի պտտեմ աշխար։

Տղէկներ յէլան, ձիանք խեծան։

Նե օր ա տեսած, Gե արև ա տեսած, Gե ձի ա տեսած, Gե սիլա ա տեսած, Gե թադաւոր ա տեսած, Gե խաG ա տեսած։ Բառսուն էլ խամ տղայ։ Նե ձիու խեծնել գիտեն, Gե ձիու առ ու դլուխ գիտեն։ Մէկն աջու կը խեծի ձին, մէկն ձախու։

Էլան մեյsաG, ձի կը խաղցուցեն։

Նե քար կիչկեն, Gե թուփ կիչկին, Gե խաGsալ կիչկեն, Gե ջուր կիչկեն։

Էդ ձիանք յէմալ էնեցին. քրտինքի մէջ կուրխան։

Թադաւորն ա, փաGջարից բամաcայ կէնայ. կը տեսի մէկ նաւաsաG կը քշայ (օդի միջով) մէկ բաւաsաG (տալակի միջով). դլուխ տարաւ բերից, ասաց.

—Հեյ վա՜խ, էս տղէկներուց ընձի խեr չկայ, պախեցի, ջոջըցուցի, վարժատուն դրեցի, խեr չտեսայ։

Տղէք քշեցին, թադաւորի սաrի յառէջ կայնան։

Ասաց.—Որդի՛, ինչ կուզէք։

—Մեզի խաrGլիս տո՛ւր, էրթանք պտտելու։

—Որդի՛. ես ձեր խէլին իմ, ընձի ականջ էնէք, մ'էրթաք, դու քանի օր կաք, խամ տղայ էք, Gե դու ձեր չարկամ կը ճանչնաք, Gե բարեկամ։

—Թադաւո՛ր, ասիցին, չեղած բան ա, պտի էրթանք։

—Որդի՛, ասաց. «Ձեր մուր, ձեր էրես», ձեզի չորս խատ ւօսխար (կտակ) կայ, էնիմ, կերթաք, գնացէք. մէկ ւօսխար էն ա օր կերթաք, իրեք ճամբու ըռաւs կուղաք. էն վերին ճամբով, էն ներքին ճամբով մ'էրթաք. էն դուրան ճամբով գացէք, մէկ էդի։ Մէկ էլ՝ կէրթաք չայիr, չիմաG, fօcկ ու սաrեմ կայ էդայ տեղ, չորս բոլոր բաւsաG քաշուկ ա, իսGի արունով ա չքած. էդ տեղ չիջիք, ընցնիք։ Ասաց. Մէկ՞էլ կերթաք ջոջ գետմ կայ, կարմունջ կապուկ վրէն, էն կարմընջ կընցիք դէն, քառսուն տեսակ կերակուր չայիr-չիմաGի վրէն. չեղնի իջնիք, ուտիք. ձեզի վնաս կուգեայ, մէկէլ էդ։

Մէկ էլ կերթաք ղռաG տեղ, քար ու քռա, Gե խոտ կայ, Gե

ջուր կայ, ճէ ալօտ․ Քառասուն խուրձ խոտ կայ էն տեղ ջոկ-ջոկ, չեղնի թմաճ էնեք էն խոտին, ասէք «մեր ձիանք անօթի ին, կերցունք»․ էն խոտին տէր կայ, ձեզի վնաս կուգեայ։ Մէկ էլ էղի․ Որղի՛, ասաց․ կերթաք էլ դու գիտէք, մնաք էլ դու գիտէք, ես իմ մեղք իմ վզէն կը հանեմ։

Տղէկներ խօր դլուխ իջուցին, խարճլիս առան ու գնացին։

Օրմ՛, էրկու օր, իրեք գնացին, էդ իրեք ճամփու ըռաստ էկան։

Ջոջ աղբէր քշե՛ց, էն մէկ բարակ ճամբխով գնաց։

Էն պստիկ աղէն ջոջ աղբօր ասաց․

—Աղբէ՛ր, չէ՛ մեր խէր մեզի վսիաթ էներ ա թը «ձեր ճամբխուց դուս մ՚ելիք»։

Ջոջ աղբէր ըռըդաւ վըր էդոր, ըսեց․

—Շա՛ն որդի, ես ո՛ր մէկ ճամբխով կերթամ, դու իմ էտեէն արի։

Քշեցին ու գնացին։ Գնացին էն ֆօսկ ու սարի դուռը իջան։

Ջոջ աղբէր տղէկներուն վերուց։

—Տղէկնե՛ր, ձիանք քաշէք, փակլխի մէջ կապէք։

Քշեցին, փակլխի մէջ ձիանք կապեցին։

Ջոջ աղբէր վերուց տղէկներու մէկին․

—Տղա՛, տղա՛, գնա՛, տես ֆօսկի մէջ մարդ չկայ, խոտ ուզես, բերես, տանք ձիանքներուն։

Տղէն ա, գնաց, պտտեց, մարդ չտեսաւ, ճաշու պառաւ տեսաւ որ խաց կը թխէր։

Տղէն օր պառաւ տեսաւ, վախեցաւ։

Պառաւ՝ մէկ պռուկ գետին, մէկէլ գլխու վերեւով շրջեր վըր վզին։ Տղին ասաց․—Տղա՛, ինչ բանի ապով էս էկեր ես։

Ասաց․—Քշում խոտ տո՛ւր, տանինք տանք ձիանքներուն։

Ասաց․—Քանի՞ ձի ա։

Ասաց․—Քառասուն ձի ա։

Ասաց․—Դո՛ւ քանի մարդ իք, օր քառասուն ձի ա։

Ասաց․—Մենք քառասուն աղբէր ինք, քառասուն էլ ձի ա։

Կօ, մարդի դուռը էդա ա, գնա՛, ինչ ղզըր տանիս՝ տար։

Տղէն ա, էկաւ խոտ բերեց, տարաւ ձիանքներուն։

Ջոջ աղբէր վերուց.—Տղա՛, յորբ՞ էսլան անդընցար։

Ասաց․—Գացի, պտտեցի, մա՛րդ չկէր, գացի տեսայ մէ պառաւ, Աստըծոյ խայտառակ, իմ յաչք առաւ պառուռն, վախեցայ, իմ գլխու մազեր էղան քընց գերան մը, իմ լեզուն չը պտտեց, որ ես էնու մօտէն բան ուզի․ էն ձի խարցուց թա «ընչի էս էկեր ես,» ասացի «խո՛տ տուր, տանենք ձիանքներուն»։ Մարդի դուռ նշանց տուեց, ես էլ խոտ բերեցի։

Խօտ բերեց, տուեց ձիանքներուն։

Ասաց.—Տղա՛, գնա՛, քիչմ խաց բեր, ուտենք։

Գնաց, պառւուն ասաց.—Խաց տուր, ուտենք։

Պառաւ ասաց.—Առ էսա երեք խատ չոր խաց, ամը թող ուտեն, իրիկուն խաց կը բերեմ։

Տղէն էր, առաւ խացեր, գնաց։

Ջօջ աղբէր ասաց.—Ի՞նչի էսա խացեր քիչ բերիր։

—Պառաւ էդ տուեց, ասաց՝ տարէք կերէք, իրկուն կը բերեմ խաց։

Մնաց չանք յիրկուն, ճրագ կպաւ։

Էդ պառւուն քառսուն դև տղայ կեղի, էդոնք Ճէջիրի տեղէն էկան. էդ պառաւ էլաւ, ասաց.

—Տղէկնե՛ր, ձզի քառսուն խատ խուրնեիկ խըեղէն խողածին էմ բերեր եմ. էս եօթ տարի ա, իմ ատմացաւ բռներ ա. որ կերթաք, էն մարդիկն որ կուտէք, էնոնց էն կակղնէն քչում բերէք, դնեմ իմ ատմու վերէն, որ իմ ատման ցաւ կտրի։

Կասեն.—Մարէ՛, խաց տարեր էս էդ մարդեկայ։

—Երկու, երեք խաց ճամբխեր եմ, կերած էն. նոր խաց պտի ճամբխէնք։

Էդ տեղէն եօթ տարուան գինին, խաց, զատ կը տանին, փռեն տղէկներու յառէջ։

Էդ պստիկ տղէն ա, ճրագի սան տակ կը նստի, էնու տեղ մութն ա։

Գինին ա, կուտան տղէկներուն, ինչ ղտար սրէն կուգեայ պստիկ տղին. կը թափայ խսիլի տակ։

Կերան, պըծան, տղէկներ չո՛ւռ առան գետին, մեռան պըծան.

—Էս օր էս մեռե, չէ՛ եօթ տարի յառէջ։

Պառաւ ուրախելեն կերթայ, տղէկներուն խապար կուտայ. պստիկ տղէն էլ կընկի պառւուն յէտև, կերթայ ականջ կենայ, կը տեսնի որ պառաւ ուր տղէկներուն կասայ։

—Գինին տուերեմ, եօթ տարուան մեռլի պէս ընկած։

Դևէք կընկլին մէկ մէկ իրարու էտև կգեան։

Պստիկ տղան կը քաշայ թուր, կասայ.

—«Խացն ու գինին, Տէր կենդանին»։

Էդ տեղ կը զարկայ, դևու գլուխ կը թռուցայ ու լաճկով կը զարկայ, կեցգայ ճաճտակ փոս. գլուխ կը դնայ ուր կշտին։ Ջէրկընցուցէնք մէկ մէկ էդ քառսունին գլուխն էլ կը կտրայ, յետքի էլ էդ պ՚ռաւ ուրախելին կուգեայ, թուրմ էլ կը թալայ, էդոր վիզն էլ կը կտրայ, կասայ.—Ամեղայ (ղդասա գտնուեցայ) աղատայ։

Կը զարկի, քնի, լուսմթի կելի էդ քառսուն ականջ. մէկ էլ էդ պառուէն կը կտրայ, մախթով կը քաշայ թելի մէջ. կապայ ուր չո-

ըւրու տակ, կոլի կընկնի էդ ֆօցլ ու սարի մէջ, կը պտտայ, կէր-թայ էդ պառուի բարձի տկէն հօթ բանլիս կը դոի, կասայ.—Ես-էս բանլիսներն էս դռներու վրէն ճռպիմ։

Տղէն վեց դուռ կը բանայ. կը տեսի մէկ օսկի ա, մէկ ար-ծաթ ա, մէկ հարաղ ա։

Էդ մէկ դուռ կը բանայ օր քառսուն խատ խուրնիկ խրեղէն աղջիկ էդ օքախի մէջ, կը մտի ինե, կասայ.

—Բարև ձեղի աղջնիր։

Էն էլ կասի.—Աստուծու բարին քե տղա։

Կասեն.—Խուքն ուր թեավ, օձն ուր պօռտալ չի կռնայ էս տեղրանք գեայ. փախի, մեղք էս, մկայ դեէք օր էկան քու ջոջ վերդ քու ականջ կը թողեն։

—Է՜յ գիտի աղջըներ, կասայ. ինչ անխեւք էք, դեէքն էլ սպա-ներ էմ, պառուն էլ։

Ասին.—Սուր առելով աշխար պտի աւիրես, դու մէկ մարդ, իմալ քառսուն դե սպանեցիր։

—Կնիկ օր կայ, կարճ միտք ա, ասաց. չէք հաւտար, ահա նշա-նարաներ (ականջներ կարձկայ, կը թալայ յառէջներ) կասայ, ես խամ մարդ չեմ, որ խամ բան բռնեմ, սուր առեմ, Աստուծուց, մարդուց էղիմ սևերես. Աստուած ընձի խելք տուեց, կարողութիւն տուեց, իմ ձէն էրթայ աշխըրքի մէջ ցվրուի։

Աղջներ վերցին.—Դու քանի՛ աղբէր էք։

Մենք քառսուն աղբէր ենք, քառսունի պստիկը ես էմ։

—Մենք էլ ամէկ թագաւորիմ՝ աղջիկ ենք, արէք, ամեն մէկդ ո՛ր մէկիս առնիք, էն տարէք։

—Էրկու մուրազ կայ մըլիկ. էրթանք կատարենք, նոր կը դեանք, կը տանենք ձեղի։

Տղէն կասայ.—Էս մէկ բանլիս կուտամ ձըզիկ, խացի ջրի բան-լիսն ա։

Տղէն կելլի կուդեայ յօդէն, կը տեսի օ աղբրտիք իմալ օ ըն-կուկ էն, յէմալ ընկուկ մնացած ա, կասայ.

—Ուր ՜ֆէյֆն ա, էրկու, իրեք օր կը պտտեմ, չանք իմ աղբրտիք օյաղանան, կելնիք՝ կէրթանք. էլ ալի չկայ, դող չկայ, ընչից պտի վախենամ։

Իրեք օր, օր կը քնի, տղէկներ կօյաղնան,

Կելլին, կընկլին ճամբախ ու կէրթան։

Շատ քիչ Աստուած գիտայ. կէրթան մէկ կարմնջիմ բռաստ կուգեան, կելլին վըր կարմնջին, ջոջ աղբէր կը տեսի, ինչ-չայի՜ր չիմա՜ն, պաղ-պաղ ջրեր, սուֆրէն փռուկ. քառսուն չէօիս կէրա-կուր վերէն։ Տղէկներուն կասայ.

Բշէք, էդա կերակուր ուտենք, էրթանք։

Էդոնք կիջին կերակուրի վրէն, պառի աղբէր կիջի գետի ափ։

Էդոնք ձեռ կիննեն կերակուրլ ուտել, տղէն կէչկայ էտևանց, ինչ կը տեսի.—Կը տեսի բո՛զ, դումա՛ն, էրկինք, գետինք մթներ ա։

—Ճանըմ, կասայ. էսի արև անուշ, բոզ, դուման ուստեն էղաւ։

Մէկէլ կը տեսի վիշապմ, գետի միջէն էլի, բերան բացի, կուդեայ, մէկ անճանելի բանմ' ա։

Տղէն կասայ.—Տէ՛ր, Աստուած, դու իմալ էն դազաններու ձեռնէն ազատեցիր, էս տեղէն էլ ազատէ։

Կասայ ու քաշայ թուր. կու խասի, կը զանայ։

Ջարկելու բաշտան կխուց կը կուռայ։

Էդա տեղ էդոր ականջն էլ կը չորայ թել, կապայ մէջք։

Տեսի օր, աղբրտիք խեծան, կերթան, էդ էլ խեծաւ, գնաց խասաւ աղբրտիքներուն։

Գեացին, չատ ու քիչ Աստուած գիտայ. գեացին մէկ ղռան տեղմ' բռաօս էկան,-քա՛ր, քռա՛, նէ ջուր, նէ խոտ, ա՛չն օր ընկի, տամը կը կոտրի։

Ջոջ աղբէր կասայ.-Տղէք, քչէք, էնա քարի տակ խոլ ա բչում բռահաթանանք, կերթանք։

Տեսան քառսուն խուրձ խոտ բռեզով էդ քարի տակ դրուկ ա։

Ասաց.—Քշէ՛ք էդա ձիանք էդա խոտի վրէն. ուտեն, էրթանք։

Էդոնք ամէկ խրձան վրէն մէկ ձի կայնեցուցին։

Տղէն զատանց մնաց, չգնաց՝ խոտի վրէն։

Մէկ խուրձ խոտ սալամաթ մնաց։

Ձիանք խոտ կերան, պրծան, որ խեծեն էրթան, տեսան մէկ մարդմ' էրկու ծառ վըր թևին դրուկ. մէկ էն թևին, մէկ էն թևին. հազար թուռլու ճանավար ծառի ճղերի վերէն էկաւ մըտ ողէկներ, յէմալ թափով բարև տուեց, ասաց.

—Ա՛նխօղէք, ա՛նաստուածներ, դու իմալ Աստուծուց չվախեցաք, էսա հայվըններու բոբոֆ կերցուցէք։

Ջոջ աղբէր վերուց:

—Ցորէ՛ն Աստուծուց վախենամ. եռսուն ինը խուրձ խոտ քեզի կերցուցեր իմ, մ՛ու քեզի եռսուն ինը օսկի, ամէկ խրձան մէկ օսկի։

Կասայ.—Ես ինչ էնեմ ոսկին, ես իմ խոտ կուզեմ։

Կասայ.—Ա՛ռ քեզի խարուր օսկի, մեզնէ ինչ կուզես։

Կասայ.—Բեզնէ մէ բան կուզեմ. տուէք, զաթի տուէք, չը տուէք, կը բռնեմ ձեր ականջներ, կը տփեմ էնա քար կպէք, խազար տարի չպրծէք։

Կասայ,—Ի՛նչ կուզես։

Կասայ.—Կօ, էնա տղէն, օր բաֆ կայներ ա։

Կասայ.—Մէկ տղէն ա, ղուրբան կէնիմ քի, զաբի պէ օճախ ա. Խօռ օճախ ա, մէկ էրկու ամիս ա ճամբախ կուղանք, մէկ կըտրինութին չտեսանք էնոր մօտէն, տա՛ր քեզի։

Էդա տեղ տղէկներ խալալութեն կառնին, տղէկներ դեն կերթան, էս էլ որ ջան Փօլատն էր. կառի տղէն դէս կերթան։

Փչում՝ տեղ կը զատնան իրարուց, տղէն մօքի մէջ կասայ.

—Իմ աղբրտիք էնեցին պէքաղտութին, ես չէնիմ. փրցընող Աստուած՝ կը փրցուցայ։

Տղէն ա կը դառնայ, Ջան Փօլատին կասայ.

—Խնդրեմ քեզնէ, մէ բանմ մոռցեր իմ մըտ իմ աղբրտոց. էրթամ, առնեմ, գամ։

Տղէն կը քշայ, կերթայ աղբրտոց կը խասի, կասայ.

—Աղբրտիք, ժողուէք, էկէք, ձըզի բան կասեմ։

Ժողուան, ասաց.—Դուք էնեցիք ընձի վատութեն, խում կաթ ծծողին բաղդ չկայ։

Մէջք կարձկայ, նշանարան կը թալայ ջոջ աղբօր յառէջ, կասայ։

—Ես չէղի, Ցլան fօշկ ու սարի մէջ՝ Աստուած ձեզի փրցուց, ճըմա ես ձեզի ազատեցի. Ցլան տեղ կերակուլ կուտէք, ես չէղի, Աստուած ձեզի փրցուց, յըմա ես ազատեցի, դեւի ակռնջներ կտրի՝ Էն էլ ձեզի նշանարան. ես չէղի, Աստուած ձեզի փըկուց, յըմայ ջան Փօլատ պիրուճդ էլ պտի սպանէր. ես ազատեցի։

Էդա տեղ նոր կիմնան ուրանց աղբէր կտրիճ ա էղէլան։

Թողին չոքեր, գըլուխ կը տփէն. ձեռնէն գացեր ա, չարեճ ինչ։

Էդ տեղ կը խասի ջոջ աղբօր ձեռ կը պագայ, կասայ.

—Աղբէր, մու էսա վեց բանլիս քեզի, կերթաս էն fօշկ ու սարի մէջ մէկ օքախ կայ. կը բանաս, մէկ օսկի, մէկ արծաթ, մէկ զուսկ, մէկ զինաք, մէկ եաքախ, մէկն էլ քառսուն խատ խուրնիկ խըեղէն աղջիկ, ամէկ թագաւորիմ՝ աղջիկ էն, ամէկ մէկ խատ խաւնէք, վերցէք ձեզիկ, ամենու աւարէն էլ թը մնայ ընձիկ, էն էլ տարէք խըտ ձեզի, եօթ տարի կիշկիք, էկայ՝ էկայ. թը չէկայ, էն էլ կը պսակէք իմ ջոջ աղբօր վրէն։

Տղէն կը դառնայ, Ջան Փօլատի խետ կերթան։

Ջան Փօլատ կառնի կերթայ իւր տուն, խաց կը բերայ, կուտեն։

—Տղա՛, կասայ, գիտե՞ս, քեզի ինչու իմ բերեր.Կասայ.—Ինչու

Կասայ.—Քեզի բերեր եմ, պտի էրթաս Չին-Մաչինայ թագաւորի խարս բերես ընձի. բերեցիր՝ զաբի բերեցիր, չբերեցիր, զաբի քեզի էրկիր էրթալ չկայ։

Կասայ.—Ես ճամբախ չը՞ գինայ. էսի պիքուճ ծով ա, կօ, ընկնեմ ծով, կը խեղդիմ։

Կասայ.—Հուսամ քև խրեղէն ձիու կեամ, առ-զար, ձիու բերան, խեծիր, ղնմ եռսուն ինը մարդ ճամբխեր եմ խարսի էտև, չկարցան բերին. ես զխեմ, դու պտի բերես։ Նս քեղի բան կասեմ, բան ա, կերթաս ծովու մէջ, կը նեղանաս. որ տե քե կըղի ըռաաց կուղեայ, ձիու կեամ գլխուց խան, կօ ձին կերթայ մըջ ծովուն, ըռաճարցի, էլման կեամ զար ծով, ձին կելի կուղեայ, խեծի ղնմ։

Տղէն կերթայ, չատ ու քիչ Աստուած գիտայ, կերթայ մէկ կըղում՝ ըռաաց կուղայ, կասայ.

Վ,ալա՛, ես էնա տեղ քչում ճաֆաս առնիմ, էրթանք։

Էդ տեղ կիջնի վրր աղբրին, խաց կուտայ, ջուր կը խմայ, կելի կը պտտայ, կասայ.—Տեսիմ, ինչ կայ, ինչ չկայ։

Տեսի եռսուն ինը մարդ քարիմ տակ ընկուկ ա, էն ղըդար վըրրչ էկեր ա էդ մարդեկաց վըրէն, էղեր ա էրկու թիզ։

Կերթայ, բարև կուտայ, կասայ. —Բարև ձեզի, աղբրտեք։

Էն ինչ որ չուտ գացիր ա. խեղք, լեզու չկէր, օր բարև առին, ինչ որ անգեան ղացեր ա, ասաց.

—Աստու բարին քե, աղբէր, մենք եռսուն ին հոգի էնք, դուն էլ էկար, էղանք քառսուն, քե ռն ա ճամբխեր էս տեղ։

Ասաց.—Վ,ոլա, ընձի Ջան Փոլատն ա ճամբխեր։

Ասացին.—Մեզ էլ Ջան Փոլատն ա ճամբխեր ա, անտէր, անտիրական, անօթի, ծարւու ընկեր էնք էս տեղ, ճէ ճաւար, ճէ կագիյա. ճաւար անենք, մարդ չկայ. պռռանք էլ մարդ չգայ։

Էդ աղէն ա, կեամ կը զանի ծով. ձին կը խեծի, էրկու մարդ առաւ ուր քարկ, ընկաւ վրր ծովուն գնաց։

Շատ-քիչ Աստուած գիտայ, գնաց ծովու ափան մօտեցաւ. տեսաւ էրկու սար կերթայ դէպի էն մէկ սարին, էն մէկն էլ կերթայ դէպի էն էրկու սարին։ Ջուր աչքեր տարեր, չջոկէ օր տեսի։

Կերթայ, ափան կելի դուս, էդ էրկու մարդ կը թալի ծովու ափ, ինքն էլ կիջնի, կեամ ձիու գլխուց կը խանայ, կը խոբայ քարի տակ-ծովափ։

Տղէն կեալի փլի գլօխ, կասայ.

—Էրթամ, տեսիմ, էն ինչ սար ա, օր յիրար կուգեան։

—Կը տեսի օր սար չէ, մարդ ա։

Էն էրկուս ճուճում կէնին մէկ մարդի կը զանին, էն մէկ լէ ճուճում կենէ էն էրկըսին կը զանի։

Տղէն կասայ.—Էրթամ էրկըսի տեղէն, Աստուած ղապուլ չինայ, էրթամ, էղիմ մէկի տեխէն, էն մէկէլ էրկու մարդ պտի ասեն «Քօփակ օղլի, թը դու բարի մարդ իր, թը գիր (գայիր) բարի գլուց էնիր, մզի պարծցուցիր։

Էդ տեղ կասայ.—Ես ղարիպ մարդմեմ, երթամ, տեսիմ էդոնց ղօրտը ինչ ա, ընչի վրէն կը կռուին։

Կերթայ, կասայ.—Բարի ձեզի, աղբրտեք։

Էնոնք էլ բարի կառին։

Կասայ.—Ես ձըզի բանմ' ասէմ, չէք բըըէի։

Աոին.—Աղբէր, սամ, թը աղէկ բան էղաւ, չընք լըըմի։

Ասաց. Դու ընչի վրէն կը կռուըտեք:

Աոին.—Դու մեր ղարտին ղարման կանես էնիս:

—Ձեր ղսեն ղէմեց ղէմ օր էղաւ, ձեր ղարտին ղարմաճ կէնեմ։

Աոին.—Աղբէր, օր իմալ ա, էս սուֆրէն ղամչին կը տեսիս:

Ասաց.—Խա՛, կը տեսիմ։

Ասաց.—Էստ պալթէն կը տեսիս։

Ասաց.—Խա՛, կը տեսիմ։

Ասաց.—Էստ ֆօլոզ կը տեսի՞ս։

Ասաց.—Խա՛, կը տեսիմ, էսոց մարիֆաթ ի՞նչ ա:

Ասաց.—Ինչ օր էս սուֆրէն, ղամչին մուրատ էնայ, մէկ աչք թարթելուն դախ ղինից կելլի, ինչ որ էստ պալթէն ա, քսանը չորս փակով ղարկխը վրէն երթայ, կը բացուի յառէջ. ինչ օր էստ ֆօլոզ ղնեմ գլօխս, քու աչիչ յառէջ չերեւամ։

Էն մէկ կասայ.—Էստ պալթէն տամ էնու, էնի ղայիլ չէ. կասայ «քօլոզ տուր ընձիկ,» էն մէկն էլ կասայ, «Էստ պալթէն քըզիկ» . ..

Կասայ.—Աղբրտեք, որ յէմալ ա, էկէք, ձըզի բանմ կասեմ, պարզցուցեմ, ընչի կռիւ կէնեք։

Կասայ.—Ի՞նչ.

Կասայ.—Էստ տօպրկի մէջ ինչ ա։

Կասայ.—Ալուր ա:

Կասայ.—Մէկդի ելէք, ցա՛խ բերէք, մէկդ էլ ցա՛ն բերէք, մէկդ էլ ջո՛ւր բերէք, ես էլ խմոր կէնեմ։

Ցան, ցախ, ջուր կը բերեն. տղէն էլ խմոր կը չաղայ. ջոջ կլօճմ կը թխայ քընց սէլիմ' ակ. յէմալ կը չորցուցայ, կենայ տաշեղ։

—Դէ՛, կասայ, մէկդի էղա կլօճ չալկէք, էրկուսդ էլ էղա ձեր սուֆրէն, ֆօլոզ, պալթէն առէք, էրթանք էն բանձր սարի գլուխ:

Կերթան էն բանձր սարի գլուխ կը կայնին։

Կասայ.—Դէ՛, տղէկներ, բօբկըցէք, քշտուէք, ճազռուեք, խա-նէք, ձեր բաներ տուէք մը ձիկ. էստ կլօճ կը գանեմ, գըլվըլացը-ցեմ. ո՛ր մէկ բռնեց շուտ, իրեքն էլ կուտամ էնոր։

—Վալա, էստ մարդ, էս բան աղէկ ասաց. վի ղըբալ կոռայ. էն կը բռնայ կլօճ։

Իմալ օ քաղլըն գարկեց, մէկ էս տեղ՝ մէկ ղնաց, ղնա՛ց, հա-սաւ Հօռոմխիմէն։

Էդոնք ընկնան կլօճի էտև, տղան նստաւ մըր սուֆրին, մուրաս էնեց, ասաց.—Ջըն-Մաչինայ քաղաք դո՞ր էս. էկայ քի։

Աչք դըռ ճալա չըր թարթեր էր, խասաւ Ջըն-Մաչընայ քաղաք։

Գնաց օր էն մարդիկ ընկած ա քիթ ու բերնի վերէն, անօթնէ ջուր բերննէրնուց կերթայ, կանչեց.

—Աղբրտի՛ք, աղբրտի՛ք, էլէ՛ք, ձեզիկ խա՛ց էմ բերեր։

Մարդիկ էլան, նստան, խաց կո՛ւշտ կերան. ուրենց խելք էկաւ ուրենց գլուխ, ուրենց լեզուն էլ բացուաւ։

Տղէն ասաց.—Աղբրտիք, էս խրեղէն ձիու կեամ կուտամ ձեզի, էս խացն էլ կաղէք ձեր քամակ, տանէք կըգիի միջի մարդիկաց, դախուն էն մարդկաց մօտէն էրկու մարդ բերէք էն դռաղ, աղատէք էն մարդիկ նեղ տեղէն։

Էդ տեղ չնոխկլան գնացին։

Տղէն էլ էկաւ Ջըն-Մաչընայ քաղաք. չանք իրիկուն պտտեց, վե՛ն տուն գնաց, տեղ չտուին, գնաց քաղքի պուճախ տեղ մէկ պառաւմ' կէր, էնդօր դուռ տփեց, խըտ տփելուն պառաւ դուս էկաւ։

Տղէն ասաց.—Մարէ, էս օր ընձի ղօճախ կը պախե՞ս։ Ասաց պառաւը.

—Սըքար օր կայ, Աստըծուն ա, մէկ գիշեր ա։

Գնաց պառւու տուն, ջուլ չկէր, բան չկէր, բերեց փօւրմ թալեց աղի տակ, տղէն նստաւ, պառւուց խարցուց.—Մարէ, քզի տղայ-բան ակլի ի՞նչ կայ։

Ասաց.—Բա՛ն չունեմ։

—Քու իsարէն (ապրուստ) ապա ի՞նչո՞վ կը դառնայ։

—Ութէ ութ կերթամ Թաղաւորի խարսի գլուխ կը լուամ. քեանիմ' ղռուշ փարայ կիտան, բերեմ. իմ իsարէն կէնեմ։

Ասաց.—Ընձի քեզի չը՞ս էնես տղայ.

Ասաց.—Կէնիմ, քու ճկութ կոռայ, աչուն էլի, քզի չալկի փողպտէն թալիմ տակ, քըզի էնիմ ընձի խօգեորդի։

Տղէն պտտեց sուքճերու մէջ. պառւու չոր բան առաւ. ձեռք մի եօրղաճ, դօշակ ուրին բերեց. մէկ պառաւուն բերեց. մնաց չում խարսի ութ բմեց. որ ութ բմաւ, էրկու խատ վազիր էկան պառւու տուն, պառւուն կանչին։

Տղէն վերցուց, պառւուն ի՞նչ ասաց.

—Մարէ՛, քե բանմ, ասեմ, շըռըբե՞ս. էդ Թագաւորի խարսի իրէկ կա՞յ, ասաց.—Ջկայ։

Ասաց.—Պա՛ էնու իրէկ դո՞ր ա գնացե.

Ասաց.—Էսա եօթ տարի ա գացե, կուրխաէ. նէ սալըղ կայ, ճէ սուլուղ կայ։

—Մարէ, ասաց. բանմ ասեմ, որ կերթաս Թագաւորի խարսի

գլօխ կը լուայ, կը սրբէր. օ գլուխ կը սանտրէր, խանաքիլէր սաս, «էս օր դշէր էրզի մէջ քու իրիկ էկեր էր. տես, ինչ կասայ»

Պառաւը տուան գնացին. խալսի գլուխ լուաց։

Էս խետ ասաց.—Խմրս, քե ՛րանմ կասեմ, ինչ կուտաս իմ ականջկլէն։

—Ի՛նչ օր քու լեզուն բոլորէ, կուտամ, ասաց.

—Էս օր դշէր քու էրիկ էկեր էր էրզի մէջ։

Խալս ժիր-ժիր չորեր խազեաւ. վազեց-գնաց սարէն, պառաւ վախեցաւ, փախաւ, էկաւ։

Խալսն Թագաւորի կնկան կասայ.

—Պառաւը կասայ, «քու տղէն էկեր ա»։

Էդ տեղէն Թագաւոր ուրախացաւ, ճամբեց, պառաւ բերեց, ասաց.—Պառա՛ւ, տեսի՞նք տղէն դո՞ր ա էկեր։

Ասաց.—Թագաւոր ապրած, խանաք էներեմ։

Էդա տեղ Թագաւոր կը ներսուել, կասայ.

—Ես Թագաւոր էղեմ, դու պառաւմ էղես մըր ընձի ծեծդմն, ասայ. պառաւուն յէմալ տփէք որ բամբկով ջուր կաթեցուցէք բերան։

Պառաւ տուեց համալիմ՛ քամակ, ասաց.

—Տարէք, թալէք էրդիսէն տակ։

Տարին, գմփալէն թալին տակ։

Պառաւ տղին ասաց.—Օր դու տղէկ տղայ էղնէր, չիր դէրւ ընձի էղնէր տղայ, դու ուղուրսուզ էս, «դու որ բուխ էղնէր, քո, խօր պատէն կախ կէղիր»։

—Մարէ՛, բան չկայ. ես էլ խանլիս գնացի, ընկայ քու մեղաց տակ։

Տղէն գնաց դեղ բան բերեց, պառաւը սաղացուց. ձեռք մը Թագաւորական չոր պառաւուն կտրեց. ձեռք մը չոր էլ ուրին կտրեց։

—Մարէ, ասաց. գնա՛, Թագաւորին ականճկլայ տար թէ քու տղէն կած ա խաս պաղչէն, ուր կնիկ, ուր նարէն թօ գեան. տեսինքէ իրար։

Պառաւ գնաց, ականջկլայ տուեց։

Թագաւոր էլաւ, պառուռ կչռանքով օսկի տուեց. քալալ էտու կանչել. «Թօ մարդ, չէլի դուրս. Թագաւորի խալս կերթայ խաս պաղչէն»։

Թագաւորին խալս ու նարէն գացին։

Իմալ օր աչք առաւ իրարու, էնի էն գեխէն, էնի էն գեխէն. վազեց, էկան. փաթուան յիրար, որ ջուր լցեն իրկսի արանքով, չթափի։

Տղէն ձի պէս մարդում ասայ։

—Գնա՛, Թագաւորին ասա. մուզուճով, չալխով գեան. ընձի տանին, էրթան տուն։

Գնացին, թագաւորի խարս տամ էկան տուն, եօթն օր, եօթն գիշեր ուրախութիւն էնեցին, պրծան։

Թագաւորի տղէն ու էր կնիկ գնացին ուրիշ օթախ։

Տղէն նստաւ, կնիկ մնաց կայնուկ։

Կնկան չարէն կտռաւ կռմաւ,—ասաց.

—Թագաւորի տղա՛։ Ասաց.—Ի՞նչ ա։

—Քո տուն աւիրի, ես կայնելով մնամ. զօզութին չէներիմ, բօզութին չէներիմ օր ընձնէ ըռըճերիս։

Ասաց.—Կնիկ, գիտես, ինչ ապով ա քզի չըսիմ, ալի, նստի։

Ասաց.—Ես ինչ գիտեմ։

Ասաց.—Ես ընկերիմ քո մեղաց տակ, ալի՛ նստի՛։

Էկաւ, նստաւ, ուրախութին էնեցին։

Թալալ կանչել տուեց օր մարդ չէլի դուս թագաւորի տղէն պտի էրթայ պաղչէն։

Գնացին պաղչէն. տղէն ծոցէն խանեց սուֆրէն նստան վրէն էրկուսն էլ։ Ասաց։—Տէր Աստուած, դու ընձի ծովի միջէն վերցես, թալես էն ղըադը։

Ասելու պաշտան դըռ աչք չթարթե, թալից ղըադը։

Խարս չուարաւ, կայնան։

Ասաց.—Թագաւորի տղա՛, էսլաւ մարիֆաթ կէր քու մօտ, ինչու ընձի չուտ չասիր։

Նստան, խաց բան կերան։

Տղէն վերցուց.—Խա՛րս, ասաց.—Ինչ ա։

Ասաց.—Քեզ կը տանեմ Ջան Փօլատին։

—Տղա՛, Աստուած քու տուն աւերայ, դու Աստըծուց չըս վախենաս, ընձի իմալ կը տանես Ջան Փօլատին։

Տղէն ուր գլխուց գալած ասաց, վերջին էլ ասաց.

—Ես քու իրիկ չիմ, օր չտանեմ քզի, ընձի կսպանայ, օր քզի կը տանեմ, էնու խօղու տեղ իմցի, էնի սպանինք, քեզ էլ կը տանեմ, կերթանք մեր խօր երկիր։

Գնացին Ջան Փօլատի տուն։

Ջան Փօլատ ավլի տեղէն էկաւ, աչք ռաւ կնիկ, թագաւորի տղին, ասաց.—Խալալ էղի քըզի, թագաւորի տղա։

Էլաւ քեանիմ՝ օսկի տուեց թագաւորի տղին, ասաց. գնա՛։

Տղէն էլաւ, fօլոզ դըեց, էլ էդոնց աչից չերևաց։

Խըլուսուն էր, Ջան Փօլատ գնաց ավլի, խարս մէջի մնաց տուն, տղէն ա, մնաց մըտ կնիկ։

Ցիրկուն Ջան Փօլատ էկաւ, կնիկ ասաց,

—Քու խօզին տուր ձի, իմ բէյն էլի, խեռ խաղամ։

Ասաց.—Կնի՛կ, իմ խօզին մըջ աւլին ա։

Ջան Փօլատ դարձաւ, էկաւ օր աւլի խետ կը խաղայ։

—Օղորթ օ, կնիկ անմիտք կէղի, ասաց. աւլի մէջ էլ մարդու խոգ էղի, իմ խոգին մէջ ձիու պոչին ա, չորս խատ մազ քաշայ, Լնայ դամբուրայ, խետ խաղայ, չանք ես դեամ։

Կնիկն ա, բերեց. . . . էնեց դամբուրայ. զանեց։

—«Ձընկըր-ճընկըր իմ դամբուրէն»։

«Առայ, յէլայ ֆօօֆ ու սարհնի»։

«Իմ ձէն թո գեայ Արտար քեարէն»:

Ջան Փօլատ էկաւ, տեսաւ խըտ դամբուրին կը խաղայ։

—Հա՛յ քըղի հայ, մկայ տղէմ էղի. քղի մէկ խօսքով կը խափայ. կը տանի, ձիու պոչի մէջ էլ խոգի էղի։

Կասայ.—Կնիկ, իմ խոգին բանձր սալն ա. էն տեխ խազալ կայ. իմ խոգին մըջ էնու փորուն ա. ղուքու մէջն ա. իրեք խատ ճնճղուկ ա. կէս օրէ կէսօր, ջոջ պալմ կայ, պալի տակ աղբուրմ կայ, դուդայ էն տեղ, ջուր կը խմայ։

Կնիկ տղին պիքուն կասայ։

Տղէն ա, կը նստի վըր սուֆրին, մրազ կէնայ։

Կը վերցէ, տղէն կը թալայ էն պալի տակ։

Կէս օրուայ չոքին ա, խազալմ ջուխս-ջուխս, խաղալէն էկան վըր աղբրին, տղէն, ա, տափէ քեարի տակ. խազալ գլօխ մխեց մըջ ջրին, տղէն թուր քաշեց, զարկեց, գլուխ ընկեաւ մըջ ջրին, ջան-դակ ընկեաւ վըր չմրնին։

Ավի տեղ Ճան-Փօլատի ղուտուն կոտռաւ։

Տղէն խազալի փոր ճղեց, ղուքին միչէն խանեց տեսաւ իրեք խատ ճնճուղ. էրկու ճնճղուկ մորթեց, մէկն էլ դնեց ղուքու մէջը՝ դնեց ուր ծոց. առաւ էկաւ։

Ջան-Փօլատ էկաւ, տեսաւ ճնճղուկ, խոգին էլեր պոլոտ, ասաց.

—Արի, ղուքին տուր, էդ ճնճղուկն էլ ես մորթեմ։

Տղէն պարզեց օր տայ, կնիկ ասայ։

—Աստուած քու տուն աւիրայ. տաս՝ կելի մեզիկ սպանայ։

Կնիկ ձեռնէն առաւ, թալեց վառման թոնդիր։

Ճնճղուկ էլ էդ տեղ իրեցաւ, Ջան Փօլատ փիցաւ։

Տղէն Ջան Փօլատին ինչ ղէըր մալ կէր, բարձաւ, ճամբախ ընկաւ, գնաց. «խօր քաղաք, դո՞ր իս, էկայ քղի»։

Էդ տեղ տղէն ուրախութենէ օտքեր գետին չառնէ, թէ «էր-կու ոտք ունէր ոտք մէլ ճալեց», խասաւ խօր խողին մէջ։

Տեսաւ դումբ ու զուռնայ կը զանին, խարցուց.

—Տղա՛, էդ ինչ դումբ ու զուռնայ ա։

—Վալա, թագաւորի տղէք 39 աղջիկ բերին, կարգուան, մէկ մացած ա, էն լէ ջոջ աղբէր կառի։

Մէկ օսկի տուեց, ակնջկլէ տարին,
Էկան տարան Թագաւորի պատիկ աղէն ու խալս։
Էն աղջիկ պսակեցին ջօջ աղբօր վրէն,
Զըն-Մաչընայ Թաղաւորին լէ ուր վրայ։

26

ՇՆՈՐՀԱԼԻ ԱՂՋԻԿԸ

(Արծկէի բարբառով *)

Թագաւորը գնաց վըր լալին.—Բենէ կուզեմ մէկ գէշ եմակ, գէշ ամնիմ մէջ, գէշ մարդում ձեռ, բերայ. չէ՛, վիզդի կը զարկիմ։

Ասաց լալէն ուրուսխաթ տու, էրթամ, բերեմ։

Էն տեղէն լալէն էկաւ տուն, օխէմ ցորեն խաշեց, էնեց վուեկ, թալեց հողէ ամնիմ մէջ, տուեց ընձի պէս բռնճպրիմ ձեռ. առաւ, գնաց Թագաւորի ճուզուր, Թագաւոր հարցուց.—Տղէս, էդա ինչ կերակուր ա։

Ասաց.—Թաղաւոր սաղ կենայ, կերակուր ա։

—Գիտեմ, կերակուր ա. մէրանը ինչից ա։ Ասաց.—Մէրանը ցորեն ա։

Ասաց.—Պա ամանը ինչից ա։ Ասաց.—Հողից ա։

Ասաց.—Դու ինչ գործով ես։ Ասաց.—Աստուծոյ ծառան եմ։

—Որդիս, ասաց. մենք յըմենս լէ Աստուծոյ ղուլ ենք. դու ինչ բանով կաչխատիս։ Ասաց,—Ես բռնճպար եմ։

Էլման գնաց վըր լալին.—Լալա՛, ասաց.—Հա, չիւէնքլիմ, ասաց.

—Բենէ կուզեմ, ասաց. մէկ գէշ եմակ, գէշ ամնի մէջ. գէշ մարդու ձեռ։

Լալէն ռուսխաթ առաւ, ետ դարձաւ, էկաւ տուն. «Լուն ընկի ճակտէն, կեղի խազար կտոր». մըրթընեը կախեց, նստաւ տուն, «քըտինք տուեց վրէն», «քըտինք կուգայ, քըտինք կը պաղի»։ Էդոր

---

* Պատմած է նոյն Դաւիթ:

մէկ աղջիկ կայ, ըսկի ավլաս-բալաս չկայ․ էկաւ, էդ աղջիկ ընկնաւ խօր վիզնուվէր, սաաց.—Ափօ, յըսօր ըսկի ընձի հմից, բան բերեր ես։

Աղջկէն զարկեց.—Ճէյնըմի, գնա դէն, սաաց. յըմեն օր քըղի քէյֆ կայ, էս օր ընձի չկայ։ Սրտի ճարպէն աղջկան էնեց գող ու բող։

Աղջիկ գնաց. մէկ սաճաք խաղալ զառանց կայնաւ. դարձաւ, խօրն սաաց.—Ի՞նչ վաղս դոռութին, բաղութին էներեմ։

Ասաց.—Լաւօ, իմ սրտի ճարպէն. Թագաւոր դնէ վըր ընձի, «Բենէ կուզեմ մէկ դէչ խմակ․ դէչ ամնի մէջ, դէչ մարդու ձեռ, բերայ ընձի», մկայ չգիտեմ։

Ասաց —Ափօ, փըցըցող Աստուած կը փըցուցայ, քու տուն չաւիրի․ էդի մեր դռան առջի դուլէճ ալան ա.» էդոր խամար էդեր ես չուար․ «զարնան սնկան պէս գլօխդ քըքղնեմ՛ ա»․ (զարնան սունկ ջոջ կեղնի)։ Ասաց․ դէ՛, գնա՛, ճօխէմ բըլնձ առ, արի․ գնա՛, ժանդռոտ պղինձ մի առ, արի, որ քսան տարի սըրած չէղի․ մէկ հատ էլ տնփեսէմ' դռի, ել քե լաղայ չկայ։ Ես կը չքեմ, դու տար Թագաւորին․ Թագաւոր օր ղայիլ չէղաւ, սա՛․ էտոր ուստէն իմ աղջիկն ա, թո տանի, իմ գլօխ զանի։

Աղջիկը բերեց, չքեց, տնփեսին աղէկ, սիրուն չոր խագուց․ սաճարմ մէկ թեէն կախեց, մէկ մէկ թեէն, խմակ տուեց էդ տընփեսի ձեռ, առան․ էրկըսով գնացին Թագաւորի ճզուր, գլօխ ւիջուցին։

Թագաւոր հարցուց.—Տղէս էդ խմակ ինչ խմակ ա։ Ասաց. —Խմակ ա, Թագաւոր։

Ասաց.—Գիտեմ, խմակ ա, մէրանը (նեւթը) ինչից ա։ Ասաց. Խոտից ա։

Ասաց.—Էսա ամանը ինչ աման ա։ Ասաց.—Աման ա։

—Գինամ, աման ա, մէրանը ինչ ա։ Ասաց.—Մէրանը պղնձից ա։

Ասաց.—Դու ինչ մարդ ես, ինչ գործ կը կատարես։ Ասաց. —Աստուծոյ ծառան եմ։

—Տղէ՛ս, սաաց, մենք յըմենքս լէ Աստուծոյ ծառան ենք․ դու ինչ մարդ ես։

Ասաց.—Ես լէ տնփեսայ եմ, Թագաւոր ապրած։

Ասաց.—Ապրիս, տղէս, դէ գնա՛։

Էդ տեղ լալէն ուրախացաւ, Թագաւոր ղնեց վըր լալին, սաաց. —Էս մարիֆաթ մըտ քէն չկայ, քէն ձն սովըրցուց, քեզնէ կուզեմ։

Ասաց.—Թագաւոր սաղ մնայ, ընձի մէկ խատ աղջիկ կայ, տասնը խինդ տարեկան, էն ա։

Ասաց.—էն աղջկայ հող մըր քու գլխուն էղի, գնա, ղուրպան էղի էնոր, չէ՛, քու գլօխ պտի զարկի։ Ասաց Թագաւոր.—Գնա, էն աղջկէն սաա, ընձի չառնի։

Լալէն ուրախալէն վազէ վազ էկաւ տուն, աղջկէն սաաց.

Աղջիկ խօր սաաց.—Գնա, Թագաւորին սաա թէ կառնեմ։

Գնաց, Թագաւորին սաաց։

Ասաց.—Գնա, քու աղջկէն սաա, ղալաճ ինչ կուզայ։

Էկաւ, աղջկէն սաաց. Աղջիկ սաաց.—Ղալաճ։ Ասաց.—Խա։

Ասաց.—Ընտրնէ կուզեմ տասնըլինգ ճիճակ. կուզեմ քառն խոչ, կուզեմ եռսուն ասլաճ, քառսուն ղափլաճ, յիսուն իշիկ, վաթսուն այկըռ, Երմից ջորի, սէֆսաճ դէվա, դօխսաճ խըլը, խաըրը Ցարաապ։

Լալեճ ուրախէլին վազեց, գնաց, Թագաւորին սաաց.

Թագաւոր սաաց.—Լալա, էդ քու աղջիկ ուրիշ բան ա կուզայ, էդոր պատասխանը քենէ կուզեմ. թէ չէ գլօխ դի կը զարկեմ։

Ասաց.—Եամաճ, Թագաւոր, խողի Ղազատեա։

Ասաց.—Գնա, քու աղջիկ առ արի։

Էկաւ, աղջիկ առաւ, գնաց։ Աղջիկ գնաց, ձեռ կապեց Թագաւորի ճուզուր. գլօխ իջուց, յետ կայնաւ։

Թագաւոր սաաց.—Աղջի՛, ես քի ինչ սաեցի, դու ընձի ինչ սաեցիր. ես Թագաւորմ էղիմ, դու աղջիկմ էղիս, էդա ղսէն ընձի սաեմ։

Ասաց.—Թագաւոր սաղ մնայ, դասեօւր տուր, էրկու բերան գըռուցեմ։

—Բեւ ռուխսաթ, սաա, մէկ խապարմ պակաս էղաւ, գլօխդի կը զարկեմ։

Ասաց.—Ես տասնըլինգ տարեկան ճիճակ եմ. ձի պտի քառն տարեկան ղոչ, որ ուրախութեն էնենք։ Ես եռսուն տարեկան ասլաճ եմ, ձիկ պտի քառսուն տարեկան ղափլաճ. որ ձի կառաւորէ։ Դու էղեր ես յիսուն տարեկան, քի պտի վաթսուն տարեկան կնիկ։ Դու էղեր ես Երմից տարեկան, ջորու պէս բան մի, քեզնէ նեւթ չկայ, քի պտի սաէֆսաճ տարեկան կնիկմ ամայի ղոցղու Ես յուստ գտնեմ դօխսաճ տարուան խըլը, խաըրը տարուան Ցարաապ որ քըզի կնկնութեն էնայ. դու էլ սաեա թէ ընձի կնիկ կայ։

Ասաց.—Որդի՛, գնա, ես յիսուն տարի Թագաւորութեն էնեցի. մարդ ընձի չէր ծալեր խօսքով, դու ընձի ծալեցիր. դուն իմ խոդական որդին ես, աղջիկ, քի էրկու խաըրը օսկի քարխաճ կապեցի։

Լալին էլ սաաց.—Դէ, էլի՛, գնա ուրիշ տեղ, իմ աչքին էլ չերևաս. դու Ցայլութենի խարճ ես։

29

ԱՐԵՒԵԼՈՑ ՈՒ ԱՐԵՒՄՏՈՑ ԹԱԳԱՒՈՐ

(Արծկէի Առընջկոյս գիւղի բարբառով *)

Երկու մարդ էղան դասեկբրայ (իրար ձեռք բռնելով եղբայր լինիլ) ախպէր, ասենք մէկ մարդ մէկ գեղէն, էն մէկն էլ ուրիշ գեղէ էղի։ Էս գեղի մարդ կանչեց էն գեղի մարդուն պատիւ, էն մէկէլ օր էն գեղի մարդ էս գեղի մարդուն կանչեց. էս գեղի մարդ լէ էն էկող մարդուն ասաց.

—Դու գնա՛, ես կուգեմ։

Անգեան վախք էր, էս մարդ էլաւ, գնաց. գնաց չուրի էն գեղի մօտ, ճամբախ գերեզմներու միջով կընցնէր, տեսաւ որ նակեանին տեղ մէկ մարդ էդոր յառէջ կայնաւ. էդ մարդ միատակ չապկով ու թումբնով ահագին բէդ-մեծ մարդ էր. էս մարդ որ տեսաւ, վախեցաւ, լեզուն առուաւ։ Էդ գերեզմններու միջու մարդ ասաց.

—Ախպէ՛ր, քու լեզուն յորե՞ առուաւ, եոլէ քե պէս մարդմեմ. դո՞ր կերթաս, ընձի օղորթն ասա։

Ասաց.—Ես քեզի տեսայ, վախեցայ, չեմ կեառնայ օղորթն ասեմ։

—Չէ՛ ես էլ քե պէս մարդմեմ. օղորթն ասա։

Ասաց.—Կերթամ իմ ախպօր տուն ղօնախ:

Ասաց.—Ես էլ կուգեմ քու ախպօր տուն ղօնախ։

—Ախպէ՛ր, որ դուն գեաս. ես չե՛մ էրթայ։

—Ցորե՛ն ես որ գեամ ետը քե, դու չես էրթաս։

Վերուց ասաց.—Ես որ քեզի տեսայ, վախեցայ. ետը քե ճամբախ չեմ էրթամ, իմ ախպօր ճժեր տեսնին, կը վախենան։

---

* Պատմած է Դաւիթ Մուղսի Ցարութիւնեան.

Ասաց.—Մը վախենայ, էդ ախպօր կուշտ դո՛ւ գիսի կը տեսիս, քու ախպէր, քու ախպօր ճժեր չտեսին ընձի։

Էլման ասաց.—Խըտ քի ճամբան չըմ իդեայ։

—Քեի կասեմ արի՛, էրթանք, չե՛ս յիդեմա, քու ճիվ կը բռնեմ. քի տփեմ իդա քար, խաղար տարի էդա քարից չպրծնիս։

Էս մարդ փօսմճաւ, ասաց.—Ախպէ՛ր, դո՛ւ, քու Աստուած, քիլայ էրթանք։

Գնացին ախպօր տուն, ղօճախ էղան։

Էդ ախպէր վերուց.—Ախպէ՛ր, դու բարով, խաղար բարով. դու վըր իմ գլխին, իմ յէրսին էկար։

Էլ մէկէլ մարդու խօսք չէղաւ։

Էն ախպէր ուր կնկեան ասաց.—Կնի՛կ, իմ ախպէր ճամբխուց էկե, մկայ անօթի ա։

Կնիկ յէլաւ, առաւ էրկու fասk, էրկու խաց. էկաւ, մէկ դրեց մարդու, մէկ ուր ախպօր յառէջ. ամեկը մէ մէկ բրդուճ ուրենց fասից կերան։

Էդ գերեզմներու մարդ որ գեացեր էր, չերեէր, բրդուճ պարկեց, վերուց դրեց բերան, էրկու fաrաղաճն էլ սրբեց, բա՛ն չթողեց ինն։

Մարդը վերուց.—Կնի՛կ, ասաց, գնա՛, իրեք fասk կերակուլ լի՛ց, առ արի։

Կնիկ գնաց. լցեց, առաւ էկաւ։

Էլման մէկ մէկ բրդուճ առան, էլման գերեզմնի մարդ իրեք fասkն սրբեց, դրեց բերան. էլման մարդ կնկեան ասաց.—Կերակուլ առ արի՛, կնիկ։

Էս մարդ ասաց.—Հերք ա. շնորհակալ էնք, կշտացանք։

Կերան, խմեցին, էն մարդ իգիճ էտուր, էլան գնացին։

Էդ գերեզմներու մարդն էլ խետը էկաւ, գերեզմնի մէջ կայնաւ, ասա՛ց.—Էդ աղեկութեն օր դու խըտ ընձի էնեցիր, արի՛, էրթանք, էդա աղէկութենի տկէն յէլնիմ։

Ասաց.—Ախպէ՛ր, որ դու ձիկ աղէկութեն կենես, դո՞ր կը տանես։

—Ընձի էլ տուն կայ, արի՛, էրթանք։

—Ախպէր, քու տուն յո՞ւր ա։

Ասաց.—Էս տեղ։

Ասաց.—Չէ՛, էսի գերեզման ա։

Ասաց.—Ախպէր, աղէկ մտիկ էրա ընձի, արի՛, էրթանք մեր տուն, փչում նստինք, էրկու խապար խըտ իրարու զրուցինք։

—Սպանես, ես չեմ իգեամ. կը վախենամ, ընձի խափես, զաթի դու մեռուկ իս, ընձիկ էլ տանես, մեռուցես։

Էդի վերուց.—Ախպէր, կուզեմս, արի, չես իգեաս, քու ճիվ կը բռնեմ. տփեմ էդա քեար, խազար տարի կպիս էդ քեար, չպըրծ-նիս։

Էդ մարդ վախեցաւ, ասաց.—Ախպէր, դու քու Աստուած, քէլա՛, էրթանք։

Գնացին էդ մարդու տուն, նստան, մէկ-էրկու սահաթ խըտ իրարու զրուցեցին. էս մարդ տեսաւ մէկ օձմ պատէն քաշուաւ, էկաւ տան մէջ կայնաւ։ Էդ գ՛ըեզմներու մարդ գնաց, լեզուն դրեց մըջ օձու բերնին։ Օձը էրկու սահաթ էդ մարդու լեզուն ծծեց. էդոր խելք գլխուց առաւ, որ գլխուց առաւ, էդ օձ քաշուաւ էդ ծկէն, էլման գնաց։

Էրկու սահաթէն էդ մարդու խելք էկաւ գլուխ։

Էդ մարդ էրաւ, ուր գլխու գալած պատմեց էս մարդուն։

—Ախպէր, ասաց. յիմցար էդ օձ ինչ էնեց իմ գլուխ։

—Ախպէր, էդի ինչ բան ա, որ քու գլուխ էնեց էդ օձ։

Ասաց.—Էս օձ արեւմտոց թագաւորի աղջիկն ա, ես էլ արեւե-լոց թագաւորի տղէն եմ. ես որ սաղ ի, էս աղջիկ ուզեցին ընծիկ. ես գեացի, տեսայ էս աղջիկ սև էր, իմ սիրտ չկպաւ, գեացի ուրիշ աղջիկ առայ ընծիկ. ես որ ուրիշ աղջիկ առայ, էս աղջիկ սաղ ա, կուգեայ, ընծիկ կը չարչարայ, չթողէ ես իմ տեղին մէջ դինճ մնամ. կուգեայ ուր ճեֆս խըտ ընծիկ կը կոտռէ, ու կերթայ։

Էս մարդ ասաց.—Ախպէր, քինէ կը խնդրեմ, ընձի իզին տաս, ես էրթամ՝ խասիմ իմ տան, իմ տուն մարդ չկայ։

—Քեզ իզին կուտամ, էս բան օր իմ գլուխ էկաւ, դու իմցար. կը խնդրեմ, էրթաս չուրի արեւմտոց թագաւորի մօտ, ճալալութեն առնես, ես դինճանամ։

Էս գեղի մարդն էր, յէլաւ դուս, էկաւ տուն. տեսաւ տուն չկայ, գեղ խարապայ էղեր ա, սկի նշան էլ չերեւայ. կասես խազար տարուայ խարապայ էղի։

Ելաւ գնաց մէկէլ գեղ, տեսաւ էդ էլ աւիրեր՝ ճենըրկ չկայ։

Օրմ, էրկու օր, իրեք օր, ամիսմ, էրկու ամիս պտտեց, տե-սաւ օր ուր տեսած ու պտտած գեղ՟ու քաղաքներ չկան. աշխար պիթուն աւեր դարձած ա։

Էս ճալին մտք ընկաւ էդա գերեզմներու միջու մարդու խօսք, ուրին-ուրին ասաց.—Պտի էրթամ, դո՞ր որ էդի արեւմտոց թագաւորի աղջիկ գտնիմ, խնդիրք կատարիմ։

Էդ մարդն էլաւ, օրմ, էրկու օր, խինդ տաս՟օր ճամբային գնաց, տեսաւ մէկ ըխտըյար մարդմ, ճամբխու խետ կուգեայ, ասաց.—Էր-թամ էդ մարդու մօտէն խարցուցեմ, սկի էս տեղրանքը ճենըրկ չէ՞ տեսեր ա։

Գնաց, ասաց.—Պալիկ, էսլա բան էկեր ա իմ գլուխ, ըսկի էս տեղըանք շէնլըկ չտեսեր եմ։

Էդ խալխուր վերուցի—Որդի՛, ասաց. ես չըմ տեսեր էս տեղըանք շէնլըկ, իմ խէրն էլ չտեսեր ա, իմ պապու պապէն էլ ապրեր ա իրեք խարիր տարի, էն էլ չտեսեր ա, որդեակ, էդ փորձանք որ ձեռ տուեր ա քու գլուխ, խազար տարին ընցեր ա։

Ելաւ էդ պալիկ Թողեց էկաւ դէս, ինք ռանեց ճամբախ, գնաց։ Օրմ, էրկու օր, խինդ օր, տաս օր գնաց. տեսաւ մէկ պօզ ձիաւորմ, խափուճճէն վրուն քեամակից էն յըմալ կուդեայ, ղուրղուշունի պէս էկաւ, խասաւ էդ մարդուն։—Բարև քե՛, ախպէր, ասաց.—Աստուծու բարին, խազար բարի դու էկար։

Ասաց.—Ձե՛ս էղիս ընձի ախպէր։

Ասաց.—Խա, կեղիմ ախպէր։

—Դէ՛, ասաց, քչ՞ւմ խեծի ձին, դիճնացի.

Ասաց.—Իջի՛, փչում էլ ես խեծիմ։

Գեղիմ՝ մօտկըցան, ձիաւոր ասաց.—Գնա՛ էդ գեղ, չանք ես կուդեամ, օր խասար գեղ, էդ գեղին մէջ տեղ մէկ խարուստ տուն կայ, էդ տան իրեք խատ ղարաւուլ (գիշերապահ) կայ, էրկուս աջակողմ կայնած, մէկ ձախակողմ բարև կայնած, էն էրկու աջակողմին բարև կառնի, ձախակողմինը քու բարև չառնի, գնա՛ էնոնց յողէն նստի, չում ես խասնիմ քե։

Ձիաւոր մնաց էդ տեղ, էդ մարդ լէ էլաւ էկաւ գեղ. պտըտեց, գեղի մէջ տեղ խարուստ տուն գտաւ, տեսաւ էրկուս աջակողմ կայնած՝ մէկ ձախակողմ. բարև տուեց. աջակողմն բարև առան, ձախակողմ չառաւ։ Գնաց էդոնց յողէն նստաւ։

Էդ ձիաւոր օր նստաւ, մարդ էդոր էրեսն չէկաւ. մարդ չխարցուց, մարդ բարև չտուեց, «դո՛րվի կուդեա, դո՛ր կերթա», չասաց։

Էդ մարդու ճէ խաց բերին, ճէ ջուր, ճէ բան։

Մնաց չում յիրկուն, ճրագ վառին, մարդիկ լցուան էդ յողէն։

Էս մարդ տեսաւ էն ձիաւոր էկաւ, ուր ձին կապեց, խոստուեց. էկաւ յողէն, պարկաւ։ Էս մարդ կու տեսի, մնացած մարդ չտեսին։

Էն ձախակողմի մարդ որ բարև չառաւ, էդոր գլուխ ցաւաց. ասաց.—Բարձմ բերէք, դնեմ իմ գլխու տակ։

Էն ձիաւոր մարդ խափուճճի տկէն խըրեղէն սուր խանեց, զարկեց խիւանդ մարդու կողին, խիւանդ մա՛րդ ասաց.—«Թէասիպի մալն եմ կերերեմ, տուէք. Ցլաճեսի եղն եմ գողացեր, տուէք. էն մէկէլի ցորեն եմ կերեր. մէկէլին լէ փարեն, ինճեար էմ էրեր, տուէք։ Ինչ օ գողութեն, բօզութեն, մարդասպանութեն, անէրութեն էներ էր, ասաց։

Էդ ձիաւոր մարդ էդոր խոգին առաւ։

Էս մարդ՝ ուրին-ուրին մեզեց. «ես օր չփախիմ, իմ խոգին էլ պտի առնէ։ Ելաւ չարող, գուլպայ զարկեց ընթի տակ. բոբկցաւ ու փախաւ։ Քանի մօւթ ա, փախաւ.—Եփոր էդ ձիաւոր կուգեայ, կընցնի, ես կելիմ, ասաց։

Էս մարդ քարի տակ մտաւ, չմտաւ, էդ ձիաւոր խասաւ, ասաց.—Ախպէ՛ր, դու իմ ի՛նչ վատութեն տեսար. յորէ՛ մտար քարի տակ։

Ասաց,—Ախպէր, ես քեզնէ վախեցայ. օր իմ խոգին էլ պտի առնիս. էն յապով էկայ մտայ էս քարի տակ։

—Ախպէ՛ր, ասաց. մը վախենայ, յէլի, էրթանք։

Ցէլան գնացին։—Ախպէ՛ր, նեղացար, արի՛, ձին խեծի, փչում դինճացի։

Փչում գնացին, էդ մարդ ասաց.—Արի՛, փչում էլ դու խեծի։

Գնացին-գնացին, գեղիմ մօտկըցան. էդ ձիաւոր յառէջ իմալ սովրցուց, էլման յէմալ սովրցուց, գնաց էդ գեղ էս մարդ։

Գնաց, պտտեց, գեղի մէջ դտաւ խարուստ տունը. տեսան էլմ մէկ աջակողմ կայնած էն, էրկուս ձախակողմ. բարև տուեց։

Աջակողմ կայնացող բարև առաւ, ձախակողմը չառաւ։

Գնաց, յօդէն նստաւ։ Էս մարդուն էդ յօդի տէր չատ իfram էնեց, ջուր, խաց, չայ, դայեայ բերեց, ոտքերը լուաց, սօրա էս մարդուց խարցուց։

—Ախպէ՛ր, դու ի՛նչ մարդ էս, դո՛րվի կուգեաս, դո՛ր կերթաս. ի՛նչ բանի էս։

Ասաց.—Ի՛նչ կը խարցուցէք ձի, ես դարիբ ճամբխորդ եմ. էկեր եմ, կերթամ։

Ծրագներ կը կպուն, չատ մարդ յօդէն կը լցուի, տեսաւ ուր ախպէր էկաւ. ձին քեաչեց փակեախ, խոտ տուեց, էկաւ յօդէն։

Էդ աջակողմի մարդ օր էսօր բարևը առեր էր, ասաց։—Իմ գլուխ կը ցաւայ, բարձ մի բերէք, դնեմ իմ գլխու տակ, մէկ ճղարա թութուն վի՛ մօտ կայ. տայ ընձիկ, իմ ՐԷՖ բացուի։

Ասկոլու բաcsան էդ խափննով ձիաւոր, ուր խափննի տկէն խանեց անմախակյան խնձոր, տուեց էդ մարդու քթի դէմ. տեսաւ օր էրկու-իրեք անգամ տուեց էդոր քթի դէմ։ Մէկ էլ օր տուեց, էդ խիւանդ ասաց.—Օ՛խա՛չ, իմ խոգին բռաճաքաւ։

Էդ խիւանդ ասաց.—Էլ խնձոր կա՞յ, մէկ խնձոր էլ տուէք իմ քթի դէմ, իմ ջան չիտակ բռաճաքնայ։

Էս մարդ տեսաւ օր էդ ձիաւոր մարդ անուչութենով էդոր խոգին առաւ, քակեց տարաւ։ Էս մարդ ասաց.—Էսի իմ խոգին էլ կառի. յէլիմ, էդ մարդու մօտէն փախիմ, էրթամ։

Ցէլաւ, գիշերով փախաւ, գնաց. գնաց, մտաւ մըջ ծովուն, որ էդ մարդ չդեսյ, ուր խոզին առնի։

Խըտ մոնելուն տեսաւ էդ ձիաւոր էկաւ, խասաւ, ասաց.—Ախպէր, չէ խըտ քե ախպէր ենք եղած, յորին կը մտիս ջրին մէջ էդա ցրտուն. էս պաղին, քու զօռ ինչ ա։

—Ասա ես ինմալ էնեմ, ես չմտիմ ջրի մէջ դու իմ խոզին կառնիս։

Ասաց.—Ախպէր, ես ու դու էղերինք յիրարու մարդ, ես Աստուած չեմ որ քու խոզին առնիմ, արի, փչում խեծի ձին։

—Մարդ, ես խըտ քե ճամբախ չեմ յիգամ. արի, աս, տեսնինք դու ինչ մարդ իս, ես կը վախենամ։

—Քե ինչ պէտք ա, ես ինչ մարդ կեղիմ. արի, էրթանք։

—Մարդ, ասաց. արի քու անուն ընձի ասա, որ խաւատամ. գեամ։

Ասաց.—Ես Գաբրէլ խրեշտակն իմ։

—Մարդ, դու որ Գաբրէլ խրեշտակն ես, էն մարդու խոզին յորի չարչըրեցիր, առար։

—Աստուած յէմալ խրաման էնեց, էնի չատ fեասխպ, fիւսխւպ մալ կերեր էր, աղքատի խոր ճղեր էր, չատ մարդ սպաներ էր, դռներ կոտրեր էր, աչք ուր մալ չէր, խլղի մալին էր. կուզէր խլղի մալ էներ ուրին մալ. էն յապով չարչըրելով էնոր խոզին առայ։

—Մարդ, էն յէմալ, պա էն մէկիլի խոզին յորին բռաճարութենով առար։

—Էնի ժամ գիգէր, պատարագ կէնէր, խեր խերեաք կէներ. աղքատին խաց, չոր կուտէր, աղբուր կը խանէր, ժամ կը չքէր. էնոր աչք խլղի մալ չէր։

Ասաց.—Դու օ Գաբրիէլ խրեշտակնես, իմ խոզին ինչ վախտ կառնիս։

Ասաց.—Դու կերթաս արեմտոց Թագաւորին եօթ խատ տղայ կայ, որ գնացիր եսկի բարե չես յիտար. քընց էնոնց վեր կը նստիս, էն մարդիկ քըղնէ կը վախենան, կասեն. «Ցիսուս, Քրիստոս. էսի ինչ ա, չարք ա, էկաւ քընց մեզի վեր նստաւ»։ Քեզի օ կասեն՝« դու ոն ես»։ ձէն չտաս. քեզի կասեն, «կուռօ, դիւ fի°յե»։ ձէն չտաս։ Քեզի օ չատ կը նեղացուցեն, դուն էլ ասա.—«ես էկեր եմ մըտ ձեզի, խնդիր կայ»։ էնոնք քե՜կը խարցուցեն. «քու խնդիրք ինչ ա, ասէք, մենք կատարենք»։ դու էլ ասա։

—Քու քուր տուերէք արեւլոց Թագաւորի տղին, տղէն սաղիfեաճ էկաւ քու քուր տեսաւ. fօռ էր, քոփալ էր, սախաք էր, չառաւ, մկայ էն մարդ մեռեր գացեր ա ճախ, քու քուր մացեր ա Ճաճախ. մըկայ չաբաթ խետ, էրկու չաբաթ խետ, իրեք չաբաթ խետ քու քրոջ Ցըֆս կերթայ, չթողեր էն մարդ գերեզմնի մէջ

ըռըհաթ մնայ։ Էդ յապով է կերիմ մըտ ձեղի, իմ խնդիրք պտի կատարէք։ Էն օր օ քու խնդիրք կատարեցին, ասաց Գաբրէլ խրեշտակն, էն օր քու խոգին կառնի։

Էս մարդ մէկ օր, էրկու օր, իրեք օր գնաց, գնաց արևմտոց Թագաւորի տուն, մտաւ ներս. քընց տղէկներ վեր նստաւ, առանց բարևի, առանց բանի։ Էն Թագաւորի տղէկներ չա՛տ վախեցան. ասացին.—Էս ինչ մարդ ա, քընց մեղի վեր էկաւ, նստաւ։

Ասին.—Դո՛ւ ինչ մարդ ես։ Ձէն չտուեց։

Ասին.—Օլան, սեն քիմսան։ Ձէն չտուեց։

Ասին.—Կոռօ, դիւ քի՞յե։ Ձէն չտուեց։

Էդ տեղ չատ վախեցան, չատ էդ մարդուց խարցուցին։

Էդ մարդ վերուց, ասաց.—Մը՛ վախենաք, ես էլ ձեր պէս խողածին եմ. էկերեմ մըտ ձեղի, մէկ խնդիրք կայ, կատարէք։

Թագաւորի տղէն վերուց։

—Քու խնդիրք ինչ ա. ընձի ասա, ես կատարեմ։

Ասաց.—Քու քուր սաղ իքեան տուած ա արևելոց Թագաւորի տղին. Թագաւորի տղէն էկաւ, քու քուր տեսաւ. տեսաւ օ քօռ էր, թոփալ էր, քեչել էր, չառաւ. էն մարդ մեռեր գացեր ա հալխ, քու քուր մացեր ա նահալխ, քու քուր էրկու չաբաթ հաղմ կեղի օձու պէս, կերթայ էն մարդու կուշտ, չթողուր էն մարդ ուր տեղի մէջ ըռահաթ մնայ։ Ես էկերիմ մըտ քե, օր էդ խնդիրք կատարես։

Էդի ասաց.—Դու նստիր էդ տեղ, չում ես էրթամ մըտ իմ քուր, թէ ձի լսեց-լսեց. քու խնդիրք կը կատարեմ, թէ չլսեց, կուգեամ։

Թագաւորի ջոջ տղէն էլաւ, գնաց մըտ ուր քուր, ասաց.—Քո՛ւր, արևելոց Թագաւորի տղէն-քու նշանլուն մեռեր գացեր ա հալխ, դու մացերես նահալխ.* արի՛, խալալութեն տուր, ուր տեղ ըռահաթ մնայ։

Քուր վերցուց ուր ախպօր ասաց.—Ինչ ղնդար ես տանջանք կը քաշեմ, էնի եօթ անգամ քընց ձիկ աւելի տանջանք քաշայ։

Տղէն էլաւ էկաւ, էս մարդուն ասաց.—Ախպէ՛ր. քու խնդիրք չկատարաւ։

Էս խետ Թագաւորի ջոջ տղէն ուրնէ պզտըկին ասաց.—Ախպէ՛ր, յէլի դո՛ւ գնա, կեղի էդ խնդիրք դո՛ւ կատարես։

Իմալ էդ ախպէր գնաց մըտ քուր. քուրն առաւ (սկսեց),

---

* Ժողովրդեան հաւատքով մահը իրաւունք է. իսկ երկար ապրելը անիրաւութիւն. նաեւ անիրաւութեամբ կեանք վարելէն աւելի լաւ իրաւունք է մահը։

ճառուր fաՖr. խէր fՖrsեց, մէր fՖrsեց՝ ըլա ասաց.—Գնա՛, հեռը-ցէր, մը գար իմ աչքի դէմ։

Էդ էլ էկաւ, նստաւ ուր տեղ, ուրնէ պզտիկ ախպօր ասաց.—Ախպէ՛ր, դու գնա, կեղի օր խօսքմ խասկըցուս։

Էն էլ էկաւ մըտ քուր։—Քո՛ւր, ասաց. էկերեմ մըտ քե, խըն-դիրք կայ, պտի կատարես։

Քուր վերուց.—Ո՛ն օ էդա խնդիրքի յաղով գեայ մըտ ձի, էնոր լեզուն բուք էլի, էդ խնդիրքի յաղով չգեայ մըտ ձի։

Էդ ախպէրն էլ փոր-փօշմաՆ էկաւ, ուր տուն նստաւ, վերուց։ —Վերին դէն Աստուած, ներքին դէն պզտիկ ախպէր, թէ կա-րաց էնի բանմ էնայ։

Պզտիկ ախպէր յէլաւ, գնաց մըտ քուր, քուր ասաց.—Ախպէ՛ր, յո՞րէն էկեր ես։

—Քո՛ւր, ասաց. էն քու նշանած՝ արեւլոց Թագաւորի տղէն մե-ռեր ա հախ, դու մացեր ես ճահախ, էկերեմ մըտ քե, որ էն մար-դու խնդիրք կատարես, որ ուր տեղ ըռաճաք մնայ։

Քուր վերուց։—Գնա՛, էն խնդիրք բերողի մօտ. ասա՝ թը ըն-ձիկ կառի, ընդոր խնդիրք կը կատարեմ։

Պզտիկ տղէն էր, դարձաւ, էս մարդուն իմաց տուեց։

Էս մարդը ասաց.—Խա՛, կառեմ. գնա՛, ասա՛։

Քուր վերուց։—Գնա՛, էն մարդուն ասա, թը իդեայ մը ձիկ, ես բանըկի քուլի մէջ դրուկ իմ, ընձի տարէք խըտ էն մարդուն պսակէք։

Էդ պզտիկ ախպէր ուր քուր բամըկի քուլի միջէն դրկեց. տա-րաւ ժամտուն, հոնի էս մարդու խետ պսակեցին։

Տուն բերելու բացցաճ աղջիկ յօդի մէջ էղաւ 15 տարեկան խուրնիկ խրեղեն աղջիկմ ու էն մարդու խնդիրքը էն տեղ կատարեց։

Էն աղջիկ, էս մարդ քնան չուամ կէս գիշեր։

Գիշեր Գաբրէլ խրեշտակ կէս գիշերին էկաւ. կոխաւ վըր պոկին.—Դէ՛, էլի՛, քու խոգին մկայ կառեմ, ասաց։

—Գաբրէլ խրեշտակ, ես քեզնէ չեմ վախնար, իմ խոգին Աստծոյ թեսլիմ պտի էղի. դո՛ւ ինչ ես։

Էն տեղ Աստուած ասաց Գաբրէլ խրեշտակին։

—Ձեռ մկա՛յ պոկ, խոգին քաշյայ, խանայ պոկ։

Գաբրէլ խրեշտակ ձեռ մեց պոկ, ասաց.—Ախպէ՛ր, ճմալ իս. քու խոգին առճմ։

Ասաց։—Գաբրէլ խրեշտակ. Աստուած իմ խնդիրք կատարեց, էլ մուճճաք չեմ քաշեմ, իմ խոգին Աստուծուն ա. թո առնի։

Աստուած մէկ էլ ասաց. Դարբէլ խրեշտակ մէկ էլ կոխեց պոկ, ասաց չէմալ։ Որ իրեք քըմըմեց, Աստուած ասաց.—Դաբըէլ խրեշտակ, էդ մարդ ու աղջիկ խարիր տարի ումր աննն մէկ բարձի. էն մարդն էլ ուր տեղ ըռահաք մնայ։

30

ՍԱԳԱՐԱԾ ԱՂՋԻԿԸ

(Արծկէի Առնջկոյս գիւղի բարբառով*)

Դաւրիշ ձուկմ կը բերայ, կուտայ պառւուն պախ։
Պառաւին էլ իրեք խատ աղջիկ կեղի։
—Պառա՛ւ, կասայ, առ զիմ ձուկ, ամանաթ (աւանդ) պախայ։
Պառաւ կասայ.—Խօ՛, կը պախիմ, «ամանաթ օր կայ, ղըյամաթ ա»։
—Պառա՛ւ, ասաց. եան էրկու, եան իրեք օրէն կուգեամ։
—Շո՛ւտ արի՛, օր անգեան գեաս, կը նեխի։
Դաւրիշ տուեց ձուկ մըտ պառաւ պախ, գնաց։
Պառաւ ասաց.—Վերցէք ձուկ, պախէք. չէղի զայ ենէք։
Էդա աղջիկներն ա, վերցին էդ ձուկ պախեցին։
Աղջիկներ իշկեցին օրմ՝ էրկու օր դաւրիշ չէկաւ։
Քշեց չանք ամիսմ, էդ դաւրիշ չէկաւ։
Պառւու ջոջ աղջիկն ա, վերցուց ուր քուրվըրտոց։
—Աղջի՛, յէլի ձուկ բեր, ուտենք, պաս-ցամաք մեռանք։
—Աղջի՛, էսի ամանաթ ա, «ամանաթ օր կայ ղըյամաթ ա»

* Պատմած է Դաւիթ Մուխսի Յարութիւնեան։

—Էլի՛. բե՛ր, ուտենք, էնի մոռցեր ա։

Էլան ձուկ բերին, իրենքով էլ կերան։

Պառաւ խապար չէ աղջիկներ ձուկ կերած էն։

—Մարէ՛, քու աղջիկ դարւիշի ձուկ կերաւ, ասաց պզտի աղջիկ։

—Աղջի՛, ասաց. դու յորի՞ն կերար, մենք ինչ ջուղապ պտի տանք։

Էրկու օր էլ մնաց. դարւիշ էն տեղ մէկէն էրևաց։

—Պառա՛ւ, ասաց, իմ ձուկ բեր. վրաղ իմ, պտի էրթամ։

Ասա՛ց.—Աստուծուց ինչ պախեմ, քու ձուկ կերած ա իմ աղջիկ։

Էդա տեղ ուրախութենէ դարւիշի ոտներ գետին չառաւ։

Էդա դարւիշ Ֆէլպազ ա, յրմեն բան գինայ։

Պառաւ վերուց.—Էրթամ ձուկմ առնիմ, առ, գնա՛։

—Պառա՛ւ, ասաց. դու ծե՛ռ իս, ես իմ ձուկ կուզեմ։

Ասաց,—Քո ձուկ կերած ա իմ ջոջ աղջիկ, ես յո՞ւստէն տամ։

Ասաց.—Քո ջոջ աղջիկ կը տանեմ իմ ձկան տեղ։

Ասաց.—Դարւիշ, դո՛ւ ծուռ էս, դիւ դիւռո էս, ձկան տեղ աղջի՛կ կտան։

—Պառաւ, ասաց դարվիշ. «աղուըսու պէս ինչ պոչ կը Թալիս դէս դէն»։

Պառաւ, Թուխս էրկինք, իջիս գետին, որ աղջիկ կը տանեմ։

Էլան խընտրանց էրկուսն էլ գեացին շարաք։

Գեացին գազու դիւան դաւի դարվիշն ու պառաւ։

Էն ուր դաւին էնեց. էն ուր։

Աղջիկ խասաւ դարվիշին

Դարվիշ վերուց, աղջիկ առաւ գնաց ուր տուն։

Դարվիշն ա, վերուց.—Աղջի, ես կերթամ ավի, մո՛ւ էս կտոր միս, կեր, որ կերար, ես քզի, դու ընձի. որ չկերա՛ր, քըզի կսպաննեմ։

Ասաց.—Խա՛, կուտեմ, դու գնա՛։

Դարվիշ գնաց. աղջիկն ա, վերուց, միս փաթութեց քըչի մէջ, դրեց ական մէջ։

Դարվիշն ա, յիրկուն էկաւ, խարցուց.—Աղջի՛, մի՛ս կերար։

—Խա՛, ասաց. կերայ։

Ասաց.—Մի՛ս, քե կերե՛ր ա, չի՛ կերեր ա։

Ասաց.—Ջէ՛, ձի փաթութե քըչի մէջ, զարկե ական մէջ։

Աղջիկն առաւ, գնաց ներսով ներս։

Դարվիշ էլաւ գնաց դըխ պառուուն, ասաց.—Իմ մէկ քնին տաս, քու աղջիկ յէմալ մեծ կարպետ էցգէր, խինէր ա, չկընայ պրծնի. տո՛ւր. Թը գեայ, պրծնին։

Էլաւ միջնեկ աղջիկ տուեց, առաւ գնաց տուն դարվիշ։

Քուր տեսաւ, Շէ աղջիկ, Շէ բան։

Ասաց.—Դո՞ր ա իմ քուր։

Ասաց.—Քո քուր տարեր, կախեր եմ, իմ խօսք չէնեց, ընդոր ապուր։

Ասաց.—Դու ինչ ասիր, քու խօսք չէնեց։

—Փչում մին տուեցի, չկերաւ, ես էլ տարայ, կախեցի։

Էդ աղջկան էլ դարվիշ առաց։

Դէ, առ էսա մին, էփայ, կեր, չուր ես դառնամ։

Դարվիշն էլաւ, գնաց ավ-դուշ։

Աղջիկն ա, մին փաթթուեց քրչիկ, զարկեց առնպախ (որմի գլուխն, որ գերանի տակն է)։

Դարվիշ էկաւ, խարցուց.—Աղջի՛, մին կերա՞ր։

Աղջիկ ասաց.—Խա՛, կերայ։

Ասաց.—Մին, քե կերե՞ր ա։

Ասաց.—Դո՛ր ա կերեր, քրչի մէջ փաթըթուկ՝ առնպախ դրուկ։

Էն էլ տարաւ ներսով ներս։

Դարվիշ գնաց մըտ պառաւ, պառաւ ասաց.—Եա, Դարվիշ, խեր էղի, յորի՞ն կերթաս, կուգեաս։

Ասաց.—Պառաւ, խեր ու շեր խառուէր յիրուր. քու աղջիկ տարեր եմ, մկայ խալիչամ էցգած ա, էն մէկէլ աղջիկ կուզին։

Էդ աղջիկն էլ կատում ունէր, առաւ, գնաց ուր խետ։

Գնաց տեսաւ քուր-մուր չկայ, խարցուց։

—Աղա՛ ջան, դո՛ր ես ճամբեր իմ քուրվըտիք։

Ասաց.—Քո քուրվըտիք տարերիմ, կախերիմ էրկուսն էլ։

Ասաց.—Ընչի ապով կախերես։

Ասաց.—Փչում մին տուեցի, չկերան, ինաց էնեցի, կախեցի։

Էլաւ դարվիշ մին տուեց աղջկէն, ասաց.—Ուտես, չուր ես ավ-դուշ տեղէն գեամ։

Աղջի՛կ, դու աղջիկ էղիս, մին կը թալայ, կատուն կուտայ։

Դարվիշ յիրկուն կուգեայ, կը խարցու։—Մին կերա՞ր։

Կասայ.—Խա՛, կերայ։

Կը դառնայ մսին։—Մի՛ս, քե կերաւ։

—Խա՛, կասայ, ընձի կերաւ։

Էգա տեղ կառի, կենայ ուրին կնիկ։

Եօթ բանլիս կեր ուրին, վեցը կուտայ աղջկէն, կասայ.—Առ էսա բանլիսներ. օսկի կայ, մալ կայ, քզի։

—Ցորին մէկ բանլիս չես տաս, ես քո խօսք կէնեմ, դու յորի՞ն չէնիս։

Կասայ.—Կէնեմ, էն մէկ օթախի մէջ շատ գէշ գէլ, արջ կայ,

արապ, ճանավարներ կան, վախնամ վախենաս, էն յապով չեմ խոամ։

—Ես քեզնէ՛ չվախեցայ, ճանավարներուց պտի վախենամ, ասաց։

Դարվիշն էլման գնաց, աղջիկն մնաց դադ։

Աղջիկն ասաց ուրին ուրին—իշկիմ, տեսիմ ինչ կայ, էսմալ կասայ դարվիշ։

Էլաւ գնաց, դռներ բացեց, ինչ օր մալ-քամալ, ինչ օր Աստուածութեն տեղծեր ա, էդ տեղ ա։

Ցէլաւ, գնաց, էն մէկ դուռն էլ բացեց, տեսաւ-ինչ տեսնէ. —ուր քուրվրտիք, ուրիշ աղջիկներ, խրեղէն տղէք, փարեղէն աղջիկներ էդա տեղ լցուկ։

Էդա տեղ տղեկներ, աղջիկներ ուր քուրվրտիք ասացին.—Էդա անխոզի դարվիշի ձեռնէն մզի ազատայ։

—Ես իմալ ազատեմ. դարվիշն օր էկաւ, յըմենս էլ կսպանայ։

Տղէկներ ասին.—Ձեր իրեք քուրոջ փէտէ չոր կը չիքենք, դու գեացէք, մենք էլա կերթանք, կը պըծնինք։

Աղջիկներն ա, փէտա չոր խաքեան, էլան ընկեան դարվիշի օքախներու մէջ. էղած չէղած ժողուեցին, թը «ռատ կէր, ռամէլ ճաբեցին», գեացին։

Իրեք քուր բռնեցին մէ ճանբախ.—Մեր ղսմաք դռը ա, մենք էլ կերթանք էն տեղ, ասացին ու գնացին։

Գնացին մէ թագաւորիմ քաղքին տախիլ էղան։

Խըլուսուն աղջիկներ էլան գեացին պազար։

Էն տեղ խարցըցին, էն տեղ խարցըցին—մզի ըռընճպարութենից, հովուութենից, դառնարածութենից ինչ կայ, էնինք։

Էդ պզտիկ աղջիկ թագաւորի տղէն տարաւ ուրին էնեց ղազարած, միջնեկ աղջիկն էլ մեճլիս տարաւ. Ջրջ աղջիկն էլ ըռէսը տարաւ, էնեց ուրին ղազարած։

Էդ աղջիկներ մէկ օր, էրկու օր, իրեք օր, ոչ էդ ղազեր կը տանէն, մէկ տղէմ էլա պախ դնեց վրէներ։

Որ կերթէն դաշտ, փէտէ չորեր կը թափէն, իրեք քուր իրարու ձեռներ կը բռնէն, կը խաղէն. յիրկուն էլման կը խաքնէն, կերթէն իրենց աղէճներու տուն։

Էդ պախ մտած տղէն ա գնաց, թագաւորի տղին ասայ.—Ձեր ղազարած ճուրի մէլեճ ա. ափսոս չէ՛, կը ճանփես, կերթայ ղազարածութեն կենայ։

Ասաց.—Դու իմալ տեսար։

—Գեացի, պախ տուեցի, տեսայ ուրենց փէտէ չորեր խանին, իրարու ձեռներ բռնեցին, խաղցին։

Ասաց.—Իրիքին ո՞ր մէկն ա խօրոտ։

Ասաց.—Իրեքն էլա խօրոտէն, չկըցայ խանի (որոշէի) իրալուց, Հոտ Թագաւորի տղէն պախ կխոսայ էղոնց վերէն։

Կերթայ, կը տեսի, օղո՛րթ, աղի խօսքն ա, կը տեսի ուր ղազարած քընց մէկէլներ խօրոտ ա, սուս-փուս կուգեայ ուր տուն, խաղար կուտայ ուր խօր։

—Թագաւոր ապրած, կասայ. էս ղազարած ուզայ ընձիկ։

Թագաւոր կը վերցէ.—Դու ծուռ իս. քու խելք բան չը խասի. ես մէկ Թագաւոր էղիմ, էրթամ ղազարած ուզեմ։

—Իմն օր կայ՝ ղազարածն ա, իմն օր չկայ ղազարածն ա, կասայ։

Խըտ էդ Թագաւորի տղին չարա-մուքուն չէղի։

Կը պսակուեին. կը նստին ուրանց օքախ։

Աղջիկը մէկ օր ասաց.—Ես շատ կը վախենամ։

—Աղջի՛, յո՞րէն կը վախենաս, ալամ-աշխար մեր ձեռաց տակն ա, ո՞ն քըղի բան կասայ, օր կը վախենաս։

Էդ աղջիկ ուր գլխու գալած աղին կասայ, դառնայ կասայ. —Թագաւորի տղա՛, ընձի առջինեկ տղայ օր էղաւ, պտի սպանես օր էն դարվիշի ձեռնէն պըծնինք. օր չմորթեցիր, համ քըղի կըսպանայ, համ ընձի։

Էդ կնիկն ա, տարին կը բմի. կը պարկի, Աստուծու խըլամանքով տղէմ կը բերայ։

Էդ դարվիշն ա, կուգայ, կը տեսի օր ուրանց տուն խալի խարապա, զատ չէ մացեր. կասայ։

—Կայ չկա՛յ, պզտի աղջկան բանն ա, էնու խող վըր իմ գլխուն էղի, դո՛ր օր գտիմ, պտի սպանեմ։

Թարբի դունեայ կեղի, աշխար կը պտտայ, ո՞ր մէ քաղաք խարց ու փորց կենայ. մէկ սալղ չտայ։

Կուգեայ-կուգեայ էղ քաղքին ցախիլ կեղի, օր էդ աղջիկ էդ քաղքին մէջն ա։

Դարվիշն ա, ընկնի տուն-տուն ցուֆ էլ զարկայ, կը պտտայ, աղջկէն տեղ կը խարցու։

Մարդու մէկ կը վերուս—Իրեք տարի յառէջ իրեք խատ աղջիկ էկած ա, մէկ Թագաւորի տղէն առած ա, մէկ մենլիս, մէկ ըռէս։

—Պզտիկ աղջիկ ո՞րն առեր ա, կասայ։

Կասայ.—Թագաւորի տղէն առեր ա։

Դարվիշն կերթայ Թագաւորի դուռ, դուֆ կը զանի, կնիկ տեսի օ դարվիշ էկաւ։

Թագաւորի տղէն կասայ.—Դարվիշ. էլի, արի՛, փչում դուշ գար, թամաշա էնինք։

Կնիկ կասայ.—Փչում՝ բան տանք, հեռընայ, թո չգեայ։

Զում կնիկ կերթայ ալուր բերայ, դարվիշ կելլի վեր. քնի ուլինք կը թալը՝ թագաւորի տղի ականջ։

Որ կը թալայ թագաւորի տղի ականջ, թագաւորի տղէն մեռուկ կընկնայ։

Զում թագաւորի տղի կնիկ դառնայ, կուգեայ, կը տեսի օ բազա տղէն դարվիշ մորթեր ա։

Կնիկ կը պօռայ, կը ճըւայ «ճաւար-հա ճաւար»։

Նամ ճաւար կ՛ուգեայ, եա մասադ կուգեայ։։

Կը տեսի օ ծովու կճղի միջէն ձեն կուգեայ։

—«Աղջի՛, գնա՛, թագաւորի ղուբին (անհըրի) բէ, դիր թագաւորի տղի գլխի տակ, թագաւորի տղէն էլլի. էդի անաստուած ա, իմ ախպէրն ա, էդոր դարտէն մեռեմ էդա կղճի մէջ։

Աղջիկ ղուբին կը դնայ տղի գլխի տակ. տղէն կիմնայ, դարվիշ կը փախնի, թագաւորի տղէն կասայ.—Կնի՛կ, էդ ինչ ճալա-ճալայա։

—Աստուած քո տուն աւիրայ, կասայ, յէմալ-յէմալ էղաւ։

Կասայ.—Կնի՛կ, է՛լ ընձիկ պէտք չես, մ՛ու քու տղէն, գնա՛. դու կը մորթես, կասես դարվիշ մորթեց, դու սօյսուզ ես։

Կնիկն ա, առաւ մորթուկ տղէն, փաթութեց խէն չորերու մէջ, գնաց։ Գնաց-գնաց. գետիմ ըռաստ էկաւ. տղէն դրեց գետի ափ, ընոտ չորեր լուաց, ասաց—մեղք ա, ընթաթախ չլսորեմ։

Կնիկ չոր լուալու կեղի, կը տեսի օ քամակից ճիժու ձէն կուգեայ, կը տեսի ինչ—Աստուծու խըրամանքով չատր իջեր ա վըր տըղին, չատրի դուռ ասլան, ղափլան կանուկ, տղէն սաղ սալամաթ։

Էդ տեղ կը մնան մէր ու տղայ. ասլան, ղափլան։

Աստուծուց մանանայ կիջի, էդոնք կուտեն։

Դարվիշ ա, կելլի կը պտտայ, օրին մէկ կուգեայ, թագաւորի տղին մշակ կեղի։

Աւուր մէկ թագաւորի տղէն կասայ.—Տղէ՛ք, էլէք էրթանք ավութենի։

Կերթան իրեք խատ եղուընիկ կը զարնեն։

Թագաւորի տղէն սէյիսին կասայ.—Տղա՛, գնա՛, դէ էն չատրը, էփայ, մ՛ռ-արի, վըր էս աղբրին ուտենք։

Սէյիս կերթայ, ասլան ու ղափլան չըն ըթըլի ճերսութեննեն։

Մէրը վերուց։—Տղա՛, յէլի, իշկա՛, տես ով ա, էկաւ։

Տղէն ա, կը վերու։—Մարէ, բան վըր բանի, տնկընկեալէն կուգեայ։

Սեյիս կուգեայ, կասայ։—Մարէ, բարև քե։
Էն էլ կասայ։—Աստուծու բարին քե, ախպէր ջան։
—Մարէ, կասայ, էս իրեք եղվընիկ էփայ, տանեմ Թագաւորի տղին։

Կնիկ չուտամ եղվընիկները լեփկեց, սեսրեց, դնեց մըջ բաւին, կամըցուց, փաթթուցեց մանանի մէջ։
—Դէ, որդի՛, առ գնա, ասաց։
Առաւ գնաց։

Թագաւորի տղէն բացեց, կերաւ. տեսաւ ճմալ կերակուլ, աշխըրքի էրես Նա էկեր ա, Նա կուգեայ, Նա կերթայ։

Թագաւորի տղէն ա, խամռաւ (քաղցր համը առաւ, սովորեցաւ համին) կերակուլին, էլաւ խըլուսուն էլման էկաւ ավուԹենի։

Իրեք խատ էլ եղվընիկ ղարկեց, էլման ասաց սեյիսին։
—Գնա, էն չաւr, էփեն, մռ, արի։

Ասաց։ Ես երեկ գեացլ, աւլաւն, ղափլաւն վըր դռան էն, ընձի կուտեն, էս օր լէ մշկուն ճանփայ։

Մշակ վերուց։—Էլէք, իրեքս լէ խըտրաց էրԹանք։
Էլան գեացին։ Աւլաւն, ղափլաւն էլման նեrսոտան, ուրանց կապեր կը կտրեն։

Մէր տղին կասայ։—Տղա, տղա, յէլի դուս, տես, ինչ ա էկաւ։
Տղէն կելի դուս, կուգեայ, կասայ.—Մարէ, իրեք խատ բան վըր բանի, ընկորնկեալէն կուգեան։

Մէրն ա, կելի դուս, կը տեսի իրեք ձիաւոր կուգեան. կը տեսի մէկ իրիկն ա, մէկ սեյիսն ա, մէկ դաrվիշ, կասայ.—Տղա, գնա, օrթալախ ձիու գլօխ բռնայ։

Տղէն ա, գնաց Թագաւորի ձիու գլօխ բռնեց, տարան, իջուցին չաւr։

Մշակն ա (դաrվիշ),—Էսա եղուընիկներ էփայ, Նստենք, ուտենք, էրԹանք, կասայ։
Կեփեն, կուտեն կը պըծնին։
Կնիկ զուր իրիկ ու դաrվիշ կը ճանչնայ, ըմա էդոնք զկնիկ չճանչնան։

Էդ տեղ կնիկ կվերու.—Ես չատ դաrsլի եմ. խաղից բանից սաս. ականջ էննենք, ասաց Թագաւորի տղին։

Էդա տեղ Թագաւորի տղէն Նաղլ մի կասայ։
Հէքիաթ մէլ ասել կուտան մշկուն։
Կնիկն էլ ասաց.—Թագաւորի տղա. հէքիաթ մէլ ես ասեմ։
Կասայ։—Ասա։

Էդա տեղ կնիկ ուր գլօխ գալած կասայ։

Դառնայ կասայ.—Չէ, ես էն ղազարածն եմ-քո կնիկ։

Չէ, էս (մշակ) էլ էն դարվիշն է որ քո դուռ դուֆ կը զարկէր, քնի ուլինք դրեց քու ականջ։

Չէ, էս էլ քո տղէն ա, դարվիշ մորթեց, Աստուածութեն սաղացուց. Էրկնուց մանանով պախեց։

Էդա տեղ Թագաւորի տղէն կը կապայ զդարվիշ եօթ տարուան անծին ջորու պոչ, կը թողայ դաշտի մէջ։

Էնոնք խասան ուրենց մուրազ, դու լէ խասնիք ձեր մուրազ։

Էրկնուց իրեք խնձոր իջաւ . . .

31

ԱՐԴԱՐԱԴԱՏ ԴԱՏԱՒՈՐ

(Արծկէի Առնջկոյս գիւղի բարբառով *)

Մէկ մարդմ Ռուսաստանայ գնաց Ստամբօլ, չորս վեց տարի աշխատեցաւ, վաստըկեցաւ էրկու խարիր մաճիքիյա, էլաւ, ճամբախ տուեց յառէջ պտի էրթէր, փողնի մէջ մարդմ տեսաւ, ասաց.—Ի՞նչ մարդ էս, դո՞ր կէրթաս։ Ասաց.—Կէրթամ Ռուսաստան։

Ասաց։—Փարա բան վաստըկեր էս։

Ասաց.—Խա, Աստուած չորս խարիր մաճիքիյա տուեց։

Էդ մարդուն բռնեցին, տարան հուքմաք։

Հուքմաք փարեն առաւ էդոր մօտէն, ասին—Մեր Թագաւորին սիքան իրաւունք չկայ, տանիս ռուսի մէջ։ Էսա մարդն էր, տէր տիրական չկայ, վիզ ծուռ մըջ փողներուն անօթի, ծարաւ պտոտեց։

Աւուր մէկ մըջ փողնին կանուկ էր, վարժատան ճժեր վարժատնէն յէլան, կերթէն խաց ուտելու։ Էդ մէկ տղէն իշկեց էդ մարդուն վիզ ծուռ կանուկ ա։ Հարցուց.—Աղբէր, քըղնէ բան կը խարցում. չըս բռքէի։—Չէ, չըմ բռքէի։

---

* Պատմած է Դաւիթ Մուխսի Յարութիւնեան։

Ասաց.—Ես կիշիմ քու դարց չատ ա։

—Ճանըմ, ասա՛ց. դու էրախայ էս, գնա՛ բանիդ։

—Չէ՛, դու տա՛, ասաց։

Նլաւ էդ մարդ իր գլխու գոլած ասաց.

Դորխ տղէն ասաց.—Կերթաս էմէլ քու փարէն կուզես, որ չտուեցին, կասես.—Ես ձեր թագաւորութենի մէջ վեց տարի բանայ. դուք մկայ էկէք Աստըծու յառէջ վէքիլութեն էնէք որ Աստուած ընձի վեց տարի լէ ումր տայ, իմ օլուխ չուճուխին իցարան էնեմ։

Գնաց ճուէմար, ասաց. էդ ճուէմարք չի կարցան պատասխան տէն. խապար տուեցին թագաւորին.—Էս մարդ էսլա կասայ։

Թագաւոր կասայ.—Էդ մարդու փարէն տուէք, ըդոր սովրցնողը տուէք, էկէք մը ձի։

Ջօռ կը դնեն վըր էդ մարդուն.—Էս խեբք քզի ո՞վ սովրցուց։

Կասայ,—Ֆըլան վարժատան ճժերուց մէկը։

Կոլողկայ թագաւոր էն ճիժ կը դնտնի, բերայ ուր մօտ։

Տղէն գլուխ տուեց, փաքա բռնեց, կայնաւ։

—Այ տղա՛. ասաց թագաւոր, իմ եաշ գնաց, էդա խօսք իսկի լսած չէղերի, ես պտի դնեմ քե դատաւոր։

Ասաց.—Թագաւոր ապրած. դատաւորութեն կենեմ, ամա իմ աչքեր սաղ ա, որ խանես, կենեմ. չէ՛, չեմ էներ։

—Ցոլին քու աչքեր խանեմ, ասաց։

—Որ կուզես արդար ճարիաթ անեմ, իմ աչքեր խան։

Ասաց.—Չէդոր մաճէն ի՞նչ ա։

—Որ իմ աչքեր սաղ էղնի, մէկ իմ աղբէրն ա, մէկ ազգն ա, մէկ ջհճել ա, մէկ խօրոտ ա, մէկ նշանով ա. իմ աչք կը տեսի, միտք ա, կը փոխուի. իմ աչք որ խանես, յըմեն մէկ դռնով կը մտուցեմ, մէկ դռնով կը խանեմ։

Միլ բերեց, աչքեր խանեց, դրեց դատաւոր ճախ դօշակին։

Մէկ տաս, քսան տարի էնպէս ճախ ճարիաթ էնեց. էդ դատաւորի ձէն պիթուճ աշխար ցվըրուաւ։

Աստուածութեն Գաբրէլ խրեշտակին խըկեց, ասաց.—Գնա՛, էդ ղազու ճարիաթ իմացի՛ր, աղէկ ա, չէն՝ քուն։

Աստըծու խըրամանքով էղաւ տէրտէր, խեծաւ ջորին. էկաւ էդ դատաւորի քաղաք պառւում տուն, ղօճախ էղաւ։

Էդ գիշեր Աստըծու խրամանքով էդ պառաւին մէկ կով կեղի, էն կով կը ծնի. հորթիկ կուգեայ էդ ջորու տակ. կը մնայ, կը լուսնայ.—Պառա՛ւ, կասայ տէրտէր, իմ ջորին քաշայ դուս, ես էրթամ։

Որ կը քաշայ դուռ, խորթիք պըպըրալին կնկի ջորու էտև. պառաւ կասայ.—Տէրտէր, եամաճ, քու բաղդն եմ ընկե, էդի իմ խորթիկն ա։

Տէրտէր կասայ.—Քու խորթիկ էղնէր, քու կովու տակ կեղնէր, յորէն գլգէր կընկնէր իմ ջորու տակ, էդի իմ ջորուն ա։

—Տէրտէ՛ր, կասայ. ես զօռով չըմ կրնայ վըր քե, մեր քաղքի մէջ լաւ դատաւոր կայ, էրթանք, էնի մեր չարշաֆ էնայ։

Էլան գեացին մըտ դատաւոր, պառաւ ու ր դանդատ էնեց։

—Ես էնք մէկ կով. տէրտէր իմ տուն ղօնախ էր, գէշեր իմ կով ծներ, խորթիկ ընկեր ջորու էտև, դու ինչ կասես։

Ասաց։—Կանի, տէրտէրոջ մօտէն լէ խարցում։ Ասաց.—Ումն ա։

Ասաց.—Խորգիկ իմն. իմ չեղնէր յորին կնկէր իմ ջորու էտև։

—Տէրտէ՛ր, ասաց. խորթիկ քո՛ւն ա, չէ պառւուն։ Ասաց—իմն ա։

Ասաց.—Տէրտէ՛ր, կանի, քե բանմ ասեմ, իմ խէր էլաւ գնաց ծովու ափ. ձըտ մը գեարի ցանեց, էկաւ տուն. ամիսմ մնաց, գնաց տեսա՛ւ գեարին կանչըցե, չորս մատ էլեր էր, ամիս մը մնաց. գնաց տեսաւ կըթեր էր։ Ամիս մը լէ մնաց, գնաց տեսաւ խասեր էր։ Էկաւ իրղատ բռնեց, գնաց, պլտի քաղէ՛ր. գնաց տեսաւ որ ծովու ձկներ էլած. էդ գեարին կերած էն։ Տէրտէր, ասաց. էս ասած խօսքն սուտ ա, չէ օղորթ ա։

Ասաց.—Սուտ ա։

Ասաց.—Որ իմ սուտ ա, քունն էլ սուտ ա։

Ասու խըրամանքով տէրտէր էդա տեղ խաչակնքեց. դատաւոր լուսաւորցաւ. տեսաւ էն տէրտէրն էլ Գաբրիէլ խրեշտակն էր, խամբարձաւ։ Ասաց.—Պառաւ. էս քու խորթիկ։

Պառաւ ուր խորթիկ առաւ գնաց։

Դատաւորի աչքեր որ լուսաւորցաւ, էս խետ ինչ էնեց, բերեց փիրտէմ կախեց ուր առէջ ու դանդատւորին։

Օր մէկայ լէ մացեր ա մըջ Օսմանցու չարշաֆին։

32

ԽԵԼՔՈՎ ԽԱՐՃ ՈՒ ԴՈԼՎԱԹ

(Արծկէի Առընջկայս գիւղի բարբառով *)

Աւուր մէկ մէ չատ խարուստ մարդ կեղի, էդ մարդ չատ պատւով կեղի. մըտ քըրդի, մըտ հայի, մըտ Թուրքի պատիւ կեղի էդոր, էդ մարդու տըսուերկու տղայ կեղի, էդ տղէկներ նարամազ կեղին։

Մարդ կը տեսի օր էդ տղէկներ ուր տուն պտի աւրըէն, ըմալ պտի աւրեն-մէկ գողութենով, մէկ բողութենով, մէկ ճան խաղելով, մէկ Թուղթ խաղելով, մէկ մարդ սպանելով։

Էդմլա մարդ տեսաւ որ ուր տուն պտի աւրըի, «հեռւենամ, ասաց, որ չտեսիմ իմ տան աւրութեն»։

Առաւ խըտ ուր 2—300 ոսկի, Թողեց ուր խարստութեն տղէկներուն. Աստուծու յառէջ անց ու ծառք էնեց. «քեառուսուն աւուր ճամբախ պտի էրթամ օր իմ տղէկներ իմ տուն աւրեն, ձէն չգեայ, ընկի իմ յականջ։ Գնաց էդ մարդ, խասաւ մէ քաղաքի. ուր ձիու կեմ Թողեց ձիու դարփուզ, ասաց ձիուն.—Աստուծու հայվան, դու վի՞ դուռ էրթաս, ես էլ էն դուռ պտի իջիմ։

Ձին ա, գնաց-գնաց, քընց ինքն էլ խարուստ մարդու մը դուռ կայնաւ։

Էդ մարդ էդ տեղ իջաւ, ղանչեց.—Նանէ՛, նանէ՛, էս ձին քաշայ իներս։

Ձին քաշեց ներս, խոռ տուեց, էդ կնիկ վերուց.—Ախպէր, դու յորե՞ն դուռ կը կայնես, արե տուն, նստի։ Գնաց տուն, նստաւ։

---

* Պատմած է Դաւիթ Մուղսի Յարութիւնեան. Սոյն Դաւիթը իւր գիւղի բարբառին լաւ ծանօթ էր. պատմած է շատ կարգաւորեալ եւ սահուն ոճով. իւր ամեն հէքիաթներն ու բրղակն վէպերն պատմած է շատ վարժ եւ առանց կանգ առնելու։

Էդ կնիկ վերուց։—Ախպէր, դու բարի ես էկեր, վըր իմ գըլ-խին, վըր իմ յերսին, էն տեղէն չում էս տեղ։

—Աստուած քու տղէկներ պախայ, քու դոլվաք չատ էնայ, ինչ դու իմ պատիւ պախեցիր, Աստուած քու պատիւ պախայ, ասաց։

Էդ կնիկ խաց ու զաs բերեց, դնեց յառէջ. էդ մարդ կերաւ։

Էդ մարդ չանք յիրկուն ձէն չէնեց, սուս նստաւ։

Էդ կնկան իրիկ, ուր իրեք տղէն խետ. յիրկուն էկան, տան-տէր կնկեան ասաց.—Էլի խաց բի, ուտինք։

Կնիկ խաց բերեց, էդ տանտէր էդ մարդուն ասաց.—Ախպէր, արի, խա՛ց կեր։

Տան տէրն էլ մարդուց չխարցուց - «դու յո՞ւստ էկերես, դո՞ր կերթաս, ինչ բանի կերթաս։

Տան տէր վերուց, ուր աղջըկէն ասաց.—Աղջի՛, յէլի, տեղըրանք թալ, պառկինք։

Տեղըրանք էցդեց. ամենքը էլան պարկան։

Էդ աղջիկ. իրա սովորութեն էր, փարչմ ջուր ուր խօր գլխու մօտ դնեց, մէմէկ փարչ էլ աղբրտոց գլխու մօտ, մէկ էլ էն ղարիբ մարդու գլխու մօտ, պարկան, քնան։

Մնաց չանք լուսուն, էդա տան տէր էլաւ, գնաց ուր բանին, էդ ղարիբ մարդ մնաց։

Մէկ ամիս էրկու ամիս, մէկ տարի, էրկու տարի, չանք եօթ տարի էդ մարդ մնաց էդա տունն։

Էդա տանտէրն էր, էդա մարդուց մէկ բան չխարցուց։

Նօթ տարին օր բմաւ, մարդու ճկեար կտրտաւ, էլաց։

Էդ տան կնիկ վերուց.—Քու դարs ի՞նչ ա, կուլաս։

Ասաց.—Քուրի՛կ, իմ դարs էն ա, էս եօթ տարի ա էկերիմ քու տուն, քու մարդ չանք մկայ չխարցուց, «դու ինչ մարդ էս, յո՞ւստէն կուգեաս, դո՞ր կերթաս։

Մնաց չում յիրկուն, էդ տան տէր, ուր տղէկներ էկան, էդ տան կնիկ վերուց, ուր մարդուն ասաց.—Մա՛րդ, էս մարդ եօթ տարի ա էկեր ա, սկի չխարցուս «՛մա՛րդ, դու ի՞նչ մարդ էս, յո՞ւս-տէն էս»։

—Կնի՛կ. ասաց տան տէր, Աստուած ընձիկ մալ չա՛տ ա տուեր. էնոր ուտելով չխլըսիր, ձիուն ուտելով իմ խոտ չի խլըսիր. քանի տարի կուզայ թո մնայ, ինքն էլ ուտայ, ուր ձին էլ։

Էդ տան աղջի՛կն էր, էմլէ տեղըրանք թալեց, էմլէ մէմէկ փարչ ջուր լցեց, դրեց էդոնց գլխու մօտ։

Մնաց չում լուսուն, էդ մարդ էլման էլաց-արտսունք թափեց։

Էդ տան կնիկ վերուց։

—Մարդ, մը վախենայ, քու դարտ ինչ ա, կուլաս։

Ասաց.—Քուրիկ, քեզնէ ինչ պախեմ, Աստուծուց ինչ, ես քընց քե խարմւստ, իմ տուն քընց քո տուն աղէկ, իմ մալ քընց քուն չմտ, իմ տղէք քընց քուն չմտ, իմ խետ եօթ խարիր օսկի բերերի, ձեր տան անուն ծանտը կիտէն, օր դի, քու աղջիկ ուզի իմ տղին։ Մկայ էկերիմ, քու մարդ չխարցու. փարէն էլ խըլըսեր ա, տուն էլ քառսուն աւուր ճամբախ զատանց ա, մէկ էլ չկեառնամ էրթամ, գեամ։

—Ախպէր, ասաց կնիկ. առ քե քսան խինգ fիսալ փարայ մէկ, մ'երթայ քո տուն, խինք խատ էլ խլղաք։

Մնաց չում յիրկուն, մարդ ու ուր տղէկներ էկան։

Կնիկ վերուց։—Մալդ, էդ մարդուց խարցուր, յո՞րի էկեր ա. մէկ տեմս, քու ճուղաբ ինչ կուտայ։

Էն մարդ վերցուց.—Ես էկերիմ, քու աղջիկ պտի տաս իմ տղին։

Տան տէր վերցուց։—Քանը խինք fիսայ, խինք խալաք կուտաս, իմ աղջիկ կուտամ, տասը փարայ պակաս էղի, չառիմ, աւելի էլ էղի չառիմ։

Էդ մարդ վերուց.—Խնամի՛, յէլի՛, քու աղջկէ ձեռ ու ոտ տեմս, յուսուն ես կերթամ։

—Խնամի՛, ասաց. իրեք օր մօճլաթ տաս, պատրաստութեն տեսիմ, մու, գնմ։

Իրեք օր որ թմաւ, աղջկէ խէր քառսուն ջորու բեռ բռնեց ուր աղջկէն ճճեզ, էլաւ ուր իրեք տղէք ու եռսունը ինը մարդ գըրեց խետ.—Դմբոյ, զուռնոյ տարէք իմ աղջիկ, իրեք օր ճամբախ դրէք, դարձէք. Թը իրենք էրթան։

Իրեք օր որ թմաւ, էլաւ էդ աղջիկ իրեք աղբոր խլղաք տուեց։ Մնացին էդ աղջիկն ու կէսերը, մէկ էլ եռսուն ինը մարդ։ Եռսունը եօթը օր ճամբախ գեացին։

Էդ եռսուն եօթ օր էդ մարդ խաղ ասելէն, ձի խաղցնելէն կերթար. չում էկան, խասան ուրանց խողին։

Որ խասան ուրանց խողին, էս մարդու ճկեար վառաւ, սիրտ մրմրաց, լեզուն առուաւ։

Էդ խարս մեղեց, ասաց.—Ճանըմ, էսոր ձի՛ խաղցնել դո՞ր, խա՛ղ ասել դո՛ր. մկայ լեզուն առուեր ա։

Մէկ սաճաք, էրկու սաճաք էդմալ լալելէն ճամբախ գնաց։

Էդ խարս ուր մտքի մէջ վերուց։

—Մէկ ես իմ, մէկ վերին դէն Աստուած. մէկ իմ կէսրէր. խաճին զաքի իրեք փարդայ (քող) ա, իմ մէկ փարտէն պտի պատռեմ, տեսիմ, էսոր դարտն ինչ ա, օր վառուի, կիրիցի։

Էդա խարս վերուց մէկ փարտէն պատռեց, ասաց։

—Ափó, քու դարդ ինչ ա, խաճ կասես, խաճ կը զանիմ, ընձի կօպանիմ։

Էդ մարդ վիրուց.—Որդի՛, իմ դարդ չատ ա, ես իմալ քե ասեմ։

—Թօ՛ չատ էղի, պտի ասես։

Էդ մարդ ասաց.—Իմ տուն քընց քու խօր տուն չօ՛տ աղէկ ա. ես քընց քու խէր պատուով, երևելի. որդի՛, ընձի տասուերկու տղայ կայ, տեսայ որ մէկը գողութեն կենէր, մէկը բողութեն կէնէր . . . Թօրկի տնէն փախայ ընդոնց յապով, մկայ կը միզեմ, ընկայ քու մեղաց տակ. չիմ գիտեր, քզի տանեմ իմ օ՛ր մէկ տղին տամ. որդի՛, իմ դարդ կó էդ ա, ասաց։

—Ափó, ասաց. իսկի ղասաֆեք մէնի, իսկի տղայ էլ Թօ չեղի, ես քե տղայ, դու ձիկ խէր։

Սահարմ, էրկու, իրեք, չօրս խասաւ ուրանց գեղ։

Խարս տեսաւ խէրն էլման կուլայ. կը վառի, կիրիցի։

—Ափó, յօրլի՛ն կուլաս, ասաց։

—Որդի՛, ասաց. ի՛մալ չլամ. տունն օր կայ Աստուծոյ սըարճ (պատսպարան) ա, տօ՛ւն էլ չկայ, քու աւիրեր ա։

—Ափó, մի՛ լար, Աստուած օղորմած ա, ճալպաք խարապայ կայ, մեր բան ու ման Թալենք մըջ խարապին։

Ուրանց բարխանեն Թալեցին ուրանց խարապեն։

Մարդ տեսաւ ուր բարեկմներ, ուր չարկամներ ժողուան, էկան էդոր կուչտ։

Տեսաւ ինչ որ բարեկամ էր, տրտում էր, ինչ որ չարկամ էր, մէկ աղլ կը գրուցեր, մէկ չաղըլ կը գրուցէր, մէկ աղէկ կը գրուցէր, մէկ մօն։

Էդ խարս միզեց, իմ յերսին էրկու փարեն պատուեցի, էն մէկն էլ կը պատուեմ, ասաց.—Ափó, էդոնց փարայ կա՛յ մըր վրէն, փարեն տանք, մալ կայ, մալ տանք։

Էդ խարս էդ խսեն ասաց, ամեկը քաչուան, գեացին։

Էդ խարս ուր կէսրէր մեքի մացին, խարս վերուց.—Ափó, առ-էսա չօրս օսկին, գնա, մշակ, բան բան բեր, ես փորիմ, դու լից, մշակներ կըեն, մեր տներ չիքինք։

Գնաց, առաւ էկաւ։

Մէկ օր, չաբաԹմ, ամիսմ, էրկու ամիս ուրանց տներ շինեցին, պրծան. ուրանց բարխանէն լցին ուրանց տուն։

Խարս տուեց էրկու օսկի։—Ափó, ասաց. գնա՛, մէկ օխչար, էրկու լիտր արաղ ա՛ռ, արի՛։

Գնաց բերեց. խարս էփեց, պատրաստեց, ասաց.—Ափó, քու տղէկներ մշակ ին, գնա՛, քու տղէկներու աղէք ղանչայ, բե՛ր. օր

կուգեան, խաց կուտին, կը պըծին, կասեն քե—Մեզի յոլին կանչեցիր՝ դուն էլ կասիս. տղէկներու իզին տաք, գիշերս գեան, մեր տուն մնան, լուսուն գեան ուրանց բանին:

Էդ մարդ խարսի ասածի պէս էնեց, տղէկներ Թօրկին աղէք, էկան ուրանց խօր կուշտ. յէմալ ամօտ-զամօտ, օճլօղ ալճլօտ, քըրճօտ-պնճօտ: Նրոնք էլ կերան, խմեցին:

Խարսն էր, տըսուերկու ձեռք բաքալս ջոկ-ջոկ թալեց, ամէկ բաքալի գլօխ փարչմ ջուր դրեց: Տղէք էլան քնան:

Տղէկներ որ քնան, խարսն վերուց.—Ափօ, կէս գիշեր օ կեղի-պօռայ. «տղէկներ, ես ծարաւ վառուայ, մեռայ, իրեցայ, ջո՛ւր բերէք ընձի: Տէ՛ս, ո՛ր մէկ տղէն կը բերայ, դու ընձի պսակայ վըր էնդոր:

Տսուերկուսի պզտիկ՝ պլոռալու բաղդան փարչ վերուց, բերեց, տուեց ուր խօր ձեռ:

Աղջիկ ասաց.—Ափօ, ընձի պսակայ վըր էդոր, մէկէլներու իզին տուր, էրթան ուրանց բանին, մեզի պէտք չեն:

Էդ մարդն էր. բերեց դմբով, զուռնով, նաղարով էդ խարս պսակեց ուր տղի վրէն, էղան մէ աղէկ տուն:

Էդ խարսն ա, գիշեր, ցերեկ իուր Աստուած կը ղանչայ, ուր աղօթք կէնայ, ուր մարդու ծոցն էլ չպառկի, չում Սուրբ Սարգսի բքուն:

Սուրբ Սարգսի բքուն էր, կէսրէր էն դեխ էր պառկեր, տղէն էս դեխ, խարսն էլ չոքեր էր, աղօթք կէնէր:

Կէս գիշեր էր, խալիւրմ էնենց զարկուաւ դուռ, յէմալ պռռաց, էրկինք գետին ձէն տուեց:

Խարս վերուց.—Էն ո՞ն ա զարկուաւ մեր դուռ:

—Խա՛րս, ասաց խալխու. Աստուած կը սիրես, դուռ բա՛ց, ընձի առ ներս, բուք ընձի խեղդեց, ծեր մարդ իմ, իմ աչիչ լուս պակաս ա:

Խարս դուռ չբացեց, չառաւ ներս, մնաց բքու յառէջ:

—Խա՛րս, ասաց. էն կապուտ չադր (երկինք) կը սիրես. խեղճ իմ, խօքի ա, կաղատես:

—Դու ի՞նչ մարդ էս, քու անուն ինչ ա, ընձի ասա՛:

—Ես քու դոլվաթն իմ, դուռ բա՛ց, ընձի առ ներս:

Խարս ասաց.—Դոլվաթ չէղի՛, Աստուա՛ծ էլ էղի, դուռ չբանամ:

—Որդի՛, դուռ բաց, ընձի առ ներս. մէկ էլ Հուսէնի բօպէն կէնեմ, քու տնէն չէլլիմ դուս. քանի քու սըլսըլէն սաղ ա, քու բօթ պօրտ կայ, նամերդի մուհբան չէղնի:

Էլաւ խարս դուռ բացեց, էդ մարդ առաւ ներս:

Էդ դոլվաթն էր, ասաց.—Որդի՛, գնա՛, ճրագ կպու. էրթանք

փակախի վերին դէն սահում կայ, քեզի էրկու խապար կայ, քե կասեմ, էլ քու աչիչ չիբեամ, կը խամբարձիմ։

Խարս գնայ, ճրագ կպուց. առաւ էկաւ, գնացին փակխի վերին սահուն. յինք ու դօլվաթ նստան. դօլվաթ վերուց.—էս գոմչու սալ կը տեսնի՞ս։

—Խա՛, կը տեսիմ, ասաց։

Ասաց.—էս սալի տակ էրկու գումգում օսկի կայ, խանէք, տարէք. ձի տղէկներ կարգէք, տղէկներ ուրանց մեղայ դարձան. ուրանց գոգէն քար թափին (մեղայի եկան). էն մէկ գումգումն էլ ձի պէտք կուգեայ, հա՛ թը կենայ էդ տեղ։

Էգոնք ասաց, պըծաւ, դօլվաթ էլ չէրեւաց։

Խարս առաւ ճրագ, էկաւ ուր տուն, աղօթք էնեց չում բարի լուս բացուաւ։

Էգոր մարդ ու կէսրէրն քնուց յէլան վեր, ուր մարդն էր գնաց բանելու, կէսրէր մնաց տուն։

Խարսն էր, վերուց, կէսրէրին ասաց.—Ափօ, էսօր գիշեր մեր դօլվաթ էկաւ տուն, ընձի ասաց, ճրագ կպու, էրթանք փակխի քունչ, քչում նստինք. գնացինք քչում նստանք, ընձի ասաց.—«էս գոմչու սալ կու տեսնի՞ս», ասի. «Խա՛, կու տեսիմ», ասաց. էս սալի տակ էրկու գումգում օսկի կայ, մէկ խանայ, տա՛ր, կերէք, տղէկներ կարգէք, ինչու օր տղէկներ քար ուրանց գոգէն թափած էն, մէկ հա թը մնայ, օր պէտք էկաւ, կը խանէք, կուտէք։

Փէտատ, թեւակ բերին, էն սալ շըջին, էրկու գումգում օսկի էլաւ տակէն։ Բերեցին մէկ դումգումը, ուրանց տղէկներ կարգեցին։

Ուրենց տղէկներ ուրենց գործեր բօպա էնեցին, ուրենց քար, ուրենց գոգէն թափեցին։

Խարս ուր էրածներով էդ դօլվաթ գտաւ։

33

ԱՆԳԻՆ ԲԻԼԲՈՒԼ ՈՒ ՏԻԿԻՆ ՄԱՆՈՒՇԱԿ

Վաղարշապատի եւ Մօկաց խառն բարբառով *

Կըլնի-չըլնի, ժամանակով մէկ թագաւոր կըլնի, էս թագաւորին մէկ ժառանգ կուննայ աշխարքի երեսին։ Էդրա տան մէջ մէկ խատ չուշտ կուննայ. ժառանգին կասի.—Էս ջուխտ չուստը ման կուտաս, ում ոտով կըլի, կառնիս։ Էն աղջիկ շատ չըլի։

Էկաւ վախտին, էս թագաւորը վաղճանեց, էս տղէն ուզեց կարգուէր. վազիր, վաքիլ ընկան մէջ, ում աղջիկը կուզէ, կարգեն։

Ասաց.—Իմ խօր վասիաթ կայ։ Էն ջուխտ մաշիկ վեր կալեց, ընկաւ քաղաքին մէջ ման գալի. ուր տեղ որ դպաւ. վեզիրի դուռ գընաց, վեքիլի դուռ գընայ, խալխուն գնաց, մէկի ոտով չէղաւ. քաղաք քաղքով ման էկաւ, իւան մուքուն չէլաւ։ Մէկ շատ աղջիկ պատահեցաւ. ինչպէս ոտով ձևի, կարեւ։

Տղէն ասաց.—Դու շատ խա, իմ խօր վասիաթն ա, քո չպիտի առնիմ։ Շատ տեղ դիպաւ, իւան չէլաւ, վերջ գնաց շատ աղջկայ վրէն կայնաւ, վէքիլ, վեզիր բերեցին, կապեցին էդ աղջկան. պսա կեցին։ Բայց ինչ անես, էդ աղջկան մէկ խատ զարկեար սիրող ունի։

Էդ ասենք-էս աղջիկ ինչ արաւ-լըղըմ զարկեց, ինչքան թագաւորի խազինէք ու մալ-ու դովլաթ կար, քաշեց գետնու տակը, թագաւորի տղէն աւուր խացի կարօտ քցեց։ Շատ խղճացաւ,-ինչ անիմ, ինչ չանիմ, մշակութուն անիմ, ասաց։

Տղի մաճալ կտրեց էդ անխրատ աղջիկը, ամեն օր ասըմ էր.
—Քու պատանք կարիմ, անխրատ մարդ, ինչու չերթաս, աշխատիս։

Էս աղջիկը ինչ անըմ ա. օրական մէկ անգամ խըրկում, զարկեարին կանչիլ ա տալի, իրա համար մատանիք չինի։

Տղէն կերթայ պազար, որ իրա համար աշխատանք անի։

Մէկ օր տեսաւ մէ վաճառական մարդ.—Ճանըմ, ասաց. էս տղէն ինչու աշխատանք պտի անի։ Կանչեց, ասաց.—Տղա, ինչ ա պատահեր քըզի որ նեասիպութուն քըզի յաղթեր ա։

---

* Պատմած է Մկրտիչ-Կուլյան Շահրիմանեանը. սա բնիկ Մոկացի քուրդ եղած է, երկար տարի Վաղարշապատ մնացած. մկրտուած է՝ լեզուն եւս խառնած լինելով, նոյնութեամբ գրի առի։

—Այ հայրի՛կ, ինչ ասեմ քեզ, ասաց. իմ անգգամ կնիկ էսպէս օյին կը խաղայ իմ գլուխ, ընձի տանջում ա։

—Ըսկի քըզի ինչ ասըմ ա.—Օրական մէ անգամ ասըմ ա. «Գնա՛, զարկեարին կանչի, ընձի խամոր մատնիք չինի»։

Էս վաճառական մարդ չա՛տ սիրտ ցաւաց էդ հըսկու վրէն, ասաց.—Քեզ տամ մի մանեք փող, էս օր բանելու մի՛ գնար. գնա էս օր պարկի, հանգիստ քնի. յիրկուն եթէ կնիկ ասի. «Գնա՛, զարկեարին կանչի.» դիւ գնա՛, կանչի, դիւ տանից դիւս չգաս. մոտիկ արա իրարու ինչ են ասըմ, ինձ ասա։ Եթէ գինի, արաղ կը խմեն, քըզի էլ տան, դիւ ածի քիւ էախով, մինչև տաս սեահաթ, քըզի կը գնիս գինովութուն, կը պարկես, մոտիկ կանես, ինչ են ասըմ։

Էս տղէն գնաց տուն. մութ կոխեց, իրա անգգամ կնիկ էդըրա խախեն քակեց.—Ա՛յ մարդ, ասաց. տեսնամ, ինչ էս աշխատեր։

Ասաց.—Մի մանեք փող էմ բերեր։

Էս մի մանեք փողը ձեռքից առաւ. խըկեց, էրկու խաւ բերել տուեց, ասաց.—Գնա՛, զարկեարին կանչի, թող գայ մեզ ղօնախ։

Տղէն գնաց. զարկարին կանչեց, տարաւ տունը, խըկեցին, գինի, արաղ բերել տուեցին, խմեցին. տղէն տաս սեահաթ խամպըրեց, յուրին տուեց գինովութուն, պարկեց։ Էս անգգամ կնիկ ասաց.—Պօլ չէլաւ, դիւն թագուն էրթաս ու գաս, ախր մեր ոսկի խազինեք գետնու տակ փթեց։

—Ասպա ինչ անենք, ասաց զարկեարը։—Էդըրա չնլեքը կորենք, իրար առնենք, կեանք էնինք աշխըրքի էրեսին։

Զարկեար ասաց,—Մինչև քիւ օսկիք, ապրանք չտեսնամ, քըզի չպիտի առնեմ։

Ֆանար վառեցին, աղջիկը առաջ ընցաւ, զարկեար քեամակից, տղէն էլ զարկեարի քեամակից, մտան ներքև, զարկեար ապրանք որ տեսաւ, աչքեր սառեց։

Տղէն տեսաւ որ իրա խօր ապրանք պիրասի պախած ա. թէ օսկիք, թէ արծաթ, թէ ակնունքներ։

Տղէն յետ դառաւ դպա իրա տեղը։

Զարկեարն էդ ապրանքի մէջ ման գայ, գայ, տղի չըլինքը կոլի։

Մինչև ման էկաւ, ժամեր տուեցին, ասաց.—Էս չէլաւ, էս օր լիս ա, էգուց գամ, գլուխ կտրիմ։

Աղօթարան բացուեց, տղէն իրան քցեց վաճառականի մօտը, ասաց.—Սէրն Աստուծոյ, ընձի պրծացու։

—Ինչպէս տեսար.—Տեսայ որ իմ խօր խազինէն պիրասի մաղազէն էր։ Ասաց.—Ա՛ռ, քըզի մէ մանեք փող տամ, գնա՛, մէ զօդալ առ. կըտանիս տուն. կը պախես. յիրկուն կողորկէ զարկեարի քամկից. մի՛ կանչի։ Կերթաս տուն, դռներ կը փակես. կառնես դա-

կեճակը, էն կնկան էնքան կը տփեր, չանք զօղալ կը ջարդի, մինչև փէտ ջարդի, կը մեռնի։ Լիս կը բացուի, էդրա աղբըներ դաւի կանին.—«ինչու սպանիր մեր քիրը»։ դիւ ասա. «ես խապարութեն չունեմ, թէ որ չատ կը զօրին, կասես. «իմ տներ կը ծախեմ, կիտամ էնդրա արունք»։ էն ժամանակ դօլֆ կը հանին, դիւն էլ դօլֆ կերթաս մինչև էրկու միլիօն, կը կայնիս։ Իրեք օր ժամանակ կուզես, բանալիք քու ձեռ կը պախես, [իրեք օրը ինչ որ կայ, կը քաշես իմ տուն։

Իրիկուն տղէն կերթայ տուն, կնիկ կասի.—Ինչ իս բերի։

Կասի.—Մէ մաճեք փուղ իմ բերէր։

Տանը խինգ սաճի կայ կնկան։

—Շուտով գնա, զարկեարին կանչի, թող գայ։

Կերթայ մէկ զօղալ կառնի, մութ կը կոխի, տուն կիւգեայ։

Կնիկ կասի.—Զարկեար խի չէկաւ.—Հըմի կիւգեայ, ասաց։

Մէկ սաճաք, էրկու սաճաք, ոտքը քաղաքին մէջ խանդարտեց։ էս տղէն դռներ փակեց, զօղալ քաշեց, էնքան տուեց, մեռաւ։

Լիս բացուաւ, էդրա աղբէրներ դաւի արեցին։

—Իրա մախով ա մեռե, ըսկի խապարութուն չունիմ, ասաց։

Դրեցին տղի չնլիքին, աղջկայ արունք ուզեցին։

—Զատ չունեմ, մէ տուն ունեմ, ծախէք, տուէք արունք։

Դօլֆ կանչեցին, մէկ խարիր մաճեք տուեց. մէկ մէկ ֆեսա։

Խօսքը գնաց, խասաւ զարկեարին. «Ֆլաճ տնիրը դօլֆ ա»։

Զարկեար տեսաւ, օհօ, իրա սիրող սպանած ա. լաց էլաւ, ասաց.—Էս տուն ընձի կը վայելէ, քանի որ խաց ու պանիր կերերեմ. ես գնահատութուն կանեմ իրեք հարիր մաճեք։

Տղէն ասաց.—Ես մեռած իմ, խազար մաճեք կիտամ։

Զարկեար ասաց.—Միլիօն կիտամ, չեմ թողիր ոչ ով առնի։

Տղէն ասաց.—Էրկու միլիօն ընձի մօտ։

Զարկեար.—Իրեք միլիօն ընձի մօտ, ասաց։

Էս դօլֆը զարկեարի վրէն կայնեց։

Տղէն ասաց.—Ընձի իրեք օր ժամանակ տուէք։

—Իրեք չէ, չորս օր էլ քու ձեռք մնայ, ասաց զարկեար։

Մութ կոխեց. գնաց էրկու խատ խամալ գտաւ. ճախը կորեց, գիշերուան իրեք մաճեք. խազինէք պիրեցի կրեց վաճառականի տունը։ Էֆսի օրը զարկեարին կանչեց, բանալիք զարկեարին ձեռք տուեց, զարկեար առաւ բանալիք, ուրախ-ուրախ գնաց, մտաւ մաղազին. մտաւ օր զաց չկայ, դատարկ ի. գլօխ էն պատին տուեց, էն պատին տուեց, չորացաւ։

Խապար տանք էս տղի մօտիցը. էն տղէն յիրկուն մութն էր, գնաց վաճառականի տունը, պտի խացկերութուն անեն։ Վաճառա-

կանը ասեց.—Ընձի մէկ խասա աղջիկ ունեմ. անդամալիւծ ա. մէկ գունդ միս ա, ոչ ոտք ունի, ոչ բերան, ոչ ձեռք ունի, ոչ քիթ. թէ որ կառնիս, կտամ կարողութիւնս էլ քեզ. ես եմ, իմ մէկ կին. թէ որ չառնես, քեզ զաց չեմ տալի. յիւր էկեր էս, էն տեղ գնա։

Տղէն ասաց.—Ես մէկ գունդ միս ինչ անեմ։ Վեր կացաւ, գնաց, աղջկայ օթախի դիւռ բաց արեց, տեսաւ որ մէկ ճիւրի, փերի աղջիկ նստած ա, ճէ ուտես, ճէ խմես . . . չատ սիրուն աղջիկ ա։ Ցեռ դառաւ, գնաց անոր մօտը։

—Հայրի՛կ, ասաց. էս աղջիկը տու ընձի, իմ մալ քըղի։

Ասաց.—Տուեցի էն աղջիկը, իմ մալն էլ քեզ, քիւ մալն էլ քեզ։

Տղէն պսակեց, պրծաւ։ Մէկ էրկու տարի տղէն էս տեղ մնաց, ճամ զօքանչը, ճամ աները մեռան. մնացին ինք, իր կին։

Տղէն ասաց.—Էս տեղ մեզի ձեռք չտալ, չարը թողենք, քինը վե կալենք, էթանք։

Գնացին, Ստամբօլայ քաղաք դիւս էլան։

Էս տղէն մէկ բօղնոց ակունք-անգին քար լիք լցեց, տարաւ թագաւորին ճեցլյէ. թագաւոր գնահատեց որ մէկ խասա անգին քար քաղաք կառնի ու չծախի։

Ալ տղա՛, ասաց. ինչ էս խնդրում։—Թագաւորի սաղութիւն, եմ ուզում. ես էկերեմ ղարիպ երկրէ, քեզ ժողովուրդ դարձեմ։ Ընձի խամար մէկ տեղ տուր՝ տուն շինեմ, նստեմ միջին։

Թագաւոր մտածեց. մէկ խաս պաղչա ունէր. տուեց ըդըրան. տղէն քառսուն աջճճէ խօրտա տներ մի շինեց. իրան Մանուշակին մէջը դրեց։ Բայց ինչ անես որ միտքը փոխուաւ. կինը թողաւ, որ էրթայ Էրուսաղէմ, մուղսի դառնայ. մտածըմ ա օ-ես որ էրթամ, իմ կնիկ ում խետ պտի խօսայ. էրթամ, մէկ խասա ծառայ բռնեմ։

Վեր կացաւ գնաց պազարը, տեսաւ որ մէկ մարդ մէկ խասա բլբուլ ա ծախըմ.—Բլբուլի մարիֆաթը ինչ ա, այ մարդ. ասաց.

—Մարիֆաթը էս ա. մարդի խետ խօսում ա։

—Գին ինչ ա.—Տաս օսկի ա. ասաց։

Բլբուլը առաւ, տարաւ Մանուշակ խանումի խամար։

—Կնիկ, չատ լաւ բան ա, ծառայ բերեմ, լաւ չի, էսի քըղի ձեռքատուայ։ Դռներ փակեց, թողեց բլբուլ տունը, գնաց։

Էդ քաղաքի թագաւոր մէկ խասա տղայ ունի, օխտը տարի մէկ ճեյրաճի քամակից գնացեր ա. օխտը տարին թամամեց, դարձաւ-էկաւ. տեսաւ տներ մէ շինուած, էդ ճեյրաճը մէջը նստած ա, ասաց թագաւորին.—Հայրի՛կ, քու աչքն էլ, իմ աչքն էլ մի ըլլի, իմ ճեյրաճ բերիր, պահ տուերիս։

—Հայ որդի՛, ասաց. խօ դիւ գիժ չիս. ինչ ճեյրաճ. էդրա տէրը քաղաք կառնի, չծախի. հեռու կաց։

Էդ տղէն խռովեց, տանից դուս էկաւ, գնաց մէկ ճաշու պառաւի պատահեց.—Անձ, Աստուծոյ սիրուն ըլլի, դու սըռի կողմանէ ինչպէս ևս:—Շատ լաւ, ինչպէս քու սիրտ ուզայ։

—Կարող էս իմ ճեյրան ընձի խամար բերես, ինչ ուզես կտամ։

—Ընչի՛ կարող չեմ. էգուց գնամ, բերիմ։

Զասես, անզգամ պառաւը ճաշըպազ. սեր էրաւ, թռաւ, մտաւ ազուշկով նեքսև.—Ամա՛ն, քուռ աղջիկ, ասաց. բարով-սիրով էկեր էս էս տեղ. չասես ընձի մօրքուր կայ, էրթամ, տեսնամ ինչպէս ա։

—Այ ճանըմ, ասաց. այ կեօզմ, ընձի էս տեղ բարեկամ չկայ։

Պառաւ էս կնկան համոզեց, քարոզեց որ տանի դօնախ։

Բիլբուլը կանչեց.—Խանըմ, յիւր էս էրթում. կաց, բանեմ ասըմ, նոր գնա. խանըմ կայնեց։

—Խանըմ, ասաց. ժամանակով մէկ ախքատ մարդ կըլլի, էս ախքատ մարդուն սիրուն կնիկ կունենայ. բայց խանըմ, լաւ ականջ էրայ. գնացին մէկ կեամուչու պատահեցին, նստան կեամին որ էթան իրանց հայրենիքը դուս գան։ Դուս էկան, փող չկայ որ տէն կեամուչուն։ Բիլբուլ ասաց.—Խանըմ, լաւ ականջ էրայ. կեամուչին սասաեց. «փող տուր». թէ «փող չունեմ, տամ, ո՞րտուց տամ»։ Ասաց.—Կնիկ թող մնայ փողի դըրաւը. դու գնա, բեր։ Խանըմ, մինչև որ տուն գնաց. էս անիրաւ կեամուչին էս խեղճ աղքատի կընկան փախցուց։ Էս ախքատ մարդը մնաց փոր ու փօշման, ախ-վախ անելով։ Խանըմ, լսեցի՞ր, ինչ էղաւ, ինչ օյին էկաւ ախքատի գլօխ, քու գլոխն էլ օյին կգայ, մի՛ գնար։

Խանըմ բիլբուլի խօսքին ականջ էրաւ, ետ դառաւ, նստաւ. ասաց.—Պառաւ, դու գնա, ես չեմ իգայ։

Պառաւ գնաց տուն, թագաւորի տղէն ասաց.—Անիրա՛ւ պառաւ, ինչու չբերեցիր իմ Կիւլլի փերին։

—Ասաց. «Խնդրումեմ, ժամանակ տաս», սապօկներ անկարել էր։

Լուսուն էլի վեր կացաւ, գնաց, գնաց, մտաւ նեքսև։

—Այ քուռ աղջի՛կ, ասաց. իմ տղէն պտի պսակուի, առանց քըզի չի պսակուի։

Վեր կացաւ, կնկան խելք էր, իրան չորեր խաղաւ. էլի պտի գնայ, էլի բիլբուլ ձէն տուեց։—Խանըմ, յիւր էս էթում. կաց, պտի բան ասեմ, ախր քըզի բան ասեցի. դու չես ասեր թէ էդ ախքատի կնկան կեամուչին տարաւ, ո՞ր տեղ դուս բերեց։ Էս անզգամ պառաւը բիլբուլի վըէն բարկացաւ, ուզեց չնլինք քաշեր։ Խանըմ ասաց.

—Դէ, իմ բիլբուլին բան մի ասի, ինչ կասի, թըղ ասի։

—Խանըմ, ասաց բիլբուլ, կեամուչին առաւ կնիկը, տարաւ. քաղաքին մօտացաւ. կեամին կայնացրուց, ասաց. «Այ ախքատ կնիկ, տանեմ քըզի առնեմ»։

Ասաց. «Ինչու, աղքատ եմ, ինչ, ես գէշ եմ, գնա, քըղի բաբեկամ չկայ, մու, արի, ընձի պատիւով տար»։

Կեամուշին վեր կացաւ, գնաց իրա տունը. իրան մարդ, բաբեկամ թօփ արաւ. դափ ու զուռնայ վեր կալեց, գնաց ուր կնկան վեր կալի, բերի։ Գնաց որ ոչ կեամի կայ, ոչ կնիկ, փոր փօսման մնաց մըկըռտալով, լալով։ Խանըմ, ասաց բիլբուլ, ոնց որ կեամուշին փօսման էլաւ, դիւ էլ կըալխս, մի գնար էդ պառաւի խետ։

Խանըմ էկաւ, չորեր խանեց, նստեց.—Գնա, չըմ իգայ, ասաց։

Պառաւ վեր կացաւ, գնաց տունը. Թագաւորի տղէն էկաւ, ասաց.—Ձի բերեցի՞ր, ինչու ընձի կը խափես։

—Ասաց.«Խնդրումեմ, ընձի մինթանայ, կար ունեմ, կարեմ, էգուց կըգամ։

—Պօլ չէլաւ ընձի խափիս, քու չնլինք կը կտրիմ։

Սերպանդ պառաւն էր, իրան նան անծուխ քսեց, կապըռտացրուց, գնաց մտաւ նեքսև, ասաց.—Քուրը աղջի՛կ, Աստըծու սիրուն ըլի, էնքան իմ տղէն ընձի տփեր ա, «առանց իմ մօր քուր աղջկան չեմ պսակուիր» ասըմ ա։

Կնկան խելքն էր, որ մըկտաց, էլի էլաւ, իրա չորերը խագաւ։

Կնիկ դռան վերէն խասաւ, որ պէտք է դիւռ բաց անի.—Խանըմ, յի՞ւր էս էթում, ասաց բիլբուլ, կաց՝ բանմ ասեմ. պա չես ասեր բիլբուլս սոված ա, ծարաւ ա։

Խանըմ տուեց բիլբուլին ջուր, կուտ։

Պառաւ մօտացաւ դըրա չնլինք կտրի, բիլբուլը պօռաց.—Ամա՛ն, խանըմ, էդի մի՛ թողէ ընձի մօտ։

Ասաց.—Դեն, պառա՛ւ, չմօտանաս իմ բիլբուլին։

Դարձաւ բիլբուլին.—Դէ՛, ասա, բիլբուլ, ասաց խանըմ։

Ասաց.—Խանըմ, չըս ասի, էն խեղճ բեասիպ կնիկ առանց մարդի, ծովի վրայ կեամին առաւ, ո՞ւր տարաւ, գնաց։

—Դէ՛, բիլբուլ, ասա՛, տեսնամ, ո՞ր տեղ գնաց։

—Գնաց, մէ Թագաւորի պատահեց.—ամա խանըմ, լաւ ականջ էրայ. էս Թագաւոր էս կնկայ բռնեց, կեամու միջից տարաւ. Թէ «քեզ պտի առնեմ», ասաց։ Էսի ասաց.—Ես քու լայեղի աղջիկ չեմ, բօշի աղջիկ եմ։ Թէ.—Հնար չկայ, ուզումես բօշի ըլես, ուզումես մըթրըպի ըլես, քզե պտի առնեմ։

—Ընձի խինգ օր ժամանակ տուր, ես քու ղարավաշներու խետ կան գեամ, նորէն գեամ։

—Էյ, խանըմ, ասաց բիլբուլ, էդ Թագաւոր քեառասուն ղառավաշ, մէկ կնիկ դըրեց խետ, կան էկան. գնացին ծովու ղռաղը։

Էդ կնիկ քեառասուն ղառավաշ. Թագաւորի կնիկը կեամու մէջ առաւ, գնաց։ Խինգ օր թամամեց. Թագաւոր էլաւ, կան էկաւ, ո՞չ

ղառավաշ կայ, ո՛չ կնիկ կայ, փոր-փոշման նստեց, ասաց.—Հեյ վախ-հէյ վախ, համ գնաց քառասուն ղառավաշս, համ գնաց կնիկս, համ գնաց էն կնիկ։ Շատ փոր փոշման էլաւ Թագաւորը. խանըմ, ասաց բիլբուլ. եթէ դու անգգամ պառաւի խետ գնացեր, փոշմանես, դու արի, մի՛ գնար։

Խանըմ բիլբուլի խօսքին ականջ էրաւ, չորեր խանեց.—Պառա՛ւ, դու գնա՛, ասաց։

Պառաւ վեր կացաւ. լաց ըլելով թողեց, գնաց.

Թագաւորի տղէն ասաց.—Պառա՛ւ. անգգամ պառաւ, ինչո՞ւ չբերեցիր։ Ուղեցաւ պառւու ֆելլե անի։

Պառաւ շատ աղաչանք էրաց.—Ընձի մի՛ սպանիր, էգուց անպատճառ կը բերեմ։

Լիս բացուեց. պառաւ վեր կացաւ, իրան քցեց խանըմի դուռը, թէ.—Աստըծու սիրուն ըլի, վեր կաց, գնանք. ընձի իմ տղէն էնքան ջարդեր ա. պտի սպանի։

—Պառա՛ւ, նենեամ, էնքան աղաչանք կանես. վեր կաց էթանք։

Վեր կացան, դուռը բաց արեց, պտի էթայ, բիլբուլը կանչեց.—Խանըմ, յիւր էս էթում, չես ասի. «կաց բարի, պտի էթամ»։

Պառաւ բիլբուլի վրէն բարկացաւ.—Անգգամ, պօլ չէլնե՛ւ։

Ամա՜ն, խանըմ, ասա պառաւին դէն էթայ։

Դարձաւ։—Խանըմ, մէկ բան պտի ասեմ, ասեմ ու գնա՛։

—Դէ՛, ասա, բէյբուլս։—Խանըմ, էս կեամու մէջ տղամարդ չկայ. պիրեցի յարմար ին. էս կնիկը առաւ էս քառասուն ղառավաշը՝ Թագաւորի կնիկը. ո՛ր տեղ գնաց։

—Ես ինչ իմանամ. ո՞ր տեղ գնաց, դու ասա՛, ո՛ր տեղ գնացին։

—Գնացին, պատասխան քառասուն ու էրկու հարամու. համա, խանըմ. լաւ ականջ էրայ. էս քառասուն հարամիք լցուեցին կեամու մէջը, քառասուն էրկու կնիկ դուրս բերեցին, ամեն հարամի մէկ ղառավաշ փախցրուց, իրա խամար հեռու կայնացրուց. էս ֆեասիպ կնիկ ինչ արաւ.—«էյ հարամիք, էդ ինչ էք անըմ, ասաց. դրուստ օր տղամարդ բաղդ չունի։ Էյ խանըմ, լսէ՛, էս ֆեասիպ կնիկ ինչ արաւ. կանչեց հարամու բաշուն, «ես ութ աւուր ճանապար քե խամար իմ էկած. դուք քառասուն ու էրկու հարամի էք, մենք էլ քառասուն ու էրկու յարմար ենք. ձի հարամու բաշին ո՛ր մէկն ա։ էն մէկն ասաց.—Ես իմ։

Ասաց.—Դու իմ մարդն ես, արի՛, իմ կշտին կայնի։

Ամեն հարամու մէկ ղառավաշ տուեց. բայց ասա, խանըմ, ինչ բաշուր տուեց մարդի։ Ասաց, «իմ իրաւունքով պտի ըլի, կը բերէք քառասուն տիկ գինի. կը բերէք տաս խատ օխչար, որ մորթիմ, խալանիք անեմ։ Համա խանըմ, ասաց բիլբուլ, լաւ ականջ

էրայ. կնիկն ինչ ա անըմ։ Էս ֆեասիպ կնիկը, էս Թագաւորի կնկան, դառավաճներուն ասաց.—Մէկդի ձեր մարդին չի մօտանէք. ամեն մարդ իրան մարդին գինի խմացնի. չըլիմ, չիմանամ դիւ խմէք։ Կը խմացնէք. պիրասի գինովացնէք. ընդոնց չորեր կը խանէք, խադնէք։ ասպապները կը կապէք։ ձիանք խեծնէք, որ ըս տեղէն փախնենք։ Խանըմ, լաւ ականջ էրայ. էկան օխչար մորթեցին. խալանխ արեցին, խմացրին, չորերը խադան. ասպապները կապեցին, խեծան. փախան։ Էն պառաւն ճարամիք էլան. տեսան ոչ չոր, ոչ ձիանք, ոչ ասպապ, ոչ կնանիք. չփլախ էն տե նստած էն։

Էդ կնանիք գնացին մէ յիւրիշ քաղաք դիւս էկան։ Էդ քաղքի Թագաւոր վաղճանած էր, դօվլաթ դուշի կայ, էսոնց կարգադրութուն էնպէս ա որ գցում են, ում գլխուն վեր գայ. կը դնին Թագաւոր։ Դօվլաթ դուշին գցեցին, էկաւ, իջաւ էս ֆեասիպ կնկայ գլխին։ Համա խանըմ, էս տեղի լօքիֆ-փօքիք ափեցին, քաղքից դիւս արեցին։ Էլի դուշը թալեցին, էլի քաղքից դիւս գնաց, նստաւ ընդոր գլխի վերէն. էլի պտի ջարդէն, հոգեվախ մարդիկ էկան, ասին. —Աստուած էս ա կամեցել։ Ընդունեցին.—Խանըմ, ասաց բըլբուլ, լաւ ականջ էրա. տես, ինչ ալաւ կնիկ. կանչեց էդոնց մարդեր, ասաց.—Վաքիլ-վազիր ինչ որ կայ, իմ մարդեր պիտի անեմ։ Պիրասի իրա մարդեր պախեց իրա մօտը։

Բերեց իրա պատկերը քաշել տուեց, աղբրի վրայ զարկել տուեց. թաճպիհ արեց, ինչ կանդար աղբուր ճկայ, փակեն. մնաց բաց էդ աղբուրը։ Բայց խանըմ, չասե՛ս, համ կեամուշին, համ իրա մարդը, համ Թագաւորը, համ քեառսուն ճարամիք. իրարու քամակից ման էին գալի։ Էկաւ էս կնկայ մարդը. քաղաքի մէջ ջուր չգտաւ, մարդի մէկ ասաց.—Հա, էն տեղ աղբուր կայ, գնա՛, խմի։

Գնաց, ջուր խմեց, աչքը ընկաւ պատկերքին, ախ քաշեց. դառաւլներ բռնեցին, տարան Թագաւորի մօտը. Թագաւոր դըրեց մէ լաւ օթախ, մէկ դառավաճ դրեց մօտը. օրերից մէկ օր կեամիճին էկաւ, էնպէս ջուր խմեց, ախ քաշեց, էն էլ դրեց մէկ մութ օթախ. խաց, ջուր չտուեց։ Խանըմ, չես ասի, խեղճ ճարամիք ինչ էլան, առանց չորի, տկլոր։

Էնդընէ էտե քեառասուն ճարամիք էկան. ընդոնք էլ ջուր խմեցին, պատկերը տեսան, ախ քաշեցին, էնոնք էլ բռնեց։ Թագաւորն էլ դերվիշ ղըլըղինեա էկաւ, էն էլ բռնեց։

Խանըմ, ասաց բըլբուլ. տես, ինչ դատաստան պտի անի։

Էս կնիկ մէկ մէկ խարցուց, էդ ճարամիք ասացին,—Մեր մէջ քեառսուն էրկու յարմատ պատահեցան, մենք թամազու (կարօտ) էնք, կին չունէնք, մեզի կին առինք, մեզի խափս տուեցին. մեր բաներ առան, տարան։

Թագաւորը հրամայեց ձի, ասպապ ու չորեր տան ուրանց. ամենքին էլ չորս խարիր մանէթ տուեց, որ էթան, պսակուէին։

Համա խանըմ, կանչեց Թագաւոր բերել տուեց, խալցուց,
—Դիւ Ցլանն քաղքի Թագաւոր իս, խի դարվիշ ըղըրղնտա իս։

էն էլ պատմեց իր գլխից անցածը։

Կանչեց, ընդրա կինը բերել տուեց.—Կը ճանչնա՞ս, ասաց. մո՛ւ, գնա։ Համա դառավաճներ չգացին։

Կանչեց կեամուչուն, կեամուչին ասաց.— Մէկ կնիկ ունէր, առաւ իմ կեամին, փախաւ։

—Քու կնիկն էր թէ քու սիրող։

Ասաց.—Վալա, իմ սիրողնէր։

—Մարդ ունէր թէ չունէր։

—Մարդ ունէր, ասաց։—Որ ունէր, խի առեցիր։

—Կեամուն փող էն. տալի։

Կանչեց էրկու ջալաս, գլօխը զարկին։

Կանչին էն կնկայ մարդին։

Խանըմ, ասաց բիլբուլ. դու տեսար էն կնիկ քանի մարդիւ ձեռք ընկաւ, չխափուաւ, գիւ էգա փիս պառուու մէնէ խափուեցար։

—Պառա՛ւ, ե՛լ, գնա, ասաց։

Խանըմի գլուռ տփեց՝ իրա մարդը։

Պառաւը փախաւ, իրա մարդը մտաւ ներսև։

Կերան խման։

Բիլբուլի ղ։ինը խազար մանէթ էր։

34

ՇԵԽ ՍԱՏԻ

(Վաղարշապատու եւ Մոկաց բարբառով *)

Շէխ Սատի անուր մէ մարդ կըլէ, չկա՛րգուէ. ասէն-ասէն, էս մարդի խելքը գողացան վազիրն ու նազիրը. էն խօսք տուեց.—Ի՞նչպէս կարգուիմ, ասաց, էնպէս աղջիկ պտի առնիմ օր խում կաթ ուտող չըլէ։

* Պատմած է Նարադարձ Մկրտիչ-Կուլյան։

—Ինչպէս անենք, էփած կաթ ուտող գանենք, ասին։

Ընկան աշխար ման էկաւ. մէկ ճասիպ կնիկ անճար ու աղքատ պառաւից (ծնաւ), մէ աղջիկ բերեց, չթողեցին իրա մօր կաթ ուտէր. տուեցին փարի զօռը, բերեցին, տարան տուեցին Շէխ Սատուն։

Շէխ Սատին բերեց, գեղրունքով էդ աղջկան պախպանեց։

Օրից մէ օրը 15 տարեկանը լմացաւ, բերեց կարգեց իրա վերէն։

Սատին քեառուռուն ասեճ մէ տուն չինեց, ասաց.—Իմ յարմատ (կին) դիւս չկայ, յաչք չգցի մարդի։

Դռներ վերէն փակեց, ալ-ղուշ անելու կերթէր։

Կամ մէ տարի, կամ էրկու տարի եօլա գնացին։

Օրերից մէ օրը էկաւ ճհելի մէկը փիճճերի տկով գնաց. մտիկ տուեց, մէ շատ սիրուն-գեղեցիկ կնիկ փիճճերի մէջ նստած ա, ասաց.

—Էս կնիկ իմ կնիկ ըլէր, ես աւուր խացի կարօտ ըլէր։

Իրա մտքի մէջ ասաց, ընցաւ։

Բայ ինչ ասես, էս կնիկն էլ վերեւից սիրտ խարապ էլաւ ասաց.—Ա՜խ, էս մարդը ճեշկայ իմ մարդը ըլէր։

Էս մարդը գնաց, մէ ճասու պառաւի քուշ էլաւ, ասաց.

—Նանէ՛, դու սըռի կողմանէ ինչպէս իս։

Ասաց.—Ինչպէս որ պտուկ եռայ, խուփը բերնին պուղը դուս չգայ, ես էնպէս իմ։

Խանեց տաս օսկի տուեց պառաւին, պառաւ ուրախացաւ։

—Նանէ՛, ասաց տղէն, կարծես ընձի տանես էն կնկայ մօտը։

—Իմ փեշեկլիս անունը ինչ ա, ասաց պառաւը։

Մէ խատ դիւլկեր բերել տուեց պառաւ, ասաց.

—Ի՞նչ տամ քե, մէ խատ ղուքի շինես էս պօյին, էս չափին։

Պառաւը մէ օսկի տուեց, դիւլկերը ղուքին շինեց։

Բերեց տղէն դրեց միջին, տուեց խամալի ճալակ, գնաց։

Էս ճասու պառաւ ինչ արաւ. թեզպեխ բռնեց ձեռը, ասաց, «տէր օղորմեայ, տէր օղորմեայ» ու գնաց. Շէխ Սատու դռան կայնեց. դիւռ փակ էր։

Շէխ Սատին ճեճրից էկաւ, տեսաւ մէկ պառաւ մ՝ դռան կայնած ա։—Նանէ՛, ասաց. դիւ ինչ կնիկ իս։

—Ես կերթամ Էրուսաղէմ, քե պախպան կենայ, մէ քիչ ամանաթ կայ, քե պախ տամ։

—Պառաւ, տեղ չկա. մէ տեղ քցի, թող էրթայ։

—Դի՛ւ, քու յարմատը դո՞ր կը քնիք, էն տեղ պախի։

—Տա՛ր էն օքախը որ ես իմ յարմատը պառկումենք։

Տարաւ, էն օքախի մէջ դրեց. ինք թողեց, գնաց,

Աղօթարան բացուեց, Շէխ Սատին էլի գնաց Ճեճիր։

Էս տղէն ղուքու մէջ խաղաց։

Էս կնիկ ասաց.—Իճս էս, ճըճս, էս, արճ, ես կտոր, կտոր կըսմ։

Տղէն դո՛ւս էկաւ, կնիկ տեսաւ իրա տեսած տղէն էր, փաթաթուեցին իրար, քեֆ ուրախութեան արեցին։

Մէկ օր, երկու օր վրէն ընցաւ. Շէխ Սատին չգնաց Ճեճիր, ընկաւ քամակի վրէն ու պառկեց. տեհաւ օճօռքի վրէն մէկ թուք կախ ընկեր ա պատից, չորացեր ա։

Շէխ Սատին շատ գիտող էր, ասաց իրան-իրան-։

—Էս թուք ես չիմ թքիր. իմ կնիկ վերև չկարայ թքի, վերև աղամարդիկ կը թքեն։ Գնաց օտաց ճանապար, մօտիկ տուեց որ տղայ մարդի ջըվէթ կայ.—Հայ վա՛խ-ճայ վա՛յ, ասաց, իմ կնիկ խարապ էլաւ։ Լի՛ս չընկաւ հեչ. իրա մտքի մէջ պահեց։

Կնկայ չորս, խինգ աւուր խաց տուեց, դռներ փակեց, գնաց։

Գնաց, մէ չոլ դաշտի մէջ մութ կոխեց դրա վերէն. մէկ չինարի ծառ կար, իրաւ ձին պխաւեց. ինք վեր կացաւ, չինարի վերէն նստեց։ Գիշերուայ վախտին մէ ծանտր բազրկեան էկաւ, էդ չինարի տակ իրա բեռներ թափեց, իրա . . տաւար, ձիանք. դեվեքը տարան պախելու. մնաց բազրկեան բաշին։ Իրա ճեպից խանեց բուքունճի ղութին, որ ափսունճեց, ղութուց մէկ խատ կնիկ դուս էկաւ, որ կնիկ դուս էկաւ, բազրկեան բաշին քնեց։

Էս կնիկ մէ խատ քնոյ ուլինք դրեց բազրկեան բաշու ականջը։

Կնիկն ա. իրա ծամերու միջից խանեց մէ կապոց, ափսոնճեց. որ ափսոնճեց, կապոցի միջից էլաւ մէ խատ ճեճել տղայ. իրար խետ կերան, խմեցին, քեֆ արեցին։

Էլի էդ կնիկ էդ մարդ դրեց կապոցը ու դրեց ծամերու մէջ, քնոյ ուլինքը բազրկեան բաշու ականջէն խանեց. էն կնիկ իրա մարդու խետ խաց կերաւ, պրծաւ։ Էլ էս մարդը դրեց ղութու մէջ, դրեց ճեպ։

Ձէն տուեցին իրարու, իլխըքը բարձեցին, գնացին։

Շէխ Սատին իրան ձին բերեց, խեծաւ քամակից, բազրկեան բաշուն խասաւ։—Բարի լուս քե, պազրկեան, ասաց։

—Աստըծոյ խերն ու բարին, դու ինչ մարդիս, դո՞ր էս էթըմ։

Ասաց.—Ստամբօլայ քաղաք Շէխ Սատու տունը։

Ասաց.—Շէխ Սատին ես իմ։

Ուրախացան իրար վրէն, գնացին Ստամբօլայ քաղաք դուս էլան։ Շէխ Սատին քեառուսուն ատենի դռներ բաց արեց, դանկեր բաւեց նեքսև, գնա՛ց կնկան բամպեխ էրաւ, ասաց.

—Կնի՛կ, վեց մարդի խաց խազրի։

Կնիկ էլաւ վեց մարդի խաց խազրեց։

Էկաւ յիրկուն, ճրագ կպոցը վախտը նստաւ խացի վրայ իրեք մարդ։—Կնիկ ասաց.—Դիւ ասիր վեց մարդու խաց խազրէ, մկայ իրեք մարդ կայ։

—Բան չկայ, կնի՛կ, հիմի կգան։

Շէխ Սատին դարձաւ՝ բազրկեան բաշուն։

—Բազրկեան բաշի, իմ քիրը սոված կըլլի. խա՛ն, կտորմ խաց ուտի։

Բազրկեանը չչկռեց—Ի՞նչ քիր, ի՞նչ կնիկ, ի՞նչ բան, ասաց.

—Խնդրեմ, խան-խան, ասաց։

Զօռեց, խանել տուեց։

Ասաց.—Քիւրի՛կ, ահա, էն գդալ քե, էն քարղան քե, նստի իմ կողքին, կե։

Էդ կնիկ նստաւ որ խաց ուտէր, Շէխ Սատին ասաց.

—Քիւրիկ, խան էն կապոցի միջի մարդը, խաց ուտի, անօթի կըլլի. ճճել տղայ ա, մեղք ա։

Զօռեց-զօռեց, դիւս բերեց, ասաց.

—Տղա՛, էն քարղան, էն գդա՛լ քե, ղարիպ մարդիս, նստի. կե։

Դարձաւ իրա կնկան։

—Կնիկ, ասաց. էն թուքը որ էն տեղ չորացեր ա, նրան էլ բեր, խաց ուտի, մեղք ա։

Կնիկ ուրացաւ, ասաց.—Այ մարդ, ի՛նչ թուք, ի՛նչ բան։

Շէխ Սատին վեր կացաւ, դուքու դիւռ բաց արեց, ասաց.

—Հարադա՛շ ջա՛ն, արի՛, նստի իմ կողքին. մկայ դզուեցինք վեց խոգին. խա՛ց անուշ արէք։

Էլ խա՛ց կուլ կեթայ, մացին սառած։

Շէխ Սատին ասաց.—Պազրկեան, էս մէկ իմ կնկայ, էս մէկէլն էլ քիւ կնկեայ սիրողն ա, որ մենք խաչ ուխտարանով պսակուած ինք, մի չեն սիրըմ մի կնկտիք, էսոնց ին սիրըմ. արի՛, դէյմից չըլլինք. դիւ բեր քիւ մալ, իս էլ իմ մալ բաշխինք էն մարդոց, էրթանք դօր օր անդարց տեղ կայ։

Իրանց մալ բաշխեցին իրանց կնկայ սիրողքերուն. իրանք վե՛ր կացան, գնացին։

Շատ ու քի՛չ գնացին, տեսան որ մէ մարդ մէ մեշի միջից դիւս էն բերըմ, քառսուն փաճլիւան ընկած ա էն կողք, քառսուն յարմատ ա ընկած էն կողք, չըն թողնի էս մարդու փէշ գետին առնի սրբու պէս։

Շէխ Սատին ասաց.—Էս մարդ անդարց ի մեք էլ էրթանք փեշից բռնենք որ անդարց ըլլենք։

Ամեն մէ փեշից բռնեցին, առան բերին տունը։

Տեսաւ որ սեղան փռուած ա, Աստուած ինչ որ տեղծեր ա, սեղանի մէջ կայ։

Էն մարդ գնաց, սեղանի գլօխ նստեց։

Ամեն փաճլիւաճ իրա յարմարը առաւ, սեղանի վրէն նստեց։

Շէխ Սատին նստաւ դռան քամակը։

Խացը կերան, պրծան ինչուան ժամերու վախտ, մութ կոխեց։

Ամեն մարդ առաւ իրա կնիկը, էս մարդու գլօխ տուեցին, գնացին։

Մնաց վերջը մէ արաբ. մէ չատ սիրուն յարմար, գնացին մեծ մարդի գլօխ տուեցին ու գնացին։

Էն մեծ մարդը «ախ» քաշեց։

Որ ախ քաշեց, Շէխ Սատին բազրկեաճին պըկեց, ասաց.

—Սրա դարտը մեր դարտից չա՛տ ա, խե՞ ախ քաշեց։

Էս մարդը դարձաւ, սրանց ասաց.

—Ի՞նչ մարդ էք, գնացէք մէ տեղ գտէք։

—Մենք ղարիպ մարդ ինք, տեղ չունինք, գիշեր պտի պախես։

Մնացին մինչև քնելու։

Շէխ Սատին քաշեց թուրը, գնաց գլխի վրէն կայնեց, ասաց.

—Այ մարդ. ինչ դարտ ունիս, ընձի ասա։

—Ընձի դարտ չունեմ, ընձնից վաղն արի, ասաց.

—Քու չնլինք կը զարկեմ, որ չասես։

Ասաց.—Նստի, կասեմ։

—Ընձի աշխրքի վրէն չատ սիրուն կնիկ ունէր, էդ կնիկ չատ անճար խիւանդացաւ, ասի. «այ կնիկ, սիրտդ ինչ ա ուզըմ, բերեմ. այ կնիկ, ղուրբաճ։ Ասաց.—Խի էս ղուրբան ըլըմ, էգուց կը մեռնեմ. մէկն էլ կը բերես։ Ասի՝ էրկինք, գետինք, Աստուած վկայ ըլի, քեզնից սավայի յարմար չառնեմ, չպսակուեմ։ Շատ միտք արի, չըլի թէ յարմարս մեռնի, ես իմ ուխտ չկատարեմ. բռնի . .օթս կտրեցի։ Իմ յարմար լաւացաւ. մէկ տարի, էրկու տարի իմ կնկան մօտ չգացի. իմ կնիկ ասաց.—«Իիւ կնիկ ես իմ մօտ չըս պարկի։ Ես էլ ասի այ կնիկ, պաս իմ պախի, ուխտ իմ էրի։

Էկաւ իմ կնիկ ընձի վրայ, իմացաւ։

—Կնիկ, ասի. քեառասուն փաճլիւաճ ունեմ. որ մէկ կը սիրես, գնա մօտ, մա՛րդ մեր սըռը չիմանայ։

Իմ կնիկ ինձ ուչունց տուեց. իմ Նամուս գետնով տուեց, գնաց էս սև արաբին առաւ։

Շէխ Սատին ասաց.—Պազրկեաճ, էլի մեր կնիկ, էլի մեր կնիկ, սրա դարդը մեր դարդից չատ ա։

Վեր կացան, գնացին. իրանց կնանիք առան, նստան։

35

ԱԲՐԱՀԱՄ ԱՌՈՒՏՈՒՐԱԿԱՆ

(Վաղարշապատի բարբառով *)

Կար ժամանակով մի քաղաքում մի սովդաքեար մարդ, էդ մարդ աշխարքում ինչ դար քաղաք կար, կեթար սովդաքարութուն անելու։ Ամեն քաղաքներու մէջ ճանաչնիր ունէր. էդ մարդին ունէր մէկ տղայ, տղէն ասեց.Էս ղդար որ էթում էս առուտուրի, հմի ինձ էլ տար, ես էթամ։

Ասեց.—Դու ջահէլ էս, չես կարայ էթայ, քու էթալու ժամանակ որ ըլնի, ես կը ղրկեմ։

Ասեց.—Անկարելի ա, պտի էթամ։

Ասեց.—Որ պտի էթաս, ո՛ր տեղ իմ անունը տաս, քեզ կընդունենն։ Էդ մարդը տղի հըմար քառասուն ղաթիր առաւ, քառասուն բեռն էլ բռնեց. վեց հատ նոքար տուեց, բեռները բարձեց ու ղրկեց դըպա Ստամբոլ։

Գնացին հասան ծովի ղրաղը. քառասուն բեռն էլ, ղաթիրներն էլ դրեցին կեամու մէջ. իրանք էլ նստան իրանց բեռների մօտը։

Երկու օր ծովի մէջ ճանապար գնացին. երկու օրէն ետը Ֆուռթունեն վեր կացաւ. իրեք օր տակ ու վիրև արեց ծովը, կեամին տարաւ, տուեց մի քարի, հազա՛ր կտոր արեց։

Ապրանքը, ղաթիրները, մարդիկը պիրեդի լցուան ծովը, հեղդուան։

Ընդըրա Նօքարների մէկը մի տախտակի վըրայ մնաց. լափինը տալով բերեց էս դին հանեց։

Վեր կացաւ, էկաւ տուն։

---

* Պատմած է Առաքէլ Ղրիմեան 19 տարի գիշերապահ եղած է վանքի մէջ, 55 տարեկան է, գիտէ շատ հեքեաթներ. շատ վարժ է պատմելու. մօտ 100 հեքեաթ գիտէ, սովորած է Վաղարշապատի մէջ. ինքը եւս պատմած գիւղի օթախներու մէջ. Մակար կաթողիկոսի հանի Յակոբի մօտ միշտ "հեքեաթ ասած է՝ զբաղեցնելու համար:

Աղէն ասեց.—Այ տղա՛, խե՞ է կար։

Ասեց.—Աղա՛, էլ ինչ ասեմ, փողն էկաւ մեր գլխին։

Ասեց.—Որդի՛, ասա՛. տեսնանք ինչ ա էլե։

—Աղա՛, ըս դխան վեր կացանք, գնացինք ծովի ղրաղը, նըստանք Կեամին, գնացինք էրկու օր ծովին մէջը. էրկու օրէն նառոյ Ցրբուճէն վեր կացաւ, իրեք օր ծովը տակու վերև արեց. տուեց քարափին. հազար կտոր արեց, քու ղաբիրներն էլ հեղդուան, տղէդ էլ հեղդուաւ, մեր նոքարներն էլ հեղդուան, մեր հետ չառերն էլ կային, ընդոնք էլ հեղդուան. ես մնացի մի տախտակի վրայ, ծովի լափինը տուեց, հանեց էս էրէսը. ես էլ վեր կացայ էկայ, քե խապար բերեցի. էդ բանը որ էլաւ, աղա քաղաքի մարդիկը լսեցին, մաճալի մարդիկներն էլ լսեցին, էդ մարդը երևելի մարդ էր, քոմմա էկան ըդրան գլուխ սաղութուն, իրեք ամիս ըդրա էթող գալոգը չկտրուաւ։

Խապարը տանք ըդրա տղիցը, ըդրա տղէն էլ տախտակի վրայ մնացեր ա. լափինը տուեց, տարաւ հանեց Սպահան. դուս էկաւ չորը, գնաց Սպահանու քաղաքի մէջը։ Ջաճել տղայ, սոված մնացեր ա ծովի էրեսը, որը սովածութինը, որը ահը։ Ասեց.—Ինչ անեմ. փող չկայ ձեռիս։

Գնաց մի փունչաւ դուքանի առաջ կաղնեց. տեսաւ էդ փունչին հաց ա ծախըմ. առաւօտուանից մինչև ճաշ կաղնեց, էդ փունչին հաց ծախելուց պրծաւ։ ասեց.—Այ տղա՛, խի էս կաղնէ ըտի, ոչ հաց ես ուզում, ոչ բան էս ուզում։

Ասեց.—Ես սոված էմ, փող էլ չունեմ հաց առնելու։

Ասեց.—Ըս տե ցօֆարութուն կանե՞ս։

Ասեց.—Խի՞ չեմ անի, հաց տուէք, կանեմ։

Փունչին իրա ցօֆարներին ձէն տուեց, էկան, ասեց.—Էս տղին տարէք, հաց տուէք թո ուտի, մէկ բանի կը դնէք։

Տարան, հաց տուեցին, կերաւ։

Ասեցին.—Հաց կերաւ, պրծաւ։

Ասեց.—Մի բանի դրէք, թո աշխատի։

Ասեցին.—Խմոր ա, չի կարայ անի. ջուր ա, չի կարայ բերի, ցախ ա, չի կարայ ջարդի. ֆիւլ ա, չի կարայ թափի։

Էկան, ասեցին.—Աղա՛, ինչ բանի դրեցինք, էս տղէն չի կարում անի։ Ասեց.—Կանչէք, գայ ըս տի։ Էկաւ։ Ասեց.—Իսկի դու ցօֆարութուն չես արե։

Ասեց.—Չէ՛, ես զաս չեմ արե, մեծ սովդաֆեարի տղայ եմ. մեր դուքանը կար տասը-քսան ցօֆար. ես աղավարի ման կգայի։ Իրա գլխի էկածը էդ մարդին պատմեց, ասեց.

—Ըս տե մի սովդաֆեար կայ, եփոր էթայ՝ քեզ հետը կը տանի։

Վե կալաւ իրիկունը էդ մարդին, տարաւ տունը։

Դուռը ծեծեց. Նօքարների մէկը դուս էկաւ՝ ասեց.—Աղէն տանն ա։ Ասեց.—Տան ա։

Ասեց.—Ֆլան փունչին պտի գայ, քեզ տեսնի։ Ասեց.—Թո գայ։

Փունչին տղին վե կալաւ, գնաց ներսև, բարև տուեց կաղնեց, ասեց.—Աղա, էս տղէն ղարիբ տղայ ա, էկե մեր փուռը ոչինչ բան չի կարում անի։

Սովդաքեար հարցրեց.—Դու ինչ տղայ ես, որդիան ես։

Ասեց.—Աղա, ես Երևանցի եմ։

—Որ Երևանցի ես, ո՞ւմ տղէն ես։

—Աբրահամ սովդաքեարի տղէն էմ ես։

—Որ դու Աբրահամ սովդաքեարի տղէն ես, Աբրահամ սովդաքեար իմ ախպէրն ա, ինչ պատճառով ես էկե, ըստեղանք ընկե։

Ասեց.—Աղա, ես իմ հօրիցը խնդրուեցի, ինձի ղրկէց առտուրի. առաջին չէր ուզում ղրկէր, ես զօռեցի իրան, անպատճառ ասեցի, պտի ղրկես. էլ իմ խաթրին չի դիպաւ. գնաց քառասուն ղաթիր առաւ, բեռները բարձեց ապրանք, վեց հատ Նօքար տուեց ինձ, ասեց. «տարէք Ստամբօլ, ծախէք։ Տարանք ծովի ղրաղը, լըցրեցինք գեամու մէջը ղաթիրներն էլ, ապրանքն էլ. ես էլ նստեցի. վեց հատ Նօքարն էլ իմ կշտին։ Երկու օր ծովու մէջը ճանապար գնացինք. երկու օրէն ետը Ֆրթունէն վե կացաւ, ծովը տակ ու վերև արեց, տարաւ, տուեց մէկ քարի, հազա՛ր կտոր արեց. ապրանքն էլ, ղաթիրներն էլ, Նօքարներն էլ. մեր հետ չատերն էլ կային, պիրադի ծովը լցուան, հեղդուան, ես մնացի՛ մի հատ տախտակի վրայ. ծովը լափին տուեց. բերեց, էս էրեսը հանեց. աղա ջան ես էդ պատճառով ընկեր էմ էս տեղ։

Ասեց.—Աբրահամ սովդաքեարն որ իմ ախպէրն ա. դուն էլ իմ ախպօր տղէն ես, ըստի իմ տղի՛ հետ ման կգաս. ո՛ր օրը քու սիրտը կուզի, էն օրը քեզ կը տանեմ քու երկիրը։

Երկու ամիս տղի հետ ման էկաւ, բիրդան մտածեց։

—Էս քանի՛ ամիս ա էկել էմ ըս տեղ, իմ ոչ թուխտ տանող էլաւ, ոչ խաբար տանող, չի իմանում թէ՝ սաղ ենք թէ մեռած. էս իրիկուն աղին պտի խնդրուիմ որ ղրկայ իմ երկիրը։

Իրիկուն էկաւ, նօթերը կիտեց ու կաղնեց։

Աղէն ասեց.—Ա՛, տղա՛, խի՛ ես նօթերդ կիտե. քեզ ճօ բան ասող չի էլի։

Ասեց.—Չէ՛, ընձի ո՛վ բան պտի ասի, փառք Աստծու, հացդ բօլ, Եմակդ բօլ, ուտում, խմում ենք, ման ենք գալի. ես մտածում էմ ըստե մնալը ընձի օգուտ չի, իմ հօրն ու մօրը աչքը ճանապար-

հի ա, իմ էթալն էն թամաշա անում. ես քեզանից շնորհակալ էմ. ինձ ճանապար քցա, էթամ։

Իրա տղին կանչեց, ասեց.—Օհանէս, արի ըս տե։

Էկաւ կաղնեց։ Ասեց.—Առաւօտը կերթաս պազարը, վաթսուն հատ ղարքիր կառնես։

Առաւօտը վեր կացաւ տղէն, գնաց պազարը. վաթսուն հատ ղարքիր առաւ. վաթսուն ղարքիրի բեռ շինեց. ապրանք բարձեց, կատաս հատ նոքուր տուեց, ասեց.—Տանես Ինձանից շատ բարև կտանես, Աբրահամ սովդաքեարին կասես. «էս ապրանքը քե փեշքեշ արեց Մինաս սովդաքեարը»։

Տղէն ընկաւ ճանապարհն ու գնաց։

Մինաս սովդաքեարը էդ միջոցը հիւանդացաւ. ընկաւ մեռաւ. տղէն մնաց մինակ. գնաց դուքանումը նստեց առուտուրի անելու։ Էրկու ջհուտ մտք արեցին, ասեցին.—Մինաս սովդաքեարը ճազր մեռել ա, մենք ըդըրա տղի գլուխը օյին հանենք. ըդըրա հէրը մեր գլուխը շատ ա օյին հանե։ Գնացին ըդըրա դուքանի առաջը կաղնեցին, հանեցին մի հատ հարըրանոց, ասեցին.—Էս խուրդայ, մեզ ոսկի փող տուր։ Ասեց.—Ըստե հարիր մանէթի ոսկի չկայ։

Ասեցին.—Մեք ըս տե կաղնենք, դու գնա, տանիցը բեր։

Վե կացաւ, գնաց դըպա տուն որ փողը բերի։

Էդ Ջհուտը մտաւ, դուքանի ղախլումը նստեց։

Էն մէկէլ ջհուտը տաս դուքանդարի աջ կողմիցը կանչեց, տասն էլ ձախ կողմիցը կանչեց. էկան քաան հոգի ըտե կաղնեցին, ասեցին.—Ի՞նչ ես ասըմ։

Հանեց ամենքին հարուր մանէթ փող տուեց, ասեց.—Որ Մինաս սովդաքեարի տղէն Օհանէսը գայ, ասէք դուքանը Ջհըտին ա։ Ըդոնք ամենը գնացին իրանց դուքանները նստան. Օհաննէսը էկաւ, ոսկիքը բերեց տանիցը, տուեց Ջհըտներին, ասեց.—Առէք ձեր հարուր մանեթի ոսկին։

Ոսկին առան, ըդըրան դուս արին դուքանիցը։

Դուքանի աժողութիւնը կըլլէր էրկու հարուր հազար մանեթի ապրանք։

Էդ Օհանէս ասեց.—Դու դուս էկէր, էդ իմ դուքանն ա։

Վե կացաւ Ջհուտը ըդըրան ծեծեց, ասեց.—Իմ դուքանը իմ ձեռիցը խլո՞ւմ էս։ Էդ Օհանէսը գնաց գանգատ։

Ասեց.—Մի Ջհուտ իմ դուքանս խլում ա։

—Դատաւորը մարդ ղըկեց, ասեց.—Գնացէք, էն Ջհուտին կանչէք գայ։ Գնացին, Ջհուտին բերեցին։

Դատաւորը հարցըրեց.—Ի՞նչ պատճառով էս ըդըրա դուքանը խլում։

Ասեց.—Ես զոռով չեմ խլում, իմ դուքանն ա։

—Մօնց իմանանք որ քու դուքանն ա, ասեց դատաւորը։

Ասեց.—Տասը մարդ ձախ կողմից կանչայ, տասը մարդ աջ կողմից, մօնց որ ասեն, մենք ղ՚ազուլ էնք։

Օհանէսին էլ ասեցին, դուն էլ ղապուլ էս։

Ասեց.—Ես էլ էմ ղապուլ։

Եասավուլը գնաց ու կանչեց։

Էկան կաղնեցին դատաւորի աղաքը։

Դատաւորը ասեց.—Գիտաք, ձեզ ընչի համար էմ կանչել։

Ասին չինք գիտում։

Ես ըդրա համար էմ կանչէ որ դուզ խօսաք. էս դուքանը Ջհըտին ա, թէ էս հային ա։

Ասեցին.—Հային չի, Ջհըտին ա։

Դատաւորը մօտացաւ մէ էրկու չափալախ տուեց բերնին, ասեց.—Կօրի՛, դուքան Ջհըտին ա։

Օհանէս ցնթեց, ընկաւ չոլերը։

Էդ Ջհուտը էկաւ, դուքանումը նստաւ։

Ջհուտները էկան, մասլահաթ արեցին. ասին իրարու.—Դուքանը առանք, էթանք կնիկն էլ, տունն էլ առնենք։

Էկան, դուռը ծեծեցին, կնիկը դուս էկաւ։

Կնկան ասեցին.—Էս օր բան լսե՞ր էս։

Ասեց.—Չէ՛, ի՞նչ բան կայ։

—Օհանէսը կումար հաղ արեց, դուքանը տարուեց. հմի էլ հաղ անըմ, տներն էլ տարուել ա, մնացել էս դու, քեզ էլ տարուի, ում ձեռը պտի ընկնես։

Կնիկը ասեց.—Բա ի՞նչ անենք ընդրա համար։

Ասեց.—Արե՛, էս ընկօրս առ, թօ տանը գայ, նստի. Օհանէսը որ կգայ. ասա, քու կնիկը չեմ. ըդրա կնիկն էմ։

Կնիկը Ջհուտին առաւ, ու մտաւ ներքեւ։

Ջհուտը ընկօր ասեց.—Դու քու մուրազին հասար, ես էլ իմ, ահա, ես էթում եմ։ Վեր կացաւ, գնաց։

Օհանէսն էկաւ, մտաւ տուն, տեսաւ մի ջհուտ իրա կնկայ կշտին նստած ա։

Ասեց.—Քօփօղլի Ջհուտ. էկերէք մէկդ իմ դուքանը առել էք. մէկդ էլ իմ տո՛ւնը առնէք. հասաւ ու տուեց ըդրան։

Ջհուտն էլ վեր կացաւ, ըդրան տուեց։

Իրար եախա բռնեցին. դըպա դատաւորի մօտը գնացին։

Ջհուտը ասեց.—Էրեկ ասըմ էր դուքանը իմն ա, էս օր էլ ասըմ ա տունը իմն ա։

Դաստաւորն ասեց.—Ումից իմանանք տունը քումն ա, թէ ընդրան ա։

Օհանէսը ասեց. իմ կնկանից իմացի։

Ջհուտին ասեց.—Դուն էլ ղապուլ էս։

Ասեց.—Ղապուլ էմ։

Ղրկեցին, կնկան կանչեցին. կնիկն էկաւ, կաղնեց դաստաւորի աղաքը. դաստաւորը հարցրեց.—Էս հայն ա քու մարդը չէ Ջհուտն ա։

Ասեց.—Էդ հայի երես ըսկի չեմ տեսել, իմ մարդը Ջհուտն ա։

Դաստաւորը երկու չափալախ էդ հայի բերնին տուեց, ասեց.—Մէկ էլ էդպէս բան քու բերնից լսեր էմ, չեմ թողայ քաղաքի մէջ ման գաս։ Իրա տանիցը դուս արեց։

Օհանէսի իյանը կտրուաւ. գնաց էլաւ համամի ֆիլճանչի։

Խապարը տանք Աբրահամ սովդաքյարի տղիցը։

Էկաւ, հասաւ իրանց քաղաքի դռանը, քաղաքիցը մէ մարդ տեսաւ, հետը բարովեց, ասեց էն մարդը.—Քու սալըղն ուրիշ եկաւ, հմի փառք Աստըծու, ողջ առողջ էս։

Էդ մարդը էկաւ դպա Աբրահամ սովդաքյարին աչքալուսէք.—Աչքդ լիս, տղէդ էկեր ա, հրեն՝ քաղաքի դռանը վեր ա դրե։

Վեր կացան մարդ ու կնիկ, գնացին աղաքը։

Գնացին հասան տղին, փաթըլթուան, աֆտա լաջ էլան, յետոյ ուրախացան. վե կալան, բերին տուն։

Սաղ քաղաքը լսեց որ էկեր ա տղէն։

Էկան ամենն էլ աչքալիսէքաւոր. գեղերն էլ էկան, մահալն էլ էկաւ. իրեք ամիսը աչքալիսէքաւորը աճճալս կտրուաւ։

Նոր տղին կանչեց աղաքը Նոքարին էլ կանչեց, ասեց.—Պատմէք. տենամ ինչ ա էլե։

Տղէն ասեց.—Նոքարը ինչ որ պատմել ա, դրուստ ա։

Հէրն ասեց.—Նոքարինը լսեր էմ, քունը պատմէ հալայ։

Ասեց.—Կեամու կտորը տարաւ Սպահան հանեց. դուս էկայ, գնացի մի փռնչու մօտ, ձեռս փող չկար որ հաց առնէի, ուտէի. փռնչին ինձ հարցրեց. «Խի էս կաղնե». ասեցի «փող չկայ հաց առնեմ, ուտեմ, սոված եմ». հաց տուեց, կերայ. իմ գլխի էկածը ըդրան պատմեցի, վեր կալաւ ինձ տարաւ Մինաս սովդաքյարի մօտը. ըտեղ էլ իմ գլխի էկածը պատմեցի. որ ասեցի, «ես Աբրահամ սովդաքյարի տղէն էմ,» ճանաչեց. գնաց վաթսուն ղաթիր առաւ, բեռներն էլ ապրանք բարձեց, տաս նոքար տուեց, ինձ ճանապար քցեց։

Աբրահամ սովդաքյար ասեց.—Շատ չնորհակալ էմ ըդուց, փոխարէնը ետ պտի տանք,

Տղին ասեց.—Գնա, ութսուն հատ ղաթիր առ։

Գնաց ութսուն հատ ղաթիր առաւ, ութսունն էլ ապրանք

բարձեց. մի տաս նոքար վեր կալաւ, իրա տղի հետ ընկան ճանապար, գնացին, դուս էկան Սղահան. հարցրեցին, ասեցին.—Մինաս սովդաքեարի տուն որն ա:

Ասեցին.—Մինաս սովդաքեարը մեռել ա. տղէն դուքանը ծախել ա մի Ջհըտի, տներն ու կնիկն էլ ծախել ա մի Ջհըտի, ինքն էլ էլել ա համամի քիւլհանչի:

Աբրահամ սովդաքեար ասեց.—Հէյ վախ, Ցալաք. ըդրա գլուխ ինչ բան ա էկե։

Իրա տղին հարցրեց, ասեց.—Կը ճանաչե՞ս դու Օհանէսին։

Ասեց։—Կը ճանաչեմ։

Ասեց.—Էթանք համամը։

Գնացին, տեսան՝ համամիցը դուս էկաւ քիւլը շալակին:

Տղէն ասեց.—Գնա՛, գթոցը վեր քցե:

Գնաց մէջքիցը վեր քցեց։

Օհանէս ասեց.—Հօ գիժ չես, գթոց վեր էս քցում։

Աբրահամ սովդաքեարը կանչեց, ասեց. Արի՛, արի՛։

Էկաւ։ Ասեց.—Դու ես Մինաս սովդաքեարի տղէն։

Ասեց.—Հա՛, ես եմ։

Ասեց.—Էդ ինչ ա էլե քու գլուխը։

Իրա գլխի էկածը պատմեց։

Վեր կալաւ, տարաւ համամը. ըդրան մի լաւ լեղացրեց, մի ձեռք փամուզ չոր կորել տուեց, հագցրեց։ Գնաց թագաւորիցը մի տեղ առաւ, տակը շինեց մաղազա, վերևը շինեց դուքաններ, դուքանների վերևը շինեց տներ, ապրանքը բերեց ու լցրեց, ասեց.—Որդի՛, էս քու մաղազէն, էս քու դուքանները, ըս էլ քու տները. քեզ պտի պսակեմ, նոր էթամ։

Ասեց.—Անկարելի ա, էն կնկանը մարիֆաթը տեսայ, չեմ պսակուի։

Ասեց.—Մենց չես պսակուի, մարդը առանց կնիկ չըլի. էն հարամ կաթ էր ծծե, որ էնենց բան արեց, ես քեզ հալալ կաթնակեր աղջիկ կուզեմ, որ քեզ ամենայն փորձանքից ազատի։

Օհանէսն ասեց.—Ես իմ քաղաքից աղջիկ չեմ ուզի։

Ասեց.—Ես կերթամ Շեխ արապի էլի մէջը. էնի իմ ախպէրն ա. ընդուց մի հալալ կաթնակեր աղջիկ կուզեմ:

Վեր կալաւ տղին ու գնաց Շեխ արապի էլի մէջը. գնաց Շեխ արապին գտաւ. բարև տուեց ու կաղնեց։

Շեխ արապն ասեց.—Հա՛, էս քանի տարի ա չես էրևում, ընչի համար էս էկե։

Ասեց.—Էկեր էմ քու էլիցը մի հալալ կաթնակեր աղջիկ ուզիմ իմ ախպօր տղին։

Ասեց.—Ինձ վաթսուն հազար էլ ունեմ, բա մի ճալալ կաթնակեր չըլլի՞ որ տամ: Հալա իրեք ախչիկ մեր տանը կայ. կանչենք իլ եքի մօտն էլ։

Մենծ ախպօր կնկան կանչեց Շեխ արապը, ասեց.

—Հարսի՛, քու ախչիկը հասեր ա, էդ ախչիկը ճալալ կաթ ա ծծե, թէ ճարամ ա ծծե։

Ասեց.—Շէխ արա՛բ, քու գլուխը վկայ, էդ ախչիկն որ փորս ընկաւ, գնացի տեսայ բազա հաց էն թխըմ. միտքս փոխուեց. մէ հաց վեր կալայ, կերայ. ճարամ կաթ ա ծծե։

Ասեց.—Դէ, կորի՛, աչքիցս հեռացի դու։

Մէկէլ ախպօր կնկան կանչեց, ասեց.

—Արի՛, հարսի, քու ախչիկ հասեր ա, մարդի պտի տամ. ճալա՛լ կաթ ա ծծե. թէ ճարամ։

Ասեց.—Շէխ արապ, քու գլուխը վկայ. որ ընկաւ էդ ախչիկը փորս, էկայ, մի բաղի կողքով անց էի կենում, աչքս ընկաւ հաւողին, միտքս փոխուեց. երկու ճիթ քաղեցի, կերայ։

Ասեց.—Կորի՛, էդ էլ ճարամ կաթ ա ծծե։

Կանչեց իրա կնկան.—Կնի՛կ, ասեց.—Քու ախչիկ հասեր ա. պտի տամ մարդի, ճալալ կաթ ա ծծե, չէ ճարամ։

Ասեց.—Շէխ արապ, մոնց ո ընկեր ա փորս, ընենց էլ կաթ ծծե։

Ասեց.—Աբրահամ սովդագեար, աչքդ լիս, իմ ախչիկ ճալալ կաթ ա ծծե, տուի քու ախպօր տղին։

Բերեցին, նշան դրին, պսակեցին։ Շէխ արապը իրա մալը կէս արեց, դրեց ախչկայ հետ բաժինք: Մի հատ այլուխ ունէր Շեխ արաբին, որ աշխարքի հետ չէր փոխի. էդ այլուխն էլ տուեց ախչկան. էդ այլուխի մարիֆաթը էն էր որ մարդ քցեր գլխին ղումար հաղար, կը տանէր, դատաւորի մօտ էթար, կը տանէր, գողի մօտ էթար, չէին կարայ մօտ գային։

Աբրահամ սովդագեար վեր կալաւ, գնացին Օհանէսին տները։

Ասեց.—Օհանէս ջան, քու հէրը էն լաւութունը արեց իմ տղին, ես էլ էս լաւութունը արի քեզ. մնաս բարի, ես էթըմեմ։

Էկաւ հասաւ իրանց երկիրը։

Օհանէսը քնած էր կնկայ ծոցին գշերը, էրազի միջին բիրսան վեր կացաւ, ասեց.—Հէյ վա՜խ, Ֆալաք։

Կնիկն ասեց.—Էդ ինչ ախ քաշեցիր։

Ասեց.—Էրազիս տեսայ որ հէրս սաղ էր, բեռները բերեց. թափեց դուքանի առաջը. ապրանքը քաշըմ ի դուքաններին մէջը. բիրսան վեր թռայ, տեսայ զաս չկայ. ըդրա համար ախ քաշեցի-ասեց կնկան, ինձ թող, մի անգամ էթամ առուտուրի։

Ասեց ուր էթաս, ամեն բան էլ ունենք, էթաս ինչ անես։

Ասեց.—Շէխ սարարի գլուխն որ կը սիրես, պտի թողաս։

Գնաց, լցցուն հատ ղաքիր առաւ, բեռները բարձեց, կնիկ այլուխը ճիբէցը հանեց, մարդին ասեց.—Էս Շէխ սարարի այլուխն ա կը կապես գլուխդ, ամենայն փորձանքից ազատ կը պահի. սաղ սա լամաթ կեթաս ու դուգաս։

Կապեց գլուխն ու բեռները քշեց, գնաց Հնդստան դուս էկաւ գնաց մի դուքան բռնեց, ապրանքը ածեց դուքանի մէջը. նստեց դուքանի աղաքը. մի ջհուտ էկաւ, կշտին կաղնեց, ասեց.—Էս սով-դաքեարը նոր ա էկե, խամ ա։

Բարև տուեց, ասեց.—Ո՛րդուց էս։

Ասեց.—Սպահանցի եմ։

Ասեց.—Ի՞նչ էս բերե։ Ասեց.—Ապրանք ա։

Ասեց.—Հմի մութն ա, առաւօտը կառնեմ, գիտամ պեզարած կըլլես, մի մի ղայֆա բերեմ, խմենք։

Մի մի ղայֆա բերել տուեց, խմեցին.

Ջհուտն ասեց.—Գինի էլ խմում էս։ Ասեց.—Կը խմեմ։

Կերան ու խմեցին. բերեցին, ճարդի էլ հաղ արեցին. սկսեցին փողով, ինչ տար հաղ արեցին, Ջհըտին տարաւ, Ջհուտն ասեց.—աշխարքում ընձի մարդ չէր տարե, էդ մոնց ա տանըմ, ըդըան մէ ճիլլա կայ։

Թամաշա արեց ըդըա սոու դլխին, էրեսին, տեհաւ գլխին մի այլուխ կապած ա, Ջհուտն ասեց.—Ըղըա չնորհքն էս այլըխի միջին ա։ Ասեց.—Խօ դու կնիկ չես այլըխ կապես, այլըխը դիր ջէբդ, հաղ անենք։

Այլըխը պօկեց, դրեց ջէբը, սկսեցին հաղալը։

Ինչ տար ապրանք ունէր, բիրադի տարաւ ջհուտը. բիրադի քաշեց իրան մաղազէն։

Ըղըա ձեռին հացի փող էլ չմնաց։ Ջհուտն ասեց.—Էթամ տենամ, հմի մեռելը ա կծկըծու։

Էկաւ, տեհաւ, ման ա գալի, հաղ ա սըըմ, Ջհուտն ասեց, Էնտար ապրանքը տարայ. հըմի հաղ էս սըըմ բա։

Այլըխը հանեց, ասեց.—Ըսոըա տէրը սաղ ըլի։

Ջհուտը գնաց փաշի մօտ դանդատ. ասեց.

—Փաշէն սաղ ըլի, Սպահանու մի սովդաքեար էր էկեր. գնացի. տեսայ, ըղըա հետ ճարդի հաղ արեցի, ապրանքը բիրադի տարայ. հմի այլըխը ջէբից հանեց, ասեց. «Ըսդըա տէրը սաղ ըլի, կանչա, տես, այլըխը ումն ա։

Փաշէն մարդ ղըկեց, էդ մարդին կանչեց. էկաւ, փաշի մօտ

կաղնեց։ Փաշէն ասեց.—Բու ջիբին այլըխ կայ, հանայ, տեսամ։ Այ-
լուխը հանեց։ Փաշեն ձեռիցն առաւ։

Ասեց.—էս այլըխատէրը քու ինչն ա։

Ասեց.—Իմ կնիկն ա։ Ասեց.—Արի՛, մի թուխտ գրայ, որ քու
կնիկը վեր կենայ, գայ։

Թուխտը գրեց.—«Կնիկ, իմ առուտուրը չատ լաւ ա. առանց
կնիկ չեմ կարում մնայ. էդ էրկու մարդի հետ վեր կաց ու արի»։
Տուին էրկու մարդի, ղրկեցին Սպահան։ Էդ տղին քցեցին դուքա-
խանեն։

Ըդոնք հասան Սպահան. ըդրա տունը գթան, թուխտը տուին
կնկան, կնիկը կարդաց, հրամայեց.—էս էրկու մարդին բռնէք։ Էր-
կու մարդին էլ բռնեցին։ Իրիկուն էրկու մարդին կանչեց, աղաքը
կաղնացրեց, խօսացրեց, ասեց.

—Արի՛, դրուստը ասէք, իմ մարդը ինչ բանի ա էն տեղ։

Մէկն ասեց.—Լաւ առուտուր անում ա։

Վեր կացաւ, մի էրկու չափալախ քաշեց, ասեց.

—Շան որդի, դու սուտ խօսացիր։

Էն մէկին կանչեց. ասեց.—Դու մոնց էս տեսե, չիտակ ասա։

Էն մէկ ասեց.—Քու մարդ դումար ճախ արեց, ապրանքը
բիրաշի տարուեց. փաշեն կանչեց. մի այլուխ էր մնացեր, առաւ
ձեռիցը, ասեց. «էս այլըխատէրը քու ինչն ա;» ասեց. «իմ կնիկն ա»։
Փաշեն քցեց դուքախ, թուխտ էլ տուեց։

Էդ ախչիկը իրա ճօֆարներին կանչեց. ասեց։—էս մէկին ինչ
որ դուզը խօսաց, իմ կերակուրից կտաք. էս մէկին էլ օրը մի դան
հաց կտաք։

Ախչիկը էլաւ, ձին նըլաւ, գնաց Շէխ արապի տունը, ասեց.

—Փեսէդ հաղ ա արի՛, ապրանքը բիրաշի տարուեր ա, այլուխը
ձեռիցը խլեր ա, փաշեն էլ ընձի ուզում ա։ Հըմի ինձ տուր քառա-
սուն ախչիկ։ Քառասուն ախչիկ իլի միջիցը կանչեց, քառասուն
ձեռք տղամարդի չոր կարել տուեց. քառասուն ձեռք ասպապ բե-
րեց. քառասուն ձի բերեց, չորերը հագցրեց. ասպապները կապե-
ցին, նըլան ձիանը, ասեց.—Ախչկե՛ր, ինչ հրամայեմ, ընենց կանէք։

Ձիանը քշեցին դըպա Հնդստան, որ քաղաքին մօտենում են,
խապար էն ղրկում —Թագաւորի տղէն գալիս ա։

Հասան Հնդստան. էրկու ձիաւոր ղրկեց, փաշին ասին.—Պատ-
րաստութիւնդ տես, թագաւորի տղէն էկաւ։

Փաշեն պատրաստութիւնը տեհաւ. թագաւորի տղի աղաքը
էկաւ. գլուխ տուեց ու կաղնեց, ասեց.

—Հնդստանու փաշեն դո՞ւ ես։ Ասեց.—Ես էմ:

Ասեց.—էս քու քաղաքը տեհայ չատ անկարգ էր։

Փաշէն տարաւ իրա տունը, վեր ըերեց, ըդոնց հաց քաշի[ց] տուեց. Փաշէն էկաւ, գլուխ տուեց օխտը անգամ, վրայ ուխտին կողնեց։ Ասեց.—Փաշա, քու ռոճիկը քի՞չ ա։

Ասեց.—Թագաւորութիւնը ողջ կենայ, խի՞ ա քիչ։

—Որ քիչ չէ, ասեց. դու թագաւորական մալը խի էս բերում, քու քաղաքում պահում։ Ասեց.—Թագաւորական ապրանք իսկի չեմ պահեր ես։

Ասեց.—Վեր կենանք, ման գանք։ Վեր կացան, փաշէն քցեց աղաքը. քառասուն ձիաւորըՙքամակը, ասեց.—Փաշա, որը մենծ մաղազա ա, ընձի ընտի տար։ Մէ երկու մաղազա ման ածեց, գա[նձ] չգտաւ. գնաց մտաւ էդ Ջհուտի մաղազէն։

Տեհաւ, ճանաչեց ապրանքը, ասեց.—Քաշէք դուս։

Ջհուտի ապրանքն էլ հետը քաշեցին դուս։

—Փաշա՛, ասեց, ըդրա գող էլ գտի։—Գողը բռներ էմ, ասեց.

Գնացին բերեցին, կողնացրին. ասեց.

—Քօփօղլի, Մինաս սովդաքեարի ապրանքը կերար, չկշտացար. թագաւորական մալն էր բերիր ըս տի։

Ասեց։—Փաշա, ըդուց մի այլուխ էլ էս առե, տուր։

—Հըրէ՛ս, ասեց. տուեց։

Ջհըտին ու տղին ապրանքը բարձին, էղաւ հինգ հարուր բեռ. հինգ հարուր բեռ էլ փաշից առաւ. էլաւ հազար բեռ, բարձեց, ընկաւ ճանապար. գողն էլ առաւ հետը. փաշին ասեց.—Թուխտ կը գրկեմ, ընենց ժաժ կգա...

Էկաւ Սպահան դուս էկաւ. ապրանքը քաշեց մաղազան, էդ Օհանէս ասեց.—Իմ կնիկ իսկի դուս չգալի։

Էդ թագաւորի տղէն Օվանէսին կանչեց վերև. ասեց.—Ըտե[ղ] նստի։ Թագաւորի տղէն մտաւ էն մեկել օթախը, թագաւորութեան չորերը հանեց, կնկայ չորերը հագաւ, գլուխը չինեց, դուս էկաւ Օհանէսի կուշտ, տեսաւ ահա, իրա կնիկն ա, ասեց.

—Պա էսքան ապրանք քաշենք նեքսև, դու խի՞ չերևացիր։

Ասեց.—Մի ամիս ճանապար ենք գալի, դու ինձ չի ճանաչեցի՞ր։

Մարդ ասեց.—Հալալ ըլլի քու կերած կաթը։

Ասեց.—Էն երկու տղին կանչէք, գան, որ թուխտ էն բերե։

Ինքն էլ փաշին գրեց.—«Իու. թուղթ իր գրեր որ ըդրա կնիկը գար, կնիկը էկաւ, իր ապրանքը հանեց, Ջհըտի ապրանքն էլ հանեց. հինգ հարուր բեռ ապրանք էլ քեզանից առաւ. դու ոչինչ չիմացար, իմացի որ էդ քավուր կնիկ էլ կայ։

Ըդոնք էլ հասան իրանց մուրազին։

36

ՀՕՐ ԻՐԵՔ ԽՐԱՏԸ

(Վաղարշապատի բարբառով *)

Կյար ժամանակով մի քաղաքում մի դուքանդար, երևելի մարդ, էդ մարդին մի հատ տղայ ունէր, էդ տղին կանչեց, ասեց.—Տղա՛, արի, իմ մահը մօտ ա, արի քեզ խրատ տամ, այ որդի, ասեց. հօր խրատ բռնող մարդուն չմնար. առաջին խրատս էն ա որ ժամը տան՝ ինչ բան ունենաս, կը թողես կերթաս քու ժամը. մէկ էլ ինչ տեղ ըլում ա, ըլի. որ տեղ մթնի, էն տեղ կը մնաս. վերջն էլ՝ ինչ ջուր կը տեսնաս, առանց վալասի անց չես կենայ:

Մի ժամանակ մնաց, հէրը մեռաւ. տղէն էկաւ, իրա դուքանը նստեց, մտիկ արեց տեհաւ որ իրա ընկեր կողքի դուքանչիքը պատրաստութուն էն տեսնում, որ էթան Թիֆլիզ. Գնաց, տղէքին հարցրեց.—Էդ ու՞ր էք էթում:

Ասեցին.—Էթում ենք Թիֆլիզ ապրանք բերելու:

Ասեց.—Ընձի էլ կը տանէք, ձեր հետ գամ:

Ասեցին.—Խե՞ չենք տանի, քու փողովը կգաս, մեր վրայ ծանրութուն չի. պատրաստուի որ առաւօտը գշերով դուս ենք գալի:

Դուս էկան, ընկան ճանապարհ, գնացին. գնացին, հասան Թիֆլիզ: Առուտուրն արեցին, իրանց բեռները բռնեցին, ընկան ճանապար: Իրիկուայ զանգերը քաշեցին. էդ տղէն իրա ընկորտանցը ասեց.—Տղէք, կաղնէք, բան էմ ասըմ: Ասեցին.—Ի՞նչ էս ասըմ:

Ասեց:—Իրիկուայ զանգերը քաշեցին, էթանք ժամ ու ժամուց դուս գանք, բեռները քշենք, էթանք:

Ընկերտանքը ասեցին.—Հօ գիժ չես. չարի էթանք ժամ, գանք, մէկ փօշ ճանապար կերթանք:

Էդ տղէն ասեց.—Իմ հօր խրատը չեմ կորցնի:

Ընկերտանքը բեռները քշեցին, գնացին. էդ իրա բեռները կաղնացրեց, գնաց ժամ. ժամից դուս էկաւ, իրա բեռները նոր քշեց. էկաւ էրկու օր, անճախ հասաւ իրանց գետան ղրաղը: Տեհաւ իրան ընկերտանքը կէսը ըսդին ա, կէսը ընդին ա. հարցրեց.

Ասեցին.—Հօղը էկաւ մեր գլխին, ընկորտանցից որը ջուրը տարաւ, որը հեղդուեցաւ. որը բեռները տարաւ:

---

* Պատմած է Վաղարշապատցի Առուէն Ղրիմեան:

—Էնենց մարդ չկար ձեզի անց կացնէր։

Ասեցին.—Ո՞վ ա տուէ ընենց մարդ, որ անցկացնէ։

Իրա Ճօֆարներին ասեց.—Բեռները վեր ածէք, ժաժ չգաք, չարի ես էթամ գեղ ու գամ։

Գնաց գեղը, հարցրեց.—Էս ջրին լաւ վալաս կըլէք. ով ա լաւ լեղւոր. ինձ ասէք։

Ասեցին.—Ըսաի մի տղայ կայ, լաւ լեղւոր ա։

Ասեց.—Էն տղին կանչէք գայ իմ մօտը։

Գնացին, կանչեցին. էկաւ. ասեց.—Ախպէր, ինչ էս ասըմ։

Ասեց.—Էս ջրին մենք վալաս չենք, ինչ էս ուզում որ էս ջուրը մեզ անցկացնես։

Ասեց.—Տեսնում էս, շատ մարդեր վնասուել ա, քանի մանեթ փող կառնեմ, կը անցկացնեմ։

—Դէ, արի, ասեց. քանի մանեթ կուզ, անցկացրայ։

Էկան, գետան ղրաղը կաղնեցին։

Ասեց.—Շորերդ հանայ, մտիր գետան մէջը՝ գնա, արի որ ճանփէն իմանանք, դէնը անց կենանք։

Մտաւ մէջը չորս անգամ գնաց էս ղրաղը, էն ղրաղը՝ ասեց. —Դէ, բեռները քշէք, ճանապարհը գթայ։

Բեռները քշեցին. սալամաթ անցկացան էս էրեսը։

Տեհան մի մեծ բազիրկեան ըդի վեր ա էկե. էդ բազիրկեան բաշին էդ տղին կանչեց, գնաց, ասեց.—Աղա, ինչ պտի ասես։ Ասեց.—Ըստե հազար մարդ վեր էն էկե, մէկը քու խելքը չունէր։

Դու որդուց էս։ Ասեց.—Ես Էրեւանցի էմ, վաղարշապատից։

Ասեց.—Այ որդի, ես էլ Գեանճեցի էմ. տեսնը՞մ էս իմ ապրանքը, քանի հազար մանեթի կըլի. որդի՛, քու ապրանքը քանի հազար մանեթի կըլի։ Ասեց.—Իմը էրկու հազար մանեթի ա։

Ասեց.—Դու իմ աչքին դիր էկար. կուզես որ իմ քանի հազար մանեթի ապրանքը քու էրկու հազար մանեթի ապրանքի հետ դնեմ, ընկեր անեմ քեզ. ես իմ մայեն վեր կալեմ, դու քու մայեն, ինչ որ դատենք, ճալալ կխենք։

—Աղա, որ ըդենց անես, ես շատ շնորհակալ կըլեմ քեզանից։

Լեղւորին ասեցին.—Արի, մեր բեռները անցկացրայ էն տիհը։

Ասեց.—Աղա, քանի մանեթ բարըշել եմ, անցկացնեմ ըս դիհը, հըմի էն գնով չեմ անցկացնի. տեսնըմ էս որ, արին ա բերըմ ջուրը։

Ասեց.—Որդի՛, անցկացրա, մի զաս էլ աւել կտանք։

Բռնեց, ամենն էլ սալամաթ անցկացրեց էն էրեսը։ —

Քսան մանեթ բարիշել են, ասեց.—Առ քե եռեսուն մանեթ։

Ասեց.—Շատ շնորհակալ եմ, բարի ճանապար ձեզ։

Գնացին, դուս էկան Գեանճուայ քաղաքի ղրաղը։ Էն տեղ մի

քար կար, անունը Ճալլեք ցաշի (անիծեալ քար) էր, բեռները էն քարի մօտ վեր քցեցին. բազրկեաճ բաշիճ մի հատ Թուխտ գրեց, ասեց.—Կը տանես իմ տունը, Թուխտը կտաս իմ կնկան, իմ կնիկը կը կարդայ, դուքաճի բանալիքները կտայ քեզ. կգաս, դուքաճը բաց կանես. մէջը կը սրբես, նստես ընտե, չարի ես կգամ։

Թուխտը վե կալաւ ու գնաց, հարցրեց բազրկեաճ բաշու տունը, գթաւ. Թուխտը տուեց բազրկեաճ բաշու կնկանը, կնիկը կարդաց, ասեց.—Ո՛ր տե վեր ա էկե։ Ասեց.—Քաղաքի դրաղը։ Էն սըհաքին էն կնիկայ աչք ընկաւ էդ տղին։ Բանալիքները տուեց տղին ու ձեռները՝ ռնեց հուփ տուեց, ասեց.—Այ տղա՛, դու աղամարդ չե՞ս։ Ասեց.—Ի՞նչ աղամարդ։

Ասեց.—Ես ի՛նչ որ ասեմ, դու ինձ լսես, ես քեզ լաւ կը պահեմ. քու աղէն էթում ա, էրկու տարով, իրեք տարով չի գալի. ես քեզ իմ ծոցին մէջը կը պահեմ։

– Չէ, խաճում։ Թող տու, էթամ, հըմի աղէն կգայ։

Ասեց.—Այ տղա՛, ի՛նչ վրաղ էթում ես. ինչ որ ասեցի, դու քան չհասկացար։

Ասեց.—Քու ասութունները ամենը ես հասկացայ. էդ բանի տէրը չեմ։—Որ տէրը չես, կորի՛, գնա։

Էդ տղէն էկաւ, դուքաճները հարցրեց, գթաւ, դռները բաց արեց. ասելը վե կալաւ, քամուզ սրփեց. ջուր բերեց. ջրջհանեց։

Տեհաւ աղէն էկաւ, ասեց.—Զօրանաս. լաւ էս արե։

Ապրանքը քաշեցին ներսև, պրծան։

Ասեց.—Այ տղա՛, դու առուտուր արա, ես էթամ, մի տուն գիպչեմ։ Գնաց տա՛ւն։ Կնիկայ հետ ձեռ բռնեց, բարևեց. ու նստաւ։

Կերան, խմեցին, քէֆ արին։

Էդ տղէն սկսեց առուտուրը։ Սաղ քաղաքը ըդըրա վրայ Թեք-ուաւ. մի իրեք ամիս մնաց։

Բազրկեաճի կնիկը ասեց.—Էն ինչ տղայ ա դուքաճը դրեր էս։

Ասեց.—Էրևանցի ա, ընկեր իմ արեր իմ հետ։

Ասեց.—Խի չես ղրկում տուն, տունը ճանաչի, էթայ, գայ.

Գնաց դուքաճը, տղին ասեց.—Գնա, տանը հաց կեր էս օր։

Տղէն էկաւ տուն, տեհաւ խաճըմը մի լաւ պատրաստութուն ա տեհե.—Դե՛, ասեց. բարև էս էկե, հազար բարև, ըտեղ նստի։ Նըստացրեց ու հացը քցեց, կերակուլ քաշեց, գինի դրեց. կերան ու խմեցին, քէֆները լաւացաւ։

Կնիկն ասեց.—Այ տղա՛, ես քե հետ պտի նստեմ ու կաղնեմ. իմը դու էս, ես քոն էմ։

Տղէն ասեց.—Անկարելի ա, չըլի քե պէս հալալն ըլի, ինձ պէտքը չէ։ Ասեց.—Իմ ձեռից չես պրծնի. ո՛ւր պտի էթաս ըսօր դու։ Ասեց.—Մի կտոր հաց տուեցիր, պտի ճարամես իմ վրայ։ Ասեց.—Որ ըդենց ա, ափսոս ա հացը ուտես, դէ՛ վեր կալ գնա։ դէ, եալլա։

Տղէն վե կացաւ, գնաց դուքանը։

Բազրկեանը հարցրեց.—Այ որդի՛, հաց կերա՞ր։

Ասեց.—Շա՛տ շնորհակալ էմ, օճաղդ հաստատ ըլի։

—Դէ, ասեց. նստի դուքանը, ես էլ էթամ, հաց ուտեմ։

Բազրկեան էկաւ տուն, ասեց.—Այ կնի՛կ, հաց բեր։

Կնիկը հաց բերեց, քցեց աղաքը. տեհաւ կնկայ նօթերը կի-տած ա, ասեց.—Այ կնիկ, քեզ ինչ ա էլե նօթերդ կիտեր էս։ Ասեց.—Չի կիտեմ, բա ինչ անեմ. դուն էլ գնացեր մարդ էս գտեր, քեզ ընկեր էս արե։

Ասեց.—Ինչ կայ, էդ լա՛ւ մարդ ա։

Ասեց.—Ոնց լաւ ա, գալու օրը ձեռներս բռնեց ու ճմռեց. ըս օր էլ էկաւ, հաց դըրեցի որ ուտէր, եախէս բռներ ա ճախ ու ճճախ էս բանը պտի ըլի. որ մէկ էլ էկեր ա տունը, ինչ օլիճ ասես, իմ գլուխ կը հանի։ Բազրկեան ասեց.—Որ ըդենց ա, էթամ դուս հանեմ, էթայ։—Դուս հանես, իմ անըմը կըտայ. Ասեց.—Բա ինչ անենք։—Քեզ փոքր դուքան ունես, փռնչուն թանգան ալա, գշերն որ էն տղին ղրկեմ, ինչ վախտ որ էկաւ, քցէք փուռը, թո վառի, վերջանայ։

Բազրկեան բաշին գնաց փռնչուն, ասեց.—Փռնչի։

Ասեց.—Համմէ, աղա։

Ասեց.—Գշերուայ կիսին ո՛վ կուգայ, կասի բանը պատրաստ ա, որ աղէն ասեր ա ձեզ։ Հենց կը բռնէք, քցէք փուռը, ո՛վ կըլի կըլի։

Գնաց դուքանըմը նստեց, ասեց.—Այ տղա՛. կեթաս փուռը, կասես, «աղէն ասըմ ա, էն բանը պատրաստ ա»։

Ասեց։—Շատ բարի, կեթամ։

Աղէն գնաց տուն, կնիկ ասեց թամզաճ ալի՛ր։

Ասեց.—Թամզաճ ալի՛։

Լսի դէմը վե կացաւ. ասեց յետացեր էմ, էթամ.

Գնաց, հասաւ փռի դուռը, դուռը չինած էր, մի քար վե կա-լաւ որ դուռը ծեծի, հէնց ժամի զանկը քաշեցին. ուսուլով քարը վեր դըրեց դռան աղաքը, ասեց.—Էթամ ժամը. գամ ու ասեմ։ Հօրը խրատը պահում ա։ Գնաց ժամ։

Բազրկեանի կնիկն էլ էթում էր ժամ. էկաւ, փռի դռնովը անցկացաւ, ասեց.—Փռնչուն հարցնեմ, տեսնամ. կատարեր է իրիկ-ուայ խօսքը։ Էկաւ, մտաւ փուռը, փռնչուն ասեց.—Իրիկուայ ասած խօսքը կատարե՞ր էք։

Փունչին ասեց.—Մօտ արի՛, տենամ ինչ էս ասըմ։

Մօտ գնաց, էլ չխօսացրեց, բռնեցին, կոխեցին փուռը։

Տղէն ժամիցը դուս էկաւ, էկաւ փունչու մօտը, ասեց.—Աղի խօսքը կատարե՞ր էք։

Ասեց.—Գնա՛, արխայիճ կաց, կատարեցինք։

Տղէն ետ դառաւ, էկաւ դուքանը բաց արեց, նստաւ։

Աղէն վեր կացաւ, էկաւ դուքանը. էկաւ, տեհաւ տղէն դուքանըմը նստած ա, ասեց.—Այ տղա՛, ախր ես քե բան թամպահ արի. գնացի՞ր փունչու մօտը։

Ասեց.—Գնացի՛, ասեցի փունչուն, «աղի թամպահ արած բանը կատարել էք». փունչին ասեց. «կատարել ենք»։

Էն աղէն վեր կացաւ, իրա մեղքն ասեց.—Բա լէրբը տղէցը թեզ ա գնացեր։ Վեր կացաւ. դպա տուն գնաց։ Տեհաւ կնիկը տանը չի, գնաց դպա փուռը, փունչուն ասեց.—Իմ ասածը կատարեցի՞ք։

Ասեց.—Կատարեցինք։

Ասեց.—Ո՞վ էր որ կատարեցիք։ Ասեց.—Քու կնիկդ էր։

Դառաւ յետ, գնաց դըպա դուքանը։

Գնաց դուքանը, տղին ասեց.—Արի՛ ըս տեղ, արի՛ դրուսթ ասա՛, էրեկ որ գնացիր տուն, ի՞նչ պատիւ առար։

Ասեց.—Պատւից շնորհակալ էմ, ամեն տեսակ բան էլ կար։

Ասեց.—Էդոնք թո մնայ, կնկանս ի՞նչ ասեցիր։

Ասեց.—Աղա՛, ես բան չասեցի, ինչ որ ասեց, քու կնիկն ասեց։

Ասեց.—Ինչ էր ասըմ։

Ասեց.—Աղէդ կեթայ. ամսով էրկու ամսով չի գայ, ես քունն եմ դու իմն էս. ես անկաչ չարեցի, թողացի, վեր կացայ, իմ վրայ բարկացաւ, ես էլ էկայ դուքան։

Ասեց.—Որդի՛, որ ըդենց ա, էլա եղօվը տապակուեց. արի՛ հաշիւ անենք, քու հաշիւն առ, Աստուած քու հետ, բարի ճանապար ըլես, ես էլ դուքաններըս պտի ծախեմ, էթամ ուրիշ երկիր։ Էդ տղէն իրա փայն առաւ ու ընկաւ ճանապար. էկա՛ւ, մի քաղաքի դրաղ դուս էկաւ։ Արևը մտաւ, ասեց.—Բեռներըս վեր ածէք։

Ասեց.—Աղա՛, խի վեր ածենք. քաղաքը մօտ ա, էթանք քաղաքը։ Ասեց.—Անկարելի ա, իմ հէրը խրատ ա տուեր. «որ տե արևը մթնի, ըն տե պտի մնաս»։ Բեռները վեր ածեցին, կշտին պառկան. ինք գշերը բեռների բոլորը պտըտում էր։ Տեհաւ մի մարդ ֆանարը ձեռին գալիս էր. էկաւ, իրա կողքով անցկացաւ, դպա գերեզմանները գնաց. տեհաւ շըլակին մի զաց կայ, քամակից եավաշ, եավաշ գնաց. հեռու կաղնաւ, ըդըրան թամաշա արեց։ Շլակի բանը վեր դրեց. մի քար չուռ տուեց. տեղը փորեց, էդ բանը դրեց տեղը։ Հողը վրայ տուեց ու թողեց, գնա՛ց։ Ասեց.—Էս ապրանք ա, բերեցին, ըս տե պահեցին, գնացին. էթամ. հանեմ։

Ձողը յետ տուեց ու հանեց, տեհաւ մի հատ աղջիկ ա, հոգին տրըփում ա, խանչալը իրեք, չորս տեղ տուեր են։ Վեր կալաւ, բերեց իրա բեռների մօտը.—Որ մեռնի, կը տանեմ, փորեմ, ասեց։ Բերեց չոր փռեց տակին, պարկացրեց, մի չոր էլ քաշեց էրեսին։

Լիսը բացուեց, վեր կացան, թաշարիֆ տենան, որ բեռները բարձէն. թամաշա արին մի հինգ հարուր ձիաւոր, Դահա շատ քաղաքից դուս էկան. քաղաքի ղրաղին տաս-տաս, քսան-քսան էլան, ցվըրուան դըպա հանդը, մի հինգ ձիաւոր դուզ էկան քարվանի մօտը կաղնեցին, հարցրին.—Էս գշեր ըս տեղ իք։

Ասեցին,—Հա, ըս տեղ ինք։

Ասեցին.—Թագաւորի աղջկան սպաներ են, վե կալ, տարե, բան ու ման չէք տեհե ըս տեղըանք։

Ասեցին.—Իրիկունէ ըս տեղ ենք, բան չենք տեհեր։

Էդ ձիաւորները թողեցին, գնացին։

Էդ տղէն ասեց.—Ինչ անեմ, թէ էկան իմ կշտին գթան, ըստրան լեզու չունի որ ասի թէ «ինձ սպանող էս չի,» ինձ կը տանեն, կորցնեն. էս օր էլ կը մնամ ըս տի թէ մեռաւ, կը թաղեմ տեղը։

Էն գշերը մնաց, տեհաւ, չէ, չի մեռնում, էն առաւօտը էլ էն քաղաքը չմտաւ. վեր կացաւ, գնաց ուրիշ քաղաք, մի դուքան բռնեց, ապրանքը ածեց մէջը. էդ աղջկան տարաւ, պարկացրեց, ասեց. Գողերը վրայ են տուե, մեր յընկորը խանչալով հարալու են արե, ով կայ սաղացնող։ Ասեցին.—ըս տե մի լաւ հեքիմ կայ։ Գնաց, հեքիմին գթաւ։ Բերեց դուքանը, հեքիմին ասեց.—Խոստովանք պտի պահես, էս աղջիկ ա։ Հեքիմը բաց արեց եարեքը, տեհաւ։ Ասեց. —Ի՞նչ ուզես, կուտամ. պտի սաղացնես։

Հեքիմը սաղացրեց, աղջիկը պիրեհն աչք բացեց, տեհաւ ահա, իրան կշտին հեքիմը ու տղա մի կայ, ասեց.—Այ տղա, դու ինչ տղայ ես։ Ասեց.—Ես բազիրկեանեմ, էկայ ձեր քաղաքի ղրաղը, դու պատահեցիր։

Ասեց.—Ես թագաւորի աղջիկն եմ. թագաւոր մի հատ վեզիր ունէր, դրան մի տղա ունէր, սարաֆութուն կանէր, կգար մեր ամարաթները, կգար իմ օթախը, իմ հետ կը խօսար չարի կէս գշեր, կէս գշերին կեթար, ինձ խօսք կը գցեր. մէկ օր էլ շատ ինձ զոռեց, ես ըղրա վրայ բարկացայ, ասեց.—«Առաւօտը թագաւորին կասեմ որ քո գլուխը կտրի. էդ խօսքին խանչալը հանեց ու ինձ տուեց, էլ չիմ իմացե, ինչ ա էլե։

Ասեց.—Քեզ թաղեց, հանեցի բերեցի ըս տե, սաղացրի։

Աղջիկը ասեց.—Բեռները բարձե, էթանք մեր քաղաք։

Բեռները բարձեցին, ընկան ճանապար. էկան իրանց քաղաքը։

Տըրան ապրանքը վեր ածեցին իրանց դուքանի աղաքը, էկան էդ տղի տունը վեր էկան։

Ախչկան տասներկու հատ անգին քար ունէր, ալ մաճուտիմ վրայ կարած, հանեց, տղին նշանց տուեց, ասեց.—Էս քարերը տեսնում էս, դու գին չես գիտայ, ես գիտամ. հատը հազար մաճէք աժի, մի հատը վե կալ. տար, էն դուքանների կշտին մի հատ սարաֆ կայ, ընդրա վրայ ծախայ. որ ասի, գին ինչ ա, ասա հինգ հարուր մաճէք ա. էն կը հարցնի, էլ ունե՞ս, ասա չա՛տ ունեմ կշտիս. որ կուզես, ասա, արի, նշանց տամ. Վե կալես, կը բերես:

Իրիկունը սարաֆին վե կալաւ, բերեց տուն։

—Ախչի, ասեց, տղին բերել էմ. քարերը չանց տու, տեսնանք։

Բերեց, քարերը չանց տուեց, ասեց.—Մէկն օր ծախերէս, տասն մին հատ էլ կայ: Նստէք, հաց ուտենք, ետքը փողերը տուր. վեր կալ ու գնա։ Սարաֆը մտածեց որ վեց հազար մաճէք ըս օր դատում ա, ուրախացաւ. ասեց.—Հաց չեմ ուտում, առէք փողերը՝ տուէք. էս էթումեմ, մութն ա։

Ախչիկն էկաւ, ասեց.—Հաց ա, կեր ու գնա:

Սարաֆը ասեց իրա միջին.—Կասեն էն Թաղաւորի ախչիկը պտի ըլի որ սպանեցի. խօսալը ժաժ գալը, ընդրա պէս ա. մի քիչ նստեմ, խօսամ, վե կենամ, էթամ։

Էդ ախչիկը հաց քցեց, բերեց գինի դրեց, խմեցին, քէֆները մի քիչ լաւացաւ՝ էդ ախչիկը գնաց մի խանչալ հանեց. էկաւ սարաֆի քամակին կաղնեց, մի խանչալ տուեց քամակիցը, սրտիցը ծէրը դուս էկաւ։ Սարաֆը ընկաւ ու մեռաւ։

Տղէն ախչկան ասեց.—Խի՞ տուիր ըդրան։

Ասեց.—Իմ սպանողը էս էր, ես էլ իմ ինաթը հանեցի, տղա՛, ասեց, ինձ ո՛ր տեղան հանեցիր, ըստրան էլ տանենք, ըն տի Թաղենք։ Մի փալասի մէջ կոլոլեցին ու վե կալան, տարան. Թաղեցին: Էդ տեղ, որ ախչկան հանել էր։ Ետ դառան, էկան տուն:

Առաւօտ լիսացաւ, տղէն ղրկեց, մի ձեռք տղամարդի չոր բերի։

Գնաց վե կալաւ, բերեց։

Ախչիկ ասեց.—Ինչ առարկայ կայ պազարումը։

Ասեց.—Վեզիրի տղայ—Սարաֆին ման էն գալի։

Ասեց.—Գնա՛, էրկու հատ ձի էլ բեր, նիլենք, էթանք. որ չի գան, ճտաճէն գտնեն, մեզ կորցնեն։ Հեծան ու գնացին։

Ախչիկն ասեց.—Այ տղա՛, գիտա՞ս, ուր պտի էթանք:

Էթանք Ստամբօլ, ընտե մի ժամանակ մնանք, էս առարկէն վերջանայ, յետ դառնանք. գանք։

Գնացին, մի չօլ, եապաճ տեղ վեր էկան. խուրճինէրիցը հաց հանեցին, նստեցին. կերան։

Էդ ախչիկը ալ մաճուտը նստաւ, լուաց, ասեց.—Այ տղա. ուշդ վրայ պահայ, ես էլ մի քիչ քնեմ։ Քնեց. տղէն թամաշա էր անըմ։

Տեհաւ մի հատ ագռաւ էկաւ, էդ ալ մաճըցի կչտին վեր էկաւ. իմացաւ միս էր, ինչ էր. վե կալաւ էդ ալ մաճուցը, թռաւ. տղէն տեհաւ որ տարաւ, մի դարի գլխին վեր դրեց. ձին նիլաւ, ընկաւ քամակը։ Գնաց, հասաւ. էլի վե կալաւ, թռաւ. տարաւ դաճա հեռու, մէկ էլ գնաց, էլի ագռաւ վե կալաւ թռաւ. մութն էլ ընկաւ, կորցրեց ագռաւին՝ ետ դառաւ, ասեց.—Էթամ ախչկան հասնեմ։

Էդ ախչիկը զարթնեց. տեհաւ, ահա, կչտին մարդ չկայ։

Ասեց.—Էյ պէհճիպար տղա, էն նեղ տեղից ընձի ազատեց. իրա ամակին ափսոս չէկաւ. էն քանի անգին քարի խաքեր վեր կալաւ, գնաց։ Էդ ախչիկը ձին նիլաւ, դպա Ստամբօլ. գնաց ծովի ղրաղը, կեամին նստեց. գնաց Ստամբօլայ մէջը։

Գնաց թեթև ղայֆի դուճաճ դրեց, ասեց.—Պալճի էդ տղէն էրեայ, ետ դառնանք դըպա մեր քաղաքը։

Տղէն էկաւ, տեհաւ ախչիկը չկայ. ընկաւ, քաղաքները ման գալով, հարցնելով չգթաւ, ձին էլ ծախեց, կերաւ. ասեց.—Փող չմնաց, Ստամբօլ էթամ։

Մի մարդ ասեց.—Նօքար կըլլես, Ասեց.—Կըլլեմ-

Ամիսը պարիճեցին տասը մաճէթ։

Ամիսը թամեց, ասեց.—Իմ տասը մաճէթը տուր, ես էթամ։

Ասեց.—Դոր էս էթում. մի ամիս էլ կաց, նոր գնա։

—Անկարելի ա, ասեց. պտի էթամ։

Ասեց.—Որ ըդենց ա. կացինը սղոցը վե կալ, մի ծառ կայ. կտրենք, նոր գնա։

Տղէն վե կալաւ, գնաց տակը, նստեց։

Տեհաւ աղէն յետացաւ, սկսեց կտրիլը։

Ծառը կտրուաւ վեր ընկաւ։ Էդ ծառի գլխին մի ագռաւի բուն կար. տեհաւ ալ մաճըցի վրայ չարած անգին քարերը բէէրա միջին էր. ուրախացաւ. վե կալաւ, դրեց ջէպը, ասեց.—Ես ըսդըրան ի ման գալի, գթայ. յուս ունեմ ախչիկն էլ կը գթնեմ։

Մէկ էլ տեհաւ աղէն էլ էկաւ. տեհաւ ծառը կտրած։

Ասեց.—Զօրանաս, վեր առ քու փողն, բարի ճանապարհ։

Փողն առաւ, ընկաւ ճանապար, գնաց. գնաց, ծովի ղրաղը հասաւ. նստաւ կեամին, դուս էկաւ Ստամբօլ. ման էկաւ, գնաց մի ղայֆաճու դուճաճում գթաւ ախչկանը, ախչիկը ասեց.—Պէ իճիպար, մենծ բան էր որ անգին քարերը վե կալար, գնացիր. ինձ թողեցիր էն տեղ։ Տղէն նստաւ, ինչ որ էլեր էր, պատմեց. ջիպէցը անգին քարերը հանեց, տուեց ախչկան։

Ախչիկը ասեց.—Մի ժամանակ ըս տե մնանք. նոր կեթանք մեր երկիրը։

Թագաւորը վեզիրին կանչեց.—Վեզի՛ր, ասեց. արի՛ ըստե. Վեզիր, իմ ախչիկը կորաւ. ինկի սալըխ տուող չելաւ. քու տղէն էլ կորաւ, սալըխ տուող չելաւ. մենք չիմացանք, մեր դուշմանը ով էր.

Վեզիրն ասեց.—Մեզ չեն ասեր, բուչեբում կասեն. դարվիշի կեյիմ մտնենք, էթանք, ման գանք. հարցնենք.

Թագաւորն ու վեզիրը վեր կացան, մտան դարվիշի կեյիմ. ման էկան. Գնացին, աշխարքը ման էկան. որ տեղ հարցրին, սալըղ տուող չելաւ: Գնացին, դուս էկան Ստամբօլ. էդ ախչկայ ղայֆէ առաջովը անց էին կենում. ախջիկը տեհաւ, ճանաչեց. ասեց.—Էս թագաւորն ա,—իմ հէրն ա, էս էլ վազիրն ա.—Սարաֆի հէրն ա. ձէն տուեց.—Դարվիշ բաբա, ո՞ւր էք էթում. Ասեցին.—Էթալու տեղ չունենք, ման էնք գալի. Ասեց.—Համեցէք ըստե՝ ղայֆայ էլ կայ, չայ էլ կայ, ճարկիլայ էլ կայ, ինչ որ ուզէք, կայ.

Մտան ներսև. տարաւ ըդոնց տեղ նշանց տուեց, ըդոնց պատուեց. Դարվիշն ասեց.—Կերակուր էլ կարաս պատրաստի.

Ասեց—Էս սահաթը կը պատրաստեմ.

Կերակուրը պատրաստեց ու քաշեց ըդոնց աղաքը.

Մութն էլ ընկաւ. դուռը չինեցին, էկան չորսով նստան ու հաց կերան.

—Դարվիշ բաբա, ասեց. արխային կերէք ու ըս տե քնէք.

Կերան ու պրծան. ախչիկն ասեց.—Դարվիշ բաբա, երկար գշեր ա, դու ախշալք ման էք էկե. մի բան ասէք, անկաջ անենք.

Ասեց.—Մենք պեզարած էնք. դուք ասէք.

Ասեց.—Ես մի թեթև բան գիտամ. ասեմ.

Սկսեց գլխեցը. մոնց օր էլեր ա, ընենց պատմեց. ասեց.—Դու թագաւոր էս, էս էլ քու վազիրն ա, ես էլ քու ախչիկն եմ, էս էլ ինձ պրծացնող տղէն ա.

Քնեցին, առաւօտը վեր կացան, ընկան ճանապար. էկան, իրանց քաղաքը դուս էկան.

Էն վազիրին դուս արեց, ասեց.—Դու իմ դուշմանն էս զաքի, էն աղջիկն ու տղէն ինչ տար իրար հետ ման էն էկե, իրար հետ քուր, ախպօր պէս էն էլե.

Թագաւորը ջխտին էլ կանչեց աղաքը, կաղնացրեց. ասեց.—Որդի՛, իմ կորածը որ ես քթայ. ըդրա պատճառը դու ես էլե, իմ ձեռով էս ախչիկն էլ տալիս էմ քեզ.

Նշան գրեց, օխտն օր հարսանիք արեց.

37

ԱՂՈՒՆԻԿ ԱՂՋԻԿ

(Վաղարշապատի բարբառով *)

Իրեք ախպէր կըլեն, իրեքի պուճուրը կըլի. էդ տղէն աշխատանքի-բանի չի էթայ. ձիու վրայ ման կգայ։ Ախպէրտանքը կասեն.—Խի՞ չես գալի մեր տան բաները անես, պէյթի ման ես գալի։ Ասեց.—Ամենևին ձեր տան բան ընձի պէտք չէ, էլ տանը չեմ մնըմ. ես ըլ էթումեմ։

Գնաց, էրկու ընկեր գթաւ, ասեց.—Տղէք, էթանք ախշար ման գանք. էլ դառնալ չկայ մեզ։ Գնացին, իրեք հատ ձի առան. ամենքին մի հատ, նըլան ու գնացին։ Գնացին, ընկան չօլ-եապան տեղ, ճամըէն կորցըրին. տեհան մի ղոռուխի խոտի մէջ մի իզ կերևայ, առան էդ իզը, գնացին։

Գնացին, տեհան մէկ հատ վիշապ ընկեր ա, էթում ա. դու մի ասէր էդ վիշապի իզն ա. գնացին, հասան վիշապին։

Վիշապն յետ դառաւ, էդ իրեքին խըկեց, էդոնք փախան։

Վիշապը ըդոնց կոխեց մէ զաղի մեջ. վիշապը մեծ էր, չկարաց ներսև մտնէր. դռան դէմ արեց, բերան բացեց, կաղնեց։

—Տղէք, ասեցին իրարու. մեզի կուտի, էլ իլաճ չկայ, թուանքը լցէք, տուէք բերնի մէջը։ Տղէք լցին, դարդըկեցին։ Իրեք օր մնացին էտեղ, շատ սոված ացան, ասեցին.

---

* Պատմած է Առուէն Ղրիմեան:

—Վիշապ ոչ ժուր ա գալի, ոչ բան. դուս գանք, տեսնանք. սատկած ա թէ սաղ ա։

Դուս էկան, տեհան սատկած ա. ձիանը նիլան, ընկան ճանբայ. գնացին, մի ծովի ղրաղ դուս էկան. տեհան ծովի էրեսին կեամին գալիս ա։ Կեամիչին էկաւ, կեամին մօտացրեց, ասեց.—Մեզ էլ դիր կեամու մէջ։

—Դու ինչ մարդիկ, ասեց. էս չօլիստան տեղ մնացերէք։

—Պատահեր ա, ճանբէն կօրցրինք, ընկանք ըս տե։

—Ձեզ տեղ կըլլի, ամա ձեր ձիանոց տեղ չըլլի։

Ըդոնք էլ ասեցին.—Ձիանը մեզ պէտք չի։

Ձիանը բրախ տուեցին, նստան կեամին. ընկան ճանբայ։ Փըր-թունէն վեր կացաւ. իրեք օր, իրեք գշեր ծովը տակ ու վերև արեց. կեամին տարաւ, տուեց մի քարի, հազար կտոր արեց։ Էդ իրեք մարդ մնացին մի տախտակի վրայ. ասին.—Աստուած, վիշապից պրծանք, ընկանք էս նեղ տեղ. տեսնանք, ո՛ր տեղ լուս կընկնանք։

Ծովի լափին տարա՛ւ, մի ղրաղ դուս հանեց։

Բերեցին էդ տախտակը մի քարից կապեցին. իրանք դուս էկան չօլը. տեհան մեշայ ա, սկսեցին մեշի մէջը ման գալը։

Տեհան ոչխարի բոռոց ա գալի, ասեցին.—Տղէ՛ք, էթանք էս ոչխարի իզլին, մէ շենլըկ քցենք մեզ,

Հասան ոչխարին, տեհան չօպանը թեփեկեօզ ա. ոչխարի կըշտին կաղներ ա, հենց որ տեհաւ, գերանը դականակի պէտ դըրեր էր ուսին. խառնեց ոչխարին, քշեց. տարաւ իրան զաղէն. զաղի առաջ մի ջաղացքի քար կար, պըտըտեց դէն. ոչխարը արեց նեքսև, մեզ էլ հետը. գնաց մի սէլաչափ ցախ բերեց. չորս քար չիներ էր թունդիր, ցախը վառեց էդ տի, մի շանփուր ունէր, դրեց էդ կրակի մէջ. լաւ տաքացաւ, հանեց ու բերեց, տուեց ըդըրա դօշը, հենց ճուաց ու մեռաւ։ Տարաւ, կախ տուեց թունեյիր, էփեց. քարի վրայ ճըղճըղեց ու կերաւ։ Ասեցին.—Էգուց էլ մեզ կուտի. ինչ իլան անենք, սրա ձեռից պրծնինք։ Լիսը բացուեց, խառնեց ոչխարի հետ, տարեց մէշի մէջը. չար իրիկուն պըտըտեց, իրիկուն էլի բերեց, արեց ըտեղ. էլի ցախ վառեց, շանփուրը բերեց. էլի էն մէկ տուեց ընկօրը դօշիցը, էլաւ տարաւ թունեյիր, էփեց. ճղճղեց ու կերաւ։ Մնաց մինակ. միտք արաւ, վաղն էլ նօպաք իմն ա։ Էդ մօքին էր, տեսայ թեփեկեօզ քնեց. խռոց քցեց, քունը տարաւ, տղէն վեր կացաւ, էդ շանփուրը վեր կալաւ. դրեց աչքի մէջ, հուփ տուեց, գնաց գետինը։ Վեր կացաւ, ընկաւ պատէպատ, էդ տղին ման ա գալի. ճարը կտրաւ, ջաղացքի քարը դենը քցեց, չէնք արեց ծակի դէմը, ոչխարը մի մի չէնքի տակով անցկացրեց։ Տղէն մտաւ

սկյիսի փորի տակ. սկյիսը խավաշ-խավաշ գնաց, չէնքի տակով անց կացաւ. էդ էլ հետը գնաց։

Տղէն դուս էկաւ դուրը, բոռաց, ասեց.—Հօ քու ձեռից պըրծայ։ Էդ ձէնը որ լսեց, էդ թեփեկեօզն էլաւ մի քարի գլուխ, բոռաց. որ բոռաց, էն ղսար ՞թեփեկեօզ էկան, լցուան ը տեղ։ Էդ տղէն փախաւ։

Էդ թեփեկեօզներ ասեցին.—Ո՞ւր ես բոռում։

—Էդ փախնողը իմ աչքը հանեց. ասեց։

Ըդոնք ընկան ըդըրա քամակը. էդ փախաւ, գնաց, էն տախտակը որ կապեր էր. վրան նստաւ, կապը յետ արեց, քշեց ծովի մէջը. ըդոնք էլ էկան, ղրաղը կաղնան. էլ չկարացին մտնել։ Էդ տղէն տախտակը քշեց, խավաշ-խավաշ գնաց ծովի մէջը. գնաց, մի ղրաղ դուս էկաւ չօլը. տեհաւ մեշայ ա, ամեն տեսակ պտուղն էլ կայ, մարդ ու մասադ չկայ։ Էդ տեղ մի աղբուր կար. իրեք աղունեկ էկան ը տե, խրխեք հանեցին, մին մին ախչիկ էլան, լեղացան։

Տղէն մէկի խրխեն գողացաւ. տարաւ պահեց։ Էկաւ, էդ ախչիկներուն մօտացաւ. ըդոնք տեհան մարդ ա գալի, էն էրկուսը էկան, ալպեալը խրխեք հագան ու թռան. տղէն գնաց, էն մէկը բռնեց։ Էդ տղին աղաչեց, ասեց.

—Տղա՛, ես քու թայը չեմ. ինչ տար աղաչեց, չէլաւ։

Էդ տղէն, էդ ախչկան առաւ, էլան մարդ ու կնիկ։

Ասեց.—Մարդ ու կնիկ էնք, իմ խրխեն տուր, հագնեմ։

Ասեց.—Վախում եմ, դու կը փախնես։

Ժամանակ մի մնաց, մի տղայ բերեց, ասեց.—Հմի տո՛ւր, տղայ էմ բերել, էլ չեմ փախնի։ Էլի չտուեց։

Մի տղայ էլ բերեց, էղաւ էրկու տղայ.—Դէ՛, ասեց. իմ խրխեն տո՛ւ, էրկու տղայ էմ բերե. չեմ փախնի։

Գնաց, խրխեն հանեց, բերեց, տուեց.—Դէ՛, ա՛ռ, ասեց։

Հենց որ խրխեն հագաւ, էրկու տղէն խըտըտեց, գնաց ծովի մէջ տեղ կաղնեց, ասեց.—Այ տղա՛, էս էրկու տղէն ընձի հալալ արա։

Ասեց.—Հալալ չեմ անի։

Իրեք անգամ ըդենց ասեց, էն էլ չարեց։

Էրկու տղին առեց, սըկուեց ծովի տակը, էլ չերեւաց։

Էդ տղէն էլի մնաց մինակ ըդ տեղ. ասեց.—Մինակ ինչ անեմ։

Գնաց, ընկաւ ման գալու։ Գնաց, տեհաւ մի մարդ, հրեա, նստած ա, բարև տուեց, ասեց.—Ի՞նչ մարդ ե՞ս, ըս տե նստած էս։

—Մեր տուն ըս տե ա, գեղն ըս տի մօտ ա. —Դէ՛, արի՛, ձեռիցս բռնայ, էթանք մեր տուն։

Դու մի՛ ասէր, էդ մարդը պալսր ղայիշ էր, փաթութուաւ ըդըրան. նստաւ չալակ, փէտ առաւ ձեռ, քշեց. տարաւ իրանց տունը։

Գնաց տուն, ըդըրա հէրն ասեց.—Էդ ի՞նչ բան ա։

Ընձի ճանբին պատահեց. նիլայ, էկայ։

Նօպարթէ Նօպար ըդըրան նիլան. ցախ էն բերըմ, ջուր էն բերըմ. էրկու ամիս ըդենց բանացրնըմին։ Ըդոնց ձեռիցը իլան չէր գանըմ պրծնէր, շատ չարչարեցին։ Մէկը փշու կերթէր. մէկը ջրու։

Մէկ օր գնաց ծովի ղրաղը, ըտխան մի մարդ էկաւ, ասեց.

—Ըդոնց ձեռը դու խի՞ էս ընկե։

Ասեց.—Ճանփէն կորցըրեցի. էկայ, ընկայ։

—Որ մտնես ծովը, ըդոնք քամակէդ չգան, կը պրծնես։

Էդ տղէն ջրի միջով, ղրաղէն գնաց, ընոնք կանչեցին—Արի՛, արի։ Էն ականջ չարեց. նիլող յետ դառաւ, գնաց։

Տղէն մէկ քարի տակ տափ կացաւ. տեհաւ մի կեամի, կեամուչուն ձէն տուեց.—Արի՛, ընձի էլ տար։

Կեամուչին վե կալաւ, դրեց կեամու մէջը. տարաւ, հանեց քաղաքիմ մէջ։ Էդ տեղ տղէն իրեք տարի մնաց, աշխատեցաւ բաւականի փող։

Էդ քաղաքիցը մի ախչիկ առաւ. մի չորս տարի մնաց կշտին. էդ ախչիկ մեռաւ, բերեցին. ղաւար, ոչխար ինչ որ ունէր, մորթեցին։ Ասեց.—Ախպէր, խի՞ էք մորթում, ընձի տուն ա պէտք, ես էլի կնիկ պտի առնեմ։

Ասեցին.—Խի՛, դու էս քաղաքի սովորութիւնիցը խապար չես։

Ասեց.—Ի՞նչ կայ որ խապար ըլեմ։

Ասեց.—Մարդը մեռնի, կնիկը պտի թաղենք, կնիկը մեռնի, մարդը պտի թաղենք հետը. կնիկը ինչ կանես, մալը ինչ կանես։

Բերեցին մի ղուպուր կնկայ համար շինեցին, մի ղուպուր տղի համար. տարան գերեզմանատունը։ Ըդոնց գերեզմանատունը շատ մեծ զաղայ էր, պարանով կախ տուին ծակովը. էրկու մարդ էլ իրանցից կախ տուին. վեր էկան, տեղաւորեցին. էն մարդկանց էլի քաշեցին վերև։

Էդ տղէն ասեց.—Ես մեռած չեմ. դուս գամ, տեսնամ, ինչ կայ։ Դուս էկաւ, ման էկաւ, տեհաւ որ ղուպուր ղուպուրի վրայ լիքն ա, մէ կնիկ էլ էն տեղ սաղ ա, գնաց, էդ կնկան հարցրեց.

—Դու եփ էս էկե ըս տեղ։

Ասեց.—Էս քաղաքի ադաթը կտռուի, էրեկ իմ էրիկ մեռաւ, ընձի էլ բերին ըս տեղ. պտի ընդար մնամ ըս տեղ սոված, ըս տեղ մեռնեմ։

Ասեց։—Իմ կնիկ էլ մեռե, ընձի էլ բերեցին ըս տեղ. Աստուած, պտի լուս անի, ըս տխան պտի պրծնենք, թէ ըս տեղ պտի մեռնենք։

Կնիկն ասեց.—Ըստե գալող էլ չպրծնի։

Թամաշա արին, տեհան մի հատ աղուէս էկաւ, ըստե ման ա

գալի․ տղէն ասեց․—Էս աղուէս տեղ կունենայ, էկեր ա․ տեննա՚ք, դըւո՛րն ա էթում, մենք էլ էթանք։

Տղէն ընկաւ քամակը, հնկան էլ ասեց․—Դուն էլ արի։

Աղուէս գնաց, ըգոնք գնացին․ գնացին, մի ծակից դուս էկան ծովի ղրաղը։ *Աղուէս թռաւ, գնաց․ տղէն տեսաւ* կեամիմ *ա գալի․* կեամուչուն *կանչեց,* կեամուչին *վե կալաւ ըգոնք։*

Էդ կնիկ չատ սիրուն էր, կեամուչու *աչք ընկաւ էդ կնկան․ միտք արաւ որ տղին վե կալի, քցի ծով, կնիկ առնի։*

Մէկ էլ տեհաւ ծովից ձէն էկաւ․—Էդ ինչ էս անըմ, հէյ։

Կեամուչին *որ ձէնը լսեց․ փախաւ․ տափաւ։*

Իրեք անգամ միտքը փոխեց․ իրեք անգամ ծովի միջից ձէն տուփն, էլ չկարողացաւ տանէր, հանեց չօլը։

Էդ տղէն, էդ կնիկը Նստան ծովի ղրաղը․ *էն աղունիկ կնիկը էրկու էրեխէն առաւ, էկաւ ըտե, կանչեց ծովի միջից—ձէն տուեց․ —Ա՛յ մարդ, կնիկ էս առե, էդ կնիկը* ճալալ, *էս էրեխէքը ընձի* ճալալ *անըմ էս։ Ասեց․—Հալալ չեմ անի։*

Ասեց․—Խի՛ չես անի, Պալsr ղայիcից *քե ազատեցի, էն ով էր, էն աղուէսը քե ազատեց, էն ով էր․ իրեք անգամ* կեամուչին *միտքը փոխեց, քե պտի քցեր ծովը, էն ով էր ձէն տուեց․ իրեք փորձանքից քե ազատեցի, էս էրկու էրեխէն ընձի* ճալալ *չես անըմ։*

*Ասեց․—*Հալալ *ա քեզ։*

Ասեց․—Էթաք բալին ու ըկուեց ջրի տակ։

Մարդ ու կնիկ վե կացան, էկան էդ քաղաք․ մի հարուստ մարդ ըդըրան պատահեց, ասեց․—Դու ինչ մարդ էս։

*Ասեց․—*Ղարիպ *մարդ էմ, ես էլ չեմ գիտում, ես ու իմ կնիկ էկե, ընկեր ենք ըստիան։ Ասեց Որտի՛, պտի մնա՛ս։*

Տեղ չունիք ըսկի, աղա, *ասեց։*

Վե կալաւ, տարաւ իրա տունը․ հաց կերան, պրծան։

*Առաւօտը հարցրեց։—*Nofar, *կըլլիս․—Ասեց Չէ։*

Ասեց բռնեմ քե Gofar, բուանf *քցել, սարվի։*

Ամիսը տասը մաGիք պարըcեց, *ինքն էլ* մուՑքա *պահի։*

Պարուք կուլա *առաւ, տուեց ըդըրան, ասեց․—Լաւ նշան քցել սարվի։*

Մէկ օր ասեց․—Արի՛, փորձեմ․ խաGչալը *կը դնեմ,* կուլով *բերնին տուր։* Կուլէն *տուեց, էլաւ էրկու կտոր, կչռեց, մէկը քիչ ծանր էր, ասեց․—լաւ չես սարվե։*

Գնաց մի ամիս պտըտեց, էկաւ։

խաGչալը *տնկեց․* կուլով *տուեց բերնին․ բերեց, կչռեց, էրկուսն էլ* դուզ դուզա *էկան։*

Բերեց, մատնիք դրեց բռան մէջը,—Կուլով տուեց, մատանիքի ծակէն անցկացրեց։

Ասեց.—Աֆարըմ, տղա՛։ Գնաց, տղի ճակատը պաչեց։

Վեր կալաւ տղէն, գնաց իրանց տունը. հաց կերան, գինի խմին, լաւ քէֆ արին, մի դաստա փէտ վեր կալան, թուանքը վեր կա՛լան, ասեց.—Տղա՛, վեր կալ, էթանք ծովի ղրաղը։

Ծովի ղրաղը փորեցին, էդ փետերը քցեցին, ծածկեցին։

Աղէն ասեց.—Մտի ըս տեղ. չքնես, հենց քշերը մէ ջանավար կգայ ծովիցը. հենց պոզերը, մոււթը դուս կգայ ծովիցը. ալպհալը դու մի՛ թողի դուս գայ։

Գիշերուայ կիսին տեհաւ մէ ղաշ դուս էկաւ ծովից կրակի պէս, սլպըզմ ա, գալիս ա դպա իրան. էկաւ, մօտանըմ էր, մէկ կուլի, մանկզիլ մնաց. տղէն նշանը բռնեց. տալու բաշտան ճակտին բռնեց։ Էդ ջանավարը չռեց պոչին վրէն ու չալըտեց ըդրան, որ դիպաւ տղի էրես, էրես էլաւ արնլուիկ, ուշքը գնաց, նուաղեց։

Աղէն թուանքի ձէնը լսեց. կնկան ասեց.—Էթումեմ, կնիկ. ինչքան մարդ փչացաւ, էդ էլ փչացած կըլլի։

Գնաց, տեհաւ ջանավարը վեր ա ընկե ծովի ղրաղը. գնաց քօլիկը տեհաւ տղէն սաղ էր. արնի մէջ կորսուեր ա։

Ջուր բերեց, գլխին քցեց, տղէն օյանմիշ էլաւ, աչքերը բացեց, տեհաւ աղէն գլխու վերևն ա։

Ասեց.—Տղա, մի՛ վախենար. վեր, էթանք։

Ջանավարը դրին մեշոքի մէջ. տղէն շլակեց, էկաւ դպա տուն, բերեց, դրեց կըճըճի մէջ, բերանը խմորեց, դրեց թունդիրը, լաւ էփեց. հանեց, եղը քօփ էլաւ կաըադի պէս մի գունդ։ Ասեց,—Կնի՛կ, մի կտոր բանբակ բեր։

Բանբակ բերեց, կճուճը թամուզ սրբեց. մի պուճուր էլ էդ եղիցը դրեց մէջը, տըրըրեց ու տուեց տղին, ասեց.

—Դէ, գնա՛, թէ մարդ էս, էս էլ քե բօլ ա։

Էդ տղէն վեր կալաւ, դրեց ծոցը, ասեց.—Ընձի ճանբու դիր։

Աղէն գնաց էրկու հատ ձի առաւ, էրկու հարիր մանէթ փող տուեց, լաւ չորեր տուեց.—Դէ՞, ասեց. բարի ճանբայ։

Ընդունք ընկան ճանապար ու գնացին. գնացին չօլի մէջ մէկ աղբրի վրայ իջան։ Հաց կերան, պարկան։ Տեհան մէ տաս հատ ձիաւոր գող էկան, վեր էկան, ասեցին.—Էս մարդին սպանենք, ձիանը, կնիկը տանենք։

Էդ մարդը ընկաւ աղաչանք.—Խի՛ էք սպանըմ, ձի՛ն էլ տա՛րէք, մալն էլ տարէք, ընձի, իմ կնկան ձեռ մի տաք։

Գողերի մէկի սիրտը խիղճ ընկաւ.—Խի՛ սպանենք, մեր ձեռ ինչ կընկնի որ սպանենք, կնիկը տանենք, ինչ անենք։

Ձիանն էլ տւան, փողերն էլ տւան, էրկըսով չըփլախ մնացին ըտե։ Ծոցի չիպի բանբակը թափած էր ըտե, ասեց.—Կնիկ, կնի՛կ, էդ պօճծով (կժի կոտրած կտոր) մէ ջուր տուր, խմեմ։ Կնիկը պօճծը վե կալաւ, աղբրի մէջը լուաց։

Ասեց.—Էդ բանբակով էլ սրբի, քամուզ ըլլի։

Բանբակը վե կալաւ, սրբեց. տեհաւ բօճծը էլաւ ոսկի։

Ասեց.—Կնի՛կ, էս բանբակին հունար կայ. բանբակը քօփ արա։

Բանբակը քօփ արին. վե կացան ու գնացին։ Ո՛ր տե որ սովածանում են, մի խեցատի կտոր վեր են քաշում, բանբակով սըրբում, ըլնում էր ոսկի, տալիս էն հացի, ուտելով էթումին։

Էկան իրանց քաղաքը դուս էլան, գնացին իրանց տունը։

Հէրը, մէրը էկան, քօփ էլան գլխին, ասեցին.—Էդ ի՞նչ բան էր, ըդենց սիպտակեցիր։

Նստեց, իրա գլխին էկածը ճաղլ արեց, ասեց.

—Էս դար դարդ տեսողը չի սիպտակիր։

Ղօճախ էկաւ տունը, տեսաւ էն թուխ մարդը նստաւ հացի, էն սիպտակ մարդին բանացընըմ էր, ասեց,

—Խի էք ջաճիլներդ նստի, էդ սիպտակ մարդին բանացընըմ էք։

Ասեցին.—Էդի մեր պատիկն ա։

—Ոնց պատիկն ա, ես ձեր հացը չեմ ուտում. թո իրա պատմութունը անի։

—Դու քու հացը կեր, ասեց. իմ դարդը չատ ա։

—Դու քու դարդը չասես, ես ձե՛ր հացը չեմ ուտի, ասեց։

Էդ մարդ սեղանի վրայ սկսեց իրա գլխեց անցած բաները, պատմեց մինչև իրեք օր։

Ղօճախ մինչև տակը չառաւ, հաց չկերաւ։

38

ՍԸՄԱԻՕՆ ԹԱԳԱՒՈՐ ՈՒ ԳԻՒԼ

(Վաղարշապատի բարբառով *)

Ըլըմ-չըլըմ, մի տղայ. կեթայ մի իշխանաւոր մարդի կըլլի Ճօֆար, էդ մարդը կասի.—Ոչխարը պտի տանես, արածացընես, չուրի աշուն կտամ քառասուն մանէթ: Էդ մարդը վեր, տարաւ հանդը արածացընելու, ճաշերքին կը բերէր բէր ոչխարը կթելու:

Ոչխարատիրոջը մէկ ախչիկ ունէր, էդ չոպանէին հաց կը բերէր. էդ ախչիկը էն դսար գնաց, էկաւ, որ իրար վրայ սիրուեցին. ախչիկայ հէրը իմացաւ որ սիրուեր ա ախչիկը իրանց չոպանի վրայ: Հէրը ուզեց չոպանը դուս անի, ամառուայ կէս էր, ուրիշ չոպան ձեռ չընկաւ, մնաց էլի: Էդ չոպան իմացաւ որ իրան պտի դուս անի, գնաց մի հատ բլուլ առաւ, սկսեց ածիլը իրա դարդի համար: Ախչիկայ հէրը ախչկան չթողեց որ չոպանին հաց տանի. գշերը ոչխարի տեղումը որ չոպանը բլուլ կածէր, էդ ախչիկը կը նիլէր կտուրը, անկաջ կանէր ինչ ղայսա ածէր, էդ ղայսէֆը ախչիկը բիրասի սարվիր էր, իմանըմ էր. էն դսար կը կաղնէր. չարի բըլլմ ձէնը կը կտրէր. նոր ախչիկ կգար, տանը կը քնէր: Էդ ախչկայ սովորութուն էդ էր ամնօր:

Մէկ օր էլ կաղնէր էր կտրանը, գիլան ընկերին ոչխարի մէջը. ճղըմին տաս-տասնըխինդ գէլ. չոպանի իլանը կտրաւ. ինչ արաւ, չկարաց հանի. բլուլը առաւ ձեռը, ածեց. բլուլի միջին ասեց.—Ախչի՛, քու բաղդն եմ ընկե, հօրդ իմացըրայ, գան, ճաւարի հասնին, չէ՛ մի հատ չեն թողայ պըծնի: Ախչիկը վեր էկաւ կտըրիցը, հօրը իմացրեց, ասեց.—Ափի՛, վե՛ր կաց. ոչխարի մէջը գիլան ընկեր էն, որ

* Պատմած է Առաքէլ Ղռիմեանց:

չհասնէք, բիրաշի կը ճղեն։ Հէրը վեր կացաւ, ասեց.—Ախչի՛, դու ո՛ր տեղէն իմացար կէս գիշերին։ Ասեց.—Ես բլբլով իմացայ։

—Դու ո՛ր տեղ իր կաղնած որ իմացար։—Կտըրանը կաղնածի, ափի՛։

—Ախչի՛, ասեց, էթըմեմ, թէ օր սուտ ա էլե, ես գիդամ, դու։

Ասեց.—ափի, գնա՛, սուտ չի, քեզ արա որ ոխչարին հասնես։

Մի քանի տղէք վե կալաւ ու գնաց. գնաց հասաւ օխչարին, տեհաւ գիլան ընկեր էն ոխչարի մէջը դէս էն քշըմ, դէն էն քշըմ։

Մտան ոխչարի մէջը, ճալա'-ճալա', արեցին. գիլանը միջից հանեցէն։ Ոխչարին թամաշա արեցին, տեհան իսկի վնաս չի էլե. մի հատը ճղեր էն։ Աղէն հարցրեց.—Էդ ինչ վախտ գիլան ընկան ոխչարի մէջը։ Ասեց.—Իրիկուրէ ընկան մէջը, ինչ ղցար չարչարուեցի, չկարացի հանէի միջիցը, նոր բլուլը ածեցի, դու ճաւարին հասաք։ որ ես բլուլը չածէի, քու ախչիկը չը լսէր, չէր իմացուէր, չէիր հասնի էս ճաւարին։ Էդ ախչիկը պտի տաս ընձի։

Ասեց։—Մի տղայ, մի ախչիկ ա, կտամ։

Ախչիկայ հէրը էկաւ տունը. ախչիկը ասեց.—Ոնց էր, ափի՛։

Ասեց.—Ջօրանաս, ախչի՛, դրուս էր։

Էդ մարդը գնաց տուն, կնկան պատմեց մոնց է էլե։

Ասեց.—Չոպան ախչիկ ուղեց, խափեցի. ասեցի «կտամ». չարի աչուն բալքի լաւ պահի։

Չոպանը մի քանի օր եռնայ էկաւ տուն իրա համար հաց տանելու. իրա աղէն խօսացրեց. ասեց.—Ոխչարը մոնց ա, լաւ ա։

Ասեց.—Շա՛տ լաւ ա, ափի. ասեց. քու ասածը մոնց էլաւ։

Ասեց.—Ժամանակ ունի, հիմի ժամանակը չի, գնա՛։

Մի քանի օր յետը ոխչարը գողեր էկան տարան, չոպանի ոտը ձեռը կապեցին, չոպանը աղաչեց, ասեց.—Ոտներս կապած մնայ, ձեռներս յետ արէք։ Գողեր յետ արեցին, մի գետ կար, անցկացրեցին ջրի էն էրեսը. ընտե գողեր նստեցին. մի հատ ոխչար մորթեցին, խորոված անեն որ ուտեն։

Չոպանը բլուլն ածեց, ախչկան բլըլի միջին ասեց.

—Ոխչարը տարան, քեզ հասաք կը բերէք, թէ չհասաք կը տանեն։

Ախչիկը կորից վեր էկաւ, հօրը ձէն տուեց.—Ափի՛, վեր կաց, որ ոխչարը բիրաշի տարան գողերը։

Վեր կացաւ, մի քանի տղայ վեր կալաւ, գնաց, ճաւարին հասաւ. գնաց, չոպանի կշտին կաղնեց, չոպանին ասեց.—Ոխչարը դըվօ՛րը տարան։ Չոպանը ասեց.—Հրէդ գետան էնդին ա, մի հատ էլ մորթեր էն, խորոված էն անըմ։

Ասեց։—Գնացէք, բերէք։

Թամաշա արեց, տեհաւ գողերը շատ էն, ասեց.

—Այ տղա՛, էս գողերը շատ էն, չենք կարայ ընդոնց ձեռիցը բերի։

Ասեց. Դու քու խօստացած տուր, ես առանց դավու բերեմ ոխչարը։ Ասեց.—Այ տղա՛, մի անգամ տուերեմ, էլի՛։

Ասեց.—Ոտներս հետ արէք, կապած ա։

Չոպանը իրա աղի ձիու քարէը նիլաւ. բլուլն առաւ ձեռը, ածեց. որ բլուլն ածեց, սէիզին աղաչեց. սէյիզը նստած էր, վեր կացաւ ոխչարի մէջիցը կաղնեց։ Բլըլով չոպան աղաչեց.

—Քու բաղդն եմ ընկե, սէյիզ, ասեց. որ դու գաս, ես իմ մուրազին կը հասնեմ։ Սէյիզը իրան վէ կալաւ ու քցեց ջուրը, անցկացաւ էս էրեսը. ոխչարը բիրացի ընդրա քամակիցն էկաւ։

Չոպանը ասեց.—Ջին քչա՛, փախնենք. ոխչարը մեր քամակից կգայ։

Գողերը էլան, ինչ իլաճ արին չկարացին ոխչարի աղաքը կտրեն, բիրացի գնացին. մնաց մորթած ոխչարը, մէկ էլ չոլախ։

Վեր կալան ոխչարը բերեցին տուն։ Չոպանը էլի ասեց.

—Ափի՛, քու խօսքը կատարա՛։

Ասեց.—Կը կատարեմ, մի բան կայ. էնի կատարեցիր, նոր կտամ։

Ասեց.—Ի՞նչ ա քու բանը, որ կատարեմ։

Ասեց.—Իմ ոխչարին, հինգ օր աղ կտամ, ջուր չեմ տայ, կը թողեմ ջրի վրայ. թէ դու բըլըլով յետ դարձրիր. ջուր չխմեցին, իմ ախչիկը կտամ, որ խմեցին, չեմ տայ։ Ասեց.—Տո՛ւր։

Հինգ օր իրարու վրայ աղ տուեց, հինգ օրը թամմաւ։

Ոխչարը հանեց ու բլուլը առաւ ձեռը, սէյիզին աղաչեց, ասեց. Սէյիզ ջան, որ դու ջուր չխմես. ես իմ մուրազին կը հասնիմ, քու բաղդն եմ ընկեր։

Սէյիզը գնաց, հասաւ ջրի վրայ ու ետ դառաւ, ոխչարն էլ քամակիցը յետ դառան. ջուր չխմեցին։

Չոպանը ասեց.—Դու քու խօսքիդ տէր էս, ես իմ խօսքը կատարեցի. դու էլ կատարայ։

Ասեց.—Ես չոպանի ախչիկ տուողը չեմ, իրիկուն քու հախը կառնես ու կեթաս, դու իմ տան մնողը չես։

Չոպանը բլուլը առաւ ձեռը, սկսեց իրա դարցերը ածիլը։

—Ախչի՛ ասեց բլուլի միջից. արի՛, քու էրեսը տեհնամ ու էթըմեմ։ Ախչիկը հօրիցը թաղուն գնաց չոպանի մօտը։

Տղէն ասեց.—Իրեք անգամ քու հէր ընձի խափեց, հըմի ես էթումեմ, ինձ քցեմ ջուրը, ընկնեմ հեղղուեմ, հան քարափից քցեմ,

մտնեմ։ Ախչիկն ասեց.—Դիմըն էթաս, ես քու հետն եմ. ջուրն ընկնես, քու հետ կընկնեմ, քարափից ընկնես, քու հետ կընկնեմ։

Ասեց.—Ախչի, որ ընենց ա, գնա՛, քու պատրաստութիւնը տես, էս գշերը կէթանք։

Ախչիկը հօրիցը թագուն գնաց, էրկու հատ ձի պատրաստեց։

Ախչկայ հէրը տղին կանչեց, ասեց.

—Խմ չես գալի. քու ճախն առնես էթաս։

Տղէն ասեց.—Ընձի ճախ չունեմ, չեմ ուզում:

Ասեց.—Դէ, գնա՛, քու հէրն անիծած, որ էգուց էրեւացիր, ես քու գլուխ կը կտրեմ. էկեր ա դաւի անելու, ախչիկ ա ուզում։

Տղէն վեր կացաւ, գնա՛ց, չոլումը պառկաւ ու բլուլը ածեց, ասեց բլուլի միջից.—Ախչի՛, մութն ընկաւ, վեր կաց ու արի՛։ Ախչիկը որ բլուլի ձէնը լսեց, ձիանը առաւ ու գնաց. գնա՛ց տղի մօտը։ Ամենքը մի ձի նիստան՝ ասեցին, դէ՛, քշա։

Քշեցին, գնացին, շատ ու քիչ Աստուած գիտայ. գնացին մի սարի գլուխ նիստան, ճամփէն կորաւ. ընտե ասեցին.—Վէ գանք ըստի. էս գշեր ըստի մնանք, լիսը բացուի, նոր ճամփէն գտնենք ու էթանք։

Ըտե նստան, հաց կերան, պառկան քնան։

Լիսը բացուեց, քամաշա արին, տեհան մի հատ վիշապ գլուխը դրեր ա պոչի վրայ, չորս բոլորը կտրեր ա, վեր կացաւ, թուրը քաշեց որ վիշապին տայ. վիշապը ասեց.—Ի՞նչ էս անըմ, այ տղա՛։ Ասեց.—Քե պտի սպանեմ, ճանապար ըլի էթանք։ Ասեց.—Թուրը դիր տեղը, թէ չէ քեզ ու քու նշանածին մի բերան կանեմ։

Ասեց.—Խնդրումեմ, ճանապար տաս, անց կենանք:

Անկարելի ա. ասաց վիշապ. տեղ չէք կարայ էթայ, չարի իմ ասածը չկատարէք։

Ասեց.—Քու ասածն ինչ ա, որ կատարեմ։

Ասեց.—Իմ ասածն էն ա, որ էթաս Սըմաւոն թագաւորի քաղաքը, իմանաս, Գիւլը որ Սըմաւոն թագաւորի կնիկն էր, Սըմաւոն թագաւորին ինչ արեց, էդ խապարը կը բերես։

Ասեց.—Դէ, ճանապար տու, էթանք:

Ասեց.—Այ տղա՛, դու գնա՛, ես քու նշանածին ընենց կը պահեմ, վարդի պէս։ Ասեց.—Չըլի, ես կը տանեմ, ուրիշ տեղ պահ կտամ ու կէթամ։ Ասեց.—Քու աճալն էկեր ա։

Ասեց.—Որ ըդենց ա, կէթամ, նշանածիս պահայ։

Նշանածը մնաց վիշապի կուշտը, տղէն ճանապար ընկաւ։

Ընկաւ, շատ ու քիչ Աստուած գիտայ, գնաց մէ քաղաքի բռաստ էկաւ, էդ քաղաքի մէջը ծարաւութիւնը շատ զօրեց ըղըան, որ տանիցը ջուր ուզեց, ասին ջուր չկայ։ Գնաց, մտաւ պառաւու

տուն, ասեց.—Պառաւ Աստուծոյ սիրուն ըլի ինձ ջուր տու, ես ծարաւ մեռայ։

Պառաւն ասեց.—Ջուր չկայ, ես ո՛ր տեղան տամ, այ որդի։

Ասեց.—Պառաւ, մի խլաճ արա, թէ չէ՛ քե կսպանեմ։

Պառաւի չարէն կտրուաւ. գնաց մի բօնձի մէջ չռեց, բերեց տուեց ընդըրան. առաւ, խմեց ու բօնձը դըրեց ընտի։

Ասեց.—Պառա՛ւ, ձեր ջուրը ճամ տաք էր, ճամ չոր էր։

Ասեց.—Որդի՛, Եզդանից պահեմ, Աստծուց ինչ պահեմ, էս քաղաքին մի հատ աղբուր կայ, մի հատ վիշապ ա փհյտա էլեր մէջը. օրը մի աղայ, մի ախչիկ տանըմենք. ուտում ա, ջուրը թողըմ ա գայ. Թաքաւորի ախչկայ ճօբարն ա, հինգ օր է չի տանըմ, օրէց օր ետ ա քցըմ, ընդուր ջուր չկար, ես էլ չռեցի, բերի տուի քեզ։ Ասեց. —Պառաւ, ես քնահարամ եմ, քնըմ եմ. Թագաւորի ախչիկը եփոր տաննեն ինձ իմացրայ։

Պառաւ ասեց.—Շատ լաւ կըլի։

Պառաւը ման էր գալըմ քուչում. տեհաւ դափով զուռնով տանըմին Թագաւորի ախչկան, էկաւ իմացրեց տղին։

Տղէն վեր կացաւ, ասեց.—Ի՞նչ ա, նանի։

Ասեց.—Թագաւորի ախչկան տարան, վեր կաց։

Վեր կացաւ, ընկաւ Թագաւորի ախչկայ քամակն ու գնաց։

Տարա՛ն, ծառ կար, ծառի կշտին դըրեցին ու քօմա ետ դառան։

Մի բլութ փլաւ կար Թագաւորի ախչկայ հետ, մի բլութ խորոված, էն օր ուտէր, վիշապը բօլ ջուր թողար։

Քօմա ետ դառան, էկան, էդ ախչիկը, էդ տղէն մնաց։

Ախչիկն ասեց.—Այ տղա՛, դո՛ւ խի մնացիր։

Ասեց.—Վիշապը որ քեզ ուտի, դու Թագաւորի ախչիկ ես, ինձ էլ թող ուտի։ Ասեց.—Ափսոս ես. գնա՛, դու մուրազ կունենաս։

Ասեց.—Անկարելի ա, չեմ եթայ։

Ասեց.—Պա՛ էս խորոված գառը, փլաւը ում համար բերեր էք։

Ասեց.—Վիշապի համար բերեր ենք որ շատ ջուր թողայ։

Ասեց.—Փլաւը կուտեմ, գառն էլ՝ էդուց ճանապար էմ էթում, հետս կը տանեմ՝ ասեց. ախչի, քնըմեմ, վիշապը որ դուս գայ, ինձ իմացրայ։ Հենց վիշապը դուս էլաւ, ախչկայ լիզուն կպաւ, լաց էղաւ. արտասունքը թափեց էդ տղի էրեսին. տղէն զարթնեց, ասեց. —Ախչի, ինչ ե՛ս լաց ըլլում, էլ չկարաց լիզուով ասիլը՝ ձեռը մեկնեց դպա վիշապը։ Տղէն վեր կացաւ ու կաղնեց. վիշապը էկաւ, ա՛սեց. —Էյ Թաքաւոր. էս իրեք-չորս օր է չես բերեր, հիմի ջուխթն ես բերե «որ բօլ ջուր թողեմ» ըսդոնց էլ պտի ուտեմ, ջուր էլ չթողեմ։ Էս չարաթ պտի էս քաղաքը անցնեմ, էք ու որձ չթողեմ։

Տղէն ասեց.—Դէ, մօտ արի, տենամ էդ ինչ խօսքեր ես խօսըմ։

—Գալիս էմ, ասեց, քեզ ու ախչկան կուլ տամ, ընկնեմ քաղաքը։

Տղէն Թուրը քաշեց ու հասաւ դպա վիշապին։

Ճաշուանից կռուեցին չարի արևմտոց, ասեց.—Ախչի, ես բե. զարեցի, դու փախի, հիմի վիշապը մեզի կը յաղդի։

Վիշապը հասաւ, տղին բռնեց, քաշեց դպա փորը։

Տղի Թուրը ղայիմ ձեռքն բռնած էր. վիշապի բերանը ճղեց, քանի կուլ տուեց, ճղեց. գնաց պօչից դուս էկաւ։ Վիշապը սատկեց։

Տղէն էկաւ, ախչկայ մօտը կաղնեց. ախչիկ ձեռ տուեց վիշապի արնին, տուեց էդ տղի մէջքին։

Ախպրեցը մի թամուզ դոլակ ջուր լցին ու էդ տղէն ու ախչիկ ետ դարցան դըպա քաղաք։

Քաղաքացիքը թօփ էն էլե, ասըմեն.—Թաքաւորը իրա ախչկան թեզ չըրկեց, որ վիշապը թեզ ջուր Թողար, գար. էլէք էԹանք Թաքաւորի մօտ տեսնանք, էս ջուրը ախր խի չի գալիս։ Գնացին Թաքաւորի մօտ, ասեցին։

Թաքաւորն ասեց.—Խի էք վրազե, կգայ։

Թաքաւորին ասեցին.—Մեր էրեխանց ծօպաքին թեզ դ'րկումէս, քու ախչկայ ծօպաքին չորս օր յետ քցեցիր։

Մէկ էլ էն տեհան ախչիկը դռնից մտաւ ներսև։

Նոր ժողովուրդը ձէն տուեց.—Հըէս, էկաւ, ընդուր ջուր չէկաւ։

Թաքաւորն ասեց.—Որ էկաւ, իմ խօսք գետնումն ա տալի, իրաւունք էմ տալի ձեզ, իմ ախչիկն կտոր. կտոր արէք։

Ախչիկն ասեց.—Էրկու սահաթ սապր արէք. ջուրը էկաւ, էկաւ ես հո ձեր ձեռքից փախչողը չեմ։

Էրկու սահաթէն ետը տեհան ջուրը էկաւ. սկսեցին քաղաքականները կժերը լցնիլը, տեհան ջուրը պղտոր, արնաջուր ա գալի։

Ախչիկը ասեց.—Սապր արէք պարզի, էս ջուրը չկտրուէ։

Լիսը բացուեց, առաւօտը ախչկան ասին.

—Այ ախչի՛կ, էս ի՞նչ բան ա էլե, ըսենց ջուրը էկաւ։

Ասեց.—Մի տղայ էկաւ, վիշապին սպանեց։

Թաքաւորը ասեց.—Ո՞վն է վիշապին սպանեը, իմ ախչիկը պտի տամ էն տղին, ո՞րն աԹօ գայ։

Ջառչին ընկաւ, ջառ բռռաց։

Սաղ քաղաքի տղէքը Թոփ էլան, էկան Թաքաւորի մօտը, ասեց.—Ախչի, ըսդոնց ո՞ր տղէն ա։

Ասեց.—Մին մին բեր, իմ առաջովս անց կացըրայ. նշան ունեմ, ես գիտամ որն ա։

Էկան, բիրաթի անց կացան, էլ տղայ չմնաց քաղաքում։

—Ախչի՛, ասեց. բա որն ա, էդ հրեշտակ էր, մեզի ազատեց։

Ջառչուն ասեցին.—Էլ տղայ չկա՛յ, բիրասի կանչեր էս։

—Էլ տղայ չկայ, ասեց. մի ղարիպ տղայ կայ պառաւի տանը։

Թագաւորը հրամայեց.—Գնացէք, ընդըրան էլ կանչէք։

Գնացին ընդըրան էլ կանչեցին, էկաւ ախչկայ մօտը։

Ախչիկը էրեսին մտիկ արեց, քամակին. տեհաւ նշանը քամակին ա։

Ասեց.—Թագաւոր ապրած կենայ. էս տղէն ա։

Ասեց.—Իմ ասածն ասած ա, իմ ախչիկ տուի քեզ, անըմ իմ ըամ, թագաւորութիւնը դու արա։

Ասեց.—Թագաւոր ապրած, ես ախչիկ առնող չեմ, լինձ նշանած ունեմ, անկարելի բան ա, ես իմ նշանածի պատճառովն եմ ընկեր չոլէչոլ, ես պտի էթամ Գիւլ Սըմաւոն Թագաւորի քաղաքը, Գիւլը ինչ արեց Սըմաւոն Թագաւորին. Սըմաւոն Թագաւորը ինչ արեց Գիւլին, էթըմեմ էդ խապարն իմանամ որ, էթամ, իմ նշանածին հասնեմ։

Թագաւորը աղջիկ էդ տեղ տըտմեց, ասեց,—Ինձ պտի առնի, էդ էլ նշանած ունի, էլ չի առնի։

Թագաւորին խնդրեց, ասեց.—Նա ճանապար նշանց տուէք. Նա մարդ դրէք, էթամ հետը։

Թագաւորը ասեց.—Մարդ չի գիտայ էդ քաղաքի տեղը. ըստե մի հալիւոր մարդ կայ. կանչենք գայ, տեսնանք ինչ ա ասըմ։ Հալիւորին կանչեցին, իրեք հարուր տարեկան էր, Թագաւորը հարցրեց. —Պապի՛, ասեց. Սըմաւոն Թագաւորի քաղաքը ո՛ր տեղ ա, մի սալխ տո՛ւր։

Ասեց.—Մեշի միջին մի ֆաչալ ֆերֆերսան ղուշ կա՛յ. ըդըրա տունը երկաթից ա, թունելու վախսը տալիս ա իրար, կրակ ա թափըմ, ես գնացեր եմ մեշէն ավ-ղուշ անելու, ընդըրա հետ չատ խօսացեր եմ, էն էլ իմ Նաշին ա, Սըմաւոն Թագաւորի Նաղըլ էն ղշիցն լսեր եմ։

Թագաւորը հրամայեց. – Գնացէք, էն ղշին կանչէք, գայ։

Գնացին, կանչեցին. ղուշն՝ էկաւ Թագաւորի մօտը, Թագաւորը ասեց.—Սըմաւոն Թագաւորի քաղաքը տեսած կըլ՞ս։

Ասեց.—Տեսեր էմ։ Ասեց.—Կարաս, էս տղին տանես։

Ասեց.—Հարուր իցցուն տարեկան վախսս էմ գնացե, հըմի իրեք հարուր տարեկան էմ, ղուսումս կոտրեր ա։

Ասեց.—Տասներկու անգամ նստեր, ճուտ էմ հանե, ճուտի տէր չեմ էլե, իմ ճտերը հըմի ֆօրփայա, պտի թըցնեմ, թէ որ էս ճտերիցն էլ զրկուայ, ընձի պտի սպանեմ։

Տղէն վեր կացաւ, գնաց դըպա մէջէն, ասեց.—Էթամ, տեսնամ ղշի բունը ո՞ր տեղ ա։

Գնաց, էրկու օր-իրեք օր ման էկաւ, բունը գթաւ. գնաց, հեռու պարկաւ. թամաշա արեց։

Բունը տարեր էր, չէր տարեր, տեհաւ ղշի ճտերը ճըվճըվացին, բիրտեն զարթնեց. տեհաւ վիշապ փաթըթուեր ա ծառին, էթըմ ա ղշի բունը. հասաւ որ ճտի մէկին կուլ տայ. Թուրը քցեց, վիշապի մէջ տեղիցը կտրեց, Թըռվ կոտորեց, լցեց ցած։

Էրկու կտոր լցեց ճտերի աղաքը, ճտերը սկսեցին ուտելը։

Ինքը ծառի տակիցը քիչ հեռու պարկաւ, քնաւ։

Ղուշն էկաւ, տեհաւ ծառի տակին մի մարդ պարկած ա, ղուարաւ, էկաւ դըպա տղէն որ վեր կալէ Ֆալաքի օխտը ղարը, տայ գետնով, հազար բիճա անի. ասեց.—Էս էր իմ ճտեր ուտողը. զիրպա-զիրպա անեմ ըստուր։

Ճտերն ասեցին.—Մեզ պըծացնողը էդ ա, թամաշա արա էն տեղ։

Թամաշա արեց, տեհաւ մի վիշապ սպաներ ա։

Վեր էկաւ, տղի գլխի վերև կաղնեց. հով արեց, ասեց.—Ինչ ուզի էս տղէն, պտի կատարեմ, իմ ճտերն ազատեց։

Տղէն զարթնեց, տեհաւ ղուշը գլխավերևը կաղնած ա, տղին ասեց.—Մի վախենայ. ասա, ինչ ուզես, ես կը կատարեմ։

Ասեց.—Սըմաւոն Թաքաւորի քաղաքը պտի տանես ընձի։

Ասեց.—Գնա, Թաքաւորին ասա, բուդ կապի ընձի քառասուն օր. ջանս վրայ գայ։

Տղէն վեր կացաւ, գնաց Թաքաւորի մօտը։

—Այ տղա՛, ասեց Թաքաւորը. էս քանի օր ա ո՞ր տեղ իր։

Ասեց.—Թաքաւոր ապրած՝ գնացի մէշէն, ղշի բունը գթայ պարկեր՝ քներ ա, ճտերի ձէնը դուս էկաւ, զարթնայ, տեհայ վիշապ ճտերն ուտում էր, վիշապին սպանեցի։ Ղուշն խօստացաւ որ ինձ տանի։

Թաքաւորն ասեց.—Ղշին կանչէք, գայ։

Գնացին Քեչել քեարկեարտանին կանչեցին, էկաւ։

Թաքաւորն ասեց,—Խօստանը՞մ էս որ տանես ու բերես։

Ասեց.—Խօստանում եմ։ Ասեց.—Եփ կը տանես։

Ասեց.—Քառասուն օրէն ետ կը տանեմ, ճտերն էլ կը թռնեն։

Ասեց.—Օրական ինչ տար կուտես։

Ասեց.—Օրական տասը ոչխար՝ տասը լիտր էլ գինի, քառասուն օր պտի տաս։ Կապեցին տաս ոչխար, տաս լիտր էլ գինի՝ քառասուն օր կերաւ. քառասուն օր թամեց, տեհաւ ճտերն հալա չեն թռնըմ, տաս օր էլ մնաց։

Տղին ասեց.—Գնա՛, քառասուն լիտր գինի, քառասուն էլ ոխչարի դմակ հազրա որ էթանք։

Հազրեց, Քեաչալ քեարկեարսաճը էկաւ, իրան փորձեց։

Վ,եր կացաւ, ոտները առեց իրար, Ֆալաքի օխտը ղաքը նիլաւ. էկաւ մի հինգ օր էլ պաճս էլաւ։

Գնաց, ճտերին թռցրեց, ասեց.—Դու ձեր գլուխը պահէք, ես էթումեմ, եա գամ, եա չգամ. էդ էր իմ մուրազը, ճտերս թռցնէի, էլ ըստուց դէն դուրս չունեմ։

Ղուշն էկաւ, Թագաւորի պալատի առջևը վեր էկաւ։

Քառասուն լիտր գինին, քառասուն դմակը բերեցին, դրեցին ըդըրա թևերի վրայ, տղէն էլ նստեց թևերի վրայ, սաղ քաղաքը թոփ էլաւ, էկաւ թամաշա։

Ղուշն ասեց.—Մնա՛ք բարին. ոտները առեց գետին, կրակը թափեց ոտներիցը, էլաւ Ֆալաքի օխտը ղաքը։

Ասեց.—Այ տղա՛, աշխարքը ինչ ղսար ա էրևում։

Ասեց.—Մի կալի ղսար ա։

Էլի բանձրացաւ վիրև, ասեց.

—Աշխար ինչդար ա էրևում։

Ասեց.—Մի մժիկ ա, թռնըմ դէս, թռնըմ դէն։

Ասեց.—Տղա՛, ժամանակն ա, վեր ալտի գանք, Սմաւոն Թաքաւորի քաղաքի վրայ, ղու կանեմ՝ դմակը, ղի կանեմ, գինին քցայ։

Ըգենց ղու-ղի արեց. քցեց. դմակի մէկը վեր ընկաւ գետինը, իրան պուտը կորեց, արեր ղցի բերանը. ,ղուշը իմացա լիզուի տակին պահեց։ Էկաւ, քաղաքի ղրաղը էկան։

Ասեց.—Վ,եր կաց, գնա, տղա՛։

Տղէն թոփալ, թոփալ գնաց։ Ասեց.—Արի՛, արի։

Լիզուի տակից հանեց, ղրեց վրէն, լիզաւ՝ լիզելու բաշսաճ սալացաւ։ Ասաց.—Այ տղա՛, էս իլ ան պալատն ա, էս էլ քաղաքն ա, էս էլ իրան պադշան ա, էն էլ դարվազէն ա որ էրևում ա, իմ բընբուլը կտամ քեզ, հենց որ նեղ, տեղը կընկնես, չախմախի կտաս, ես քու կշտին հազիր էմ։ Տղէն կեթայ։

Կեթայ, կը մտնի պաղչէն, ման կգայ։

Թաքաւորը փաճճարից թամաշ կանի, կը տեսնայ մի տղայ պաղչումը ման ա գալի, վազիրին կասի.—Կանչէք գայ. տեսնանք ինչ տղայ ա, մեր երկրի տղայ չի։ Կեթան կանչեն, կգայ։

Կըգայ, Թաքաւորին գլուխ կտայ օխտը անգամ, վրայ ուէթին ձեռք կը բռնի կը կաղնի։ Կասի.—Ո՛րտուց էս։ Կասի.—Երևանայ։

Կասի.—Այ քու տունը չքանդուի, էրկու տարին մարդ չի՛ կանայ հասնի էս տև, դու ոնց ես էկե։

Կասի.—Էկերեմ Սըմաւոն Թաքաւորի խապարը տանեմ, Գիւլը

Սըմաւոն Թաքաւորին ինչ արեց, Սըմաւոն Թաքաւոր Գիւլին ինչ արեց։

Թաքաւորը ասեց.—Արի՛, գնա՛, էդ ճաղը ես չեմ տալ քեզ, որ ասեմ, գլուխդ կը կտրեմ։

Ասեց.—Թաքաւոր ապրած կենայ, տաս ու կտրա։

Ասեց.—Առանց տալ գլուխդ կը կտրեմ, գնա։

Ասեց.—Տաս ու կտրա, բաֆիլաճ լսեմ։

Ասեց.—Ջաճլատ ։ Էրկու ջաճլատ Թրեր ձեռներ, էկան, կայնան։

Ասեց.—Ես Սինամ Թաքաւորն եմ, Գիւլին էն ղտար կսիրէի որ, հացը ուտելու վախտը չէի Թողալ գետին նստէր, գոգիս կը նստէր, հաց կուտէր. ո՛ր տի որ ոտը կը դնէր, գետայի իմ աչքի մէջն ա դնըմ. ինչ որ ասեր, կը լսէի. մէկ օր դուս էկայ, գնացի ման գալու, դաւարի, ձիանոց մէջ. մի ջուխտ ֆեաճիկլ ձի ունէի, որ հազար մաճեք էի տուեր՝ բերեր, էդ ձիանը ես ու Գիւլը կը նիլնէինք. մարդ իրաւունք չունէր նիլնելու։ Թամաշա արեցի, էդ ձիան, մէկէլ ձիանոց վրայ առըխ էն մնացեր, Մեյտար բաշուճ կանչեցի, ասեցի. —Շուն չան որդի՛, էս ձիան խե՞ էն առըխ, ըտորանց ճնչն ա պակաս. մի քանի օրէն ետը կգամ, որ առըխ էլաւ, քու գլուխը կը կտրեմ։

Մեյտարը ասեց.—Ես չեմ կարայ քե ասի, կգաս, մի մի գշեր ըստե կը մնաս, քու աչքով կը տեննաս։

Ասեցի.—Գշերն կգամ։ Դարձայ, գնացի պալատը. Գիւլին ասեցի.—Հաց բե՛ր, ուտեմ։ Հաց բերեց։

Պարկայ, քնայ. Գիւլն էլ գնաց, իրա օթախն քնաւ . . ես վեր կացայ, գնացի մեյբարխանեն։

Մեյբարի չորեքն հագայ ու պարկայ, մէկէլ տեհայ դուռը ծեծեցին։ Վեր կացայ, բաց արեցի, ասեցի.

—Ո՛վ էք։ Գիւլը մի պլետ չքաշեց՝ մի Թօփ, ասեց.—Քոռ չանորդի, չես ճանաչըմ. ձիանը դուս քաշայ։ Մտայ նեքսև, ասեցի. —Ո՛ր ձիանը։ Էրկու պլէտ էլ քաշեց, ասեց.—Ո՛ր ձիանը, էն ձիանը Թաքաւորին հետ նիլնում էնք։

Թամքը մի խաճ, կեամը մի խաճ, չարի գԹայ, մի տասը պըլէտ էլ էկան, տուեցին։

Քաշեցի ձիանը դուս. իրանք նիլան. մէկը զանքաչս նիլաւ, մէկը Գիւլը նիլաւ, ինձ ասեցին.—Ընկի աղաք։ Ընկայ աղաք։

Հմի ճանփէն չեմ գիտում, գալխս պլետըմ էն։

Ընկայ աղաք բոբիկ, տոռ էս քարին-էն քարին, սաղ խարալու էլաւ։ Գնացի, հասայ ձորի մէջ մի աքաբի կուշտ. աըաբը զաղի դռան էԹըմ ա գալի։ Արաբն ասեց.—Լերբ, անզգամ, էս գշեր յե-

տացեր էս. քու ուխն հազար վարոց տամ։ Զանքաչս ասեց.—Գըլ-խիդ արևիդ ղուրպաճ, Գիւլս հազար վարոցի չի դիմանայ։ Զան-քանչս ասեց.—Աւլի fեճճը (մաշուած աւել) վեր կալ, ուխն տուր, քու օրթումը տեղը կդայ։ Բաց արեց ու ուխն տուեց։ Որ տուեց, ես իմացայ իմ աչքի մէջ տեղին տուեց։

Գիւլ ասեց արաբին.—Էս մեյթար խամ էր. չուտ չթամքեց։

Էդ տեղ պարկան, իմ աչքի առաջ fեֆ արեցին։

Զանքանչս էլ էդ տեղ ուտել խմելու հետ fեֆ անըմ։

—Մեյթար, ձիան քաշայ, դայ, ասացին։

Ձիանը քաշեցին, արաբը թամաշա արեց էրեսիս, ասեց.

—Գիւլ, կասես ըսդրա աչքեր Սըմաւոն Թաքաւորի աչքերն ըլլի։

Ասեց.—Արաբ ջաճ. ես քնացրեցի էկայ։

Նիլան, քշեցին, ես ընկայ առաջ, էկայ դուռը. ըսդոնք ձիանը բրախ տուեցին, գնացին. ժամն էլ տուեց։

Էկայ մեյթարին վեր կացըցի։ Մէյթար ասեց.—Տեսա՞ր։

Ասի.—Տեսայ։

Էկայ պալատը. տեհայ Գիւլը ժամ ա գնացել։ Իմ թագաւորա-կան չորեր հագայ ու նստայ թախտը, հրամայեցի ճազիրին, վազի-րին Ցլա՛ճ ձորի մէջ մէ զաղա կայ, մէկ արաբ կայ. բռնէք ու բե-րէք։ Գնացին, բռնեցին ու բերին։ Արաբին զճճըլով կապեցի։ Խա-պարը գնացեր ա Գիւլին թէ թաքաւորը մի արաբ բռներ, կապեր ա. զանքաչս Գիւլին ասեր էր.—Ցողը գլխիդ, էս գչերուան մեյթարը Սըմաւոն Թագաւորն էր, մենք, հմի էթանք ինչ ճուղապ տանք. ամեն բանը որ իրա աչքով տեսեր ա։ Գիւլն ասեց.—Արխայիճ կաց. ես կեթամ, տես ընդրա գլուխն ինչ կը հանեմ։ Էկաւ, Գիւլը մտաւ նեքսև, թամաշա արեց. արաբին կապեր էմ, ասեց.

—Էս ինչ արաբ էս բերէր։ Ասի.—Էս գչերուան արաբն, ա հմի էրկսիդ էլ կապեմ, քցեմ ծովը։

Մի հատ ճիպոտ կար ձեռը, ասեց.—Սըմաւոն Թաքաւոր, ըլ-լես մի հատ անտէր էշ։ Էլայ մի անտէ՛ր էշ, ընկայ fիլլուկները։

Արաբին չինեց Թաքաւոր, դրեց իմ տեղ։

Հըմի էլերէմ անտէր էշ, հոտաղ մշակ, նիլնում, չարչըրում են։ Միջքիս եարէն բացուեց։ Բիլլիկի վրայից, տեհայ զանքանչս, արա-բը. Գիւլը էթըմին համամ։ Գիւլն ասեց.—Նանի, էս էշը ճանաչըմ էս։ Ասեց.—Չէ, չեմ ճանաչըմ։

Ասեց.—Էդ Սըմաւոն Թաքաւորն ա։

Զանքանչս ասեց.—Գիւլ էն ղեր նիլեր էն, մէջքը էլեր ա եարա, մեղք ա, չինայ մի ուրիշ բան։

Էկաւ, վարոցը տուեց ընձի, ասեց.—Սըմաւոն Թաքաւոր, ըլլես մի անտէր թազի, քաղաքումը ինչ ցար չուն կայ, թափի քու վրայ.

հեղդի քեզ։ Ելայ մի անտէր բաղի, քաղաքումը ինչ ծառ չուն կայ, թափան վրէս, հեղղեցին, տարան, կոխեցին մէջէն. անճախ փախայ, պրծայ. չներն դառան էկան դըրպա քաղաքը։ Որ մութն ընկաւ, մէջիցը դուս էկայ, ասեցի.—Ուրիշ ճաճավար կը գայ, ընձի կը հեղդի։ Էկայ, մտայ քաղաքը. հմի չներից վախըմեմ, պատերի տակից խավաշ, խավաշ գալիս էմ, դըրպա քաղաքը։ Էկայ իմ բաղչի խըռնակովը մտայ բաղչէն, գնացի, աշխաճի դուանը նստայ, Լիսը բացուեց, թամաշա արեցի. արաբը, Գիւլը, զանքաչս լուացուեցին, նստան, ղայֆա խմեցին. Խավաշ, խավաշ մօտացայ, նստեցի, թամաշա արեցի։ Գիւլն ասեց.—Նանի, բաղին ճանաչըմ էս։ Ասեց.—Չեմ ճանաչըմ, ում բաղին ա։

Ասեց.—Ախր Սըմաւոն թաքաւորն ա, չինեցինք բաղի։

Ասեց.—Մեղք ա, ուրիշ բան չինայ. չներ կը հեղդեն։

Ասեց.—Սըմաւոն թագաւոր, ըլլիս մի կատու, ման գաս։ Համա մի դըրւզ տուեց, էլայ կատու։

Էլայ կատու, չմտ ուրախացայ, ասեցի.—Էլ Գիւլի աղաք չեմ էթայ, ըստերանք զաս մաս կուտեմ։

Գիւլը որ տե ման գար, էլ աղաքը չէի էթայ, որ ուրիշ բան չչինէր։ Մէկ օր ղարավաշներից մէկն էկաւ, գլխ մաժմըժեց, ասեց.—Սըմաւոն թաքաւոր, իմ աչքերը դուս գայ, խարապ, էլի կըլլես թաքաւոր թէ չէ։

Որ ըդենց ասեց, ես ճըվճըվացի, ընդրա ձեռները լիզեցի, ասեց.—Սըմաւոն թաքաւոր, ըտե կաց, Գիւլը ժամ ա գնացեր, էթամ, տենամ, փէտն ընտե ա, բերեմ։ Էդի գնաց, տեհաւ փէտը դօշակի տակին ա, բերեց, տուեց ընձի, ասեց.—Սըմաւոն թաքաւոր, ըլլէս էն թաքաւորը։ Էլայ էն թաքաւորը։ Փէտն առայ ձեռս, գնացի, մտայ պալատը, տեհայ արաբը թախտըմը նստած ա, տուեցի, ասեցի.—Արաբ, ըլլես մի սև քօթուկ, մուխը տարին տասուերկու ամիս քու վրէցը չպակսի, մխաս։

Զանքաչս էկաւ, մտաւ ներսև, ասեցի.—Ըլլես մի սև աթոռ, վըրէդ նստեմ, դիւան կտրեմ։

Էլաւ մի սև աթոռ։

Խապար։ գնաց Գիւլին, Գիւլն ասեց.—Ես էթամ, ճանդով փէտը կառնեմ։

Գիւլ մտաւ ներսև, էլ չթողեց մօտ գար, հետը խօսար. փէտով տուեց, ասեց.—Ըլլես մի չոր չինարի ծառ։

Ասեց Սըմաւոն թաքաւոր.—Այ տղա, լաւ անկանջ արէք. Գիւլն էդ օյինը հանեց իմ գլուխը, ես էլ էս օյինը հանեցի։ Ասեց, դէ էն քօթուկը էն արաբն ա, էս աթոռը զանքաչս ա, չոր չինարի ծառն

էլ Գիւլն ա, հըմի էթըմ, փաթըթուըմեմ էս ծառին, ախ ու վախ եմ անըմ, փէտը ձեռս չընկնըմ, որ սաղացնեմ։ Ասեց.—Լսեցիր, տղա՛, իմացար։ Ասեց.—Հա։ Ասեց.—Ճալլա՛ս։

Ճալլաս ձէն տալու բաշտան տղէն ընկաւ Թաքաւորի տներ, ասեց.—Ինձ կէս ժամ ժամանակ տաս ,աղօթք անեմ։ Գնաց բաղչէն կանգնաւ աղօթի. ղուշի ճճուլը հանեց, չախմախի տուեց. ղուշն էկաւ, վեր կալաւ, հանեց Ֆալաքի օխտը ղաքը. Թաքաւորը ջուխս ձեռով տուեց գլխուն, ասեց.—Իմ սրոր ընկաւ աշխարքը, էլ ապրելն ընձի հարամ ա, վեր կացաւ, իրան քցեց ծովը։

Ղուշը էդ տղին բերեց, Թաքաւորին մօտը վեր դրեց. Թաքաւորին ասեց.—Էս քու տուած տղէն ա, Սըմաւոն Թաքաւորի քաղաքը տարայ, ու բերեցի։

Թաքաւորը ղշին բուդ կապեց, ամեն օր իրա վախտին կգար. իրան կուտը կուտէր ու կեթար։

Էդ տղին ճանապար քցեց, գնաց, հասաւ Վիշապին. թամաշա արեց, տեհաւ որ իրա Նշանածին չատ լաւ պահեր ա, էնպէս, ինչպէս վարդ։

Սըմաւոն Թաքաւորը ոնց որ պատմեց էդ տղին, տղէն էլ պատմեց Վիշապին։

Վիշապն ասեց.—Ես էլ Թաքաւոր եմ էլե, կնկայ ղազապի եմ էկե, իմ տակը ոսկի ա, քանդէք ու տարէք։

Տղէն ու ախչիկ քանդեցին, խուրջինները լցրեցին. քցեցին ձիանոց վրայ, նիլան, էկան, ախչկայ հօր տանը վեր էկան։

Ախչկայ հէրն էկաւ, տեհաւ ախչիկն ու տղէն էկեր էն տուն, նոր տղին ասեց.—Էդ ո՛ր տի էք գնացեր, էն տար ման էկանք, ոչ գթանք, ոչ էլ սաղ տուող էլաւ։

Էն սահաթը հարսանիք կանգնացրեց։

Օխտը ցերեկ, օխտը գշեր հարսանիք արեց։

Ընդոնք հասան իրանց մուրազին։

39

ՕՁԻ ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆԸ ԿՆԿԱՆԻՑ ՇԱՏ ԷԼԱՒ

(Վաղարշապատի բարբառով *)

Մի կնիկ շատ չար էր, ընդրա մարդը ինչ անըմ էր, վրէն չէր կարըմ. ընդրա ձեռիցը դաց էր անըմ։

Մէկ օր ջուալ վեր կալաւ. կնկան ասեց.—Էթանք Թիթեն թօփ անելու։ (Որ տանի, չոլումը կորցնի)։

Գնաց, չոլումը մի հատ ծոր կար։

Կնկան ասեց —Արի. կախ տամ, ջուր հանայ, խմենք։

Կախ տուեց ծորն ու մի հատ քար վեր կալաւ, քցեց բերնին. գնաց պըըտուեց. մի հատ օձ բռնեց. բերեց, քցեց էդ ծորը, որ էդ օձը կնկան տայ, սպանի։

Գնաց, մի հատ էլ գէլ բերեց, քցեց ծորը։

Գնաց, մի էլ առջ բռնեց, բերեց, քցեց ծորը։

Կնիկը ասեց.—Ըդըանք քցըմ էս, ինչ. դու ծուր պտի պըծնես իմ ձեռնէն. նավա՞ս, ըսդէյան դուս գամ, քու ճախիցը կգամ։

Ասեց.—Էդ ջանավարները քեզ սաղ չեն թողի որ դուս գաս։

Մարդը թողեց, էկաւ տուն. մի շաբաթ մնաց, ասեց.—Հալայ էթամ, տենամ. ինչ էլաւ։

Գնաց, քարը չուռ տուեց, ջանավարները ձէն տուեցին։

—Աստուծոյ սիրուն, այ մարդ, դատպեդաց ըսդըա ձեռիցը. մեզ ազատայ էս անզգամ կնկայ ձեռիցը, քու լաւութունի տակիցը դուս կգանք

Պարանը քցեց, մին մին հանեց, բրախ տուեց։

Կնիկն էլ ասեց.—Ընձ էլ հանայ. թէ չէ, չես պըծնի իմ ձեռիցը։

---

* Պատմած է Առուէն Ղուլմեան:

Ասեց.—Խեղդքացեր էս՛ որ հանեմ։

Ասեց էդ քու բանը չի. ինձ հանայ, ասըմեմ։

Պարանը քցեց, կնկան էլ հանեց։

Կնիկը դուս էլաւ, ֆորլի ղրաղը մի լաւ հեղդեց իրա մարդին։ ասեց.—Ֆողեմ գլուխդ, հըմի իմ տունը, տեղը ինչ էլաւ։

Վեր կացան, գնացին տունը։

Իրիկունը գէլը դուռը ծեծեց։

Գնաց դուռը բացեց, տեհաւ գէլն ա. հինգ հատ ոչխար բերեց, ասեց.—Դէ, դու որ էն լաւութիւնը արիր ընձի, բրախ տուիր, բերեցի քեզ էս ոչխարները։

Կնիկն ասեց.—Ոչխարը ո՛ր դիւան ա։

Ասեց.—Էն քու կշտիդ գէլը բերեց։

Ասեց կնիկը.—Կարայ չբերի, էն իմ զարպն էր, բերեց։

Էն եէսի օրն էլ դուռը ծեծեցին. առջն էկաւ, մի դավա բեռ ճօթ բերեց.—Էդ ով բերեց հարցրեց կնիկը։ Ասեց,—Առջ բերեց։

Կնիկ ասեց։—Է՛յ կիտի զարպ, առջն էլ բերեց իմ զարղիցը. այ մարդ, ասեց կնիկը, գէլն ու առջը որ ընձանից վախում էն, դու ո՛ր տի կը մնաս։

—Կնի՛կ, ասեց մարդ, դարս մի՛ անի, դավեն ու ոչխար արեցինք ղավուրմա, ճօթն էլ քեզ բօլ ա. ինչ կուզես, արա։

Մէկէլ տեհան, դալալը ձէն ա տալի ֆուչէֆը.—Մի հատ բեռ Թաքաւորին դավով կորեր ա. ով որ գթաւ, բերեց, պարգև կտանք, որ չբերեցին, ում տանը գթանք, էն մարդը, կորստական ա։

Կնիկը լսեց, էկաւ տուն, ասեց.—Էդ դավեն Թաքաւորական ա։

Մարդն ասեց.—Այ կնի՛կ, սուս կաց. Աստուծոյ խաբր, էդ բանը վերջանայ, էթայ։

Կնիկը ասեց.—Խի սուս պտի կենամ կեթամ, կասեմ. Թաքաւոր ընձի պարգև պտի տայ, քեզանից էլ կը պրծնեմ. անճախ տեղըն էկաւ։

Մարդը ի՛նչ տա՛ր մունճաթ արեց, չլսեց, վեր կացաւ, գնաց. գնաց, Թաքաւորին ասեց.—Քու դավէն իմ մարդն ա բերե, դավէն մորթե, ղավուրմայ էնք արե, ճօթն էլ կտրտերէնք. բիրասի եօրղան, դօշակ, մինթաճայ, բան էնք արե. իմ մարդը չէր թողում, ես զոռով փախեր էկերէմ. ասեցի, «Թաքաւորական մալ ա, տա՛ր, տուր», ականջ չարեց։

Թաքաւորը էրկու մարդ ճանբեց. կնիկը տարաւ, նշանց տուեց։

Էդ մարդին տարան, քցեցին դուրսախխանէն։

Թաքաւորը վճռեց, առաւօտը էդ մարդը հեղտեն։

Էդ օձը իմացաւ, էկաւ, մտաւ պալատը. մի վեց ամսական թոռ

ունէր Թաքաւորին, գնաց, փաթըթուաւ էն երեխու չլինքն ու պար-կաւ։ Հարսը բիրտան տեհաւ օձը երեխու չլնքին, ճուաց ու փախաւ։

Մարդն ասեց.–Էդ խի ճուացիր։

Ասեց.—Օձը փաթթուեր ա երեխու չլնքը։

Թագաւորի տղէն ասեց.—Ձեռ չտաք, Թաքաւորին իմացնենք։

Գնացին, Թաքաւորին իմացրին. Թաքաւորը վե կացաւ, էկաւ. թամաշա արեց, որ օձը փաթթուեր ա երեխու վիզը, գլուխը դրեր ա երեխու բերնի վրէն։ Թաքաւորը ասեց.—Ըդրան իլաճ չըլլի, մի հնարով թէ յետ ըլլի.

Ըստի, ընտի որ ասեցին, էդ դուքսախսանի մարդը ասեց. —Ըհը՛, էն իմ օձն ա. իմ ճաւարին էկեր ա։ Ասեց.—Գնացէք, Թաքաւորին ասէք, ընձի ազատի, էն օձը յետ անեմ. որ երեխէն սկի չիմանայ։

Թաքաւոր էդ մարդը կանչեց, գնաց. Թաքաւորի աղաքը կաղնեց, գլուխ տուեց։

Թաքաւորը ասեց.—Կարմն, օձը յետ անես. քեզ կը բախշեմ ինչ որ մեղք էս արել։

Ասեց.—Ինձ որ բախշեցիր իմ օձին էլ ձեռ չտաք, չսպանէք։

Ասեց.—Գնա, յետ արա, իրաւունք ունես։

Գնաց մօտը. փեշը բռնեց, ասեց.—Օձ ջան, արի, քու ճճբիպարը իմ կնկանից շատ էր։

Օձը յետ էլաւ, կիտուաւ ըդլա դոդը։

Փեշը կոլոնեց ու գնաց Թաքաւորի մօտը. ասաց.—Թաքաւոր ապրած, հըրէս, յետ արեցի. օձն էլ դոդս ա։

Թաքաւորն ասեց.—Ինչ արեցիր, որ յետ արեցիր։

Ասեց.—Բան չարեցի, ասեցի «Օձ ջան, քու ճճբիպարը իմ կնկանից շատ էլաւ», յետ էլաւ օձը։

Ասեց.—Էդ առարկէն ինձ պտի ասես։

Ասեց.—Եավաշ, օձը տանեմ, չոլը բրախ տամ, դամ, ասեմ։

Տարաւ, օձը բրախ տուեց, էկաւ, Թագաւորի կշտին նստեց, ասեց, ինչ որ էլեր էր։

—Հըմի, ասեց. ինչ որ բալբալէք քաշըմ էմ, էդ կնկանից ա, բերեց դարաղաճի տակ, ընձի պտի հեղդէր, էդ օձն ընձի ազատեց, ընդուր ասեցի «քու ճճբիպարը իմ կնկանից շատ ա»։

Թաքաւորը ասեց.—Էն կնկան բերէք, հեղդէք, էս մարդին մի լաւ կնիկ ուզէք։

Էդ կնիկ հեղդեցին, էս մարդն էլ ազատուաւ մօտիցը։

Էդ բալբալէքը էկաւ, կնկան գլխին կաղնեց։

40

ՆՈԽՈՒՏԻ ՔԱՉԱԼ

(Վաղարշապատի բարբառով *)

Մի պառաւ կնիկ կար, մի թոռ ունէր․ էլ զատ չունէր. էդ թոռն էլ Քաչալ էր։ Էդ Քաչալին տարաւ, գօվար տուեց․ չէլաւ, թողաց փախաւ. հորթարած տուեց, թողաց փախաւ. ինչ բանի տուեց, թողաց փախաւ։

Պառաւը ասեց.—Դրուղը տանի քեզ, ինչ բանի տալիս էնք, փախնում էս, մեր ճարը մինց պտի ըլի. քեզ պտի տանեմ, մի հարուր մանեթի ծախեմ՝ բերեմ ուտեմ, չարի մեռնեմ. էլ իլաճ չկայ։

Քաչալի թևիցը բռնեց. տարաւ բազար։

Ասեց.—Ծախում էմ էս մուսուպաք քաչալին. ինչ բանի տալիս էմ, փախնում ա։

Ով էկաւ, էրեսին մտիկ արեց, ասեց.—Էդ պահելու բան չի։

Սարումը քառասուն գող կար. գողերի մէկն էկեր էր հաց առնելու. հացն առաւ փոլցը, դրեց ղօլթուղը, էկաւ որ պտի երթար դպա սարը, էդ պառաւի կշտին կաղնեց, ասեց.—Պառաւ, ինչ քաչալ ա պահեր էս։

---

* Պատմած է Առաքէլ Ղուկիմեան:

1 Քաչալներու վերայ 15-20 ռէֆիաթի չափ լսած եմ. կան տաղներ, որք ամենուն եւս "քաչալ" անուն կտան. իսկ կան տաղներ, որք բացայայտիչով կորոշեն. օրինակ Նօխուտի քաչալ, Փանիրուսի քաչալ, Ֆիլճիլի քաչալ. Ջոլամա քաչալ. Ջիլզիլի քաչալ, Մուսուբաք քաչալ, եւլն:

Սորա մէկ նուղն գիտէ Օհան Փիլիպոսեան. աւելի կարգաւորեալ կը պատմէ:

Ասեց.—Էս իմ թոռն ա. գրողի տարածն ինչ բանի տուեցի, չմտաւ. հըմի բերեր էմ որ ծախեմ։

—Ի՞նչ ա գինը, ասեց. ես առնեմ, տանեմ, մեր ձիանը պահայ։

Ասեց.—Հարուր մանեթ ա ըստրա գինը։

Հարուր մանեթ տուեց ու առաւ։

Պառաւն ասեց.—Գրո՛ղ տանի քեզ, դէ՛ գնա, ես քու էրեսիցը պրծայ։

Էդ գողը Ցօխուծի քաչալին առաւ, քցեց ձիու աղաքը, ասեց.—Դէ, վաղի, էթանք սարը դպա։ Տարմէ սարը, իրանց զաղէն։

Հարամի բաշին դուս էկաւ զաղիցը, ասեց,—Խի յետացար, մենք սոված մեռանք, հէ՛։

—Հարուր մանեթ տուեցի մի պառաւի, էս տղէն առայ։

Հարամի բաշին տղին թամաշա արեց, ասեց.—Այ հայ, էս ինչ մուսուլպաթ քաչալ ա, կորցրա. ափսոս քու հարուր մանեթը, ըստուց անպատճառ մեզ խաթայ կգայ. վեր կալ տար, կորցրայ։

Ասեց.—Մենք քառասուն ձիաւոր ենք, սաղ երկիրը մեզանից վախում էն, էս ի՞նչ ա որ ըստուց խաթայ գայ. մի չափալախ տամ, կը մեռնի, բերեր էմ որ մեր ձիանոց եմ տայ, ջրի, փեյինը թափի։

Ասեց.—Դու գիտաս։

—Դէ՛, ասեց. թամաշա արէք, բազրկեան գալի՛ս ա։

Թամաշա արին, ասեցին.—Արևելքի կողմիցը մի շատ ծանր բազրկեան ա գալի։

—Որ ծանր ա, դէ, ասեց. բիրադինով նըլէք ձիանը։

Ասեցին.—Քաչալ, ըստի կա՛ց, չանք մենք էթանք, գանք։

Ընդոնք գնացին ձորի միջով, որ պտըտէն, գան ընկնէն ճանփէն, աղաքները կտրեն։

Քաչալն քարերի վրով նըլաւ, թամաշա արեց բազրկեաններին, ասեց.—Տեսնամ, ինչ զոր բազրկեան կա։

Գնաց ու մտաւ բազրկեանի մէջ, ասեց.—Ձեր բազրկեան բաշին ո՞րն ա։ Ընդիան մէկն էկաւ.—Հա՛, քաչալ, ինչ ես ասում։

Ասեց.—Հըմի քառասուն ձիաւոր ձեզ վրայ կտան. բեռները ըստի վեր ածէք, ժաժ մի գաք. մի թուր, մի ղալխան տուէք ինձ. մի ուրիշ աբա էլ տուէք, հաքնեմ որ ինձ չճանաչեն։

Ապէն տուին, մի թուր ու ղալխան էլ տուին, կապեց վրէն, ղալխանն էլ առաւ ձեռը, ասեց.—Էկեր էմ ձեզ քօմակ. ընձի հարուր մանեթ փող տուէք, որ ձեզ ընդոնց ձեռիցն ազատեմ։

Բազրկեանը հանեց, հարուր մանեթ ալպեալը համրեց, Քաչալը դրեց ծոցը։ Ասեց.—Էլ չվախենաք, ղայիմ կաղնէք։

Էդ քառասուն ձիաւորը բազրկեանների վրայ տուեց. Քաչալը

եկաւ մեյտան կռիւ. որի ոտը կոտրեց, որի թեը կոտրեց. որի ձիունը տուեց:

Տասուերկու սահաթ կռուեցին, մի զատ չկարացին տանել:

Հարամի բաշին ասեց.—Կասես էս մեր Նօխուտի Քաչալն ըլի. ըդըր սըֆարին ա:

Հարամիքը ետ դառան դըպա իրանց զաղէն:

Քաչալն ասեց.—Հարամի բաշի. էս քու թուրը, էս քու ղալխանը, էս էլ քու ապէն, առեցէք ու գնացէք. ես էթումեմ:

Քաչալն սարիցը վեր էկաւ, մտաւ զաղէն:

Մէկ էլ տեհան, հըրէս հարամիք բիրասի իրարու ետև էկան:

Հարամի բաշին թուրը քաշեց որ տայ, սպանի Քաչալին, ասեց.—Բէօփօղլի մուսուբաթ Քաչալ, քեզ պէս բէտ սըֆաղ քաչալմէլ ընտի կար, չկարացինք մի զատ բերել:

Մէկէլ հարամիք ասեցին.—Էս ինչ ա. ձեռիցը ինչ կգայ որ ըստրան սպանում էս:

Ասեց. Բէտ ըլֆաթ ա. ըստրան էրեսը տեսնողի բանը չյաջողուի:

Ձիանոցիցը վեր էկան, թամքերը վեր կալաւ Քաչալը, թիմարեց, քըտինքները սրբեց, կապեց. դարման, գարի տուեց:

Հարամի բաշին ասեց.—Տղէք, որը պտի էթայ, մեզ համար հաց բերի:

Հարամու մէկը ասեց.—Բիրասի էլ եարալու էնք. էթանք բազարը կը բռնուէնք. Քաչալին ղրկենք, էթայ, հաց բերի:

Հարամի բաշին ասեց.—Քաչալ ջան, արի՛ ըստե, մի տեհնամ: Քաչալը ղօի ղայտայ վազեց, աղաքը կաղնեց, ասեց.—Աղա ջան, հրամմեր:

Ասեց.—Առ տասը մանէթ, էս չահարքը հաց կառնես ու կը գաս:

Քաչալն մի մէշօք վեր կալաւ, թռաւ, գնաց դըպա բազարը, տասը մանէթի հաց առաւ:

Ասեց.—Մէ էթամ իմ տատին տեհնամ. մէ երկու հաց էլ տամ, տատս ուտի:

Գնաց, մտաւ տուն, ասեց.—Բարև, տատի ջա՛ն:

—Վայ բարով, Քաչալ ջան, դու բարով էկա՛ր:

Ասեց.—Տատի, հօ սոված չես:

Ասեց.—Չէ, հարուր մանէթից էրկու մանէթ էմ խարճել:

—Առ, տատի, հարուր մանէթ էլ բերերէմ՝ էս էլ դիր ըդըր վրայ:

Ասեց.—Դլխիդ ղուրբան Քաչալ ջան, բանդ խօ զոռ չի. էդ

ծը տխան բերեցիր։ Ասեց.—Դարs մի անէր, չմա կը բերեմ, մէրը մեռնի Քաչալին, ընդօնք ինչ էն, որ ինձ նեղութիւն տան։

Ասեց.—Դե՛, տատի, յետացայ, մնաս բարին։

Ասեց.—Տառին քե ղուրբան, գնա։

Երկու էրեսն էլ պաչեց, ճանապար դրեց։

Քաղաքից դուս ընկաւ, հենց արեւը մտաւ, մութն ընկաւ. ճանփէն կորցրեց, գնաց դպա գերեզմաննրը։

Մտաւ գերեզմանատունը տաս տասներկու ղուոյուր դրած էր, մտաւ մէջը, ղուպուրի տակը պառկեց։

Գշերուայ կէսը անց էր կացեր, տեհաւ մի մարդ մտաւ ներս. մի մարդ. որ ջաճավարի պէս, ազրայիլի պէս, ասպապը վրէն, ամեն բանը թաճմիլ։ Եկաւ, մեռելները բաց արեց, թամաշա արեց, ասեց.—Էս մէկին տէր ունենայ, կը սաղանայ։

Բիրա՛sի ըղենց վարավուրդ արեց. դուս էկաւ որ էթայ։ Քաչալ ասեց.—Էս էլ տղամարդկութիւն չի. էն գայ, թամաշա անի, ես բստի պառկած մնամ։ Վաղեց, ասեց.—Ո՞ւր էս էթում. դու Նօխուsի Քաչալի անուն չես լսե։ Հասաւ բռնեց։

Իրար հեղդեցին, էնդար հեղդեցին, չարի լիսը բացուեց։ Ուզում ա փախչիլ, Քաչալ չի թողում։

Աճճախ փախաւ, պրծաւ. Քաչալ մաշիկը խլեց։

Մաշիկը դրեց ծոցն ու հացն էլ վե կալաւ, գնաց։

Գնաց, հասաւ ճարամիքանցը, մտաւ զաղէն։

Հարամի բաշին ասեց.—Մուսուբաթ Քաչալ, մեզ սոված կոտորեցիր, էս խի՞ յետացար։

Ասեց.—Աղա՛, ձեր բաճնին անըմ բազրկաճները, որ գային բռնէին ձեզ. տեսայ բան չէլաւ, էկայ։

Ասեց.—Ըսենց թեզ էկար, գշերը ո՞ր տի էր պա։

Ասեց.—Մնացի գերեզմանատանը։

—Մուսաբաթ Քաչալ, հալուր ձիաւոր սիրտ չի անի ընտե մտնի. դու մենց մըտար։ Մի ձի նի՛լ, առ տաս մաճեթ, գնա հաց առ, արի, ըստխան fաչենք, էթանք. թեզ պտի գաս, հա։

Քաչալն ձին նիլաւ, գլա քաղաքը, կրակլի՛ պէս ա գալի։ Էկաւ իրանց դռանը կաղնեց.—Տատի՛, տատի՛, ձէն տուեց։

Դուս էկաւ, ասեց.—Ինչ ա Քաչալ ջան։

Ասեց.—Տատի, տանը կաց, տեղ չէթաս. էս մաշիկը տանեմ, ծախեմ, փողը բերեմ, դնեմ տունը, էթամ։

—Վայ, fաշկայ թայն էլ բերէիր, ջուխs ըլէր, կը հագնէի։ Ասեց.—Տատի՛, էս կը ծախեմ, ջուխs մաշիկ կառնեմ ,կգամ։

Գնաց, փոլցը հաց առաւ, քցեց ձիու վրայ, ասեց.—Եավաշ, մաշիկն էլ ծախեմ, նոր էթա՞։

Գնաց, մի ջհուտ սառաֆի մոտ կաղնեց։

Ասեց.—Էս մաշիկը չես առնի։ Ասեց.—Տեսնամ։

Ասեց.—Առ, տես։

Ջհուտը թամաշա արեց, մաքումը ասեց.—Կաժենայ տասը հազար մանեթ։

—Քաչալ, ասեց. էս մաշիկը քե ծրդիան ա։

—Ասեց.—Որդիան, որդիա՞ն, քեզ ինչ. առնո՞ւմ էս, փողը տուր, չես առնում, իմ մաշիկը տու, էթամ-

Ասեց.—Իմ հօր խազինեն կորեր էն. էս մաշիկը միջին էր, ես անջախ իմ նշանէն գիթայ։

Ասեց.—Սուտ ես ասում, իմ մաշիկը տու, ու հասաւ, խախեն բռնեց։

Ջհուտն ու Քաչալը իրար տուին, քաշքըշելով իրար տարան Թաքաւորի մօտը գանգատ։

Ջհուտն ասեց.—Թաքաւոր ապրած. իմ հօր խազինեն կորերին. անջախ նշանէն գթայ։

Քաչալն ասեց.—Դրա մաշիկը չէ, սուտ ա ասում։

Թաքաւորը մաշիկը առաւ, լաւ թամաշա արեց, ասեց.—Իմ խազինեն ըսդրա կէս գինը չհանի։

Թաքաւորն ասեց.—Ջհուտ, ըսորա թայը կա՞յ, թէ հենց էս ա։

Ջհուտն ասեց.—Թայ չունի, հենց էս մին ա։

Ասեց.—Քաչալ. դու ինչ էս ասըմ. թայ ունի՞ թէ չունի։

Ասեց.—Ունի թայ, կեթամ թայն էլ կը բերեմ։

Թաքաւորն ասեց.—Թէ թայը բերեցիր, ջհուտն ա սուտ ասում, թէ չբերեցիր դու էս սուտ ասում։

Ասեց.—Բերէք, պայման գրէք։

Ջհուտն ասեց.—Ես իմ ապրանքը գլուխ կը դնեմ ըստի, ինչ տար ունիմ։

Ասեց.—Քաչալ, դո՛ւ ինչ էս դնում։

Ասեց.—Ընձի զա՛ց չունեմ, քառասուն աղբէր ունեմ, բե՛, բռնայ, թէ մաշկի թայ բերեցի ըդրա մալը ինձ. թէ չբերեցի, իմ քառասուն աղբէր քեզ ղուրբան, հեղգայ։

Ասեց.—Դէ, գնա՛, կանչայ գան։

Ասեց.—Իմ խօսքով չեն գայ, հազար ձիաւոր տուր ինձ, էթամ, բերեմ։

Թաքաւորը հազար ձիաւոր հանեց, տուեց Քաչալին. Քաչալ ընկաւ առաջ. գնաց, մտաւ ձորի մէջը։

Հարամի բաշին թամաշա արեց, ասեց.—Ջանըմ, էս Քաչալը խե՞ր չէկաւ. տեհաւ Քաչալը առաջը գալիս ա, ձիաւորներին էլ տուտ-ու տակ չկայ։

Հենց Հարամի բաշին նեքսև մտաւ, ասեց.—Վերէք. Քաչալ մեր տունը քանդեց, էնքան ղօշուն ա բերե մեր վրայ. ելէք, ձիանը նիլէք, քու բերած Քաչալը քու գլուխն ուտի։

Ձիաւորը էկան. հասան, զաղի դուռը բռնեցին. մէկն էլ չկարացին զաղիցը դուս գային։

Ձիաւորներու մեծը ասեց.—Ձեզ ուրիշ բան չկայ. Թագաւորը կանչում ա։

Հարամի բաշին ասեց.—Էս էլմէ քու արած բանը, Քաչա՛լ։

Քաչալ մաչիկը ծոցից հանեց. ասեց.

—Աղա, խի՛ էս դարդ անում. էս մաշիկի տեղ ձեզ գլուխ էմ դնում. Թէ գնացի, ըղըրա թայը գթայ, բերեցի կը պրծնէք. Թէ չգթայ ձեզ պտի հեղդեն, էլ ի՞նչ կայ. խի՛ էք դարդ անում ըղըրա համար։

Հարամի բաշին բռնողին ասեց.—Քու գլուխն ուտի քու բերած Քաչալ, էն տեղը քցեց որ մեզ պրծնում չկայ։

Քաչալ ասեց.—Աղա ջան, գնացէք, էթանք, ըսկի մի՛ մտածէք։

—Քաչա՛լ, ասեց. տեղը չի՞. պրծար՝ մեր ջանն էլ գնաց։

Քաչալն ընկաւ աղաք, բերեց, Թագաւորի կշտին կաղնացրեց, Ասեց.—Թագաւոր ապրած կենայ. էս իմ պըրտանքը։

Թագաւորն ասեց.—Վճիռն գիտա՛ք, ինչ ա, թէ Քաչալը մաչկի թայը բերեց, ջնուտի ապրանքը կառնեմ, կը տամ ձեզ. Թէ որ չի բերեց, ձեր քառասուն էլ պտի հեղդեմ։ Էդ քառասունի տներն բխով դրեցին, քցեցին դուբսախխանէն։

Քաչալ ընկաւ ճանփայ, գնաց դուզ գերեզմանատունը։ Գնաց, պարկաւ ղուպուրների մէջը։

Տասն օր պարկաւ. մարդ մադար չէկաւ։

Ցերեկը մեռելը բերում քցում ու էթումին. էդ Քաչալին հարցնումին. Այ քու տունը չքանդուի մուսուլպաք, Քաչալ. ինչ ա, գշեր ցերեկ բաց էս էլե ըստե.

Քաչալի իլաճը կտրուաւ, էկաւ էլի քաղաքը։

Ասեց.—Էթամ ուրիշ քաղաքը, մաշկի թայը ըստե չէլաւ։

Գնաց, ասեց.—Էն մաշկի տեղ գնացի, մաշիկ չկար ընտեմնաք բարով, ես էթումեմ մաշիկը բերելու։

Հարամի բաշին ասեց.—Քաչալ ջան. էն քառասուն ձին էլ քեզ, քառասուն ձեռք ասպապն էլ քեզ, բաճիլան ըստիէն մեզ ազատայ։

Ասեց.—Ինչ էք դարդ անում, տաս օր անց կայեր ա, եռեսուն օր ճալա ժամանակ ունէք։

Քաչալը վեր կացաւ ու գնաց ուրիշ քաղաք։

Ասեց.—Էթամ ըստիան գերեզմանները ման գամ։

Գնաց գերեզմաննիրը. գշերը ման էկաւ դէս, ման էկաւ դէն, էկաւ, մի քարի տակ պարկաւ։

Տեհաւ էն մաչկի տիրոջ պէս մի մարդ էկաւ ըստե. էկաւ, մի գերեզմանաքար չուռ տուեց, Ֆողը յետ տուեց, դուպուրը հանեց. դուպուրի բերանը բաց արեց, մի ճիպոտ կար ձեռին. մի ճիպոտ տուեց մեռելին. մեռելը սաղացաւ, էն մեռլի հետ նստեցին, քեֆ արին։ Մի ճիպոտ էլ տուեց, էլի մեռաւ։ Ֆողը տուեց վրէն, քարը քցեց վրէն ու էթար։ Քաչալ վե կացաւ.—Հայ քու մէրը մեռնի, Նուխուտի Քաչալի անուն չեմ լսե, ասեց. հասաւ բռնեց. իրար քոլոլեցին, իրար ջարդեցին։ Հըմի մարդը ուզում ա փախնի, Քաչալ չի թողում ձեռացը։ Քաչալը ձեռ ա քցում ոտաց, տեհնում ա մաչիկ չկայ ոտին։ Ձեռը քցեց, էն ճիպոտը բռնեց. էրկու իրեք սահաթ քաշեցին, էն դեն էր քաշում, էն դինը։ Լիսը բացուեց. էդ մարդ ճիպոտը թողաց Քաչալի ձեռը, անճախ փախաւ։

Լիսը բացուաւ, էկաւ քաղաքի մէջը, տեհաւ բիրասի էդ քաղաքի մեծաւորնիրը թեւերը սեւ էն կապել։

Ասեց.—Էս խի՞ էն սեւ կապել։

Ասեցին.—Էս թագաւորի տղէն իրեք օր ա մեռիր ա։

Ասեց.—Ես թագաւորի տղին կը սաղացնեմ, իմ ուզածը կտա՞յ։

Ասեցին.—Ի՞նչ ուզես կտայ։

Խապար տարան թագաւորին, ասեցին.—Մի Քաչալ մարդ ա էկե, ասում ա «Թագաւորի տղին կը սաղացնեմ»։

Թագաւորն ասեց.—Հա գիտի, ո՞րտի կըլի, գթէք, բէրէք։

Քաչալին գթան, տարան։

Քաչալը գնաց, օխտը անգամ գլուխ տուեց, կաղնեց։

Ասեց.—Այ տղա՛, իրեք օր ա իմ տղէն մեռեր ա. կարող էս սաղացնես։

Ասեց.—Հրամանքե, կարող էմ։

Ասեց.—Դե՛, գնա՛, սաղացրա՛, ինչ որ ուզո՞ւմ էս, պտի տամ։

Վե կացան, Սինօդի անդամները թագաւորի հետ գնացին դպա գերեզմաննիրը, Քաչալ էլ հետները։

Գնացին, գերեզմանի քարը չուռ տուեցին, ֆողը յետ տուին, դուպուրը հանեցին. դափաղը բաց արին, մի ճիպոտ տալու բաշտան, վե կացաւ, նստեց։

Վե կալան, ուրախութն արեցին. բերեցին պալատը։

Թագաւորն ասեց.—Դէ. Քաչալ, ուզէ որ պտի տամ՝ ինչ որ սիրտդ ուզում ա։

Մաչիկը հանեց, դրեց թագաւորի առաջը—Ըստրա բոյն եմ ուզում, ասեց։

Թագաւորը վե կալաւ, մաչկին թամաշա արեց, ասեց.—Կաժե-

նայ իրեք միլիոն։ Ասեց.—Որդի՛, ըտրա թայը չունեմ։ Տարէ՛ք Քաչալի քաշով ոսկի տուէք։

Ասեց.—Թաքաւոր ապրած, զատ չեմ ուզում, որ ըտրա թայը չկայ. ես էթումեմ, ես մենակ մաշկի թային էմ ման գալի։

Ասեց.—Որդի՛, չկայ։

Քաչալն ընկաւ ճանապարհ, գնաց ուրիշ քաղաք։

Թամաշա արեց, էդ քաղաքի մանուրեցը, չարի մեծը լացին ըլլում, ասեց.—Խի՞ էք լաց ըլլում։

Ասեցին.—Տեսնում ես էն կեամին, ծովու մէջ բանտ ա էլե, էն բիրատի ցորեն ու ալիր ա. պտի դուս գայ որ մենք հաց ուտենք. բանտ ա էլե, մենք սոված կոտորուանք. ընդու համար ենք լաց ըլլում։

Ասեց.—Ես որ էթամ, տեսնամ կեամու տակը ինչ կայ. որ բերեմ, ղրաղը հանեմ, իմ ուզածը կտաք։

Ասեցին.—Ի՞նչ ուզես, կտանք։

Վեր կացան, լոքկեն դրեցին, տարան. կեամու մօտը կաղնացրին։

Մի խանչալ առաւ, սկուաւ ջրի տակը (մէրը մեռնի Քաչալին). հենց սկուաւ ու գնաց կեամու տակը։

Թամաշա արեց, մի հատ վիշապ, կեամու չորս բոլորը կորեր ա, գլուխը դրեր ա պոչի վրայ. կեամին ժաժ չի գալի։

Ձեռը քցեց, վիշապի պնչի վրայ մէ խզմա կայ, խզման բռնեց, խանչալով ղօշին տուեց, խզմեն պոկ էկաւ, մնաց Քաչալի ձեռ, վիշապը փախաւ. կեամին եւմիտ էլաւ։ Մի քիչ տեղ գնաց, Քաչալ դուս էկաւ տակիցը, ասեց.—Մէրը մեռնի ձեր, ուր էք քշում, Քաչալին թողնում էք. ձեր էյթիպարն էս ա։

Ասեցին.—Վախումենք էլի կեամին բանտ ըլլի։

Ասեց.—Մի՛ վախենաք, կաղնացրէք։

Կաղնացրին, Քաչալը թռաւ, կեամու վրայ նստեց։

Քշեցին, էկան ղրաղը։

Սաղ քաղաքը թօփ էլաւ, էկան Քաչալին ուրախացրին, վեր կալան. թռցրին, ասեցին.—Կեցցէ մեր Քաչալը։

Վեր կալան, քանի մարդով տարան թաքաւորի մօտը. ասեցին.
—Թաքաւորը սաղ ըլի, էս չըէր քաղաքը բիրատի սոված կը կոտորուէին, գնաց, մտաւ կեամու տակը. պոկեց, բերեց։

Թաքաւոր ասեց.—Այ Քաչալ, ուզայ որ պտի տամ։

Մաշիկը ծոցիցը հանեց, դրեց թաքաւորի առաջը ասեց.—Ըտրա թայն եմ ուզում։

Թաքաւորը վեր կալաւ, թամաշա արեց՝ տեհաւ էրկու-իրեք միլիոն արժողութիւն ունի։

Ասեց.—Ըստրա թայը չունեմ. ինչ տուր ոսկի ուզումես. փեշկեշ կտամ քեզ՝ ա՛ռ տար։

Ասեց.—Որ չունես, էթամ։

Ասեց թաքաւորը.—Թայը չունես, ինչ պտի անես մաչիկը. էդ էլ տուր ընձի. ինչ տուր փող ուզես, կտամ։

Ասեց.—Ինչ ես ասում, քառասուն աղբէրս էս մաչկի խաբեր դըրաւ էմ դըրե. անկարելի բան ա, բայց որ չգթնեմ, քառասուն աղբօրս էլ կը հեղդեն։

Վե կացաւ, գնաց ձորի միջով. աղաքը ընկաւ մի բարակ ճանփայ, ու գնաց. գնաց, մութ ընկաւ, ընկաւ մի զաղի մէջ. գնաց մի պուճախում պառկաւ։

Քիչ մնաց, տեհաւ մի առչ էկաւ, պարկաւ։

Քիչ մնաց, մի գէլ էլ էկաւ. մի քիչ մնաց մի ասլան էլ էկաւ։

Գէլ առչին ասեց.—Ինչով էք պարապում։

Ասեց.—Ես պըտըտում եմ. ո՛ր տե ձեռս զաց ա ընկնում, ուտումեմ. որ չի ընկնում էթումեմ, քաղաքի ղրաղը մի տեղ կայ, պարկումեմ. Ջուրը տակով կոկռալով էթում ա, անկանջ էմ անըմ, էդ ա, իմ բանը։

Ասեց.—Բա, գէ՛լ, դու ի՛նչով ես պարապում։

Ասեց.—Ես էլ էթումեմ, պտըտում եմ, թաքաւորի սուրուլին մէջ ճակատը ղաշղա մի ոխչար կայ, յաչքս ընդըրա վըրայ ա, ուզում եմ էն ոխչարը բռնեմ, ուտեմ. թաքաւորի ախչիկ կը մեռնի, հիւանդ ա, ժամ պատարագ կանի, ամեն բանը կը բօլանայ. ճամա էն ոխչարի գլուխը տան փուռը, էն ախչիկ ուտի. կըմի մօրէ մէկ, կը սաղանայ։

Ասեցին.—Ասլան, բա դու ի՛նչով ես պարապում։

Ասեց.—Ես էլ ման էմ գալի, ման, էթումեմ, ծովի ղրաղը վեր էն գալի. իրեք հատ ախչիկ էն ըլլում. լեղանում էն, յետոյ խրխեք հագնում էն, թռնում էն. իմ բաւմաշէն էլ էդ ա։

Լիսը բացուեց. ըդոնք վե կացան ու գնացին։

Քաչալը դուս էկաւ ու գնաց։

Գնաց էդ քաղաքի ղրաղը. տեհաւ է՛, առչ գնացեր, էդ քաղաքիցը դուս պարկեր ա։

Գնաց, առչին մօտացաւ, ճալաճու արեց, առջը փախաւ։

Գնաց, առչի տեղը պարկեց, անկանջ արեց գետինը։

Տեհաւ ջրի գըռգռոցը լա՛ւ գալիս ա։

Վե կացաւ, էկաւ էդ քաղաքի մէջը, ման էկաւ, տեհաւ էդ քաղաքը բիրաշի Ֆորի ջուր են խմում։

Ասեց.—Իմ ուզածը տաք, ես ձեզ համար ջուր կը բերեմ։

Թօփ էլան քաղաքի մարդիկը, — ասեցին. Քաչալ, որ ջուր բերես. բերանդ ինչ պտըտայ, կտանք:,

Ասեց.—Երկու հարուր բահաւոր տուէք, էթանք վերև։

Երկու հարուր բահաւոր վե կալաւ ու գնաց։

Գնաց, էդ առչի պարկած տեղը քանդեց. ջուրը բացուեց, հինգ ջաղացէն ջուր վե կալաւ, բերեց քաղաքը։

Էկան, թօփ էլան Քաչալի գլուխ, ասեցին.—Դէ ուզա, ինչ որ տանք, քեզ արժան ա։

Մաչկի թայը հանեց, դրեց ըստըրանց աղաքը, ասեց.—Զաs չեմ ուզում. ըստրա թայն էմ ուզում։

Վե կալան, թամաշա արին, մէկը սալղ չտուեց, ասեցին.—Ըստրա թայը չենք կարայ գթնի։

Գնաց, սարը անցկացաւ էն դիհը, տեհաւ մի սուրու ոխչար արածում ա. գնաց, ոխչարի չօպանի մօտը հասաւ, ասեց.—Էս ինչ ոխչար ա։

Ասեց.—Թաքաւորի ոխչարն ա։

Ասեց.—Թաքաւորի կուչտ պտի էթամ, ինչ բանի կըաի հըմի։

Ասեց.—Տուէն ա, մի ախչիկ ունի հիւանդ ա. ընդրա վրայ պարապել է. ինչ sաr ճեֆիմ էն բերում, չեն կարայ լաւացնի։

Սուրույին մէջը ման էկան. Քաչալը, ասեց.—Ես էթումեմ Թաքաւորի մօտը. որ ոխչար էկան ուզելու, էս սիւտակ ոխչարը կտաս, կը բերի։

Գնաց Թաքաւորի պալատի դուռնը կաղնեց.—Ես լաւ ճեֆիմ էմ, ասեց. ինչ sաr դժար հիւանդ ըլլի, ես կը լաւացնեմ։

Խապար տարան Թաքաւորին. — ըսենց մի լաւ ճեֆիմ ա էկեր։

Թաքաւորն ասեց.—Կանչէք, գայ ներսև, տենանք։

Էկան կանչեցին. տարան։ Գլուխ տուեց, կաղնեց։

Ասեց.—Դու ինչ մարդ էս։ Ասեց.—Լաւ ճեֆիմեմ։

Ասեց.—Իմ ախչիկ էս երկու տարիյա հիւանդ ա. որ լաւացրիր, ինչ ուզես, կտամ։ Վե կալաւ, տարաւ ախչկայ մօտը։

Ասեց.—Ղրկէք չօպանի մօտը, մի հատ սիւտակ, ճակատը ղաշղա ոխչար կայ, վե կալի, բերի։

Ղրկեցին. գնաց էն ոխչարը բերեց։ Բերեց, մորթեց, գլուխը քցեց փուռը. լաւ էփեց. ճղճղեց, միսը մի sաrեrքի մէջ դրեց. վե կալաւ, գնաց Թաքաւորի մօտը, Թաքաւոր ասեց.—Վե կալ, տար։

Տարաւ դրեց ախչկան աղաքը, դեղը ցանեց վրան, զօռով քիչ քիչ ուտացրեց, ոխչարի գլուխը սաղ կերաւ. էլաւ մօրէ մէկ, կաղնեցաւ ըն տե։

Ըդ տեղ ասեց Թաքաւորը.— Մալըն մալալա վեr, ղզըն fա

չալա, ես էդ ախչիկը կտամ քեզ, դու կըլլես ինձ փեսայ. իմ պա-լատի իրաւունքը ամենը կը յանձնեմ քեզ։

Ասեց.—Թագաւոր ապրած. շնորհակալ եմ։

Մաչիկը ծոցից հանեց ու ասեց.—Ըստրա թայն եմ ուզում։

Թագաւորը թամաշա արեց. ասեց.—Ըստրա թայը ոչ տեսեր ենք, ոչ էլ կըլլի։

– Շնորհակալ եմ, իմ ուզածը մաչկի թայն ա, որ չկայ, ինչ անեմ։

Վէ կացաւ, գնաց ծովի ղրաղը, տեհաւ ասլաճը դարի գլխին պարկել ա։ Ասլաճը դրան տեհաւ, քաշուեց, գնաց։

Գնաց, ասլաճի տեղը նստեց. ծովի ղրաղն էր հենց։

Էրկու ռաճար նստեց. թամաշա արեց, տեհաւ, իրեք հատ աղունիկ էկան. խուխեքը հանեցին, իրեք հատ ախչիկ էլաւ որ չու-տես, չիմես, թամաշա անես ըդըրանց.

Քաչալ ասեց.—Մերը մեռնի Քաչալի, ըդըրանք չըռնի, չի դիճ-ջանայ, դարի գլխիցը վազեց, չարի հասաւ, ըդոնք խըրխեքը հա-գան ու թռան, գնացին։

Քաչալն էկաւ, ծովի ղրաղը կաղնեց, ասեց.—Մէրը մեռնի Քաչալին. ըսկի բան իմ ձեռիցս չըլըծան, ճամա ըստոնք պրծան։ Տեհաւ մէ բարալիկ մուխ ա դուս գալի ծովու միջիցը. հենց էդ մուխն բռնեց, ըրկուեց ջրի տակը. գնաց, տեհաւ մի լաւ օթախ ա. թամաշա արեց, հայլիքը չորս դին շարած, դիւանիքը դրած. տե-հաւ սոոլների վրայ մի բլուծ փլաւ. մի աղունիկ էփած. դրած ա բառեղ, տեհաւ ընտեղ էլ, ընտեղ էլ, իրեք սեոլ էր, իրեքի վրայ էլ կար։

Գնաց մի սեոլին վրայ կաղնեց, մի կտոր աղունիկից կտրեց. կերաւ, փլաւն էլ հետը. գնաց էն մէկլիցն էլ կերաւ. գնաց էն մի սեոլիցն էլ կերաւ։ Մի թաս էլ գինի խմեց։

Ման էկաւ, տեհաւ իրեք ջուխտ, մի թայ. հը՝ իրա մաչիկիցը. մինը վե կալաւ, դրեց ծոցը. էն մէկելներուն ձեռ չտուեց։

Հըմի ման ա գալիս, դուս գայ, որ տե էթում ա, ջուրը ա. շշկլեց, մնաց միջին. իլաճը կտրուաւ. գնաց, մի պուճախ պարկեց։

Մէկ էլ էն տեհաւ, իրեք հատ աղունիկ Ֆռռալով էկան օթախի մէջ տեղը վեր էկան. խուխեքը հանեցին, իրեք հատ ախչիկ դառան. աշխարքումը ըդենց բան չկայ։

Ամեկը մի հատ սեոլի վրայ նստեցին, ասեցին.—Վաղուց ա իրար չէինք տեհե. մի ուտենք, քեֆ աննենք։

Մեծ ախչիկ ասեց.—Նավաշ, բան ասեմ. իմ ուտիլ խմիլը ճա-րամուեց. ես Ֆելի արե, էթումի գերեզմանատունը մեռելներին թամաշա ի անում. մէկ օր էլ գնացի. թամաշա արի էլի. ուզեցայ, դուս գայի, էթայի. մուսուբաթ Քաչալ պատահեց. էն ծառ իրար

առանք, իրար հեղդեցինք օր չար լիսը բացուեց. աննախ, մաշիկս ըդըրա ձեռը մնաց, ես փախայ պրծայ. ինձ ճարամ ձեռ ա դիպե, ճալբաթ իմ փլաւիցն էլ կուտեն, իմ աղունիկլիցս էլ։

Էն մէկը ասեց.—Այ քիր, խավաշ, իմն էլ ասեմ. սեր արեցի, Թաքաւորի տղին մեռցրի, տարան, Թաղեցին. գշերը կեԹայի վե կացընէի. սերի վարոցով կտայի, կը սաղացնէի. չարի լիս հետը քեֆ կանէի. էլի կտայի, կը մեռնէր, կը Թողայի կեԹայի. մի գշեր էլ վե կացրեցի Թաքաւորի տղին, քեֆ արեցինք, էլի մեռցրի. ուզումի էԹայի. մի մուսուբաթ քաչալ էկաւ, ասեց.—«Քու մէրը մեռնի, ուր էս էԹում,» հասաւ ինձ. չարի լիս էն սար իրար հեղդեցինք, աննախ ձեռիցս ճիպոտը խլեց. Թողացի, փախայ. ինձ ճարամ ձեռ ա դիպե, ճալբաթ իմ փլաւից էլ կուտեն, իմ աղունիկլից էլ։

Էն մի քիրն էլ ասեց.—Ա քիրեր, իմ վրայ էլ ա ճարամուե. խավաշ, իմն էլ ասեմ. սեր ի արե, մի հատ վիշապ ի դառե ես, Թաքաւորի քաղաքի կեամու չորս բոլորը կալէր ի, ծովու մէջ տեղ բաց արի. Քաչալին մէկն էկաւ, ձեռ քցեց. դնչիս խզմեն բռնեց, դօշիս տուեց. խզմես պոկ էկաւ, մնաց ձեռին. ես աննախ փախայ. ինձ ճարամ ձեռ ա դիպե, ճալբաթ իմ փլաւիցն էլ կուտեն, իմ աղունիկլիցն էլ։

Ասեցին.—Էդ աղողը ըստի պատահի, իրան մուրազը կը կատարենք։

Մի քիրն ասեց.—Հնար չկայ, օձը իրա պոչտովը, ղուշը իրա ղանատովը չի կարայ գայ ըստե. էն մօնց կարայ գայ։

Մի քիրն էլ ասեց.—Մարդ չի կարայ գայ, բա էս փլաւից, աղունիկլից ով ա կերե։

Ասեցին.—Ուտողը ղոչախ ա, Թո գայ, ըստե կաղնի։

Քաչալն դուս էկաւ, ասեց.—Մէրը մեռնի Քաչալին. Քաչալն ա կերե։ Վե կացաւ, կաղնեց։

Ասեցին.—Ուտիլը հաւատացինք, մեր նշանները բեր, տենանք։

Ասեց.—Նշաններդ ինչ ա։

Ասեցին.—Մի հատ մաշիկ ա, մի հատ ճիպոտ ա, մի պնչի խզմայա։

Քաչալը բերեց, իրեք հատն էլ դրեց մէջ տեղ։

Ախչկերքը հաւատացին. վե կալան դրան, աղբրի մէջը լեղացրին. որ լեղացրին, գլխին մազ էկաւ, սիրունացաւ. էլաւ հրեղէն։

Ախչկերքը բերեցին, մէջ տեղ նստեցրեցին. ասեցին—Դու մերն էս, մենք քունն ենք։ Իրեք օր քեֆ արեցին։

—Ախչկերք, ասեց Քաչալ. քառասուն աղբէր գրաւ էմ դրե, քառասուն օր թամեր ա, պտի հեղդեն. էդ մաշկի թայը պտի տանեմ։

Նոր ախչկերքը ըդըրան ծովից հանեցին. խուխէքը հագան,

էլան աղունիկ. Քաչալին դրին թևերի վրայ ու թռան. բերեցին, իրա տատի տանը վեր դրին։ Ասեց.—Տատի. ինչ կայ, ինչ էս լսում։

Ասեց.—Գալիս, ինձ ասում էն. «քու թոռը քառասուն դուքսախ ա բռնել, էս էրկու օրը պտի հեղդեն։

Վեր կացաւ, գնաց թաքաւորի մօտը. թաքաւորին օխտը անգամ գլուխ տուեց. վրայ ուժին կաղնեց, ասեց.—Հա՛, որդի՛, մաչիկը բերե՞լ էս։ Ասեց.—Հրամանքի, բերել էմ, մէյը մեռնի Քաչալին, էթայ ու չը բերի՛։

Թաքաւոր ասեց.—Դե՛, հանայ, տենամ։

Քաչալ դաստախունը մէջքիցը յետ արեց, ասեց.—Թաքաւորը սաղ ըլի, մի ջուխտ քու կնկան փեշկաշ. մի ջուխտ էլ հարսիդ փեշկաշ, մի ջուխտ էլ քու ախչկան. էս էլ մաշիկը, էս էլ ընդրա քայլը։ Թաքաւորը թամաշա արեց, ասեց.—Ամեկը իրեք միլիօն աժի, Քաչալը ինը միլիօն բախշեց թաքաւորին։

Մարդ ղրկեց, ջհուդին կանչեցին. ջհուդ էկաւ, կաղնեց։

Մաշկին մի քայլը դրեց ասոլի տակը. մի քայլը ասոլի վրայ։ —Ջհուդ, ասեց. էս քու մաշիկն ա, քայլը չբերի. վեր կալ քու մաշիկը, գնա՛։ Ասեց.—Ախր պայման ենք արե, էն քառասուն մարդը պտի հեղդուի։

Ասեց.—Որ մաշկի քայլը բերե՛ր։

—Որ բերեր, համ ինձ պտի հեղդէիր, համ իմ մալը պտի տայիր ըդրան։

Ասեց մեհուն ըտենց ա։ Ասեց.—Ըտենց ա։

Թաքաւորը մաշիկի քայլը հանեց։ դրեց մաշիկի կողքը։

Ջհուդը, որ տեհաւ, ձէնը կտրեց բիպ. էլ չկարաց խօսայ։

Թաքաւորը հրամայեց, ջհուդին հեղդեցին. տուն տեղ յանձնեցին Քաչալին։ Գնացին էն քառասուն հարամուն հանեցին. բերեցին, թաքաւորի մօտը կաղնացրին. քառասուն հարամուն էլ էդ պալատին մէջը պաշտօն տուեց, Քաչալին էլ կարգեց ամենի գլխաւոր։

Քաչալին ասեց.—Արի՛, քե պսակեմ, իմ ախչիկն էլ ուզես տամ

Ասեց.—Ինձ ունեմ իրեք հատ նշանած։

Թաքաւորը հրամայեց, իրեքն ըդրա վրայ պսակեցին, ինքն էլ էլաւ քաւոր։ Պալատի ամեն իրաւունքը տուեց Քաչալին։

Քաչալն մի ջուխտ մաշիկը տարաւ, հագցրեց, բերեց։

Ընդոնք հասան իրանց մուրազին, դուք էլ ձեր։

Ջհուդ էլ իր ղազապին. նրհախ մարդու տեղ էդ ա։

ՂԱՀՐԱՄԱՆ—ԱՍԼԱՆ ԹԱԳԱՒՈՐՆԵՐ

41

(Վաղարշապատի բարբառով *)

Ղահրաման թագաւորին ավլաց բալլաք չունէր. միտք արեց, իրա վազիր-ճազրին կանչեց. էկան բոփ՝ էլան, ասեց.—Գիտաք ընչի համալ էմ կանչե ձեզ, ինձ զաւակ չունեմ. ընձանից յետը, որ մեռնեմ ով պտի էս մալը ուտի. պտի ընձանից յետը թագաւոր նստի, խորհուրդ արէք. բալքի մի տղայ ըլի։

Ընտի վազիր-ճազիր խորհուրդ արեցին. վազիրին մէկը վեր կացաւ, կանչեց, ասեց.—Թագաւոր ապրած կենայ, քու խազինէի դուռը բաց կանես. քու անբարն էլ բաց կանես, սովածին հաց կտաս, տկլորին շոր կտաս, չունեւորին փող կտաս։ Աստուած կը քաղցրանայ, քեզ մի տղայ կտայ։

Ասեց.—Դնա, իրաւունք տուի քեզ. մոնց որ գիտաս, ընենց արա։

Վազիրը խազինէի դուռը բաց արեց. ցորնի ամբարն էլ. չունենողին տուեց։

Ընդէ մի դարվիշ էկաւ ճաճախը ձեռին.—«Եա՛-հո՛ւ,» արեց ու թագաւորի կշտին կաղնեց, ասեց.—Հը, թագաւոր ապրած, էս ինչ տուրք ու տալիք ա։

Ասեց.—Դարվիշ բաբա, ընձի տղայ չկայ, տալիս ենք, որ Աստուած քաղցրանայ, մի տղայ տայ։

Ասեց.—Ըսենց հինգ խազինայ փող, հինգ անբար էլ ցորեն փչացնես, Աստուած քե տղայ տուողը չի։

Ասեց.—Դարվիշ բաբա, աշխարքը ման գալող ես. ըտրա վերջը մոնց պտի ըլի։

---

* Պատմած է Արսէն Ղռիմեան։

Ասեց.—Թաքաւոր ապրած կենայ. վերջը քե ասեմ. մի հատ խնձոր ունեմ, կը կիսեմ, կէսը դու կուտես, կէսը քու կնիկը, քեզ ջուխտ տղայ կըլլի՝ որ խոստանաս, տղէքի մէկը տաս, խնձորը կտամ, թէ չես տայ, չեմ տայ։

Ասեց.—Դարվիշ բաբա, որ ջուխտ ըլնի, մէկը քեզ փեշկաշ։

Ասեց.—Հաւատամ։ Ասեց։—Հաւատա։

Ասեց.—Խօսքիցդ յետ չդառնաս։

Խնձորը կիսեց, կէսը տուեց, Թաքաւորը կերաւ, կէսը Թաքաւորի կնիկը։

Դարվիշը Թողեց ու գնաց։

Իննը ամիսը թամըմաւ, Թաքաւորի կնիկը չոքը տուեց գետինը մի ջուխտ տղայ բերեց։

Նազիր, վազիրը պիրաշի բօփ էլան, էկան, էկան աչկալիսէք։

Ասին.—Աչքդ լիս, Թաքաւոր ապրած կենայ։

Ասեց։—Դէ, տղէքի անըմը դրէք։

Վազիրին մէկը ասեց.—Շատ դադ բեդաս էր անըմ. անուն դնենք Դատ ու Բեդատ։

Տղէք մեծացան, գնացին վարժատունը կարդալու։

Էլան տասնըհինգ տարեկան. մէկէլ տեհան դարվիշն էկաւ, ճաճախը տուեց գետինը ու ասեց.—Հը՝, Թաքաւոր ապրած, խօսքիդ տէր էս։

Ասեց.—Քեզ ինչ էմ խոստացեր, խօսքիս տէր ըլնեմ։

—Թաքաւոր ապրած կենայ. ինձ չես ճանաչում, էն խնձորն որ տուեցի. դու, քու կնիկդ կերաք, որ ջուխտ տղայ ըլէր, մէկը տայիր ինձ։

—Հա, դու էն դարվիշն էս, որ խնձորը տուիր, տասնըհինգ տարէյա գնալդ, չեմ ճանաչում, օղորթ ա, խնձորը տուեցիր, զուր անց կացաւ, էրեխայ չէլաւ։

Ասեց.—Իմ խնձորը հնար չէր զուր անց կենար։

Ասեց.—Ինչ էլաւ, էլաւ, տարէք, դարվիշ բաբայի ֆեաշկիկը ոսկի լցրէք, Թո տանի։

Ասեց.—Անկարելի ա, ես ոսկու դարտը չեմ։

Մէկէլ էն տեհան որ վարժատանից մի տղէն էկաւ։

Դարվիշն ասեց.—Թաքաւոր ապրած. էս իմ խնձորիցն ա։

Ասեց.—Դարվիշ բաբա. էդ մի տղէն ըլնի, էդ էլ տամ քեզ։

Ասեց.—Թաքաւոր ապրած, որ էս մէկ ըլնի, քեզ փեշկաշ ա։

Մէկ էլ էն տեհան էն մի տղէն էլ էկաւ-

Ասեց.—Թաքաւոր ապրած, էս էլ իմ խնձորից ա։

Ասեց.—Դարվիշ բաբային տարէք խազինեի դուռը, ինք ու ձին ինչ տար ոսկի կը տանին, բառցէք։

Դարվիշն ասեց.—Անկարելի ա, հինգ ձիաբեռ էլ տաս, ինձ պէտք չի, աղջկերին մէկը պտի տաս։

Տղէքին մէկը էկաւ, մօտացաւ Թաքաւորին, ասեց.—Էս դարվիշի հետնա ինչ էք խօսում. ինչ կայ։

Ասեց.—Որդի՛, դու գնա՛, դարվիշին բալքի մի հնարով հեռացնենք, ինչ բան տալիս ենք բռազի չի ըլնում։

Ասեց.—Բա ինչ ա ուզում։

Ասեց.—Մի վախտ ինձ տղայ չկար խազինի դուռը բաց արի, ցրուումի, որ ինձ Աստուած մի տղայ տայ. յետոյ էս դարվիշն էկաւ, ասեց. «Էս ինչ խազինայ էս ցրվում։ Դարվիշին ասի, «դարվիշ բաբա ցրուեմ որ Աստուած ինձ մի տղայ տայ »Դարվիշ մի հատ խնձոր հանեց, կիսեց. ասեց «կէսը դու կեր, կէսը քու կնիկը, ջուխտ տղայ կըլի, մէկը պտի տաս ինձ»։ Ես էլ խօստացել էմ որ տամ. հըմի ձեզ չեմ ղմրշում, ինչ սար ոսկի տալիս եմ, բռազի չի ըլլում։

Տղէն ասեց.—Խօսքիցդ դուս մի՛ գայ, հենց ինձ տո՛ւր, ես էթա՛մ։

Թաքաւոր ասեց.—Դարվիշ բաբա, աչքդ լիս ըլնի, տղէն գալիս ա, արի՛ տար։

Նստեցին, կերան, խմեցին։

Տղէն վեր կացաւ հօր ձեռն էլ պաչեց, մօր ձեռն էլ. ընկաւ դարվիշի հետ, գնաց։

Իրեք օր գչեր, ցերեկ դարվիշ ըտրան ճանապար տարաւ, ընկան մի եայլանի տեղ, սար-ձոր տարմւ, մի սարի գլխին կաղնացրեց։ Ասեց.—Թաքաւորի տղա՛, մի թամաշա արա էս ջրին։

Ասեց.—Թամաշա էմ անըմ։

Ասեց.—Մոնց ջուր ա, էս ջուրը։

Ասեց.—Երկնքիցը բռնած՝ չարի գետինը ջուր ա, ճանապար չկայ։

Ասեց.—Ջրի էն դի՛ը տեսնըմ էս, լիս ա էրեւում, էն էլ կրակ ա, երկնքիցը բռնած չարի գետինը։ Կրակի էն դի՛ը քառասուն արաբ կայ, Ճաչախները ձեռներին. քսան էս դի՛ը կաղնած ա, քսան էն դի՛ը, ընդի մի զաղա կայ. արաբների միջով կեթաս, կը մտնես զաղէն, զաղի մէջ մի հատ ստոլ կայ, ստոլի վրայ մի հատ ֆիսըկ կայ, էն կը վեր կալես, բերես. ընդի մի խանում ախչիկ կայ, որ ձէն կտայ, չես կաղնի, դառնաս, կգաս։

Տղէն տո՛ւեց ջուրն ու գնաց, դարվիշն ասեց.—Իրեք հարուր տղայ եմ ղրկե, որը ջուրն ա հեղդե, որը կրակն ա էրե, որէն էլ արաբներն են տուե. հըմի էս գնաց, տեսնանք կարայ բերի թէ էս էլ պտի վերջանայ։

Դարվիշը էդ բանի վրայ էր պարապում որ քիսիկը ձեռք բերէր։

Տղէն տուեց ու ջուրը ճղեց, անց կացաւ էն էրեսը. գնաց, կրակին մօտացաւ. կրակն էլ տուեց, անց կացաւ. գնաց քառասուն արաբի մէջ մտաւ. ըդ էլ տուեց, անց կացաւ. գնաց, մտաւ զաղէն. տեհաւ մի հատ ստոլ կայ. ստոլի վրայ մի հատ քիսըկ կայ, քիսիկը վե կալաւ, դըրեց ջեպը։ Էն դհիցը մի ախչիկ ձէն տուեց, ասեց.—Թաքաւորի տղա. կաղնի, քե մի բան ասեմ։

Տղէն անկաջ չարեց, յետ դառաւ, արաբների միջովն էկաւ. կրակի միջովն էկաւ. ջրի միջիցը դուս էկաւ։

Դարվիշը որ տեհաւ, էն տար ուրախացաւ, թեւերը վե կալաւ, հաղ արեց, ասեց.—Ապրիս թաքաւորի տղա, քիսիկը տուր մէ տեհնամ։ Ձեռը մեկնեց դպա թաքաւորի տղին։ Թաքաւորի տղէն ձեռը տարաւ ջեպը, որ քիսիկը հանէ, տայ դարվիշին, բիրտան սեւ ամպը էկաւ դարվիշի գլխին ու տրաքեց. որ տրաքեց, էդ սարը ամպի տակին դողաց։ Տղէն թամաշա արեց որ մղրըպը տուեց, մութըն ընկաւ, աչկերը էլ զատ չտեհաւ. վախլութունի ուշքը գնաց, վեր ընկաւ։ Մի սահաթ, էրկու սահաթ քաշեց, ուշքը էկաւ վրէն, թամաշա արեց, տեհաւ արեւ, արքայութուն. վեր կացաւ, կաղնեց. ասեց.—Էս ինչ բան էր, տեհնամ դարվիշն ուր գնաց։

Տղէն վեր կացաւ, դարվիշին ման էկաւ.—Ահա՛ն, դարվիշին քառասուն կտոր արել, ոտը մի եան ա, գլուխը մի եան ա, ձեռը մի եան ա. ցրուել ա բիրատի։

Տղէն մի բարակ ճանբայ ընկաւ ու վաղեց. էկաւ մի մեծ ճանապարհ ընկաւ. արեւը մտաւ, էկաւ մի քաղաքի բռատ էկաւ. գնաց մի խարապա տեղ մտաւ։ Ձեռը տարաւ ջեպը, ասեց.—Էս ինչ բան էր, հալա հանեմ, տեհնամ։

Հանեց, տեհաւ մի պուճուր ոսկե շամատան կայ մէջը. միջին էլ մի հատ մում կայ։ Ասեց.—Լաւ էլաւ։ Մումը կպցրեց։ Որ կըպցրեց, տեհաւ քառասուն արաբը, քառասուն մեշօք ոսկին վե կալած էկան, ասեցին.—Հա՛, թաքաւորի տղա, էս քու փեշքաշը։ Արաբները ասեցին. Թաքաւորի տղա, մեզի իզին տու, էթանք. Ասեց.—Գնացէք։ Ասեցին.—Շամատատանը վե կալ, տակին տուր, նոր կեթանք մենք։

Շամատանը վե կալաւ, իրեք անգամ տակին տուեց. արաբները գնացին, մէկ էլ տեհաւ քառասուն ախչիկ էկան։

Դուղին, քնարը, մուզուկանդը չարի լիս ածեցին, էդ տղին քեֆ չանց տուին։ Լիսը բացուեց, ախչկերքը ասեցին.—Իզին տուր, մենք էթանք։

Ասեց.—Գնացէք։ Ասեց.—Ջարի մումը չփչես, մենք չենք կա-

րայ էթայ։ Մումը փչեց։ Շամադանը դրեց քիսիկի մէջը, դրեց ջեպը։ Վեր կացաւ, գնաց քաղաքի մէջը. տեհաւ երևելի քաղաք էր։

Հարցրեց.—Էս ինչ քաղաք ա։

Ասեցին.—Ասլան Թաքաւորի քաղաքն ա։

Ասեց.—Ըս տեղ դարտակ դուքան կըլի՞, քէհնով վեր կալեմ։

Մի մարդ ասեց.—Ինձ դուքան ունեմ։

Գնացին, տեհան, ամիսը տասը մանեք բարիշեցին քէհն։

Քառասուն համալին կանչեց, վեր կալաւ տարաւ. քառասուն մեջիդ ոսկիք բերեց, կիտեց իրար վրայ, մի հատ ղզիլ առաւ. դրեց դուքանի վրայ։ Քաղաքի մէջ ընկաւ մի մեծ պլան, գնաց թամաշա անելով։ Գնաց, դուս էկաւ մի մեծ դարվազայ, ասեց.—Էս ինչ դարվազայ ա։ Ասեցին.—Ասլան Թագաւորի բաղչի դարվազեն ա։ Ասեց.—Մտնեմ մէջը, ման գամ, հօ չեն խօսայ։—Բան ասող չըլի։

Մտաւ, ման էկաւ. տեհաւ մի մարմար հավուզ կայ ըտե, շաշրուան էլ քցըմ ա. ոտները ձեռները ու էրեսը լուաց ըտէհ։ Ասեց. —Էն դչեր էդ մումը կպցրրի, հոմի կպցնեմ, տենամ մանց ա։ Կըպցըրեց՝ տեհաւ քառասուն արաբը քառասուն մեջիդ ոսկին բերին։ Ալթիալը շամաշանի տակին առուեց։ Արաբները գնացին, քառասուն ախչիկները էկան։ Մումը փչեց, քառասուն ախչիկն էլ գնացին։ Պարկաւ ու քնաւ էդ հավուզին վրայ։

Ասլան Թաքաւորի ախչիկը իրան փանճարից թամաշա էր անըմ ըդրան. իրա քառասուն ղարավաշին կանչեց իրա մօտը, ասեց.—Ախչկերք. տենըմ էք, հավըզի վրեն ինչ ա. ես թամաշա արեցի, մի տղա ոտ ու ձեռ լուաց. քառասուն արաբ էկան էդ քառասուն մեջիդը ըդի դրեցին, պարկած տղին գլուխ տուեցին, գնացին. յետոյ. քառասուն ախչիկ էկան, ընդոնք էլ էդ տղին գլուխ տուեցին. վեր էկէք, էթանք տենանք, ինչ ա։

Վեր էկան, ախչկերքը ասեցին.—Խանում, էն ապրանքը մեզ, էն տղէն քեզ։ Էկան, տղի գլխին կաղնեցին։

Ասեց.—Մեջիդները տեհէք, ինչ ա։ Տեհան թիրաշի ոսկի ա։

—Ախչկերք, բանը ոսկին չի, հնարն ա. վեր կացնենք, տենանք։

Պըտտուեցին դես, պտըտուեցին դեն, տղէն զարթնեց։

Ասեց.—Նա, ընդըանց, հալա պտըտում էք. ես մումը փչեցի, որ էթայիք։

Թաքաւորի ախչիկն ասեց.—Մենք ընդոնք չենք. մենք ուրիշ ախչիկ ենք։ Ընդոնց հետ էն ղսար քէֆ արիր, մի կէս սահաթ էլ մեզ հետ քէֆ արա։

Ելան, հրամայեցին. գինի, հաց բերեցին. դրին տղի առաջը, մէ երկու թաս խմացրին, ասեցին.—Քու հնարը ինչ էր, արաբները ոսկի բերեցին. յետոյ ախչկերք էկան։ Ձեռը տարաւ ջեպը, ոսկի շա-

մատանը հանեց, դրեց ըն տե, ասեց.—Էս մումը որ կպցնեմ, արաբները ոսկի կը բերեն. ճամատանի տակին որ տամ, արաբները կերթան, ախչկերքը կգան. մումն էլ փչեմ, ախչկերքը կերթան, հնարն. էդ ա։

Ասեց.—Ճամատանը չե՞ս տայ ինձ։

Ասեց.—Հնար չկայ. չեմ տայ։ Կոլոլեց, դրեց ջեպը։

Գինի խմացրին տղին բազասան։

Ախչիկ չորս մարդի կանչեց, ըստրան վե կալէք, կոխէք փալասին մէջ։

Թաքաւորի ախչիկը քիսիկը հանեց, դրեց իրա ջեպը, կոխեցին փալասին մէջ, ղայիմ կապեցին. վե կալան գնացին հանոր տակին գեօլ կար, քցեցին գեօլը։

Վե կալան, գնացին գեօլի կուշտը հասան. իրեք չորս մարդ ընդըհից տեհան, ասեցին.—Ապրանք ա, տանում ա պահի. էթանք խլենք ձեռներիցը։

Որ վազեցին ըդրանց, ընդոնք վե քցեցին ու փախան։

Էդ մարդիկ տեհան փալասի միջին մի զատ ժաժ ա գալի։

Փալասը ճղեցին. տղէն միջից դուս էկաւ։

Նստեց, ըդրանց պատմեց.—Ընձի տանըմ էին գեօլը քցեն. դուք պատահեցիք, ինձ ազատեցիք. արէք տանեմ ձեզ տաս տաս ոսկի տամ։

Էդ մարդկանցը վե կալաւ, էկաւ, դուքանի դուռը բաց արեց, ամենքին տաս հատ ոսկի տուեց։

Ասեց.—Քիսիկը ձեռիցս գնաց. էս փողն էլ բոլ ա, մէ հնար գթնեմ, էթամ իմ երկիրը։

Խապարը տանք Թաքաւորի ախչկանիցը։

Թաքաւորի ախչիկը աղաքի ոսկիքը փայ արեց աղաքի մարդկանցը։ Էդ չորս մարդն էլ էկան, ասեցին.—Քցեցինք գեօլը, էկանք։ Հանեց մէկ մէկ բուռ ոսկի էլ տուեց։

Թաքաւորի ախչիկը գնաց Թաքաւորի մօտը, ասեց.—Մի հնար գիտամ ես, էգուց կանչայ քու ոտու ձեռի մարդիկը բաղչէն։ Կանչեց բաղչէն, քէֆ արեցին։

Քիսիկի միջից ճամատանը հանեց, մումը կպցրեց. դրեց ընտեղ։ Քառասուն արաբն էկան, ճաճախները ձեռին, հասան էդ տեղի նստող մարդկանցը, տուեցին՝ որի ոտը կոտրեցին. որի գլուխը կոտրեցին, որի թեւը կտրեցին. մի դուման հանեցին ըդտե, որ օրտամունքը էլ ինչ ասեմ. մոնց էլաւ դիպան էդ ճամատանին, մումը ընցաւ. ընցնելու բանցան արաբները բիրաշի գնացին։

Թաքաւորը իրա ախչկան կանչեց. ասեց.—Գլուխդ ուտի քու արած հնարը, էս էր քու արած հնարը։

Ասեց.—Թաքաւոր ապրած, ըսենց պտի չաէր, էս քառասուն

տըրաքն որ էկան, քառասուն մեճօք ոսկի պտի բերէին. յետոյ քառասուն արար պտի էթային, քառասուն ախչիկ պտի գար, քառասուն ախչկայ ձեռ մուզուկ կարմոն ըլնէր, պտի ընդոնք ածէին, խաղ անէին. մենք բամաճա անէինք։

Թաքաւորը ասեց.—Էս հնարը տէրը կանի. տէրը գթէք ու բերէք։

Սաղ քաղաքը ման էկան, ինչ շար աղայ կայ բերեցին ըտեղ։

Մէկը չկարաց տէր կաղնի։

Ասեցին.—Մի աղայ կայ, դուքանի դուռը նստել ա։

Գնացին, կանչեցին բերին։

Էկաւ օխտը անգամ գլուխ տուեց, վրայ ութին ձեռ բռնեց, կաղնեց Թաքաւորի աղաքը։

—Որդի՛, ասեց. էս քիսիկն ու ճամաշանը քո՞ւմն ա։

Ասեց.—Իմն ա։ Ասեց.—Դե կպցրայ տեսնանք, հնարը ինչ ա։

Կպցրեց, դրեց ըտեղ։ Տեհան քառասուն արաքն էկան, քառասուն մեճօք ոսկին բերին, իրեք անգամ ճամաշանի տակին տուեց, արաքները գնացին. քառասուն ախչիկն էկան ածելով, հաղ արեցին։ Մումը փչեց, ախչկերքը գնացին։

Թաքաւորն ասեց.—Ա՛յ տէրն էս էր։

Ասեց.—Ա՛յ տղա՛, դու ինչ աղայ էս։

Ասեց.—Ղահրաման Թաքաւորի տղէն էմ։

Ասեց.—Ես էմ, էս մէկ ախչի՛կը, պտի տամ քեզ. քեզանից լաւ տղայ չեմ կարայ գթնի։

Բերեց, էդ ախչիկը տուեց ըդրան, օխտը օր, օխտը գշեր հարսանիք արեց. հարսանիքից յետը տարաւ մի օթախի մէջ, ասեց.—Էս ա ձեր տեղը, էս տեղ քնէք։

Դռներն ղայիմ չինեցին, որ պարկէն, քնէն։

Մի ջանավար էկաւ. փանջարի էրկաթները ջարթեց, մտաւ ներսև. էդ տղէն ղուլ տուեց ու գնաց։

Առաւօտը Թաքաւորը էկաւ իրա ախչկայ մօտը, դուռը բացեց, մտաւ ներսև, տեհաւ վախլութենէ իրա ախչիկը մի պուճախ կպեր ա. մնացեր։

Ասեց.—Ախչի՛, խի էս ըդենց էլե։

Ասեց.—Դռները չինեցինք որ պարկէինք, մի ջանավար էկաւ, էրկաթները ջարդեց, էն տղին ղուլ տուեց, գնաց։

Թաքաւորն իրա ախչիկը վեր կալաւ, գնաց, ասեց.—Ով ա գիտում, էդ տղէն ինչ Ֆելպազ մարդ էր, մեր գլխից բռաց էլաւ։

Խապարը տանք էդ տղիցը։

Ջանավարը վեր կալաւ, տարաւ ընտեր, որ էդ քիսիկը վեր էր կալել։

Էդ ջանավարը էլաւ մի ախչիկ, էդ տղի կշտին նստեց, սիրուն ախչիկ, չա՛տ սիրուն.

Ասեց.—Ինձ թողացիր, գնացիր Թագաւորի ախչկան տուար.
Ասեց.—Որ էկա՛ր, ջուրը անց կացար, չհեղթուար.
Էկար, կրակը անց կացար, չի էրվար.
Էկար, արտըն էլ անց կացար, քեզ չդարկին.
Որ քիսիկը վե կալար. ձէն տուեցի, չկաղնեցիր.
Որ գնացիր, հասար դարվիշին:
Դարվիշը որ ձեռը մեկնեց, քիսիկը առնէր.
Էն ամպը որ տրաքեց, դարվիշին քառասուն կտոր արեց:
Էն ով էր.—Էն ես ի. Քեզ չղմըեցի բան անիլը.

Հըմի ես քուն էմ, դու իմն էս. վե կաց, էթանք քու հօր քաղքը, ըստե մնալը մեզ հարկաւոր չի.

Վե կացան ախչիկն ու տղէն, էկան Ասլան Թագաւորի քաղքը. գնացին, մտան բաղչէն, մարմար ճավըզին վրայ նստեցին.

Թագաւորի ախչիկ թամաշա արեց, տեհաւ ճավըզի վրայ էն տղէն ու մի ախչիկ նստած էն.

Ախչիկը վազէ-վազ գնաց, Թագաւորին ասեց.—Թագաւոր ողջ կենայ, էն տղէն մի ախչկայ հետ ճավըզի վրայ նստած ա.

Թագաւորը տեղիցը վե կացաւ, կաղնեց. իրա կնկան, իրա ախչկան վե կալաւ, էկաւ ճավըզի վրայ, Էկաւ, բարև տուեց, կաղնեց:

Էդ տղին ասեց.—Քեզ ինչ էլաւ, ու՞ր գնացիր.

Էդ ախչիկը վե կացաւ. ամէն բանը Թագաւորին պատմեց, ասեց.—Թագաւոր ապրած. էս տղէն որ իմն ա, քու ախչիկն էլ տանենք ըստրա աղբօրը. էրկուսն էլ մէկ էն, մի խնձորից էն.

Թագաւորը իրա ախչիկը տուեց ըդըրանց, ասեց.—Վե կալէք, տարէք. Թագաւորը իրա մալը կէս արեց, դրեց ախչկայ բաժին:

Ախչիկը վե կալան, բերին, էկան Ղահրաման Թագաւորի քաղքը դուս էկան. Քաղաքի դրաղը տեհան մի հալիւոր մարդ ցախ ա թօփ անում.

—Բարև, պապի՛, ասեց.—Աստըծու բարին, որդի՛.

Ասեց.—Ղահրաման Թագաւորը սաղ ա, ո՞ղջ ա.

Ասեց.—Փառք Աստծու, ողջ, առողջ ա.

Ասեց.—Արի՛, քե մի բուռ ոսկի տամ, գնա Թագաւորին աչքալիսէք տար, ասա. քու տղէն էկեր ա քաղաքի դրաղը.

Հալիւորը մի բուռ ոսկին ածեց ջեպը, էնպէս գնաց Թագաւորի մօտը-դըմ պէս:

Ասեց.—Աչքդ լիս, տղէդ էկեր ա քաղաքի դրաղը.

Մի բուռ ոսկի էլ Թագաւորը տուեց հալիւորին.

Թագաւորը բոբիկ վազեց քաղաքի դրաղը։

Տղէն էլ, կնիկն էլ իմացան, ընդոնք էլ վազեցին։

Փաթթուեցին իրար չըլընգօվը, իրար պաչեցին։

Տղէն ասեց.—Էս իմ Նշանածն ա, էս էլ Ասլան Թագաւորի ախչիկն ա, որ բերեր էմ աղբօրս համար։

Էդ հալիւորի սիրտը չհամբերեց, էլի յետ դառաւ, էկաւ ըտեւ։

Թագաւորի տղէն շամաշանը կպցրեց. տուեց հալիւորի ձեռը. քառասուն արաբն քառասուն ախչիկը էկան, հալիւորին ասեցին.

—Դո՛ւզ գնա դալա պալատը։

Քառասուն արաբը ճանախները առան ձեռքը, մեյտան բաց արեցին ու աղջըկերքը ճլրդելով ճոլճար-ճոյճար գնացին։

Տարան ժամ, էրկու աղբօրն էլ պսակեցին։

Օխտն օր, օխտը գշեր հարսանիք արեցին։

Ընդոնք հասան իրանց մուրազին։

42

ՍՈՒՖՐԷՆ

(Վաղարշապատի բարբառով *)

Կար-չկար մէկ Թագաւոր. էդ Թագաւորին իրեք տղայ ունէր, ինչ որ խորհուրդ ունէր, պըտիկ տղի հետ կանէր. պըտիկ տղէն խելօք էր։ Մէկ օր խորհուրդ արեց, ասեց.—Ձեզ պտի պսակեմ։ Պըտիկ տղէն ասեց.—Մեզ որ կը պսակես, ման արի որ, իրեք ախչիկը մի տանից բերես։

—Որդի՛, իրեք ախչիկը մի տանից չատ կայ, համա իմ հաւանածը պտի ըլի։

* Առէն Ղրիմեան—էջմիածնայ Վանքի գիշերապահը պատմած է. ինքը լսած մի Մօլլադուրանցիէ:

Տղէն ասեց.—Դու գիտաս, ճալպաթ քու հաւանածը պտի ըլէ։

Կանչեցին, վեզիրն էկաւ, ասեց.—Թաքաւորն ապրած կենայ, ինչ էք հրամայում։ Ասեց.—Ըսօր իմ պզտի տղի հետ խորհուրդ էմ արե, որ իմ տղէքին պսակէլ. իմ պզտիկ տղէն ասեց.—Իրեք ախչիկը մի տանից ուզայ, հըմի իրեք ախչիկ մի տան չատ կայ, վե՛ր, էթանք, ման գանք. որը հաւանենք, էն ուզենք։ Վեզիրը, ասեց. —Վե՛ր, էթա՛նք։

Երկու հատ ձի նիլան, ընկան քաղաքները ման գալու, ինչ ղտար ման էկան, ինչ տուն մտան, իրանց դիր չէկաւ։

Ասեց.—Վեզիր, չատ ման էկանք, արի՛, էթանք Ստամբօլ էլ պտըտենք ու թողանք էթանք։ Գնացին Ստամբօ́լ, Ստամբօլա մէջն էլ չատ պտըտեցին, էլի չգթան։

Ասեց.—Վեզիր, էկեր ենք Ստամբօլ, էթանք թաքաւորին էլ տենանք, նոր թողանք ու էթանք։ Գնացին թաքաւորի մօտը, ղօնախ էլան. թաքաւորը բերեց, ըդոնց հաց քաշեց։ Իրեք հատ ախչիկ ըդոնց հաց ին բերըմ։ Հաց բերեցին, կերան։

Ստամբօլու թաքաւորը էդ թաքաւորին ասեց.—Ի՞նչ բանի համար էք էկեր։ Ասեց.—Թաքաւոր ապրած կենայ. ես իմ պզտիկ տղի հետ խորհուրդ արեցի, որ պսակէի, խորհուրդ տուեց որ ախչիկ կուզես, մէկ տանից ուզայ. հըմի էս ախչիկները որ հաց են բերում, քու ինչն են։ Ասեց.—Էս իրեքն էլ իմ ախչիկն են։

Ասեց.—Ես իրեքին էլ հաւանում եմ, չեմ կարայ վատ ասի, էս իրեք ախչիկն էլ կտա́մ իմ իրեք տղին։

Ասեց.—Իրեքն էլ քե փեշկաշ ա։

Թաքաւորը ձեռը տարաւ ջեպը, իրեք հատ մատանիք հանեց, դրեց ստօլի վրայ, ասեց.—Իրեք ախչկան էլ կանչայ, գայ։

Իրեքին էլ կանչեց, էկա́ն. թաքաւորը ամեքին մի մատանիք դրեց մատները, ասեց.—Իրեքդ էլ էլաք ընձի հարս։

Թազատան կեր ու խում արեցին, չնահաւորեցին դրանց նշան դրէքը։

Թաքաւորը ասեց.—Ես էթում եմ. մի ամիս ժամանակ կտաս, ես իմ տղէքին վե կալեմ, կը գնամ։ Թաքաւորը էկաւ իրա երկիրը։

Իրեք տղէքը էկան ալաքը. պզտիկ տղէն ասեց.—Թաքաւոր ապրած, որ չատ յետացար, ուզում էի գայի, ման գայի քեզ. լաւ էր, էկար։ Թաքաւորն ասեց.—Աչքներդ լիս, իրեքիդ էլ նշան էմ դրե, Ստամբօլու թաքաւորի ախչկերքը։

Գնացին, վեր էկան իրանց պալատը. թաքաւորը իրէկունը իրան տղէքին կանչեց, ասեց.—Մէկ ամիս ժամանակ էմ ուզե որ, մեր պատրաստութունը տենանք ու էթանք, ախչկերքը բերենք։

Իրեք ձեռք ախչկայ չոր կտրեցին, ըդոնց ամեն բանըը հետը, իրեք ձեռք էլ տղի չոր իրան տղէքին։

Ասեց.—Վ,եզիր, դե՛, ժամանակ է, էթանք, տղէքին տանենք. հինգ հարուր էլ ձիաւոր վէ կալենք. մեր հարսներըը բերենք։

Պզտիկն ասեց.—Բիրաթինով էթանք՝ էս պալատը ո՞վ ա մուդար կենու մ. Թաքաւորն ասեց.—Մէկին կը յանձնենք, կեթանք։ Ասեց.—Անկարելի ա, ես չեմ էթայ, ես կմնամ. դուք գնացէք, բերէք։

Թաքաւորը ասեց.—Շատ լաւ ասում էս, դու կաց։

—Վ,եզիր, ասեց թաքաւորը, մենք էրկու տղին կը տանենք, էնտե կը պսակենք. հարսը կը բերենք, ըստի կը պսակենք։

Պզտիկ տղէն ասեց.—Որ Ստամբօլու դուս կգաք, առաջին մի Կարմիր կոնտ կայ, տակին մի աղբուր կայ. որ կը հասնէք ընտի, վեր չգաք. ընտի փորձանք կը պատահի ձեզ. դու գիտաս որ ես շատ էմ ման էկե, ամեն տեղն էլ գիտամ։

Թաքաւորը ասեց.—Շատ լաւ։

Առաւօտը ընկան ճանապար, թափով. զուռնով գնացին դըպա Ստամբօլ, թաքաւորի պալատը վեր էկան։

Կերան, խմեցին. բերեցին ախչկերքին կաղնացրեցին մէյտան, իրեքի չորերն էլ հագցրին։ Էրկու տղէն բերին, էրկու հարսի ձեռը բռնեցին, պուճուր ախչիկը ընենց կաղնած մնաց։

Ստամբօլու թաքաւորը ասեց.—Որ երկու տղայ ունէիր, իրեք ախչիկ խի էիր ուզում, քու ծուռնութունը բէլլու արեց։

Ասեց.—Իմ գլուխը, քու գլուխը վկայ որ, իրեք տղայ ունեմ, էս մինն էլ պտի տանեմ, ընտի պտի պսակեմ. էն մնաց պալատը, ընտի հաւատարիմ մարդ չունէինք։

Էդ էրկու տղին տարան, պսակեցին։

Էկան, քէֆ արեցին. առաւօտը թաքաւորը ճանապար քցեց։

Ստամբօլու թաքաւորը ասեց.—Արի, մի մին ղայվայ խմենք, նոր կեթաս, կը հասնես։ Մի քիչ խօսացին, յետացաւ։

—Դէ՛, ասեց. մնաս բարի. էս էթամ, հասնեմ։

Ձեռ բռնեց ու ընկաւ ճանապար։

Ընդոնք գնացին, Կարմիր կոնտի կշտին կաղնեցին։

Վ,եզիրն ասեց.—Թաքաւորը յետացաւ, չադրը վեր տուէք։

Չադրը վեր տուեցին, կերակուր էփեցին, թաքաւորը էկաւ, հասաւ, ասեց.—Ըստիան բարձէք. ըստի խի՞ էք վեր էկե։

Վ,եզիրն ասեց.—Մութն ա, էս վախս ու՞ր էթանք, առաւօտ կեթանք։ Ասեց.—Վ,եզիր, չլսեցի՞ր, պզտիկ տղէս ինչ ասեց. «Կոնտի վրայ փորձանք կպատահի» ։

Ասեց.—Թագաւոր ապրած, ինչ ես վախենում, հինգ հարուր ձիաւոր մեր կշտին ըլի, մենք վախենա՞նք։

Ասեց.—Կացէք, որ բռնեն ա։

Լիսը բացուեց, տեհան մէ հատ վիշապ չորս բոլորները կըտրեր ա. վեր կացան, ասեցին.—Սպանէք, անց կենանք։

Վիշապն ասեց.—Ի՞նչ մարդի էք. ուզում էք պոչս պտըտեմ, ձեր հինգ հարուրին էլ վերջացնեմ. Թագաւորի պզտի տղին խնայեցի ձեզ։ Թագաւորը ասեց.—Ճանապար տուր, էթանք։

Ասեց.—Քու պզտիկ տղին տո՛ւր ինձ, ես բիրասի բրախ տամ, գնացէք։ Ասեց.—Կտամ։

Ասեց.—Ճանապար կտամ, էթաք որ նա ղրկես, գայ, ճամա ընդըրա նշանածը չեմ թողայ տանէք։

Ճանապար տուեց, ամեն էլ անց կացան, պզտիկ տղին նշանածը մնաց կշտին։ Ընդոնք ընկան ճանապար, էկան։

Խապար բերեցին պզտիկ տղին.—Աչքդ լիս, Թագաւորն էկաւ։

Վեր կացաւ, մի հարուր ձիաւորով գնաց Թագաւորի աղաքը։

Թագաւորը որ տղին տեհաւ, լաց էլաւ։

Տղէն ասեց.—Թագաւոր ապրած կենայ, պտի ուրախութիւն անես, խի՞ ես լաց ըլլում։

Ասեց.—Ընդըրա համար եմ լաց ըլլում, քու պատուէրը չպահեցինք. ես բռնեցի ճանապար քցեցի, Թագաւորի հետ մի քիչ խորհուրդ արեցի, յետացայ. էկայ տեհայ, քու ասած Կարմիր կոնտի վրայ վեր էն էկե, նեղացայ, ասեցի.—«Բարձէք, էթանք»։ Վեզիրն ասեց «գշերը մնանք ըստի, առաւօտը էթանք»։ Ես էլ համոզուեցի, գշերը մնացինք։ Առաւօտը տեհանք մի հատ վիշապ չորս բոլորները կտրեր ա։ Ուզեցանք վիշապին սպանէինք, որ անց կենայինք. վիշապն ասեց.—«Ինչ էք անըմ, ուզո՞ւմ էք պոչս պտըտեմ, ամենդ էլ սպանեմ. ձեզ պաղշեցի Թագաւորի պուճուր տղին»։ Ասեցի.—«Ճանապար տուր, էթանք»։ Ասեց.—«Ճանապար կտամ՝ ամա, քու պուճուր տղէն պտի տաս ինձ»։ Ես էլ խոստացայ, տուի։ Ամենիս թողաց, էկանք, քու նշանածը չթողաց. էդ պատճառով լաց եմ ըլլում։ Ասեց.—Ըսկի լաց մի ըլի, եփոր մեռայ, լաց էլի, հըմի ՔէՖ արա։ ՔէՖ անելով բերեցին տուն։ Երկու օր հարսանիք արեցին, պրծան։

Պուճուր տղէն ասեց.—Թագաւոր ապրած, էս քու պալատը, էս էլ քու հարսները, ես էթամ վիշապի ճաւարին։

Թագաւորը ասեց.—Մէթայ, էն վիշապը ղարմանելի բան ա. ալի՛, մէթայ. ինչ էլաւ, էլաւ։

Ասեց.—Ես իմ էթալու դարսը չեմ, դու Ստամբօլի Թագաւորի կշտին ամօթալի կը մնաս։

Ընկաւ ճանապար, գնաց. հասաւ Վիշապին։

Վիշապ՚ն ասեց.—Բարի էս էկե, հազար բարին, իմ աչքին, էկե. տեսնո՞ւմ էս, քու նշանածը ոնց էմ պահե, ինչ որ ասեմ, պտի ընձ անկաջ անես որ քու նշանածը տամ, տանես. որ չարեցիր, չեմ տայ, տանես։ Ասեց.—Ասա. քու դուլլուխին կաղնած եմ։

Ասեց.—Դէ, արի, գլխիս վրայ նստի։

Էկաւ, գլխի վրայ նստեց։

Ասեց.—Անկաջներիցս բռնի, չվախենաս. քեզ պտի բարձրացնեմ երկինքը։

Պտտեց, պտտեց ու Յալաֆի օխտը դարը հանեց։

Ասեց.—Թամաշա արա աջ կողմիդ վրայ։

Ասեց.—Թամաշ էմ անում։

Ի՞նչ ա էրեւում.—Քաղաք ա էրեւում, ծառ ա էրեւում։

Ասեց.—Էն Չինմաստանու Թաքաւորի քաղաքն ա, օխտը ասեծ մի պալատ էրեւո՞ւմ ա։ Ասեց.—Երեւում ա։

Ասեց.—Առաջին մի չինարի ծառ ա էրեւում։ Ասեց.—Էրեւում ա։

Ասեց.—Վիրեւում մի ախչիկ պտըտում ա, էրեւո՞ւմ ա։

Ասեց.—Էրեւում ա, կարմիր շորերը հագած պտըտում ա։

Պտըտեց, վեր բերեց գետինը։

Ասեց.—Դէ, գնա, էն ախչիկը բեր ինձ համար՝ քու նշանածը տամ քեզ համար։ Մի հատ դաստախուն տուեց, էս դաստախունը կտամ քեզ, ինչ վախտ սովածանաս, դաստախունին մէջ կը գթնես։ Վե կալաւ դաստախունը, ընկաւ ճանապար, շատ ու քիչ Աստուած գիտայ, գնաց. էրկու հատ դեւ բռաստ էկան. էկան, բռնեցին, ասեցին.—Վաղուց ա խացի միս չէինք կերե։ Ասեց.—Ես ձեզ կշտացնեմ, ընձանից ձեռ վե կը կալէք.

Ասեցին.—Որ մեզ կշտացնես, քու մուրազն էլ կը կատարենք։

Ասեց.—Ի՞նչ կուտէք։ Ասեցին.—Օխտը հատ գոմէշ աճախ մեզ կշտացնի։

Սուֆրէն փռեց, ասեց.—Սուֆրա, օխտը հատ գոմէշ ուզում էմ քու միջին։ Օխտը հատ գոմէշ միջին էլաւ։

Նստեցին. կերան, ղըրղըրփոցն քցեցին, մի թիֆա ոսկոր էլ չթողացին միջին, պիրասի կերան։

Ասեցին.—Որ տեղ էս էթում։ Չինաստան էմ էթում։

Տարա՛ն, իրանց սընոռը անց կացրին. մի հատ մազ քաշին, տուեին իրան, ասեցին.—Նեղ տեղ ընկնես. էտ կրակայ։

Ընկաւ ճանապար ու գնաց, տեսաւ մի դոռուն ա գալի, որ տուտ ու տակ չիկայ։ Գնաց, մօտացաւ, տեհաւ, պիրասի ձիաւոր մըչեմ են, մէյմունի հետ կռուեր են, յետ էն դարձե. գալիս էն։

Էկան, էդ տղին բռնեցին. վե կալան, տարան իրանց Թաքաւորի մօտը։

Թաքաւորը ասեց.—Տարէք, կերէք. ինչ էմ անըմ։ Տղէն ասեց.—Թաքաւորը սաղ ըլի. քեզ կըշտացնեմ, ընձնէ ձեռ կը վե կալէք։

Ասեց.—Որ կշտացնես, ձեռ. կը վեր կալենք։

Ձեր կերածը ինչ ա։

Մեր կերածը ցորեն ա, գարի ու կորեկ։

Ասեց.—Ինչ դդար կուտէք։

Ասեց.—Հարուր խալվար կուտենք։

Սուֆրէն փռեց, ասեց.—Հարուր խալվար ցորեն, գարի ու կորեկ ըլի մէջին։ Էլաւ ու կուշտ կերան։

Թաքաւորը հանեց ու մի թել տուեց իրան, ասեց.—Ինչ տեղ նեղ կընկնես. կը փաթես մատդ, մենք քեզ կը հասնենք։

Վե կալան, տարան ճանապար քցեցին։

Գնաց, տեհաւ մի դոշուն ա գալի, տուտ ու տակ չկայ։

Մօտացաւ, տեհաւ, պիրատի մէյմուն էն. ձիաւոր մըշեմի հետ կռուեր էն ու յետ էն դառե։ Էկան էդ տղին բռնեցին. վե կալան, տարան իրանց Թաքաւորի մօտը։

Թաքաւորը ասեց.—Ձեզ փեշկեշ ա, տարէք, ինչ անըմ էք, արէք։—Որ ձեզ կշտացնեմ, ընձանից ձեռ կը վեր կալէք։

Ասեց.—Ձեռ կը վեր կալենք։

Ասեց.—Ձեր կերածն ինչ ա։—Մեր կերածը պաշամ ա, պոպոկ ա, պնդուկ։

Ինչ դար կուտէք։ Ասեց.—կուտենք վաթսուն խալվար։

Սուֆրէն փռեց, ասեց.—Վաթսուն խալվար պաշամ, պոպոկ, ու պնդուկ ըլի։

Էլաւ ու կերան։ Շնորհակալ էլան տղիցը։

Հանեց էրկու հատ մատանիք տուեց։ Մէկը էս մատին դրեց, մէկը էն ձէռի մատին։ Ասեց. —Էս թաթխես ջուրը, կը պնդուի. վրովը կեթաս, էն թաթխես, ջուրը կեթայ։

Տարան, ճանապար քցեցին։ Գնաց, հասաւ Չինստանու քաղաքը։

Մի ջուր էր էթում քաղաքի դրաղովը. տեհաւ կարմունջ չկայ, վրէն, որ անց կենար, միտք արեց «մէյմունի թաքաւորը ըսենց էր ասըմ», խավաշ մի թաթխեմ ջրի մէջ, տենամ։

Թաթխեց, ջուրը սառեց։ Վրովը անց կացաւ էն էրեսը։

Էն մի մատն էլ թաթխեց, ջուրը գնաց։

Գնաց քաղաքը ման էկաւ. մի պառաւի տուն վեր էկաւ։

Սուֆրէն փռեց, պառաւի հետ նստեցին, հաց կերան։

Ասեց.—Նանէ՛, էս ո՞ր քաղաքն ա, ես չեմ հարցրել:

Ասեց.—Էս Չինմաստանու Թաքաւորի քաղաքն ա:

Ասեց.—Թաքաւորը մո՞նց ա, բարի՞ թաքաւոր ա:

Ասեց.—Լաւ մարդ ա, մի հատ աղջիկ ունի. ո՛վ գալիս ա էդ աղջիկ ուզելու, Ֆանս ունի. ով որ Ֆանսը չի գտնում, ուզողներու գլուխը տալիս ա. էդ մէկը վատ ա անըմ: Մի տղայ էլ ունէր, էդ պատճառաւ կը հակառակէր Թաքաւորին, Թաքաւոր չի լսեց, գլուխը տուաւ, գնաց, կորաւ:

Ասեց.—Նանի՛, կարամ ընդլա Ֆանսերը գթնի:

Ասեց.—Որդի՛, ընդուց ձեռ վե կալ, որ ինձ լսես, մի էթայ, ընդար մարդի գլուխը տուեր ա:

Ասեց.—Նանէ. ըստար ճանապար էկեր էմ, տայ, չտայ էթամ. թէ Ֆանսերը գթայ, աղջիկը կտանեմ. թէ չի գթայ, գլուխս թո կորի:

Պարկան, ասեց.—Նանի, առաւօտը ինձ թեզ վեր կացըրայ:

Առաւօտը լիսացաւ, պառաւը տղին վեր կացրեց:

Տղեն լուացուեց. Աստուած կանչեց, գնաց, Թաքաւորի դուռն կայնեց: Դռնապանը հարցրեց.—Ինչ խնդիր ունես:

Ասեց.—Ես Թաքաւորի իրան հետ գործ ունեմ:

Գնացէն, Թաքաւորին իմացրին, ասեցին.—Մի տղայ էկեր ա, քու հետ գործ ունի: Ասեց.—Կանչէք, գայ:

Էկաւ Թաքաւորի պալատը, օխտը անգամ գլուխ տուեց, վրայ ութին ձեռ բռնեց ու կայնեց:

—Հը՛, ասեց. ինչ ա ասութիւնդ:—Իմ ասութուն էն ա, էկեր էմ քու աղջիկ ուզեմ, ասեց:

Ասեց.—Այ տղա՛, դու ափսոս տղայ էս, մոնց էկերես, ընենց գնա՛, քու արընքի տակն էլ չի մտնենք:

Ասեց.—Թաքաւոր ապրած, հոգս մի քաշիր, ես ընդոնցից լաւ չեմ, ես էկերէմ քու աղջկայ համար:

Ասեց.—Ես Ֆանսեր ունեմ, իմ Ֆանսերը պտի գթնես:

Ասեց.—Քու Ֆանսերին պատրաստ եմ, կը գթնեմ, կը տանեմ:

Նազիր վազիրին կանչեց, բիրաշի թոփ ալեց, էդ չինարի ծառին տակ նստացրեց: Լիքը ստաքանը ջուր լցրեց, տուեց տղին. բերեց չորս հատ ոսկի բողնոց, դրեց ծառի չորս բոլորը, ասեց.—Նազի՛ր, վեզիր, թամաշա արէք. էս տղէն էս սահաթը ձեռը նիլնե ծառը, վեր գայ, որ ջուրը չթափի, որ թափեց, գլուխը կտրեմ:

Տղէն ծառին մօտացաւ, ստաքանքը թաթխեց ջրին մէջը ու նիլաւ. Նիլաւ գլխին նստեց:

Թաքաւորը ասեց.—Վեր արի՛, լաւ նիլար:

Էկան թամաշա էն անըմ բողնոցների վրայ որ ջուրը թափի՝ իմանան։ Տղէն քըտընել էր, էրկու կաթիլ թափեց։

Թաքաւորը ասեց.—Վեր արի՛, քու անալն էկաւ, թափեց ջուրը. ջալլատ, ասեց. նազր կաղնի։

Վեր էկաւ, ստաքանը տարաւ, տուեց Թաքաւորին։

Ասեց.—Գլուխը տուէք սրա.—Ոչ, ասեց. քըտինքս թափեց։

Ասեց.—Անկարելի ա, ջուրը թափեց։

Նազիր վեզիրը մօտացաւ, ասին.—Գլուխը խի՛ ես տալի։ Մօտը տուին բողնոցի միջի ջրին, ասեցին։—Քըտինք ա։

Ասեցին.—Այ տղա՛, գնա՛, առաւօտը արի՛, ըսօր պրծար։

Գնաց պառաւի տունը. պառաւը ասեց.—Այ իմ աչքեր քոռնայ, արի՛, արի՛, նստի՛ր։

Խապարը գնաց Թաքաւորի ախչկան.—Մի տղայ, ստաքանը ձեռին, ծառը նիլաւ, ջուրը չթափեց։

Առաւօտը լիսացաւ, էլի գնաց Թաքաւորի պալատը։

Խապար տուին Թաքաւորին.—Տղէն էկեր ա։

Թաքաւորը հրամայեց.—Կը կաղնացնէք չարի իրիկուն։

Տղէն կաղնեց. Թաքաւորը ասեց.—Էրկու պղինձ 30 փթանոց լէքը եղ կը լցնէք, կը տանէք, կը դնէք մի օթախի մէջ, կասէք «էս գշեր չարի լիս պտի ուտես, որ չուտես, Թաքաւորը քու գլուխ պտի կտրի։ Տղէն մի թիքայ կերաւ, սիրտը տըրորեց, ասեց.—Է՛, Թաքաւորը իմ գլուխ պտի կտրի։ Թիրտան միտը ընկաւ դեւերը, նամա մաղը կրակեց, կրակելու թաշտան, մէկ էլ տեհաւ դուռը ճռացրին, էրկու դև մտան ներսև.—Հը՝, Թաքաւորի տղա՛, ասեցին, ինչ ա։

Ասեց.—Տենըմ էք պղնձները, ձեզ կանչեցի որ ուտէք։

Ասեցին.—Էս քառասուն տարիյա եղի համ չենք տեհեր։ Մըռթըները կոխեցին մէջը, էրկու պղինձ էլ թամիզացրին, լիզեցին։

Ընդոնք գնացին, Թաքաւորի տղէն դինջ քնեց։

Առաւօտը լիսացաւ. Թաքաւորը վեր կացաւ, Նազիր վեզիրին կանչեց, ասեց.—Էն մի բանիցը պրծացրէք, վաթսուն փութ եղը հազար ջան չի կարայ ուտի, էն մինակ կարայ ըս գշեր ուտի. բեր ու գլուխը զարկէք։

Գնացին, վեր կացրին, բերին Թաքաւորի մօտը։

Ասեց.—Էրեկ պրծար, ըսօր ինչ ես ասըմ։

Ասեց.—Ըսօր էլ կը պրծնեմ, էգուց էլ։

Գնացին, տեհան, պղինձները թամուզ կերե, սրփե։

Ասեց.—Գնացէք ըտրա օթախը, պահած կըլի, գթէք ու բերէք։

Գնացին, ման էկան, զատ չգթան։ Էկան, ասեցին.—Զատ չկայ։

Ասեց.—Գնա՛, դինջացի, իրիկունը արի՛։

Խապարը գնաց Թաքաւորի ախչկան, էդ ախչիկը զարմացաւ։

Գնաց պառաւի մօտը, դինճացաւ, իրիկունը վե կացաւ, էկաւ։ Խապարը տարան Թաքաւորին.—Տղէն էկեր ա։

Թաքաւորը Նազիր վեզիրին կանչեց, տղէն բերեցին, մի դռան աղաք կաղնացրին։

Ասեց.—Տասը խալուար կորեկ չափէք, բերէք ըստե։ Տաս խալուար էլ ցորեն, տաս խալուար էլ գարի բերէք, խառնէք յիրար։ Օթախին մէջ տեղ կիտէք։

Թաքաւորը հրամայեց, էս կորեկ, էս գարին, էս ցորեն իրարից պտի ջոկես. որ առաւօտ գամ, չափեմ. թէ ջոկեցիր, ախչիկս տալըմ, թէ չջոկեցիր, գլուխդ անպատճառ պտի կտրուի։

Տղէն մի բուռ վե կալաւ որ ջոկի, կորեկի մի հատը քցեց մի պուճախը, մի հատ ցորեն մի պուճախը, ասեց.—Զարի լես մի բուռ չեմ կարայ ջոկի։ Բիրեան մրչեմը միտը ընկաւ, Թելը հանեց, փաթթեց մատը, մէկ էլ տեհաւ, դուռը ճռացրեց. մրչեմները թափան, էկան։ Ասեց.—Խնդրումեմ, էս գարին, էս ցորենը, էս կորեկը ջոկէք, չուտէք ճամա, ձեր բաժինը դռանը կտամ, կուտէք ու կեթաք։

Ըդրանց տուտը բացուեց, Մասխուռ չարի Ալակեաղ էկան, ջոկեցին ցորենը մի խան, գարին մի խան, կորեկը մի խան, մի հատ չթաղացին։

Դուս էկաւ դուռը, սուֆրէն բացաւ, ըդոնց բաժին էլ տուեց, գնացին. Գլուխը դրեց ցորնի վրէն, արխային քնեց։

Լիսը բացուեց, Թաքաւորը վե կացաւ, Նազիր վեզիրին կանչեց էլի, ասեց.—Դէ, բերէք. տղի վիզը զարկէք։

Գնացին, տղին վե կալան, բերեցին։—Վիզը զարկէք, հրամայեց։

Ասեց.—Խի՞ ես զարկում իմ վիզը, ես ջոկեր եմ. մարդ ղրկայ, թո էթայ, տենայ. գայ։ Մարդ ղրկեց, գնաց, էկաւ, ասեց

—Թաքաւոր ապրած, ջոկած պրծած ա։ Զափեցին, դուզ էլաւ։

Ասեց.—Դէ՛, գնա, առաւօտը արի։

Խապարը տարան Թաքաւորի ախչկան. Թաքաւորի ախչիկն ասեց.—Հա՛ գլուխ, էն տղէն ո՞րտե ա մնըմ։

Ասեցին.—Մի պառաւի տան ա մնըմ։

Մի ղարավաշ ունէր, հանեց մի բուռ ոսկի տուեց, ասեց.—Բերնիցդ բան չհանես, կեթաս պառաւի տունը. պառաւին կասես, էդ տղին ախչկայ չորեր հագցնի, իրիկուն բերի իմ մօտը։

Էդ ախչիկը վազէ վազ գնաց պառաւի տունը։ Պառաւին ասեց.—Թաքաւորի ախչիկը ասըմ ա, «Թող էդ տղին ախչկայ չորեր հագցնի, բերի իմ կուշտը»։

Իրիկունը ախչկայ չորեր հագցրեց. վե կալաւ, տարաւ։

Դռնապանը դուռը չէր բաց անըմ։ Ասեց.—Իմ ախչիկը տանըմ էմ Թաքաւորի ախչկանից ուսում առնի:

Ասեց.—խալխը ցերեկն են բերում, դու գշերն էս բերըմ։

Ասեց.—Հըմի պարապեցի, բերեցի։

—Դէ, ասեց. տար։ Վե կալաւ, տարաւ։

Ասեց.—Խանըմ, իմ ախչկան ինչ կսարվացնես, սարվացրայ. գշերը չի կարայ ըստե մնայ։

Թաքաւորի ախչիկը հրամայեց.—Ամեն ղարավաշ էթայ իրա օթախը, խամ ախչիկ ա, խօսացնեմ, տենամ, ինչ կայ ճալա։

Ասեց տղին.—Դու էդ Ֆանդերն որ իմացար, էգուց էլ կարաս իմանայ։ Ասեց.—Չեմ գիտում. ինչ Ֆանդ պտի անի։

Ասեց.—Քառասուն ախչիկ պտի բերի, քառասուն ձեռք սև շոր հագցնի, սև ձիանը նիլցընի, սև քողերը պտի քցի գլխներին, ջերկով կաղնացնի, քեզ պտի հարցնի,—«Իմ ախչիկը որն ա»։ Ներքի դհլիզը կը համբրես, տասնը ինը, վրայ քսանին ես էմ, չը շըշկըլես։ Կանչեց պառաւին.—Պառաւ, արի, քու ախչիկը վեր կալ, տար, էգուց իրիկուն էլ բեր։

Լիսը բացուեց, տղէն գնաց Թաքաւորի մօտը, Թաքաւորը Նազիր, վեզիրին կանչեց՝ ասեց.—Գնացէք, քառասուն ախչիկը բերէք. քառասուն սև ձիանը նիլցըրէք, սև շորերը հագցրէք, սև քողերը քցէք գլխըներին։ Գնացին էնպէս արեցին, ջերկուն կաղնացրին։ Տղին հրամայեց.—Իմ ախչիկն որն ա, գթի։

Մտքի միջին համբրեց տասնը ինը, դուզ գնաց վրայ քսանի ձիու կեամը բռնեց, ասեց.—Էս ա քու ախչիկը։

—Տղա՛, ասեց. գնա՛, առաւօտը արի։

Տղէն գնաց պառաւի տունը, ասեց.—Նանի՛. ախչկայ շորերը բեր, հագնեմ։ Հագաւ, գնաց Թաքաւորի ախչկայ մօտը։

Թաքաւորի ախչիկը ասեց.—Տղա՛, էգուց էլ կարմիր ձիանը նիլնենք, կարմիր շորերը կը հագնենք. կարմիր քողները պտի քցենք գլխըներիս, ամենի վերջը ես կը կաղնեմ. կգաս, իմ ձիու կեամը կը բռնես։

Տղէն վեր կացաւ, գնաց պառաւի տունը։

Առաւօտը վեր կացաւ, գնաց Թաքաւորի պալատը։

Թաքաւորը իրան Նազիր, վեզիրի հետ դուրս էկաւ, հրամայեց. Գնացէ՛ք, քառասուն ախչիկը բերէք. կարմիր ձիանը նիլցրէք, բերէք ըստի ջերկայ կաղնացրէք։

Էդպէս արեցին։ Ասեց.—Այ տղա՛, իմ ախչիկը ո՞րն ա, գթի՛։

Տղէն գնաց. վերջի ձիաւորի եախեն բռնեց, ասեց.—Էս ա քու ախչիկը։ Ասեց.—Ըսօր էլ պըծար, գնա՛. գնա՛, էգուց էլ արի՛։

Տղէն գնաց պառաւի տունը. ախչկայ չորերը հաքաւ. գնաց Թաքաւորի ախչկայ մօտը։

Թաքաւորի ախչիկը ասեց.—Էքուց էլ սիպտակ ձիանը կը նիլենք, սիպտակ չորերը կը հագնենք. սիպտակ քողերը կը քցենք գլխըներիս, ամենի գլուխը ես կաղնեմ, կդաս. ձիու կեամը կը բըռնես, քաշես, Թաքաւորի աղաքը կը կաղնացնես։ Տղէն վեր կացաւ, գնաց պառաւի տունը։

Լիսացաւ, առաւօտն էկաւ Թաքաւորի պալատը։

Թաքաւորը դուս էկաւ, հրամայեց.—Գնացէք, քառասուն ախչիկը բերէք, քառասուն ձեռք սիպտակ չոր հաքցրէք, սիպտակ ձիանը նիլցրէք, սիպտակ քողները քցէք գլխըներին. բերէք ըստի, ջէրկուն կաղնացրէք։

Էդպէս արեցին։ Թաքաւորը ասեց.—Իմ ախչիկը ո՞րն ա, գնա՛, գթի՛, բեր։

Գնաց, գլխի ձիաւորի ձիու կեամը բռնեց. քաշեց, բերեց Թաքաւորի մօտը, ասեց.—Թաքաւոր ապրած կենայ. վեց օր ա, իմ ջանը քեզնէ չխնայեցի, էս էլ քու ախչիկն ա. քու ախչկայ ջանն էլ ընձանից չխնայես։

Թաքաւորը հրամայեց ախչկերքին, ամենն էլ ձիանոցից վեր էկան։ Ասեց.—Քողերներդ էրեսներիցդ վեր կալէք, էդ տղին վեր կալէք, տարէք պալատը։

Թաքաւորը գնաց պալատը տղի մօտը. հարցրեց.—Դու ինչ տղայ ես, իմ Ֆանեերը մէկն էլ չիմացան, դու վեցն էլ իմացար։

Ասեց.—Ես էլ Թաքաւորի տղայ եմ, էկայ քու ախչիկն ուզելու, Աստուած յաջողեց, վեցն էլ իմացայ։

Ասեց.—Պսակեմ ու իմ մօտին կաց։

Ասեց.—Խնդրում եմ, ինձ ճանապար քցէք, իմ պսակը իմ հայրը թող տենայ։ Ասեց.—Դու գիտաս։

Առաւօտը զօրք զօրապետով ամենը դրեց ախչկայ հետ, ճանապար քցեց։

Տղէն ասեց.—Թաքաւոր ապրած, բան պէտք չէ, ամեն էլ քեզ փեշկեշ, էրկու ձի տուր, նիլնենք, էթանք։

Թաքաւորն ասեց.—Այ տղա՛, քեզ մի բան եմ ասըմ. քանը հինգ տարեկան իմ տղէն կորեր ա, ամեն բանը դու գիտում ես, դու կարող էս էդ տղին գթնիլը, որ գթար, բերեցիր, իմ Թաքաւորութիւնը կը յանձնեմ քե՛զ, դէ՛, բարի ճանապար ըլի, գնացէք։

Վեր կացան էկան Միյմունճի էրկիրը։ Միյմունճները վեր կալան, տարան իրանց Թաքաւորի մօտը, Թաքաւորը ասեց.—Բարի էկար, մեզ մի կշտացրայ, քեզ ճանապար քցենք։ Ըտի սուֆրէն փռեց, հաբուր խալվար պօպօկ ու բադամի մէջ ուզեց։

Էդի կերան, խմեցին. տղին քցեցին ճանապար։

Գնաց, ձիաւոր մրջեմի երկիրը հասաւ։

Ձիաւոր մրջեմները էկան աղաքը, վե կալան, տարան իրանց Թաքաւորի մօտը։

Թաքաւորը ասեց.—Բարի ես էկեր, մեզ կշտացրայ, քեզ բարի ճանապար քցենք։

Ըտի սուֆրէն փռեց, հարուր խալվար ցորեն ու դարի ուզեց։ Ըտի կերան, կշտացան. տարան իրանց սընօրից հանեցին, ընկան դևերի սընօրը։

Դևերը էկան աղաքը, ասեցին.—Հա՛, Թաքաւորի տղա՛, մուրազիդ հասար։ Սոված ենք, մեզ կշտացրայ, քեզ բարի ճանապար։

Սուֆրէն փռեց, ասեց.—Տար գոմէշ ԸԱԻ միջին։ Տաս գոմէշ էլաւ միջին, ըդոնք կերան, կշտացան։

Վե կալան, տարան իրանց սընօրը անցկացրին։

Գնաց. հասաւ վիշապի մօտը։

Վիշապն ասեց.—Խի՛ յետացար էդքան։

Ասեց.—Անճախ որ բերեցի, քի՛չ չարչարանք էր։

Ասեց.—Էդ ախչիկը մնայ իմ մօտը. դու գնա՛, քու նշանածը հրե՛ն, ընդի ծաղիկ ա քոփ անըմ, բե՛ր։

Տղէն գնաց դպա իրան նշանածը, վիշապը ասեց.—Ախչի, մազերդ փաթայ իմ շնքովը։

Ախչիկը փաթաց շնքովը։

Վիշապը ճուաց ու էլաւ մի քսան հինգ տարեկան տղայ ու ընդի կաղնեց։

Էդ տղէն ու ախչիկ էկան ըդրա մօտը, Թուրը քաշեց որ ըդրան սպանի. էդ տղէն ասեց.—Խի՛ ես տալի, ես իմ քիրն ա, բերեցիր իմ մօտը, չատերին ղրկեր ի, որ իմ քուրը բերի. գնացեր էր, չէր էկե. քեզ ղրկեցի, բիրիր։ Էս իմ քիրն ա, բաղշեցի քեզ։

Տղէն էլ ասեց.—Ես էլ իմ նշանածը բաղշեցի քեզ։

Նոր ձիանը նիլան, էրկու ախչիկ. էրկու տղայ, դպա Թաքաւորի մօտը։

Խապարը գնաց Թաքաւորին.—Աչքդ լիս. տղէդ էկաւ։

Թաքաւորը վեր կացաւ, զօրք զօրապետով գնաց աղաքը տղին։

Չինաստանի Թաքաւորի ախչկայ վրէն իրան տղին պսակեց։

Օխտն օր, օխտն գշեր հարսանիք արեց։

Թաքաւորի տղէն ասեց.—Չինաստանի Թաքաւորի տղէն գթեր եմ, վեր կալեմ, տանեմ իրան Թաքաւորի մօտը։

Էդ ախչիկն ու էրկու տղէն էլան. գնացին։

Գնացին, ճանփէն կորցրեցին, ընկան մի չոլ, խապան տեղ.

քառասուն ճարամու մէջ ընկան, ճարամի բաշին ասեց.—Տարէք էդ էրկու տղին, սպանէք, շորները հանէք, բերէք։

Թագաւորի տղէն ասեց.—Սպանէք ձեր ձեռը ինչ կընկնի. ես էլ թագաւորի տղայ եմ, էս էլ Չինմաստանու թագաւորի տղէն ա, ես խոստանում եմ, չարի ձեր մահը ձեզ պահեմ, հմի էլ ինչ որ սըրտներդ ուզում ա, ասէք. ուտացնեմ։

Ասեց.—Մեր սիրտը շատ բան ա ուզում, խորոված, ոխչար, բան։ Սուֆրէն փռեց մէյթանը։

Ըդոնց ուզած բաները բիրաթի սուֆրի մէջ գթնուաւ։

Կերան, խմեցին։ Վեր կացան ու գնացին, հասան Չինաստան։

Գնացին, թագաւորի պալատի դարվազի աղաքը վեր էկան։ Թագաւորին խապար արին, դուս էկաւ.—Աչքդ լիս որ տղէդ էկաւ։

Տղին բերեց, պսակեց. օխտն օր, օխտը գիշեր՝ իրա յօժար կամով թագաւորութունից վեր էկաւ. իրան տղին դրեց թագաւոր. ըդըրա քառասուն ձիաւորին ամենքին մի ճշաճ տուեց. ընկան ճանապար, էկան իրանց թագաւորի կուշտը։

Էդ քառասուն ճարամի ձիաւորին ճշաճ տուեց, պահեց։

Թագաւորն էլ տղին ասեց.—Անումը իմը ըլի, թագաւորութունը դու արա։

Ընդոնք հասան իրանց մուրազին։

43

ՕՁ—ՄԱՑԻԼ

(Վաղարշապատի բարբառով *)

Մէկ հալիւոր մարդ կար, մէկ քաղաքում. մի հատ էլ պատուաւ կնիկ ունէր. էդ հալիւորին ՙխակի ՙխլլաճ չունէր, մի քօլածածուկ էլ տուն ունէր։ Էդ հալիւորի փեշակն էն էր օրը մի շլակ ցախ կը բերէր, կը ծախէր, կտար իրան հացի. ըդով ապրուստ կանէին։ Մէկ օր էլ պարանը վե կալաւ, գնաց հանդն, էլի ցախը շինեց. շլակը կապեց. ուզեցաւ շլակի, թամաշա արեց, տեհաւ մի խաւշաճի քօլի տակից մի օրտակ թռաւ, ասեց.—Էթամ տենամ ինչ կայ միջին։

Գնաց տեհաւ իրեք հատ օրտակի ձու կայ. իրեք հատ ձուն էլ վե կալաւ ու շլակը շլակեց ու էկաւ. բերեց, բազարը ծախեց ցախը. իրա տանը համար հաց առաւ, բերեց տուն. կնկան ասեց.—Պառաւ, Աստուած մեզ տուեց։

Ասեց.—Ինչ էս բերել որ, Աստուած մեզ տուել ա։

Ասեց.—Իրեք հատ օրտակի ձու եմ գթե, սոված եմ. մէկը ձուածեղ արա, ուտենք։

Ձուածեղ արեց, կերան։

Առաւօտը վե կացաւ. էլի գնաց ցախի։

Բերեց ցախը, էլի ծախեց. հաց առաւ, բերեց տուն. ասեց.—Կնիկ, էն մի ձուն էլ ձուածեղ արա, ուտենք։

Ասեց.—Ուտելով ինչ կը հասկանանք, տանենք հարևանի հաւի տակ դնենք։ Ճուտ ըլի, կը մեծանայ. մեզի հըմար ձու կածի. մըշտական կուտենք։

Հալիւորը զօռեց պառաւին, ասեց.—Գնա՛, բեր. մինը կուտենք, մինը թո մնայ. դու գիտաս, էն ինչ անըմ էս, արա՛։

Գնաց պառաւը էն մին էլ բերեց. էփեցին, կերան։

* Պատմած է Արաէն Ղռիմեան:

Առաւօտը հալիւորը վեր կացաւ, գնաց ցախի էլի, ցախը բերեց, բազարումը ծախեց, հաց առաւ. էկաւ տուն. պառաւը գնաց Թագուն որ ձուն պահի, հենց տեհաւ մի օձ ձուիցը դուս ա էկե, կուտապ ա էկել։ Պառաւը որ տեհաւ, չատ վախեցաւ, ու փախաւ. ճուալով էկաւ հալիւորի մօտը։ Հալիւորը ասեց.—Պառա՛ւ, ի՛նչ էս ճըւճըւում։

Ասեց.—Աստուած քու տունը քանդի. էն ձուիցը մի հատ օձ ա դուրս էկե։

Ասեց.—Պառա՛ւ, ի՛նչ սուտ էս ասըմ. ձուի՛ցն էլ օձ դուս կգայ, գնա՛, էթանք, տենանք։

Պառաւն ասեց.—Փէ՛տ վեր կալ, էթանք. տանք, սպանենք։

Հալիւորն ասեց.—Փէտը ո՛ւր ա.

Պառաւ ընկաւ փէտի ման գալու։

Մէկ էլ էն տեհան օձը էկա՛ւ, տան մէջը կաղնեց. ասեց.—Հալիւոր-պառաւ, ի՛նչ մտքի էք, ի՛նչ էք անըմ։

Ասեցին.—Բանի ման չենք գալի։

Ասեց.—Բա փէտ-մէտի էիք ման գալի, որ գայիք, ընձի սպանէիք. դու չէ, սաղ ախչարքի մարդիքը, որ Թափեն իմ վրայ, չեն կարայ ճալայ. ամեքին մի դըհով կը քցեմ, կեթան։ Հըմի դու իմ պապն էս, էն էլ իմ նանն ա. ես էլ ձեր տղէն. ինձ լսեցիք, պակասութուն չէք քաշի. չլսեցիք, էրկըսիդ էլ կսպաննեմ։

Հալիւորն ասեց.—Որդի՛, ի՛նչ որ ասես, կը լսենք։

—Որ կը լսես, կեթաս, Թաքաւորի պուճուր ախչիկը կուզես ինձ։

Հալիւորը վեր կացաւ, փէտն առաւ ու գնաց։

Գնա՛ց, պալատի դռան աղաքը կաղնեց, խնամաքար ունէր, էն քարի վրէն նստեց։

Վազիրի մէկը դուս էկաւ. դարվազի աղաքը տեհաւ հալիւորը քարի վրէն նստած ա, ասեց.—Հալիւո՛ր, խի՛ ես նստե ըդէ, ի՛նչ գանգատ ունես։

Ասեց.—Գանգատ չունեմ. էկերեմ, Թաքաւորի ախչիկն ուզեմ իմ տղին։

Վազիրը մտաւ նէքսև, գնաց Թաքաւորի մօտը. ասեց.—Աչքդ լիս, Թաքաւոր ապրած կենայ. մի հալիւոր մարդ էկեր ա, քու ախչիկը ուզում ա իրա տղին։

Թաքաւորը ասեց.—Կանչէք, գայ, տենանք ի՛նչ թավուր մարդ ա

Վազիրն ասեց.—Կանչելու մարդ չի, էն հալիւորն ա, օրը մի չլակ ցախ ա բերըմ. մի պառաւ էլ կնիկ ունի, անճախ ապրուստ ա անըմ. ձմեռն էլ ընդըրա հըմար ողորմութուն էն թօփ անըմ, եօլա ա էթում, ընկնում ա գարունք. էդ թավուր մարդը մոնց կանչէք քու մօտը։

Թաքաւորն ասեց.—Ա՛յ հայ, էդ թավուր մարդ ա գալի, իմ ախչիկն ուզում։

Թաքաւորը ասեց.—Վազի՛ր։ Ասեց.—Հրամայե՛։

—Ջալլատին կը վե կալես, կեթաս, հալիւորի կշտին կը կաղնես. ջալլաթին կը հրամայես, հալիւորին մէջ տեղիցը էրկու անի, էն էրկու կտորն էլ ամենքը էրկու կտոր անի, որ ըլլի չորս կտոր. կանես մեշօքի մէջը, կտաս մէկ մարդի շլակ. տանեն քաղաքիցը ղրաղ քցեն, չներն ուտեն, քաղաքը իմանայ, որ էդ թավուր մարդ իմ դուռը չկայ։

Վազիրը վե կալաւ, ջալլաթին տարաւ, մոնց որ Թաքաւորը հրամայել էր, էնպէս էլ կատարեց. ածեց մի մեշօքի մէջը, ասեց.
—Տարէք, քաղաքիցը ղրաղ ածէք, թօ չներն ուտեն։

Ընդոնք շլակեցին, գնացին։

Վազիրը մտաւ Թաքաւորի մօտը։

Թաքաւորն ասեց.—Ի՞նչ արիր։

Ասեց.—Քո հրամանը կատարեցի։

Իմացաւ օձը, ասեց.—Նանի՛։ Ասեց.—Ի՞նչ ա բալա։

Ասեց.—Պալին էն օրն քցե որ, Աստուած շանց չտայ. հըմի կդան, մեր դռնով կը տանեն, գնա, աղաչյա, թօ բերեն տուն։

Պառաւը ոտին, գլխին տուեց ու գնաց, դուռը կաղնեց։

Տեհաւ մեշօքով շլակներին, հրեա, բերում էն։

Ասեց.—Բալա ջան, էդ ինչ ա։

Ասեցին.—Էն հալիւորն ա, Թաքաւորը սպաներ ա, տանըմենք, դեն քցենք։

Ասեց.—Թաքաւորի զուլումը մեր վրէն հասեր ա, բալա ջան, բերէք մեր դուռը ածէք. գնացէք։

Ասեցին.—Քաղաքի ղրաղը շատ հեռու ա, հազր ըստի մօտ ա. հենց ածենք ըստի ու թողանք, էթանք։

Տարան, քցեցին տուն ու փախան, գնացին։

Պառաւը նստեց, լաց էլաւ, ասեց.—Իմ տունը քանդուեց. էս ինչ օյին էկաւ իմ գլուխը, իրա ոտին, գլխին տուեց։

Օձն էկաւ.—Հը, նանի՛, խի՞ էս լաց ըլնում։

Ասեց.—Քու տունը չքանդուի. արի՛, տես, էս ինչ ա էլե։

Ասեց.—Չորս կտոր էն արե, ինչ էն արե. Աստուած էլ բէքարիցն ազատի։ Սաղ ա, սաղ. գնա՛, դու ըստե մի կաղնի. ականջ մի անի. ջանը սաղ ըլնի, գնա՛ դուս։

Պառաւը գնաց. տեղը քցեց ու էկաւ։

Էկաւ տեհաւ որ հալիւորը սաղ ա. քներ ա, փոփըլմ ա, ծիծաղաց։

Վ.ե կալան, տարան, տեղը դրեցին։

Հալիւորը մի լաւ քնեց. առաւօտը վեր կացաւ, տեղը նստեց։

Օձը էկաւ, կշտին կաղնեց. ասեց.—Պապի՛, էրեկ ղրկեցի Թաքաւորի մօտը, ինչ խապար բերեցիր ինձ հըմար։

—Գնացի, խնամաքարի վրէն նստեցի, վազիրը դուս էկաւ, ասեց. «Հալիւոր, խի էս նստե, ինչ դանդատ ունես»։ Ասեցի. «Դանդատ չունեմ. Թաքաւորի ախչիկը ուզեմ իմ տղին»։

Վազիրը մտաւ ներսեն ու մի ջալլասի հետ դուս էկաւ. ջալլասին հրամայեց, ասեց. «տո՛ւր»։ Ջալլասի տալն իմացայ որ տուեց, էլ չեմ գիտում ինչ էլ էլե, մէկ էլ տեհայ, ըստե քնած էմ, դալս չեմ իմացել։

Ասեց.—Դե՛, վե, գնա՛, չվախենաս. ըսօր ինձ մի խապար բեր։

Հալիւորը վեր կացաւ, ու գնաց, խնամաքարի վրէն նստեց. վազիրը դուս էկաւ. տեհաւ էրեկուայ հալիւորը նստած ա. գնաց ներսե, ասեց,—Էրեկուայ հալիւորը էկեր ա էլի։

Թաքաւորը ոտը տուեց գետնով, ասեց.—Ձըլլի իմ հրամանը չես կատարե։

Ուրիշ վազիրի կանչեց, ասեց.—Գնա՛ դուռը. մի տասը մարդի կանչայ, թօ գան ըստե։

Գնաց, կանչեց, էկան. կաղնեցին Թաքաւորի աղաքը։

Ասեց.—Վազիր, էս տաս մարդին խօսացընըմեմ, որ իմ էրեկուայ հրամանը չես կատարե. ընդրա օրը քեզ կը քցեմ։

Էն տասը մարդին հարցրեց,—Էրեկ որ դուս էկաւ վազիր, դարվազումն ինչ բան բռնեց։

Դուս էկաւ, ջալլասը հետը, մի հալիւոր կար, չորս կտոր արեց, ածեց մեշօֆը, տարան, դեն քցեցին։

Ասեց.—Աֆերըմ վազիր, պըծա՛ր. նորից հրամայում եմ, գնացէք, չորս կտորը քէչ էր, հմի ըռշտի պէս կտորէք։

Վազիրները դուս էկան, ըռշտի պէս կտորեցին։

Ածեցին մի մեշօֆի մէջ, տուեցին էրկու տղի շլակ, ասեցին. —Տարէք, ածէք ձորը, թօ ջուրը տանի։

Օձն իմացաւ, ասեց.—Նանի՛, պապին էն օրն էն քցե որ, Աստուած չանց չտայ, խամաճ ճալցայա. հըմի կը բերեն մեր դռնով պտի տանեն, գնա՛, աղաչայ, բերեն տուն-

Վե կացաւ, պառաւը ոտին գլխին տուեց, դռանը լաց էլաւ՛ Տեհաւ էրկու տղայ մեշօֆով բերում էն. ասեց.—Բալա, ձեր ոտին, գլխին ղուրպան, էդ իմ մարդն ա, Թաքաւորի զուլումը հասեր ա, ըդենց կտորեր ա, ձեր էրեսին մեռնեմ. բերէք, ածէք տուն ու գնացէք։

Ասեց.—Պառաւ, քու տունը ո՞րն ա։

Ասեց.—Բաց դուռն ա՛

Տարան, քցեցին ճայեարն ու փախան, գնացին։

Պառաւը նստեց, լաց էլաւ վրին։

Օձը դուս էկաւ, ասեց.—Նանի, մի՛ լաց ըլէր. գնա՛ ֆուչի դուռը ղայիմ շինայ, գնա՛ տեղը քըցայ։

Գնաց, շինեց ու գնաց տեղը քցեց։

Էդ օձը բերեց, մարմինը դեղեց, լիզուն քսելու բաշտաճ էլաւ մօրէ մէկ, նստաւ էդ հալիւորը։

Պառաւը տանից դուս էկաւ, տեհաւ հալիւորը նստած ա. փաթըթուեց հալիւորի շլինքը, հալիւորի էրեսները պաչեց։

Օձն ասեց.—Նանէ, պաչելու վախտը չի, տար տեղը, բան պտի հարցնեմ պապին։

Պառաւը թեւը բռնեց, կաղնացրեց. տարաւ, տեղի մէջը նըստացրեց։

Օձն ասեց.—Պապի՛, քեզ տեղ ղրկեցի, ի՞նչ խապար բերի՞ր։

Ասեց.—Որդի՛, էն խետ հօն խօսացրին էրկու բերան, էս հետ ըսկի՛ բան չլսեցի։

Ասեց.—Դէ՛, վեր, գնա՛, թաքաւորի աղջիկն ուզայ ինձ համար։

—Որդի, ասեց պառաւ. ախր էրկու անգամ սպանեցին. բալքի սպանում էն։

Ասեց.—Մէրը մեռնի Օձ—Մայիլին, հարուր անգամ էլ սպանեն. ես կը սաղացնեմ։

Հալիւորն վեր կացաւ ու գնաց։ Գնաց, քարի վրէն նստեց։ Թաքաւորը իրան վազիր ճազիրով դուս էկաւ, տեհաւ մի հալիւոր մարդ քարի վրէն նստած ա, ասեց.—Էդ ինչ հալիւոր ա, մի հարցրէք, տեհէք։

Վազիրն, ճազիրը տեհան էն հալիւորն ա, շատ վախեցան թաքաւորիցը, պատասխան չկարացին տայ թաքաւորին։

Ասեց թաքաւորը.—Վազիր, ճազիր, բա՛ն ասեցի. դուք սուս կացաք։

Ասեց.—Թաքաւոր ապրած, էս էն հալիւո՛րն ա, մէկէլ օրը չորս կտոր արեցինք, էրեկ էլ ըռշտի պէս կտորեցին. էս օր էլ սաղ էկեր ա, նստեր ըս տեղ, մենք վախեցանք որ ըստրայ պատիճը մեզ տաս. ընդուր չենք խօսացնըմ հալիւորին։

Ասեց.—Հալիւորին վե կալէք, տարէք պալատը. ըտի մի բան կայ։

Թաքաւորը ետ դառաւ, իրա թախտին նստեց, հալիւորին կանչեց. աղաքին կաղնացրեց, ճազիր, վազիրը կանչեց. հալիւորին չորս բոլորը կտրեցին.

Ասեց.—Հալիւո՛ր, դու խի՛ ես եկե։

Ասեց.—Էկեր էմ, քու աղջիկն ուզեմ իմ տղին։

—Էս քանի՞ անգամ ա դու էկեր էս ըս տեղ։

—Ըս էլ իրեք անգամ, ասեց.

—Ի՞նչ պատասխան տուին էրկու անգամը քեզ։

—Առաջի անգամը դուս էկան, ասեցին «խի էս էկե.» ասցի. «էկերեմ, Թաքաւորի աղչիկն ուզեմ իմ տղին.» հենց Թրի չրխկոցը լսեցի գլխիս մէջ տեղիցը. ընդուց դեն էլ չիմացայ, մէկ էլ տեհայ տանը պարկած էմ. տղէս ասեց. «Ինչ պատասխան բերեցիր,» ասցի. «պատասխան չտուին,» էրեկ էլ ղրկեց, ըսկի չխօսացրին, հենց գլխիս տուեցին. մէկ էլ տեհայ տանը պառկած էմ. էս օր էլ ղրկեց, ասեց. —Գնա, Թաքաւորի աղչիկն ուզե, ըս օր էկեր էմ, էրես էրեսի, քու աղչիկն ուզում եմ իմ տղին, ինչ ասելու ես, ասա։

Թաքաւորն ասեց.—Նազիր, վազիր. ըսդըրայ խօսքով դուք պրծնում էք, էս հալիւորին բան անիլ էլ իլլաճ չկայ, ընենց բանի դէմ անենք, որ չկարենայ բերի։

—Թաքաւոր ապրած կենայ. էդ դու գիտաս։

Ասեց.—Պապի՛, քու տղէն ինչ փեշակի ա։

Ասեց.—Իմ տղէն փեշակ չունի. մի հատ օձ ա ու տանը կուտապ էկե, նստե։

Ասեց.—Իսան էլ չի, հա՛, քու տղէն։

Ասեց. Չէ, մի հատ օձ ա։

Ասեց.—Որ օձ ա, ես խօստացայ իմ աղչիկը տամ. գնա՛, ընենց տներ շինե, իմ պալատները տեներմ էս, իմ պալատներից բանձր ըլի, ընդըրա հոլը գայ, իմ պալատներին ծածկի. որ իմ աղչիկը տամ քու տղին։

Հալիւորն էկաւ դըպա տուն. մտաւ տուն, օձն էկաւ աղաքը, ասեց.—Հը՛, պապի. ինչ պատասխան բերիր։

Ասեց.—Որդի՛ գնա «Ընենց տներ շինե, որ հոլը գայ իմ տներին ծածկի։

—Պապի՛, ասեց. էն օրտակի ձուն որ բերեցիր, էն ծակը գիտա՞ս։

Ասեց.—գիտամ։

Ասեց.—Կեթաս, կասես, պստիկ խաճուլ, պստիկ աղէն ասըմ ա. մեր պստի foof ու սarkն ղրկի, գայ. իրան տասներկու Gofarն էլ հետը, բախումն էլ միջին ըլի։

Գնաց, ձէն տուեց ըդենց.—Պստիկ խաճուլ, պստիկ աղէն ասըմ ա, պստիկ foof ու սarkն ղրկի գայ. միջի բախումն էլ հետը. տասուերկու Gofafն էլ հետը։

Ասեց.—Հալիւո՛ր, դու գնա՛, մենք ղրկեցինք։

Հալիւոր էկաւ, հասաւ տուն. տեհաւ տները օխտը ղաթ իրար վրայ ա։ Նofarները էկան, հալիւորի հին չորերը հանեցին, թազա չորեր հագցրին, հազար մաճիք աժողութիւն ունէր. մի fուrf էլ

քցեցին վրին, հինդ հարուր մանեթ աժողութուն ունէր. սամուրի քուրք. մի լաւ գաւազան էլ ռուլին ձեռ, ակնունքով շինած էր ըդրա գլուխը, հազար մանեթ աժողութուն ունէր։

Օձն էկաւ աղաքը, ասեց.—Պապ՛, գնա, արխային թաքաւորի ախչիկը ուզայ. վախտով հարսանիք անենք։

Հալիւորը վեր կացաւ ու գնաց. մտաւ թաքաւորի պալատը։

Նազիրը էկաւ աղաքը, գլուխ տուեց ու կաղնեց։

Հալիւորն հրամայեց.—Կաղնելու վախտ չի. ինչ էս անըմ. գնա, իմացըրայ թաքաւորին։

Ընենց վաղեց վազիրն, էլ ինչ ասեմ։

Թաքաւորն ասեց.—Հալիւորին կանչէք, ներսև գայ։

Էկաւ ներսև, կաղնեց. թաքաւոր տեհաւ ըդրա թասախուսը զարմացաւ։

—Հը, հալիւոր, ասեց. իմ խօսքը կատարե՞ր էս որ էկեր էս։

Ասեց.—Դե՛, բալկոնդ կաղնի ու թամաշա արա։

Թաքաւորը դուս էկաւ, կաղնեց բալկոնումը, տեհաւ իրա տները հինգ ղաթ ա, ըդրանը օխտը ղաթ, իրա տները թրծած քեարփինն ա, ըդրա տները մի քեարփինը ոսկի ա, մի քեարփինը արծաթ. արևը տուեր ա ըդրա տներին, ըդրա տների լուսը տուեր ա քաղաքին։

Ասեց.—Հալիւո՛ր, ըսօրուց դեն «Հալիւոր» չեմ ասի. «Խնամի» պտի ասեմ. քու տների վրայ զարմացայ. էդ ինչ հնար էր, մի բան էլ էմ ուզում քեզանից։

Հալիւորը ասեց.—Ի՛նչ ուզես, կտամ։

Ասեց.—Քեզանից ուզում եմ օխտը ղաթար դավի բեռ ալմաստ, զմրութ, աղրութ, սելեան, բըռլեանդ բարցած ըլի. սարվանը մի թիզ ըլի. մուրուքը օխտը թիզ ըլի, առաւօտը իմ դռանը չոքած ըլնի։

Հալիւորը էկաւ իրա տունը. Գալու բաշտան օձը գնաց աղաքը. —Հը, ասեց. պապ՛, ինչ պատասխան տուեց։

Ասեց.—Օխտը ղաթար դավա բեռ ակնունք ա ուզում. սարվանը մի թիզ ըլի, մուրուքը օխտը թիզ։

Ասեց.—Դէ, գնա էն ծակի կուշտը կաղնի, ձէն տուր.—Պատիկ խանըմ, պստիկ այլէն ասըմ ա, օխտը ղաթար դավա բեռ ակնունք չկայ, ամեն տեսակից էլ ըլի. սարվանը մի թիզ ըլի, մուրուքը օխտը թիզ, թաքաւորին ղալան էմ ղրկում։

Գնաց, հալիւորը ձէն տուեց էդպէս։

Ասեցին.—Գնա, մենք ղրկեցինք։

Հալիւորը յետ դառաւ, էկաւ տուն. տեհաւ օխտը ղաքար դավէն իրանց դռանը չոքած ա։

Էկաւ, տեհաւ չոքած ա օխտը ղաքար դավէն, սարվանը մի թիզ ա, մուրուքը օխտը թիզ, փաթըթեր ա մէջքը, ձեռները քշտեր ա, դավի նոխսէն բռներ ա։

Հալիւորն ընկաւ աղաք. տարան, Թաքաւորի դռան չոքացրին։ Հալիւորը գնաց Թաքաւորի մօտը, ասեց.—Թաքաւոր ապրած կենայ, քու ուզածը բերեր էմ։

Թաքաւորը մի եէա մաղազա դարտըկեց, տարաւ, չուռ տուեց իրա մաղազի մէջը, մի բուռը վեր կալաւ, իրա սարաֆներին չանց տուեց, ասեց.—Հասն ինչ կաժենայ։

Ասեցին.—Թանկագին բան ա, հարը հազար մանէթ կաժենայ։

—Խնամի՛. ասեց հալիւորին. իմ ուզածը բերեցիր, մէկ բան էլ էմ ուզում. իմ դռնից քու դուռ, քու դռնից ժամի դուռը. ժամի դռնից էլի քու դուռը չինարի ծառ ըլլի, որ չորս մարդ իրար բռնի, նալա ձեռները չհասնի իրար. հաստութինը ընենց ըլլի։

Հալիւորին ճանապար քցեց, էկաւ դըպ տուն։

Թաքաւորն ասեց.—Անկարելի ա ծառերը բերիլը, ըդով իմ ախչիկը կազատեմ ըդուց։

Հալիւորն էր, հասաւ տուն. Օձ-Մայիլն էկաւ առաջը, ասեց.

—Հը, պապի, ի՞նչ ասեց Թաքաւորը։

—Թաքաւորն էն բանին դէմ արեց, չենք կարայ։

Ասեց.—Ի՞նչ ասեց.

Ասեց.—Չինարի ծառ ա ուզում մեր դռնից իրա դուռը, իրա դռնից ժամի դուռը. ժամի դռնից, էլի մեր դուռը։

Ասեց.—Էդ զոռ բան չի, գնա դըպա էն ծակը, ձէն տուր, —Պատիկ խանում, պատիկ աղէն ասըմ ա, չինարի ծառերն ղրկի գայ. ծառի վրի ղշերն էլ հետը որ ճըլվըլան։

Ձէն տուեց.—Ղրկեցինք էկաւ, դու գնա։

Հալիւորը էկաւ, տեհաւ. ճլ-էլ-ճլ ծառե՛ր ա դուս էկե, ֆալաքի օխտը ղաթը հասեր ա։

Էկաւ տուն, Օձ-Մայիլն ասեց.—Հը պապի. գնա՛, Թաքաւորին տես, ինչ ա ասըմ։

Գնաց Թաքաւորի պալատը. վազիրը դռանը կաղնած էր, ասեց. —Վազի՞ր, գնա, Թաքաւորին իմացրայ որ խնամին էկեր ա։ Թաքաւորն ասեց.—Կանչէք, գայ նեքսև։

Էկան, հալիւորին կանչեցին, գնաց նեքսև։

Թաքաւորն ասեց.—Հա՛, իմ ասածը կատարեր էս, որ ասի։

Ասեց.—Դուս արի, թամաշա արա։

Դուս էկաւ, թամաշա արեց, տեհաւ դուզ ա։

Ասեց.—Էս ինչ ճվվըլոց ա գալի։

Ասեց.—Թագաւոր ապրած կենայ, մի բան էլ ես էմ աւելացրել, ղօերն էլ հետն եմ բերել:

Ասեց,—Դէ, գնա՛, իմ ասածն ասած ա. գնա՛, մի ձեռք չոր բեր որ էն կտորէցը իմ երկրումը չըլլի, կար չըլլի միջին. իմ ախջիկը հագնի, էթայ պսակ. օխտը ձեռք էլ տափ ու զուռնաչի բեր, ինչ ղայտա ասենք, ածա՛, ածեն. իրանք չերեան։ Օձ-Մայիլն էլ հետը բեր։

Հալիւորը յետ դառաւ իրանց տունը։ Էկաւ, մոնց որ Թագաւոր էր ասել, էկաւ, ընենց ասեց

—Գնա՛ էն ծակի վրայ ձէն տուր, ասա.—Պառիկ խանըմ, պըռտիկ աղէն ասըմ ա, էն չորերը ղրկե որ ոչ ձեռ տուած ըլլի, ոչ կար ըլլի միջին. կտորից էս երկրում չըլլի,

Հանեցին մի պնտուկ տուին, ասեցին.—Ա՛ռ, էս պնտըկի միջին ա չորերը, վե կալ, տար։

Օխտը ձեռք էլ տափ ու զուռնա ղրկի գայ, ինչ ղայդա ասենք, ածեն, իրանք չերեան:

Ասեց.—Ղրկեցինք։

Ասեց.—Դուք էլ համեցէք հարսանիք։

Ասեց.—Մեր տեղը հեռու ա, չենք կարայ գայ. դուք ընտի քէֆ արէք. մենք էլ ըստի քէֆ կանենք։

Հալիւորը յետ դառաւ, էկաւ տուն. տեհաւ օխտը ձեռք դափ ու զուռնէն զարկըմ էն. կռկռոցն ընկեր ա քաղաքին մէջ։

Գնաց, մտաւ հալիւորը տուն. տեհաւ Օձ-Մայիլը պոչի վրայ կաղներ ա, ասեց.—Պապի՛, հարեաններին քոփ արա, էթանք։ Թոփ արեց ընկան ճանապար։ Օձը ընկաւ առաջ։

Գնացին Թագաւորի պալատը։

Թագաւորը տեհաւ. էրկու հատ վազիր ղրկեց, Թևերիցը բռնցրացին. տարան Թագաւորի առաջը։

Ասեց.—Խնամի՛, զուռնաչին իմ ասածն ա, չորերն էլ բեր, տենամ իմ ասա՛ծն ա։

Պնտուկը վե կալաւ, դրեց Թագաւորի առաջը. Թագաւորը պնտուկը ջարդեց. մի ձեռք չոր էկաւ դուս միջիցը, իրա երկրումը էն կտորը չկար, կար էլ չկար միջին։ Ղրկեց, իրա էրկու ախջիկը մարդի տուած ունէր, կանչեց, իրա կնիկն էլ կանչեց. իրա պուճուր աղջիկն էլ կանչեց որ տուել ա Օձին։

Էկան, ընտի կաղնան։

Թագաւորը ասեց.—Էս չորերը տեսէք, որ կտորէցը իմ երկրումը որ չկայ. կա՛ր էլ չկայ միջին. լաւ թամաշա արէք. հագցրէք որ էթայ պսակ։

Թաքաւորի կնիկն ու էրկու ախջիկն վեր կալան. իրանց տուին գետնովը, ասեց.—Դու Թաքաւոր ըլես, մալի խափուես. քու քաղաքում բա տղայ չկա՞ր որ մի տղի տայիր, տուեցիր օձի. մի գշեր կատայ, կը քաշուի մի պատի ճղակ։

Թաքաւորն ասեց.—Ես իմ խօսքիցը դուս չէկայ, իմանանք էն մի ախչիկն էլ չկայ։

Թաքաւորի կնիկն ու էրկու ախչիկն էլ լաց էն ըլնում, չորերը հագցընում. Թաքաւորը ասը տուեց գետնովը, ասեց.—Է՛ս բօպէին հագցրէք։

Հագցրեցին, բերին ըռի կաղնացրին։

Էդ երկրի մէջ ըդենց տեսակին ախչիկ չկար,

Օձին հրամայեցին. ասեցին.—Արի՛։

Օձը վեր կացաւ, պոչի վրայ կաղնեց, օխտը անգամ Թաքաւորին գլուխ վեր բերեց. գլուխը պոըտեց, ինչ քար մարդ կար, քոմըքից չնորհակալ էլաւ. գնաց, Թաքաւորի ախչկայ մինքանու փեշիցը բերնով բռնեց։

Վեր կալան, տարան, պսակեցին. տարան հալիւորի տունը։

Զարի լիս կերան, խմեցին, քոմմա գնացին։

Մնաց Օձը, էդ ախչիկը, հալիւորը, էդ պառաւը։

Օձն ասեց.—Պապի՛, նանէ՛. գնացէք, քնէք։

Ընդոնք վեր կացան, գնացին։

Թաքաւորի ախչկան ասեց.—Վեր, դուռը չինի։

Թաքաւորի ախչիկը դուռը չինեց, էկաւ Օձի կշտին նստեց։

Ասեց.—Թաքաւորի ախչիկ, ինձանից չվախենաս դու. ոտիդ բիդը բեր, պոչիս ծէրին հուպ տուր։

Ոտի բիդը տարաւ, պոչի ծերին հուպ տուեց։

Ճուաց ու մի տղայ դուս էկաւ խորխի միջիցը. ինչ քար ախչիկն էր սիրուն, տասը էնքար տղէն էր սիրուն։

Էկաւ, Թաքաւորի ախչկայ ձեռը բռնեց, ասեց.—Թաքաւորի ախչի՛կ, իմ սուրը մարդի չասես, ինձ քառասուն օր ժամանակ ունեմ. որ ըսենց իսաճի պէս կեթանք Թաքաւորի մօտը քառասուն օրէն ետը. համա, որ ասեցիր, էլ քու ձեռը չեմ ընկնի՛։

Ասեց.—Չեմ ասի։ Ըտե փաթըթուան իրար. մի լա՛ւ քէֆ արեցին։ Պառկան քնան. բիրդան զարթնեցին, տեհան լիսը փանջարից ընկեր ա օթալխի մէջը։

Օձը էլի խորխէն հագաւ, էլաւ օձ, կուտապ էկաւ պուճախին։

Թաքաւորը կնկան կանչեց. ախչկերքին կանչեց, ասեց.—Գնացէք, տեսէք, էն ախչկայ հալը ո՛նց ա, մեր սուրը մենք իմանանք։

Թաքաւորի կնիկը, երկու ախչիկն էկան դըպա հալիւորի տունը. տեհան պառաւը դռներն սրբում ա,—Բարև, խնամի։

Ասեց պառաւը.—Աստըծու բարին։

Ասեցին.—Ո՞վ կայ վիրև։

Ասեց.—Հալիւորն ա, մարդ չկայ։

Գնացին վիրև, տեհան հալիւորն մի օթախի մէջ նստած ա։

Ասեցին.—Խնամի՛, փեսէն ու մեր ախչիկը ո՞րտեղ էն։

Ասեց.—էն օթախում էն, իրիկւորէ մտեր էն ըտե, էլ ձէն ու ձուն չկայ։

Թաքաւորի կնիկ ասեց.—Թողը ըդըրա բերողի գլխին ըլի. խաՑ ա որ ձէն ու ձուն ըլի։

Դուռը ծեծեցին, ախչիկը բաց արեց։

Տեհան ախչիկը ինչ ուրախ-ուրախ բաց արեց որ, ծիծաղ էրեսից թափում էր։

—Հը՛, ասեց. ախչիկ, բՒՖդ ո՞նց ա։

Ասեց.—Փառք Աստըծու, չա՜տ լաւ ա։

Ասեց.—Օձդ ո՞նց ա։ Ասեց.—Խեղճ ճայվաՑը կուչ ա էկե, ինչ պտի անի։

Ասեց.—Էս գշեր մեր քունը չի տարե. քու դարsն էնք քաշըմ։

Ասեց.—Իմ դարsը էլ չէք քաշի. աrխայիՑ կը կենաք։

Բերեց, ըդոնց մի լաւ պատիւ արեց. ընենց ḫմակներ քաշեց որ թաքաւորին էդ ḫմակներից չունէր։

Կերան, խմեցին, վե կացան։

Վե կացան էրկու քիրը, մէրը. ախչկան խոստցրին, ասեցին.—Ախչի. էդ օձիցը ինչ էս հասկանում։ Թաքաւորը մի անգամ տուեց ու իրա խօսքիցը դուս չէկաւ. մի քար վեր կալ ու, հենց տու գլխին, սատկացրայ. քու ջաՑը ըդուց ազատուի։

Ախչիկը ասեց.—Որ էդ խօսքը ինձ ասեցիք. ըս տերանքը էլ չգաք, էն ինձ համար չատ լաւ ա։

Վե կացան, իրեքն էլ գնացին թաքաւորի մօտը։

Թաքաւոր հարցրեց.—Էն ախչիկը մո՞նց ա։

—Ախչիկը չատ լաւ էր, ուրախ էր սիրտը. մի բան էլ ասեցինք, որ օձին սպանի՝ մեր վրէն չա՜տ նեղացաւ, մենք էլ թողացինք, էկանք։

Մի տասն օր ախչկայ մօտը չգնացին, տասն օրէն յետը թաքաւորին մի ուրախութուն էլաւ, ձիաւորներ թօփ արեց, որ իրա դուան աղաքը մէյsաՑ էր, հաղ անէին։

Հազա՛ր ձիաւոր թօփ արեց, կնկան ասեց.—Գնացէք, էն ախչկան էլ բերէք. թո գայ, թամաշա անի, սիրտը բացուի։

Թաքաւորի կնիկը գնաց բերելու։

Օձ-Մայիլն իմացաւ, ասեց.—Թաքաւորի ախչիկ, հըմի մէրդ կգայ. քեզ կտանի. Թաքաւորը աթոռը դրեր ա դռանը, նստեր ա. հազար ձիաւոր, հինգ հարուր էս դին ա կաղնած, հինգ հարուր էլ էն դինը, ճրինց էն հաղում. ես էլ, ասեց. բօզ ձինը նըլնեմ կգամ, սիպտակ շորերը կը հագնեմ, սիպտակ թօփուզը կառնեմ ձեռս, որին տամ շուռ կտամ, քու քըրերը, քու մէրը ուրիշ բաներ կը խօսան քու վըէն. սկի պատասխան չես տայ. իմ սըռն էլ չես ասի. որ ասեցիր, էլ հնար չկայ. քու ձեռը չեմ ընկնի։

Խօսքը պըծաւ. Թաքաւորի կնիկը մտաւ նեքսև, ասեց.—Ախչի, վեր, էթանք. էս օր դու էլ թամաշա արա, ուրախութենի օր ա։

Ասեց.—Մոնց գամ. Օձ-Մայիլի կշտին մարդ չկայ ախըր։

Թաքաւորի կնիկն ասեց.—Թողեմ ըդըրա դլուխը, ըդուց յինչ էս հասկանում, չկայ-չկայ, յինչ անենք։

Օձն ասեց.—Նանի, ես էլ գամ, թամաշա անեմ։

Ասեց.—Հա, գաս ընկնես ձիանոց ոտի տակ, սատկես։

Ասեց.—Դէ, դու գնացէք, ես կը մնամ տանը։ Ասեց.—Ախչի, քեզ արի, չմնաս ձեր տանը, ես մինակ չեմ կարայ մնայ։

Վեր կացան ու գնացին. գնացին, տեհան ձիաւորը էնպէս ա հաղում, որ թամամ ա, Թաքաւորը նստեր ա։

Գնաց Թաքաւորի ձեռը բռնեց, պաչեց ախչիկը. Թաքաւորը ճակատը պաչեց, ասեց.—Ախչի, դարս մի անի, ըդուց կազատեմ քեզ։

Կաղնեցին թամաշա, տեհան մի բօզ ձիաւոր էկաւ, սիպտակ շորերը հագին, սիպտակ թօփուզը ձեռին, ձին որ քշում ա. ձիու ոտներին տակիցը կրակը թափում ա։ Էդ հազար ձիաւորին էնպէս արեց որ դումանը հանեց, որին տուեց, շուռ տուեց. որին տուեց, շուռ տուեց։

Քշեց, էրկու քենակալների քամակը ընկաւ, ամեքին մի դըրպ տուեց, ձիուցը վեր քցեց։

Ըդոնց կնանիքը ասեցին.—Վայ Թեհրդ կոտրուի, մոնց տուեց, վեր քցեց։

Օձ-Մայիլի կնիկն ասեց.—Խի կոտրուի, էն էլ ճալպաք մի մարդ ա։

Քըրերը ասեցին.—Ա՛, փողը քու բերողի գլխին ըլլի, ճալա մերը իսաճ ա, կեթանք, հետը կը խօսանք. քունը բա մի օձ ա, գշերը կը կծի, կը քաշուի մի պատի ճղակ։

—Ցողը ձեր գլխին ըլլի, իմ դարսը մի քաշէք սկի։

Ձիաւորը ցըվրուան, գնացին. էդ բօզ ձիաւորը էկաւ, թօփուզը տուեց գետինն ու կաղնեց Թաքաւորի աղաքը։

Թաքաւորը հանեց, մի նշան տուեց ըդըրան։

Ասեց.—Անունդ յինչ ա, ասա։

Ասեց.—Վերջի օրը իմ անումը կասեմ. Թաքաւոր, մնաս բարին։
Մէկ էլ տեհան ձիու թոզն էրևաց, էլ ինքը չերևաց։
Թաքաւորը գնաց տուն, ախչկերքն էլ հետը։
Թաքաւորը էդ ախչկան ասեց.—Կաց ըստի, մի՛ էթայ։
Ասեց.—Չեմ մնայ, կեթամ։
Ասեց.—Ախչի. Օձից ինչ ես հասկանում, էթում ես։
Որ տուեր ես, ինչ ասեմ, մի բուռ փող ա, ինձ ղապուլ ա։
Վեր կացաւ ու գնաց. գնաց, տեհաւ օձը կուչ ա էկե։
Ասեց.—Ախչի՛, դռները չինայ, պոչիս ծերին հուպ տուր։ Պոչի ծէրին հուպ տուեց։

Օձ-Մայիլ խրխիցը դուս էկաւ. փաթթուան իրար, պաչպչեցին, ասեց.—Թաքաւորի՛ ախչիկ, ընտի մի բան խօսացիք, լաւ էր, երանդ պինդ ա, քիչ ա մնըմ քառասուն օրը թամմի. որ վեր կալեմ քեզ. ընենց աղամարդի ղայդայ Թաքաւորի աղաքը տանեմ քեզ։

Պարկան, քնան։ Մի տաս օր էլ անց կացաւ. էլի Թաքաւորի ուրախութունի օրն էր. ձիաւորները թօփ արեց, ասեց.—Գնացէք, էն ախչիկն էլ բերէք, թօ թամաշա անի։

Թաքաւորի կնիկը գնաց բերելու։

Օձ-Մայիլն ասեց.—Ախչի՛, Թաքաւորի՛ ախչիկ, հըմի մէրդ կգայ, քե կը տանի թամաշի. ես իմ կարմիր ձին կը նիլնեմ, կարմիր չորերս կը հագնեմ. կարմիր թօփուզը ձեռս կառնեմ, կը գամ. կը մտնեմ մեյդանի մէջը. ամենին էլ թօփուզով պտի տամ. ինչ որ կը խօսան. իմ սրտը չես ասի։

Թաքաւորի կնիկը մտաւ դռնիցը, ասեց.—Ախչի. վեր, էթանք։
Ասեց.—Նանի, որ տանում ես, թեզ թող գայ. ոտ չունեմ, ձեռ չունեմ որ հաց բերեմ, ուտեմ։

—Ցողեմ գլուխդ. քու ֆուտելու դարտն էնք. չի էլ սատկում, ըռաթ ըլի։

Վեր կացան ու էկան ախչիկն ու մէրը, էկան Թաքաւորի, կըշտին նստեցին։

Տեհան կարմիր ձիաւորն էկաւ, մտաւ մեյդան. էնպէս արեց էդ հազար ձիաւորին, որ ֆոմմքին էլ տուեց թօփուզով։

Ախչկերքն էլ ասեցին՝ իմ մարդը ըլի. էն ասեց՝ իմ մարդը ըլի. ասեցին.—Մէրը իսան ա, հալա հետը խօսում էնք. սրան պա մի օձ ա, որ սկի հետը չկարայ խօսայ։

Ասեց.—Դու ձեր դարտը քաշէք, ինձ հետ ինչ գործ ունէք։
Ձին քաշեց. էկաւ, Թաքաւորի աղաքը կաղնեց։
Թաքաւորը հանեց, մի նշան էլ տուեց։

Նշան առաւ ու ձիու գլուխը թողաց, էլ ինքը չերևաց. ձիու թոզն էրևաց։

վեր կացան, ցվրուեցին։

Ախչկան ուզում են տուն տանէն, չգնաց. ինչ շատ զոռեցին։

Գնաց, տեհաւ օձ նստած ա, ասեց.—Հա՛, Թաքաւորի ախչիկ, միտքդ փոխեր էիր որ իմ սըռը ասէիր։

Ասեց.—Չեմ ասի։

Մի քանի օր էլ անց կացաւ. մի ուրախութունի օր էլ էկաւ, ձիաւորները թօփ արեց, ասեց.—Էսօր վերջի օրն ա. մի լաւ քեֆ անենք։ Կնկան ասեց.—Գնա՛, էն ախչկան էլ բեր։

Թաքաւորի կնիկը գնաց։

Օձ-Մայրին ասեց.—Ախչի, Թաքաւորի ախչիկ. հըմի մէրդ կգայ, քեզ կը տանի ընտե թամաշա, ես սև ձին կը նըստեմ. սև չոբերը կը հագնեմ, սև թօփուզը կառնեմ ձեռս. կգամ, էն մեյշաճը լաւ կը հաղամ. քոմըքի բերանը բաց մնայ. ինչ որ քե կասեն, իմ սըռը չասես, իրեք օր ա մնացել որ քառասուն օրը թամմի, քառասուն օրը որ թամմաւ, աղամարդի ղայշայ կը տանեմ Թաքաւորի մօտը. նոր ընդուց դեն մենք կուտենք, կը խմենք, քեֆ կանենք։ Մէկ էլ ասըմեմ, «իմ սըռը չասե՛ս,» որ ասեցիր, էրկաթէ տրեխներ կարես, հանդնես, պողպատէ գաւազան առնես ձեռդ. էն ղդար ման կգաս, պողպատե գաւազանի բռնելու տեղը կը մնայ, տրեխներին էլ ղրաղները կը մնայ. տակը կեթայ. աճճախ որ գթնես ինձ։

Տեհան Թաքաւորի կնիկը մտաւ ներսև։

Ասեց.—Ախչի՛, վե էթանք, էսօր լաւ ուրախութունի օր ա։

Օձ-Մայրին ասեց.—Նանի՛, ընձ էլ տանե՛ս, գամ, թամաշա անեմ։

Ասեց.—Օրինակ էս, ես քե տանեմ, կընկնիս ձիանոց ոտի տակ, կը սատկես։

Ասեց.—Դե, վեր կալ, տար, չեմ գայ։

Ախչկան վե կալաւ, տարաւ։ Գնացին, Թաքաւորի կշտին կաղնեցին թամաշա։

Տեհան մի սև ձիաւոր էն դհիցը դուս էկաւ. էկաւ. Թաքաւորի առջին կաղնեց. գլուխ տուեց, ասեց.—Թաքաւոր ապրած կենայ. կեթամ, էսօր վերջի օրն ա ձիաւորի. հազար ձիաւորը մէ՛ եաճ կաղնացրե, ես մէ՛ եաճ կաղնեմ. քու հազար ձիաւորի հետ հաղ անեմ ես, ես իմ ձին կը քշեմ ընդոնց մէջը, որին ըլլի պտի տամ. ընդոնք էլ իրաւունք ունեն որ ինձ տան։

Ասեց.—Իրաւունք ունես, գնա՛։

Ասեց.—Թաքաւոր ապրած, լաւ թամաշայ արա՛, տե՛ս, իրեք օրէն ետը, ես ու իմ ճշաճածն էլ քեզ ղօճաղ էնք։

Թաքաւորն ասեց.—Որ ինձ ղօճաղ ըլլես. ես էլ ինչ պարգև կտամ, գնա՛։

Ընկաւ էւ ձիաւորների մէջը խախալատակեց (մաղեց), մէկին

ալա չթողաց, ամէջին մի թօփուզ տուեց. տալու բաշտան վեր էր քցում։ Սաղ ինչ տար թամաշաւոր կար, էն մէկլին ին թամաշայ անըմ. իրար միջին խօսում ին ախչկերքը կնանիքը՝ էն ասըմ ըէ.

— Իմ մարդը ըլի, էն ասըմ էր իմ մարդը ըլի։

Թաքաւորի էրկու ախչկերքը ասին.—Մերը ճալա մարդ ախօսըմ էնք, պա մեր քուրը օձ ա։

Ախչիկը ուզեցաւ ասեր էդ իմ մարդն ա. էլի հուպ տուեց իրան, չասեց։

Թաքաւորին մի ախչիկն ասեց.—Էն օրուայ բօզ ձիաւորը իմ մարդն ըլէր. էն օրուայ կարմիր ձիաւորն էլ էս քուրս մարդը ըլ-լէր. ըս օրուայ սև ձիաւորն էլ ըսրայ մարդը ըլէր։

Էն մէկ ախչիկն ասեց.—Ախչի. ըդենց խի՞ էս ասըմ, մեր քուր սիրտը պղտորի. իրիկունը կեթանք, ճալա մեր մարդկանց հետ խօսանք, ըտրան հըլա մի օձ ա. ո՞ւմ հետ պտի խօսայ։

Էդ ախչկայ սիրտը պատռեց, ասեց.—Փողը ձեր գլխին ըլի, փողը՞, էնդար ասեցիք, ես չեմ խօսո՞ւմ, բօզ ձիաւորն էլ ա մէկ, կարմիր ձիաւորն էլ ա մէկ, էդ սև ձիաւորն որ հաղում ա, էդ էլ ա մէկ. ընդար ասըմ էք «օձ, օձ.» էդ էն Օձ-Մայիլն ա, հա, ձեր ջանը դուս գայ. փողե՞մ ձեր գլուխը. իմ սի՞րտը պատռացրիք։

Օձ-Մայիլը ձին քշեց. էկա՛ւ Թաքաւորի աղաքը կաղնեց, ասեց. —Թաքաւո՛ր, խօստացայ իրեք օրէն յետը գայի քեզ ղօճախ, էլ չես տեսնի ինձ, գնացի։ Պատճառը քու ախչկանից կիմանաս։

Ձին փշեց. գնաց Թաքաւորի ախչկան ասեց.—Էլ ինձ չես տեսնի, ես որ գնացի։

Մէկ էլ տեհան ձիու թօզն էրևաց. էլ ինքը չէրևաց։

Թաքաւորի ախչիկը գլխին ու ոտին տուեց, լաց էլաւ։

Ձիաւորները, թամաշաւորները բիրաշի ցվրուան, գնացին։

Թաքաւորը ախչկերքի հետ, իրա կնկայ հետ գնացին։

Ասեց.—Ախչի՛, արի՛, տեսնամ ինչ էս ասըմ։

Օձ-Մայիլն ինչ որ ախչկան պատմեր էր, ըենց էլ ախչիկ Թաքաւորին պատմեց. վերջի խօսքը ասեց. «իրեք օր ա մնացե, քառասուն օրը թամմի, որ թամմեց կը տանեմ Թաքաւորի մօտը . . . » ասեց. «իմ սըրը մի՞ ասի,» ախչկերքը հետս ընկան, ասեցի սըրը։

Թաքաւորը ասեց.—Այ քու շլինքը կոտրուի. բերանդ մի սաճաք էլ խփէիր, էլի՛։ Ասեց.—Դէ՛, հաց պատրաստէք, ուտենք։

Էկաւ, տեհաւ հալիւորն ու պառաւը նստած էն։

Ասեց.—Պապի, Օձ-Մայիլը գնաց, չտեսա՛ր։

Ասեց.—Էկաւ ինձ ձէն տուեց, ասեց. «Պապի՛, մնաս բարի, ես էթումեմ.» ասեց. ու գնաց։

Էդ ախչիկը թազաբան իրան ոտին գլխին տուեց ու լաց էլաւ։

Առաւօտը բեզ վեր կացաւ, գնաց դարբին ուստայ Մարքարի մօտը, ասեց.—Ուստայ Մարքար, ինձ համար մի ջուխտ երկաթե տրեխ շինայ, մի պողպաթէ գաւազան շինայ, ինչ որ հախն ա, կտամ։

Ալպեալը փուքը փչեց ու շինեց։

Հագաւ տրեխները, գաւազանը առաւ ձեռը. գնաց, մի ձեռք էլ դարվիշի շոր առաւ, հագաւ. գնաց Թագաւորի պալատը, գլուխ տուեց. Թագաւորի աղաքին կաղնեց։

Թագաւորն ասեց.—Այ-հայ,. էդ ինչ կեյիմ ես մտե։

Ասեց.—Օձ-Մայիլն ինչ որ ասեր ա. ըննենց էմ արե։

Թագաւորը, իրա կնիկը, երկու ախչիկը, ինչ իլաճ արեցին, չկարացին գլուխ հանի։

Գնաց, Թագաւորի ձեռը պաչեց. մօր ձեռն էլ պաչեց, քըւոր-տանց հեռան էլ ձեռ բռնեց, ասեց.—Դէ, մնաք բարի, ես գնացի։

Թագաւորն ասեց.—Աստուած քու հետ, գնա։

Ընկաւ ճանապար էդ ախչիկը, գնաց։ Աշխարը ման էկաւ, չգտաւ. ինչ տեղ հարցրեց, սաղ տուող չէլաւ։

Գնաց, մի ախբրի վրէն նստեց, մի լաւ ջուր խմեց, պարկաւ ախբրի ղրաղը քամակի վրայ, երեսը թեքեց Աստուած վիրև, ասեց.—Աստուած, իմ փոգին հաճ առ, հա մի տեղ չանց տուր, ես ախ-չարքը ման գալով մեռայ, բոտխան տեղ չեմ կարայ էթայ։

Մէկ էլ տեհաւ, իրեք հատ ախչիկ կժերը ուսներին էկան, ջուրը լցրեցին ախբրիցը. ջուր ուզեց, որից ուզեց, չտուեցին, ասե-ցին—Ֆողեմ գլուխդ, մեր մօքոր տղէն ջուր ա ուզում, էրվում ա. դու ջուր ես ուզըմ։

Էդ երկու ախչիկը վռազ-վռազ լցրեցին, գնացին։ Ցետոյ էն պուճուր ախչկանից ուզեց։ Ախչիկը կուժը լցրեց, տուեց. էն դար-վիշը առաւ, խմեց։ Ասեց. Ախչի, ես ջուր ուզեցի էն երկու ախչկա-նից, խի իմ վրէն բարկացան։

Ասեց.—Թագաւորի ախչկայ շլինքը կտրուի, մեր մօքոր տղէն, Օձ-Մայիլը գնացեր էր, ախչիկը առեր էր. պայման էր դրեր, քա-ռասուն օր ըդըրան ժամանակ ունէր. որ սըռը չասէր, քառասուն օրը չքամմած ասեր ա. հըմի խռովեր ա, էկեր, ընկեր ա ըս տեղ, գչեր, ցերեկ ասըմ ա «էրվայ Թագաւորի ախչկայ սէրին»։ Հըմի մէրս կչոլին կաղներ ա, գչեր, ցերեկ ջուր ենք ածում վրեն որ հո-վանայ. որ մեր մէկլին առնի։

Դարվիշը ալպեալը իմացաւ որ իրա մարդն ա.—Ախչի, ասեց. ջուրը մէկ էլ տուր, խմեմ ու գնամ։

Առաւ, խմեց, մատանին քցեց կժի մէջը։

Ախչիկը ջուրը լցրեց ու տարաւ, տարաւ ածեց վրին։

Ախչկայ մէրը ախչկան վրին բարկացաւ. ասեց.—Լէրբ անզգամ, խի՛ նստացր էղքան։

Ասեց.—Մի դարվիշ կար, հետը խօսացի, յետացայ։

Ջուրը աղջիկը որ ածեց վրին, ասեց.—Հովացայ-դինճացայ։

Մատանիքը ընկաւ աղաքը, վե կալաւ, դրեց մատը։

ՕՁ-Մայիլն ասեց.—Բերէք, իմ չորերը հագնեմ ու նստեմ. բօլ ա։ Շորերը հագաւ, նստեց։ Մօքիրը ախչկերքին ասեց.—Գնացէք, էն դարվիշին վե կալէք, բերէք։ Գնացին, բերեցին։

Մօքիրն որ տեհաւ դարվիշին, ասեց.—Լէրբ անզգամ. դարվիշի չոր հագեր էս որ չճանաչենք. էս ինչ օրն էս քցե իմ քուրը տղին, էս իրեք տարի ա գշեր, ցերեկ ջուր էնք ածըմ վրին, ճալա չհովանըմ, քե պէս անզգամի խաթեր. հըմի քեզ կտոր-կտոր կանեմ, որ ամեն կտորդ մի չօլ քցեմ, որ քեզ տեհաւ. Նոր հովացաւ։

ՕՁ-Մայիլն ասեց.—Մօքիր. ձեռ մի՛ տար, ես ըդըրան ճանապարհ կը քցեմ. դո՛րն էկեր ա, դէնը էթայ։

Ասեց.—Հալա դու ափսոս էս գալի որ քե էդ օրը քցեց, քու կաշին կը պոկեմ, քու կաշին։ Ճանապար էս քցում որ դու էթաս հետը, հասնես. ես պտի փչացնեմ, որ ըտուց ձեռ վե կալես։

Ասեց.—Դու գիտաս, մօքիր, էլ չեմ կարայ բան ասի։

Մօքիրն ասեց.—Ես ինչ կանեմ, կանեմ. չխօսաս էլ։

Ասեց.—Ախչի՛, մենք էթումենք բանջարի. էդ խնոցին արտըսնքով կը լցնես։ Ըդոնք վե կացան, գնացին բանջարի։

Էդ ախչիկը նստեց խնոցու մօտը։

ՕՁ-Մայիլն ասեց.—Հը՛ խի նստար ըդի։

Ասեց—Թանգպե արև որ արտըսնքով լցնեմ։

Ասեց.—Կարմա՞ս լցնի։ Ասեց.—Չէ։

Ասեց.—Մի քանի կուժ ջո՛ւր լցըրայ։

Բերեց ջուրը լցրեց լէքը.—Երկու իրեք բուռ աղ քցայ մէջը։

Աղը քցեց։ Ասեց։—Արէ՛, կշտիս նստի, խօսանք։

Էկաւ կշտին, նստեցին, խօսացին։

Ասեց.—Դու իմ սըռը խի՛ ասեցիր, որ ես էկայ, ընկայ ըստի, դու էլ չօլէչօլ ընկար։

Ասեց.—Բա մի՛նց պտի անես։

Ասեց.—Ինչ հնար անեմ. էն գիտայ։

Հենց դռնիցը մօքիրը մտաւ նէքսև. ասեց.—Լէրբ անզգամ. խնոցին լցըրեր էս, որ նստեր էս, խօսըմ էս։ Ասեց.—Լցըրեր էմ։

Գնաց, խնոցին տեհաւ լէքն ա, ձեռով ջուրը տարաւ բերանը. տեհաւ աղի ա, ասեց.—Այ քու սարվացընողի չլինքը կոտրուի. ինչ անենք կը սարվացնի քեզ։ Էլ սրան իլաճ չկայ, ղրկեմ քուրս տունը, ընտի կը վերջանայ, չկարայ էլ գայ։

Ասեց.—Ախչի՛, կեթաս էն սարի քամակը, կասես. «Մօքի՛ր, մօքիրը առաֆատէն ուզում ա որ հաց թխենք.» կը վե կալես. կդնաս։ Դե, մենք էթըմենք ցախ բերենք։ Ըդո՛նք գնացին ցախ բերելու։

Օձ—Մայիլն ասեց.—Ախչի՛։

Կեթաս, աղաքդ մի ջուր կգայ, չմա մուռտար ջուր ա. կը վեր կալես։ մի բուռ կը խմես, կասես. Օխա՛յ, ի՛նչ անմահական ջո՛ւր ա։ Ջուրը ճանփայ կտայ, անց կը կենաս։ Կեթաս կը տենաս փուշ ու տատաշ բռաաց էկաւ. մի հատ կը վե կալես։ փոտ կը քաշես, կասես.—Էս ի՛նչ անմահական ծաղիկ ա. էդ էլ ճանփայ կտայ, կանցնես կեթաս։ Կեթաս, կը տենաս մի դէլ խոտն աղաքին ա, մի ղոչ, մի դմակ աղաքին ա. խոտը կը վե կալես, կը քցես ղոչի աղաքը, դմակը կը քցես գելի աղաքը. կեթաս, կը տենաս մի դուռ յետ արած ա, բաց կանես. կեթաս, կը տենաս մի դուռ էլ բաց ա, յետ կանես։ Ընտե էլ մի դուռ կայ. կը մտնես ներսև. առաֆատէն դռան գլխին կախ տուած ա. կասես «մօքի՛ր, մօքիրն առաֆատէն ուզում ա. կը վե կալես, կը փախնես. մօքիրը ձէն տայ, չես կաղնի։

Ախչիկը վեր կենայ, կեթայ. Օձ—Մայիլ ի ասածի պէս կանի. դուռը կը մտնի, կասի, «Մօքի՛ր, առաֆատէն մօքիրն ուզում ա»։ Կասի.—Մօքիրն քե ղուրբան, արի՛, նստի ըստե, առաֆատէն տամ։

Դռան գլխից կը վե կալե ախչիկն, կը փախնի։ Էդ մօքիրն կընկնի քամակը, կասի.—Այ յետ արած դուռ, բռնայ ըդըրան.

Ասեց,—Եավաշ, մի քիչ բաց ըլլեմ, դիճճանամ, նոր կընկնեմ քամակը, բռնեցի, բռնեցի. չբռնեցի, իրա բաղդը։

Ասեց.—Բաց դուռ, դու բռնայ։

Ասեց.—Եավաշ, մի քիչ յետ ըլլեմ, դիճճանամ. բռնեցի, բըռնեցի. չբռնեցի, իրա բաղդը։ Ասեց.—Ղոչ, դու բռնայ։

Ասեց.—Սոված էմ, եավաշ. մի քիչ խոտ ուտեմ, կշտանամ, կընկնեմ քամակը, բռնեցի, բռնեցի. չբռնեցի, իրա բաղդը։

Ասեց.—Գէ՛լ, դու բռնայ։

Ասեց.—Եավաշ, մի քիչ դմակ ուտեմ, կշտանամ. նոր ընկնեմ քամակը, բռնեցի, բռնեցի. չբռնեցի, իրա բաղդը։

Ասեց.—Փուշ ու տատաշ դու բռնայ։

Ասեց.—Եավաշ, մի քիչ անմահական ծաղիկ ըլլեմ, բռնուաւ, բռնուաւ. չբռնուաւ, իրա բաղդը։

Ասեց.—Փիս-մուռտար ջուր, դո՛ւ բռնայ։

Ասեց,—Եավաշ. մի քիչ ըլլեմ անմահական ջուր, բռնուաւ, բռնուաւ. չբռնուաւ, իրա բաղդը։

Պառաւը էկաւ, ջրի ղրաղը կաղնեց.—Գնա՛, ասեց. իմ ձեռից չէիր պրծնիր դու, ճամա քու սարվացնողի չլինքը կոտրուի, թէ չէ. քեզ մի լա՛ւ խորոված կանէի, կուտէի։ Մօքիրը յետ դառաւ։

Առաֆատէն ախչիկը բերեց Օձ-Մայիլի մօտը։

Օձ-Մայիլն ասեց.—Մո՞նց էր։

Ասեց.—Քու ասածները որ չանէի, չէի կարայ գայ։

Ասեց.—Առաֆատէն դիր տաշտի մօտը, արի, խօսանք։

Մօքիրը մտաւ նեքսև, ասեց.—Ախչի՛, բերե՛ր էս։

Ասեց.—Բերեր էմ։

Ասեց.—Ի՞նչ հիլաճ անենք, կը սարվացնի։

Բօռւմց, իրեք ախչիկն էլ էկան, մտան նեքսև։

—Ախչկե՛րք, ասեց իրա ախչկերքին, իմ քւոր տղին էն օրը քցեց. հալա ըղուց չի հովանում, էթանք մեշեն, ամենքս մի ակլ ցախ շլակենք, դանք. փուռ կապենք, վառենք. էս ախչկայ ոտ ու ձեռ կապենք, քցենք կրակի մէջը, որ հիւլն էլ չերևայ. որ իրա աչքովը տենայ, նոր հովանայ։ Պարաններըը վե կալան, գնացին մեշէն։

Օձ-Մայիլն ասեց.—Ախչի՛, ցախն որ բերեն, դու ի՞նչ պտի անես։ Ասեց.—Չեմ գիտում, ինչ պտի անեմ։

Ասեց.—հիլլաճ չկայ, մենք պտի փախնենք որ պրծնենք։

Սիպտակ ձիու պոչի մազը տուեց կրակին, ձին էկաւ. սիպտակ շորերը հագաւ. թօփուզն առաւ ձեռն ու ասեց—Ախչի, մի կտոր աղ վեր կալ, մի բուքուլկայ ջուր վե կալան, մի սանտր վե կալան։ Ախչկան քաշեց թարքը, ձիու գլուխը թողաց. թօզն էրևաց, էլ ինքը չէրևաց։ Մօքիրը ցախը շլակներին մտաւ նեքսև, տեհաւ, ճա թաս վար ճա ճամամ։ Պուճուր ախչկան կանչեց, ասեց. Ախչի՛, կընկնես քամակը, կը բռնես, ո՛ր տի գթնես, կը բերես իմ մօտը. ես ըղըրա միսը ճելփերինով կը պոկեմ։ Ախչիկն ընկաւ քամակը։

Օձ-Մայիլն ասեց.—Թաքաւորի ախչիկ, յետ թամաշայ արա, տես. հօ մարդ չի՛ գալի։

Յետ թամաշայ արեց, ասեց.—Մի մարդ ա գալի որ քամու պէս ա գալի։ Ասեց.—Սանտրը քցայ։

Սանտրը քցեց. էլաւ մի ճեփայ մեշայ։

Էկաւ. մեշի մէջ մտաւ, ըղըրա ջաճը ճղճղեց։

Ասեց.—Թաքաւորի ախչիկ, յետ թամաշայ արա, տե՛ս, ի՞նչ ա։ Ասեց.—Մեշիցը դուս էկաւ։ Ասեց.—Աղաքա՛րը քցայ։

Աղաքարը քցեց, էլաւ մի ճեփայ աղի սար, ըղըրա ճարալու ջաճը մըռմռաց։

Ասեց.—Ախչի՛, մի յետ թամաշայ արա, տե՛ս, ինչ էլաւ։

Ասեց.—Աղաքարիցն էլ դուս էկաւ։

Ասեց.—Ջուրը քցեց, էլաւ մի ահագին ծով։

Ասեց.—Յետ թամաշայ արա, տես ինչ էլաւ։

Ասեց.—Ծովիցը, հրեն, դուս էկաւ։

Ասեց.—Էլ հիլլաճ չըլլի, վե՛ր արի։

Վեր էկան, ինքը էլաւ մի հալիւոր մարդ, ձին չինեց սև հաւմող, կնիկը չինեց սիպտակ հալող, ինքն էլ կչտին նստեց։

Էկաւ, ասեց.—Հալիւո՛ր, մի բօզ ձիաւոր, մի ախչիկ պարճին, տեսա՞ր։

Ասեց.—Սև հալողի գռուանքէն էլ իրեք կապէկ, սիպտակն էլ։

Ասեց.—Ես բան էմ ասըմ, դու ի՞նչ էս ասըմ։

Ասեց.—Էդ ա, պակաս չինք տայ։

Ախչիկը թքեց ու յետ դառաւ, էկաւ տուն։

Ըղոնք նիլան, փախան։

Մէրն ասեց.—Ախչի՛կ, ի՞նչ արեցիր։

Ասեց.—Մարդ չպատահեց, մի հալիւոր պատահեց. հալող էր ծախում, ասեցի.—«Հալիւոր, մի ըսենց մարդ տեհա՞ր, թէ չտեհար», ասեց. «Սև հալողն էլ իրեք կապեկ, . . .» ես էլ յետ դառայ էկայ։

Մէրն ասեց.—Եան սևը պտի առնէր, եան սիպտակը. ըդըրա սէրը բօզմիշ կըլլէր, կգար, ձեր մէկին կառնէր։

Միջնեկ ախչիկն ասեց.—կեթամ, եան սևը կառնեմ, եան սիպտակը։ Ընկաւ քամակը։ Ասեց. Օձ-Մայիլ—Թագաւորի ախչիկ, թամաշայ արա՛ տես, մարդ, մուրթ հօ չի՞ գալի։

Թամաշայ արեց, ասեց.—Մէ՛կը դումանի պէս գալիս ա։

Վե կալաւ, աղաք սանդրը քցեց. տեհաւ դուս էկաւ, աղը քցեց. տեհաւ աղիցն էլ դուս էկաւ, ջուրը քցեց. ջրիցն էլ դուս էկաւ, ձիուց վեր էկան. ինքը էլաւ բօստանջի, կնիկը չինեց դուրբմայ, ձին չինէ՛ց խմիշ։ Աղջիկը էկաւ, հասաւ, ասեց.—Բօստանջի աղբէր. մի ըսենց բօզ ձիաւոր, մի աղջիկ էլ պարճին տեհա՞ր։

Ասեց.—դուրբմէն էլ մի տանի. խմիշն էլ, որից ասըմ էս, առ։
Ասեց.—Ես բան եմ հարձնում. դու ի՞նչ էս ասըմ։

Ասեց.—Գինը էդ ա, պակաս չեմ տայ։ Թքեց ու յետ դառաւ։

Օձ-Մայիլը վե կացաւ. ձիան սաղացրեց. կնկան էլ սաղացրեց,

Բօզ ձին պեզարեց, պրախ տուեց. կարմիր ձիու մազը կրակին տուեց։ Կարմիր ձին էկաւ, կարմիր շորերը հաքաւ, նիլաւ ձիու վրէն, քաշեց պարճին ու փախաւ։

Էկաւ աղջիկը, տուն հասաւ, մէրը հարցրեց.—Ի՞նչ էլաւ, չկարացի՞ր բռնիլ։ Ասեց.—Մի բօստանջի, պատահեց, ասեցի.—Բօստանջի մի ըսենց ձիաւոր, աղջիկ պարճին տեհա՞ր, ասեց—«Խմիշն էլ մի չահի՛»։

Ասեց.—Ա՜յ քու վիզը կոտրուի, եան դուրբմէն առնէիր, եան խմիշը, ընդոր սէրը բօզմիշ կըլլէր, կըգա՛ր, ձեր մէկին կառնէր.

Մեծն ասեց.—Ես կեթամ, եան խմիշ կառնեմ, եան դուրբմէն։

Աղջի՛, ասեց.—Էլ բօղ ձիաւոր չես հարցնի, կարմիր ձին ա նիլի։ Աղջիկը ընկաւ քամակը։

Ասեց.—Թաքաւորի աղջիկ. յետ թամաշայ արա՛, տես։

Ասեց.—Մէկը գալիս ա, դումանի պէս։

Ասեց.—Սանդր քցայ, քցեց. էլաւ մեշայ, տեհաւ մեշից դուս էկաւ,, ալը քցեց, էլաւ աղի սար, աղիցն էլ դուս էկաւ, ջուրը քցեց, էլաւ ծով, ծովիցն էլ դուս էկաւ։

Այդպէս ձիուցը վեր էկաւ, ինքն էլաւ ճամամչի, ձին չինեց սառը ջուր, կնիկը չինեց տաք ջուր։

Էկաւ, ասեց.—Համամչի. մի ըսենց կարմիր ձիաւոր անց կացաւ, մի ախչիկ բարբին, տեհար, թէ չտեհար։

Ասեց.—Տաք ջուրն էլ երկու տաճի լողանալը, սառն էլ, որտի լողանըմ էս, լողացի։

Ասեց.—Ես ինչ էմ ասըմ, դու ինչ էս ասըմ։

Ասեց.—Ըղենց ա, երկու տաճուց պակաս չենք առնի։

Թքեց ու էդ էլ յետ դառաւ։

Ձին սաղացրեց, կնիկն էլ սաղացրեց։

Սև ձիու պոչի մազը կրակեց։ Սև ձին էկաւ, սև չորերը հագաւ, ախչկան քաշեց բարբն ու փախաւ։

—Ախչիկը գնաց, հասաւ տուն։

Մէրն ասեց.—Ախչի՛, ինչ արեցիր։

—Գնացի, տեհայ մի ճամամչի, ասեցի «ճամամչի, մի ըսենց կարմիր ձիաւոր, մի ախչիկ բարբին տեհա՞ր», Համամչին ասեց. «տաք ջուրն էլ երկու տաճի, սառն էլ, որտի լողանըմէս լողացի»։

Ասեց.—Ցողերը գլխիդ, ես սառը ջրին լողանայիր. ես տաք. ըդըրա սերը փօզմիշ կըլէր, կգար, ձեր մէկին կառնէր, մեր տան տեղի վրայ կը նստէր, հըմի սև ձին ա նիլէր, որ մի ամսուայ ճանապարհը մէ՛ օրն ա էթում, իմ ձեռիցը չկարայ պրծընի, ինչ հնար անի, ես գիտամ, դե, մնացէք տանը. ես գնացի։

Օձ-Մայիլն ասեց.—Մի թամաշայ արա յետ։

Ասեց.—Մէկը գալիս ա, ըննեց ա գալի, որ քամուցը ճանփի քարերը դես ու դեն ա փախնըմ։

Ասեց.—Ինչ հնարք անենք. մօքիրը գիտայ. ըսդըրան մնաց աղաչանք անիլը։

Ձիուցը վեր էկաւ. ձին չինեց վարդի փունջ, իրա ղըզները բոլորիկ տնկեց. ախչկան չինեց մի հատ բալալիկ ճպոտ, տնկեց մէջ տեղը, ինքն էլաւ Օձ. ըննեց փաթըլթուեց ճպոտին, որ մի ասղի ծէրի ղըզար բաց չի մնայ. լեզուն հանեց ու ընկաւ աղաչանք։

Մօքիրն կրակէ՛ պէս էկաւ, հասաւ, ասեց.—Հը, Օձ-Մայիլ, քու ենքիպարն էդ էր, էն ղըզար որ քու վրայ չարչարուեցինք, դու Թո-

դեցիր, էկար, մի սաղ ծէրի ղտար չանց տուր, տես, միսը պոկում էմ։

Ասեց. – Մօքիր, թէ ինձ սիրում էս. եա դառ. գնա.

Ասեց.—Ի՞նչ անեմ, որտի տամ, քեզ կը դպչի, ըդըրան չի դիպչում, իմ ջանն ա, մո՞նց տամ իմ ջանին։

Ասեց.—Վերէք, գնացէք, Աստուած ձեզ հետ։

Օձ-Մայրին ասեց.—Մօքիր, գնա, հեռուացիր մենք կե-թանք։

Ասեց.—Հեռուանամ, ո՞ւր պտի պրծնէք իմ ձեռիցը, քու գլուխը վկայ՝ ձեզ բան չեմ անի. ձեզ պտի օրհնեմ, էթաք։

Նոր սաղացան, մօքիրն էկաւ, Օձ-Մայրի էրեսն էլ պաչեց, ախչկայ էրեսն էլ. յետ դառաւ։

Իրանք ձին նիլան. գնացին, իրանց ծակի դէմը կաղնեցին։

Օձ-Մայրը ձէն տուեց.—Պզտիկ խանըմ, դարվազէն բա՛ց, դանք ներս։ Դարվազէն բաց արեց, մտան ներս։

Ձին քաշեցին. տեհան, ըհը՛, էն ձիան էլ ըդի կապած ա։

Պզտիկ խանըմ Օձ-Մայրին պաչեց, խմակները սարքեց։

Նստան ուտել խմելու հետ, ասեց.—Պզտիկ խանում, էս ինչ քոփերու կոկոց ա գալի։ Ասեց.—Թաքաւորի ախչիկը ըստի նըս-տած ա. ասեմ, լա՛ց կըլի. Ասլան Թաքաւոր. Արզման Թաքաւորի հետ կռիւ բաց արեց, բիրաճի քաղաքները առաւ. փեսէք եարալու վեր էն ընկե, Աստուած ա մնացեր, եա մեռնէն, եա ապրեն. հմի էլ քաղաքի չորս բոլորը կտրեր ա, իրեք օր ա քոփ ա քցըմ. քիչ ա մնըմ էս քաղաքն էլ առնի, որ առաւ. թաքաւորութունը կոչնչանայ։

Պզտիկ խանումը ու Օձ-Մայրը նիլան ձիանք, գնացին մտան էն ղօշունի մէջ, ըննեց ջարդեցին որ խապար տանող էլ չէլաւ, իրանց երկրից հանեցին. տալան, Արզըման Թաքաւորի քաղաքը մտան. թաքաւորին բռնեցին. թուրը դրեցին չլինքին. խօսք տուեց, տարին քառսուն միլիօն փող տայ։ Օձ-Մայրը գնաց, Ասլան Թաքա-ւորի պալատը։ Տեհան Թաքաւորը, քիթ բերնի վրայ լաց ա ըլըմ։

—Աչքդ լիս, ասեց։

Ասլան Թաքաւոր. վե կացաւ, աղի ճակատը պաչեց. Օձ-գնաց, փեշերը լզեց, էլաւ մօրէ մէկ։ Հարսանիքը դրեց . . .

44

ՏԱՆ ԴՈՎԼԱԹԸ

Վաղարշապատի բարբառով *)

Մէկ մարդ կըլի ժամանակով, շատ հարուստ կըլի. ըդրա տղեքը աղըրտանքը տան մէջը ղալմաղալ արին. իրար չլսեցին. Բեասխպութունը յաղթեց, ցրուան. ամենը մի տեղ **Ցոֆար** էլան. Ընդրանց տան մեծն էլ գլուխ առաւ ու գնաց, մի գեղի մէջ մտաւ, էլաւ ջաղացպան. Ըդրա ջաղացները **թարս** բանեցին. Ջաղացատէրը էկաւ, ասեց.—Իմ ջաղացները չարի հըմի չիտակ բանըմին. հըմի դու էկար, **խարաբ** արիր. Դուս արեց ըդրան, նոր ջաղացները չտկուեցին.

Էս մարդը գնաց էլաւ **բաղվանչի**. էկաւ պտղի **վախտը**, **բարը** **բիրասի** Թափաւ. Բաղի տէրը էկաւ, ասեց.—Դու ինչ մարդ ես. ոտդ կոտրուէր, չգայիր, իմ տունն էլ, քու տունն էլ քանդեցիր. Բանեց, դուս արեց. **հախ** էլ չտուեց.

Աշուն էկաւ. մըրտի մտնում էր, **հօֆար** չէին բռնում, ասումին.—Դու էն մարդն իս, ջաղացը գնացիր, խեր չտուիր. **բաղը** գնացիր, **խեր** չտուիր. Շատ պտըտեց, մի հալիւոր մարդ տեհաւ. ընկաւ ընդրա աղաքը, ասեց.—Էս ձմեռ փոր հացի ինձ պահա, ձմեռ ա, չեմ կարում տեղ էթամ. Էն մարդ վեր կալաւ, տարաւ իրա տունը, ասեց.—Էս **դաւարը** պահա չարի զատիկ, քե փող էլ կտամ, դու մեղք ես.

Իրեք ամիս ըղըրա **դաւարը** պահեց, մտաւ մեծ պասը. Ըդրան մի քած ունէր, ծնում էր, ասեց.—Զը քնես, էս գշեր քածին **մուղաթ** կաց. ծնելու **վախտը** քածը չհեղդուի. **Մուղաթ** կացաւ, **բիրսան**

---

* **Պատմած է Վաղարշապատցի Առաքել Ղռիմեան:**

քունը տարել էր, զարթնեց, տեհաւ քածը ծներ ա. մի հալևոր մարդ կշտին կաղներ ա, ձագին ծըծացընում ա։ Ասեց.—Վա՜յ քունս տարեր ա, աղէս էկեր, ձագին ծըծացընում ա. հըմի ինձ հետ կը կռուի։ Գնաց, տեհաւ իրա աղէն չի, ասեց.—Պապի, դու ինչ մարդ էս։

Ասեց.—Դու ինձ չես ճանաչի. ես որ չհասնէի, աղէն քեզ հետ կը կռուէր, քեզ էլ դուս կանէր, ես իրանց դաւարը, իրանց ամեն բանը ինչ նեղ տեղ ըլլի, կը հասնեմ, ամենայն փորձանքից կաղատեմ. ես էս տան դօլվաթն էմ։

Ասեց.—Պապի՛, վիրև Աստուած, ներքև դու, ես էլ էմ հարուստ մարդ էլե. հըմի քեասխպացիր էմ, էս օրն էմ ընկե, որտե էթում եմ, իմ բանը չի յաջողում. իմ տունն էլ ա դօլվաթ էլե, ճալպաթ խռովել ա, գնացել ա, հըմի դու տեղը գիտաս, ինձ տեղն ասա. ես էթամ, բերեմ.

Ասեց.—Քու դօլվաթը խռովեր ա, գնացեր ա Ալակեազու սարը. մտեր ա, ձորի մէջը զաղա կայ, զաղի մէջը պառկեր ա. քրքի վրէն մի թիզ թօզ ա դրե. էթաս, էն թօզը թափ տաս. կընկնես աղաչանք, կասես.—Վե՛ր, էթանք։ Ինչ ղտար որ կը բարկանայ, կը թքի, կը մըրի քեզ, դու աղաչանք կընկնես. ինչ որ կտայ քեզ, չես ասի «քիչ ա,» կընկնես ճանապար, կգաս։ Հալևոր ասեց, էլ չէրևաց։

Ինքը գնաց, պառկաւ իրա տեղին, լիսը բացուեց, աղէն եկաւ, մտաւ գոմը, ասեց.—Այ որդի՛, քածը ծնե՞ր ա։

Ասեց.—Ծներ ա։ Գնաց, տեհաւ, ասեց.—Ջօրանմա։

Հանեց ջեպիցը մի մաճեթ փող բաշխեց, ասեց,—Աղա, ես պտի էթամ, քեզանից շնորհակալ էմ։

—Որդի՛, ասեց, մի՛ էթայ, կա՛ց. զատկից յետը գնա։

—Շնորհակալ էմ, ասեց. ինձ ճանապար քցայ։

Հանեց հինգ մաճեթ փող տուեց, հացցրեց. մի խուրճին էլ հաց տուեց, քցեց թեւը, ասեց.—Բարի ճանապար ըլլի, գնա՛։ Էդ մարդը վեր կացաւ. Ալակեազու սարը դէմ արեց աղաքը, գնաց։ Հասաւ սարին, մտաւ ձորի մէջը, ընկաւ զաղէքը ման գալու. գնաց էն զաղէն-էն զաղէն։ գնաց մէկ զաղէմ էլ, տեհաւ, հրե՜ս, էն զաղի մէջ պառկած ա, մօտացաւ, արևն էլ մտաւ։

Գնաց, տեհաւ քրքի վրայ մի թիզ փող ա դրե. փողը թափ տուեց. դօլվաթ զարթնեց, թամաշա արեց էրեսին, ասեց.—Դէ՛, կորի՛, լիրբ. աճճախ ձեր էրեսից փախեր էմ, ըրծե, էլ էկար, գթա՞ր։

Ասեց.—Պապի՛, վիրև Աստուած, ներքև դու, պտի գաս, էրթանք։ Անկարելի ա, քե պտի տանեմ։

Ասեց.—Շատ մի խօսա՛, մութն ա. պառկի, քնի, առաւօտը

վեր կաց, գնա՛ Պարկից, քնեց. լիսը բացուեց. էլ ընկաւ աղաչանք.
—Քեզ պտի տանեմ, ասեց։

Ասեց.—Էլ չեմ գար, ձեր ղալմաղալից, ձեր ուշունցիցը անճախ-անճախ պրծել եմ. հըմի մոնց որ էկերէս, դըվո՛րն էկերէս, էլ՛ գենը գնա՛։

Ասեց.—Իլաճ չկայ, քե պտի տանեմ, սոված կոտորուանք մենք. մեղայ կգանք. էլ չենք անի։

Ասեց.—Որ շատ աղաչըմ էս, առ էս էրկու պոպոկն ու գնա, էս կըգամ։ Հենց առաւ ու էկաւ. էկաւ մի գեղի դrաղը դուս էկաւ։ Տեհաւ էրկու տղա իրար հետ կռւում էն. գնաց, մօտացաւ. ասեց.
—Այ որդի՛, խի՛ էք կռւում։

Ասեց։—Էս քարը ջրի միջից ենք գթե, կռւում ենք. ես ասումէմ իմն ա, էն ասըմ ա, իմն ա։

Ասեց.—Բերէք, տենամ էդ քարը։ Քարը տուին ըդըրան։

Ասեց.—Եավաշ, մի պոպոկ քե տամ, մի պոպոկ ըդըրան. հըմի լաւ էլա՛ւ։ Էրեխէք ուրախացան։

Էդ քարը դրեց ջեպը, էկաւ տունը. տեհաւ տանը մթանը նըստել էն, ճրագլիս էլ չկայ տանը. էդ քարը հանեց ճեպից, դրեց պատուհանը, ճրագի պէս լիս տուեց տան մէջ։ Ասեց.—Էս ինչ լաւ ա, մեզ ճրագ ա ճազիր։

Հաց-մաց առաւ, նստան, ուտումին։

Աղբրտանցը, տղէքին սկսեց խըրատ տալը. Ասեց.—Մի ժամանակ մոնէրդ կգա՛ որ մեր դօլվաթը յըմենից շատ էր, մենք որ սկսեցինք ղալմաղալ անիլը. իրար ճուճաքութուն որ արեցինք, իրար չլսեցինք, ընկանք էս օրը. հըմի ձեզանից խնդրումեմ. մեր բերնից ուշունց, ղալմաղալ, բան դուս չգայ. Աստուած էլ էն դօլվաթը մեզ կտայ։

Ասեցին.—Մոնց որ ասես, կը հնազանդենք քեզ։

Էդ քաղաքի դrաղը էկաւ մի բẽզrկեաճ վեր էկաւ. էդ բẽզըrկեաճ գշերը տեհաւ ամենի ճրագը անցաւ, էդ մէկի ճրագը չանցաւ։ Լիսը բացուեց, ասեց.—Ես պտի էթամ էս տունը, տենամ ինչ թավուr տուն ա։

Գնաց, տեհաւ չորս՞պատն ա, զաց չկայ. մի քար պատուհանում վառւում ա, ասեց.—Աղբէր. էս քարը չէք ծախի։ Ասեց.—Չէ, ծախենք, ինչ անենք. մենք ճրագլիս չունենք։

Ասեց.—Էն sաr փող կտամ, ճրագլիս էլ կառնէք, ամեն բան էլ կառնէք.—Ասեց.—Ինչ պտի տաս, որ ծախեմ։

Ասեց.—Հազար մաճ!.p կտամ, որ ծախես։

Էդ մարդ իմացաւ բẽզrկեաճ ըդըրա վրայ ծիծաղում ա, ասեց.
—Իմ վրայ ծիծաղում էս։

Բեզրկեան իմացաւ որ քիչ ա տալիս, ընդրան ասում ա «իմ վրայ ծիծաղում էս,» ասեց.—Էրկու հազար մանէթ կտամ։

—Իմ վրայ մի՛ ծիծաղի, ասեց.

Ասեց.—Չի՛ եմ ծիծաղում. երեք հազար մանէթ կտամ։ Վերջը շատ խօսալ չըմ գիտայ, հինգ հազար մանէթ կտամ. տուր, ես էթումեմ։ Ասեց.—Տո՛ւր։

Հանեց հինգ հազար մանէթ տուեց, ասեց.—Ա՛յ մարդ, դու ինձ շատ դիր էկար. լաւ մարդ էս էրեւում, մի բան ասեմ, ինձ կը լսե՞ս։

Ասեց.—Ասա՛, տենանք։

Ասեց.—Ես, դու աղբերանանք, պայման տանք, պայման առնենք. ես մեռայ թեզ, իմ մալը քեզ, դո՛ւ մեռար, քու մալը ինձ։

Բեզրկեան առաւ քարն ու գնաց։

Էդ մարդ վեր կացաւ, հինգ հազար մանէթ ապրանք առաւ. իրա սէլը, դաւարը, գութանը, լցեց տանը։

Բեզրկեանն էլ վեր կացաւ, գնաց պըտըըտեց էրկու տարի, քարը ծախեց վացցուն հազար մանէթի. էկաւ էդ քաղաքի ղռաղը վեր էկաւ, ասեց—Էթամ, էն մարդուն ասեմ «քու քարը վացցուն հազար մանէթի ծախեցի». որ էն մարդի սիրտը պատռի, մեռնի. էն փարէն էլ մնայ ինձ։

Էկաւ, մտաւ տուն.—Հը՛, աղբէր, մոնց ես. ասեց։

Ասեց.—Փառք Աստըծու, ամեն բանս ցզուեր ա։

—Պա քու էն տուած քարը չասեցիր, ընչի՞ ես ծախեր։

Ասեց.—Ընչի էս ծախե։

Ասեց.—Վացցուն հազար մանէթի։

Ասեց.—Ը՛, քու տունը չքանդուի. ես էն էրկու Պօպօկի էի առե։

Բազրկեան էրկու ձեռքով իրան գլխուն տուեց, «վացցուն հազար մանէթի բա՞նն էլ էրկու պօպօկի առնեն,» ասեց, ու սիրտը ճաքուեց, մեռաւ։

Էս մարդը մոնց որ պայման էն դրե, վեր կացաւ, գնաց ընդրա ապրանքն էլ քաղաքի ղրաղեցը բերեց, լցրեց իրա տունը։

Առաջուայ դօլվաթիցը ցահա շատ էլաւ։

45

ԴԵՐՁԻԿԻ ԱՂՋԻԿ

(Վաղարշապատի բարբառով *)

Ժամանակով ըլում ա մի հատ դերձիկ, դրան աչքի սև ու սըւտակ մի հատ ախչիկ ա ունենում։ Էդ դերձիկը իրա ախչիկը տանըմ ա մի հատ օղուլ ուստախի մոտ ձեռագործ սովորի։

Շատ ժամանակ էդ ախչիկ գնում ա կար անելու։

Էդ ուստի տան դէմ ու դէմին Թաքաւորի պալատ ա ըլում. էդ Թաքաւորին մի հատ տղայ ունենում. էդ տղէն օրը չորս իրեկուն բալկոնումը բոլթայ տալի, որ էդ ախչկայ էրեսը տենայ, կամ խօսայ։

Ախչիկը իրա գլուխը կախ ա, կարում ա. մոտիկ չի անում Թաքաւորի տղին,

Թաքաւորի տղէն ճարահատեալ ուզում ա խօսացնի, ասըմ ա վերևիցը.—Դերձկի ախչիկ, ջան ախչիկ, Թակալի կուծը քանի՞ ա։ Ախչիկը չի խօսում։

Թաքաւորի տղէն իրեք անգամ էդ խօսքը ասըմ ա։

Ախչիկը իրա գլուխը քաշ արած՝ ասըմ ա.—Թաքաւորի տղա, ջան տղա, էրկնքի աստղերն քանի՞ ա։

Ախչիկը գլուխը քաշ արած. վերև չի թամաշ անում, ասըմ ա էդ խօսքը իրեք անգամ։

Միւս օրը Թաքաւորի տղէն չատ ա մտածըմ. որ ախչկան խաղէ անի, սրտի ճայիթը հանի։ Կանչըմ ա ախչկայ ուստին, ասըմ.—Մայրիկ ջան, ինչ ուզում էս կտամ. ինձ պտի տանես քու աշակերտի մոտ, ես պտի պաչեմ նրան։

Պառաւ ասըմ ա.—Շատ լաւ. Թաքաւորի տղա, գըլխիդ արևիդ ղուրբան։ Միւս օրը պատրաստում ա մի հատ մեծ դուքիկ իրա

* Պատմած է Եփրեմ Վ.առակեան:

տանը. Թաքաւորի տղին Թաքուն կանչում ա, ասըմ.—Բալա ջան, գլխիդ, արևիդ ղուրբան, արի, մոտի սնտուկը:

Թաքաւորի տղէն մոնում ա .վրէն չորխրով ծածկըմ ա։

Պառաւը ախչկան բանյա անըմ ա.—Բալա ջան, տուն էթալուս ձեռացագործը կը դնես մեծ ղուբին։

Ախչիկը, «լաւ», ասըմ ա, ձեռացագործը դնում ա ղուբին։

Դնելու ժամանակ Թաքաւորի տղէն հանըմ՝ ախչկան սպաչըմ ա։

Ախչիկը սուս ու փուս, մէկի էլ բան չի ասըմ, գնըմ տուն։

Մէկ-էրկու օր չի գնում ուստի տունը. ղաստինայ հիւանդ ա պառկըմ, ասըմ ա.—Ա՛, մոնց անեմ, իմ ինասը հանեմ։

Հէրն ու մէրը տեսնըմ էն չատ մտածըմ ա, ասըմ էն.—Բալա ջան, ինչ ես մտածըմ. ինչ ա սիրտդ ուզում. առնեմ, կարեմ։

Ախչիկ ասըմ ա.—Հայրիկ ջան, ինձ համար մի հատ բռատոնց կը կարես. էնպէս կը կարես որ, մենակ աչկերս էրեւայ միջին, թեւերը թեպրներով կը շինես հրեշտակի ձեւով. էդ բռատոնցի բոլորը պոժոժ կը շարես, որ մի ասեղի տեղ բաց չըմի։

Հէրը կպատրաստի, կը բերի, կասի.—Այ որդի՛, մի հագի, ես զալըմը ման արի, աչքս տեսնայ։

Ախչիկը կը հագնի, իրան մի կը թափահարի. կը տեսնայ լաւ հրեշտակի ձեւի ա էլե. իրան ձեռնտու ա, կասի.—Էթում եմ ուստի տունը. ես գիրը չեմ ղայ։

Ախչիկը կեթայ, իրա ուստին կասի.—Հէրս, մէրս տեղ էն գնացիր, գիրս ես տեղ պտի մնամ։

Կասի.—Որդի՛, լաւ, մնում ես, մնայ. ինչ անեմ։

Կգայ իրիկուն, հացից վերջանալէն յետոյ ախչիկը Թաքուն կը նիլնի Թաքաւորի տղի ծառի մօտը, կասի.—Այ տղա՛, ես գիրը Թաքաւորի տղէն ինձ ուզեր ա. ես Թաքուն պտի էթամ մօտը, դուռը բաց. դու գնա՛, քնի. եթէ ուրիշի ասես, առաւօտուն Թաքաւորի տղէն քեզ ճեալլա կանի։

Բոլորը քնելուց յետոյ ախչիկը իրա բազա ասպապը վեր կալաւ, տարաւ. Թաքաւորի տղի ճատըմը հագաւ, մտաւ Թաքաւորի տղի սենեակը. կաղնեց, իրան մի թափահարեց, զընզընկոցը ընկաւ պալատը։

Թաքաւորի տղէն աչկերը բաց արեց, տեհաւ մի այլակերպ բան ա կաղնած, ասեց.—Հը՛, ով ես. ինչ ես ուզում։

Ասեց.—Ես Գաբրէլ հրեշտակն եմ. էկեր եմ քու հոգին առնեմ։

Ասեց.—Ես մին ու ճար եմ. խազնայ դաֆինայ տամ, իմ ֆոդին մէ առնի։

Ասեց.—Թէ որ ըդենց ա, ես քեզ, տաս օր ժամանակ կտամ. քու օրախից մի նշանաբան պտի տանեմ։

Թաքաւորի տղի ձեռները, ոտները դողում էր վախից, ասեց. —Դու գիտաս, ինչ աչքդ կը բռնի, վե կալ, տար։

Վե կալաւ ոսկե իբրուխ, լականը, ասեց.—Պատրաստ կաց. տասն օրից յետոյ պտի գամ, քու հոգիդ էլ տանեմ։

Տուն էկաւ, էդ իպրուխ, լականը իրա չորերի հետ տալաւ, դրեց դուքու մէջ։

Լիսը բացուեց. ախչիկը նստեց, իրա գործը արեց։

Թաքաւորի տղէն շատ ճմրտըկաց, չկարաց վեր կենայ հրեշտակի զարպիցը։ Անճարացած վեր կացաւ, գնաց բալկոնը, եավաշ-եավաշ, ասեց.—Մի բան որ ես պտի մեռնեմ. եավաշ, էս ախչկան խօսացնեմ, խայտառակ անեմ։

Ասեց.—Դերձիկի ախչի՛կ, չան ախչիկ, դուքու պաչը քանի՞ ա։

Էդ խօսքը իրեք անգամ ասեց։

Ախչիկը իրան գլուխը բանձրացրեց, ասեց.

—Թաքաւորի տղա, չան տղա. Գարբէլ-Մուքէլը քանի՞ ա։

Թաքաւորի տղա, չան տղա, իբրուխ լականը քանի՞ ա։

Թաքաւորի տղա, չան տղա, տասն օրուայ մեռնիլը քանի՞ ա։

Թաքաւորի տղէն շատ մտածեց.—Կայ-չկայ, ասեց. էս ախչիկ աստղաբաշ ա, առաջ աստղերուց հարցուց, հըմի էլ իմացաւ իմ մեռնիլը։ Գնաց, նորից պառկեց, արեց.—Ախ-վախ, ախ-վախ, ես պտի մեռնեմ։

Թաքաւորի տղէն բիրսան պառկած տեղիցը մտածեց, ասեց. —Կայ-չկայ իմ մեռնիլը էս ախչիկը կիմանայ, որ ճամ էրկնքի աստղերով խօսաց իմ հետ, ճամ Գարբէլ Միքէլով. ես պտի էդ ախչկան առնեմ. ճար արեց, էդ ախչիկը կանի։

Թաքաւորի տղէն իրան ծառէն ղրկեց իրա հօր մօտը, ասեց. —Ես մեռնում էմ, տէրտէր բերէք ինձ։

Հէրն ու մէրը էկան.—Այ որդի՛, մեր թաքաւորութունի միջին ինչ ա պակաս, «ախ-վախ» էս քաշում. մարդ ղրկեմ, քաղաքէ քաղաք, քեզ համար բժիշկ բերեմ։

Ասեց.—Կայ-չկայ, դերձիկի ախչկան պտի ուզէք։

Թաքաւորը ասըմ ա.—Շա՛տ լաւ, զօրքով ըռնի կը բերեմ, խաբրով ըռնի կը բերեմ, դու թաքիլա լաւացի։

Նազիր-վազիրը կանչում, ղրկում ա դերձիկի տունը ախչկան ուզելու։ Ախչիկը տուն ա գալի, հէրն հարցնում ա.—Այ որդի՛, Թաքաւորի տղէն կառնե՞ս, էկեր էն քեզ ուզելու։

Ասըմ ա.—Որ դու տաք, ես էլ կուզեմ։

Բերըմ էն էդ ախչկան, պսակըմ էն Թաքաւորի տղի վրէն։

Էդ ախչիկը իրա ըռածոնդը վեր ա առնում, ջհեզ ա տանըմ իրա համար։

Մի քանի օր մնում ա, էդ տղէն շատ «ախ-վախ» անըմ, ախչկայ ծոցը չի մտնում. ախչիկն ասըմ ա.—Այ տղա՛, որ ինձ հաւան չէիր, իմ միղքի տակ խի՞ մտար։

Թաքաւորի տղէն ասըմ ա.—Այ դերձըկի ախչի՛կ. ես պտի մեռնեմ, ինչ մտնեմ որ մնաց վեց օր իմ ժամանակը։

Ասեց.—Որ վեց օր մնաց, ես էթումեմ։

Հարսի շորերը հագնըմ ա, մնաս բարև անըմ. գնըմ ա ճաշը, բռածոնդը հագնըմ ա։

Տղէն հիւանդ պարկած ա ըլլում, ասըմ ա.—Կնիկս փախաւ, գնաց. ես հըմի պտի մեռնեմ։

Էդ մտքի միջին ախչիկը գալիս ա տուն.| էդ բռածոնդը վիրա ժղահարում ա-թափ ա տալի։

Տղէն մտիկ ա տալըմ.—Օհօ, էն Գաբրէլ հրեշտակը էկեր ա ցերեկով։

Ասըմ ա,—Թաքաւորի տղա՛, հըմի որ պսակուեր էս, էս հետ ցօգիդ պտի առնեմ։

Թաքաւորի տղի լեզուն կապւում ա. ձեռը, ոտը թուլանում ա։

Կնիկը տեսնում ա. չէ, անճարացաւ, պտի հիւանդութիւնը հաստատի. բզում ա թաքաւորի տղին, ասըմ.—Ախմախ, վե՛, վեր, ես հրեշտակ չիմ, ես քու կնիկն էմ։

Ասըմ ա.—Թէ որ իմ կնիկն էս. գնա՛, Իպրուխ, լականը բեր, տեսնա՛նք։

Բաց ա անըմ կամոտի աչքը, իբրուխ լականը դնում ա թաքաւորի տղի աղաքը։

Ասըմ ա.—Թէ որ ըդենց ա, շորերդ հանա՛, տեսնամ, իմ կընիկն էս։

Կնիկը շորերը հանեց։

Թաքաւորի տղէն ասեց.—Այ կնի՛կ, որ ըդենց ա, դու հրաբունի էս, արի՛, ինձ դուզն ասա, հրեշտակների հետ յընկերութիւն ունե՞ս։

Կնիկն էլ ասըմ ա.—Դու շատ կապըլիս, էլ չես մեռնի. արխային կաց։

Ասըմ ա.—Այ կնիկ, պա «էրկնքի աստղերն ինչ տար ա» որ հարցընըմ իր։

Ասըմ ա.—Պա կարի կութը քանի ա, կարի կութը չհամրուի, էրկնքի աստղերն էլ չհամրուի։

Թազասան վեր էն կենըմ, օխտը օր, օխտը գշեր բէֆ ուրախութիւն։

Իրանք հասան իրանց մուրազին, դուք էլ ձերը։

46

ՅՈՒԼԻԴԱՅ ԽԱՆՈՒՄ

(Վաղարշապատի բարբառով *)

Ժամանակով մի թագաւոր ա ըլնում. էդ թագաւորին մի տղայ, մի աղջիկ ա ունենում. վազիրի աղջկայ աչքը էդ թագաւորի տղի վրայ ա ըլնում։ Թագաւորի տղէն էս աղջկան չի ուզում։

Թագաւոր կանչում ա վազիրին.—Իմ տղի հետ գնա, երկիրներ ման արի, իմ տղէն որ աղջիկ կը հաւանի, էն ուզի իմ տղին։

Վազիր կընկնի մտածութեան մէջ. կասի.—Նավաս, էնպէս աղջիկ ուզեմ, թագաւորը ըդրա լեզուն չհասկանայ. իմ աղջիկ չուզի, էթայ ուրիշ երկրներուց բերի։

Վազիր տղի հետ ընկնում ա ճանփայ, գալիս էն։

Շատ քիչ Աստուած գիտայ, մի դեղի հասնում էն. ման էն գալի, տեսնում էն մի աղջիկ դունից դուս էլաւ։

Վազիրը տղին ասըմ ա.—Թագաւորի տղա, ես ըրան չատ հաւանեցի։—Որ դու հաւանեցիր, ես կառնեմ, ասըմ ա։

Մտնում էն ուղղակի էդ տունը, բարև էն տալիս, նստում էն, ու ասըմ.—Մենք էկել էնք ձեր աղջիկը ուզինք թագաւորի տղին։ Ուզում էք, մէ աղջիկ ա. թագաւորին դուրբան ա։

Վազիրն պեղկեանն ու Եօանը դնում էն. վեր էն կենըմ, գալի թագաւորի մօտը,

Թագաւորը սինօղապետներով ուղարկում ա, գնում էն հարս բերելու։ Բերում էն, մի առ ժամանակ մնում ա։

Էդ հարսն էնպէս ա վարւում, թագաւորին գլուխ չտալի։

---

* Պատմած է Սարգիս Ղազարեան: Սա լսած է իւր զոքանչ Համասփիւռ Ամիրեանէ:

Այ հայ, ասըմ Թագաւոր, իմ ծեր ժամանակիս, ես էի. մի աղայ, պտակեցի, որ ուրախանա՛յինք, հալալ կաթնակեր չընկաւ մեր ձեռքը։

Գալիս ա, ժամանակով էդ Թագաւորը հիւանդանում ա, կնկան ասըմ ա.—Այ կնիկ, քի վասիյաթ ունեմ անելու. ամանաթ-ամանաթ իմ Ցուլիդայ խանում ու տղէն քեզ։

Թագաւոր հարսի կսկըծուն մեռնում ա։

Որ Թագաւոր մեռնում ա, Թագուհու օրը սև ա ըլլում հարսի ձեռուիցը, սա էլ ա հիւանդանում։

Որ հիւանդանում ա, կանչում ա իր տղին.—Այ որդի՛, ամանաթ'ամանաթ քեզ իմ Ցուլիդայ խանումը վասիյաթ անըմեմ քեզ. առաւօտուն մտնես Ցուլիդայ խանումի օթախը «բարի լիս» ասես, իրիկուն՝ «բարի իրիկուն» ասես, ամանաթ-ամանաթ։

Թագուհին էլ ա մեռնում։ Էդ աղջիկ դուս չի գալիս սենեակից։

Տղէն ա, առաւօտուն մտնելուն.—«Բարի լիս քեզ, Ցուլիդայ խանում քուրիկ». իրիկուն մտնելուն «Բարի իրիկուն, Ցուլիդայ քուրիկ» ասըմ։

Ցուլիդայ խանըմն էլ ասըմ ա.—«Բարև էկար, աղբէր ջան.» ասըմ ու վաթըթում յիրար։

Հարսը էն խանից ա՛նըմ, նօթիրը կիտում ա։—Ես կենն ըլլեմ, ընձի էնպէս չսիրի, իրա քուրը սիրի. ճավաս, ես դրանց գլուխը մէկ օյիյա խաղամ։

Թագաւորի տղէն գալիս ա, հացը ուտում, էլի էթում ա դիւանը։

Կնիկը վէր ա, կենում՝ տան մէջ ինչքան չոր կայ, հաւաքըմ ա, կրակը տալիս ա-էրում. գնում, տխուր նստում ա։

Իրիկունը մա՛րդը գալի, մտնում ա քուր սենեակը։—«Բարի իրիկուն Ցուլիդայ քուրիկ ջան»։—«Աստըծու բարին, աղբէր ջան»։

—Էդ ինչ մուխ ա, Ցուլիդայ խանում, մեր տունը։

—Չեմ գիտում, աղբէր ջան, ես տանից դուս չեմ ըլլում։

Աղբէրն ա, մտըմ ա իրա սենեակը, տեսնում ա կնիկը նիյաթնիրը քաշէ, նստէ։

—Այ կնի՛կ, ընչի էս ըդհենց տխրէ։

Ասըմ ա.—Բաս իրիկուն գաս քուրդ «բարի իրիկուն» ասես, առաւօտ «բարի լիս» ասես. էդ էր քու սիրած քիրդ, չորերը վառեց։

—Ջանըմ թէ վառեց, չորեր ղուրբան ըլլի իմ քուրը, կնի՛կ, դու խի՛ էս տրտում, էն ասա։

Կնիկ մտքի մէջ ասեց.—Է՛ս էլ չէլաւ, մի ուրիշ բան անեմ։

Տեղերը քըցեցին, քնեցին. գիշերը վեր կացաւ կնիկը, իրա էրեխին մորթեց. թաքուն դանակը տարաւ, դրեց Ցուլիդայ խանըմի ջեպը։ Տղէն էր, լիսը բացուեց, վեր կացաւ, լուացուեց, գնաց Ցու-

Ցլիդայ խանըմի մոտ. բարև տուեց, բարև առեց. փաթըլթուան իրար շինքով։

Կնիկն որ էս տեհաւ, սիրտը ճաքեց, սկսեց լաց, իրա գլխին, իրա ոտներին տալ։

Ծառէք լսեցին. էկան, թափեցին ներսև։

Թագուհին հարա՛յ քցեց.—Այ հայ, թագաւորի տղէն կանչէք գայ։

Տղէն էկաւ, տեհաւ կնիկ լաց-շիւար.—Դու էլ չըլնես, քու քիրն էլ չըլի։

—Ի՞նչ ա պատահե, կնիկ։—Էլ ինչ պտի պատահի. էրեկ չորել կրակեց, ձէն չտուեցիր, էս օր էլ էրեխէս ա մորթե։

—Ոխ՛ իմ քուր սիրտը քա՞ր ա. գայ, իմ էրեխին մորթե։

—Ըդենց էս անըմ որ չես հաւատում. արնոտ դանակը ում ջեպից դուս էկաւ. նա է իմ էրեխին մորթե։

Վեր կացաւ, կնկայ հետ գնաց, մտաւ քուր օթախը։

—«Բարև քեզ, Ցուլիդայ խանում»։—«Աստըծու բարին, աղբէր ջան։»

—Իմ էրեխին խի էս մորթե դու, Ցուլիդայ։

—Աղբէր ջան, ինչ էրեխայ։

—Բա էս ինչ ա ասըմ, «էրեխէն մորթեր ա»։

—Աղբէր ջան. Աստուած ունեմ, խապար չունեմ, սուտ ա։

—Հա՛, սուտ ա, ըն՛ ջեբերդ տեհնիմ։

Ջեպերից արնոտ դանակը հանում էն։

Դանակը վեր ա ունում աղբէրը, գնում, նստում դիւանը. սինօ-դապետներին կանչում ա։ Կանչում էն աղջկան էլ. թէ.—Իմ ք՛րը իմ էրեխին մորթեր ա, պէտք ա ճեալլա անել։

Քիրը տեհնըմ ա իլաճ չի ըլում.—Աղբէր ջան, մի բողնոց նուշ բեր ըստե, դիր սեղանի վրէն։

Մի բողնոց նուշ բերում, դնում էն սեղանի վրէն, ասըմ ա.—Աղբէր ջան, նուշը սեղանին կանանչի, Աստուած ունեմ, խապար չունեմ։

Իրեք անգամ ասըմ ա.—Աղբէր ջան, նուշը սեղանին կանաչի․․․

Որ իրեք անգամ ասըմ ա, նուշը սեղանին կանանչում ա։

Կնիկը ասըմ ա.—Չէ, սեհրպազ ա, իմ էրեխի արինը կուզեմ, ես։

Թագաւոր բերեց, քուր էրկու ձեռքը արմընկներից կտրեց, տուեցին համպալի չալակ, ասեցին.—Տա՛ր Ֆլան մեշէն քցայ, էթայ, ջին, ջանաւար ուտի։

Տղէն էր, իրա քուր էդ էրկու կտները փաթըլթեց բանըակի մէջ. տարաւ, իրա դուքին պա՛հեց։

Էդ համպալն էր, տարաւ, աղջկան մէօի մէջ թողեց։

Էդ աղջիկն էր, լաց ըլնելով, մղկըտալով ընկաւ էդ մէօի մէջը. գնալով գնաց։

Շատ քիչ Աստուած գիտայ դուս էկաւ մի ուրիշ տէրութեան մէջ. գնաց, մի ջաղացպանի փուռոի պատահեց.

Ասեց.—Մերկ ուռեան եմ, մօնց մարդոց մօտ էթամ։

Մտաւ ջաղացի ջրտունը։

Գշերուայ մի վախտը փորսող-փորսող դուս էկաւ, էդ տեղ մի բօստան կար, մտաւ էդ բօստանը, սկսեց կրծել ձմերուկ թէ եմիշ. սոված էր։

Առաւօտ բօստանչին վեր ա կենըմ, մտնում, տենըմ ա եմիշները կրծած.—Այ հայ, ասըմ ա, էս ինչ ա պատահի իմ բօստանի մէջ, կրծում ա։

Մի գշեր, էրկու գշեր բուսուն ա պահում, չի կարում բռնի. գնում ա, թագաւորի տղին ասըմ.—Թագաւորի տղա՛, քու բօստանի մէջ ջանավար ա փէյդա էկե, էս էրկու, իրեք գշեր ա, դարավուղ եմ կայնում, չեմ կարում բռնի։

Թագաւորի տղէն էրկու դարավուղով գալիս ա. գշերուայ մի վախտը տենըմ ա խշխշոց ընկաւ բօստանի մէջ. բուանքը գէմ արաւ դրան. էդ աղջիկը ձէն ա տալի թէ.—Իսան եմ, վիրև Աստուած, ներքև դու, ինձ մի՛ տուէք՝ աղջիկ եմ. մերկ ուռեան, մի ձեռք շոր մի կնկայ հետ ուղարկէք, գայ։

Մի ձեռք շոր ուղարկում էն էդ աղջկայ մօտ։

Գալիս, տեսնում ա մի աղջիկ, ի՜նչ աղջիկ. չուտես, չխմես, ըդրա մահ ջամալին քամաշա անես. էրկու թեը չկայ։

Շորերը հագցընում ա. թագաւորի տղէն գալիս ա մօտը։

Աղջկան տեսնալուն պէս խելքը գլխիցը էթում ա. ասըմ ա.
—Իսն էս, ջինս էս։

Ասըմ ա.—Իսան եմ, այս ինչ քաղաքի միջիցն եմ։

—Թևերդ ինչ ա իլե, ո՞վ ա կտրե։

—Խորթ մէրս կտրեց. տուեց, դուս արեց։

Թագաւորի տղէն ա, տենըմ ա սֆաթը, ասըմ ա.—Աղջի՛, Աստուած քե դսմաք ա ղրկէ, քու հունարը, շնորհքը ինչ ա, որ ես քեզ առնեմ։—Թագաւորի տղա՛, թևեր չունեմ որ իմ շնորքը ցոյց տամ, ես Աստըծու հրամանքով տարին լրանալուն, ոսկե քաքուլ, ոսկե ճկուտ աղջիկ ու տղայ կը բերեմ։

Վեր ունում դո՛ւզ բերում ա պալատը։—Մայրի՛կ, ասըմ ա. էս աղջիկը ես պտի առնեմ. իմ ճակատիս գրած ա։

—Այ որդի՛, մեզ կը նախատեն. առանցի ձեռներ ա, կասեն. «Թագաւորի տղէն գնաց, սախաք աղջիկ առաւ։

—Այ մէր, խօսալն աւելորդ ա, ինչ ուզում էն, թող ասեն. ղսմաթն էկել ա, պտի առնեմ։

Օխտը գշեր, օխտը ցերեկ հարսանիք արին, պրծան։

Մի ժուկ ժամանակ մնաց, ուրիշ թագաւոր էկաւ դրա վրա կռիւ. տղէն էլ իրան պատրաստութիւն տեհաւ, որ պտի գնայ կռիւ։ Գնաց մօր մօտ.—Մայրիկ ջան, ես էթումեմ կռիւ. ամանաթ-ամանաթ քե իմ Ցուլիդայ խանում. մինչև իմ ետ գալը. ազատուելուց էլ ինձ մի նամակ գրես. աչքալիսէք կը ղրկես։

Թագաւորի տղէն գնաց կռիւ։

Մէրը Ցուլիդայ խանումի էնքան էր սիրում, էս աչքիցը էն աչքը չէր փոխում։

Էկաւ, ժամանակը լրացաւ, ազատուեց, էրկու տղայ բերեց, ոսկեքաքուլ, ոսկե ճկուտ։

Ըտե թագուհին ուրախացաւ, նամակ գրեց.—Աչքդ լիս, թագաւորի աղջիկ ազատուեց, էրկու տղայ բերեց, ոսկի ճկուտ, ոսկի քաքուլ. քեզ էլ մեռնեմ քու էրեխեքին էլ։

Նամակը առնում, գալիս ա. գալիս ա Ցուլիդայ խանումի հօր պատի տակով անց ա կենում. հարսը տեհնում, կանչում ա.—Ի՞նչ մարդ էս։—Ցլան թագաւորի մարդն էմ, խանումս ազատուեր ա. գնումեմ աղէս աչքալիսէք տամ։

—Խանումդ ով ա։—Իմ խանըմը ձեռներ չունի,

Ըստե հարսը մատը կծում ա.—Կընի-չըլի Ցուլիդան կըլնի։

Կանչըմ ա ներքև, ըդրան լաւ պատիւ ա տալի, գինովացնըմ ա։ Վեր ա կենըմ, փափախի ծալից նամակը հանում ա, բաց ա անըմ, կարդում ա որ Ցուլիդան ա.—Միսդ ուտեմ, ոսկորդ թողեմ, դու բալա սաղ էս։

Նամակը բռնում, փոխում ա, գրում.—«Ոչ դու ըլլէիր, ոչ քու բերած աղջիկը, թեւերը, կռները փոտեր ա. փոտը ընկե պալատի մէջը. ազատուեր, բերեր ա էրկու շան թուլայ, դեւինը մոնէք դրանից լաւ ա։ Փակեթը դնում ա տեղը։

Մարդը առաւօտը վեր ա կենըմ, նստըմ ձին, էթըմ։

Շատ ու քիչ Աստուած գիտայ, հասնըմ ա թագաւորին. տանըմ ա, նամակը տալիս թագաւորին։ Թագաւորը բաց ա անըմ, կարդըմ, ասըմ ա.—Մայրիկ ջան, ամանաթ-ամանաթ իմ Ցուլիդայ խանըմ քեզ. շան թուլայ ա բերե. ինչ ա բերե, ինձ ղաբուլ ա, թող մնայ, ես գամ, տեհնամ։

Նամակը տալիս ա, մարդը առնըմ, բերըմ ա. գալիս ա էլ էն տանը ղօնախ ա ըլլում, քնում ա։

Հարսը վեր ա կենըմ, նամակ առնըմ, կարդում ա. նամակ փոխում, գրում ա.—«Ոսկեքաքուլ ա, ոսկե ճկուտ ա. իրիկուն նա-

մակը կը հասնի, իրիկուն վերջացրէք. առաւօտուն կը հասնի առաւօտուն վերջացրէք, ես Թիֆլիսից բաւաց էմ բերում։

Նամակը դնում ա տեղը, մարդ առնըմ ա ու գալի, բերում տալիս Թագաւորի մօր։ Թագաւորի մէր կարդում, տեսնում ա. «Ոսկենանուլ, ոսկե ճկուտ ինչ կըալի. կըալի. Նամակս իրիկուն հասնի, իրիկուն կորցրէք. առաւօտ հասնի, առաւօտ»։

Ըդ տե մէրը գիտին, չոքերին տալիս ա, ասըմ.—Մոնց անեմ, ես իմ Նաղշուն ձագերը մընց կորցնեմ։

Ցուլիդայ խանում իմանում ա, կանչում ա մօրը.—Մայրիկ ջան, չըլի իմ մարդին բան ա էլե, լաց էս ըլըմ։

Բան չի խօսում, հանըմ ա, Նամակը տալիս ա Ցուլիդայ խանումին։ Բաց ա անըմ, կարդում. տեսնում ա գրած «. . .»։

—Մի լաց ըլիլ, մայրիկ ջան, ինչ որ իմ ճակատին գրուեր ա, պտի անէք,

—Բալա ջան. ասըմ ա. իմ ձեռնիրը մոնց կեթայ որ ես ձեզ կորցնեմ։

Էր բերի, երեխանց մէկը մի խուրջինի, մէկը մի խուրջինի բալը կը դնի, կապի.—Գնա, ես չեմ կարայ ձեզ կորցնի։

Էդ աղջիկը վե կացաւ, լաց ըլելով, մղկըտալով գնաց. ընկաւ չոլ, եապան. գնաց։ Շատ, քիչ Աստուած գիտայ. գնաց, մի հատ աւուի պատահաւ, թեեր չունէր որ քշուեր. մոնէր, անց կենար. տուեց էնպէս չոլերով ջրի մէջ։

Ջուրը վարար էր. յանկարծ խուրջինը ընկաւ ջուրը։

Երեխէքը, ինչ հնար արեց, չը կարեցաւ բռնէր. դուս էկաւ առուից, լաց էլաւ։—Աստուած, ասեց. դու ամեն անճարներին հասնես, նրանց ռացաղից էլ ինձ, էս ինչ ա իմ չարչարանքը։

Ասըծոյ հրամանքով երկու հատ ծիտ էկան.—Ցուլիդայ խանում մի լալ, քու երեխէքը բանց են էլե ընտե, գնա, վե կալ։

Ծտերը ընկան աղաքը գնացին, տեհան որ երեխէքը բանց էն էլե ինչ-մի ցըցի։ Մտաւ, բերանով էդ խուրջինը քաշեց, հանեց դուս։ Ծտերն ասին.—Էն մէջի մէջ մի ձեռք տնիր կայ. մարդ չկայ միջին, գնացէք ընտե, ձեզ համար աղօթէք։

Երեխէքն առաւ, չորերն պատառոտած, ճղճղած, թրջուած, Աստուած կանչելով գնաց. գնաց, տեհաւ մի ձեռք տներ. մտան, մի առ ժամանակ ընտե մնացին։

Երեխէքը թրփոչացան, լեզուները բացուեց։

Էդ կնիկն էր. իրիկուն առաւօտ չոք կատր գետին, Աստուած կը կանչէր.—Աստուած, էս ինչ ա իմ Նեղութիւնը, գոնէ իմ ձեռները լաւ ըլէր, իմ երեխանց, իմ չորերը կը կարկըտէի։

Մէկ օր, էրկու օր, Աստուած դրա աղօթքը լսեց. ձեռքերը էկան. վեր կացաւ, ուրախ-ուրախ իրա չորերը կարեց. էրեխանց չորերը կարեց։

Ընդոնք թո ըստե մնան. խապարը տանք Ցուլիդայ խանումի մարդից։

Մարդն էկաւ կռուի տեղից. մտաւ տուն.—Մայրիկ, ասեց, իմ Ցուլիդայ խանում ո՞ւր ա։

Ասեց.—Այ որդի, ճալա դու ես խօսում «յուր ա», չէ նամակում գրել էիր, «իրիկունը կը հասնի, իրիկունը կորցրրայ, առաւօտը հասնի, առաւօտը կորցրայ. ես քաւաս էմ բերըմ»։

—Մայրի՛կ, ի՞նչ սպանել, ի՞նչ բան, դու գրել էիր թէ չան բուլայ ա բերած, ձեռքերը Ցոտեր ա. . . .» ես էլ գրեցի.—«Ինչ էլ ըլի դապուլ ա»։

—Այ որդի, էրկու հատ ոսկի բաճուլ, ոսկի ճկուտ տղայ էր, էլ իմ ձեռքը չդնաց կորցնէի, իմ տանից դուս արի։

Մայրիկ, ո՞ր խաճով դուս արիր.—Այս ինչ խաճով։

Վեր կացաւ, բուաճը առաւ ձեռ, ընկաւ ճանփայ։

Թող գնայ իրա ճանփով, մենք խապարը տանք Ցուլիդայ խանումի աղբօրից։

Էդ հարսը ընենց ա արե, թագաւորութուն էլ ա վերջացրե մինչև անդամ։

Աղբէրն էլ իրա կնկայ ձեռից դարտակարամ էլե, ընկե չոլերը—էթամ, իմ Ցուլիդայ խանում գթնեմ։

Գալիս էն, փեսայ ու աներ առնըմ էն յիրար։

Ցուլիդայ խանումի աղբէր ասըմ ա.—Ինչ մարդ էս։

—Թէ ես էլ չեմ գիտում ուր էմ գնում։

—Որ ըդենց ա, ասըմ ա, արի, իրար հետ ընկեր ըլենք։

Գնում, պատահում էն էդ մեշի մէջ, որտե Ցուլիդայ խանըմն ա։

Ցուլիդայ խանում տեսնըմ ա, մէկն իրա մարդն ա, մէկ իրա աղբէրն ա. տեսաւ որ էկան, նստան չինարի ծառի տակ։ Էդ էրեխէքն էլ մեծացեր էն. թրփօշացեր էն. վազեցին, էկան առաջ. մէկին, քեռի, մէկին, հայրիկ, ասին։

Դրանք էդ էրեխէքանց վրայ շա՜տ ուրախացան, էնպէս որ սրտները ճղքաց վրէնները։

Էրեխէք ասին.—Քեռի՛, հայրի՛կ. էթանք մեզ ղօնախ։

Վերցրեցին, տարան առանձին օթախ։

Ցուլիդայ խանում պատրաստութուն տեսաւ, էրեխէքանց ձեռքով կերակուր ուղարկեց, կերան, պառկան քնելու։

Ցուլիդայ խանում բերեց, մի դուժին արծաթէ գդալ տուեց էրեխանց, ասեց.—Որին որ քեռի էք ասըմ, նրա խուրճինի մէջ կը դնէք։

Տարան, քցեցին աղբօր խուրճինի մէջ։

Լիսը բացուեց, վե կացան. տեհան, ինչ. Ցուլիդայ խանում բալկոնում ման ա գալի։ Մարդը ասեց.—Կասես իմ կնոջը նմանում ա, բայց ձեռքեր ունի։

Ախպէրն էլ ախ քաշեց։ Ասեց էն մարդը.—Ինչու՞ ախ քաշեցիր։

Ասեց.—Կարծես իմ քիրն ըլի. բայց իմ քիրը թևեր չունէր։

Շնորհակալութիւն յայտնեցին, վեր էկան գնալու։

Մի խէլի տեղ գնացին. ըղըրանց կանչեց։

Դրանք էկանք, գլուխ տուին Ցուլիդայ խանումին ու կաղնեցին։

Ցուլիդայ խանում ասեց.—Ես ձեզ լաւութիւն արեցի, ղօնախ արեցի, դու իմ էրծաթ գդալները գողացաք։

Ասեցին.—Խանում, մենք խապար չունենք. Աստուած, երկինք, գետինք, մենք խապար չունենք։

Ասեց.—Պէտք ա ձեր ջեպերը, ձեր խուրճինները ման գամ։

Ման էկաւ, աղբօր խուրճինի մէջ գթաւ, ասեց.—Բա ասում էք, չենք գողացե, էս ո՞րտիյան դուս էկաւ։

Ասեց.—Աստուած վկայ, որ ես խապարութիւն չունեմ։

Ասեց.—Որ խապարութիւն չունես, այս ինչ թաղաւորին մի հարս կար. էրեխէն մորթեր էր, դանակը դրեր էր Ցուլիդայի ջեպը. Ցուլիդան նուշ բերել տուեց, Աստըծու հրամանքով նուշը կանանչեց, ասեց. «Աղբէ՛ր, Աստուած ունեմ, խապար չունեմ»։ Աղբէրը ո՞նց չհաւատաց, ձեռները կտրեց. սուրկուն արեց տանից մի լաչար կնկայ պատճառով։ Ասեց, ես քու քիրը-Ցուլիդայ խանումն եմ, էս էլ իմ մարդն ա։

Նոր էն տեղ փաթթուան իրար. ուրախացէք, որ ուրախացան։

Աղբէրն ասեց.—Այ քի՛ր, քու ձեռներն մինչև հիմայ ես պահեր եմ։

Ասեց.—Աղբէր ջան, իմ ձեռները Աստուած հասցրեց ընձի։

Հանեց նամակը քցեց աղբօր աղաքը, ասեց.—Էս էլ քու կընկայ ձեռագիրն ա, որ իմ մարդի նամակը փոխեր էր, ըսենց գրեր ա։

Վե կացան, ուրախ, ուրախ գնացին մարդի տունը։

Աղբէրն ասեց.—Ցուլիդայ խանում ջան, ես պտի էթամ, կընկանս մանտր-մանտր կտորեմ։

Քիրն ասեց.—Աղբէր ջան, մի՛ գնար. թող նրա պատիժը Աստուած տայ։

Էդ տեղ մնացին ՔԵՖ արին։

Աստուածանից էրեք խնձոր իջաւ։

ՍԷՖԻԼ ՄԱՐԿՈՍ

(Խոյեցոց բարբառով *)

Կար-չկար ավալ ժամանակ մէ մարթ մէ կնիկ կար. դէանք չատ խեղճութան մէջ էն էր։ Օրերէն մէ օր կնիկն ասաց. —Այ մարթ, պօլի մենք խեղճութոն քեաշենք, մե ստրուրը մէ ստրուր չի, ըստէղ բան չկայ անելու, քէլի ճարները. ախշատի, էդ մեր թզլները պախենք։

Մարթն ասաց.—Քեօ կաթն հարամ ըլի, դու ուզես էս ընձի օղորկես ղարիպութոն, որ դու լրբութոն անես։

Կնիկն ասաց։—Այ մարթ. ես վասա եմ դնելի Աստու խետ, որ իմ խալալին խարամ չխառնեմ, չանքի օրն գերեզմանին։

Մարթը դուս էլաւ, դիւար տըռաւ. ինչ մէ պառաւ կնիկ, ժողովք անելի, ասաց.—Այ Նանա, ցերեկը խաց ժողովի, գշերը եարլի իմ տունը քընի. մըղեաք եւ իմ կնկան, ես էթաս եմ ղարիպութոն, չըլի որ իմ կնիկը լրբութոն անի. ղարիպութոնէն որ դարձամ, էկամ, քեզի չատ լաւ կը չախեմ։

Սէֆիլ Մարկոսն էկաւ տուն, յէւր կնկան ասաց,—Կնիկ, տըսնես էս էս պառաւը, դէարը ջոջ էմ դնելի էդ տան վրան. էդ կըլի քեօ կսիւրը. դիւ դէարը խարգ, մնաս բարի, կեօ ես էթաս եմ։

Ճարխըրները խաղաւ, խաց կալեց մէջքը, փէտն առաւ ձեռքը, ընկեաւ ճամբախ։

Թող Աստուած դէար խէտն ըլի, մենք դառնանք Սեֆիլ Մարկոսի կնկան։ Գշեր-ցերեկ դէար աչկէն արտունքը չէր կտրուելի, խեղճ տղները քաղցած օր էն էր անց կացընելի։ Էդ պառաւը մէ քեանի օր լաւ չախեց տղներին. էթաս էր խաց էր ժողուելի, բերես էր. ուտես էր մի դարի տակ, էդ թզըլներին չէր էր տալի։

Մէյ օր էդ թզըլները չատ քաղցածացան, էդ խեղճ կնկայ

* Պատմած է Սարգիս Ղազարեան: Սոյն բարբառի հնչիւններն մասնաւոր ինչ աղղած է խոյեցոց բարբառին ծանօթ Պ. Ս. Հանայեան:

իլանը կտռուաւ, ասաց.—Մի՛ լացէք, պալանիր, կըլիմ, թոնդիրը կը վառեմ, ձեզ խըմա խորակ կեփեմ։

Ճժերը ուրախացան՛, էդ կնիյն էլաւ, թոնդիրը վառեց, տըղներին խափեց, օղորկեց գիւղը. գինքն էլաւ, էն մանտրը քարերէն ժողուեց, բերեց, լցեց պտուկի մէջը, դրեց թոնդրայ վրայ. գինքն էլ մտաւ մի պուճախ, չոքը առեց գետինը, Աստուն աղաչեց, ասաց. —Աստուած, դու խասնես իմ պալանըրին, էդ ինչի մըր քեաշած աստըւորը։ Շատ լաց էլաւ։ Ճժերն էլ հա ի դեսս էն էր, ասես էն էր. —Մամա՛, պա ինչ էլաւ մըր խորակը։ Էդ կնիյն էլ ասես էր.—Մըկայ կեփուի, մէկ սըճար կեփուի։ Էդ խեղճ էրեխէքը էնքան մնացին քաղցած. էկան ամեն մէկ կողմ պառկըւան, քնան։ Էդ կնիյն էլ հա լաց էր ըլեր, ասես էր.—Աստուած. ես ինչխօ անեմ իմ պալաներէ խետ. իմ ձեռնէն չի՛ գեալի էթամ, ժողովք անեմ. իմ ձեռը թալեր իմ քեօ փեշը. կուզես պախի, կուզես մեռցու։ Գինքն էլ գլօխը դրեց, քընաւ։ Առաւօտը լոսը բացուաւ. էլաւ, զաս ու մասերը ժողուեց. տըսաւ բարձի տակը օխտը խատ ոսկի. էլաւ, ուրախ-ուրախ լուացուաւ, ասաց.—Փառք քեզի Աստուած, որ դիւ իմ Եօրփա ճապալաղներին բռուզա խասուցիր։

Էկաւ. պառաւին ասաց.—Մամա՛, ել էդ ոսկին առ, քէլի պազարը, խաց ա՛ռ, բե՛ր որ իմ տղներն ուտէն։

Ասաց.—Ախչի՛, էդ ոսկին վէճիլ ի տուի քեզի։

Էդ կնիյն ասաց.—Աստուած բռուզկայ ի խասուցի ընձի։

Պառաւը ասաց.—Դէշայ մէ բան կայ. քեօ խեղճ մարթն ասես էր, ես չեմ էր հաւատալի որ դիւ լըթութեան կանես։

—Մամա՛, վարօքդ ըլտըրկեր ի. խօքուդ մեղք մի՛ արա, ես իմ մարթու խետ վասա Աստըծու եմ դըրի, որ իմ խալալին խարամ չը խառնեմ, ինչանքի գերեզման մտնելը. թէ չես հաւատալի, կանոխ գշերը եալի՛, իմ մօտը քընի։

Էդ պառաւ էլաւ, մըրմըռթալով առաւ ոսկին, գնաց պազարը. խաց-մաց առաւ, բերեց։ Տղները էկան, նստան ու կերան։ Ասաց. Մամա՛, դիւ էլ ժողովք մի՛ արա, դիւ էդ տան ճոչն ես։ Աստուած բռուզկայ ի տուի, կուտենք, փառք կտանք յիւրը։

Պառաւն ասաց.—Լա օ, ես քեօ գեօղութեան կը բռնեմ։

Ասաց,—Մամա՛, թող քեօ ասածն ըլի։

Իրիկունը էկաւ, տեղները քըցին, քընան. էդ պառաւն էլ. էլ էդ կնկեայ կուշտը քընաւ. ընչար ի՛լոս ղարաւուլ քաշեց։ Լոսը բացուաւ. էդ կնիկը էլաւ, տեղաշորերը ժողուեց. Ասաց.—Մամա՛, դիւ բարձը վերցը։

Պառաւը բարձը վերցեց, ըչկաց ինչ ի՞ օխտը ոսկի. կնիկյն ասաց. —Մամա՛, աչկովդ տըսա՛ր։—Խա, պալամ, դիւ արդար ես։

Էդ կնկեայ Աստըծոյ խըրամանքով օրը հա օխտը ոսկի էկաւ. դոլվար կալեց, տներ շինեց, կովեր առաւ. էլ չես էր գինալի թէ էդ Սէֆիլ Մարկոսի տներն ի։

Էդ Սէֆիլ Մարկոսն էլ ղարիպութոնից ետ էր դառնալի, իգեալի տունն Էկաւ, տըսաւ.—Ջանըմ՝ էդ իմ տների տեղն ի, իմ տները չի, ասաց.—Սափաc, մէ մտնեմ, խարցուցեմ. վէճվի գինալի, պալէիմ իմ կնիյն անճարի էլի, ծախիրի՝ կէրիրի. իւրիշն էկիրի, տուն ի շինի տէչաղ. մէկ ղաֆիլ մտնեմ, վայ թէ ջրոտուեն։ Քիւչայի դուռը թփեց, մէ տղայ դիւս էլաւ, Ասաց.—Էդ վէճվի։ Ասաց.—Դիւս եարի, ղարիպ մարթ եմ։

Ասաց.—Էդ վի՞ր տներն ի։ Ասաց.—Սէֆիլ Մարկոսի։

Ասաց.—Սէֆիլ Մարկոսն տունն ի։

Ասաց.—Չէ՛, էդ խեյ տարի ի գնացիր ի ղարիպութոն. տըսնե՞ս էս, էդ զըմեն Սէֆիլ Մարկոսի կնիյն ի շինի։

Ասաց.—Պա դիւ Սէֆիլ Մարկոսի ի՞շն էս.—Դէար նօքարն էմ։

Սէֆիլ Մարկոսը տղայ ունի՞.—Իշխօ չունի, կեծ էթաս էն վարժատունը, կարդաս էն, էրկու տղայ, մէ աղչիկ ունի։

Ասաց.—Պա վէճվ կայ տունը։ Ասաց.—Պատի խաճըրմն ի։

Դէարը օղորկեց, ասաց.—Դէ՛, քէլի, խաճըմիդ ասա. «Սէֆիլ Մարկոսն էկիր ի»։ Չինքը յիւրը ասաց.—Խում կաթնակերին էյթիպար չկայ՝ լըրութուն ի արի. ես դէարը շանց կտամ մկայ։ Նօքարը գնաց, ասաց.—Խանըմ, աչքըդ լոյս, մարթդ էկիր ի Քիւչայի դուռը, ասկի «ես Սէֆիլ Մարկոսն էմ»։

Կնիյն ուրախ-ուրախ էլաւ, վազեց, ըշկաց որ յիւր մարթն ի, փաթըթուաւ մարթի վզովը.—Դիւ բարեով էկար. ընչի՞ չես էր մըտնելի տունը։ Ասաց.—Ի՛շ մտնեմ էր. ասեմ, ես Սէֆիլ Մարկոսն եմ. էդ իմ տների տեղն ի, իմ տները չի, մնացիմ ջանիս վրայ շուար, դէար խըմայ էլ Քիւչայի դուռը թփիմ, ասիմ. «վէճվ ի նալի, կնիկս ճաչար ի մնացի, ծախիր ի»։

Կնիյն ասաց.—Ա՛յ մարթ, տըսնես ես, դիւ գնացիր ղարիպութոն, ես էս ղեար մալ ու դոլվաք եմ բերի։ Ասաց,—կեօ ես էլ եմ բերի Ֆլան մեշայի մէջն ի. եարի, էրկսով էթանք, բերենք։

Կնիյն էլ ուրախ-ուրախ էլաւ, մարթի խետը ընկեան ճանըպախ, գնացին էդ մեշի մէջը. Ասաց.—Պա մա՛րթ, յիւրի քեօ ապրանքը։

Ասաց.—Ղանըրխ, քեօ սիրողն ի էդ մալ դոլվարը քըցի քիդ խըմայ. խո ընձ էլ սիրող չունեմ, ես էլ խիւանդացամ, չը գիցամ աշխատել։

Էդ կնիյն էլ ասաց.—Մարթ Աստըծու, էդենց բաներ մի՛ ասա ընձի, ես քեզ խետ վասա Աստըծու եմ դըրի, որ իմ խալալին խարամ չխառնեմ. չանքի օյն գերեզմանին։

Մարթն ասաց.—Քեօ կաթը խարամ ըլի, պա դիւ էդ բանէն խապար չես, վէմվ էդ փողերը տուի քեզի, որ դիւ էդ ղդար մալ ու դեօլվաք էս յետ քցի. ես տեղ ըլելուս վախեր ախչատանք էմ էր անելի, շատ օրը քաղցած էնք էր քընելի, դիւ էդ կնիկ հալովդ վէմը տեղէն էս ախչատի:

Կնիկն ասեց.—Աստուած ընձի, իմ պալաներին ռուռուզկալ ի տուլի. օրական օխտը ոսկի ի գեալի ընձի, գինաս էս, այ մարթ. ինչ խեղճութին, ճաչարութին իմ քեաշի եմ պալաների խետ, իմ աչկերի արտունքը չի կտրուելի. մէյ օր էն դեի քաղցած մնացին տղերս, խլաճս կտրուաւ, դէանցը խափիմ, օղորկիմ դիւրը, էլամ, թոճդիրը վառիմ, էն չայլաղի մանտր քարերէն ժողվիմ. լցիմ կտուկը, դրիմ թոճդրայ վրայ հա, գընացին էկան.—«Մամա, էդ ինչ էս էփելի.» ասեսմ էր, «պալամ, գնացէք, խաղացէք»։ Էն դեի խափիմ, չանք երիկուն. խլաճները կտրուաւ, ամեկը մէ տեղ քաւալան, քընան. էն գշեր սեւ էլաւ ընձ խըմայ. չանքի լոս աչքիս արտունքը չը կտրուաւ, առատունը էլամ, իշկացիմ, չորերը ժողուեմ էր, տըսամ բարձի տակը-ճչ..-օխտը ոսկի կայ. ուրախ-ուրախ վերցիմ. մամային ասիմ.—«Մամա, եկ, Աստուած մեզ բռուզկայ ի տուլի,» մաման էլ չը խաւատաց ընձի. իշխօ դիւ ասես էս. «սիրող էս բռնի»։ Ասիմ.—«Մամա, թէ չես խաւատալի, կանոխ գշեր էլ դիւ եարի. քընի մօտս»։ Էկաւ էն գշեր ինչանքի լոս դարավուլ քեաշեց. առատունը լոսը բացուաւ, պատաւը ;իրըը ձեռքով չորերը ժողուեց, իշկաց օխտը ոսկին կայ, ասաց. «Պալա, դիւ արդար էս, Աստուած քեօ պալաներին բռուզկայ ի խասուցի»։

Մարթն ասաց.—Չէ, քեօ կաթն խարամ ըլի, կնկանը էճեփպար չը կայ, քեզ կտի սպանեմ։

Ասաց.—Ընձի սպանես, պա իմ պալաներին խաբր չկա՛յ:

Մարդն ասաց.—Զուրցալու տեղ չը կայ էլ։ Ձեռը ճխտեց, ճեպէն չաղուն խանեց, կնիկը դըրեց գետինը, վիզը կխտկռեց. գինքը թաղեց էկաւ տունը։

Թող էդ կնիկը էդ մեծայի մէջը մնայ, Սէֆիլ Մարկոսն էկաւ տունը, իր տղերը. մէկ էլ պառաւը ուրախ-ուրախ էկան առաջը։ Ասաց Մարկոսը.—Իմաճսըզ պառա՛ւ, քեզ իմ տան վրան դրիմ դարավուլ, որ ըղենց պախես էր իմ կնկեան։

Պառաւն ասաց.—Ընչի՛, պալաս։

Ասաց.—Քեաֆրար, էդ դեր մալ ու դոլվար վէավ էր տուլի ձեզի։—Պալամ, ասաց, Աստուած քեօ կնկեան աղօթքը լսեց, քեօ պալաներին բռուզկայ տուեց. դիւ էն սա՛մ, խաճլմըս յե՛ւր ի։

Ասաց.—Քեզ էլ կը տանեմ դէար կուշտը։

Ասաց.—Ի՞նչխօ դէար կուշտը։—Կեռ, ասաց. տընենս ես էն մեծան, տարամ դէաղ, վիզը կուխմ։

—Ընչի, ասաց. անաստուած, Աստուած քեզի կանիծի, էն ար-դամը էր։

Երեխէքը լաս էն էր.—Դադա, մեր մաման ինչ արիր։

Դէանք թող դէաղ մնան, մենք էթանք Սէֆիլ Մարկոսի կըն-կեան։ Դէար վիզը որ կուիր են էր, անմախական ախպեւր էր բա-ցուի, էլիր էր մէ պստի առու. ընկիր էր էդ մեծայի մէջով էթաս էր։ Օրերէն մէկ օր մէ բազրկեան էկաւ, էջաւ էդ մեծայի մէջը, ձուր նօքեարներին ասաց.—Ըս տաղլանքը մէ չուռ էկէք, եարապ, առու-մառու չըկայ. էդ էրկու աղունիկը մորէք, լուացէք, էփէք, ուտենք։

Նօքեարները չուռ էկան, տըսան.ինչ մէ պստի առու։

Աղունիկը մորթին, ուզեն էն էր լուան էր, սաղացաւ. թռաւ։

Մնացին չուարած. էկան բազրկեանին ասին։

Բազրկեանն ասաց.—Քելէք, էդ ախպրի ակը դըտէք, տըսէք վէմր տէղ ի, ելան կննացին, տըսան-ինչ-մէ կնիկ վիզը կուիր էն, ճիւըն էլիր ի ախպուր, էթալի։ Էկան բազրկեանին ասին։

Էդ բազրկեանն էլ էլաւ, գընաց, տըսաւ-ինչ-մէ կնիկ, չուտես. չը խմես, դէարը խորտուլթան թամաշա անես, ինչխօ քնուկ ըլի։ Բռնեց, վիզը ճխտեց իրարու վրայ, Աստու խըրամանքով փռշտաց, էլաւ նստաւ, ասաց.—Ախպէ՛ր ջան, ընձի ինչ տէյին սաղցուցիր. կնիկ տէյին. քիւր տէյին, թէ մեր տէյին։

Բազրկեանն ասաց.—Սաղցուցիմ որ ես քեզ առնեմ։

Կնիկը ասաց.—Ես իմ մարթի խեռ վասա Աստըծու եմ դըի, որ իմ խնալլին խարամ չխառնեմ, ընչանքի գերեզման մտնիլը, կու-գես, տար թալ մէկ խորի մէջ։

Բազրկեանն էդ կնկեան վերցեց, տարաւ, թալեց մէ խորի մէջ. գինքը թողեց, գնաց։

Աստըծու խըրամանքով մէ բուլայ է փէյտա էկեր էդ մեծայի մէջը. խաց ու մաց էր ժողուեր, բերեր, թալեր էդ խորի մէջը։

Մէ քեանի օր էդինց եօլա էր էթալի։

Օրերէն մէկ օր մէկ բազրկեան էլ էկաւ, էջաւ էդ մեծան. էդ սանդուխի բուլան էլ գընաց դէանցը զատամանց կայնեց, թամաշա արաց. Բազրկեանն էլ ասաց.—Խաց թալէք, խափխըփելով բռնէք։ Խաց թալին, թուլան առաւ, փախաւ։

Բազրկեանն ասաց.—Իօլա՛, ինչխօ ասես էդ տեղըանքը բան կայ. ու խացը վերցելի, փախնելի։ Կեատանները դէար քեամակէն գընացին, ըչկացին-ինչ.—Էդ բուլան մէ խորի վրայ կայնիր ի. կըգ-մըստալի. էկան ասին։

Բազրկեանն ասաց.—Թոլէք, ըշկացէք, բալFի դէանց դիլը ընկէր ի խորի մէջը։ Սաքըլը վերցին, գընացին. կախին էդ խորի մէջը։ Էդ կնիկը էլաւ. նստաւ մէջը. դէանք քաշին, խորէն հանին. ըշկացին-ի՞չ-մէ կնիկ, վազելով էկան, ասին.—Աղա, էննոց մէ կնիկ որ չուտես, չխմես, դէարը թամաշա անես։

Ասաց.—Ինչխօ, դօլա՛, խօ fեon չի՞։ Ասին.—Չէ, ի՞չ fեon.

Ասաց.—Էդ վէճր անաստուածն է բերի, քցի։

Բազրկեանը զինքն էլ էկաւ, ըշկաց-ի՞չ.—Մէ կնիկ ի. խելքը գլխէն գընաց. էդ կնիկն ասաց.—Աղբէր ջան, ընձի ի՞չ ցեյին հանիր, քիւր ցեյին, մէր ցեյին, թէ կնիկ ցեյին։

Ասաց.—Ես քեզ հանել տուիմ որ քեզ առնեմ։

Ասաց.—Չէ, ես իմ մարթու խեռ վասա Աստուծու եմ դրի, որ իմ խալալին խարամ չխառնեմ, ընչանք ի դերեզման մտնելը. ինչխօ հանիր խորէն, էլ ընձի թալ խոր։

Բազրկեանը վերցեց դէարը, տարաւ, թալեց ծովը։

Մէ խալեոր մարթ էլ թոռ էր քցելի ծովը, տըսաւ որ ինչ.—Էդ բազրկեանն էդ կնիկը թալեց ծովը. զինքը թողից գընաց։

Էդ խալեորը խասաւ, էդ կնիկեան ծովէն հանեց։

Ասաց,—Պապի ջան. ընձի ի՞չ ցեյին հանիր։

Ասաց.—Օխտը fեon ախչիկ ունեմ, մէկ էլ դու ութը թող ըլի։

Ասաց.—Պապի ջան. դէ, քէլի, էթանք. ընձի ըռուզկեայ ունեմ. ես կը պախեմ քեօ ախչիկներն էլ, քեզ էլ. դէանք էլան, գընացին տունը. խալեւորը վերցեց. ասաց.—Պալանէ՛ր, ձեզ մէ դադօ էլ էմ բերի։

Ասին.—Խա՛, մեզի չատ պախի՛ր, մնաց որ դէալը պախես։

Ասաց.—Աստուած կը պախի։

Էդ գշերը քնան, ելաւ, տըսաւ որ օխտը ոսկի էլի կայ բարձի տակը. հանեց, մէ՝ էրկու ոսկի տուեց, ասաց.—Պապի՛, ա՛ռ, քէլի պազար, այինոյին առ, բե՛ր։

Կնիկը, զինքն էլաւ, մտաւ մի մութ պուճախ, սկսեց աչկերէն թափել, ասաց,—Աստուա՛ծ, իմ պալաները, իմ մարթը ի՞չխօ են, խարապ, կուշտ են, քաղցած են, ընձի մըտէդ չը հանիր. վա՛ր տեղ էլաւ, իմ ըռուզկեան տուիր, իմ պալաների ըռուզկեան էլ տաս։

Ըշկաց-ի՞չ—Խալեւոր ղռնէն մտաւ, էլաւ այնոյին ձեռնէն առաւ, ասաց.—Պապէ ջան, էլ չէթաս ծովը ձուկնա հանելու. Աստուծու տուած ըռուզկայով կապրենք։

Մէ առ ժամանակ մնաց էդ կնիկը. Այսօն, Ղարօն մալի տէր դարձաւ, մէ հավուզ շինել տուեց, մէ ծառ էլ տնկել տուեց. յիւր պատկերն էլ քաշել տուեց, կպուցեց էտ ծառի վրան. մէ ղարա-

հուլ էլ բռնեց, դրեց, ասաց.—Վէ՛մ էկաւ, ճիւր խմաւ՝ ախ քեաշեց, կը բռնէք։

Օրերէն մէկ օր էն բազրկեանն էկաւ, տըսաւ պատկերքը, ախ քեաշեց։ Ղարաուլը բռնեց, տարաւ աղայի կուշտը։

Կնիկն էլաւ տղամարթի շոր խաքաւ. եկաւ դիւս, իշկաց-իշ.—Էն բազրկեանն ի, ասաց—Տարէք, մէ լաւ օթախ դրէք.

Մէ քեանի օրէն յետն էլ էն մէկէլ բազրկեանն էկաւ, ճիւր խմեց, տըսաւ պատկերքը, ասաց.—Իշխօ էն կնիկն ըլի։ Ախ քեաշեց։ Դէսըրն էլ բռնեց, տարաւ աղայի կուշտը։

Ասաց.—Դէսըրն էլ տարէք դնար կուշտը։

Մէ վախտ էլ մնաց, էդ Սէֆիլ Մարկոսն էլի ընկեաւ դառը աղքատութեան մէջ. էլաւ, իւրը տուեց դարիպութեն, ասաց.—Իմ կնկեայ անէծքն էր, որ ընձի բռնեց. մորթելու վախքն ասաց. «Խնայի իմ պալաներին,» ես դէսըն անկած չարեմ, արդար արուն թափիմ, դէսր սապապէն էլ ես կուշտ չիմ ուտելի։

Էլաւ, ընկեաւ ճամբախ, շատ ու քիչ Աստուած է գինա, էկաւ, խասաւ էդ հաւուզի մօտը, ըշկաց էդ պատկերքին, ասաց. —Ի՛շխօ իմ կնիկն ըլի։ Ասաց. ուրը թըփեց դետինը. ախ քեաշեց։

Էդ ղարաւուլ տըսաւ, պըռնացաւ. դէսըը վերցեց, զոռով, զըռ-մշտելով տարաւ յիւր աղայի կուշտը։ Աղան ըշկաց որ յիւր մարթն ի, ասաց.—Դէսըն էլ տարէք դէանց մօտը։

Էկան, իրկունը քըհան. լոըը ըացուլի ձեր վըայ, բացուաւ դէանց վըայ։ Առաւօտունը էլան, կնիկը յիւրը դադային կանչեց, ասաց. —Նարէ՛, էթանք էն մարթներին մօտը. տըսնանք դէանք ի՞չ մարթեն որ էկան, հաւուզէն ճիւր խման, ախ քեաշին։

Էլան, գընացին էն մարթերի մօտը։

Առաջի բազրկեանէն խարցուց։

—Ընչի խըմայ հաւուզի ջիւրը խմար. ախ քեաշիր։

—Ես բազրկեան եմ էր. էկամ, էջամ մէ մեծայի մէջ. էրկու աղունիկ տուիմ իմ կեասաների ձեռքը, մորթին, լուան, դէանք չուռ էկան, դղան մէ լալակ աուռ. աղունիկները մորթեն որ լուան էն էր, թե առիր էն էր, թռերին էր. էկան, ընձի աւին. օղորկիմ, գընացին-ի՞չ-մէ կնիկ մորթիր էն. գնացիմ, վիզը ճխտիմ յերար վըայ, կնիկը փռշտաց, նստաւ, ասաց.—Աղբէ՛ր, ընձի իշ տէյին խանիր, քիւր տէյին, մէր տէյին, թէ կնիկ տէյին։ Ես էլ ասիմ.—Խանիմ որ քեզ առնեմ։

Կնիկն ասաց.—«Ես Աստըծու առաջ ուխտ էմ արի որ իմ խալային խարամ չխառնեմ. իմ մարթու խետ ուխտ եմ արի չանք ի օ՛ն գերեզմանին։

Սէֆիլ Մարկոսը դէաղ ուր մառը կծեց.—Էդ իմ կնիկը կըլի, ասաց։

Կնիկը խարցուց.—Պա՛, ինչ արիր էն կնկեան։

—Թալիմ խորի մէջ, ասաց բազրկեանը։

Կնիկ էս խեռ մէկէլ բազրկեանին խարցուց։

—Դիւ ընչի ճիւր խմար, ախ քեաշիր։

—Ես էլ էդ կնիկը էդ խորէն խանիմ. ընձ էլ ասաց. «Աղբէր, ընձ, ինչ տեյին խանիր, քո՞ւր տեյին, մէր տեյին, թէ կնիկ տեյին»։ Ասիմ.—«Կնիկ տեյին,» Ասաց.—«Ես իմ մարդու խեռ վատա Աստուն եմ արէ որ իմ խալալին խարամ չխառնեմ. ընձի տար, թալ ծովը»։

—Է, դու ինչ արիր։—Տարամ, թալիմ ծովը։

—Է՛, Խալիւոր, ասաց. դո՛ւ ինչ արիր։—Ես էլ ծովէն խանիմ ասաց։

Ասաց.—Դիւ ինչ արիր էդ կնկեան.—Դէարը արիմ ազիզ պալա, ասաց։

Սէֆիլ Մարկոսին ասաց.—Այ մարթ, պա դու ընչի ախ քեաշիր։

—Ի՞չ ասեմ, ասաց. իմ վրայ կրակ կը թափի, էն ես էմ էր մորթիմ մեշայի մէջը. էն իմ կնիկն էր, էկամ դէաղ. դէար պատկերը տըսամ, ախ քեաշիմ։

Կնիկն էդ բազրկեաններին, էդ խալիւորին ասաց.—Էդ կնիկը ես էմ էր, էդ էլ Սէֆիլ Մարկոսն է իմ մարթը, Աստուած ընձի լոս արաց. իմ մարդն ընձի խասուց։

Բազրկեաններին ասաց.—Աստուած ձեզի յաջողութեն տայ, դուք գընացէք։

Բազրկեանները գընացին. կնիկը փաթըթուաւ Սէֆիլ Մարկոսին, ասաց.—Այ մարթ, տըսար քեօ աչքովդ ինչ էն էր ասելի էդ բազրկեանները. ես քեօ խեռ վատա Աստու եմ դրի, իմ խալալին խարամ չեմ խառնի, ինչանք ի օրն գերիզմանին։

Խալիւորին ասաց.—Պապի ջան, ես էթասեմ իմ մարթի խեռ իմ պալաների կուշտը, Ի՜չքամ կարգ էմ քցի քեզ, քեզ փեշքեաշ ըլի։

Եղաւ, խալիւորի ձեռը պագեց, քի՛րերին ասաց.—Մնաք բարի։ Ընկեան ճամբախ։

Մարթ ու կնիկ էկան, խասան իւրանց տունը։

Աստուած լոս արաց դէանցը, լոս անի ամեն նեղածներին։

48

ՀԱՃԱՐԱՆ ԲԻԼԲՈՒԼ

(Վաղարշապատի բարբառով *)

Կար ժամանակով մէկ հալիւոր մարդ. քուչի էր. իրեք ախչիկ ունէր, մի կնիկ. ընդրան ուրիշ փեշակ չունէր. կեթար ձուկ բռնելու. ինչ ղդար քոռ կը քցէր, հինգ հատ ձուկ կը բռնէր չար իրիկուն. իրիկունը հինգ հատ ձուկը վեր կալեր, կը բերեր տուն. հինգ ջան ին, ամեքը մէկը կուտէին։

Ըդրա կնիկը մեռաւ, գնաց, ուրիշ կնիկ բերեց իրա տունը։

Թոռը վե կալաւ, գնաց ձկան. էլի հինգ հատ ձուկը բռնեց, վե կալաւ բերեց տուն, տուեց կնկան. կնիկը հինգ հատ ձուկն էլ էփեց. մի հատը թաքուն կերաւ։ Մարդը էկաւ տուն, ասեց.—Կնի՛կ, ձկները բե՛ր, ուտենք։

Զորս հատ ձուկը բերեց. էրկու հատը տուեց իրեք ախչկան, կերան. էրկու հատը դրեց իրանց աղաքը։ Ասեց.—Կնիկ, ես հինգ հատ ձուկ էմ բերե. էդ խե՞ էրկուսը տալիս էս իրեք ախչկան, բա մէկը ինչ էս արե։

Ասեց.—Սոված ի՝ մէկը կերայ, էգուց վեց հատ կը բերես, մի հատ աւել կտամ ըդրանց։

Ասեց.—Անկարելի ա, հինգ հատից աւել չեմ կարայ բերի. մեր ղսմաթը էդ ա. ըդով կառավարուենք։

Ասեց.—Որ էդ էր քու ղսմաթը, էդ էր քու դըռլիկը, առաւօտ քու տանը չեմ մնայ։

Կասի.—Ի՞նչ պատճառով չես մնում։

—Որը հինգ հատ ձուկ էս բերում. էդ ախչկերքը կորցրայ. կե-

---

* Պատմած է Վաղարշապատցի Առաքէլ Ղուխմեան:

թաս էլի հինգ հատ ձուկը կը բերես. երկուսը ես կուտեմ, երկուսը դու, մէկի կէսը ես կուտեմ, մէկի կէսն էլ դու. կուշտ կուտենք, ապրուստ կանենք։

Ասեց.—Կնի՛կ, մօնց կօրցնեմ. իմ ջիկեարն էն։

Ասեց.—Անկարելի ա. կը կօրցնես, կնիկ կըլլեմ, չես կօրցնի, ես կը կօրեմ. կօրեմ լաւ ա, թէ սովամահ ըլլեմ։

Մարդն ասեց.—Ա՛յ կնիկ, դու՝ քու Աստուած. տանեմ, կօրցնեմ. իրեք հատ աղի բլիթ թխայ։

Իրեք հատ աղի բլիթ թխեց. վե կալաւ իրեք ախչկան էլ ընկան ճանբայ ու գնացին. մէ մեշի մէջ մտան։ Ախչիկներ ասեցին.

—Պապի՛. էս ո՞ւր ենք էթում։

—Ա՛յ որդի՛, էթումենք ցախի։

—Էս ցախերը թօփ անենք, տանենք. բա ո՞ւր ենք էթում։

—Լաւ ցախի տեղ գիտամ. էթումենք ընտի։

Գնացին, նստեցին մի տեղ, սովածացան. էդ աղի բլիթները հանեցին, կերան. շատ ծարաւեցին։

Ախչկներքը ասեցին.—Պապի՛, ծարաւեցինք. ջուր ո՞ր տի կայ։

Ասեց.—Է՛՜յ էն բանցր դարը տեսնո՞ւմ էք։

Ասեցին.—Տեսնում ենք։ Ասեց.—Ընդըրա տակին ջուր կայ գնացէք. խմէք, էկէք, ես ըս տի կը նստեմ։

Ասեցին.—Պապի՛, արևը մութն ա, դարն էլ հեռու ա. ինչ անենք։—Գնացէք, ասեց. ես ըս տեղ էմ։

Էդ իրեք ախչիկն էլ գնացին դպա դարը. էդ հալիւորը յետ դառաւ ու փախաւ. էկաւ տուն։

Ասեց.—Թոռը վե կալ, գնա ձկան։

Կնիկն ասեց.—Ախչկերքը կօրցըրի՞ր. Ասեց,—Կօրցրեցի։

Առեց.—Թոռը քցեց, երկու հատ ձուկը բռնեց. էլ ընդուց դեն՝ ինչ դար քցեց. դարդակ դուս էկաւ թոռը։ Երկու ձուկը վե կալաւ. էկաւ տուն. տուեց կնկան, կնիկն ասեց.—Բա էն իրեք ձուկն յո՞ւր ա։

Ասեց.—Էն իրեք ձուկն ընդոնց ղսմաքն էր. էն ղտար արեցիր որ իմ ախչկերքն էլ կօրցրեցի։

Էդ հալիւորը ասեց.—Էթամ. իմ ախչկերքին էլի գթնեմ, բերեմ։ Գնաց. ման էկաւ, չի գթաւ. դատարկ յետ դառաւ, էկաւ դպա տունը. օրն երկու ձկով ապրուստ արեցին։

Խապարը տանք էդ իրեք ախչկանից։ Գնացին, էն դարի տակ ջուր չի գթան. յետ դառան, էկան, իրանց հօրը ման էկան. չը գթան. իրանց ճանփէն էլ կօրցրեցին. մի բարալիկ ճանբայ ընկաւ. մեշի միջին ընդըրանց աղաքը. էդ ճանփէն բռնեցին, ու գնացին։ Գնացին, դուս ընկան մի քաղաքի դրաղ. ըդըրանց ծարաւութունը

չմա էր կոխե, ջուր խմեցին ու նստան։ Մութն ընկաւ. սովածու-թունը ըդրանց չմա ճիար արեց, մեծ ախչիկն ասեց.—Ախչկերքե-էկէք, ցեթենք, ում ցեթը կարճ ա. ընդրան ուտենք։

Պուճուր ախչիկն ասեց.—Ըդենց բան կըլի՛, որ դուք ասեցիք։

Միջնեկ ախչիկն ասեց.—Բա՞ ինչ անենք. մեր հէրը մեզ կոր-ցրեց. մեր մեռնիլը լաւ ա, քանց մեր ապրիլը։

Պուճուր ախչիկը ասեց.—Դո՛ւ գիտաք։

Նստեցին, իրեքով ցեթեցին պուճուր ախչկայ ցեթը կարճ էլաւ. մեծ ախչիկն ասեց.—Դէ՛, պուճուր ախչկան ուտենք։

Պուճուր ախչիկն ասեց.—Մէ քիչ քնէք, վեր կացէք, կերէք։

Ընդրանք պարկան, քնան. պուճուր ախչիկն վեր կացաւ, Աս-տուած կանչեց, ասեց.—Ընձի ազատայ ըտորանց ձեռիցը, հըմի վե-կենան, ընձի պտի ուտեն։

Նստեց. մատով գետինը փորեց, միտք էր անըմ։

Երկու հատ չամիչ դուս էկաւ գետնիցը. մի չամիչը դրեց էն քուր բերանը, մէկը էն քուրը։ Մէկ էլ փորեց, իրեք հատ դուս էկաւ. մէկը քցեց իրա բե՛րանը թեզ, մէկը էն քուր, մէկը էն քուր բերա-նը դրեց։

Ախչկերքը ասեցին.—Ա՛յ քի՛ր, էդ ինչ էս գթնըմ։

Ասեց.—Ըստի փորումեմ, չամիչ ա դուս գալի։

Էկան իրեքով էլ փորեցին. մի լորայ չափ չամիչ հանեցին. Նստեցին, կուշտ կերան իրիրով էլ. էկան մէկ էլ փորեցին. մի ծակ էլաւ, մի ախչիկ գըմբալով ընկաւ ծակի մէջը. էդ ախչիկը թամաշա արեց. տեհաւ թաքաւորի մեյտարխանէն ա. ձիանոց աղաքը չամիչը, խուրմէն, բասամի մէջը, պոպոքի մէջը ււտում էն, փեշը լէքը լցեց ու էդ ծակից դուս էկաւ։ Էն ախչկերքը ասեցին.—Ախչի, ո՞ր տի ընկար. մենք ասեցինք կորար։

Ասեց.—Չէ. թաքաւորի մեյտարխանէն ա, ձիանոց աղաքը լէքն էր։ Իրեքով մտան էդ ծակը, գնացին մեյտարխանէն. փեշները լէքը լցեցին, դուս էկան։ Մի ամիս մնացին ըտեղ, իրանց ժամա-նակին կեթային, քօփ կանէին, կուտէին. ըստի ապրուստ կանէին։

Թաքաւոր մէկ օր դուս էկաւ ման գալու իրան Նազիր-վեզիրի հետ-նայ. գնացին, մտան մեյտարխանէն. թամաշա արեց թաքաւորը. տե-հաւ ձիանը աուրդ էն. մեյտար բաշուն կաղնացրեց աղաքը. բարկա-ցաւ, ասեց.—Էս ձիանը խի՞ են աուրդ, ուրիշ ձիանոց խոտ են տալի, ես իմ ձիանոց չամիչ եմ տալի. խուրմայ եմ տալի .... դու քօփ էս անըմ. եան քո՛ւ տունն էս տանըմ. եան դո՛ւ ես ուտում, եան գողը կը գթնես. եան գլուխդ կը կտրեմ, անպատճառ չալի լիս ինձ պատասխան տուր։

Թաքաւորը թողեց գնաց. մեյտարը բերեց, խուրմէն, չամիչը.....

ածեց ձիանոց աղաքը․ իրան ճկլիթը դանակով կտրեց, աղ ու տաքդեղը արեց խարի վրէն, մումուռը տուեց իրան ճիկլիթը․ գնաց, էկաւ, քունը չի տարաւ։ Մէկ էլ տեհաւ գոմի էն պուճախիցը մի ծակ բացուեց, տեհաւ իրեք հատ ախչիկ իրար քամակից վէր էկան, մին ասեց.—Ախչի՛կ, բեզ արէք․ փեշները լցըըրէք, որ դուս գանք, փեշները լցըըրեցին, էկան ծակի աղաքը, որ դուս գային․ մեյցարը էկաւ, ծակի աղաքը կտրեց, ասեց.—Հը, ժաժ մի՛ գաք, իրեքիդ էլ կսպաննեմ։ Ընկան ախչկերքը ըդըրան աղաչանք.—Աստըծու խաթէր, մենք ախչիկ ենք․ բրախ տո՛ւ, էթանք․ մեր հէրը մեզ կորցրեց․ էկանք, ըստեղ դուս էկանք։ Ասեց.—Ձեր խաթեր, բա՛, Թաքաւոր իմ գլուխ կտրի։ Ասեց.—Բրախ տու, չենք գայ, կեթանք․ քաղաքի մէջ գլխներս կը պահենք։

Ասեց.—Անկարելի ա, ձեզ պտի տանեմ Թաքաւորին։

Մօտը չարի լիս պահեց, առաւօտը լիսացաւ․ վի կալաւ, տարաւ Թաքաւորի պալատը, Թաքաւորը դուս էկաւ․ տեհաւ մեյցարը կաղնած ա, կանչեց․ ասեց.—Հը, գշերով գողը բռներ ես, որ էկեր ես։

Ասեց.—Հրամանքէս, բռներէմ։

Ասեց.—Իրիկուայ իմ բարկութինը չըլէր, չէիր բռնի․ ինչ մարդիկ են բռնէր ես։

Ասեց.—Մարդ չեն, իրեք հատ ախչիկ են։

Ասեց.—Կանչէք, գան, ախչկերքին։

Ախչկերքը էկան, Թաքաւորի աղաքը կաղնեցին։

Ասեց.—Դու ինչ ղցար անէրկուղ ախչիկ էք որ էդ բան անըմ էք․ որ գոմը ծակէք, ձիանոց աղաքիցը ամեն բանը վեր էք կալըմ, տանըմ, դուք ուրիշ աշխատանք չէ՞ք կարայ անի։

Էդ ախչկերքը իրանց գլխի էկածը պատմեցին, ասեցին.—Մեր հէրը կորցրեց, էկանք ըդտի դուս էկանք․ քաղաքումը մէկ մարդի չէինք ճանաչում որ էթայինք, աշխատէինք․ Աստուած էդ ծակը բաց արեց մեզ համար, ըդըրով ապրուստ էնք անըմ․ Հըմի՛, Թաքաւո՛ր ապրած, խնդրում էնք, բրախ տաս, էթանք, մեր գլուխը պահենք։

—Որ բրախ տամ, ընչով պտի պըրապէք։

Մենծ ախչիկն ասեց.—Ինձ մէ փեշեկ ունեմ։

Ասեց.—Ի՛նչ փեշեկ։ Ասեց.—Ես էնենց մի խալիչա կը գործեմ որ, քու ղոշունը նստի վրէն․ կէսը ծալած մնայ։ Ասեց.—Լա՛ւ, դու էս դի՛ն արի։

Միջնեկ ախչկան հարցրեց.—Քե՛զ ինչ փեշեկ ունես։

—Մի պղնձով փլաւ կեփեմ․ քու ղոշունը ուտի, կէսն էլ մնայ։

Ասեց.—Քուն էլ լաւ․ դու էլ դէսն արի։

Էն պուճուր ախչկան հարցրեց.—Քե՛զ ինչ փեշակ ունես։

Ասեց.—Թագաւոր ապրած կենայ. ինձ փեշակ չունեմ, ոսկե ճաճիլաւոր աղայ կը բերեմ, ոսկե մազաւոր ախչիկ։

Ասեց.—Էդ իրեքդ էլ ինձ պէտք էք, իրեքիդ էլ բախ չեմ տայ. իրեքիդ էլ կառնեմ ինձ կնիկ. գիտա՞ք, ինչ կայ. իրեքիդ որը սուտ դուս գայ. գլուխը կը կտրեմ։ Տարաւ, իրեքին էլ առաւ։

Մնաց մէ ժամանակ, մենծ ախչկան ասեց.—Դու խալիչաց գործէ՛, տենա՛մ։

Ախչիկն ասեց.—Արեւելքից արեւմուտք հինածդ չարմ, ես գործելով էթամ, գամ։

Ասեց.—Կորէ՛, քունը սուտ ա դուս գալի, ընդըրանց էլ նոր կը փորձեմ։

Միջնեկ ախչկան կանչեց, ասեց.—Բուրդ խօսացրի, սուտ դուս էկաւ. քունը փլաւը էփայ, տենամ. մո՛նց ա, սուտ ա թէ օղորթ ա։ Ասեց.—Թագաւոր ապրած՝ մի պղինձ չինել տո՛ւր. քառասուն չաճճաւոր միջին բանին. չաճճների ձէնը ուսեճը չի լսեն։

Ասեց.—Ա՛յ հա՛յ, քունն էլ ա սուտ, դու էլ կորի։

Գնացին, պուճուր ախչկանն էլ կանչեցին, ասեց.—Էն էրկու քիրդ սուտ դուս էկան. քունը մո՛նց պտի ըլի։

Ասեց.—Իմը, ես Աստըծու փեշն էմ բռնե, կըլի։

Ասեց.—Որ քունը դուրս կըլի, ես գիտամ, դո՛ւ, քու պարգեը իմ աչքի վրէն. ընդըրանց պատիժն էլ իմ աչքի վրէն։

Ասեց.—Վազիր, մի պառուու կանչիլ տուր։

Պառաւը էկաւ։ Թագաւորը ասեց.—Կը տանես, էս ախչիկը կը պահես Թագաւորի ծախսովը, եփոր կազատուի, ոսկե ճաճըլաւոր աղայ կը բերի, ոսկե մազաւոր ախչիկ. կգաս աչքալուսէք, քեզ կը դնեմ կչեռքի բայը. քու քաշովը ոսկի փեշկաշ կանեմ քեզ. տար ու լաւ պահայ։

Պառաւը վե կալաւ, տարաւ. պահեց, էկաւ։

Թագաւորի էրկու կնիկը ասեցին.—Պառա՛ւ, մեր քիրը ազատուելու վախտը մեզի իմացրայ, քեզ շա՛տ պարգե կտանք։ Իննը ամիսը թամմեց, ինը սահաթը, ցաւը բռնեց. պառաւ գնաց, էրկու քուրն էլ իմացրեց, էկան. մի թեը մէ՛ քիրը բռնեց. մի թեը մէ՛ քիրը, ծունկը տուեց գետինը, երկու էրախայ բերեց ոսկե ճաճլաւոր աղայ. ոսկե մազաւոր ախչիկ։

Պառաւն ասեց.—Աչքներդ լիս . . . .

—Ձէնդ կտրայ, ասեցին պառաւին։ Պառաւը սուս կացաւ. էրեխէքը մնացին ըտի, փողի վրայ. ախչկան տարան, քցեցին տեղաշորի մէջ, էկան, պառաւին ասեցին.—Պառա՛ւ, մի իլլաճ ունես, տե՛ս, էս էրեխէքը պտի կորցնես։

Պառաւն ասեց.—Ես մոնց կորցնեմ, պտի էթամ Թագաւորին աչքալուսէք։

Ասեցին.—Թագաւորն ինչ պարգև կտայ, մենք հինգ են ղեար կտանք։ Էրկու էրեխէն դրեցին պառաւի գոգը. պառաւը տարաւ իրա տունը, մէ ղուրու մէջ դրեց. ղուրու բերանը մուծաճկեց, տարաւ, քցեց ծովը, էկաւ իրա տունը. էրկու հատ բուլայ կար, վեր կալաւ, տարաւ, դրեց կնկայ աղաքը։ Թագաւորի մէկէլ կնանիք ասեցին.—Ի՛նչ արիր։

Ասեց.—Տարայ, քցեցի ծովը. էս էրկու բուլէն վեր կալայ, էկայ։ Հանեցին, մին մին բուռ ոսկի տուեցին պառաւին, ասեցին. —Պառաւ, կեթաս, Թագաւորին կասես. «քու կնիկը էրկու բուլայ ա բերե»։ Ըդոնք թողացին, գնացին։

Պառաւ վեր կացաւ, գնաց Թագաւորի մօտը, Թագաւորը ասեց. —Հը, պառաւ, ինչ կայ.—Բան չկայ, ասեց։

Ասեց.—Ձըզ աչքալուսէք էս էկե, իմ կնիկը ազատուեր ա։

Ասեց Թագաւոր ապրած կենայ, ասելու բան չի։

Ասեց.—Աղչիկ ա, փառք իրան (Աստուծոյ), տղայ ա, փառք իրան, տամ, ինչ որ տուեր ա. ես իմ Աստուածանից չնորհակալ եմ։

Ասեց.—Ասելու բան չի, համա պտի ասեմ, էրկու բուլայ ա բերե։ Թագաւորը ըտի որ տա.եց գետինը. նազիր վազիրին կանչեց, ասեց.—Նազիր, վազիր, ձեզ մի բան եմ ասըմ. էս կնանիքն, իրեքն էլ, որ ես առայ, ամենքը մի փեշակի անուն տուեցին, որ սուֆ դուս էկաւ. էս կնիկը ասեց.—Ոսկե բաբըլաւոր տղայ կբերեմ. ոսկե մազաւոր աղչիկ. ընդոնց փոխանորդը էրկու բուլայ ա բերե. որ ըդրանը դրուստ ըլնէր, պատիճ ունէր էս էրկու կնկան. ըսդոնք թէ որ սուֆ դուս էկան, խնայեցի. էդ էլ սուֆ դուս գար, կը խնայէի. համա էրկու բուլայ ա բերե, էլ խնայել չկայ։ Ըսդրան ինչ վճիռ տանք։

Ասեցին.—Խնդրում ենք. ըսդրան էլ խնայես. քու քաղաքիցը հանես, ուրիշ երկիր էթայ։

Ասեց.—Անկարելի ա, վճիռ որ դուք չեք տալի, ես պտի տամ։ Գնացէք, էրկու հատ գոմշի կաշի բերէք, մէկը քցէք տակը, մէկը վրէն, կուպրն ու ձուլթը հալէք, լցէք ըդըրա վրեն, կաշիք կպչեն ըդըրա ջանիցը. տարէք, դարվազի աղաքը դրէք, էթող գալողը թքի էրեսին։

Գնացին, Թագաւորի ասածին պէս արեցին. էթող գալողը թքեց՝ Էդ էրկու կնանիք պառաւին կանչին. ասեցին.—Պառա՛ւ, բերնիցդ բան չի հանես. Թագաւորն ու՞զիմացաւ, մեզ էլ կը կորցնի, քեզ էլ։ Պառաւը գնաց իրանց տունը։

Լափինը տուեց ծովը, ղուքին տալում էն էրեսը, էն էրեսումը մի հատ մարդ կար, Ղուլա անըմաւոր, ըտի մինակ բահամ էր եկեր.

Ղօլոին դաւար, մալ, դոլվաթ չա՛տ. ձին բերեց ծովի ղրաղը ջրե-լու. տեհաւ մի հատ ղուբի ջրի ղրաղը. ծովի միջին ա Ղօլո ասեց.
—Կեամի ա կոտրուեր, ինչ ա, էս ղուբին ընկեր ա ջրի էրես, էկեր ա։ Գնաց, ղուբին բերեց դուս. բաց արեց, տեհաւ. ըհա՛, միջին մի տղայ, մի աղջիկ, նոր էլած։

Ղօլոն չոքեց, Աստուած կանչեց, ասեց.—Աստուա՛ծ, հենց ինչ ուզում ի, էն տուեցիր. քեզանից խնդրումեմ. ըսոնց կենդանութուն տաս. իմ ամակը չկորցնես. ըսղոնք ինձ բախշես։ Վ.ե կալաւ, տարաւ իրա տունը. մի տարի կաթով պահեց. մի տարուայ հետոյ կաթից կտրեց. ընկան հացի, ասեց.—Իմ էրեխէքս մի տարի բերեր էմ, չեմ լեղացրի. դնեմ տաշտի մէջ, լեղացնեմ։ Դրեց, լեղացրեց, էրեխէքը հանեց. տեհաւ տաշտի ջուրը սառեց. էլաւ ղուրս ոսկի. (քիւլչայ)։ Թազատան Ղօլոը փառք տուեց Աստծուն, ուրախացան, ասեց.—Ըռդար մալ, դոլվաթ ունեմ, ըռդար ոսկի ունեմ. ինչ պտի անեմ, փառք քեզ, Աստուա՛ծ։

Տասը հինգ տարի պահեց կշտին. տասը հինգ տարի եաքը Ղօլոը իմացաւ որ պտի մեռնի. աղջկան ու տղին կանչեց մօտը, ասեց.—Որդի՛, ես կը մեռնեմ։ Որ ասեց, «ես կը մեռնեմ», տղէն ու աղջիկը իրանց գլխին տուեցին, ու լաց էլան. իմացան որ ըդրանից էն էլե։ Ասեց.—Որդի՛, խի՞ էք լաց ըլլում։

Ասեցին.—Որ դու մեռնես, մենք մե՞նց անենք. չենք կարայ ապրի։ Ասեց.—Որդի՛, ես հարուր իցցուն տարի ա ընկեր էմ ըստի. Երկիր կայ, թաքաւորութուն կայ, աղջիկ, կնանիք կան. ամեն տեսակ բան կայ աշխարքումը, ձեր էն սև ձինը տեսնում էք, որ օխտը կեմով կապած ա. էն ծովից եմ հանե. հրեղէն ձի ա. ձեր ապրանքը բարձէք ղաթիրներիս, ձիանոցը, սև ձին կը քցէք աղաքը. դիլօրը կեթայ, հետը կեթաք, ուրտի կը նստի. էն տի տեղ կառնէք. ձեզ տներ կը շինէք. ձին ինչ ասի, խօսքից դուս չէք գայ։ Ասեց ու փոգին տուեց։

Բիր ու աղպէրը լաց էլան. գլխըներին տուին. գնացին, տեղը փորեցին. մէկը տներիցը բռնեց, մէկը գլխից, տարան, քցեցին փոսն ու փողը վրայ տուին։ Էկան, իրանց ապրանքը բարձեցին. սև ձին քցեցին աղաքը, ընկան ճանփէն ու էկան-էկան, իրանց հօր քաղաքի լաւ չիմանի վրէն նստեց։

Ըտի թաքաւորի մէյտան էր, ինչ դար ուրախութենի օր ըլլէր, կգար, կը նստէր. թամաշա կանէր. ազիզ օրը ըդուց էլ լաւ մէյտան չունէր. բեռները ըտի վեր ածեց. քուրը թողաց բեռների մօտը, ինքը գնաց քաղաքը, տասը հատ նօքար բռնեց, բերեց քուր մօտը. մէկը ձիանը պահեցին, մէկը դաւար, ամեն նօքարին մէ գործ տուեց։

Գնաց Թաքաւորի պալատը. վազիրը դռանը կաղնած էր, ասեց. —Էկեր էմ Թաքաւորի մօտը, գործ ունեմ։ Վեզիրը մտաւ Թաքաւորի մօտը.—Մի ըսենց տղայ քու մօտն ա գալի, ասեց.

Վազիրին ասեց.—Գնա, կանչայ, գայ։

Էկաւ. կանչեց. գնաց, Թաքաւորին մօտը կաղնեց, օխտը անգամ գլուխ տուեց Թաքաւորին. վրայ ութին ձեռը բռնեց դօշին, կաղնեց։ Թաքաւորը որ տեհաւ, ՝էդ տղի սըՑաթը, ոնց որ իրա սիրտը ճղեն, տղէն կոխեն սրտի մէջը։ Թաքաւորը մտքի միջին ասեց. —Ես Թաքաւոր ըլնեմ, էս թաւուr տղայ չունենամ, ասեց.Ինչ որ էս տղէն խնդրուի, պտի կատարեմ։ Թաքաւոր ասեց.—Ասա, տեսնամ. ա՛յ տղա՛, ինչ խնդիրք ունես։

Ասեց.—Քու քաղաքի ղրաղը մի չիմաճ դուզկեաճ տեղ կայ. էն ընձի ծախես։

Ասեց.—Էն տեղ քեզ փեcկեc ա, գնա, չինա։

Տղէն գլուխ տուեց որ յետ դառնար, էԹար. Թաքաւոր ասեց. —Մի ղայՑայ քցէք, խմենք։

ՂայՑան խմեցին, տղի հետ՟այ եփեյինա խօսաց. ասեց,—Ինչ դդար որ պարապես, դաս խօսանք։

Տղէն վեր կացաւ, գնաց բազարը. հինգ հարուր ուստայ բռնեց. հազար Ցաճլայ բռնեց. վեր կալաւ, տարաւ. մի հատ ուsայ բաcի ա վերակացու դրեց, իրաւունքը տուեց ըղըրան, ասեց.—Ջափ ու ձև արա՝ օքախճերը, դոմերը ամեն տեսակը չինայ։

Տղէն չինիլ տուեց, վեր կացաւ, Թաքաւորին մօտը, ասեց.—Իմ տները չինեցի, պրծայ։

Թաքաւորի էդ էրկու կնիկը էկան Թաքաւորի մօտը. էդ տղէն տեհան։ Էդ տղէն վեր կացաւ, գնաց-

Թաքաւորը էդ կնանոցը ասեց.—Տեղը քցէք, ես հիւանդ էմ։

Ասեցին.—Խե՜, ինչ էլաւ քեզ։

Ասեց.—Էդ տղէն իմ սրտի մէջը մտաւ, էդ տղի սիրուցը ես մեռնումեմ. ճալ չկայ իմ վրէն. էդ տղի դարsը ինձ կոխեց։

Ասեցին.—Խե՜, ինչ էլաւ քեզ Թաքաւոր ապրած։

Ասեց.—Իմ արին էդ տղի վրէն ընենց քռաց, որ գիտամ ինձանից ա. fաcկայ էդ տղէն չէԹայ. գչեր ցերեկ իմ հետը խօսայ, իմ սիրտը կը բացուի։

Թաքաւորին պառկացրին. չորերը քցին վրին. Թաքաւորը քնեց, վեր կացան, գնացին. իրանց միջին խորհուրդ արեցին.—Կասեն, էս մեր քուր տղէն ըլլի։ Պառաւին կանչեցին, էկաւ. ասեցին.—Դինսըզ. իմաճսզ պառաւ, գիտա՞ս քու գլուխը ինչ կը հանենք. Արի՛, դըռւus ասա՛, էն էրեխէքը տարար. քցեցի՞ր ծովը, ինչ արիր, բաճամ էն

էկև. քիչ ա մնըմ Թաքաւորն իմանայ. որ իմացեր ա, մեզ պըծնում չկայ, զաթի ինչ իլաճ ունես, տէս։ Աստց.—Իմ վրայ խի էք բարկանում, էն էրեխէքը դրեր էմ ղութու մէչը, մուշամպեր էմ, գցեր էմ ծովը. էս տասնըհինգ, տասնըվեց տարի ժամանակ անց ա կացե. հըմի կեթամ, էն տեղը կը ըրկեմ, որ էլ գալը չըլլի։

Հանեցին, ամենքը մի մին բուռ ոսկի տուեցին. ասեցին.—Վե, գնա, վախտով բռաց արա։

Պառաւը վե կացաւ ու գնաց. գնաց, ըղըրանց քուչի դուռը ծեծեց. ախչիկը գնաց, բաց արեց դուռը. ասեց.—Բարև, բալա ջան։ Ասեց.—Աստըծու բարին, նանի ջան։

Ասեց.—Գնա. էթանք, ձեր տները ման գանք, տենանք, մոնց տներ էն չինե։

Ասեց,—Արի, էթանք, նանի ջան։

Տարաւ պառաւին ամեն տեղը, օթախները, մառանը, գոմերը, բիրասի ման ածեց։

Ասեց.—Բալա, ամեն բանը լաւ ա, մենակ էս, ափսոս։

—Բա ինչ անեմ, նանի։

Ասեց.—Ախպօրդ ասա, Հազարաբիլբուլը բերի, ըստի երգի. դու անկաճ անես։

Պառաւ թողեց, գնաց, ախչիկը նստեց, նօթերը կիտեց։

Ախպէր էկաւ, տեհաւ քուր նօթերը կիտած ա, ասեց.—Ախչի, խի էս նօթերդ կիտե, փառք Աստըծուն՝ թամաշա էմ անում սկի պակասութուն չկայ։

Ասեց.—Խի չիկայ։ Ասեց.—Ինչն ա պակաս։

Ասեց.—Մի Հազարաբիլբուլ ըլի, երգի, ես ականջ անեմ։

Ասեց.—Ա՛յ քիր, ես ոչ Հազարաբիլբուլի ձէն էմ լսե, ո՛չ տեղը գիտամ։ Ասեց.—Որտիան ըլի պտի բերես։

Ասեց.—Էթամ սև ձիու մօտ, տենամ։

Գնաց, գոմի դուռը բաց արեց, մտաւ գոմը. ձին խրխնճաց.

—Հա՛, ասեց. Թաքաւորի տղա, ինչ կայ։

Ասեց.—Հազարանբիլբուլը բերենք։

Ասեց.—Ա՛յ քու սարվացնողի չինքը կոտրուի. Ղձվտը, որ ինձ տուեց քեզ. ասեց ինձ, «էս տղի հետ կը մեռնես, էս տղի հետ կապրես. հըմի քու հետ պտի մեռնեմ. քու հետ պտի ապրեմ. գնա, օխտը փութ գարի բեր, ածա իմ աղաքը. ես մի լաւ ուտեմ։ Օխտը փութ գարին ածեց աղաքը։

Ասեց.—Մի լաւ թիմարայ ինձ։ Մի լաւ թիմարեց։

Ասեց.—Թամքը վրէս դիր, ղօլաճները ղայիմ կապայ. էրկու հատ աքլորաճուտ առ. ոտդ դի՛ր զանկուն ու նի՛լ վրէս։

Ոտը դրեց զանկուն ու նիլաւ, ասեց.—Թաքաւորի տղա, ընենց

ջուխտ զանկու տուր փորիս, որ իմ մօր ծծած կաթը գայ իմ բերանը։ Ջուխտ զանկուն տուեց, մօր ծծած կաթը էկաւ բերանը. հանեց Ֆալաքի օխտը ղաքը. վե կալաւ, տարաւ մի փօշ, ձին բեզարեց, ասեց.—Տղա՛, վեր արի՛, ինձ ման ածէ։ Ման ածեց. տեհաւ էն դհիցը մի սև դև էկաւ, էրկու ջաղացաքար տուեր ա ձեռ. ծափ տալով գալիս ա։

Ձին ասեց.—Ա՛յ տղա, քեզ արա, տող դիր զանկուն, նէլ, սև դև էկաւ։ Ասեց. Սև դև—Աչեմ, աչեմ, քեզ ո՛ր տատմիս տակը ճաշ անեմ, դնեմ տատմիս տակը, ըսկի՛ չես էրևայ։

Ձին ասեց.—Այ տղա՛, զանկուն տո՛ւր, նաւալանմիշ ընեմ. թէ չէ, ըղըրա ձեռւիցը չես պրծնի։

Զանկուն տուեց, հանեց Ֆալաքի մի ղաքը։

Դեր ջաղացաքարը չպռտեց քամակիցը, կիւլլի պէս դնաց. սաղրուն դպաւ։ Տարաւ, մի բաղչի դռաղ վե դրեց, ասեց.—Ըտի դլիճ օքի կայ, քաղայ, դի իմ սաղրու վրէն, որ սաղանայ։

Ալբէալը քաղեց, ծամեց, դրեց եարի վրէն, սաղացաւ, ասեց.—Դէ՛, կը մտնես էդ բաղչի մէջ. մարմար հավուզ կայ, Հազարաբիլբուլը էդ հավուզի վրայ կախ առած ա. Հազարաբիլբուլի ղաֆասը վե կալես. մի հատ էլ կանանչ վարդենի ճղոտ կայ տնկուած, էն էլ կը հանես, կը բերես, որ ձէն տան, ասեն.—Հազարանբիլբուլը տարան, ետ չի թամաշա անես. որ ետ թամաշա անես, քար կը կտրես. էրկու աքլորաճուտն բանցը քցայ. թէ կանչեցին, խեր ա, կը պրծնենք ըստիան. Թէ չի կանչեցին, չենք պրծնի։ Էրկուսն էլ բանցը քցեցին, էրկուսն էլ կանչեցին։ Ասեց.—Գնա՛, իմ ասածը կատարայ ու արի. էլ մի՛ վախենայ։

Գնաց, ղաֆասը վե կալաւ, վարդի ճղոտն էլ հանեց, ձէն տուին. «Հազարանբիլբուլ տարա՛ն, տարա՛ն»։

Ետ թամաշա չարեց. էկաւ, հասաւ ձիուն. ձին ասեց.—Դէ՛, տող դիր զանկուն ու նիլ։ Նիլաւ։

Զանկուն տուեց, հանեց Ֆալաքի օխտը ղաքը. բերեց, իրանց դռանը վեր դրեց, ասեց.—Դե՛, տար, ճղոտը բաղչի մէջ տեղ տնկայ։ Տարաւ, տնկեց, Հազարաբիլբուլի քաղչի մէջ ինչ կար, ըդի էլաւ։ Բիլբուլը հաւըզի վրեցը կախ տուեց. ըդի երգեց. ո՛վ որ լսում էր, հայպաթ էր կտրում ըդըրա քաղցր ձէնին։ Էդ ախչիկ գչեր, ցերեկ թամաշա էր անըմ էդ բիւլբուլին։ Տղէն դուս էկաւ. գնաց ավ անելու, Թաքաւորն էլ դուս ա էկե ավ անելու. տղէն տուեց, մի ջեյրանի ճուտի. ճուտը գնաց, Թաքաւորի աղաքը վեր ընկաւ. տղէն գնաց, Թաքաւորի աղաքիցը վե կալաւ. Թաքաւորը ըսկի չի խօսաց. ասեց.—Նազիր, վազիր, լէլ յետ դառէք. էլ ավ անիլը չուզի։ Ցետ դառան, էկան. Թաքաւորը ասեց.—Իմ տեղաշորը քցա՛. ես մե-

ռայ։ Կնանիքը ասին.—Խմ, ինչ էլաւ։ Ասեց.—Էն տղէն մի չօրաթ էր չէր երևում. էս օր էկաւ, ավը իմ աղաքից վե կալաւ, գնաց, հետօ մի բերան էլ չի խօսայ։ Կնանիքը պառկացրին, դըպա պառաւին գնացին, ասեցին.—Պառաւ, էդ ո՞րտի ղրկեցիր, էլի էկեր ա։ Ասեց.—Հըմի կեթամ, էն տեղ կը ղրկեմ, չի գայ։ Մի մի բուռ ոսկի տուեցին։—Գնա՛, ասեցին. մի կաղնի էլ։ Պառաւը գնաց, ըդոնց դուռը ծեծեց. ախչիկը էկաւ, դուռը բացեց։ Պառաւը ասեց.—Բարև, բալա ջան։ Ասեց.—Աստըծու բարին, նանի՛ ջան։ Ասեց.—Հազարաբիլբուլը բերեր ա։ Ասեց.—Բերեր ա։ Վե կացան, գնացին. տեհան։—Ա՛յ հա՛յ, ասեց. ով էթում էր, չէր գալի. էս մոնց բերեց։ Դիտա՞ս, ինչ կայ, բոլա ջան։—Ի՛նչ կայ, նանի ջան։ Ասեց.—Որ էթայ, Դուլդուլ մատեանը բերի՝ օխտը քուռակ ունի. օխտը քուռակի նալին օխտը մազ կայ. օխտը մազը օխտը մուղամ ձէն ա հանըմ, Պառաւը գնաց, իրիկունը ախպէրն էլ էկաւ տունը.—Խմ էս նօթերդ կխտե, ասեց քուրը։—Գնա՛, Դուլդուլ մատեան բեր, օխտը քուռակ ունի, ամեկ քուռկու նալին օխտը մազ ունի, ամեկ մազ օխտը մուղամ ձէն ա հանըմ։ Տղէն գնաց ձիու մօտ, ձին ասեց.—Հը, ինչ կայ, թաքաւորի տղա՛։

Ասեց.—Պտի էթանք՝ Դուլդուլ մատեան բերենք։ Ասեց.—Քու տարվացնողի վիզ կոտրի, էն իմ մօքօր ախչիկն ա. մօրից էլաւ, անըմը դրեցին Դուլդուլ, հըմի մեծացեր ա, քանի տարի ա ես հեռացեր եմ. Դե՛, ասեց, գնա՛, օխտը հատ ֆեչայ առ. օխտը գոմշի կաշի առ, օխտը փութ էլ ձութ ու ծամօն առ. հալայ, կպցրայ իմ տկլոզ ջանին մի ֆեչայ քցայ վրէս։ Մի ֆեչան քցեց վրէն, մի ղօլանով կապեց՝ օխտը ֆեչեն էլ օխտը ղաթ կպցրեց. ղօլանները քաշեց. Թամքը դրեց վրին, օխտը փութ գարին ածեց աղաքը. ձին կերաւ, տղը դրեց զանկուն, նիլաւ։ Մի ջուխտ զանկու տուեց. հանեց Ֆալաֆի օխտը ղաթը, գնաց, մի ծովի ղրաղը վեր էկաւ. տեհաւ մի ամարաթներ կայ, որ օխտը ասեծ ա, ասեց.—Այ տղա՛, ծովի էն էրեսը պտի էթանք. կարմիր դեը կգայ, մենք չենք պըծնի, թեզ արա։ Մէկ էլ տեհան կարմիր դեը էկաւ, մի գերան ղըե ուսը. իրեք վերստ ա դրա երկարութունը, գալիս ա։ Ասեց.—Այ տղա՛, տոդ դիր զանկուն, նիլ։ Նիլաւ։ Կարմիր դեն ձէն տուեց.—Կացէք, ղօճախ էլէք, նո՛ր գնացէք։ Տղէն ականջ չարեց, զանկու տուեց։ Զանկու տալու բաշտան վե կալաւ տղին, որ վե կալաւ, գերանը ջրինցի պէս քցեց ըդըրա քամակը, չի հասաւ. գնաց ծովի մէջ տեղը տնկուաւ։ Տարաւ, տղին ծովի էն էրեսը վէր դրեց.—Քու թասարիֆը տե՛ս, ես կը մտնեմ ծովի տակը. փրփուրը թէ կարմրեց, կը փախնես, էլ քե պըծնում չի կայ. թէ սիպտակեց, ուրախացի։ Ձին գլուխ կօնծի

արեց, գնաց ջրի տակը, մի սաճաք ըդենց ծովի տակը մնաց. քամաշա արեց, տեհաւ փրփուրը կարմրեց, տղէն թողեց, փախաւ. ը տեղան մի կէս սաճաքէն ճանփայ գնաց, նաֆաս կտրաւ. ասեց. —Ես ո՞ւր էմ փախնըմ, իմ արինը սև ձիու արընից աւե՛լ ա. ընդրան սպանեցին, ինձ էլ սպանեն։ Ետ դառաւ, էկաւ էլի. տեհաւ, փրփուրը սիպտակըմ ա, շատ ուրախացաւ։ Տեհաւ որ Դուլդուլ մատեանի Եալից բռնեց, քաշեց դուս, ասեց.—Այ տղա՜. Եօխսէն քցայ ըսդըրա գլուխը։ Նօխսէն քցեց, կապեց։

Տեհաւ օխտը քուռակն էլ ծովու միջից դուս էկան, հաղ արեցին։ Ասեց.—Այ տղա՛, հը, ինչ տեհար. Ասեց.—Տեհայ փրփուրը կարմրեց։ Ասեց,—Տենըմ էս գլխիս. ճակատիս տուեցին։ Ասեց.—Բա ո՞ւր ա քու օխտը Ֆէչէն.—Տուեցին, պոկեցին. էդ թամքը դիր վրէս, նիլ. Եօխսէն ղայիմ բռնայ, ինձ հետ քշայ։ Քշեց ծովի էրեսովը, օխտը քուռակն էլ քամակիցն էկան. բերեց, իրանց դռանը կաղնացրեց. դուռը ծեծեց. քիրը դուռը բաց արեց։ Սև ձին ասեց.—Մատեանը Բրախ տու. էլ փախնողը չի։ Բրախ տուեց, քուռակները էլ հաղ արեցին, ըդրանց օխտը մաղերիցը, ամեն մաղիցը օխտը մուղամ ձէն էր դուս գալի։

Տղէն վե կացաւ. գնաց բազար, թաքաւոր փաճճարից քամաշա արեց. տեհաւ էն տղէն ա.—Հէլ վախ, Ֆալաֆ, ասեց. ես թաքաւոր ըլեմ, էս բավուր տղայ չունենա՛մ, էս էլ չի կաղնըմ ինձ հետանայ խօսայ։ Թաքաւոր իրա էրկու կնկան էլ կանչեց, ասեց.—Մի ղայֆա բերէք, ես խմեմ, պառկեմ. էն տղէն էս օր տեհայ, իմ դարտը բազացաւ։ Կնանիքը վռազ, վռազ ղայֆան տուեցին. թաքաւորը խմեց, պառկեց։ Կնանիքը գնացին պառաւի կուշտը. ասեցին.—Պառաւ, բօլ չի՞ էս օղիյէն բերես մեր գլուխը։ Ասեց.—Խի՞, ինչ ա էլե։ Ասեցին.—Էն տղէն էկեր ա։ Ասեց.—Էթամ, էն տեղը ղրկեմ որ էլ իլլաճ չըար գալու։ Ամենքը մի բուռ ոսկի տուեին։ Պառաւը գնաց. դուռը ծեծեց, ախչիկը դուռը բացեց։ Հա՛, բարև, բալա ջաճ։—Աստըծու բարին նանի ջան. Ասեց —Դուլդուլ մատեանը բերեց։ Ասեց.—Բերեր ա։ Ասեց.—Էթանք, տեսնանք։ Տեհաւ քուռակները էնպէս էն ջդիր տալի. մի րօպա մի տեղ չեն կաղնըմ։ Ասեց.—Բալա, տենըմ էս քու նանը, ինչ լաւ նան ա, ղրկեցի Հազարաբիլբուլը բերեց, ղրկեցի Դուլդուլ մատեանը բերեց. Հըմի Հազարաբիլբուլը որ երգում ա, գլտամ, չես հասկանում, Դուլդուլ մատեանի քուռակների մուղամ ձէները որ հանում էն, էդ էլ չես հասկանում. պա՛ որ էթայ Գիւլ փարին բերի, որ քե պէս մէ ախչիկ ա, ինչ որ ասի, դու կը հասկանաս. կըար քեզ հարս, իրան կնիկ։ Պառաւը գնաց։ Իրիկունը ախպէրը էկաւ տուն, տեհաւ քուր նօթերը կիտած ա, ասեց.—Աւ քի՛ր, հըմի ինչ ա պակաս։ Ասեց.—Ո՛չ Հազա-

բաբլըուլի ձէն էմ հասկանում, ոչ էլ Դուլդուլ մառեանի քուռակների մուղամ ձէները. գնա՛, Գիւլ փարին բեր, որ ինձ հարս ըլի, քեզ էլ կնիկ. ինչ որ ասի, ես հասկանամ։

Տղէն գնաց Սև ձիու մօտը, ձին ասեց.—Հը, ինչ կայ։

Ասեց.—Էթանք, Գիւլ փարին բերենք։

Ասեց.—Քու սարվացնողի շլինքը կոտրուի. Դե՛, գնա՛, օխտը փուք դարխ բեր։ Դարին կերաւ, ասեց.— Մի լաւ շաճթիմար մը տուր ինձ. Թամքը դիր վրէս, մի ջուխտ զանկու տուր, իմ մօր ծծած կաթ դայ իմ բերանը։

Էդպէսդ արեց, ձին հանեց Ֆալաքի օխտը ղաթը, տարաւ մի բաղչի դուռը վեր դրեց, մտաւ նեքսև։

Գնաց. յետ արած դռները բաց արեց, բաց արած դռները յետ արեց, տեհաւ Գիւլ փարին ճեարկեած ա անըմ, ասեց.—Գլխիդ ղուրբան, արևիդ ղուրբան, քու յեշխիցդ էմ էկե։ Իրեք անգամ ասեց, էն չի խօսաց. վրա չորսին ասեց.—Մնց որ էկեր ես, ընենց գնա. չըմ ղմըշըմ քեզ։

Ասեց.—Հնար չի կայ, ղմըշես, չի ղըմըշես, քեզ պտի տանեմ։

Ասեց.—Որ իմ յեշխիցս ես էկե, չարի ծնկներդ քար դառնաս։ Չարի ծնկները էլաւ քար։

Ասեց.—Ես քու սէրի խաթեր էկեր էմ։

Ասեց,—Դու չարի ծնկներդ էլեր ես քար, ճալա խօսու՞մ ես. չարի պռոտդ էլ ըլես քար։ Չարի պռոտը էլաւ քար։

Էլի ընկաւ աղաչանք, ասեց.—Պտի գաս, էթանք։

—Չարի շլինքդ ըլես քար, ասեց։

Ձին էլ էլաւ չարի շլինքն քար, ինքն էլ։

Ասեց.—Այ տղա՛, ուրիշներին մէկ անգամ ասելուն քար էի շինում, վեր քցում. քեզ չեմ ղմըշում. քու ոսկե ճաճիլը որ փըռուեց էդ քարի վրայ. իմ ջիկեարը մղկտում ա, քեզ որ լաւացնեմ, կեթաս, թէ էլ: իմ եախէն պտի բռնես։

Ասեց.—Պտի բռնեմ քու եախէն, կուզես լաւացըրայ, կուզես շինայ քար, վերջանամ։

Ասեց.—Դէ, քարի միջից դուս արի ու արի։

Դուս էկաւ ու հասաւ Գիւլ փարուն. խոըտեց, պաչպըռչեց» էն ընդըրան, էն ընդըրան, էն ընդըրան։

Ձին էլ ընտի ուրախացաւ, տռնաքանդ արեց։ Ախչիկն ասեց. —Այ տղա՛, ես իրաւունք էմ տալի քեզ. փունջ մանուշակն ա՛ռ, ո՛ր քարին տաս, կը սաղանա։

Առաւ, որին տուեց, սաղացաւ. որին տուեց, սաղացաւ. էլաւ տաս հազար մարդ ձիաւոր. խառուան բիրաշի յիրար. Գիւլ փարին իրաւունք տուեց.—Դէ, ամեն մարդ իրան ձին նիլնի ու էթայ իրա

տունը։ Բօմմա գնացին, մնաց էդ Գիլլ փարին ու էդ տղէն։ Գիլլ փարուն վեր կալաւ, գնաց ձիու մօտը. նիլաւ ձին, ախչիկը քաշեց բարֆը, ասեց ձին.—Այ տղա՛, մի լա՛ւ զանգու տուր ընձի, իմ մօր ծծած կաթը գայ իմ բերանը։ Հանեց Ֆալաքի օխտը դաքը. ծովի էն ղրաղը վեր դրեց։ Նստեցին, հաց կերան, պրծան. ձին բերեցին որ նիլնէին. մէկ էլ տեհան բօզ դեը մի ծառ ա դրե ուսին, ինչ դար ղուրտ ու ղուշ-ջանավար կայ, կախ արե ծառի վրեն. դրեր ա ուսը. մի պռօշը երկինքն ա սրբում. մի պռօշը գետինը. էկաւ, ըդոնց տեհաւ, ասեց.—Էս դտար ջանավարի մէջ մէկը խանգի մսի պէս քաղցր չըլի, Աստուած ըս օր ջուխտն ա հասցրե։

Ձին ասեց.—Տղա՛, քեզ ուրա՛, նի՛լ, դեն էկաւ. Թոփ իմ քամակը։ Թռաւ ձիու քամակը, ախչկայ թեւերը բռնեց, քաշեց թարկը։ Դեը էն դիէն ձէն տուեց.—Կաղնէ՛ք, ձեզ բան էմ ասըմ։

Ձին ասեց.—Իմ կողքերին մի ջուխտ զանգու տուր։

Որ տուեց. ձին վեր կալաւ ըդըանց, դեը տեհաւ, ծառը տուեց գետնովն ու ձիու քամակիցը վազեց. հասաւ, ձեռը քցեց որ ձիու ոտը բռնէր. ձին մի ջուխտ քացի տուեց ճակատին, դեը տասներկու կունդկի[1] արեց ու վեր ընկաւ. ձին տարաւ իրան դռան աղաքը վեր դրեց, դուռը ծեծեց, քիրը բաց արեց, փաթթուեց ախչկան. էլ իրար պաչպըչիլը, Աստուած ազատի։

Էկան, բաղչէն ման էկա՛ն, Գիլլ փարին ասեց.—Այ տղա՛, դնա՛, ուստայ բէ՛ր, մարքապեք չինի։

Գնաց, ուստէն բերեց, ոսկին տուեցին, իրա ձեռի մուրդը (հախը) տուին, ասեցին։—Տաս հազար ոսկե մարքապա չինայ։ Չինել տուին, պրծան։ Գիլլ փարին մի դաստայ ծաղիկ կապեց, տուեց տղին, ասեց.—Էն գոմշի կաշու միջի կնիկը որ կայ. տա՛ր. տո՛ւր էն կնկայ ձեռը։

Ծաղիկը վեր կալաւ, տարաւ, տուեց կնկայ ձեռը. կնիկն առաւ, քամաշա արեց. տղին էլ բան չի կարաց ասի, հենց ասեց.—Ես մեռա՛յ, մեռա՛յ։

Տղէն էկաւ թաքաւորի պալատի տակով տուն. թաքաւորը տեհաւ.—Նազիր, վազիր, ասեց. էս էրկու չաքաթ էդ տղէն իմ աչքովը չէ՛ր ընկե. էս սահաթը կը բերէք. ընձի հետ խօսայ։ Գնացին ասին.—Թաքաւորը քե կանչում ա։ Գիլլ փարին ասեց.—Էդուց թաքաւորը էս վախտը մեզ ղօնախ ա. տղէն չի կարայ գայ։

Էկան, թաքաւորին ըդենց պատասխան տուեցին։

Թաքաւորը չա՛տ ուրախացաւ. թաքաւորի էրկու կնիկը թաքաւորին քուն դրեցին. աքալ-թափալ գնացին իրանց օթախը. պառա-

1, Գլխու վերայ գնդակի պէս գլորուիլ գնա։

ւին խապար ղրկեցին, ասեցին.—Դինարզ, իմանարզ. էդ ո՛ր տեղ էս ղրկի, էկաւ. ասեցին. դէ, գնա էս սնաքը ղրկէլ տուր, որ էթայ։ Ասեց.—Իրեք տեղ ղրկեցի, էկաւ. հըմի ընենց տեղ պտի ղրկիմ, էլ հնար չի կայ գալու։

Պառաւը գնաց. գուռը ծեծեց. ախչիկը դուս էկաւ։

Ասեց.—Բարև, բալա ջան՝ մօ՞նց ա, Գիւլ փարին բերէ՞ր ա։

Ասեց.—Նանի ջան. բերիր ա. բա ինչ ա արե։

Գիւլ փարին ասեց.—Նանի՛, արի. ընձի հետ խօսա։

Ասեց.—Քեզ բերել տուեցի. մի տեղ էլ պտի ղրկեմ։

Ասեց.—Ըդրանց գլուխը ինչ բալբալէֆ էկեր ա, քեզանով էկեր ա. պառաւ։ Ասեց.—Խօ՛ ընձանով էկեր ա, ընձանով լաւութիւն ա հասե։

Ասեց.—Որ թողամ, չմա կը խօսաս դու. ըլեր մի ցուռ ցախաւել, ընկնես ը տեղ։ Ելաւ մի ցուռ ցախաւել։

—Ախչի, ասեց. տա՛ր քցայ գոմը, ձիու տակը։

Տարաւ. քցեց գոմը։ Տղէն նեքսև մտաւ։

Գիւլ փարին ասեց.—Արի՛, քեզ դարս ու բալից ազատեցի, գնա բազարը՝ տասը հատ դաւար առ, էրկու խալուար բրինձ. կէս խալուար եղ. բե, քու հօր ու մօր ժամ-պատարագ արա։ Գնաց էնպէսդ արեց. դաւարները մորթել տուեց, կերակուրները էփել տուեց, ղըրկեց, մարդիկը բօփ արեց. տղէն էլ թաքաւորին կանչեց. թաքաւորը էն սրնաքը էկաւ, էլ մանալ չիթողայ։ Թաքաւորի կնանիք մարթ ղըրկեցին պառաւին. տեհան պառաւ էրեկկուանից չիկայ. ըդոնց սիրտը հաքում էր. խլաճ չիկայ ձեռ։ Գնացին. նստան. հացը քաշել տուեցին, կերան. իրանց աղաքի ոսկե մարքապէք էլ, տղէն հրամայեց, վե կալան, ֆօմա գնացին։ Թաքաւորը մնաց, չատ ուրախացաւ. երկար խօսացին։ Թաքաւորը տղին ու ախչկան բերնին մայիլ կորեց, ասեց.—Ի՛նչ ուզում էք, ձեր լեզուն ինչ պտըտի պտի տամ։

Գիւլ փարին ասեց.—Քեզանից զա՛տ չենք խնդրում, մի բան էնք ուզում։ Ասեց.—Մի անգամ ասեր եմ, ուզա՛։

Ասեց.—Մենք էն դարվազի կապած կնիկն ենք ուզում, տաս մեզի։ Ասեց.—Դուք բա՛ն ուզէք, էդ ինչ էր։

Ասեց.—Մենք էն ուզումենք։ Ասեց.—Դե՛, ձեզ ըլլի։

Թաքաւորը պալատը գնաց, կնանոցը ասեց.—Ընձնից զատ չուզեցին. էն կնիկը ուզեցին։

Կնանիքը չատ տրտմեցին։ Գիւլ փարին ու ախչիկը գնացին. էդ դարվազի կնիկը դրեցին ուսներին, տարան ճամամը. տասն օր դրեցին ջրի մէջը, աճճախ ըդրա կաշին կալկեց. մի լաւ լեղացրին, բերեցին տուն. մի ձեռք էնպէս չոր կտրեցին, կարեցին, ըսկի էդ

քաղաքում չի կար․ հագցրին ըդրան։ Փարին ասեց.—Մէկ էլ ժամ արա քու հօրն ու մօրը։

Տղէն մէկ էլ էդպէս պատրաստեց. կանչեց, էկան, ինչ դար մարթ կար։ Փարին ասեց.—Գնա, Թաքաւորին էլ կանչայ։

Թաքաւորը կնանոցը ասեց.—Դե, վերէք, էթանք։

Կնանիքը ասեցին.—Մենք գանք, ինչ անենք, Թաքաւոր։

Թաքաւոր բարկացաւ.—Դե, քեզ արէք, ասեց։

Վե կացան, գնացին, մտան ներսև։ Էդ ախչիկն ու Փարին էկան, Թաքաւորի ձեռը բռնեցին, տարան։

Թաքաւորը ասեց.—Այ հայ. ես Թաքաւոր ըլեմ, էս քավուր ախչկերք, էս քավուր տղայ չունենամ։

Եմակը քաշեցին, կերան, պրծան. տղէն ասեց.—Ամեն մարթ իրան աչքի ոսկե մարքապէն վեր կալի։

Վե կալան, գնացին. Թաքաւորը. իրա կնանիքը մնացին։

Կիւլ փարին ասեց.—Ախչի. գնա, էն ցախաւիլը գոմիցը վե կալ ու բեր։ Գնաց, վե կալաւ, բերեց։

Ասեց.—Ախչի դիր Թաքաւորին աղաքը։

Թաքաւորը նեղացաւ իրա միշին, ասեց.—Ձեր պատիւ տալը ասեմ, թէ էս վերջի բանը ասեմ։

Ասեց.—Թաքաւոր ապրած, մի նեղանայ, ինչ որ բան կայ, էդ ցախաւիլը կասի հըմի։

Փարին ասեց.—Ցախաւիլ, էլի պառաւ։

Էլաւ պառաւը, նստեց ը տե։

Թաքաւորը ասեց.—Եա, էս մեր տան պառաւն ա։

Ասեց.—Դե, պառաւ. ինչ որ տեհեր էս, պատմա։

Պառաւը, ինչ որ էլեր էր, ամենը Թաքաւորին պատմեց։

Գիւլ Փարին ասեց.—Տենըմ էս, էս ոսկե ճաճըլաւոր տղէն ու ոսկե մազաւոր ախչիկ. էս կաշու միջի կնիկ ըդրանց ինչն ա։

Ասեց.—Ըստրանց մէրն ա։

Թաքաւորը ըդրանց ինչն ա։ Ասեց.—Հէրն ա։

Ասեց.—Պառաւ, դու խի իր էդպէսդ հանըմ ըդրանց գլուխը։

Ասեց.—Ինչ որ անըմ ին, էդ էրկու կնանիքն ին անըմ։

Թաքաւորը վե կացաւ, ոտը գետնով տուեց, ասեց.—Պառաւ. ըդոնք որ անըմին, դու խի արեցիր։

Պառաւին տարան, քցեցին ծովը։ Էրկու գիժ ղաթիր բերել տուեց. էդ էրկու կնկայ ամենքը էրկու ղաթիրի պոչը կապեց. գիժ

Թաքաւորը իրան կնկան առաւ քազաեան։ Փարուն տղին վրայ պսակեց։ Ինքը Թաքաւորութինից վէր էկաւ, տղէն դրեց իրա տեղը։